

Լ. Շ. ՀՈԿՀԱՆՆԻՍՅԱՆ

ԳՐԱԲԱՐԻ
ԲԱՌԱՊԱՇԱՐԸ

(ՄԴԱՐ)

ԵՐԵՎԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ

Հ. ԱՃԱՌՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԼԵԶՎԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Լ.Շ.ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ԳՐԱԲԱՐԻ ԲԱՌԱՊԱՇԱՐԸ
(V դար)

A 90903



NAS RA
Institute of Language

L.SH.Hovhannisyan

**VOCABULARY OF OLD
ARMENIAN LANGUAGE
(V Century)**

Yerevan 2006

ՀՏԴ 809.198.1:941 (479.25)
ԳՍԴ 81.2Հ+63.3(2Հ)
Հ 854

**Տպագրվում է ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան
լեզվի ինստիտուտի
գիտական խորհրդի որոշմամբ**

**Պատասխանատու խմբագիր՝ բանասիրական
գիտությունների թեկնածու Վ.Գ.Զիհանյան**

**Գիրքը հրատարակության են երաշխավորել գրախոսներ,
բանասիրական գիտությունների դոկտոր՝ Վ.Ա.Քոսյանը
և բանասիրական գիտությունների թեկնածու
Ն.Գ.Հովհաննիսյանը**

Հովհաննիսյան Լ.Շ.

Հ 854 Գրաբարի բառապաշարը (V դար), Պատ. խմբ.՝ Վ. Զիհանյան
- ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., Եր., 2006, 309 էջ:

Աշխատանքում քննվում են գրաբարի բառապաշարի մի քանի
հարցեր. բնիկ և փոխառյալ բառաշերտ, բառային տարբերակներ, նվազ
հաճախական բառեր, ժողովրդախոսակցական բառաշերտ:

Առանձին գլուխ է հատկացված նորահայտ բառերի քննությանը:
Ուշադրություն է դարձված 5-րդ դարի հեղինակների բառապաշարի
յուրահատկություններին:

Գիրքը նախատեսված է բանասերների, պատմաբանների և հայոց
լեզվի պատմությամբ հետաքրքրվողների համար:

Հ $\frac{4602020100}{703(02)-2006}$ 2006

ԳՍԴ 81.2Հ+63.3(2Հ)

ISBN 5 – 8080 – 0644 – 9

© ՀՀ ԳԱԱ «ԳԻՏՈՒԹՅՈՒՆ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ, 2006

Ն Ե Ր Ա Ճ ՈՒ Թ Յ ՈՒ Ն (հարցի պատմությունից)

Ինչքան հին են որևէ ժողովրդի պատմամշակութային ժառանգության ակունքները, բնականորեն այդքան էլ հին ու հարուստ է այդ ժառանգությունն ուսումնասիրող գիտական ավանդույթը:

V դարի գրաբարի բառապաշարը տարբեր հայեցակետերից, տարբեր նպատակադրումներով ու տարբեր ընդգրկումներով քննության է առնվում հայ դպրության կազմավորման ու զարգացման ընթացքին զուգահեռ: Մեզ հետաքրքրող հարցի պատմությունը ներկայացնելը կաաված է մի շարք դժվարությունների հետ: Հիմնական դժվարությունը հարուստ նյութն է և այդ նյութի ուսումնասիրության երկարատև ժամանակահատվածը (հայ դպրության սկզբնավորումից մինչև մեր օրերը): Մյուս դժվարությունն այն է, որ V դարի բառապաշարին վերաբերող քննությունները չեն պարփակվում միայն այդ խնդրին վերաբերող հետազոտություններում, այլ սփռված են պատմական, բանասիրական, լեզվաբանական զանազան բնույթի ու ծավալի աշխատություններում:

Դյուրին չէ և նյութի ուսումնասիրության ժամանակագրային դասակարգումների խնդիրը: Քանի որ ամեն մի դասակարգում պայմանական է, ուստի նպատակահարմար գտանք ժամանակագրային դասակարգումը ավելորդ չմասնատելով՝ ներկայացնել ըստ երեք փուլերի, ինչպես վարվել է Է.Աղայանը (*Աղայան, 1958*):

Ա) Ուսումնասիրության առաջին շրջան

Ժամանակագրային ամենաընդարձակ սահմանները ներառում է այս շրջանը՝

V դարից մինչև համեմատական լեզվաբանության կազմավորումը՝ XIX դ. 30-ական թվականները:

Նշված փուլում ակնհայտորեն զգացվում է հայ քերականագիտության վերելքը: Հրապարակ են գալիս բազմաթիվ քերականական աշխատություններ՝ Դիոնիսիոս Թրակացու քերականության թարգմանությունից մինչև Չամչյանի և Ավետիքյանի հայտնի քերականությունները: Քերականություններում մեզ հետաքրքրող հարցը ներկայանում է միայն գիտական կամ ոչ գիտական ստուգաբանություններով. «Ստուգաբանությունը, որը Թրակացու մոտ համարվում է քերականության բաժիններից մեկը, հայերի մոտ ամենից ավելի վաղ ծագած լեզվական դիսցիպլինն է: Նրա նախնական ձևը ժողովրդական ստուգաբանությունն է, որը կիրառվում է ժողովրդի կողմից իրեն անծանոթ անուններն իմաստավորելու համար: Մատենագիրները ևս հաճախ են կիրառում ստուգաբանական զանազան եղանակներ, ավելի կամ պակաս հաջողությամբ» (*Ջահուկյան, 1954, 133*): Իրոք, արդեն V դարից ունենք ստուգաբանության տարերային փորձեր: Ահա մի քանի օրինակներ Եզնիկից, Ագաթանգեղոսից, Խորենացուց. «Զրուան, որ թարգմանի բախտ կամ փառք» (*Եզն. 113*): «Հրամայեաց աղաղակել զօրացն «մարամատ», որ թարգմանի մարս եկն, յայս ի սոյն ձայն անուանեցաւ Մարմետ» (*Խոր. 173*): «Գայր հասաներ ի քաղաքագեղօն Բագաւան, որ անուանեալ կոչի ի պարթևաէրէն լեզուէն դիցաւան» (*Ագաթ. 426*): Սրանք V դարի բառապաշարում գործառնող իրանական բառերի ստուգաբանություններ են, որոնց մի մասը գիտական չէ: Եականն այն է, որ արդեն V դարում փորձ է արվում առանձնացնել մեր լեզվի իրանական տարրի գոնե մի չնչին մասը: Ի դեպ, այս երևույթը նկատվում է հետագա դարերի որոշ պատմիչների ու քերականների մոտ: Թ.Արծրունին փորձում է ստուգաբանել Արտամետ և համակդեն բառերը, Գ.Մագիստրոսը Թրակացու քերականության իր մեկնության մեջ, խոսելով փոխառությունների մասին ընդհանրապես, կատարում է նաև մի շարք փոխառյալ բառերի ստուգաբանություններ (աւազան, խարազան, գաւազան և այլն): Օտար և հայերեն բառերի ստուգաբանություններ ունեն Եղիշեն, Մանդակունին, Շիրակացին, Ստ.Սյունեցին, Համամ Արևելցին, Առաքել Սյունեցին և այլք (*Աղայան, 1958, 87-91*):

Անշուշտ, ստուգաբանական անճշտությունները ժամանակաշրջանի արդյունքն են. երբ չկային լեզվաբանական հստակ չափանիշներ, բառերի համեմատության սկզբունքներ, ապա, բնականաբար, խոսք չի կարող լինել հների (ոչ միայն մեզանում) ստուգաբանության գիտականության մասին: Ինչ վերաբերում է օտար բառերի ստուգաբանություններին, ապա դա կարևորվում է երկու հանգամանքով. նախ՝ արդեն առաջին շրջանի ուսումնասիրություններում փորձ է արվում տարբերակելու մեր բառապաշարի եկամուտ տարրերը, իսկ դրանց մեկնությունը հավաստում է այդ կարգի բառերի հասկանալիությունը եթե ոչ ժողովրդի, ապա գոնե զարգացած խավի համար:

Բառապաշարի մասնակի ուսումնասիրություն կարելի է տեսնել և բառարանագրության մեջ, որը նույնքան հին ակունքներ ունի, որքան հայ քերականագիտությունը: Կա մի վարկած, ըստ որի, այբուբենից հետո Մ.Մաշտոցը ստեղծել է հույն-հայերեն բառարան, որը պետք է ծառայեր հայկական տառերի ճիշտ ընտրությանը (*Բազմավեպ, 1907, 439*): ճիշտ է, այս վարկածը մերժվեց, սակայն հարևան ժողովուրդների մշակույթներին քաջատեղյակությունը, զգալի գործեր թարգմանելու և ժողովրդին մատչելի դարձնելու միտումը կարող էր ուղեկցվել բառացանկերի, բառարանային բնույթի աշխատանքների հրապարակ գալով՝ հենց V դարի սկզբներին, որոնք կարող էին պահպանված չլինել, կամ հետագայում ներառվելին այլ աշխատանքների մեջ: «Հայ բառարանագրության ամենավաղ շրջանի մասին մեր մատենագրությունը տեղեկություններ չի տալիս: Մատենագիրները, հատկապես V-X դդ., ոչ միայն բառարանագրության ու բառարանների մասին հիշատակություններ չունեն, այլև չեն գործածում «բառգիրք», «բառարան» բառերը» (*Ամալյան, 1966, 20*): Հ.Ամալյանը նույնպես բառարանագրության ակունքները կապում է հայ մատենագրության սկզբնավորման հետ, նշելով, որ պահպանված ամենահին բառարանագրական հուշարձանները հունաբան դպրոցի արտադրանքներն են (*Ն.տ.*):

Հայ բառարանագրությունը որպես մշակութային-գիտական ինքնուրույն ճյուղ ձևավորվել է X դարի վերջերին և XI դարի

սկզբներին: Զ.Ամալյանի գրքում բերված են նախքան այդ ժամանակաշրջանը հայերեն ձեռագրերում պահպանվող բառարանագրական գործերը: Այդ գործերում ընդգրկված բառերի զգալի մասը վկայված է V դարից: Առավելապես շատ էին թարգմանական գործերին վերաբերող բառարանները. սա բնական է, որովհետև այդ գործերում ավելի շատ են օտար բառերը, ոճերը, պատճենումները, որոնք ընթերցողի համար հաճախ անհասկանալի էին: Ոչ թարգմանական գործերին նվիրված բառարանները ավելի քիչ են և հանդես են գալիս XIII-XIV դդ. սկսած (*Ամալյան, 1966, 50*): Այստեղ էլ հիմնականում բացատրվում են օտար բառերն ու ոճերը:

Օգտվելով Զ.Ամալյանի աշխատությունից, որտեղ բժախնդրորեն ու պատշաճ մակարդակով տրված է միջնադարյան բառարանագրության սպառիչ բնութագիրը, ներկայացնենք մի քանի բառարաններ միայն. **Բառք յունարեն** – ամենափին ձեռագիրը XIV դարից է, բայց ուսումնասիրողների կարծիքով բառարանը ավելի հին է: **Բառք Փիլոնի** – Փիլոն Ալեքսանդրացու գործերի հայերեն թարգմանությունների բառարանն է (մոտ 250 բառ): Ամենափին ձեռագիրը XIII դարից է: Զ.Ամալյանի հավաստմամբ մի շարք բառեր չկան Փիլոնի երկերում և հանդիպում են թարգմանական այլ գործերում: Նա ենթադրում է, որ այդ բառերը կարող են վերցված լինել Փիլոնի գործերի այնպիսի հայերեն թարգմանություններից, որոնք չեն պահպանվել (75): **Բառք խորանին** – բառարանի հնագույն ընդօրինակությունները XIV դարից են: Իր բնույթով բացատրական բառարան է. ներառում է V դարի տարբեր երկերից, հատկապես հունաբան գործերից քաղված բառեր: Պարունակում է մոտ 450 բառ: **Բառք երրայեցուց** – մեր մատենագրությանը հայտնի է եղել X-XI դդ.: Թերևս գոյություն է ունեցել դրանից ավելի վաղ: **Սահմանք իմաստասիրանք** – հայերեն առաջին իմաստասիրական բառարանն է՝ կազմված XIII-XIV դարերում: Պարունակում է շուրջ 420 բառ, աստվածաբանական, փիլիսոփայական տերմիններ, հասկացություններ: **Բառք Վարդան գրոց** – կազմվել է XI-XIII դարերում: Բառարանի հեղինակը եղիշեի պատմությունը հասկանալի դարձնելու միտումով

առանձնացնում, մեկնում է պատմության մեջ հանդիպող մի քանի իրանական բառեր. դեմիմազդե, ամպարտքաշ, պահլաւիկն, պարսկադեն, շկաւթակ, լակիշ, վատախտարակ...: Հիմնականում պարսից կրոնին, վարչական կյանքին վերաբերող հասկացություններ են, որոնց իմաստները հասկանալի չեն եղել հեղինակի ապրած դարաշրջանում: Այսօր էլ դրանք ստույգ մեկնաբանելը դժվար է: Իրանական այն բազմաթիվ բառերին, որոնք հասկանալի էին թերևս V դարից էլ առաջ, բառարանագիրը չի անդրադառնում, հավանորեն նա ինքն էլ չի գիտակցել դրանց օտար բնույթը: XVI-XVII դարերում նույնպես գրվում և ընդօրինակվում են տարբեր բնույթի բառարաններ: Մեզ հետաքրքրող հարցին առնչվում են Աստվածաշնչին վերաբերող բառարանները: Հ.Ամալյանը նշում է նման կարգի չորս գործ:

Հայ գիտական բառարանագրության կազմավորումը սկսվում է XVIII դարից: Առաջին հերթին պետք է նշել Մխիթար Սեբաստացու բառարանը, որը հայերենի բառապաշարի ներկայացման և մեկնության նախադեպը չունեցող մի գործ է և այժմ էլ չի կորցրել իր գիտական և գործնական արժեքը: Բառարանի առաջին հատորը լույս է տեսել 1749, իսկ երկրորդը՝ 1769թ.: V դարի բառապաշարն ըստ հնարավորին ներկայացված է Սեբաստացու Բառարանի առաջին հատորում: Այս հատորը պարունակում է 37 000 բառահոդված (*Գասպարյան, 1968, 89*): Լեզվի պատմաբանի, կոնկրետ V դարի բառապաշարը ուսումնասիրողի համար Սեբաստացու բառարանը արժեքավորվում է ծավալուն նյութի մատուցմամբ: Իսկ, վերջին հաշվով, բառարանի և Սեբաստացու գործունեության գերագույն նպատակը մայրենի լեզվի անադարտությունն է: Պատահական չէ, որ թե՛ առաջաբանում, թե՛ բուն բառարանում հեղինակը զգուշացնում է սխալ ձևերից, բերում այդպիսի գործածության օրինակներ, բացատրում սխալների պատճառները:

Հայերենի բառապաշարի գիտական ուսումնասիրության լուրջ փորձ է Հ.Տյուգյանի բառացանկը, որը կցված է 1826թ. հրատարակված Գևորգ Պալատացու պարսկերեն-հայերեն բառարանին: Ցանկը ընդգրկում է 433 բառ՝ մեծամասամբ

վկայված V դարից: Սա պարսկերեն-հայերեն առնչություններին վերաբերող նույնիսկ հետագա ուսումնասիրողների կողմից ներկայացված ցանկերից ծավալունն է. սակայն այդ բառացանկի արժեքը միայն ծավալի մեջ չէ, այլ՝ կատարված դասակարգումների: Տյուզյանը առանձնացնում է ա) հայերենի՝ իրանական լեզուներից փոխառած բառերը, բ) այն բառերը, որոնք հայերենը և պարսկերենը փոխառել են մեկ այլ լեզվից (հունարենից, եբրայերենից), գ) երկու լեզուների այն բառերը, որոնց ծագումը նույնական է, այլ կերպ ասած, ընդհանուր հնդեվրոպական բառաշերտը՝ 344 բառ: Դ.Տյուզյանի աշխատանքը, իրավամբ, հայ-իրանական լեզվական առնչությունների ուսումնասիրության առաջին փորձն է, գիտական համեմատության առաջին փորձը՝ համեմատական լեզվաբանության կազմավորումից առաջ:

Այս բառարանի լույսընծայումից ուղիղ 10 տարի հետո հրատարակվեց Նոր Հայկազյան բառարանի առաջին հատորը, իսկ 1837թ.՝ երկրորդ հատորը: Բառարանի երախտավոր հեղինակներ Գաբրիել Ավետիքյանը, Խաչատուր Սյուրմելյանը և Սկրտիչ Ավգերյանը, 1784 թվականից ձեռնամուխ լինելով այդ բառարանի կազմման աշխատանքներին, շուրջ կեսդարյա քրտնաջան ու հայրենանվեր աշխատանքով ստեղծեցին բառարանագրության մի իսկական գլուխգործոց, մեր մշակույթի ու գիտության անգնահատելի ու մշտարժեք կոթողներից մեկը: Ճիշտ է, հրապարակի վրա էր Հին Հայկազյան բառարանը, որից և օգտվել են ՆՀԲ-ի հեղինակները, բայց նոր բառարանը հնից տարբերվում է ոչ միայն իր բառամթերքով, այլև բառերի գիտական բացատրությամբ, նոր հղումներով, բառերի նոր իմաստների մատնանշումով, ստուգաբանական ավելի բազմաթիվ ու համոզիչ փաստարկներով: ՆՀԲ-ի հեղինակները սոսկ բառահավաքներ չեն եղել: Նրանք ստուգել, ճշտել են իմաստները՝ համեմատելով բազմաթիվ ձեռագրեր ու տպագիր օրինակներ: Քննական մոտեցման ապացույց է և այն, որ հեղինակները, բացի հրատարակված գրքերից, բժախնդրորեն օգտվել են մոտ 100 ձեռագրից, կուրորեն չեն ընդօրինակել Հին Հայկազյան

բառարանը՝ վերջինիս վերաբերվելով պատշաճ հարգանքով ու քննադատաբար: «Հայ բառարանագրության գազաթնակետը լինելով, նա յուր անգնահատելի արժեքն ունի ոչ միայն իբրև սոսկ բացատրական, այլև որպես ստուգաբանական բառարան: Այն ժամանակ, երբ դեռ հրապարակի վրա չկային Պետերմանի ու Վինդիշմանի գործերը, Հայկազյան բառարանում ստուգաբանվում էին բազմաթիվ հայերեն բառեր՝ որպես փոխառություններ հունարեն, լատիներեն, եբրայեցերեն, պարսկերեն և այլ լեզուներից» (*Աղայան, 1958, 147*): Այս գնահատումները վերաբերում են բառարանում հայերենի բառապաշարի վերհամմանն ու ուսումնասիրմանը. հղումների՝ ըստ հնարավորին ժամանակագրային հաջորդականությունը ավելի է կարևորում այդ ուսումնասիրությունը:

Բ) Ուսումնասիրության երկրորդ շրջան

Այս շրջանի ժամանակագրային սահմանները նույնպես ընդարձակ են՝ 1830-ական թվականներից մինչև մեր օրերը:

Հիշյալ ժամանակահատվածում հայոց լեզվի պատմության, այդ թվում և բառապաշարի խոր ու կայուն ուսումնասիրությանը խթանեցին երեք հիմնական գործոններ. ա) համեմատական լեզվաբանության կազմավորումը, բ) ոսկեդարյան գրականության և լեզվի տարբերակումը, գ) V դարի թարգմանական և ինքնուրույն բազմաթիվ գործերի հրատարակությունը:

Այս գործոնները պայմանավորված էին եվրոպայում լեզվաբանական գիտության բուռն զարգացումով, ապա և Մխիթարյան միաբանության գործունեությամբ: Եթե սկզբնական շրջանում մխիթարյանների գործունեությունը հանգում էր հիմնականում կրոնական-եկեղեցական գրականության հետազոտմանը, ապա հետագայում այն նպատակաուղղված էր հայ մշակույթի, պատմության, բանասիրության, լեզվի գիտական համակողմանի ու եվրոպական մակարդակին չզիջող ուսումնասիրությանը: XIX դարի երկրորդ կեսից

հայագիտական միտքը աշխուժանում է Ռուսաստանում (Մոսկվայի, Պետերբուրգի համալսարաններում) և բուն Հայաստանում՝ Էջմիածնի միաբանության շրջանում:

Անդրադառնալով վերը նշված երեք գործոններին:

Համեմատական լեզվաբանությունը սկզբնավորվում է անցյալ դարի երեսնական թվականներից: Արդեն 1837թ. Պետերմանի հրատարակած մի աշխատության մեջ, հնդեվրոպական լեզուների տվյալների հետ մեկտեղ, շրջանառության էին դրվում նաև հայերենի իրողությունները: Նախապես հայերենը դիտվում էր իրանական լեզու: 1876թ. Հյուբշմանի ջանքերով ապացուցվեց հայերենի ինքնուրույն լեզվաճյուղ լինելը, ճշտվեց հայերենի տեղը հնդեվրոպական լեզուների շարքում: Այս հարցին մանրամասն չենք անդրադառնա. նշենք միայն, որ թե՛ հայերենը իրանական լեզու և թե՛ ինքնուրույն լեզվաճյուղ համարողները այլևայլ փաստերի հետ շրջանառության էին՝ դնում հիմնականում հայերենի բառապաշարի տվյալները՝ վեր հանելով ոչ միայն նյութը, այլև կատարելով նյութի համեմատություն, ստուգաբանություն, այսինքն՝ գիտական քննություն: Լավագույն ուսումնասիրողներից մեկի՝ Լազարոֆի «Հայկական ուսումնասիրություններ» (1877) մեծածավալ աշխատանքը, փաստորեն, հայերենի բառապաշարի ուսումնասիրության պատմության և արդյունքների հանրագումար էր: Ստուգաբանված 2413 բառերի կեսից ավելին Լազարոֆի ստուգաբանություններն են, որոնց զգալի մասը՝ համոզիչ և ներառված են Հ.Աճառյանի Արմատական բառարանում:

Հայոց լեզվի մեծագույն ուսումնասիրողներից մեկը Հայնրիխ Հյուբշմանն է: Այն ժամանակ, երբ նշանավոր արևելագետների ու հայագետների ջանքերով կարծես թե անհերքելիորեն ապացուցվում էր հայերենի իրանական լեզու լինելը, Հյուբշմանը գիտական նոր, համոզիչ փաստերով ապացուցեց հակառակը՝ հայերենը առանձին ճյուղ է հնդեվրոպական լեզվաընտանիքում: Այս հիմնավորումը էապես պայմանավորեց հայերենի ուսումնասիրության հետագա ընթացքը: Նկատելով և ընդունելով իրանական զգալի բառաքանակի

առկայությունը հայերենում՝ Յուրբշմանը քննության առավ մաս հայերենի և պարսկերենի քերականական համակարգը՝ ցույց տալով, որ հայերենը ներկայանում է որպես ուրույն համակարգ՝ զգալապես տարբերվելով իրանական լեզուներից: Յուրբշմանի մեթոդներն ու սկզբունքները ուղենշային դարձան ընդհանրապես լեզուների ցեղակցության, այս կամ այն լեզվաընտանիքում նրանց գրաված տեղի պարզաբանման գործում: Հայերենի տարբեր իրողությունների վերաբերյալ գիտնականը ունի բազմաթիվ հետազոտություններ, որոնցից ուզում ենք առանձնացնել հատկապես «Հայերենի քերականությունը», քանի որ այն ամփոփում է նախորդ որոշ գործեր և վերաբերում է հիմնականում հայերենի բառապաշարի քննությանը, որին նա մեծ ուշադրություն է դարձնում մաս իր հիմնական եզրահանգումը հաստատելու համար: Աշխատության 17-91 էջերում քննված են իրանական ծագում ունեցող հատուկ անունները, բերվում է հայերեն բառը, տառադարձությունը, վկայությունը և ստուգաբանությունը: 91-259 էջերում քննված են իրանական փոխառությունները: Ցանկը ընդգրկում է 686 բառ՝ ագուռ-ից օշման: Քննվող բառերի մեծագույն մասը վկայված է V դարից: Նշենք, որ Յուրբշմանի ստուգաբանությունները, չնչին բացառությամբ, որպես ճշգրիտ ստուգաբանություններ, զետեղված են Արմատական բառարանում: Աշխատության երկրորդ հատորում քննված են ասորական փոխառությունները (50 հատուկ և 133 հասարակ անուն), հունական փոխառությունները (512 բառ): Խոսվում է մաս կովկասյան լեզուներից կատարված փոխառությունների մասին: Գրքի 399-504 էջերում բնիկ հայերեն բառերի քննությունն է (438 բառ)՝

Հայերենի լավագույն ուսումնասիրողներից մեկն էլ

* «Ուսումնասիրութիւնք հայերէնի փոխառեալ բառից» գրքում (Վիեննա, 1894) Դ.Տաշյանի թարգմանությամբ զետեղված են Յուրբշմանի «Սեմական փոխառեալ բառեր հայերէնի մէջ» և Յուրբշմանի աշակերտ Կ.Բրոկելմանի «Յունական փոխառեալ բառեր հայերէնի մէջ» աշխատությունները: ՀԱ-ի էջերում թարգմանաբար իրատարակվել է մաս Յուրբշմանի՝ հայոց տեղանուններին վերաբերող ուսումնասիրությունը, որն առանձին գրքով լույս է տեսել Վիեննայում 1907թ.:

Ք.Պատկանյանն է: Նա նույնպես հայերենը իրանական լեզու էր համարում, սակայն Յուրբշմանի աշխատությունից հետո փոխեց իր կարծիքը և դարձավ Յուրբշմանի տեսության ջերմ պաշտպանն ու զարգացնողը: Հայերենի բառապաշարի քննությանը Պատկանյանն անդրադարձել է տարբեր տեսանկյուններից ու կողմերից: Նրա ուշադրության կենտրոնում են եղել ուրարտական արձանագրությունները, V դարի մեր պատմիչների լեզուն: Պատկանյանն առաջինն էր նաև, որ կարևորեց հայ բարբառների ուսումնասիրությունը: Մեծ է Պատկանյանի դերը հատկապես հայերենի իրանական փոխառությունների ուսումնասիրության գործում: Այդ հարցին նա անդրադարձել է իր մի քանի աշխատություններում, ինչպես նոր փաստերի, այնպես էլ հենքի քննադատական՝ օգտագործմամբ (Патканов, 1863, 1871, 1884): Ի տարբերություն նախորդ շատ հետազոտողների, նա առաջադրում է իրանական բարբառային նյութի օգտագործման հարցը, գտնելով, որ շատ փաստեր առկա գրավոր նյութով չեն մեկնաբանվում:

Հայագիտության զարգացման գործում մեծ է Անտուան Մեյեի վաստակը: Լինելով ընդհանուր և համեմատական լեզվաբանության ականավոր ներկայացուցիչ, քաջատեղյակ լինելով հայերենին, հայոց պատմությանը և հայ կյանքին ընդհանրապես, Ա.Մեյեն բազմաթիվ ուսումնասիրություններում քննության է առել հայերենին վերաբերող տարբեր բնույթի հարցեր: Ինչ վերաբերում է բառապաշարի ուսումնասիրությանը, ապա այստեղ էլ նրա վաստակը մեծ է, արվածը՝ մեծարժեք ու ճշմարիտ:

Որպես համեմատական լեզվաբանության մեծ ներկայացուցիչ՝ նրա տեսադաշտից դուրս չէին կարող մնալ ստուգաբանական-բառաքննական հետազոտությունները, նա անդրադարձել է հայերենի բառաբարդման օրինաչափություններին, հայ մատենագիրների ու պատմիչների բնագրերի առանձին հատվածների քննությանը: Նա նաև հայերենի փոխառյալ բառապաշարի հմուտ հետազոտող էր: Յուրբշման-Մեյե ժամանակաշրջանի այլ համեմատաբաններ ևս այս կամ այն չափով

անդրադարձել են հայերենի բառապաշարի խնդրին, այդ հարցը հետազայում էլ, ըստ էության, դուրս չի մնացել ուսումնասիրության շրջանակներից: Այդպես է և մեր օրերում: Բազմաթիվ ստուգաբանություններ ունեն Դոուսեթը, Յեմալը, Գրեպպինը, Լինդեմանը: Հայերենի իրանական տարրին վերաբերող արժեքավոր հետազոտություններ ունեն Բենվենիստը, Բեյլին, Բոլոնիեզին, Լերուան, Շմիդտը, Բելարդին: Հ.Բեյլին խոտանասանկերենի ամբողջական քննությամբ շրջանառության մեջ է դնում իրանագիտական զգալի նոր նյութ, որը հնարավորություն է տալիս բացահայտելու հայերենի մի շարք չստուգաբանված բառերի իրանական բնույթը:

Գրաբարի բառապաշարի ուսումնասիրությանը մեծապես խթանեց ոսկեդարյան (դասական) և ոչ ոսկեդարյան (հետդասական) հայերեն տարբերակումը: Քանի որ այս հասկացությունները և նրանց բովանդակությունը խիստ կարևորվում են հայոց լեզվի պատմության էական խնդիրների լուսաբանման տեսանկյունից, և առկա են այդ հասկացությունների տարբեր ըմբռնումներ ու մեկնաբանություններ, ուստի անհրաժեշտ ենք համարում անդրադառնալ խնդրի ծագմանը և բուն իրողությանը*:

XIX դարի 30-40-ական թվականներին Վիեննայի Մխիթարյան միաբանության մի քանի անդամներ (Գարագաշյան, Գաթրիճյան, Սպենյան), խորապես ծանոթանալով V դարի մատենագրությանը, եկան այն եզրակացության, որ մատենագրության լեզուն միատարր չէ: Տարբերություններն ի հայտ են գալիս հիմնականում դարի առաջին կեսի, ավելի ճիշտ, մինչև 60-ական թթ., և երկրորդ կեսի գործերում, ինչպես նաև հիշյալ ժամանակահատվածներում գրված առանձին գործերի ու հեղինակների լեզվում:


Երկրորդական մի քանի հատկանիշներից զատ, այդ տարբերակման հիմքում առաջին հերթին Գաթրիճյանը և

*Հարցի կարևորությունը ստիպում է որոշ չափով խախտել դասակարգման սկզբունքները և անդրադառնալ նաև հայ գիտնականների նկատառումներին:

Գարագաշյանը դնում էին մի կողմից՝ մաքուր, ընտիր հայերենը, մյուս կողմից՝ օտարաբանություններով հայերենը: Առաջինը ստացավ ոսկեդարյան հայերեն անվանումը:

Համոզված լինելով հայտնագործության ճշմարտության մեջ՝ Գաթրըճյանը և Գարագաշյանը չշտապեցին հրապարակել դրույթները, այլ իրենց առաջադրած սկզբունքներով թարգմանեցին «Քոստոտեայ Խօսք վասն տիեզերական պատմութեան» աշխատությունը (1841թ.): Ոսկեդարյան գրաբարի տեսական սկզբունքներն առաջին անգամ հրապարակեց Մ.Գարագաշյանը «Նկարագիր ուսմանց» գործում (Վիեննա, 1845): 1849 թ. դրանց անդրադարձավ Բ.Սպենյանը՝ «Քաղուածք» գրքի առաջաբանում, Թ.Թոռնյանը «Հատընտիր ընթերցուածում» (Վիեննա, 1866): Նույն հարցին վերաբերող Գաթրըճյանի «Մաշտոցեան լեզու» հոդվածը հրատարակվեց նրա մահից հետո՝ 1913 թ. ՀԱ-ում: Ոսկեդարյան հայերենին նվիրված լավագույն աշխատանքներից է Բ.Սպենյանի «Ուսումն դասական հայերեն լեզուի» ծավալուն աշխատությունը, որը հեղինակի կենդանության օրոք լույս չտեսավ: 1900 թ. Տաշյանը ձեռնամուխ եղավ այդ գրքի հրատարակությանը: Գրքի առաջին մասը հրատարակվեց 1920 թ.: Տաշյանի լրացումներով ու ծանոթագրություններով: Դժբախտաբար այդ արժեքավոր գրքի երկրորդ մասը, որը ներառում է դասական հայերենի հետ կապված հիմնական խնդիրները, մնաց անտիպ: Սակայն ովքեր ծանոթ են այդ գործին, համարում են դասական լեզվին նվիրված արժեքավոր աշխատանք: «Սպենեան, որ կը հետևէր թե՛ բանասիրաց ժողովոյն աշխատանքներուն և թե՛ իւրաքանչիւր անհատի բանասիրական հետազոտութիւններուն և անձամբ միջամուխ էր դասական հեղինակներու ուսումնասիրութեան, հավաքեց ի մի ցիր վայրավատին տեսութիւններն և դիտողութիւնները և կազմեց սեպհական յօրինուածութեամբ «Ուսումն հայերեն դասական լեզուի»: Այստեղ տուած է դասական հայերենի յատուկ և խորթ կէտերու ուսումնասիրութիւնը. ոսկեղէն մատենագրութեան առաւելութիւնները..., ի վերջոյ դասական լեզուի շուրջը յուզուած խնդիրները» (*Ակիներան, 1932, 321*): Հետագայում ոսկե-

դարյան (դասական) հայերենի վերաբերյալ լույս տեսան մի շարք ուսումնասիրություններ, իսկ տարբեր բնույթի գործերում էլ շոշափվեց ոսկեդարյան հայերենի հարցը, որոնցում հիմնավորվում էր Գաթըրճյանի և Գարագաշյանի հայտնագործությունը, շրջանառության մեջ էին դրվում նոր փաստեր, նոր հատկանիշներ: Դ.Աճառյանը «Հայոց լեզվի պատմության» երկրորդ հատորում (էջ 76-94), հավաքելով և ի մի բերելով դասական գրաբարի հատկանիշները, ներկայացնում է դրանք 18 կետով: Այս կետերը ոսկեդարյան գրաբարի հայտնագործողները չեն առաջադրել միայն, այլ նաև հետագա լրացումներ են: Այս 18 կետերը հաշվի են առնում բառապաշարի տվյալները, բայց սրանք որակապես համարժեք հատկանիշներ չեն, և բոլորը չէ, որ բնութագրական են դասական գրաբարին: Գ.Ջահուկյանը հայոց լեզվի շրջանաբաժանման մեջ առանձնացնում է դասական և հետդասական գրաբարի ենթաշրջանները: Առաջինի մեջ ներառելով V դարը, հատկապես մինչև հինգերորդ դարի կեսերը, հունաբան դպրոցի սկզբնավորումը, երկրորդի մեջ՝ VI-VII դարերը: Այս շրջանների լեզվի բնութագրման համար Գ.Ջահուկյանը էական է համարում գրաբարի խոսակցական հիմքի հարցը: Դասական ենթաշրջանում, ըստ Գ. Ջահուկյանի, գրական և խոսակցական լեզուները հիմնականում համընկնում են. «Գրաբար ասելով կարելի է հասկանալ ընդհանուր հասկանալի լեզվի և գրավոր, և բանավոր տարբերակները» (*Ջահուկյան, 1964, 36*): Հետդասական շրջանում «գրաբարը իբրև գրական լեզու ավելի է հեռանում իր խոսակցական հիմքից. այստեղ դեր են խաղում մի կողմից հունաբան դպրոցի գործունեությունը, խոսակցական լեզվում չեղած և գրական լեզվի ազդեցության թուլացման պայմաններում լայն տարածում չստացած նորակազմությունները, նոր հեղինակների՝ հին օրինակներին հետևելու հակումը, մյուս կողմից գրաբարի հիմքում ընկած բարբառի բնականոն փոփոխությունն ու զարգացումը» (*Ն.տ., 47*): Գ.Ջահուկյանի շրջանաբաժանման մեջ չկա այն հատկանիշների ամբողջությունը, որ ամփոփված է Աճառյանի «Հայոց լեզվի պատմության» մեջ: Անշուշտ, ճիշտ է Գ.Ջահուկյանը, երբ



90903

այդ երկու ենթաշրջանների տարբերակիչ հատկանիշ է դիտում մաև հետդասական գրաբարում հունաբանության առկայությունը:

Վ.Առաքելյանը առանձին հոդվածով, ապա և «Ակնարկներ հայոց լեզվի պատմության» գրքում (*Երևան, 1981, 91-106*) նորովի և մանրակրկիտ անդրադարձավ դասական-հետդասական գրաբարի հարցին: Նա մեկ առ մեկ քննելով բոլոր 18 կետերը, ցույց տվեց, որ այն հատկանիշները, որոնք բնորոշ են համարվում դասական գրաբարին, բնորոշ են և հետդասական շրջանին, այնպես էլ հետդասական շրջանը բնութագրող լեզվական հատկանիշները կան և դասական շրջանում:

Ինչ խոսք, Վ.Առաքելյանի բժախնդիր համադրություններն ու փաստերի քննադատական կիրառումը նրա ուսումնասիրության լուրջ արժանիքներն են: Համոզված կարելի է ասել, որ հայոց լեզվի պատմության մասնագետները հետայսու իաշվի կառնեն գիտնականի եզրահանգումները: Ավելացնենք միայն, որ երկու ենթաշրջաններում մույն հատկանիշների գործառության փաստի մեջ գիտնականի ուշադրությունից վրիպել է այդ փաստերի քանակական առանձնահատկությունների խնդիրը:

Ուսումնասիրելով ոսկեդարյան գրաբարի հարցն արժարժող գրականությունը՝ ակնհայտ է դառնում այն էական տարբերությունը, որն առկա է նախնական հարցադրման ու փաստարկների և հարցի հետագա ընթացման միջև:

Ո՞րն էր ոսկեդարյան հայերենի տարբերակման պատճառը և նպատակը: Պատճառը V դարի հայ մատենագրության խոր ուսումնասիրությունն էր, որ հնարավոր դարձավ բազմաթիվ երկերի հրատարակումով: Հրատարակչական այս արժանավոր գործը սկսեցին վեներտիկցիները: 1820-36 թթ. լույս տեսան Եզնիկի, Ոսկեբերանի, Եփրեմի, Բարսեղ Կեսարացու, Եվսեբիոսի, Սեբերիանոսի և այլոց գործերը: Շուտով հրատարակչական գործին ձեռնամուխ եղան մաև Վիեննայի մխիթարյանները՝ 1832 թ. հրատարակելով Կյուրեղ Երուսաղեմացու «Կոչումն ընծայութեան» գիրքը: Հրատարակչական այս շարժումը հետաքրքրություն առաջացրեց ոչ միայն բովանդակության,

այլև լեզվի նկատմամբ: Ուսումնասիրելով այդ գրականությունը՝ վիեճակները լեզվական զանազանություններ գտան տարբեր գրվածքների միջև, իսկ այդ տարբերությունների վերհանումը հայեցողական չէր, այլ ենթադրում էր V դարի հայ մատենագրության խոր և համակողմանի ծանոթություն: Ահա թե ինչ է գրում ոսկեդարյան գրականության ջերմ պաշտպաններից մեկը՝ Գալենքերյանը. «Եթե ես պարտքս համարեցայ իմովսանն մասնակցիլ խնդրոյն «ոսկեդարեան գրաբարի» ջատագով կենալով, պատճառն այն է, որ 25 տարիէ վեր գրաբարի ուսմամբ զբաղած ըլլալով, մեծ սէր ունիմ գրաբարի Ե դարու հայ գրութիւններն ամբողջ ընթերցած, բառամթերքն, ասացուածներն, ոճերը քերականական երևոյթները բառագրքի ձևով համբարած եմ (ընդգծումը մերն է – Լ.Յ.): Յաջորդ դարերու գրութիւններն էլ կարդացած և այս խնդրոց վրայ գրուածներուն հետաքրքիր եղած եմ» (ՅԱ, 1903, 258): Անկախ այն բանից, թե ընդունելի՞ են ոսկեդարյան-հետոսկեդարյան գրաբարի տարբերակումները կամ դրանց հիմքում դրված տարբերակիչ հատկանիշները, ոչ ոք չի կարող չընդունել ոսկեդարյան գրաբարի ջատագովների քաջատեղյակությունը գրաբար մատենագրությանը, գրաբարի անթերի իմացությունը: Իսկ նման դեպքում նրանց առաջարկություններն այնքան էլ հեշտ մերժելի չեն կարող լինել:

V դարի երկատումը սոսկ մատենագրության առանձնահատկությունների արձանագրում չէր: Մխիթարյանների ծգտումը նաև հին հայերենին կենդանություն տալն է, այն որպես գրական լեզու շրջանառության մեջ դնելը: Նրանք տեսնում էին, որ դարերի ընթացքում գրաբարը բավական այլափոխվել է, հեռացել իր սկզբնական գրավոր ավանդված վիճակից: Նրանց նպատակը նաև գրաբարի մաքրագործումն էր օտար տարրերից ու քերականական կեղծ ձևերից: Այսինքն, մաքուր գրաբարի չափանիշը Մեսրոպի ու առաջին թարգմանիչների լեզուն էր: Սրանց լեզվում էլ կային փոխառություններ, բայց ինչպես նկատում է Ակինյանը. «Ժողովուրդն անձամբ մուտ շնորհած էր անոնց իւր լեզուին մէջ յընթացս այն դարերու, որոնք կը կանխեն Ե դարը: Ինչ-որ սեպհականացուած, ասով նուիրագործուած էր

իբրեւ հայ լեզուի բաղկացուցիչ մաս, ժառանգած էր գրաւորը անխտիր՝ հին լեզուին բառամթերքին հետ: Նա գիտցաւ առանց վնաս հասցնելու լեզուին հայեցի նկարագրին՝ հաշտեցնել հինը նորին հետ և այսպէս երևան բերել ճոխ, միանգամայն ուժեղ բարբառ մը, որ ռամկին դիւրաւուր և ազատին հաճելի ըլլալի» (*Ակինյան, 1932, 18*): Ահա այս հայերենի ջատագովներն էին Վիեննայի մխիթարյանները: Նկատենք, որ թեև վենետիկյան մխիթարյանները չընդունեցին ոսկեդարյան հասկացությունը որպէս V դարի առաջին կեսի լեզու, բայց նրանց գործունեությունը նույնպէս միտված էր գրաբարի մաքրագործմանը: Վիեննացիների ուսմունքի համոզված հակառակորդ, մեր մատենագրության մեկ այլ քաջատեղյակ անձնավորություն՝ Ա. Բագրատունին, նույնպէս ընդունում է ոսկեդար տարբերակումը՝ ներառելով V-VII դարերը: Ուրեմն, մխիթարյան երկու դպրոցներն էլ նկատել էին վաղ շրջանի գրաբարի առավելությունները, երկու դպրոցի ջանքերն էլ ուղղված էին նոր շրջանի գրաբարը օտարաբանություններից զտելուն: Մ. Ավգերյանի, Գ. Ավետիքյանի, Հյուրմուզյանի թարգմանություններում հենց նորոգ ու զտված գրաբարն էր: Ըստ էության, մխիթարյանների երկու դպրոցի վեճի հիմքում ընկած էր ոչ թե էապէս տարբեր ելակետ ու մոտեցում, այլ նույն հարցի ժամանակային տարբեր սահմանների և որոշ հատկանիշների տարբերություն: Վենետիկյան մխիթարյանները գտնում էին, որ միայն V դարի առաջին կեսի հայերենը օրինակելի համարելը ճիշտ չէ, իսկ վիեննացիներն էլ չէին ժխտում հետագա դարերի որոշ հեղինակների լեզվի մաքրությունը, հարազատությունը ոսկեդարյան լեզվին: Այսպիսի սթափ ու առարկայական գնահատությամբ հանդերձ, վիեննացիները, այնուամենայնիվ, առանձնացնում էին V դարի առաջին կեսի գրաբարը որպէս օրինակելի լեզու: Այդ առանձնացման հիմնական պատճառը նշված շրջանի լեզվի՝ հունաբանությունից զերծ լինելն է: Այսինքն, ոսկեդարյան և հետոսկեդարյան տարբերակման հիմքում, վերջին հաշվով, դրվում է **հունաբանության գործոնը**: Վերջինից ըստ էության հիմնովին զերծ էին Սահակի, Մեսրոպի և նրանց առաջին աշակերտների ինքնուրույն ու թարգմանական գործերը: Իսկ կրտսեր թարգմանիչները,

քաջ յուրացնելով մեսրոպյան ավանդները, այնուհանդերձ հունական քաղաքակրթության ու հունարենի ազդեցության տակ կամա թե ակամա մեր լեզուն էին մուծում հունարեն բառեր ու ոճեր, կատարում անհարկի պատճենումներ: Պետք է նկատի ունենալ մի հանգամանք ևս. ոսկեդարյան գրականության մեջ փիլիսոփայական գործեր համարյա չկային: «Դասական գրաբարի միակ թերութիւնը, — գրում է Ակինյանը, — իմաստասիրական մտքեր արտայայտելու անվարժութիւնն է: Փիլիսոփայական ուսումները, ինչպէս բնական է մտածել չէին կարող զարգացում գտնել աշխարհի մը մէջ, ուր չկար գիր և գրականութիւն» (*Ակինեան, 1932, 30*): Հետագայում, երբ լայնորեն ծավալվեց նաև փիլիսոփայական գրականության թարգմանությունը, ինքնաբերաբար մուտք գործեցին նաև օտարաբանություններ, օտար մտածողության արտահայտություններ: Ահա թե ինչ բնութագրումներ է տալիս Մ. Գարագաշյանը առաջին և երկրորդ թարգմանիչների լեզվին: Առաջին դեպքում. «...բառք և բարբառք հոյակապ, ընտիրք, անկեղծ և բուն հայկականք, ամենայն փոփոխմունք անուանց և խոնարհմունք բանից միակերպ, վերադիրք (ածականք) բնականք և ճշդիւ յայտարարք զօրութեան և մտաց գոյականաց, ոչ ի քմաց հնարեալք... կարգ յստակ և դիրիմաց...»: Երկրորդ դեպքում. «...յո՞ճ և յասացուածս լեզուի երկրորդ թարգմանչացս զհայ լեզու յայնպիսի կերպարանս փոխեալ տեսանեմք, զորպիսի ի սկզբանէ ցայնժամ չունէր. զի զոր ինչ և առանձինն ունէր հայկական բարբառ, այն ի յոյն անդր այլակերպեցաւ: Ի բազումս ի նոցանէ բանք կամ լաւ ևս ասել հնչմունք միայն հայերենք են, իսկ կազմութիւն կամ յօդուած բանից և ասացուածոց յունարէն: Սորա նախ զամենայն յունական բանս ի հայ փոխեցին, տալով զկազմութիւն յունացն՝ հայ բանից» (*Գարագաշեան, 1845, 33*):

Ի դեպ, դասական գրաբարի կողմնակիցները հունական բոլոր ազդեցությունները խորթ չէին համարում. նրանք տարբերակում էին արհեստական, թարգմանությունների միջոցով անցած օտար ձևերը վաղնջական փոխառություններից ու ընդօրինակություններից (*Գաթրոճեան, 1913, 720*): Կարելի է բազմաթիվ հղումներ բերել հաստատելու, որ իրոք ոսկեդարյան

գրաբար հասկացության ջատագովները առաջին հերթին նկատի ունեին հունաբանությունից գերծ գրաբարը:

Արդյոք արդարանո՞ւմ է լեզվի շրջանաբաժանումը կեսդարյա ժամանակային սահմաններով: Իհարկե, սովորաբար շրջանաբաժանումները ընդգրկում են երկարատև, մույնիսկ դարերի հասնող ժամանակային սահմաններ, որովհետև երկար ժամանակի մեջ են կատարվում որակակազմ փոփոխություններ: Հայտնի բան է, որ կարճ ժամանակահատվածում լեզվում էական փոփոխություններ չեն կարող լինել, առավել ևս այդ փոփոխությունները համակարգային լինել չեն կարող: Այս տեսակետից թերևս իրավացի են դասական գրաբարի ենթաշրջանի գոյության դեմ առարկող լեզվաբանները: Այս իրողությունը գիտեին և դասական գրաբարի գտիչները, իսկ Գաթրոճյանը տալիս է և այդ տարբերակման հիմնավորումը. «Այնչափ քիչ ժամանակի տարբերութեան մէջ այնչափ մեծ լեզուի փոփոխութիւն մը կամ անկում մը ըստ ինքեան անպատեհ է մտածել, եթէ իրը բնական ընթացքի մէջ մնացած ըլլար: Բայց զանոնք իրարմէ բաժանողը այնչափ ժամանակը չէ, որչափ դպրոցը կամ ուսումն է՝ որով վերջիները յունական լեզուի երկարագոյն և կատարելագոյն հրահանգ առած են» (*Մշվ. աշխ.*, 720): Սա, ինչ խոսք, գիտական հիմնավորում է, որով ավելի տրամաբանական է դառնում դասական գրաբարի գոյությունը:

Ամփոփենք: Անշուշտ, պետք է վերանայվի դասական գրաբար հասկացության դասական ըմբռնումը: Այդ տարբերակումը մեր լեզվի պատմության սոսկ ժամանակային սահմանադատում չպետք է համարել, այլ V դարի գրաբարի այն որակը, որը շարունակում է նախագրային շրջանի լեզվի ավանդույթները՝ գերծ մնալով օտար՝ հիմնականում հունական ազդեցություններից: Դասական-հետդասական տարբերակման հիմքում պետք է տեսնել լեզվական, քան թե ժամանակային հատկանիշ: Այդպիսին էր և դասական գրաբարի գտիչների սկզբունքը: Հունաբանությունից գերծ գործեր կան նաև V դարի 60-ական թվականներից հետո, հունաբանություններ կան V դարի առաջին կեսի որոշ գործերում: Ի դեպ, դասական-հետդասական, մեսրոպյան-հետմեսրոպյան անվանումներն էլ շրջանառության

մեջ են դրվել հետագայում. սկզբնապես գործառել է ոսկեդար-
յան-ոչ ոսկեդարյան հասկացությունը: Ավելի ուշ ոսկեդեն,
ոսկեդարյան բնորոշումները վերագրվել են V դարի համա-
պատասխան մատենագրությանը, իսկ դասական-ը՝ այդ
մատենագրության լեզվին: «Միայն լեզու ոսկեդեն դարու հայ
դպրութեան է բուն դասական հայերեն լեզու» (*Սպենեան-
Տաշեան, Ուսումն. Ծ*): «Առանց տարակուսի մատենագրական
այն շրջանը, որ գրի գիտով սկիզբ առաւ. Ե դարու առաջին
կեսին, ամենն աւելի ճոխ է թէ՛ մատենագրական արտադրու-
թեամբը, թէ լեզուի բնիկ նկարագրովն և թէ քերականական-
համաձայնական կանոնաւորութեամբն և պերճութեամբը:
Ուստի այս շրջանն ունի ամեն առաւելութիւն կոչելու ոսկի դար
հայ մատենագրութեան և լեզուն դասական հայերեն»
(*Ակինեան, 1932, 149*): Մանրագնին ուսումնասիրելով մատենա-
գրությունը՝ Վիեննայի միսիթարյանները դասական հայերենը
առանձնացնում են մաւ ըստ դասերի: Թե այս կամ այն դասի
մեջ ինչ ինքնուրույն ու թարգմանական գործեր են մտնում, ինչ
հատկանիշներով են տարբերվում այդ դասերը, առանձին
քննության չենք առնում. դա մանրամասն ուսումնասիրված է
(Բյուզանդացի, Ակինյան, Աճառյան, Առաքելյան...): Նշենք
միայն, որ այդ դասերի միջև էլ առկայանում են որոշ տարբերու-
թյուններ: Անկախ այդ դասերի անվանումներից ու ընդգրկումից,
V դարի մատենագրության լեզվի տարբերակման տերմիններից
ու այդ տարբերակման հիմքում դրված հատկանիշների
բնույթից ու կարևորությունից դասական-հետդասական տար-
բերակումը մեծապես նպաստեց V դարի հայերենի աննախըն-
թաց ու խոր ուսումնասիրմանը:

Ինչպես տեսանք, բառապաշարի ուսումնասիրության
յուրահատուկ խթան էր V դարի ինքնուրույն և թարգմանական
գրականության հրատարակումը: Սրա հետ կապված բառա-
պաշարի քննությունը իրականացնում է՝ հայտնի ձեռագրերի ու
հրատարակությունների համեմատությամբ, թարգմանական
բնագրերի համեմատությամբ, բառաքննական ճշգրտումներով:
Այս հարցերը արծարծվում են տվյալ գրքի համապատասխան
ծանոթագրություններում, նախաբանում կամ՝ վերջաբանում,

առանձնապես տվյալ աշխատությանը նվիրված առանձին մենագրություններում կամ հոդվածներում: Անգնահատելի է այս տեսակետից ժամանակի հայ բանասիրական միտքը արտացոլող երեք պարբերականների՝ «Բազմավեպի», «Հանդես ամսօրյայի» և «Արարատ» ամսագրերի դերը: Հիշյալ պարբերականներում V դարի ինքնուրույն ու թարգմանական գործերի վերաբերյալ արվում են արժեքավոր դիտողություններ և ուղղումներ: Մի շարք ուսումնասիրություններ թեև զուտ բանասիրական նպատակ են հետապնդում, սակայն հարցերի պարզաբանման համար շրջանառության է դրվում լեզվական նյութը: Այդպես է, օրինակ, օտար բնագրերի համեմատումը, որով էական ճշգրտումներ են կատարվում թարգմանական գրականության մեջ: Այս գործի ռաիվիրաներն էին դարձյալ մխիթարյանները, որոնց բանասիրական, լեզվաբանական պատրաստվածությունը, հին և նոր լեզուների իմացությունը, նրանց հետազոտությունների պատշաճ մակարդակի գրավականներն էին: Բազմաթիվ ուսումնասիրություններից նշենք մի քանիսը: Ս.Կոզյանի «Մակաբայեցւոց Բ գրքի հայերէն թարգմանութիւնը» (Վիեննա, 1923) աշխատության մեջ մանրամասն համադրվում քննվում է հայկական և հունական բնագիրը: Մեզ համար կարևոր է հատկապես աշխատանքի վերջին՝ ծավալուն բաժինը, որտեղ արժարժվում են լեզվական-բառապաշարային հարցեր: Մանրամասն քննվում են բազմաթիվ բառեր, կապակցություններ ու ոճեր՝ համեմատելով ոչ միայն հունարենի, այլև, հարկ եղած դեպքում, ասորերեն բնագրի հետ: Նման կարգի քննությամբ հեղինակը գտնում է օրինակ, որ «մեր գիրքը ոչ այնքան նոր բառեր կը ներկայացնէ, որքան ծանօթ բառերու եզական, ինքնուրույն առումներ» (էջ 199): Նմանաբանությամբ աշխատանք է և Հ.Թորոսյանի «Ս. Եփրեմի «Յայլակերպութիւն տեառն» ճառի լրացուցիչ անտիպ մասերի քննությունը» (ՀԱ, 1927): V դարի մի շարք հեղինակների բառապաշարի, ոճական առանձնահատկությունների խորիմաց քննություն է կատարել Բ.Սարգիսյանը: Ուշագրավ է հատկապես երկու աշխատություն. «Ագաթանգեղոս և իւր բազմադարեան գաղտնիքն» (Վենետիկ, 1890) և «Քննադատութիւն Յովհան Մանդակունւոյ և իւր երկա-

սիրութեանց վրա» (Վենետիկ, 1895): Առաջին գրքում թեև լեզվական փաստերի քննությունը ծավալուն չէ, սակայն եղած վերլուծությունները բավական արժեքավոր են: Օրինակ, առանձնացվում են այն դարձվածներն ու ոճերը, որոնք հունական ազդեցություններ են՝ պատճենումներ կամ թարգմանություններ: Նշվում են մոտ երկու տասնյակ բառեր՝ հունական փոխառություններ, որոնք մեր մատենագրության մեջ առաջին անգամ օգտագործել է Ագաթանգեղոսը (կոմս, լեզեոն, մարտիրոս....) (էջ 307):

3. Մանդակունուն նվիրված երկասիրության մեջ, ձեռագրական տարբերությունների վերհանումից զատ, քննվում է Մանդակունու լեզուն և ոճը: Որպես հիմնական առանձնահատկություն է նկատվում Մանդակունու լեզվի ժողովրդական, հայեցի բնույթը, որն արտահայտվում է հատկապես դարձվածներում ու ոճերում: Այդ կարգի օրինակներից նշենք. յաչս առբերան (համբուրել), լուծանել զգիղս սատանայի (հաղթել), տալ զունկն բանի (լսել), քնոյ տալ զանձն (քնել) և այլն: Բ. Սարգիսյանը նկատում է նաև մի շարք բառեր, «որոնք չենք հանդիպում ոչ Ե դարու միւս հայ հեղինակութեանց և ոչ հայկազեան բառարանի մէջ» (վաշխաժողով, աղափարի, գրաւահարկ, սամթաջուր...):

Գրաբարի բառապաշարի ուսումնասիրության գործում մեծ վաստակ ունի Ն. Բյուզանդացին: «Հայկական բառաքննութիւն» (Պոլիս, 1880) գրքի առաջին բաժնում քննվում և ուղղվում են այն սխալ ձևերը, որոնք տառերի նմանության հետևանքով առաջացած սխալներ են (վրիպակք ի նմանութենէ նշանագրաց): Ասպազան (ասպուզան), գամապետ (գումապետ), մեղանք (սեղանոք) և այլն: Նա առանձնացնում է նաև վրիպակներ, որոնք առաջացել են «երկու կից բառերու անդամները մէկմէկու հետ շփոթելէն կամ միոյն գիրը միաւսին տալէն»: անփոփոխք անուն / անփոփոխ քանուն: Գրքի երկրորդ բաժնում քննված են Եզնիկի, Ոսկեբերանի, Սեբերիանոս Եմեսացու, Ագաթանգեղոսի, Բուզանդի, Բարսեղ Կեսարացու, Մանդակունու, Խորենացու, Փիլոն Եբրայեցու, Եղիշեի, Փարպեցու, ինչպես նաև հետհինգերորդ դարյան որոշ գործերի առանձին

հատվածներ: Բյուզանդացու «Կորին վարդապետ և նորին թարգմանութիւնք» (Տփղիս, 1900) գիրքը իրավամբ կարելի է համարել V դարի հայ մատենագրության լեզվի լավագույն ուսումնասիրություններից մեկը: Կորյունի «Վարք Մաշտոցի»-ն համեմատելով այդ դարում գրված կամ թարգմանված մի շարք աշխատությունների հետ, Բյուզանդացին գտնում է, որ հետևյալ գործերը նույնպես Կորյունի թարգմանություններն են. ա) Մակաբայեցւոց երեք գիրքը, բ) Եւթաղի Աղեքսանդրացւոյ Յառաջաբանք և Գլուխ Գործոց Առաքելոց, թղթոց Կաթողիկեայ և Պողոսի Թղթոց, Յիշատակարան և Աղերս, գ) Ագաթանգեղայ Պատմութիւն Դարծի Հայաստան աշխարհին, դ) Փաւստոսի Բիւզանդայ Պատմութիւն Հայոց:

Հավանորեն ա և բ կետերում թվարկվածները, իրոք, Կորյունի թարգմանածներն են, ինչ վերաբերում է Ագաթանգեղոսին և Բուզանդին, ապա այս հարցում գիտնականը, անշուշտ, ճիշտ չէ: Հայ բանասիրության մեջ վաղուց մերժված է այդ վարկածը, և իրավացիորեն Փավստոսն ու Ագաթանգեղոսը համարվում են հայ հեղինակներ, որոնք մեր մայրենի լեզվով գրել են մեր «Պատմությունները»: Բյուզանդացու երկասիրությունը պետք է գնահատել ոչ թե եզրահանգումների, այլ փաստերի մանրակրկիտ վերլուծության տեսանկյունից:

Քննության արժեքավոր նյութ են տալիս նաև նորահայտ ձեռագրերը: 1896 թ., գործուղման մեջ լինելով Էջմիածնում, պրոֆ. Գ. Խալաթյանը հայտնաբերում է «Մնացորդաց» գրքի մի ձեռագիր, որը զգալապես տարբերվում էր հայտնի մյուս ձեռագրերից ու Ս. Գրքում զետեղվածից: 1899 թ. հրատարակվում է այն՝ համապատասխան առաջաբանով ու ծանոթագրություններով: Այս գործը, որ հետագայում հայտնի դարձավ «Նորագիւտ գիրք մնացորդաց» անունով, բանասիրական անգնահատելի արժեքից զատ, կարևորվում է նաև լեզվական նյութի տեսակետից: Կան բազմաթիվ ասորաբանություններ, նորահայտ բառեր: Այս գրքի լեզվական իրողություններին անդրադարձել են Խալաթյանը, Հ. Աճառյանը («Հայերեն նորագիւտ բառեր Մնացորդաց գրոց մեջ» (Վիեննա, 1902), ասորագետ Լ.Տեր-Պետրոսյանը (*REA*, 1984, 215-225): Վերջինս նույնպես

գտնում է, որ այն թարգմանվել է ասորերենից՝ V դարի առաջին տասնամյակում: Հին բնագրերի հրատարակման ու ուսումնասիրության գործում անուրանալի է և Ն. Ակինյանի դերը: Նրա հետազոտությունները հիմնականում զետեղված են ՀԱ-ի էջերում, որոնք հետագայում հրատարակվել են և առանձին գրքերով: Եղիշեին, Փարպեցուն, Կորյունին, Ագաթանգեղոսին նվիրված ուսումնասիրություններից բացի, նա ակնառու աշխատանք է կատարել թարգմանական գրականության (վարքագրություն, կցուրդներ, ճառեր) հետազոտման գործում: Իր բեղմնավոր կյանքի վերջին շրջանում էլ Ակինյանը շարունակում է այդ աշխատանքները. 1956-58 թթ. հրատարակում է Եվսեբիոսի մի քանի անտիպ ճառերը՝ համապատասխան ծանոթագրություններով: Ակինյանի գտած Ոսկեբերանի՝ Եփեսացուց թղթի մեկնության մեկ այլ անհայտ հատվածի ուսումնասիրությունը կատարել է Ինգլիզյանը (ՀԱ, 1962, 1-7): 1957 թ. Ակինյանը հրատարակում է Եփրեմ Ասորու «Կցուրդները»՝ ծանոթագրություններով ու բառաքննական դիտողություններով: Այս գործի բնագրային ճշտումներ է կատարել Լ.Տեր-Պետրոսյանը (ՀԱ, 1978, 15-47): Փարպեցու երկի բնագրի հարցի ծավալուն քննությունն է ՀԱ 1972-73 թթ. համարներում: Եզնիկի երկի հատվածի բնագրային վերլուծությանն է նվիրված Ս. Մինասյանի հոդվածը («Բազմավեպ», 1974, 106-127), որը այս հարցի շուրջ Հ.Աճառյանի և Մարիեսի միջև 1924-28 թթ. ծավալված բանավեճի անդրադարձն է:

Դասական բնագրերի ուսումնասիրությամբ զբաղվել է և Ա.Վարդանյանը: Ուշադրության արժանի է «Դասական մանր բնագիրներ և ծեռագրական համեմատություններ» (Վիեննա, 1913) աշխատությունը: Տեքստաբանական, բնագրագիտական բժախնդիր համեմատություններից հետո, վերջում տրվում է բառացանկ «ուր բովանդակուած են ոչ միայն նորագիտ ու ցանցառ, այլ նաև քննութեան ենթարկուած և իբրև ոչ ընտիր ճանաչուած և դատապարտուած բառեր ու ձևեր, որոնք նախորդներէն դիւրութեամբ զանազանելու համար տպուած են նոտրագիր»: Ա.Վարդանյանի անուրանալի դերը բառաքննական արժեքավոր բազմաթիվ դիտողությունների ու քննությունների

մեջ է: Այս կարգի նրա բազմաթիվ հոդվածներ ամփոփված են «Բառաքննական դիտողություններ» մեծարժեք աշխատության մեջ (Վիեննա, 1913, 1921), ուր քննված են դասական մատենագրության մեջ ավանդված՝ ավելի քան 300 բառ: Այս բառերի մի մասի առաջին գիտական ստուգաբանությունը տալիս է հենդինակը, մի շարք բառեր համեմատվում են հունական, եբրայական, ասորական բնագրերի համապատասխանականների հետ, կատարվում է բառածևի ու բառիմաստի ճշգրտում: Ըստ անհրաժեշտության, Վարդանյանի բառաքննական դիտողություններին կանդրադառնանք մեր աշխատանքի համապատասխան բաժիններում: Նշենք միայն, որ բառապաշարի ուսումնասիրության այդ ասպարեզում նրա կատարած գործը լուրջ ու մնայուն է՝ չգիջելով նույնիսկ Հ. Աճառյանի նմանաբնույթ աշխատանքներին: Ավելորդ չէ նշել, որ Արմատական բառարանում Հ. Աճառյանը հաշվի է առել Ա. Վարդանյանի բազմաթիվ նկատառումներ ու ճշգրտումներ:

Գ) Ուսումնասիրության երրորդ (խորհրդային) շրջան

Այս շրջանում հիմն հայերենի բառապաշարի ուսումնասիրությունը ընթանում էր դարձյալ մի քանի ուղղություններով: Կատարվում են բազմաթիվ ստուգաբանություններ, վեր են հանվում հայերենի և ոչ հնդեվրոպական լեզուների որոշ աղերսներ, խորապես ուսումնասիրվում է փոխառյալ բառաշերտը, և ընդհանրապես, մատենագրության լեզուն և ոճը: Հրատարակվում են նոր քննական բնագրեր: Ձգալի աշխատանք է կատարվում գրաբարի և բարբառների աղերսների բացահայտման գործում: Այս տեսակետից կարևոր էր 60-ական թվականներին հայ բարբառների ծագման շուրջ ծավալված բանավեճը, որտեղ գրաբար-բարբառ կապի բացահայտման համար շրջանառության էին դնում փաստեր, փաստերի նոր, երբեմն իրարամերժ գնահատումներ: Բարբառային տարրերը, դրանց տարածքային գոլգահեռները կարևորվում են գրաբարյան ձևերի ու իմաստների ճշգրտման գործում:

Խորհրդային շրջանում գրաբարի բառապաշարի քննու-

թյունը կարելի է ներկայացնել ըստ ուսումնասիրությունների բնույթի ու հարցադրումների, բայց քանի որ նշված շրջանը երկար ժամանակահատված չի ընդգրկում, ուստի նպատակահարմար ենք գտնում խոսելու առանձին աշխատանքների վերաբերյալ: Խորհրդահայ լեզվաբանության կազմավորումն ու զարգացումը մեծապես կապված է Հ. Աճառյանի անվան հետ: Իր մեծարժեք աշխատություններով ականավոր լեզվաբանը ոչ միայն թողեց լեզվաբանական հարուստ ժառանգություն, այլև նախանշեց խորհրդահայ լեզվաբանության զարգացման ուղիները, այդ ուղիներով անվրեպ անցնելու ճշմարիտ միջոցները: Լեզվաբանության և ընդհանրապես գիտության համար ոչ նպաստավոր ժամանակաշրջանում էլ Աճառյանը տուրք չտվեց այս կամ այն հակագիտական ուսմունքներին ու ուղղություններին՝ հարազատ մնալով իր որդեգրած սկզբունքներին, ճշմարիտ գիտության շահերին: Մեծ է Աճառյանի վաստակը և գրաբարի բառապաշարի ուսումնասիրման գործում: Անցյալ դարի 90-ական թվականներից մինչև կյանքի վերջին տարիները նա հրատարակել է բազմաթիվ բառաքննական հոդվածներ, որոնք սփռված են խորհրդային և արտասահմանյան պարբերականների էջերում: Աճառյանի գիտական վաստակի անմահ կոթողը Արմատական բառարանն է՝:

Այս բառարանը գիտնականի շուրջ 40 տարվա քրտնաջան աշխատանքի արդյունքն է: Հսկայածավալ այդ բառարանում ամփոփված է հայերենի բառապաշարը, կատարված է այդ բառապաշարի համակողմանի քննություն: Բառարանի բուն նպատակը բառերի ստուգաբանությունն է: Աճառյանը ի մի բերելով նախորդների արածները՝ համադրելով ու քննելով դրանք, ներկայացնում է հավաստի ստուգաբանությունը: Ստուգաբանությունների մի պատկառելի քանակ հենց Աճառ-

* Այլ լեզուներով բառարանը անվանվում է հաճախ ստուգաբանական բառարան, որը մասնակիորեն է արտացոլում բառարանի բովանդակությունը և ընդգրկումը: Ի դեպ, Արմատական բառարան հասկացությունն էլ ընդգրկում տերմին չէ: Ակիմյանը նախընտրում էր ԲԱՌԱԳԱՆԶ ՀԱՅԵՐԷՆ ԼԵԶՈՒԻ, արմատական, ստուգաբանական, գավառաբանական և պատմական ուսումնասիրութեամբ բառերու վերնագիրը (ՀԱ, 1930, 483):

յանինն է: Մի խոսքով, այս բառարանը նաև Աճառյանի բառաքննական աշխատանքների ամփոփումն է: Սակայն այս բառարանի արժանիքը միայն ստուգաբանության մեջ չէ: Յուրաքանչյուր արմատից (բառից) հետո նշվում են հոլովման և խոնարհման տիպերը, բառիմաստները, վկայությունները, այդ արմատով կազմված բառերը և նույնիսկ տարբեր գրչությունները: Հենց միայն բառերի վկայությունների արտացոլումը ինքնին լուրջ ուսումնասիրություն է: Բառարանը տեղեկություններ է տալիս նաև V դարում վկայված բառերի, նրանց իմաստների ու հետագա իմաստային ու բառաձևային փոփոխությունների մասին: Բառարանը տարբերակում է բուն հնդեվրոպական և փոխառյալ բառերը, նշում վերջիններիս փոխառության բուն աղբյուրը, փոխառու լեզվի վկայված կամ վերականգնված ձևը: Աճառյանը ներկայացնում է նաև տվյալ բառի բարբառային ձևերը, որ անգնահատելի նյութ է հայ բարբառների ուսումնասիրման գործում: Մեր կարծիքով բառարանի էական արժանիքը այս կամ այն բառի ստուգաբանության պատմության ներկայացումն է: Սրանով, փաստորեն ամփոփ տրվում է հայերենի պատմական բառագիտության զարգացման ընթացքը, որն իր հերթին կարևոր ուղեցույց է նոր ուսումնասիրությունների համար: Աճառյանի բառարանում կան նաև բազմաթիվ չստուգաբանված բառեր, նա անդրադառնում է նաև իր կարծիքով մերժելի ստուգաբանություններին: Սա էլ մեծ օգնություն է ուսումնասիրողին: Նոր փաստերով ու տվյալներով այժմ մի շարք բառերի ստուգաբանության հիմքում դրվում են Աճառյանի կողմից չընդունված վարկածները. դա բնական է: Հետաճառյանական շատ ստուգաբանություններում գործում է մոտավորապես այսպիսի բանաձև-ձևակերպում. «... թեև Աճառյանը մերժում է այսինչ գուգահեռը, բայց այժմ այն հավաստի է թվում, որովհետև...»: Աճառյանի բառարանը ըստ արժանվույն գնահատվել է գիտական հասարակայնության կողմից: Այսօր էլ ոչ միայն հայ, այլև օտար համեմատաբանները մեծապես օգտվում են այդ բառարանից: Ն. Ակինյանի խոսքերով, «դարակազմիկ աշխատութիւն մըն է, որ ... պահանջքն էր ժամանակիս» (*ՀԱ, 1930, 482*), Ակինյանը, նկարագրելով

բառարանի բաժիններն ու կառուցվածքը, գրում է. «Ձգլխիչ ծրագիր արդարև: Ի տես այս ծրագրին պիտի բացագանչէի թէ հեղինակը ձեռնամուխ եղած է յանհնարիս: Անհատական ոյժը չէր կարող հասնիլ այս ընդարձակածաւալ կառուցվածքին կատարման: Բայց Աճառեան հասած է բարեաւ: Նա տուած է աշխատութիւն մը, որ կը մնայ աննախընթաց օրինակ, նոյն իսկ համաշխարհային գրականութեան մեջ» (*Մ.տ., 484*): Այդ մտքի լրացումն է մի այլ կարծիք. «Արմատական բառարանը իր կատարելությամբ օրինակ կարող է ծառայել այլ լեզուների ստուգաբանական բառարաններ կազմելու համար» (*Աղայան, 1962, հտ. II, 189*): Արմատական բառարանը այն եզակի ճակատագիր ունեցող գրքերից է, որտեղ գիտականությունն ու մատչելիությունը սերտորեն միահիյուսված են: Ավարտենք բառարանի մասին մեր նկատառումները, մեքքերելով դարձյալ Ակինյանից. «Հաճելի էր անշուշտ ապրիլ դեռ երկար Աճառյանի հետ և վիճել բառերու շուրջ,— գրում է նա Արմատականը կարդալուց հետո,— պիտի հեռանամ քաղցր տպավորութեամբ: Բայց Արմատական բառարանը պիտի մնայ սեղանիս վրայ, ինձ ընկեր ու խորհրդատու: Եվ ո՞վ է, որ չկարօտի այսպիսի ընկերի ու բարեկամի: Անոր խորհուրդները պիտի ըլլան ուղղիչ և առաջնորդ ամեն անոց, որոնք պիտի ընթանան լեզուագիտական ասպարեզի վրայ առաջ. պիտի մխին բանասիրութեան լաբիրինթոսը» (*Մ.տ.*):

Հայերենի բառապաշարի ուսումնասիրության գործին մեծ նպաստ է նաև Աճառյանի «Հայոց անձնանունների բառարանը» (Ե. 1942-46): Հինգ հատորանոց այս աշխատության մեջ հավաքված և ստուգաբանված են հայ մատենագրության մեջ (հիմնականում մինչև XV դարը) հանդիպող անձնանունները: Արմատական բառարանից հետո էլ լույս են տեսնում Աճառյանի մի քանի ստուգաբանական հոդվածներ, որոնց մեջ արժեքավոր է նրա «Հայկական» շարքը, որ զետեղված է ԳԱ «Տեղեկագրի» 1944-1950 թթ. համարներում: Քանի որ դա ըստ էության Արմատական բառարանի լրացումն է, ապա ճիշտ են վարվել բառարանի նոր հրատարակիչները՝ այն զետեղելով բառարանի IV հատորի վերջում, որպես հավելված-լրացում:

Օգտագործելով Արմատական բառարանի ծավալուն նյու-

թը՝ Աճառյանը 1940 թ. հրատարակում է «Հայոց լեզվի պատմության» առաջին, իսկ 1951 թ.՝ երկրորդ հատորը: Առաջին հատորում համառոտակի խոսվում է հայերենի՝ հ.-ե. լեզուների շրջանում գրաված դիրքի մասին, ապա առանձին ցանկով ներկայացվում են բնիկ հայերեն բառերը (թվով 713): Աշխատության հիմնական բաժինը օտար փոխառությունների քննությունն է (հաթերեն, թրակերեն, փոյուզերեն, փոքրասիական լեզուներ, լատիներեն, ասորերեն, իրանական լեզուներ): Երկրորդ հատորում քննված են հին հայերենի տարբեր փուլերին ու լեզվավիճակներին վերաբերող հարցեր: Գրաբարին առնչվող հատվածներում դարձյալ խոր քննության են ենթարկվում հունական, եբրայական փոխառությունները: Առանձին գլուխներում հետազոտվում են մախազրային կամ վիպասանական, մեսրոպյան և հետմեսրոպյան հայերենը, V դարի բարբառների հարցը, հունաբան հայերենը: Այս բոլոր հարցերը բնականաբար մույն մակարդակով ու խորությամբ չեն քննվում: Դա բացատրվում է, մախ և առաջ, մյուսի առանձնահատկություններով: Չնայած հայոց լեզվի պատմության շատ հարցերի վերաբերյալ կային լուրջ ուսումնասիրություններ, նրա երկհատորյակը, որպես մեր լեզվի պատմության համակարգային ու ամբողջական ուսումնասիրություն, մեզանում դարձյալ առաջինն է:

Հայոց լեզվի պատմության, այդ թվում և բառապաշարի հարցերին են մվիրված Գ.Ղափանցյանի մի շարք հետազոտություններ: Նրա ուշադրության կենտրոնում է եղել հայերենի և դրացի լեզուների առնչությունների խնդիրը: Ղափանցյանի աշխատություններում հաճախ լեզվական փաստերը քննվում են պատմական, բանասիրական տվյալների հենքի վրա, որը չափազանց արժեքավոր է: Եթե որոշ դեպքերում լեզվական կողմին վերաբերող եզրահանգումները կարող են վիճելի լինել, ապա պատմական-բանասիրական տվյալները օգտակար են հայագիտական տարբեր բնագավառների համար: Անդրադառնանք նրա մի քանի աշխատություններին: 1926 թ. լույս տեսած «Հնէաբանական մի քանի մնացորդներ հայերենում» ուսումնասիրության մեջ քննվում են և հնչյուն ունեցող մի շարք բառեր

(արտասւր, գիւտ, մաւտ), ստուգաբանվում առիւծ, խլեզ, մորմ բառերը: Chetto-armeniaca աշխատության մեջ (Երևան, 1931-33) քննվում են հայերենի և խեթերենի աղերսները: Այս հարցն արդեն ոչ միայն լեզվական, այլև երկու ժողովուրդների դիցարանների ուսումնասիրությամբ արծարծված է նրա “Хетские корни у армян” (1940) գործում: «Ուրարտուի պատմությունը» (1940) ուսումնասիրության մեջ մեծ տեղ է հատկացված հայուրարտական լեզվական աղերսներին, «Ասուրա-բաբելական բառեր հայերենում» աշխատության մեջ Ղափանցյանը նախ առանձնացնում է Արմատական բառարանում Աճառյանի ներկայացրած հայ-ակկադական ընդհանուր բառերը (թվով 25), 35 նոր բառերի ստուգաբանություններն էլ տալիս է ինքը: Այս ուսումնասիրության մեջ Ղափանցյանը քննում է նաև հայերեն մի շարք բառերում հանդես եկող ան- ոչ ժխտական ածանցի հարցը (անձեռոց, անկողին): Այս տիպի բառերում ան-ը ունի «համար», «վրա» իմաստը: Եթե նախորդ մի հոդվածում (*ԳԱ «Տեղեկագիր», 1926, N 1*) Ղափանցյանը ան-ի այդ իմաստն ու գործառությունը կապում է հ.-ե. առա կամ:՝առ նախորդի հետ, «Այժմ,— գրում է Ղափանցյանը,— ինձ ավելի հավանական է թվում մեր այդ հին մասնիկը սերել սեմական աղբյուրից, թեպետ սրանով ես չեմ ուզում մերժել երկու ակունքների կոնտամինացիան, որ երբեմն տեսնում ենք այլ բառերի ծագման ու ձևավորման մեջ: Համեմատել հենց օրինակ մեր ես դերանվան ծագումը, ի նկատի ունենալով լատ. և հուն. ego, գոթ. ik... իսկ մյուս կողմից ուրարտ. ieše (հնչվել է ies)...: Հայոց ան-ը կամ Հայաստանի անդրաժիններից մի մնացորդ է, որը նման է սեմականին, և՛ կամ սեմական ծագումով է և անցել է այդ նախահայկական ժողովուրդներին և հետո նաև հայերին» (21): Հայոց լեզվի պատմության բազմաթիվ հարցեր են շոշափված նրա մեկ այլ հիմնարար աշխատության մեջ (*Ղափանցյան, 1961*): Չենք անդրադառնում Ղափանցյանի ընդհանուր լեզվաբանական հայացքներին: Եթե մերժելի են հայերենի ծագման նրա ըմբռնումները, ապա հայերենի ու դրացի լեզուների աղերսների ուսումնասիրությունը այսօր էլ կարևորվում է մեր լեզվի բառապաշարի ու քերականության խոր ու համակողմանի ուսումնասիրության

տեսակետից: «Ղափանցյանի հայագիտական աշխատությունների ամենամեծ արժեքը այն է, որ դրանց մեջ նա առաջ է քաշում հայերենի ամբողջ նյութի քննարկման անհրաժեշտությունը՝ զանազան հին լեզուների հետ ունեցած ընդհանրությունները վեր հանելու համար...: Դրական է և այն, որ նա հայերենի գոյացման ու հայ ժողովրդի կազմավորման հարցերը քննում է իրենց սերտ կապի մեջ» (*Աղայան, 1962, հտ. II, 247*):

Գրաբարի բառապաշարի որոշ իրողությունների անդրադարձել է Ս.Ղազարյանը: Այս տեսակետից հետաքրքրություն է ներկայացնում «Գրաբարի կազմավորումը» հոդվածը (*ԳԱ «Տեղեկագիր», 1945, N 5*): Լեզվական և արտալեզվական փաստերի քննությամբ հեղինակը եզրակացնում է, որ գրաբարի վերջնական կազմավորումը տեղի է ունեցել Տիգրան II-ի ժամանակ: Ինչ խոսք, նման որոշակի ենթադրություններն ու հարցադրումները կարող են առարկությունների տեղիք տալ: Շշմարիտն այն է, որ հզոր կենտրոնածիզ պետությունը խթանում է միասնական, համաժողովրդական լեզվի գոյացմանը կամ ամրապնդմանը: Հեղինակը քննում է սոցիալ-քաղաքական որոշ տերմիններ, անդրադառնում փոխառությունների հարցին:

Գրաբարի բառապաշարի քննությունը է.Աղայանի հետազոտություններում հիմնականում կատարված է համեմատական լեզվաբանության հայեցակետից: Առաջին հերթին պետք է նշել այն բազմաթիվ ստուգաբանություններն ու բառաքննական դիտողությունները, որոնք կատարել է հեղինակը իր գիտական գործունեության տարբեր տարիներին: Այդ աշխատանքներն այժմ հավաքված և ամփոփված են մի գրքում (*Աղայան, 1974*), որը մեծ օժանդակություն է հայերենի բառապաշարի հարցերով զբաղվողներին: Հայ հին բարբառների բնույթի և դրանց գոյության ու զարգացման հարցերին նվիրված է. Աղայանի ուսումնասիրությունները՝ հարցադրման ինքնատիպությամբ, փաստերի բազմազանությամբ և համոզիչ եզրահանգումներով, մեծ աշխուժություն առաջացրին գիտական շրջանակներում: Իր դրույթների հիմնավորումը Աղայանը կատարում է հիմնականում բառապաշարի տվյալների քննությամբ, այլ կերպ ասած, այն նաև գրաբարի բառապաշարի քննություն է: «Գրաբարի

քերականությունը» (1964) նվիրված է հնչյունաբանությանը և այս տեսակետից եզակի ու մեծարժեք գործ է: Հնչյունաբանության հարցերը վերլուծվում են բառապաշարային միավորների հետազոտությամբ, որտեղ հեղինակը համգում է ուշագրավ եզրակացությունների ու դիտողությունների:

Հիմնականում համեմատական լեզվաբանության դիրքերից են ներկայանում նաև հայերենի բառապաշարի հարցերի՝ Գ.Ջահուկյանի բազմազան ուսումնասիրությունները: Գիտնականը անդրադարձել է հայերենի բոլոր իրողություններին՝ գիտական ծանրակշիռ վերլուծություններով հարստացնելով ու զարգացնելով հայագիտության տվյալ բնագավառը: Ինչ վերաբերում է համեմատական լեզվաբանությանը, ապա այս մարգում նրա բազմաթիվ հետազոտությունները ներկայանում են համաշխարհային լեզվաբանության մակարդակով: Գ.Ջահուկյանը բազմաթիվ ստուգաբանությունների հեղինակ է: Այդ բառերի գերակշիռ մասն էլ հին հայերենից է: Ջահուկյանի ստուգաբանական հետազոտություններում տեղ չունեն պատահական նմանություններն ու համադրումները, գայթակղիչ, բայց գիտական փաստարկներին չհամապատասխանող զուգահեռները: Որպես կանոն, հնչյունական համապատասխանությունից զատ (որը որոշ համեմատաբանների ստուգաբանությունների միակ կռվանն է), Ջահուկյանը հաշվի է առնում իմաստային, ժամանակային գործոնները, միջանկյալ, ենթաշերտային լեզուների տվյալների հնարավորությունները, այլև ըստ հնարավորին, արտալեզվական գործոնները: Գ.Ջահուկյանը մեծ ներդրում ունի հայերենի հ.-ե. բառապաշարի ուսումնասիրման գործում (*Джаукян, 1967, 1982, 1983, Ջահուկյան, 1987*): Ջահուկյանի ուշադրության կենտրոնում են եղել նաև հայերենի ու հնդեվրոպական, նաև ոչ հնդեվրոպական մի շարք լեզուների աղերսները: Այս բնագավառում էլ նրա առաջ քաշած հարցերի սկզբունքայնությունն ու հարցերը հիմնավորող փաստերն ու փաստարկները գիտական մոր մակարդակի հասցրին հայ լեզվաբանությունը: Ջահուկյանը առաջինն է, որ ցույց տվեց ու հիմնավորեց հայերենի ազդեցությունը ուրարտերենի վրա: Եթե ուսումնասիրողները, հատկապես ուրարտա-

գետները, հակված են տեսնելու միայն ուրարտերենից հայերեն փոխառություններ, ապա Գ.Ջահուկյանը տեսնում է և հակառակը՝ ուրարտերենի՝ հայերենից կատարած փոխառությունները (ՊԲՀ, 1986, N1, *Ջահուկյան, 1987*): Այս մոտեցումը հայ-ուրարտական առնչությունների նորովի լուսաբանման էական ելակետ է: Գրաբարի բառապաշարի մասնավոր հարցերի քննություն կա հայերենի հոլովման համակարգին նվիրված գիտնականի մի աշխատության մեջ (1959): Հայ բարբառագիտության զարգացման գործում ուղենշային է «Հայ բարբառագիտության ներածություն» մեծարժեք աշխատությունը, որտեղ շրջանառության է դրվում ու քննվում ինչպես գրաբարյան, այնպես էլ նախագրային, գրաբարում չավանդված ու բարբառներում պահպանված հին նյութը: Գ.Ջահուկյանի կոթողային աշխատությունը «Հայոց լեզվի պատմություն» մենագրությունն է (1987): Սա հեղինակի նախորդ մի շարք աշխատանքների գիտական ամփոփումն է՝ լրացված զգալի նոր նյութով, ավելի հստակ եզրահանգումներով: Մենագրության ընդգրկումը բազմածավալ ու բազմաբնույթ է, սակայն, ըստ էության, հայերենի բառապաշարի տարբեր շերտերի խոր ու գիտական քննություն: Եթե հայերենի հնդեվրոպական տարրի բազմազան քննություն է կատարվել Ջահուկյանի մի շարք հետազոտություններում և այս գրքում էլ ամփոփվել, ապա հեղինակի կողմից մի շարք լեզուներից կատարված փոխառությունների խնդիրը ըստ էության խորությամբ շոշափվում է այս գրքում (հունական, լատինական, իրանական փոխառություններ): Սրանք բավական արժարժված հարցեր են, բայց հեղինակը, քաջածանոթ լինելով այդ բնագավառի նորագույն ուսումնասիրություններին ու նոր նյութին, զգալիորեն ընդարձակել է խնդրի և՛ քանակական, և՛ տեսական ոլորտի սահմանները:

Գրաբարի տարբեր իրողությունների քննություն կա Վ.Առաքելյանի մի շարք աշխատություններում: Բառապաշարի հարցերը խորությամբ ուսումնասիրված են հատկապես երկու գործերում (1971, 1984): Առաջինում V դարի լեզվի առանձնահատկությունները վեր են հանվում մեր պատմիչների, մատենագիրների լեզվի և ոճի քննությամբ: Երկրորդում լուսաբան-

վում է Աստվածաշնչի լեզվի և ոճի յուրահատկությունը, այդ գրքի լեզվի ազդեցությունը գրաբարը անադարտ պահելու, ընդհանրապես հայերենի զարգացման ընթացքը պայմանավորելու գործում: Դեռևս 1975 թ. լույս տեսած «Նարեկացու լեզուն և ոճը» մենագրության մեջ Նարեկացու բառապաշարի և ոճական առանձնահատկությունների քննությունը կատարվում է V դարի բառապաշարի հենքի վրա:

Բառապաշարին նվիրված առանձին նրբանկատ դիտողություններ ունի Ա.Աբրահամյանը հայերենի բայերին նվիրված ուսումնասիրություններում, իր տեսակի մեջ յուրահատուկ «Գրաբարի ձեռնարկում», գրաբար երկերի աշխարհաբար թարգմանությունների ծանոթագրություններում, ինչպես նաև առանձին հոդվածներում: Գրաբարի բառակապակցությունների տեսակների, իմաստների ու կազմության մանրամասն ու փաստաշատ քննություն է Վ.Քոսյանի աշխատանքը (1980): Գրաբարի բառապաշարը մասնակիորեն շոշափվում է նաև հեղինակի թեկնածուական դիսերտացիայում (1953)՝ հ.-ե. արմատների քննության ընթացքում:

Հունաբան հայերենի կազմավորման, յուրահատկության, հայ քերականական տերմինաբանության ձևավորման հարցերն են շոշափվում Ա.Մուրադյանի աշխատության մեջ (*Մուրադյան, 1971*): Հեղինակը ճշգրտում է հունաբան հայերենի կազմավորման ու զարգացման ժամանակաշրջանը, նորովի գնահատում ու վերլուծում այդ դպրոցի դերը հայ մշակույթի ու լեզվի զարգացման գործում: Բառապաշարի, հատկապես բառակազմության որոշ հարցեր են արծարծվում է. Թումանյանի աշխատանքում (*Туманян, 1971*): Նշված հարցը ամբողջական, համակարգված ու պատշաճ մակարդակով հետազոտված է Լ.Հովսեփյանի կողմից (*Հովսեփյան, 1987*), որտեղ բառակազմության օրինաչափությունների, բառակազմական կաղապարների վերհանումից զատ, քննվում են գրաբարի բառային տարբերակները: Գրաբարի շաղկապների կիրառությունները, շաղկապացման երևույթները քննել է Պ.Շարափխանյանը:

Խորհրդային շրջանում մեծ ուշադրություն է դարձվել արդի հայերենի բառապաշարի և նրա հարստացման ուղիների

հարցերին (Ս.Աբեղյան, Գ.Սևակ, Ս.Ղազարյան, Ա.Սուրվալյան, Ա.Աբրահամյան, Ս.Աբրահամյան, Յ.Օհանյան, Ս.Գալստյան, Ա.Սուքիասյան և այլք): Այդ բնույթի բոլոր գործերին անդրադառնալը մեր խնդիրը չէ, բավարարվենք միայն մի քանի նկատառումներով: Գ.Սևակի (*Երևան, 1948*) աշխատության նյութը քաղված է Յ.Աճառյանի և Ն.Մառի ուսումնասիրություններից: Բառապաշարի որոշ գնահատման հարցում Գ.Սևակի դրույթները սխալ կամ առարկելի են: Եթե Աճառյանը, առանձնացնելով բնիկ, իրանական, հունական և ստուգապես այլ կարգի փոխառությունները, մյուս բառերը համարում է անծանոթ, ապա Սևակը, ընդունելով հայերենի հնդեվրոպական-հաբեթական բնույթի վարկածը, գտնում է, որ «Գերազանցապես հաբեթական լեզուների հետ առնչվող այդ արմատների մեծագույն մասը կազմում է հայերենի հաբեթական տարրը» (317): Մերժելի է Սևակի այն պնդումը, թե «Գրաբարի բառապաշարի մոտ 60 տոկոսը հնացած էր նախախորհրդային շրջանում և գործածությունից դուրս մնացած՝ փոխարինելով ավելի մեծ քանակի նոր բառերով» (325): Արժեքավոր են Ա.Սուրվալյանի հետազոտումները հայ-վրացական բառային ընդհանրությունների վերաբերյալ (*1948, 1952*), սակայն նա այդ ընդհանրությունները մեկնաբանում է ոչ թե փոխառությունների գործոնով, այլ ցեղակցությամբ:

Խորհրդային շրջանում իրագործվեց V դարի որոշ գրքերի քննական հրատարակությունը: Հրապարակի վրա են Կորյունը (Աբեղյան), Եղիշեն (Տեր-Մինասյան), Ծննդոց գիրքը (Ա.Ջեյթունյան), Ալեքսանդրի վեպը (Հ.Սիմոնյան), Բարսեղ Կեսարացին (Կ.Սուրադյան): «Գիրք Մակաբայեցւոցը» (Հ.Ամալյան): Այս աշխատանքներում կազմողների ընդարձակ ծանոթագրումները բառապաշարի յուրօրինակ քննություն են: Բազմաթիվ ծանոթագրություններ, ուղղումներ կան նաև խորհրդային շրջանում թարգմանված V դարի գործերին կից: Թարգմանված են Փավստոսը և Խորենացին (Ս.Մալխասյան), Կորյունը (Ս.Աբեղյան), Եզնիկը (Ա.Աբրահամյան), Եղիշեն (Տեր-Մինասյան), Փարպեցին (Բ.Ուլուբաբյան): Ուշագրավ են այս հրատարակումների ու թարգմանությունների և ընդհանրապես V դարի

հեղինակների լեզվին վերաբերող մի շարք հոդվածներ: Բուզանդի գրքին են նվիրված Վ.Առաքելյանի (1948), Վ.Գևորգյանի (1963) հոդվածները: Վ.Խալաթյանը քննում է Եզնիկի գրքի համանիշության, բառային կրկնությունների, ճարտասանական միջոցների դրսևորումները (1962): Սաղմոսների լեզվի գիտական քննությունն է կատարել Լ.Տեր-Պետրոսյանը: Համեմատելով հունական, ասորական բնագրերի հետ՝ հեղինակը վեր է հանում հայերեն թարգմանության առանձնահատկությունները, նկատում բազմաթիվ պատճենումներ: Հեղինակի հավաստմամբ մի շարք բառեր (անբան, անգործ, արագագիր, թիկնամեջ, խոտակեր, հաստարմատ, ձեռակերտ, միակրոն, տասնադի) Աստվածաշնչի հայերեն թարգմանության գրքերի մեջ վկայված են միայն սաղմոսներում: Քննված են երաժշտական գործիքների անվանումների թարգմանությունները, տէր և ամեն բառերի յուրահատուկ կիրառությունները սաղմոսներում:

Գրաբարի բառապաշարի ուսումնասիրության գործին մեծապես նպաստում են ՀՀ ԳԱ լեզվի ինստիտուտի կողմից հրատարակվող համաբարբառները: Արդեն հրատարակված են V դարի ինքնուրույն հեղինակների համաբարբառները, այժմ սկսվել են թարգմանական գործերի համաբարբառների կազմման ու հրատարակության աշխատանքները: Մ.Մինասյանը՝ հրատարակել է «Գրաբար ավետարանների բնագրավերլուծական համաբարբառ» (Ժնև, 2003) «Մարկոսի և Ղուկասի գրաբար ավետարանների լեզուամեկնաբանություն» գրքերը:

Մի խոսքով, հայերենի բառապաշարի ուսումնասիրությունը խոր ակունքներ ունենալով՝ շարունակվում է և այժմ: Այն հետազոտության մի անսպառ բնագավառ է, և դեռ շատ անելիքներ կան*:

* Մեր գրքի հրատարակությունը ձգձգվել է շուրջ մեկուկես տասնամյակ, այդ պատճառով հարցի պատմության մեջ մի շարք նոր աշխատանքներ արտացոլված չեն:

ԲԱՌԱՊԱՇԱՐԻ ԾԱԳՈՒՄՆԱԲԱՆԱԿԱՆ ՇԵՐՏԵՐԸ

Ա) Գրաբարի բնիկ (հնդեվրոպական) բառապաշարը

Հնդեվրոպական կամ բնիկ բառաշերտը հայերենի հնագույն բառազանձն է: Այդ բառապաշարը ներառող միավորների իսկությունը որոշվում է հ.-ե. վերականգնված ձևերի, ինչպես նաև հ.-ե. այլ լեզուների տվյալների համեմատությամբ՝ հնչյունական օրինաչափությունների ու փոփոխությունների հաշվառումով:

Հայերենի հ.-ե. բառամթերքի գիտական ուսումնասիրությունը ակունքվում է համեմատական լեզվաբանության կազմավորման շրջանից: Այժմ, համեմատական լեզվաբանության և հայոց լեզվի պատմության ձեռք բերած նվաճումների շնորհիվ, հ.-ե. բառապաշարը մանրամասն և ըստ ամենայնի հետազոտված է: Գնդգրտվել և լրացվել են բազմաթիվ ստուգաբանություններ, ի հայտ են բերվել նոր զուգահեռներ, բացահայտվել են հնչյունական նոր օրինաչափություններ, կատարվել են բազմաբնույթ դասակարգումներ: Ներկայացվել են հայերենի հ.-ե. այլ լեզուների բառապաշարային ընդհանրություններն ու առանձնահատկությունները, իմաստափոխության երևույթները և բազմաթիվ այլ խնդիրներ:

Իհարկե, ինչպես գիտության այլ բնագավառներում, այնպես էլ հայերենի հ.-ե. տարրի ուսումնասիրության շրջանակներում չլուծված խնդիրներ դեռևս շատ կան: Այդ խնդիրները ավելի շատ համեմատական լեզվաբանության, քան թե գրաբարի այս կամ այն շրջանի ուսումնասիրության ոլորտին են պատկանում: Ինչ վերաբերում է V դարի բառապաշարի քննությանը, ապա ըստ էության որևէ նոր բան՝ կապված բնիկ բառաշերտի հետ, դժվար է ասել: Կարող էինք մեր աշխատանքում նույնիսկ շրջանցել այդ հարցը, բայց քանի որ անդրադառնալու ենք փոխառյալ բառաշերտի համակողմանի

քննությանը՝ համապատասխան ցանկերի ներկայացմամբ, ապա աշխատանքի կառուցվածքի ամբողջականությունը պահպանելու միտումով ներկայացնենք որոշ նկատառումներ մաս բնիկ բառապաշարի վերաբերյալ:

Դեռևս 19-րդ դարում բնիկ բառաշերտի ցանկերը առանձնացրել և ուսումնասիրել են եվրոպացի հայագետները, որոնց շարքում բացառիկ է հատկապես Յ.Յյուրշմանի դերը: Յ.Աճառյանը իր «Հայոց լեզվի պատմության» առաջին հատորում տալիս է հարցի ավելի ամբողջական և իր ժամանակի համար սպառիչ պատկերը: Աճառյանի ցանկը ներառում է 713 արմատական բառ և էլի 196 բառ՝ որպես այս կամ այն արմատի տարբերակային ձև կամ ածանցում: Հետաճառյանական շրջանում բազմաթիվ լուրջ ուսումնասիրությունների, համեմատական լեզվաբանության առաջընթացի շնորհիվ ճշգրտվեց և լրացվեց մաս այդ ցանկը: Այս գործում իրենց վաստակն ունեն բազմաթիվ հայագետներ ու համեմատաբաններ, որոնց շարքում առանձնանում է հատկապես Գ.Ջահուկյանը: Բազմաթիվ ստուգաբանություններում և համեմատական լեզվաբանության այս կամ այն հարցերին մկրված ծանրակշիռ ուսումնասիրություններում, որոնց հիմքում ընկած են հայերենի տվյալները, Ջահուկյանը ներկայանում է որպես հայերենի հ.-ե. տարրի լավագույն հետազոտող, որի մի շարք փաստարկներ ու եզրահանգումներ ուղենշային են ընդհանրապես համեմատաբանության, մասնավորապես հայերենի համեմատական ուսումնասիրության բնագավառում: Հնդեվրոպաբանության և հայերենի համեմատական ուսումնասիրության բազմամյա և բեղմնավոր աշխատանքների յուրատեսակ ամփոփումն ու լրացումն է գիտնականի «Հայոց լեզվի պատմություն. մախազրային շրջան» (Երևան, 1987) մեծածավալ աշխատանքը: Այստեղ բազմաթիվ այլ հարցերին զուգընթաց ներկայացվում է հայերենի հնդեվրոպական բառերի ավելի ամբողջական ցանկ, նշվում համապատասխան վերականգնված մախաձևը, հայերենի և մյուս հ.-ե. լեզուների զուգաբանությունները՝ ըստ մերձավորության աստիճանի (111-157): Այնուհետև բառային զուգաբանությունների աղյուսակում տեղ գտած առանձին բառերի

վերաբերյալ տրվում են համապատասխան մեկնաբանություններ:

Ընդունված է հայերենի հ.-ե. բառապաշարը դասակարգել ըստ կիրառության ոլորտների: ՀԱճառյանը այդ բառերը ներառում է 22 ոլորտի մեջ: Գ.Ջահուկյանի դասակարգումը հիմնված է Բաքի բառարանի սկզբունքների վրա: Եթե Բաքի հնդեվրոպական համանիշների բառարանում հայերենին գրեթե տեղ չի տրվել, ապա Ջահուկյանը, օգտագործելով Բաքի առանձնացրած խմբերը, ուշադրության կենտրոնում է պահում հայերենի իմաստային առնչությունների հարցը: Բաքի բառարանում տեղ չգտած դերանվանական և սպասարկու բառերն ու մասնիկները Ջահուկյանի կողմից առանձնացված են լրացուցիչ (23-րդ) թեմատիկ խմբի մեջ:

Գ.Ջահուկյանի ցանկը ամբողջական ու սպառիչ է: Մեր կարծիքով այն կարելի է լրացնել մի քանի բառերով. **ականջ, առատ, քունք, քրքանք, քրքիջ**: Հավանական ենք համարում նաև **գաւտի բառի հ.-ե. ծագումը** (*Աղայան, 1974, 48-50*): Հետևյալ բառերը, որոնք Գ.Ջահուկյանը դիտում է որպես բնիկ, մենք հակված ենք համարելու իրանական փոխառություն. **երանիկ, կնճիթ, հաւատ** (*Հովհաննիսյան, 1990, 240-247*), **քարուակ**:

Հ.-ե. (բնիկ) բառերը գործառել են վաղնջական շրջանից: Գ.Ջահուկյանի ցանկում բարբառային հղում ունեցող բառերը հայ հին մատենագրության մեջ վկայված չեն: Դրանք քաղված են արդի բարբառներից կամ բարբառային բառարաններից: Ինչ վերաբերում է ցանկի ոչ բարբառային բառերին, ապա դրանց մի մասն էլ նույնպես վկայված չէ հայ հին մատենագրության մեջ: Քանի որ մեր աշխատանքը վերաբերում է V դարի բառապաշարին, ժամանակագրային հնարավոր ճշգրտումներով առանձնացնենք այն բառերը, որոնք հետիմցերորդդարյան վկայություններ են՝ ըստ ժանոթ մատենագրական տվյալների և գրաբարի բառարանների հավաստումների:

Ալուճ «բժշկական խոտ»: Ըստ ՀԱԲ-ի միջին հայերենյան շրջանից է: Աղատենմ «ողբալ», աղտիւր (վկայված է միջ. հայերենում, իսկ աղտոր ձևով՝ VII դարից): Աղփուն (իմաստը

հստակ չէ): Ամործի (վկայված է որժ արմատը և այդ արմատով այլ կազմություններ): Անդ «չեն» (առանձին անգործածական է, հանդիպում է դրանդ, դրանդի ձևերում): Անիծ, առեղ «գերան», առիք «առաստաղ», արատ «արագիլ», արբեկ «քաջ», արգ (հանդիպում է արգանդ, արգահատեն բառերում): Արգատ «խաղողի որթ» (որպես միջին հայերենյան բառ նշում է Նորայր Բյուզանդացին): Աւիլ «ցնորվել» – V դարից՝ աւելոց ելանեն «փախչել»: Աւն «սեփականություն» (առանձին անգործածական է, որը մեկ անգամ գտնում ենք անոյտէր կազմության մեջ՝ Ագաթանգեղոսի 1909 թ. հրատարակության մեջ): Բառը պետք է համարել անստույգ: Բարտ/դի – առաջին վկայությունը թերևս Վաստակոց գրքից է: Բիլ «կապուտակ» – ՆՅԲ-ն բերում է մեկ վկայություն Երզնկացուց, Աճառյանը բառի առաջին վկայության աղբյուրը համարում է Ստեփանոս Սյունեցու Քերականությունը, ապա մերժում է իմաստը և առաջարկում «ծկան տեսակ» բացատրությունը: Գ.Զահուկյանը ճիշտ է համարում «կապուտակ» նշանակությունը և է.Աղայանի ստուգաբանությունը (*Աղայան, 1974*):

Բոռ – V դարից վկայված չէ, իսկ նույն արմատից բրէտը վկայված է: Բոկեղ – «հացի տեսակ» վկայված է X դարից ուշ: Բորբ – ըստ բառարանների առաջին վկայությունը Շիրակացու մոտ է, այդ նույն արմատի կրկնությամբ բորբոքը վկայված է V դարից:

Բոկեղ, բրիչ, բուեճ, բունձ «հողակոշտ», գաբ «կեն ճանկ», գագացեն «աքլորի գոռոզաբար կոկոռալը», գաղեն «ծածկել», գեղել (գաղել-ի ծայնդարծային տարբերակն է. գրաբարի բառարանները չեն նշում), գեղտ (գաղտ-ի ծայնդարծային տարբերակն է. բառարանները օրինակներ չեն նշում), գերբն, գոռ «ցեխ» (եզակի վկայությամբ հանդիպում է միջին հայերենում), եթիւ «տարակուսանք» (վկայված է Երեմիայի բառարանում. իմաստի ճշտումը տես ՅԱԲ), եղան – վկայված է XVII դարից, թակաղ «թակ» (V դարից վկայություն չկա, Ագաթանգեղոսը մի քանի անգամ օգտագործում է թակաղաղ), ուշ շրջանից է թակեղն: Թաղթ, թառ «հավի թառելու տեղ», թարմ բառը և սրանով առկա կազմությունները՝ թարմանալ, թար-

մացում, թարմութիւն... ոչ միայն V, այլև հետագա դարերից էլ վկայություն չունեն, որպես գլխաբառ չունեն ՆՅԲ և ԱԲ-ն: Թաւա, թուշ, լկիլ «հալչել», խայծաղ «աղանծ», կեղերջ «գանգատ», կեռ, կերկեր (թռչուն) (ամստույզ բառ՝ վկայված միայն բառարաններում), կէտ «իշամեղու», կլոր, կկու, կորկ, կտիտ, կուղթ «հանգույց», կուռն «ծեռք», հայթեմ (վկայված չէ, այլ՝ հայթայթեմ), հեւալ, հործ «հույզ», ձագ «չափ» (իմաստը և համապատասխան օրինակ մեզ ծանոթ չէ), ծգեռտ, ծղմել «դիտել, նկատել» (ունի ՀՀԲ և Երեմիայի բառարանը՝ առանց վկայության), մաթիլ «ոջիլ», մայթ «սալահատակ», մանչ, մառ «գինու տեսակ», մատիտեղ (բույս է), մատուտակ (բույս է) – վկայության ժամանակաշրջանը հայտնի չէ, ամենայն հավանականությամբ վաղ գրաբարում գոյություն չունեն, մեղծ – վկայված է որպես յուլվամեղծ բառի բաղադրիչ Նարեկացու մոտ (ՀԱԲ), մլակ «միջատ», մլուկ, մործ «դալար», մռութ, մրկեմ «խանձել» (գրաբարում չկա, իսկ մուրկ «ցորենի հատիկ» վկայված է V դարից), յաղեմ «կլանե՞լ, բռնե՞լ», նաւագեմ «ծածկել» (մեկ անգամ ունի Տիմոթեոս Կուզը՝ VI դար), շիւ, ոռ, չիր, պպլուկ, պղպղաքար, սիմ «կոթող», սկուդ, սպարդիլ «սպրդնել», տաղտեմ «շարժել» (ունեն միայն ԱԲ և ՀԱԲ. վկայություն չի նշվում), տնտղեմ, ցախ, ցայք, ցաքի ուշի (ծառ է), փերթ «կտոր», փին «կեղտ, հիվանդություն», փինատ «աղքատ», փնթի, փռել, փրցլիք «թուք», քաղէց «հիացու՞մ», քաք, քեղ (բույս է), քունք, քուրջ «հին շորի կտոր»:

Ուշ շրջանից գրավոր ավանդված լինելու կամ միայն բառարաններում առկայանալու հանգամանքը բառերի հնությունը ժխտող փաստարկ չէ: Այս կարգի բառերը, եթե իրոք հավաստի հ.-ե. ծագում ունեն, ապա գործառել են հայերենի կազմավորման շրջանից (հնարավոր որոշ հնչյունական փոփոխություններով):

Հավանաբար, եթե ոչ բոլոր բառերը, ապա գոնե դրանց մի մասը V դարից գրավոր վկայվել է, բայց մեզ չի հասել: Բացառված չէ նորահայտ աղբյուրներում որոշ բառերի հայտնաբերումը կամ դրանց վերականգնումը բառաքննական-ստուգաբանական ճանապարհով:

Բ) Գրաբարի փոխառյալ բառապաշարը

Լեզվի հասարակական բնույթը, լեզուն ստեղծող ու կրող ժողովրդի՝ այլ ժողովուրդների հետ ունեցած բազմաբնույթ հարաբերությունները պայմանավորում են օտար ազդեցությունների անխուսափելիությունը: Փոխառությունները, հատկապես, երբ նրանք զանգվածային բնույթ ունեն, իրականանում են կենդանի հաղորդակցման և երկարատև ու սերտ շփումների միջոցով: Պատահական չէ, որ որևէ լեզվի փոխառյալ բառաշերտի գերակշիռ մասը նույն կամ հարևան տարածքում ապրող ժողովուրդների լեզվից է: Օտար բառերը կարող են մուտք գործել նաև միջնորդավորված կերպով, որևէ լեզվից մեկ այլ լեզվի, սրանից էլ երրորդ լեզվին: Փոխառությունները, բացի անմիջական, բանավոր ճանապարհից, մուտք են գործում նաև գրավոր, մատենագրական ճանապարհով: Բնականաբար, հնագույն ժամանակներում՝ գիր ու գրականության չգոյության կամ լայն զանգվածներին դրանց անմատչելիության պայմաններում փոխառության մատենագրական ճանապարհը կենսունակ չէր: Երբեմն հստակորեն չեն զանազանվում այս երկու ճանապարհով անցած բառաշերտերը, մանավանդ որ ժամանակի ընթացքում կենսունակ են դառնում նաև գրքային ճանապարհով մուտք գործած բառերը:

Լեզվաբանական գրականության մեջ գոյություն ունեն փոխառությունների ուսումնասիրության տարբեր հայեցակետեր, դասակարգման տարբեր սկզբունքներ: Դա բնական է: Ուսումնասիրության եղանակներն ու սկզբունքները թելադրվում են նյութից, ուսումնասիրողի նպատակադրումից: Վերջիններս էլ իրենց հերթին մեծապես կախված են փոխառությունների բնույթից, նրանց ժամանակագրային յուրահատկություններից: Օրինակ, հայերենի նախագրային և գրաբարյան փուլում կատարած փոխառությունները այլ բնույթի են, քան ասենք խորհրդային շրջանում կատարվածները: Բնականաբար, այս երկու կարգի փոխառությունների քննությունն էլ պետք է իրագործվի տարբեր սկզբունքներով, տարբեր չափանիշներով:

Հաճախ փոխառությունների քննությունը սահմանափակվում է նրանց քանակի ճշտմամբ՝ ուղեկցվելով որոշ դիտարկումներով: Իհարկե, քանակի հարցը կարևոր է, բայց անհրաժեշտ է նաև փոխառությունների որակական-գործառական յուրահատկությունների, նրանց կենսունակության, բառաֆոնդում ունեցած տեսակարար կշռի բացահայտումը: Փոխառության տեսությանը վերաբերող գրականության մեջ նկատվում է փոխառություն հասկացության նեղ և լայն ըմբռնում: Ոմանք փոխառություն են համարում միայն օտար հնչյունակազմով, այսինքն՝ փոխառու լեզվի հնչյունական օրինաչափությունների չենթարկված բառերը: Սա նեղ ըմբռնումն է, որի մի արտահայտությունն էլ այն է, երբ փոխառություններ են դիտվում միայն կայուն ու հաճախական կիրառություն ունեցող բառերը: Այս մոտեցումը, ինչ խոսք, ծայրահեղ է, բայց նվազ հաճախական ու պատահական բառերի առանձնացումը խիստ կարևոր է: Փոխառությունների լայն ըմբռնման կողմնակիցները ընդարձակում են այդ հասկացության շրջանակները՝ ներառելով նաև օտար հիմքերից ու բառույթներից բաղադրված ձևերը, բառակապակցությունները: Հայերենի փոխառությունների լավագույն ուսումնասիրողի՝ Յ.Աճառյանի մոտ երկու սկզբունքներն էլ, ըստ էության, կիրառվում են:

Մենք փոխառություն ենք համարում օտար այն բառերը, որոնց ոչ հայերեն բնույթը հավաստվում է անհրաժեշտ գուգահեռներով կամ, եթե փոխատու լեզվի գուգահեռը (վկայությունը) բացակայում է՝ հիմնավոր վերականգնումներով:

Փոխառյալ միավոր չենք համարում.

ա) օտար ձևույթ + հայերեն ձևույթ կազմությունը (ան-ուժ, սորա-կալ):

Այս տիպի բառերը կարելի է նշել միայն համապատասխան փոխառյալ ձևույթը ցույց տալու համար, եթե վերջինս այլ բաղադրություններում, կամ անկախ կիրառությամբ չի հանդիպում:

բ) համանուն շարքի այն միավորները, որոնք ձեռք են բերել նոր իմաստ, որը չկա փոխատու լեզվում (հմմտ. բազուկ «ճակնդեղ» բառը, որը իրանականից փոխառյալ բազուկ «դաստակ»-ի համաբանությամբ է ստեղծվել):

գ) օտար՝ աղավաղ կամ բարբառային ձևերը, մանավանդ երբ առկա են կանոնական ձևերը (աֆոկ «հանցանք» իրանական ծագում ունեցող ահոկ բառի տարբերակն է):

դ) այն միավորները, որոնք համատեքստում դիտվում են որպես օտար բառ:

Տվյալ դեպքում գործ ունենք ոչ թե փոխառության, այլ օտար բառարանային միավորի հետ: Բերենք մի տիպական օրինակ Շիրակացուց. «Խումբ աստեղատանցդ, որ անուանեալ կոչին կենդանատեսակք... զոր ետ քաղդեացուց կոչեն յոյնք, հայք և պարսք: Յոյնք կռիոս, հայք խոյ, պարսք վարբակ, յոյնք տաւրոս, հայք ցուլ, պարսք գաւ, յոյնք զիւզոս, հայք կշիռ, պարսք տարագուկ»: Ընդգծվածներից ոչ մեկն էլ փոխառություն չէ, այլ օտար բառ, որ հեղինակը կիրառել է ըստ համապատասխան համատեքստի: Հայ մատենագրության մեջ այս կարգի բառեր կան տարբեր կարգի մեկնություններում: Ըստ էության Աստվածաշնչից և այլ գրքերից հայ մատենագրություն ներթափանցած եբրայերեն բառերը այս բնույթի են: Աճառյանի տվյալներով հայերենում հանդիպող եբրայերենի բառերի թիվը 138 է: Դրանք օտար հասկացություններ են, օտար բառեր: Ավելորդ չէ նշել, որ հայերի ու եբրայեցիների միջև անմիջական ու երկարատև շփումներ չեն եղել, իսկ Աստվածաշունչն էլ դարձյալ անմիջաբար եբրայերենից չի թարգմանվել: Այդ պատճառով էլ եբրայական բառաշերտի քննությանը չենք անդրադառնում: Չենք անդրադառնա նաև մի շարք հին լեզուներից (ակկադերեն, շումերերեն, սկյութերեն, խեթերեն...) հայերենին անցած բառապաշարին, որովհետև, նախ՝ դրանք մեծ թիվ չեն կազմում, և երկրորդ՝ վիճելի է դրանց (կամ գոնե դրանց մեծ մասի) ծագման իրական բնույթը: Անհրաժեշտ նյութը և նյութի քննությունը ամփոփված է Գ.Զահուկյանի աշխատության մեջ (*Զահուկյան, 1987*):

Կանդրադառնանք հիմնականում իրանական լեզուներից կատարված փոխառություններին, սեմական լեզուներից, հատկապես ասորերենից հայերենին անցած բառաշերտին, ինչպես նաև հունա-լատինական բառերի քննությանը:

I. ՀԱՅԵՐԵՆԻ ԻՐԱՆԱԿԱՆ ՓՈԽԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հայերենի օտար բառաշերտերի մեջ իրանականը ամենածավալունն է: Դա պայմանավորված է, նախ և առաջ՝ հայերի և իրանական ժողովուրդների այն սերտ, հարատև և բազմաբնույթ աղերսներով, որոնք հազարամյակների խորքից են գալիս:

Գրաբարի իրանական բառաշերտը քննել են բազմաթիվ ուսումնասիրողներ (մանրամասն տե՛ս *Յովհաննիսյան, 1990*):

Հ.Աճառյանը (ՀԼՊ, I, 1940), լրացնելով և ամբողջացնելով նախորդների կատարածը, տալիս է փոխառությունների ցանկ՝ 1405 բառ, կատարում բառերի իմաստային դասակարգում: Այս ցանկը իր ժամանակին ամբողջական լինելով՝ զերծ չէ թերություններից: Չանդրադառնալով դրան՝ նշենք միայն, որ այնտեղ ներառվում են գրաբարից և միջին հայերենի շրջանից վկայված բառերը, և հստակ չէ *հին փոխառություններ* տարբերակումը: Իրանական փոխառությունների քննությանն է վերաբերում նաև Գ.Զահուկյանի (*Զահուկյան, 1987*) մենագրության մի սովորմասը: Հեղինակի տվյալներով նախագրային շրջանից ավանդված «իրանական հիմնական փոխառությունների թիվը հասնում է 712-ի, համապատասխան վերջածանցային և վերջածանցակերպային ձևերի հետ միասին առնված 837-ի» (*Զահուկյան, 1987, 549*): Սակայն, ինչպես նշում է հեղինակը «իրականում այդ թիվը շատ ավելի մեծ է... կարելի է առանձնացնել հնարավոր իրանական ծագման մեծաքանակ բառեր, որոնց բուն աղբյուրների վերաբերյալ առայժմ հայտնի իրանական տվյալներում վկայություններ չեն պահպանվել» (*Ն.տ.*): Բացի ցանկի հետ կապված ճշգրտումներից, այս աշխատանքի էական արժանիքը իրանական հավաստի տվյալներն ու վերականգնումները ներկայացնելն է՝ հայտնի կամ հնարավոր աղբյուրների նշումով:

Հայերենի իրանական փոխառություններին վերաբերող վերջին ուսումնասիրությունը տողերիս հեղինակինն է, որտեղ ուշադրություն է դարձված հատկապես բավարար լուծում չստացած հարցերին (*Յովհաննիսյան, 1990*): Հայերենի իրանական տարրի շատ ու շատ կողմեր դեռևս բավարար չափով

բացահայտված չեն, և այդ խնդիրը, ինչպես միշտ, գտնվում է հայագիտության և իրանագիտության ուշադրության կենտրոնում: Վստահորեն կարելի է ասել, որ չկար և չկա հին հայերենի հարցերով զբաղվող մի մասնագետ, որ կամա թե ակամա չանդրադառնար նաև իրանական փոխառություններին: Մեր նախորդ աշխատանքում ըստ հնարավորին ներկայացրել ու գնահատել ենք այդ բնագավառում կատարվածը: Այստեղ միայն մշենք այն հեղինակներին, որոնք զգալի ներդրում ունեն այդ գործում (աշխատությունները տե՛ս գրականության ցանկում):

Հայ գիտնականներից՝ Զ.Տյուզյան, Մ.Էմին, Զ.Տաշյան, Բ.Պատկանյան, Ն.Ադոնց, Ա.Բագրատունի, Ա.Այտընյան, Ա.Վարդանյան, Զ.Թիրյաքյան, Ն.Ակինյան, Գ.Ղափանցյան, Զ.Աճառյան, Է.Աղայան, Գ.Զահուկյան, Ա.Փերիխանյան, Գ.Նալբանդյան, Գ.Ասատրյան... և այլք:

Խորհրդային գիտնականներից՝ Վ.Աբաև, Ի.Օրանսկի, Մ.Բոգոլյուբով, Լ.Գերցենբերգ, Մ.Անդրոնիկաշվիլի, Վ.Լիվշից...

Արտասահմանյան գիտնականներից՝ Պետերման, Վինդիշման, Բոպպ, Լազարո, Մյուլլեր, Զյուբշման, Մեյե, Բելարդի, Պետերսըն, Յենինգ, Բեյլի, Բենվենիստ, Քենտ, Բոլոնիեզի, Ֆրայ, Սեներենյի, Ռ.Շմիդտ, Զոլտա, Լերուա, Գրեպպին, Ռասսել, Պիսոփիչ...

Իրանական փոխառությունների սկզբնաղբյուրների հարցը

Հայերենի պատմությունը սկսվում է անմիջապես հնդեվրոպական միասնության շրջանից, իրանական լեզուներինը՝ հնդ-իրանական միասնության տրոհումից հետո, այսինքն՝ հայերենը՝ մ.թ.ա. մոտավորապես III, իրանական լեզուներինը՝ մոտավորապես II հազարամյակի սկզբներից (*Ջահուկյան, 1987, 492*): Այդ ժամանակներից էլ ակունքվում են լեզվական ազդեցությունները, որոնք ավելի հստակվում են իրանական ժողովուրդների իրանում հաստատվելուց հետո, որն սկսվել է մ.թ.ա. XI դարից:

Ինչպես հայերենը, այնպես էլ պարսկերենը շրջանաբա-

ժամվում են հին, միջին և նոր փուլերի: Այդ շրջանաբաժանման ժամանակագրային սահմանները, սակայն, չեն համընկնում՝ կապված երկու լեզուների զարգացման յուրահատկությունների, նաև շրջանաբաժանման տարբեր սկզբունքների հետ: Այսպես, հին իրանական փուլը ընդգրկում է մ.թ.ա. II հազարամյակից մինչև մ.թ.ա. IV-III դարերը (հին պարսկերենի գրավոր առաջին հուշարձանները մ.թ.ա. VI դարից են): Հին իրանական փուլը համընկնում է հայերենի նախագրային շրջանին, իսկ միջին իրանական փուլը (մ.թ.ա. IV-III մ.թ. VIII-X) համընկնում է հայերենի նախագրային և գրաբարյան փուլին, նոր իրանական փուլը (մ.թ. X դարից)՝ գրաբարին, միջին հայերենին և աշխարհաբարին:

Հայերենը նախագրային շրջանում զգալի քանակությամբ բառեր է փոխառել իրանական լեզուներից: Աքեմենյան թագավորության մի քանի դար տևող ժամանակահատվածում հայերի և պարսիկների տնտեսական, ռազմական, քաղաքական, նաև հոգևոր-մշակութային աղերսները անպայման ենթադրում են նաև լեզվական աղերսներ:

Հին իրանական փուլը ներկայանում է երեք լեզուներով՝ մարերեն, հին պարսկերեն և ավեստերեն: Այս լեզուներից հայերենն անպայման ազդեցություն կրել է, սակայն այսօր դժվար է առանձնացնել բառերի որոշակի խումբ և անվերապա հորեն փաստարկել դրա հին իրանական սկզբնաղբյուրը: Մարերենից գիտությանը, փաստորեն, ոչինչ հայտնի չէ, և նրա որոշ իրողություններ կողմնակիորեն ենթադրվում են այլ լեզուների տվյալների ու վերականգնումների միջոցով: Հայերենի իրանական փոխառությունների որոշ հնչյունական առանձնահատկությունների հաշվառումով՝ ուսումնասիրողներից ոմանք փորձում են տարբերակել մարական շերտը: Օրինակ, ձ-ի առկայությունը Զ-ի փոխարեն ենթադրել է տալիս բառերի մարական բնույթը՝ գանձ, բրինձ, պղինձ (Հյուբշման, Աճառյան): Ա.Փերիխանյանը սեաւ - շաւ, վարս - վարշ (ամակ) տարբերակներից 2-ով ձևերը համարում է մարական (REA, 1968): Նա միջին մարական է համարում նաև ա- նախահավելվածով մի քանի բառեր՝ արագ, աշխարհ, աշխատ, Արաքս: Փառէն, Փառ-

ներսեհ, Փառոխ, Փառնակ, Փառնալազ, Փառանձեն
ավելի մոտ են համարվում մարերենին (մեդերենին), քան պար-
թեերենին (*Ջահուկյան, 1987, 506*):

Հին պարսկերենի իրողությունները գիտությանը հայտնի
են նախ և առաջ աքեմենյան արձանագրություններով: Այդ
արձանագրություններում վկայված բազմաթիվ բառեր առկա
են հայերենում. ապարանք, աշտեայ, ատր, ազդ, բազ,
բարսմունք, դրուժան, դաստ, դաստակերտ, դպիր...

Հայերենում առկա բառերի ցանկը լրիվ չենք ներկայաց-
նում: Սակայն այս և այդ կարգի բառերի առկայությունը դեռևս
իրավունք չի տալիս դրանց փոխառության սկզբնաղբյուրը հին
պարսկերենը համարելու, քանի որ դրանք կարող են անցած
լինել նաև միջին իրանական փուլից: Ոմանք ընդհանրապես
Ժխտում են հին պարսկերենից փոխառության հնարավորու-
թյունը: Մեյեն, օրինակ, հին պարսկերեն է համարում, այն էլ
զարմանքով պարտեզ բառը (*Մեյե, 1979, 115-116*): Է.Աղայանի
կարծիքով իրանական փոխառություններում բառամիջի է-ն
համապատասխանում է հպրս. ai (ավեստ. ae)՝ գէս, շէն, իսկ
է-ն պահլավական e-ին՝ աւեր... (*Աղայան, 1964, 137*): Եթե այս
սկզբունքը ճիշտ է, ապա գազպէն, դէմ(ք), գոմէշ, պարտեզ,
պէս, հանդէս, վէզ, գէն, տէզ բառերը կարելի է համարել հին
պարսկական, բայց դարձյալ վերապահությամբ, որովհետև
հնչյունական այդ օրինաչափությունը կարող էր գործել միջին
իրանական փուլում, և որոշ բառեր էլ վկայված չեն հին պարս-
կերենում: Նույն անվստահությամբ հին պարսկական կարելի է
համարել ի-ով վերջացող մի շարք բառեր՝ արի(ք), անարի,
ապակի, թշնամի, կարի, հարամանի, նաւակատի(ք),
պատասխանի: Է.Բենվենիստը -ի-ի համար ենթադրում է հին
yai (*REA, 1930, fas 1*): Եթե միջին իրանական լեզուներում
նշվածները, իրոք, առանց -ի (i)- են եղել, ապա ավելի քան
հավանական է դրանց հին պարսկական աղբյուրը: Աւսարդ
«Ժեր», երիտասարդ, նաւասարդ, նույնպես կարելի է դիտել
հին պարսկերեն, մանավանդ որ հպրս. sârd «տարի»-ն պար-
թեերենում sâr է, իսկ միջին պարսկերենում՝ sal, եթե բացառենք

հին պարսկական ձևը գոնե այս բառերի դեպքում միջին իրանական լեզուներում պահպանվելու և դրանցից էլ հայերենին անցնելու հնարավորությունը:

Ավեստերենից կատարած փոխառությունների մի մասին որոշակի բան չենք կարող ասել: Ենթադրվում է հեշմակ, դրոշ, դժոխ(ք) բառերի ավեստական ծագումը (*Անդրոնիկաշվիլի, 522*), բայց փաստարկները համոզիչ չեն:

Անկախ հայերենում առկա հին իրանական լեզուներից անցած բառերի առկայության հավաստիությունից, ապացուցված է, որ հայերենի իրանական փոխառությունների գերակշիռ մասը միջին իրանական փուլից է, իսկ զանգվածային փոխառությունների ժամանակաշրջանը մ.թ.ա. I - մ.թ. I դարերը, թեև հետագայում էլ փոխառությունների գործընթացը շարունակվել է:

Մինչև մեր դարի քսանական թվականները միջին իրանական լեզուներից գիտությանը հայտնի էին միջին պարսկերենի կամ պահլավերենի լեզվական իրողությունները: Միայն վերջին 60-70 տարում ի հայտ եկան պարթևերենի, սողդերենի ու միջին իրանական այլ լեզուների ու բարբառների տվյալներ, որոնք մեծապես նպաստում են հայերենի բառապաշարում իրանական փոխառյալ նոր միավորների հայտնաբերմանը, առկա ստուգաբանությունների ճշգրտմանն ու լրացմանը:

Իրանագիտությունը միջին իրանական լեզուները բաժանում է երկու մեծ խմբի՝ հյուսիսարևմտյան (NO) և հարավարևմտյան (SO): Առաջինի մեջ մտնում է պարթևերենը, իսկ երկրորդի մեջ՝ միջին պարսկերենը, որոնք և հայերենի իրանական փոխառությունների հիմնական սկզբնաղբյուրներն են: Այժմ, երբ հստակորեն ուրվագծված են պարթևերենի ու միջին պարսկերենի հնչյունական համակարգերի ընդհանրություններն ու յուրահատկությունները, զարգացման ու փոփոխության օրինաչափությունները, հնարավորություն է ստեղծվում տարբերակել հայերենի իրանական բառաշերտը ըստ այդ լեզուների: Նշենք հիմնական մի քանի հատկանիշներ.

1. միջձայնավորային և ետձայնավորային դիրքերում

պարթևերենի s-ի դիմաց միջին պարսկերենը ունի h: Պրթ. robas, միջ. պրս. robah: Ըստ այսմ վնաս, պատուհաս կարելի է համարել պարթևական, իսկ նկահ, դահ(ամն)՝ միջին պարսկական:

2. Պրթ. d (d)-միջ. պրս. y: Սպարապետ, ասպար-սպա-յապետ: Պրթ. wyd'ո-միջ.պրս. wy'ո-հայ. վրան (պարթևերենից): Բոյր-ը նույնպես պարթևերենից է, իսկ նայիբուակ, հրբուակ, հոշիբուակ (վկայված են VII դարից) երկրորդ բաղադրիչը միջ. պրս. boy-ն է: Վարսաւիրայ, ռահվիրայ նույնպես միջին պարսկերենից են, որոնց երկրորդ բաղադրիչը պարթ. virad-ն է:

3. Իրան. rd-պրթ. r(rd)-միջ. պրս. l: Հմմտ. հայ. վարդ - պրս. gul: Ուրեմն, եթե աւսարդ, նաւասարդ, երիտասարդ անմիջապես հին պարսկերենից չեն, ապա ենթադրում են ՈՍ աղբյուրը:

4. pat-ով ձևերը բնորոշ են պարթևերենին, իսկ pay-ով ձևերը՝ միջին պարսկերենին (պատգամ, պատմունամ, պատման, պատրաստ, պատկեր... - պայման, պայքար, պայուսակ...):

5. Հին իր. tr -ը պրթ.-ում ներկայանում է hr (h)՝ պահ, պահիր, պահապան, պարիակ, միջ. պրս. s՝ պասանիկ:

6. Պրթ. մի քանի բառերում բառավերջի g-ն միջին պարսկերենում ներկայանում է v: Հետևաբար, մոգ, մարգ պարթևական են, իսկ մովպետ, մովան անդերծապետ միջ. պրս.-ից: Եթե միջձայնավորային w-ի առկայությունը, իրոք, ՈՍ-ին է բնորոշ հմմտ. պրթ. pw'g «մաքուր», միջ. պրս. pak և եթե պարթևերենից է հաւասար-ը, իսկ հասարակը միջին պարսկերենից, ապա պետք է ենթադրել նաև, որ դժուար-ը պրթ.-ից է, իսկ բարբառային դժար-ը միջ. պրս.-ից:

7. Պրթ.-ի št հնչյունակապակցությանը միջ. պրս.-ում համապատասխանում է st: Պրթ. fryštğ -միջ. պրս. frestak: Ըստ այսմ Հայ. հրեշտակ-ը ենթադրում է ՈՍ աղբյուր, ինչպես նաև պարիշտ-ը, որի միջ. պրս.-ի գուգահեռը parist է: Կարելի է համադրել քուստ «կողմ» և բարբառային կուշտ ձևերը:

8. Պրթ. -nd-ն համապատասխանում է միջ. պրս. ոո-ին: Հմմտ. պրթ. hnd'm -միջ. պրս. hannam: Ուրեմն, հայ. անդամ-ի պարթևական բնույթը կասկած չի հարուցում:

9. Հայերենի իրանական ծագման մի քանի բառերում -տ-ի առկայությունը նույնպես կարելի է դիտել որպես NO լեզուների հատկանիշ: Հմմտ. **պատճեն, ամբաստան:**

10. y-ի դիմաց միջին պարսկերեն որոշ բառեր ունեն j. jawitean, jatagov: Ուրեմն, իրանական **ջատագով, ջատուկ, ջուխտ, ջաւիտեան** բառերը ըստ երևույթին միջին պարսկերենից են: Նկատենք, սակայն, որ y-j հնչյունափոխությունը վերաբերում է նաև միջին պարսկերենի զարգացման ներքին օրենքներին, և այս դեպքում միջին պարսկերենի ջ-ով ձևերը ժամանակագրորեն ավելի նոր են:

11. Իզաֆետային կազմությունները անխտիր SO-ից են. **դենիմագդեզն, բուհճենիկ, դարիճենիկ...**

12. Իրանական dv-ն NO-ում b է, SO-ում՝ d: Ըստ այդմ, **դարապան, դարապաս** միջին պարսկերենից են, բարապանը՝ պարթևերենից:

13. SO խմբին պետք է դասել r-ով սկսվող իրանական այն բառերը, որոնք հայերենում ներկայանում են r-ով և առանց նախահավելվածի: Վաղ փոխառություններում r-է և անպայման ա- կամ ե- նախահավելված. **երազ, արազ, երան** և այլն:

14. NO խմբին պետք է դասել nj-ով ձևերը. **պահանջ, նահանջ, տանջ(ել):** Պարթ. -nj-ի փոխարեն միջ. պրս.-ի մի քանի բառերում ունի ն:

15. Հին իրանական Sp-ը NO-ում մնում է նույնը, SO-ում՝ s: Ման. պրթ. 'spg -միջ. պրս. sak «շուն», պրթ. asp -միջ. պրս. asp նաև asvar «հեծյալ»: Ասպ «ծի» և այդ բառով կազմված ձևերը ծագումնաբանորեն ներկայացնում են NO խումբը, բայց դրանք առկա են նաև միջին պարսկերենում, ուստի հստակ չէ փոխառության բուն աղբյուրի հարցը: Բացի վերոհիշյալ հատկանիշների հիման վրա կատարվող տարբերակումից, հայերենի իրանական փոխառությունների ծագման աղբյուրը մի շարք բառերի դեպքում կարելի է ճշտել ըստ համապատասխան վկայությունների: Օրինակ, միջ. պրս. xurma -պրթ. armav (BSOAS, 13, 645): Հայ. արմաւ-ը ակնհայտորեն պարթևերենից է: Կամ՝ միջ. պրս. tohm-պրթ. twxm ձևերից հայ. տոհմ-ին համա-

պատասխանում է առաջինը, եթե պարթևական ձևը հ>x հնչյունափոխության արտահայտությունն չէ:

Հնչյունական օրինաչափությունների հաշվառումով պարթևական փոխառություններից առանձնացրել ենք 110, իսկ միջին պարսկերենից 85 բառ (*Հովհաննիսյան, 1990, 75-77*): Ակնհայտ է, որ իրանական փոխառյալ ամբողջ բառապաշարը եղած սկզբունքների հիման վրա չի տարբերակվում: Պարթևերենում և միջին պարսկերենում շատ բառեր ձևով նույնական են և հնարավոր չէ որոշել փոխառության բուն սկզբնաղբյուրը, եթե մանավանդ չկան արտալեզվական հուշող գործոններ: Տարբերակման հարցը դժվարանում է նաև պարթևերենի և միջին պարսկերենի միմյանցից կատարած զգալի փոխառությունների պատճառով:

Անկախ բուն սկզբնաղբյուրից, հայերենի իրանական բառաշերտի մեծագույն մասը միջին իրանական փուլի այս երկու լեզուներից է անցել:

Ներկայացնենք V դարում վկայված իրանական փոխառությունների ցանկը.

Ազատ	աճառ «սարք»	«մտածել»
ազգ	ամբաստան	անդամ
ախոռ	ամբար	անդարձ «կտակ»
ախորժ	ամբարիշտ	անդերձապետ
ախտ	ամբարտաւան	անդրաւարտի(ք)
ախտար «աստղ»	ամբոխ	անդոհ
ախտարմար	ամիճ «կերակուր»	«մտատանջություն»
«գուշակ»	ամպարտքաշ	անդրուար «կառք,
ակահ «տեղյակ»	անաշխարհիկ	կառածի»
ական «փոս»	անապակ	անոյշ
ականմայ	անապատ	աշակերտ
ահ	անգամ	աշխատ
ահեակ	անգար	աշխար
ահեկան (ամիսը)	«համարում»	աշխարաւանդ
աճապար(են)	անդաճ(են)	«թագի կապ»

աշխարհ
 աշխէտ
 աշխոյժ
 աշտեայ
 ապական
 ապակի
 ապահարզան
 ապաշաւ
 ապաշխար(են)
 ապաստան
 ապատ «շեն տեղ»
 ապարահ
 «դաշտան»
 ապարան(ք)
 ապարանջան
 ապարասան
 «ըմբոստ»
 ապարթան(են)
 «հանդգնել»
 ապաւանդակ
 «չվան»
 ապաւարտակ
 «արզանդ»
 ապաւեն
 ապիգակ «գինդ,
 զարդ»
 ապենիագ
 «անկարոտ»
 ապիկամ
 ապիրատ
 ապշոպ «կռիվ»
 ապուխտ
 ապուշ
 ապուռ
 ապսպար(են)

ապստամբ
 ապրդուն «թամբի
 փոկ»
 առասան «թոկ»
 ասպագեն
 ասպահապետ
 ասպաճարական
 ասպաստան
 ասպաստանիկ
 ասպատակ
 ասպար «վահան»
 ասպարեզ
 ասպետ
 ասպնջական
 աստառ
 ատակ
 ատրագոյն
 ատրճանակ
 ատրուշան
 արագ
 արգ «հարգ»
 արժ
 արժան
 արժակ
 արմաւ
 արշա «սպիտակ»
 արշաւ
 արոյր
 արուճանակ
 արջն «սև»
 արուսեակ
 արտախոյր
 աւազան
 աւար
 աւարտ

աւեր
 աւսարդ «ծեր»
 բագ «բաժին»
 բագին
 բագէ
 բագմակ
 բագմ(ին)
 բագուկ
 բագուն
 բաժ «հարկ»
 բաժակ
 բաժան
 բախտ
 բամբիշն
 բանդագուշ(անք)
 բանուական
 (տիկնայք)
 բաշխ
 բարակ
 բարակ «որսի
 շուն»
 բարապան
 բարգաւաճ
 բարձ
 բարսմուն(ք)
 բաւ
 բաւանդակ
 բղեշխ
 բժիշկ
 բիժ
 բիւր
 բնակ
 բոգպայիտ
 բոյժ
 բոյր

բոշխն(եմ)	գունակ	դատ
բոր	գունդ	դատախազ
բորակ	գուշակ	դատաստան
բուն	գրպան	դար «բարծր տեղ»
բուրաստան	«հագուստի մաս»	դարան
բուրուառ	գրաստ	դարապան
բրինձ	գրաւ	դարապաս
գագան	գրաւական	դարապետ
գահ «բարծր տեղ»	գրիւ (չափ)	«դռնապետ»
գահ	գրոհ	դարաստան
գահաւորակ	դագ «խաբեական»	«ծառաստան»
գամ «հնար»	դաժան	դարաւանդ «բարծր տեղ»
գանձ	դահ «ընծա»	դարգիճ
գանձանակ	դահանակ	«մահճակալ»
գար «ցավ»	«հասպիս»	դարման
գաւազան	դահեկան «դրամ»	դաւ
գաւարս «կորեկ»	դահիճ	դաւաճան
գեր «ողբ»	դահլիճ	դեհ «կողմ»
գերդաստան	դանկ «դրամ»	դեհկան
գերեզման	դանդանաւանդ	«կուսակալ»
գէս	«սամձ»	դեհպետ
գմբեթ	դաշխուրան	«կուսակալ»
գոմէզ «կովի մեզ»	«տաշտ»	դեն «կրոն»
գոմէշ	դաշն	դենիմագդեզն
գոյն	դաշտ	դենպետ
գոյշ	դաշտան	դեսպակ
գոնջ	դաս «կարգ»	դեսպան
«հաշմանդամ»	դաստակ	դերանդերծապետ
գով(եմ)	դաստակերտ	դել
գորշապահանգ	դաստապակ	դէմ
«ականջօղ»	«մաքուր»	դէպ
գռնի «ցեխ, աղբ»	դաստապան	դէտ
գուպար «կոփվ»	դաստառակ	դժգոյն
գումար	«ջնջոց»	դժխեմ
գումարտակ	դաստիարակ	

դժկամ
 դժկերպ
 դժնդակ
 դժնեայ
 դժնիկ
 դժոխ
 դժուար
 դժպարիշտ
 դժպարտ
 դժպիի
 դիմակ
 դիպակ
 դիւան
 դղեակ
 դմակ
 դշխոյ
 դորակ «չափ»
 դպիր
 դսրով
 դրախտ
 դրամ
 դրոշմ
 Դրուատ
 դրուժ
 դրօշ
 երագ
 երախ
 երախտ
 երակ
 երամ
 երան(ի)
 երանգ
 երան(ք)
 երաշխ
 երաշտ

երասան
 երիտասարդ
 երկ «գործ»
 զամբիւղ
 զան «կկերպ»
 զանգակ
 զանկապան
 զ ա ռ ն ա լ ու խ տ
 «կերպաս»
 զարտակ
 (զ)բօս(անք)
 զեան
 զեն(ում)
 զեն(ք)
 զինդիկապետ
 զմրուխտ
 զնդան
 զնին
 զոհ
 զուր
 զրահ
 զօշ «վատ»
 զօր(ք)
 թագ
 թակոյկ
 թաշկինակ
 թասեն «հեալ»
 թմբուկ
 թշնամի
 թշուառ
 թոշակ
 թութ
 ժահ
 ժամ
 ժամանակ

ժանգ
 ժանուար «վրան»
 ժանտ
 ժէտ
 ժիր
 ժպիրի
 լաշկար «զորք»
 խագ «քար»
 խամ «անփորձ»
 խան «սեղան»
 խարագան
 խարակ
 խար «խոտ»
 խարբուզ
 «իշայծյամ»
 խաւար
 խոզ
 խոհ «կերակուր»
 խոյր
 խոնաստան
 «սեղանատուն»
 խոնարհ
 խոռապետ
 խոստ
 խոստովան(են)
 խորակ
 խորան
 խորշակ
 խորտակ(են)
 խորտիկ
 խուժ
 խումբ
 խունկ
 խրատ
 կախարդ

կահ	կոյր	հանգրիճ(եմ)
կաղապար	կոտակ	«հավաքել»
կամ(ք)	կուզ	հանգրուան
կամ	կուժ	հանդարտ
կամակար	կուշտ	հանդերձ
կամայ	կռոգպետ	հանդէս
կամար	կտակ	հանճար
կապար	կտապ	հաշտ
կապէնք «շնության	կրպակ	հասարակ
վարձ»	կօշիկ	հարազատ
կապիկ	հազ(իւ)	հարկ
կապիճ	հազար	հաւասար
կապոյտ	հազարապետ	հաւատ
կաս	հակիրճ	հեշմակ «դէ»
կասկ «հարիսա»	հաճ(իմ)	հզօր
կատակ	համակ	հէն «ավազակ»
կար(ի) «սաստիկ»	համակդէն	հիրիկ (ծաղիկ)
կարաւան	համասպրամ	հմայ(եմ)
կարգ	համատոհմակ	հնազանդ
կարկանդակ	համար	հնար
կարկեհան	համարակալ	հպատակ
կարմիր	համբարակ	հպարտ
կարշն «ուժ»	համբարապան	հրաժար(եմ)
կեշտ	համբարակապետ	հրահանգ
կերպ	համբարու	հրամայ(եմ)
կերպաս	համբաւ	հրաման
կերտ(եմ)	համբոյր	հրաշ(ք)
կիրթ	համբուն	հրապարակ
կնգում	համհարգ	հրապոյր
կնդրուկ	համշիրակ	հրասախ
կնճիթ	«սննդակից»	հրատարակ
կնճիթ «սուսամ»	համօրէն	հրաւեր
կշտապանակ	հանգանակ	հրեշտակ
կոյս «կողմ»	հանգոյն	հրէշ
կոյտ	հանգուշն «զգուշ»	հրովարտակ

հրուշակ
 հօրոտ
 ղամդայեալ
 «պճնված»
 ճախարակ
 ճախր
 ճակատ
 ճամբար
 ճամբարակ
 «ճոպան»
 ճանապարհ
 ճանքակ
 ճան «մոլ», «նետել»
 ճանկ
 ճաշ
 ճաշակ
 ճապուկ
 ճատրակ
 ճարակ
 «անասնակեր»
 ճարպ
 ճարտար
 ճարտուկ
 «բժավոր»
 ճենմ
 ճենիշ «զուգարան»
 ճեպ
 ճետ «ցեղ»
 ճերմակ
 ճիտակ
 ճշմարիտ
 ճրագ
 մագդեզն
 մակոյկ
 մահ

մահակ «վարձ»
 մահակ
 «գավազան»
 մահիկ «լուսնակ»
 մաճ
 մայպետ [տիտղոս]
 ման [կշռաչափ]
 մանաւանդ
 մանուշակ
 մ ա շ կ ա պ ա ր ծ ե ն
 «վրան»
 մատակ
 մատակարար
 մատեան (գունդ)
 մատեան
 մատռուակ
 մար (չափ)
 մարախ
 մարգ
 մարգ «թռչուն»
 մարգարէ
 մարերի (ամիսը)
 մարզ
 մարզ(եմ)
 մարզպան
 մարզպետ
 մեհեան
 մեհեկան (ամիսը)
 մեհեւանդ
 «մանյակ»
 մենթան «զգեստ»
 մերժ(եմ)
 միշտ
 միրգ
 մշտիկ «սրսկիչ»

մոգ
 մոմ
 մոյկ
 մոյր
 մովպետ
 մովպետան
 մովպետ
 մուրիակ
 մուրտ (բույս)
 մօրուտ (ծաղիկը)
 յագ(եմ) «զոհեմ»
 յանդիման
 յաշտ «զոհ»
 յասմիկ
 յաւանակ
 յաւէժ
 յաւէտ
 յիշատակ
 յիշ(եմ)
 յոյզ
 յովագ
 յուշկապարիկ
 նագ
 նաժիշտ
 նախ
 նախարար
 նախճիր
 նահանջ
 նահապետ
 նահատակ
 նամակ
 նապաստակ
 նարգէս
 նաւագ
 նաւակատի(ք)

Նաւասարդ	Նուէր	ոստիկան
Նաւթ	Նուիրակ	ուխտ
Նաքարակիտ	Նուիրակապետ	ուշ
«դրամ»	Նպաստ	չաման (բույս)
Նզար «նիհար»	Նպատակ	չուառ «թշվառ»
Նզով	Նպար	պախաճճամ
Նժար	Նպերտ	«ուտելիք»
Նժդեհ	շահախոռապետ	պախճաւանդ
«պանդուխտ»	շահապ «պետ,	պակաս
Նիզար «կարոտ»	իշխան»	պահ
Նիզակ	շահապետ	պահակ
Նիրհ(եմ)	շահաստան «մեծ	պահակեր
Նկան «հաց»	քաղաք»	«պահակ»
Նկանակ «հաց»	շահատակ	պահանգ
Նկար	«ախոյան»	պահանջ
Նկուն	շամբուշ «խենթ»	պաճար
Նհանգ	շամդիտակ (բույս)	«անասուն»
«կոկորդիլոս»	շապիկ	պայազատ
Նման	շապստան	պայիկ
Նշան	տակառապետ	պայման
Նշանակ	շատ	պայուսակ
Նշաւակ	շատ «քաղաք»	պայքար
Նշխար	շատրուան	պանդոյր «անմիտ»
Նշկահ	շեպ «զառիվայր»	պանդուխտ
«արհամարհանք»	շէն	պանիր
Նշտիր «դանակ»	շիշ	պաշար
Նոխազ	շիտակ	պաշտ(եմ)
Նոճի	շկահ «նետի ծայր»	պաշտպան
Նուազ	շկոթակ «աքսոր»	պառակ «կող»
Նուազ «ամգամ»	շնորհ	պառաւ
Նուազ	շպետ «հովիվ»	պաստառ
Նուաճ(եմ)	շտապ	պատասխանի
Նուաստ	ոյժ	պատարագ
Նուարտան	ոստան	պատգամ
«ծածկոց»	ոստանիկ	պատգարակ

պատերազմ
 պատիր
 պատիւ
 պատկան «նետ»
 պատկանդարան
 պատկեր
 պատճառ
 պատճէն
 պատման «չափ»
 պատմութեան
 պատմութեան
 պատշաճ
 պատշգամբ
 պատշիր
 «փաստաթուղթ»
 պատուանդան
 պատուաստ
 պատուար
 պատուէր
 պատուիրակ
 պատուիրան
 պատուհան
 պատուհաս
 պատսպար(եմ)
 պատրաստ
 պատրոյգ
 պատրուճակ
 պարար
 պարարտ
 պարաւանդ «կապ»
 պարեկ
 պարեհնակ
 «շապիկ»
 պարզ
 պարէն

պարետ
 պարիկ
 պարիսպ
 պարկէն «փոս»
 պարկէշտ
 պարմայ(եմ)
 «տուժել»
 պարմանի
 «պատանի»
 պարս
 պարսաւ
 պարտ
 պարտքաշխ
 պարտաս(իմ)
 պարտքաշխ
 պարտէզ
 պարտքաշ
 պետ
 պետմոգ
 պէշասպիկ
 «սուրհանդակ»
 պէս
 պէտ(ք)
 պիհ «պաշար»
 պիսակ
 պղինձ
 պողովատ
 պսակ
 ջատագով
 ջատուկ
 ջոկ
 ռազմ
 ռահվիրայ
 ռամիկ
 ռատ

ռոճիկ
 ռոտաստակ
 «քաղաք»
 սակ «տուրք»
 սակստան
 անդերձապետ
 սահ «գունդ»,
 բանակ»
 սահման
 սաղար
 սաղաւարտ
 սամոյր
 սանդարամետ
 սապատ
 սատակ «պարզ»
 սեաւ
 սեպուհ
 սիկ «ցեխ»
 սիրամարգ
 սկաւառակ
 սմբակ
 սմնակ
 սնգոյր
 սնդուս «դիպակ»
 սով
 սուգ
 սուրհանդակ
 սպայ
 սպառ
 սպաս
 սպարապետ
 սպիտակ
 սպուժ(եմ)
 «դանդաղել»
 ստամբակ

ստաշխն «խունկ»	վարշամակ	տախտակ
սրահ	վարունգ	տակ
սրուակ	վարս	տակառ
սրսկապան	վարսավիրայ	տակառապետ
սրսկ(եմ)	վարտի(ք)	տաղաւար
վազ	վաւէր	տաճար
վագր	վեհ	տաճիկ
վախճան	վեհեր	տանջ(եմ)
վահան	վզուրկ «մեծ»	տաշ(եմ)
վաճառ	վէգ	տաշտ
վան(եմ)	վէժ	տապ
վանդակ	վէճ	տապակ
վանկ	վէմ	տապան
վաշխ	վիժակ «ծածկոց»	տապաստ
վաշտ	վիճակ	տապար
վառ	վին	տար
վասն	վիշապ	տարագ
վատ	վիրայ(եմ)	տաւիղ
վատգոհար «վատ»	վկայ	տէգ
վ ա տ ա խ տ ա ր ա կ	վկանդեմ	տոհմ
«գռեհիկ»	վիուկ	տոյգ
վատթար	վճար	տոյժ
վարագոյր	վճիռ	տօթ
վարագ	վնաս	փաղան «գլխա-
վարապան «կրծքի	վսեստակ «ման-	շոր»
զրահ»	րած հացահատիկ»	փաշաման
վարաւանդ «ծիու	վստահ	փառք
սպասք»	վտակ	փարգաստ «քավ
վարդ	վտանգ	լիցի»
վարդապետ	վտար(եմ)	փիղ
վար(եմ)	վտաւակ	փշիտ (կշռաչափ)
վարժ	վտաւան	փուշտիպան
վարժ	վրան	փուշտիպանսաղար
վարձակ	վրեպ	փուտ
վարմ «թակարդ»	տախտ	փուրսիշն «հար-

ցաքննություն»	քէշ	օժանդակ
քանդ	քուրծ	օժիտ
քանդակ	քսակ	օշարակ
քաշ	քրտիկար «բարի	օշնան (խոտ է)
քարշ	գործ»	օտար
քենուխտ «ողորկ	քրքում (բույս)	օրէն(ք)
կաշի»	օգուտ	օրին(են)

Այս ցանկը ընդգրկում է 836 բառ:

Անդրադառնանք V դարի ցանկի քննությանը: Առաջին հերթին մշենք, որ այն վերջնական չէ: Ճիշտ է, ձգտել ենք ընդգրկել այն բառերը, որոնց իրանական ծագումը կարելի է ստույգ համարել, բայց հնարավոր է, որ հետագայում ստուգաբանական այլ հավաստի փաստերով պարզվի դրանց մի քանիսի ոչ իրանական բնույթը: Մյուս կողմից՝ մշելի են տասնյակ բառեր, որոնք կարելի էր զետեղել այդ ցանկում՝ հատկապես նկատի առնելով արտաքին-հնչյունական կողմը, նաև ստուգաբանական որոշ փաստարկներ: Ամբարիաւաճ, ամբարտակ, ապարօշ, ապաւարտակ, աստիճան, ատրաշէկ, աւազակ, արա-հետ, արատ, արուարծան, բանակ, բունպան, գամապետ, գերմակ, գրուահ, գուպար, երախայ, զաւակ, զուիրակ, թիրախ, խանգար, խոնարի, խոյզ, կարապետ, հանապազ, համեմատ, հաւատ, հրապարակ, հրոսակ, ճաճանչաւուխտ, ճարմանդ, մկրտ(են), մշակ, շերտ, շփոթ, պաճոյճ, պաշար(են), պատանի, պատուանդան, պարկեշտ, պարոյր, պերճ, սարկաւազ, սկայ, սպասեակ, վաստակ, վարուժան, վէս, վտարանջ(են), տագնապ, քաջ: Այս բառերի իրանական բնույթի օգտին ստուգաբանական դիտողություններ կան: Սակայն դրանք անվերապահորեն իրանական չենք համարում որոշ բառիմաստների, մի քանի բառերի փոխառության այլ աղբյուրների հետ ունեցած հարաբերության ճշգրտման, նոր վկայությունների, ստուգաբանական ավելի համոզիչ լրացումների ակնկալիքով: Օրինակ, հստակ չէ մշակ, դոյլ բառերի իրանական կամ սեմական աղբյուրի հարցը, տագնապ-ի խեթական կամ իրանական բնույթը և այլն: Մշակ-ի համար Արմ-ում բերված կովկասյան ձևերին կարելի է

զուգադրել նաև իր. *mišak, խոտ. massa-ttumasa, մշակել, ցանել, (*Բեյլի, BSOAS, 15, 530*): Բեյլին կարապետ-ը կապում է կարաւանապետ-ի հետ (*Ն.տ., 14, 424*), Սեմերենյին քաջ-ի սկզբնաղբյուր է համարում սողդ. kajj-ը, իրանական ձևի իմաստը ավելի մոտ համարելով հայ. սքանչ-ին: Գերմակ «ալյուր, սպիտակ ալյուր»-ի դերմակ ուղղումը մերժում է ԱՐՄ-ը և ճիշտ է վարվում, քանի որ գերմակ կա և բարբառներում: Ա. Վարդանյանը համադրում է իրան. garmah (*ՀԱ, 1929, 315*): Գուցե՞ և բառը կապ ունի իր garm «տաք» բառի հետ. «նոր աղացած ալյուր» իմաստով:

Մի խոսքով, դեռևս լրացուցիչ նյութեր են պետք այս կարգի բառերի ծագումը ճշգրտելու համար:

Բառերի մի խումբ էլ կարելի է համարել կամ բնիկ հայերեն, կամ իրանական: Սրանք դարձյալ չենք զետեղել փոխառությունների ցանկում:

Աւետ – Ա. Փերիխանյանը բերում է միջ. պրս. abyat, պրս. yad «հիշատակ» զուգահեռը՝ հայերենի համար ենթադրելով պարթևական աղբյուր, բայց կա և բառի այլ ստուգաբանություն՝ հ.-ե. aud «խոսել»:

Գան – դեռևս Լազարդից սկսած համարվում է բնիկ հայերեն: Բենվենիստը, սակայն, կողմնակից է իրանական ծագմանը՝ հետևյալ փաստարկմամբ՝ ա) բառը վկայված է իրանական լեզուներում, բ) հաճախական գան հարկանել հարադրությունը բնորոշ է իրանական լեզուներին, գ) եթե գան-ը շարունակությունն է հ.-ե. *guhēni, ապա սպասելի էր գոն կամ *գուն: Ինչ խոսք, ուշագրավ փաստարկներ են (*BSL, 1957, 60-61*), բայց առարկելի չէ կապը և հ.-ե. *guhēni կամ *guhū-ni-ի հետ (*Джаукян, 1982, 49*):

Թել-ը Բեյլին աղերսում է օտեթ. tel «լար»-ի հետ: Գ. Ջահուկյանը թել-ոյ-ի համար ենթադրում է *tek «գործել, հյուսել»՝ կազմված *tek-lo նախածնից:

* Մի քանի բառեր, որոնք հնչյունակազմով հին ձևեր են, բայց ուշ են ավարտված, զետեղել ենք V դ. ցանկում. բրինձ, համշիրակ, հրուշակ, ճստրակ, շիտակ, նպերտ...

Կատակ — հ.-ե. *g'ad «ասել, խոսել» նաև սողդ. k't'k «խաղ»:

Շերտ-ը կարելի է բխեցնել իրան. *siar դերբայական ձևից (*Փերիխանյան, REA, 1968*), նաև հ.-ե. *skhed-ri-ից (*Джаукян, 1982, 66*):

Սրունք-ի բուն հ.-ե. կամ իրանական բնույթը դարձյալ ստույգ չէ (*Ջահուկյան, 1982, ԲԵՅ, 1981, 27-28*):

Իր «առարկա» հաս, սամիք, սաստ, սուրբ բառերը բենվենիստը համարում է իրանական (*REA, 1964, 1-39*): Սակայն չի մերժում նաև դրանց հ.-ե. ծագումը:

Մի խոսքով, ամանակ, աւետ, գան, դերծ (դերծակ), հանդերծ, դերծան, երգ, իժ, իր, հաս, շար, շէկ, շէրտ, շփոթ, սամիք, սաստ, սրուն(ք), սուրբ... բառերը կարելի է համարել թե՛ բնիկ, թե՛ իրանական: Այդ պատճառով էլ դրանք իրանական փոխառությունների ցանկում չենք նշում: Ավելացնենք միայն, որ այս շարքին կարելի է միացնել ևս մի քանի բառեր, որոնք ավանդաբար, այդ թվում և Գ. Ջահուկյանի աշխատության մեջ, համարվում են իրանական: (Իրանական զուգահեռները բերում ենք ըստ *Ջահուկյան, 1978*):

Ազգ — միջ. պրս azg «ճյուղ»: Մի կողմ թողնելով ազգ բառի այլ մեկնություններ, նկատենք, որ հ.-ե. *azgho «ճյուղ»-ից հայերենում սպասելի է և ազգ: Հ.-ե. և միջ. պրս. ձևերի իմաստային ընդհանրությունը դեռևս բավարար փաստարկ չէ ազգ-ի իրանական բնույթը հաստատելու համար:

Բանդ (բանդ)- ավեստ. banda, միջ. պրս. band «կապ», սողդ. band «բանտ»: Անշուշտ, իրանական զուգահեռները համոզիչ են, բայց հ.-ե. *bhendh, bhandh-ից հայերենը նույնպես կտար բանտ (բանդ): Անմիջաբար իրանականից փոխառվելու անքննադատ փաստ չէ և իրանական լեզուներում «բանտ, արգելավայր» իմաստների առկայությունը: «Կապ, կապանք» ... «բանտ, արգելավայր» իմաստային զարգացումը կարող է կատարված լինել նաև հայերենում: Ոմանք բանտ-ի իրանական բնույթի փաստարկ են համարում մեր պինդ բառի առկայությունը, որպես հ.-ե. *bandh ձևի «կանոնավոր ներկայացուցիչ, ուստի բանդ փոխառյալ է իրանյանից, որի հարազատ հայերեն

ծևն է պինդ» (*ԱՐԱ*): Նշենք, որ իրանական նորահայտ աղբյուրներում վկայած է և pinda (TPS, 1955, 76): Վկայության փաստը անշուշտ հետաքրքրական է, բայց հետաքրքիր է և այն, որ եթե նախքան այդ վկայությունը հայ. պինդ բառի առկայությամբ փորձում էին հաստատել բանդ-ի իրանական ծագումը, ապա այժմ էլ պինդն են համարում իրանական (Բեյլի, TPS, 1955, Периханян, 1983, 5): Նորագույն ուսումնասիրություններում դարձյալ տուրք է տրվում ավանդական այն մոտեցմանը, որ եթե բառը վկայված է իրանական լեզուներում, ուրեմն այն փոխառություն է՝ անտեսելով բուն հնդեվրոպականից ժառանգելու հնարավորությունը:

Դայեակ – հ.-ե. *dh̥sī, միջ.արս. *dāyak, արս. dāya: Սեկ այլ տեղ Գ. Ջահուկյանը աղերսում է հ.-ե. dhidei-mi(io)-ին (1970, 95):

Մանկ (մանգ) – «մենգություն»- սողդ. monk, արս. mang, outə. mang(a) «կեղծ, սուտ»: Հ. Ե. *mang-ից հայերենը նույնպես կտա մանգ (մանկ):

Սարեկ – միջ. արս. sar, արս. sari: Հ.-ե. k'ər, k'or, k'r-ից նույնպես սպասելի է հայ. սար(եակ): Վերոհիշյալ բառերը դարձյալ չենք զետեղել փոխառությունների ցանկում: Ցանկը կազմել ենք հաշվի առնելով իրանագիտության վերջին նվաճումները, հիմք ընդունելով մեր նախորդ աշխատանքի արդյունքները (*Հովհաննիսյան, 1960*), ինչպես նաև Գ.Ջահուկյանի ցանկը (*Ջահուկյան, 1987*): Բնականաբար, մեծ տարբերություններ կան Հ.Աճառյանի և մեր ցանկերի միջև: Հետաճառյանական շրջանում ի հայտ եկան բազմաթիվ իրանական աղբյուրներ ու վկայություններ, որոնց նյութը բնականաբար արտացոլված չէր Աճառյանի ցանկում: Կան նաև մեծ թվով նոր ստուգաբանություններ, որոնք մենք հաշվի ենք առել: Որոշակի տարբերություններ կան նաև ակադեմիկոս Ջահուկյանի և մեր կազմած ցանկերի միջև: Ընդհանուր առմամբ այդ տարբերությունները կարելի է հանգեցնել ա) աշխատանքների նպատակադրմանը (Ջահուկյանը ներկայացրել է նախագրաբարյան փուլի փոխառությունները), բ) Փոխառությունների տարբերական սկզբունքներին, գ) որոշ ստուգաբանություններ հավաստի կամ անհավաստի համարելուն:

Իրանական փոխառությունների բառակազմական առանձնահատկությունները

Փոխառությունների զգալի մասը կարելի է տարբերակել բառերի արտաքին ձևից՝ բառակազմական յուրահատկություններից: Խոսքը միայն իրանական ծագում ունեցող բազմաթիվ նախածանցների ու վերջածանցների մասին չէ, որոնք կարող են բաղադրվել և ոչ իրանական հիմքի հետ, այլ այնպիսի ձևույթների ու հնչյունախմբերի, որոնք առկայանում են մեծաթիվ իրանական փոխառություններում: Ձևույթների մի մասը փոխատու լեզվում ածանցական արժեք ունի, մյուսը արմատ է (հիմք): Հայերենում որոշ դեպքերում այդ ձևույթների իմաստները մթազնված են. օրինակ, նաժիշտ բառում իշտ-ը չի գիտակցվում որպես ածանց, իսկ վնասակար, օգտակար բառերում կար-ը իր. kar «գործ» արդեն ածանցային արժեք ունի:

Առանձնացնենք բառախմբերը ըստ բառասկզբնային կամ բառավերջային դիրքի առանձնահատկությունների՝

ա) բառասկզբնային դիրք

պատ- (իր. pat(i)) – պատասխանի, պատարագ, պատգամ, պատգարակ, պատգոսապան, պատերազմ, պատկեր, պատճեն... (ավելի քան երեք տասնյակ բառեր):

պայ- – պայման, պայքար, պայուսակ, պայազատ...

պա- (իր. pa կամ pa) պակաս, պաճար, պառակ, պաշար,

ապ- – (ապա)- ապակի, ապահարզան, ապախտար, ապաշաւ, ապաւանդակ (այս ապ- բաղադրիչը կապ չունի հայ ապ- ժխտական ածանցի հետ)

իր-ի հնչյունախումբը (fr-hr անցումը կարող է կատարված լինել թե՛ իրանական, թե՛ հայկական հողի վրա) – իրահանգ, հրաման, հրեշտակ, հրապարակ, հրասախ: Այս հնչյունախումբը առկայանում է նաև բառավերջում. աշխարհ, պարի, ճանապարհ...

ար(եր)- – արագ, երագ, երագ, երախտ, երաշտ: Բ-ից

առաջ ե(ա) ծայնավորները նախահավելվածներ են. չբացառելով որոշ բառերում դրանց առկայությունը փոխատու լեզվում, այնուհանդերձ հիմնական մասով այն հայկական իրողություն է: Իր. r-ն հայերենում ներկայանում է նաև ռ (ռամիկ, ռամ, ռահ), որոնք ժամանակագրորեն ավելի նոր փոխառություններ են, քան ր-ով ձևերը:

շխ>խշ – աշխար, աշխարհ, աշխետ, աշխոյժ, աշխատ: Բառասկզբի ա-ն դարձյալ հավելված է: Այս հնչյունախումբը առկայանում է նաև բառավերջում. բաշխ, բդեաշխ...

դժ-թշ- – դժուար, դժպարիշտ, դժխեն, թշնամի, թշուռ...

համ- – համասարամ, համօրեն, համհարզ, հանգոյն, հանդարտ, հանդես... Հայերենի համ-ով սկսվող բառերի մեջ միշտ չէ, որ համ-ը իրանական համանուն ածանցն է, այն որոշ դեպքերում կարող է ծագած լինել հ.-ե. *sm-ից:

բ) բառավերջային դիրք

-ակ – ամբարտակ, ապաւանդակ, բազմակ, բաժակ, դարիճակ, դեսպակ, թաշկինակ, հպատակ, վսեստակ... Ըստ բառակազմական առանձնահատկությունների՝ ակ-ով ձևերը փոխառյալ բառաշերտի ամենամեծ խումբն են կազմում: ak ածանցը բավական արտադրողական էր միջին պարսկերենում և պարսկերենում և կազմում էր գոյականներ՝ բայահիմքերից, թվականներից ու ածականներից, ածականներ՝ գոյականներից ու բայանուններից: Հանդիպում են նաև բառեր զրո և -ակ ածանցային հակադրությամբ, որոնց միջև իմաստային և խոսքիմասային տարբերություններ չեն նկատվում:

Գրաբարում -ակ-ը հաճախական է որպես նվազականփաղաքշական ձևույթ (աթռակ, բլթակ, մաւակ, տնակ, բլրակ...): Ստույգ չէ գրաբարյան նվազական -ակ-ի կապը իր. ak-ի հետ, թեև վերջինն էլ այդպիսի կիրառություն ունի: Սակայն չպետք է կարծել, որ ոչ նվազական -ակ-ով վերջացող բոլոր բառերը իրանական են: Կան նաև հայերեն կազմություններ. ազարակ, արդարակ, իմաստակ, իմաստասիրակ, խնդրակ, հետևակ, մտրակ, ներքնակ, սխալակ...

-ական – վասպուրական, ասպաճարակական... Գրա-

բարում -ական-ով կազմված բառերի թիվը հասնում է 1000-ի: Այդ ձևույթը բաղադրված է իրանական և ոչ իրանական արմատների (հիմքերի) հետ: Ոմանք -ական-ը համարում են իրան. *akan*: է. Բենվենիստը ենթադրում է, որ հայերենը իրանականից վերցրել է ոչ միայն այդ ածանցը, այլև նրա բազմազան շարահյուսական կիրառությունները (*Բենվենիստ, titre..., էջ 16*): Սա առարկելի է, որովհետև, առհասարակ, ածանցների շարահյուսական կիրառությունները փոխ չեն առնվում: Իր. համանուն ածանցի իմաստային-գործառական բազմազան դրսևորումները հայերենում մեր լեզվի իրողությունն են: Բենվենիստի կարծիքով իր. ական-ը նախ և առաջ հնայրաբանության (պատրոնիմիկա) արտահայտման բնորոշ ածանց-ձևույթ է, *հմմտ.* Šahrpur Papakan, Sasanakan: Կապված այս կիրառության հետ, թե՛ իրանական լեզուներում, թե՛ հայերենում այն նաև տեղանվանակերտ է. Ատրպատական, Վասպուրական, Օշական, Փառական և այլն: Ամենայն հավանականությամբ -ական-ը որպես իրանական ձևույթ ունեցել է միայն այս նեղ կիրառությունը, հետագայում միայն հայկական հողի վրա ձեռք բերել ածանցային նոր ու բազմազան իմաստներ: Որոշ դեպքերում նույնիսկ իր. արմատ+ական կազմությունը կարելի է չհամարել իրանական փոխառություն, մասնավորապես այդ արմատը հայերենում անկախ և հաճախական կիրառություն ունի:

-ան – ապահարզան, դրուժան, յանդիման, երասան, պատուիրան, վահան: Համանման ածանց գործում է և հայերենում՝ բառակազմական ընդհանուր եզրեր ունենալով իրան. *an*-ի հետ:

-անակ – արուճանակ, դահանակ, ժամանակ, հանգանակ

-անդակ – ասպանդակ, բաւանդակ, կարկանդակ, սուրհանդակ, օժանդակ... *andak*-ը միջին իրան. լեզուներում դերբայակերտ է: Հայերենում այդ ձևույթը ոչ իրանական հիմքերի հետ սակավ է հանդիպում. *հմմտ.* այլանդակ, որի երկրորդ բաղադրիչի բնույթը պարզ չէ:

-իշն – կարիշն, բաշխիշ(ն), փուրսիշն

-իշտ – նաժիշտ, երաժիշտ

-պան – բարապան, վարապան, պահակապան, գրապան,

դաստապան, (պան-ը բաղադրվում է մաս հայերեն հիմքերի հետ. դռնապան)

-պետ – բարապետ, տակառապետ, ասպահապետ, հազարապետ, մոգպետ, դերանդերծապետ, անդերծապետ: Այս ձևությամբ բառերը արտահայտում են «պաշտոն, տիտղոս»: Բազմաթիվ կազմություններ կան մաս հայերեն հիմքով: Ըստ երևույթին, մպատակահարմար է իր. հիմք+պետ կազմություններից փոխառյալ միավորներ համարել միայն այնպիսիները, որոնց հիմքը հայերենում անկախաբար չի կիրառվում:

-տակ – ամբարտակ, յովատակ, ասպատակ, հրովարտակ, վտակ...

-վանդ – դանդաճաճանդ, դարաճանդ, պատուճանդ(ան)

-իկ, -զան, -ճան, -ստան ձևություները նույնպես իրանական ծագում ունեն:

Իրանական փոխառությունների իմաստային խմբերը

Ուսումնասիրողները իրանական փոխառությունները դասակարգում են ըստ որոշ խմբերի՝ անելով համապատասխան դիտարկումներ ու եզրահանգումներ: Խոսափելով կրկնությունից՝ անդրադառնանք միայն Գ. Ջահուկյանի մի քանի նկատառումներին և անցնենք որոշ խմբերի բառապաշարի վերլուծությանը: Գ.Ջահուկյանը առանձնացնում է 23 իմաստային խումբ՝ եզրակացնելով.

1. Իրանական փոխառությունները բոլոր կարգի փոխառությունների մեջ միակն են, որ բնիկ հնդեվրոպական բառերի նման ընդգրկում են իմաստային (թեմատիկ) բոլոր խմբերը...

2. Իրանական ծագման բառերը ակնհայտորեն զիջում են բնիկ հնդեվրոպական բառերին իրենց թվով, գործածությամբ և բառակազմական արժեքով հատկապես այն խմբերում, որոնք համեմատաբար կայուն են և կազմում են ամեն մի լեզվի անկապտելի սեփականությունը: Մասնավորապես պետք է նշել իրանական փոխառությունների մեջ դերանունների և միավորներ ու տասնյակներ արտահայտող թվականների բացակայությունը, ֆիզիկական աշխարհի, մարդկային սեռերի և ընտա-

նեկան հարաբերություններին, մարմնի մասերին ու մարմնական գործառնություններին, շարժման ու գործողության սովորական ծներին, տարածական էական հարաբերություններին, ոչ գունային զգայական ընկալումներին, ծայնական արտահայտություններին ու խոսքին վերաբերող անվանումների համեմատական սակավաթվությունը:

3. Իրանական փոխառությունները մեծ քանակ են կազմում և առանձին դեպքերում բնիկ հնդեվրոպական բառերին թվով գերազանցում հետևյալ խմբերում ու ենթախմբերում՝ արևադարձային գոտու կենդանիների և կուլտուրական բույսերի, կերակուրների և ամանների, հագուստների և զարդարանքների անվանումներ, գունային նշանակումներ և ամսանուններ, առևտրական, պետական-քաղաքական, ռազմական և իրավական տերմիններ: Մեծաթիվ են հայ հեթանոսական կրոնի հետ կապված բառերը... (*Ջահուկյան, 1987, 577-578*):

Ակնհայտ իրողություն է, որ պետական, վարչական, ռազմական կյանքին վերաբերող փոխառությունները իրոք մեծ թիվ են կազմում: Գ.Ջահուկյանի առանձնացրած տարածքային, հասարակական և քաղաքական բաժանումներ, հասարակական հարաբերություններ իմաստային խմբում կա 86 բառ, կրոն և նախապաշարմունք խմբում՝ 37, ռազմական գործ՝ 71: Այսինքն, մոտ երկու հարյուր բառ արտացոլում է իրականության այդ ոլորտը: Մեր կողմից կատարված խմբավորումները մի քիչ այլ են (*Յոզհաննիսյան, 1990, 87-107*)՝ որոշ քանակական անհամապատասխանություններով, սակայն այդ տարբերությունները զգալի չեն: Այս ոլորտներին վերաբերող բառաշերտի զգալի քանակը՝ առաջին հերթին բացատրվում է իրանական իրականության հետ սերտ շփումներով, Իրանի՝ դարեր տևած վարչաքաղաքական, ռազմական ազդեցությամբ: Շեշտենք մի հանգամանք ևս: Այդ փոխառությունների զգալի մասը տերմիններ, տիտղոսներ են, որոնք չեն կարող թարգմանվել և պարզապես գործառնում են որպես օտար հասկացություններ: Այլ բան է, որ որոշ տերմիններ արդեն V դարից կիրառվում էին նաև հայ իրականության մեջ (հազարապետ, սպարապետ, բղեաշխ, հրամանատար, ոստիկան և այլն): Մի խոսքով, պաշտոն,

տիտղոս և նման կարգի բառերը, եթե համարում էլ ենք փոխառություն, ապա պետք է ընդունել, որ դրանք «հարկադիր» փոխառություններ են, իրանական համապատասխան կյանքն արտահայտելու միջոց: Ահա այդ բառերի բնավ ոչ ամբողջական ցանկը: Անդերծապետ, ասպետ, բամբիշն, բղեաշխ, գամապետ, դեհպետ, դեսպան, դերանդերծապետ, դրանիկ, խոռապետ, խոստակ, կռոգպետ, հազարապետ, հազարաուխտ, համարակար, համբարակապետ, մայպետ, մարդպետ, մարզպետ, մարզպան, մախարար, նուենդ, նուիրակ, նուիրակապետ, շահախոռապետ, շահանշահ, շահրմար, շարսաղար, պատգոսապան, պասանիկ, պարեկ, պարեկապան, պարետ, պէշասպիկ, սակստան անդերծապետ, տակառապետ, տաճարապետ...

Ինչ վերաբերում է կրոնական բառերին, ապա Գ.Ջահուկյանի դասակարգման մեջ ներառող բառերից հետևյալներն են միայն, որ օգտագործվում են նաև ընդհանուր կրոնապաշտամունքային նշանակությամբ. զոհ, պաշտ(ել), խոստովան, բուրուառ, աւրհն(ել), նզով, պա(ր)հ(ք), հմայ, կախարդ, մարգարէ, գրապանակ, հրաշ, հրեշ: Բազմաթիվ բառեր վերաբերում են զուտ իրանական իրականությանը, որը ցույց կտանք նվազ հաճախական բառերի քննության ժամանակ:

Հին հայկական ամսանուններից ահեկան, մարերի, մեհեկան, նավասարդ, հրոտից, մարգաց, տրէ համարվում են իրանական փոխառություն: Առաջին չորսի իրանական բնույթը կասկած չի հարուցում, իսկ մյուսները առարկելի են: Նախ, տրէ ամսանվան մասին: Է. Աղայանը ստուգաբանական համոզիչ փաստարկներով բխեցնում է Տիր աստծու անունից (*Աղայան, 1974, 149-150*): Այսինքն, այն պետք է համարել հայերեն բառ և ոչ թե իրանական փոխառություն: Մեկ այլ առիթով անդրադարձել ենք **հրոտից, մարգաց** ամսանուններին, փորձելով ցույց տալ դրանց հայկական բնույթը (*Բեշ, 1984, N2, 118-119*): **Հրոտից**-ի համար ենթադրվող հին. պրս. *fravardinam կամ hroft(frart) վկայություն չկա: Ա. Ֆրեյմանը վերականգնում է բոլորովին այլ ձև, որ ունի «ջերմություն պարգևող» իմաստը (*BDU, 1946*): Միջ. պրս. fravartikan ձևից անցնելու դեպքում էլ կպահպանվեր (ի)կան ածանցը, որ բնորոշ

է իրանական փոխառություններին: Եթե նկատի առնենք, որ ըստ անշարժ տոմարի հրոտից-ը սկսվում է հուլիսի 7-ից, որը ամենատաք ամիսներից է, ապա կարող ենք հրոտից-ի առաջին բաղադրիչի մեջ տեսնել մեր հուր բառը: (Գուցե իրանական ամսանվան իմաստի համաբանությամբ): Նշենք նաև, որ սեռական հոլովի -ից ձևությոն զուտ հայկական է, և նույնիսկ արմատի իրանական ծագման դեպքում էլ գործ ունենք հայակազմության հետ:

Մարգաց-ի համար ենթադրվում է հ.պրս. *margazana «թռչունների թխսի ժամանակը»: Ֆրեյմանը չի ընդունում այդ ձևը և վերականգնում է մեկ այլ ձև՝ համարելով ոչ թե իրանական, այլ բաբելական փոխառություն (Մ. տ.): Մյուս կողմից՝ մարգաց-ում պակասում է իրան. երկրորդ բաղադրիչը՝ zana «ծին», որ ընդհանուր բառիմաստի էական մասն է: Ուրեմն, կարելի է ենթադրել, որ իրանական մարգ «մարգագետին» կամ «թռչուն» փոխառված և յուրացված բառով հայերենը կերտել է մարգաց ամսանունը՝ նկատի առնելով խոտհնձի կամ թուխս նստելու ժամանակը: Դարծյալ նշենք, որ -աց ձևությոն վկայում է բառի հայակազմությունը: Ի դեպ, Է.Աղայանի՝ հայկական ամսանուններին վերաբերող հոդվածի որոշ դրույթներ նույնպես հաստատում են մարգաց-ի և հրոտից-ի հայկական լինելը (ԲԵՅ, 1984, 2):

Հետաքրքիր իրողություն է բացահայտում նաև իրանական գունանունների քննությունը: Հայերենի հիմնական գունանուններից սպիտակ, ճերմակ, սեաւ, կարմիր և կապոյտ իրանական են, որոնք բացառությամբ ճերմակ-ի արդեն V դարից կայուն ու հաճախական գործածություն ունեն: Արդյոք հայերենը չի՞ ունեցել հասկացությունների սեփական անվանումը: Անշուշտ ունեցել է: Գրաբար մատենագրության մեջ, օրինակ, կարմիր բառի երանգները արտահայտում են բոսոր, ծիրանի, շառ, հուր, բոց, խարտեաշ բառերով: Թեև սպիտակ հասկացությունն արտահայտող համարժեք բառ չունենք, բայց արծաթ, ալի(ք) և ընդհանրապես լույս հասկացությունն արտահայտող բառերը մասամբ պարունակում են այդ իմաստը: Կապոյտ-ի համանիշները քիչ են: Նշելի է թերևս

բիլ-ը: Սեաւ գունային երանգները արտահայտող բառերից են՝ մուօ, մուգ, մռայլ, թուխ, գորշ և այլն:

Ի՞նչ ճանապարհով իրանական գունանունները արմատավորվեցին հայերենում: Հիշենք, որ գրաբարում գործառնում են մասնաւոր իրանական գունանուններ, երաշխ, զարտակ, ճարտուկ, որոնք վերաբերում են միայն ձիու գույներին: Աստվածաշնչում աշխէտ-ի երեք վկայությունն էլ այդպես է, նույնը և զարտակ-ը: Ճարտուկ օգտագործել է միայն Բուզանդը՝ երկու անգամ նույն էջում. «Եւ էր ձին գունով ճարտուկ ճանճկէն» (43): Այլ լեզուներում նույնպես կան օրինակներ, երբ համանիշ գունանուններից մեկը կիրառվում է ձիու գույն նշելու համար միայն: Այդպես է հ. սլավ. брѣхъ «սպիտակ»-ը: Ուշագրավ է այն փաստը, որ արդի հայերենում հաճախական ճերմակ-ը գրաբարում եզակի վկայություն ունի: Օգտագործել է միայն Բուզանդը և վերաբերում է Սուշեղ գորավարի ձիուն. «Եւ էր երիւարն Սուշեղի ճերմակ ձի մի» (159): «Եւ ետ նկարել զտաշտի պատկեր զՍուշեղ ճերմակաւն» (Մ.տ.): Թեև սեաւ-ն արդեն V դարից հաճախական է, բայց համոզված կարելի է ասել, որ այն մախապես արտահայտել է միայն ձիու գույն: Ամենահին վկայությունը հենց այդպես է. «հեծաւ արի արքայն Արտաշէս ի սեաւն գեղեցիկ»: Աստվածաշնչի վեց վկայությունից երեքը դարձյալ այդպես է (Ձաք. 2. 2, 2. 6, Յայտ. 2. 5): Սեաւ-ը և ճերմակ-ը մախապես առարկայացված հատկանիշներ էին: Ամենայն հավանականությամբ կարմիր-ը սկզբնապես գործառնել է «որդան կարմիր» նշանակությամբ, մանավանդ որ բառի ստուգաբանությունն էլ հանգում է հնդ. իրան. krmī «որդ» բառին: Կապոյտ-ը ամենայն հավանականությամբ մախապես վերաբերել է թանկարժեք քարի կամ նրա մի տեսակին: Գրաբարում կապոյտ-ին համանիշ է կապուտակը, որ բացի «կապոյտ» իմաստից մասնակցում է «ակն, թանկարժեք քար»: Ամփոփենք: Իրանական կարմիր, սեաւ, սպիտակ, կապոյտ, ճերմակ բառերի գործառնական (մասամբ մասնատուգաբանական) քննությունը թույլ է տալիս ենթադրելու, որ դրանք սկզբնապես հայերենին են անցել որպես կոնկրետ առարկաներին վերաբերող գունանուններ: Վերացարկուն-ը նդհանրացումը կատարվել է հետագայում:

Այստեղ հարկ ենք համարում խոսել իրան. արմատ+գոյն կազմությունների մասին: Որոշ իրանագետներ (Բեյլի, Բենվենիստ, Փերիխանյան) հակված են կարմրագոյն, կապտագոյն, վարդագոյն, շիկագոյն... տիպի կազմությունները իրանական համարելու: Մեր կարծիքով, եթե այդ և նման կազմությունները վկայված էլ լինեն իրանական լեզուներում, ապա անվերապահորեն փոխառություն համարելը չի արդարանում, քանի որ դրանք կարող են լինել և հայակազմություններ (*հմմտ.* դեղնագոյն, թխագոյն, խարտեշագոյն և այլն):

Փոխառությունների գործառական առանձնահատկությունները

Փոխառյալ բառաշերտի քննության ժամանակ անհրաժեշտ է բացահայտել նաև փոխառությունների որակական բնութագիրը: Միայն քանակական կողմը դեռևս չի կարող լիարժեք ներկայացնել տվյալ բառախմբերի ունեցած դերը լեզվի բառապաշարի համակարգում: Որակական բնութագիր ասելով առաջին հերթին նկատի ունենք փոխառությունների հաճախականությունը, բառակազմական հնարավորությունները, որը վերջին հաշվով պայմանավորում է օտար միավորի «յուրացվածության» աստիճանը: Արդեն V դարում իրանական ծագման շատ բառեր գիտակցվում էին որպես ոչ օտար՝ դրսևորելով բառակազմական լայն հնարավորություններ, գործառական մեծ հաճախականություն՝ կազմելով ակտիվ բառապաշարի անկապտելի մասը: Դրանք փոխառությունների գերակշիռ քանակն են ներկայացնում, և այստեղ դրանց չենք անդրադառնում: Նշենք միայն, որ իրանական բառաշերտի որակական ակտիվությունը պայմանավորված է մի շարք հանգամանքներով, որոնցից են՝ ա) փոխառության և մեր մատենագրության մեջ գրավոր վկայության միջև առկա երկարատև ժամանակահատվածը, որի ընթացքում կայունացել է փոխառությունների գործածությունը, բ) իրանական ազդեցությունների անընդհատ բնույթը, գ) իրանական տարրի զգալի մասի ոչ

թե մատենագրական ճանապարհով, այլ կենդանի հաղորդակցմամբ, անմիջական շփումներով ներթափանցումը:

Անցնենք փոխառությունների որոշ առանձնահատկությունների վերհանմանը:

1. *Նվազ հաճախական բառեր*. իրանական փոխառություններից ավելի քան 100 բառեր եզակի վկայություններ ունեն կիրառվելով ընդամենը մեկ-երկու անգամ: Դրանց մեջ ընդգրկվում են՝

ա) *սովորական բառեր*. ախտար, ախտարմուլ, անգար, անդոհ, աշխարաւանդ, ապաւանդակ, ապիկամ, ապրդում, ասպաճարակական, աւսարդ, բագ «բաժին», բանուական, բաշխիշ, բարակ «որսի շուն», գավարս, գեր, «ողբ», դաշխուրան, դարգիճ, դժպարիշտ, զառնաւուխտ, զարտակ, զեան, լաշկար, խար, խարբուզ, խոնաստան, խորակ, կոտակ, համշիրակ, դամդայ(եալ), ճանբակ, ճապուկ, ճարտուկ, ճեմիշ, ճերմակ, ճիտակ, մաշկապարճեն, մենթան, մեհեանդ, նզար, նուարտան, շամդիտակ, շեպ, շկօթակ, շպետ, չաման, չուառ, պախաճճամ, պահակեր, պանդոյր, պառակ, պատշիր, պատման, պարեհնակ, պարմայ(ել), պարմանի, պէշասպիկ, պիհ, ռոտաստակ, սմնակ, վատախտարակ, վարմ, վսեստակ, փարգաստ, փուրսիշն, քաշկէն, քրտիկար, օշման, օշարակ:

բ) *գրադաշտական կրոնին վերաբերող բառեր*. բոգպայիտ, գոմէզ, դենպետ, համակդեն, մովպետան մովպետ, պարտքաշ, պետմոգ, ռատ, պարսկադեն, պահլաւիկ:

գ) *պետական-ռազմական կյանքին վերաբերող բառեր*. անդերծապետ, ասպահապետ, զինդիկապետ, խոռապետ, կռոգպետ, համբարապան, մայպետ, շառախոռապետ, շապստան տակառապետ, սակստան անդերծապետ, փուշտիպանսաղար, փուշտիպան:

Վերոհիշյալ բառերը, ինչպես նշեցինք, V դարում պատահական կիրառություն ունեն՝ վկայված այս կամ այն հեղինակի մոտ: Բուզանդի մոտ (աշխարաւանդ, բաշխիշ, կոտակ, դամդայ(եալ), ճեմիշ, մաշկապարճեն, շապստան տակա-

ռապետ), Եզնիկ (անգար, ապիկամ, հեշմակ, պառակ), Եղիշե (բոգայայիտ, գոմեզ, դենպետ, դերանդերծապետ, լաշկար, մովպետան մովպետ, շահախոռապետ, վատախտարակ, քաշկեն): Կան նաև ինքնուրույն և թարգմանական այլ գործերի մեջ: Նման բառերի մուտքը պայմանավորված է երկի թեմատիկայով, հեղինակի կամ թարգմանչի տվյալ հասկացության (բառի) իրազեկությամբ: Այդ բառերից մի քանիսը հանդիպում է և հետագա դարերի մատենագրության մեջ, դարձյալ ոչ հաճախական կիրառությամբ՝ V դարի մատենագրության ազդեցությամբ ու ընդօրինակմամբ:

Պետական-կրոնական կյանքը արտահայտող մի շարք բառեր ունեն մեկ այլ սահմանափակություն ևս: Անկախ հաճախականությունից, այդ կարգի մի քանի բառեր գործածվում են միայն իրանական իրականությունը նկարագրելու ժամանակ: Այլ հանգամանքներում դրանք չեն գործառուում: Պարզ է, որ սրանք պետք է գատել իսկական փոխառություններից (գամապետ, յաշտ, մոգ, յազ(են), շահան շահ, վզուրկ, կեշտ, մատեան «գունդ» և այլն):

2. Անկախաբար չկիրառվող բառեր

Ցանկում զետեղված են մի շարք բառեր, որոնք անկախաբար չեն կիրառվում, այլ միայն՝ բաղադրություններում կամ հարադրություններում. ասպ (ասպազեն, ասպաստան, ասպաճարակական, ասպանդակ, ասպետ), ատր (ատրագոյն, ատրուշան, ատրճանակ), բագ «աստված» (Բագարան, Բագաւան, Բագայառիճ, Բագարատ), բար «դուռ» (բարապան, բարապետ), դաստ (դաստապակ, դաստակ, դաստառակ), դուխտ (հանդես է գալիս մի քանի իգական անուններում որպես երկրորդ բաղադրիչ՝ Սահականդուխտ, Ջարմանդուխտ, Միհրանդուխտ, Որմզդուխտ: Նկատելի է, որ վաղ գրաբարում դուխտ-ը հանդես է գալիս այնպիսի բարդ բառերում, որոնց առաջին բաղադրիչը դարձյալ իրանական է: Հետագայում առկայանում են ոչ իրանական անձնանուն+դուխտ կազմությունները): Գոյր «ծածկոց» (շարագոյր, սնգոյր, վարագոյր...) ռոտ «գետ» (Աղանռոտ, Բաղանռոտ...), սարդ «տարի» (աւսարդ, նաւսարդ, երիտասարդ), վարտ/վերտ «ծածկոց» (սաղաւարտ,

վարտիք, վերմակ): Փակագծերում բերվածները իրանական ծագում ունեցող բառեր են. այժմ ներկայացնենք հայերեն կազմություններում հանդիպող իրանական արմատները:

Անդարծ «կտակ» (V դարից ունենք միայն անդարծական: Հետագա դարերից անկախաբար կիրառվում է): Աշխատ «հոգնություն» (աշխատել, անաշխատ, աշխատութիւն, աշխատ առնել), ապաշխար (ապաշխարել, ապաշխարան, անապաշխար, ապաշխարութիւն); ապարթան «խրոխտ» (ապարթանել, ապարթանական), աստառ (անաստառ). ուշ շրջանից կիրառվում է և անկախաբար: Արգ (անարգ, արգաւոր, զարգ յարգ...) բառակազմական ակտիվ արմատ է: Արժ (արժեն, արժեք, դանգարժեայ...), արշա «փայլ» (արշալոյս). այլ բաղադրություններում չի հանդիպում: Բաժ(ան) (բաժանեն, բաժին բաժանող... առկա են տասնյակ կազմություններ), գար «ցավ» (գլխագար, խելագար, միզագար, լեզուագար), գոնջ «հաշմություն» (գոնջութիւն), դահ/դահամունք «ձոն»: Այլ կազմություններում չի հանդիպում: Դժկերպ (դժկերպութիւն), դժպար (դժպարտութիւն), դրուժ (ուխտադրուժ, բարեդրուժ, տիրադրուժ, դրժողութիւն), երախտ (երախտիք, երախտագործ, երախտակորոյս, երախտաւոր, ապերախտ), զան (զանագան), (զ)բօս (զբօսանալ. զբօսանք... իրան. baus արմատը հանդես է գալիս գ- նախդրի հետ թե՞ uz-baus ձևից: Զօշ (զօշաքաղ, զօշաքաղութիւն): Հետագայում անկախաբար կիրառվում է: Հայերենում զօշ ունի «վատ, անհագ» իմաստը. ավեստ. zausša «հաճույք», պրթ. zoš «սեր»: Ժէտ (ախտաժէտ, դիւաժէտ...), խազ «քար» (գայլախազ, գայլախազեայ), խոստ (խոստանալ, խոստումն, խոստաբանութիւն, խոստ լինել), խոստովան (խոստովան առնել, խոստովան լինել, խոստովանիլ, խոստովանութիւն, չխոստովանութիւն), կարշն «ուժ» (կարշնեղ, կարշնեղութիւն), կերտ (փայտակերտ, ձեռակերտ, հնարակերտ): Շատ հաճախական արմատ է. անկախաբար, ինչպես նաև կերտել բայական ձևով V դարում վկայված չէ: Հեշմակ «դև» (առկա է միայն հեշմակապաշտ բառում, որ կարող է ամբողջական փոխառություն լինել): Հրատարակ «մունենտիկ» (հրատարակել), ճան «մոլ, սիրող» նաև «նետել»

(խրախճան, ճախաճանութիւն), մահակ «վարձ» (սնամահակ): Մերժ (մերժել, մերժումն, հանդիմանամերժ), մարգ «թռչուն» (լորամարգ, սիրամարգ), մազ (մազել, մազելի, գեղեցկանազ, մաժիշտ), մշկահ «արհամարհում» (մշկահել, մշկահեալ), շահատակ (շահատակել, շահատակութիւն): Պահանջել, պահանջող, պահանջումն, ճշդապահանջ, հարկապահանջ...), պաշտ (պաշտել, պաշտումն, բարեպաշտ, աստուածապաշտ..., պարիշտ տարբերակը դարձյալ անկախաբար չի հանդիպում. ամպարիշտ, բարեպաշտ, պարշտութիւն...), պատկան «նետ» (պատկանել) սպոյժ «դանդաղում» (անսպուժելի. ուշ շրջանից են՝ անսպոյժ, սպուժել, սպուժումն), վանկ (երկաւանգ, եռավանգ: Անկախաբար և բաղադրված այլ ձևեր հետիմնգերորդարյան են), վատգոհար «վատ» (վատգոհարութիւն), վարաւանդ «ծիու սպասք» (ոսկիվարաւանդ, վարաւանդասպաս), վիրայ (վիրայել «սափրել»), վտար (վտարել, վտարանդի, վտարանդութիւն...), տոյգ (տուգանել, տուգանք...), քեմուխտ «կաշի» (քեմխտապատ):

Չորս տասնյակից ավելի իրանական ծագում ունեցող բառեր (արմատներ, հիմքեր), ինչպես տեսանք, հայերենում անկախաբար չեն կիրառվում: Սրանց մի մասը հանդիպում է մեկ-երկու բառերի կազմում. անդարձ, ապարթան, արշա, դահ, խազ, հեշմակ, հրատարակ, մարգ, մշկահ, պատկան, սպոյժ, տոյգ. մյուսները կիրառւթյան (գուգորդելիւթյան) ավելի լայն սահմաններ ունեն: Կարելի է ենթադրել, որ այս բառերի գոնե մի մասը անկախաբար կիրառվել է, բայց չի ավանդվել կամ չի նկատվել: Ենթադրելի է գոյականների (անդարձ, մահակ, հեշմակ, դաստ, խազ...) անկախ կիրառւթյունը, մանավանդ որ դրանցով կազմված բաղադրութւոյուններում մյուս բաղադրիչը հայերեն կամ ոչ իրանական բառ է: Անկախաբար չկիրառվող բառերի (հիմքերի) մի զգալի մասը կազմում է բայեր. աշխատել, մշկահել, դամդայեալ, պաշտել և այլն: Ըստ երևութիւն գործ ունենք իրանական բայի «հայացնելու» փաստի հետ՝ համապատասխան վերջավորութւոյունների միջոցով, մանավանդ, երբ ծանոթ էր հիմքի (արմատի) իմաստը: Իսկ, որ շատ արմատների իմաստներ ծանոթ էին V դարի մատենա-

գիրներին կամ թարգմանիչներին, կասկած չի հարուցում: Մի շարք արձատներ էլ, որոնք հաճախական են և մատենագրական ճանապարհով չեն անցել, հասկանալի էին թերևս ժողովրդական լայն զանգվածների, հատկապես Իրանի տարածքի հարևանությամբ ապրող հատվածի համար: Այդ կարգի արձատներից նշենք. ասպ, ատր, դաստ, կերտ և այլն: Օրինակ, Խորենացին հաստատ գիտեր դաստ բառի իմաստը, իսկ իրանական կերտը գիտակցում էր հայերեն, որովհետև «Քաղցր է ինձ ասել և յաղագս գեղեցիկ դաստակերտին Երուանդակերտի» (167) նախադասությունը մեկ այլ տեղ մի քիչ վերափոխված է «Վասն Ձեռակերտի, որ կոչի Երուանդակերտ» (167, 96) և դաստ փոխարինված է հայերեն **ծեռք** բառով:

V դարից անկախաբար չկիրառված (կամ մեզ չհասած) մի շարք բառեր ու շրջանից անկախ կիրառությամբ վկայված են: Օրինակ, գոնջ վկայված է հետգրաբարյան փուլից, իսկ V դարից ունենք գոնջութին, ռահ-ը IX դարից է, իսկ ռահվիրայ՝ V դարից (նշենք, որ ռահվիրայ ամբողջական փոխառություն է, և վիրայ բաղադրիչը դարձյալ անկախաբար չի կիրառվում, այլ՝ վարսավիրայ, վիրայել բառերի կազմում): Արմ.-ը ներկայացնում է վիրալ. թերևս պետք է լինի վիրայել: **Քեմուխտ** «ողորկեալ կաշի» վկայված է X-XI դարերում, **քեմխտապատ**՝ V դարից:

Իրանական որոշ արձատների (հիմքերի) դրսևորումները հայերենում

Իրանական մի շարք արձատներ իրենց տարբերակներով առկայանում են փոխառյալ տարբեր միավորներում: Դրանց քննությունը ուշագրավ է երկու տեսանկյունից. բացահայտվում են իրանական լեզուներում գործող հնչյունական որոշ օրինաչափություններ, ի հայտ են գալիս արձատների բառակազմական հնարավորությունները:

ա) Ձայնավորային տարբերակներ

a>e: Իրան. kār «գործ, անել» արմատից՝ հայերենում՝ անկար, կարել, օգտակար, վնասակար, նաև՝ խոհակեր,

աղօթներ «աղոթք անող», կերտեմ, պատկեր, համոզակեր «համոզող»: var «ծածկել» արմատից՝ նուարտան, տաղա-
լար, վարագոյր, սաղավարտ, վարտիք, նաև՝ վերմակ,
վերտ: Կարելի է խոսել $u > a$ հնչյունափոխության մասին, նկատի
առնելով իրան. լեզուներում *murğ* և *հայ*. մարգ «թռչուն» նաև
վարգ-գուրգ զուգահեռները, որոնք ենթադրում են տարբեր
սկզբնաղբյուրներ:

բ) Բաղաձայնական տարբերակներ

Դիրքային հնչյունափոխություն – իրան. *b*-ն հայերենում
ներկայանում է հիմնականում *-բ-*, որոշ դեպքերում միջ-
ձայնավորային դիրքերում *b*-ն դառնում *w*, որ և առկայանում է
հայերենի իրանական փոխառություններում: Եթե փոքր-ինչ
առարկելի է արգաւանդ, բարձրաւանդ, սարաւանդ, գահաւանդ,
դարաւանդ բառերում *-ւանդ* (*wand* «կապ») բաղադրիչի
խսկությունը, ապա ներքոհիշյալ բառերում հաստատապես այդ
բաղադրիչն է. աշխարաւանդ, ապաւանդ(ակ), բահոււանդ
(կանացի զարդ՝ բառացի «բազկապ»), մեհեւանդ (զարդ),
պախճաւանդ «գոտի», պարաւանդ «ոտքի, ձեռքի կապ»,
դանդաւանդ «սանձ»:

Իրան. *d*-ն միջձայնավորային դիրքում ներկայանում է *r*:
Օրինակ՝ *dāfa*, *dāt* «օրենք»: Առկա է դատ, դատախազ,
դատաւոր, դատաստան բառերում: Նույն արմատն է նաև
ապիրատ-ում: *dēt* «նայել» – դէտ, դիտակ, դիտել, $d > r$
հնչյունափոխությամբ՝ պարէտ: Այդ հնչյունափոխությունն է
հրաւէր, նուէր, նուիրակ, պատուէր, պատուիրան բառե-
րում, որոնց արմատը իրան. *vēd* «գիտենալ»-ն է: Եթե պա-
րաւանդի առաջին բաղադրիչը իրան. *pada* «ոտք» բառն է,
ապա դարձյալ առկա է $d > r$ հնչյունափոխությունը:

Տարժամանակյա հնչյունափոխություն. $k > c$: Գործել է
իրանական լեզուներում և արտահայտվում է հայերենի իրա-
նական մի քանի փոխառություններում. Մոյկ-մուճակ (պատ-
մուճակ, պատմութան), իրան. *rok/roč* «Օր, լույս» – պատրոյգ-
ռոճիկ (պատրութակ): *vak/vač* «խոսք, խոսել» նուազ –
նուաճ, աւաչ «ծայն»: Բարգաւաճ, աբարհաւաճ բառերում
էլ ենթադրելի է այդ արմատը: Իրան. *tak* «վազել, հոսել»

արմատից՝ ասպատակ, շահատակ, վտակ: Ծ-ով տարբերակն է՝ տաճիկ: Իրան. *gar* «բռնել, վերցնել»: Առկա է պատգարակ, գրաստ, ենթադրելի է նաև գրաւ, գրաւական, հանգրուան բառերում: Ոմանք այդ արմատի -ժ-ով տարբերակն են տեսնում նաև յօժար, նժար, հրաժար(եմ) բառերում (*Բելլի, TPS, 1956*):

ռ-ր տարբերակներով կարելի է նշել *ram* «խումբ» արմատից՝ երամ, երամակ, նաև՝ ռամիկ, *rāh* «ճանապարհ»՝ ապարահ, ռահվիրայ, ռահ: *xvar* «ուտել» արմատից՝ խորտիկ, ապխոր, նաև ախոռ:

Բազմաթիվ օրինակներում կան խուլ-ձայնեղ և խուլ-շնչեղ խուլ բաղաձայնային տարբերակներով: Նշենք մի քանիսը. իրան. *tan* «մարմին» արմատն է ապարթանեմ «հանդգնել», մենթան «զգեստ»: Մեզ թվում է պատանի բառում էլ այդ արմատն է: *kar* «գործ» արմատը ներկայանում է մի շարք բառերում. վնասակար, օգտակար, խորանակար «վրանագործ»: Վնասակարը ամբողջական փոխառություն է, օգտակար-ը թերևս համաբանության արդյունք է: Եթե նախնական կապ կա *kār* «գործ» և *kar* «ուժ, զորություն» արմատների միջև, ապա անկար, տկար, ապիկար, կարաւոր կարի, կար(ածմեռն) բառերն էլ կարելի է զետեղել այդ շարքում: Քար տարբերակով ունենք պայքար, քարտար: Քրտիկար բառում առկա է նույն արմատի կ-ով և ք-ով տարբերակը, կ>զ հնչյունափոխությամբ՝ անզար «համարել, մի բանի տեղ դնել»: Քարուակ «ամոթալի գործ» և կարուակ «կոշկակար» բառերում էլ նույն արմատն է: *kan* «փորել, քանդել»- հայերենում առկայանում է ական «փոս» ապականեմ, նկան, նկանակ բառերում. կ-ք հնչյունափոխությամբ՝ քանդուկ, քանդել, քանդակ: *kausa* «կողմ» հայ. կոյս «կողմ» համապատասխանությունը ակնհայտ է: Նույն արմատն է կուսակալ-ի առաջին բաղադրիչը: Գ-ով առկա է պատգոսապան, անգոսնել «արհամարհել», ք-ով՝ քուստ «կողմ» (Քուստի Նեմոզ կապակցության մեջ): *Pada* «ոտք» միջ. իրան. *pad*, *pay* հայերենում պայիկ «հետիոտն», ավելի ուշ շրջանից՝ փայիկ «սուրհանդակ»: *Pār*-ով՝ նպար, պարեմ, նաև ամբար, համբարակապետ:

գ) Բայափիմքային տարբերակներ

Իրանական բայերի ներկայի և անցյալի հիմքերը կերտում են նոր բառեր, հանդես գալով որպես նաև հայակազմությունների բաղադրիչներ: Արդեն խոսել ենք kar արմատի մասին, որը միաժամանակ բայի ներկայի հիմքն է: Կերտ-ը անցյալի հիմքն է, որով մի շարք կազմություններ կան: band ներկայի հիմքն է, իսկ bast անցյալի հիմքն առկայանում է բաստարան «կապանատեղի, բանտ» թերևս նաև նուաստ, պատուաստ բառերում: kan-ի անցյալի kand-ը՝ վկանդել, քանդել, քանդուկ, քանդակ, կարկանդակ բառերում: Ամենայն հավանականությամբ var «ծածկել» արմատի vart/vert ձևերը անցյալի հիմքեր են, որ տեսնում ենք սաղաւարտ, վարտիք, անդրաւարտիք բառերում: Յազեն բառում yaz ներկայի հիմքն է, որի yašt անցյալի հիմքը առկայանում է յաշտ առնել «զոհել» կապակցության մեջ:

Իրանական արմատների տարբերակների քննությունը մասնակի հարցի ուսումնասիրություն լինելուց զատ, նպաստում է փոխառությունների մոտավոր ժամանակաշրջանի որոշմանը, հայերենի իրանական բառաշերտում սկզբնաղբյուրների բացահայտմանը և ստուգաբանական-բառաքննական նոր փաստարկների վերհանմանը:

Հայտնի է, որ իրանական լեզուներում շնչեղ խուլերը հաջորդել են խուլերին, այսինքն, շնչեղացումը ավելի նոր երևույթ է. ուրեմն, քանդեն, քանդակ ավելի նոր փոխառություններ են, քան նույն արմատի -կ-ով տարբերակները: Պայիկ-ը ակնհայտորեն հին է փայիկ-ից, որը հաստատվում է նաև հայերենում դրանց վկայության ժամանակագրությամբ. առաջինը վկայված է V դարից, երկրորդը՝ X-XI: Ռամիկ-ը ավելի նոր է, քան երամ, երամակ-ը: Որոշ դեպքերում կարելի է հաստատել փոխառության կոնկրետ ժամանակը: Հայտնի է, որ միջին պարսկերենում միջծայնավորային և հետծայնավորային դիրքերում ճ-z անցումը տեղի է ունեցել սասանյան շրջանում (III-VII դար), այդ նույն շրջանում է տեղի ունեցել և y-j անցումը. հետևաբար, կարելի է հավաստել, որ ռոճիկ-ը նախասասանյան

շրջանում կատարված փոխառություն է, իսկ նեմոռզ-ը՝ սասանյան: Ջալիտեան Խոսրով կապակցության մեջ ջալիտեան ավելի նոր է, քան յալիտեան-ը:

Այն, որ տարբերակային ձևերը նպաստում են և ստուգաբանական աշխատանքներին, կարելի է հաստատել հետևյալ օրինակներով. միջծայնավորային դիրքով d>r փոփոխության փաստը հավաստում է հայ. պարետ բառի իրանական բնույթը՝ upa-dēt, pa-dēt-ից, որտեղ երկրորդ բաղադրիչը դետ «դիտել»-ն է: k, č, z տարբերակները օգնում են փաստարկելու խոզ բառի իրանական լեզուներից փոխառելու հանգամանքը՝ նկատի առնելով խոճ և պրս. xuk ձևերը: Այսպիսի շատ օրինակներ կարելի է բերել:

II. ԱՍՈՐԱԿԱՆ ՓՈԽԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հայերենի և սեմական լեզուների աղերսը սկիզբ է առնում վաղնջական ժամանակներից: Այդ կապերը դրսևորվում են ա) որպես հնդեվրոպական և սեմական հեռավոր ցեղակցության արդյունք, բ) որպես սեմականից կատարված հնդեվրոպական հնագույն փոխառություններ, գ) որպես զուգադիպություններ, որոնք արդյունք են անմիջական կամ միջնորդված փոխառության (տե՛ս *Ջահուկյան, 1987, 447-450*): Սեմական ազդեցությունների հարցը քննված է մի շարք հետազոտողների կողմից, որն ամբողջացվել և գիտական ընդհանրացման է ենթարկվել Գ.Ջահուկյանի աշխատության մեջ, որտեղ հեղինակը, ելնելով ժամանակակից գիտության նվաճումներից, սեմական լեզուներից անցած բառապաշարը ավելի հստակորեն է տարբերակում: Օրինակ, եթե նախորդ ուսումնասիրություններում ակկադական շատ բառեր համարվում էին ասորական, ապա այստեղ ըստ հնարավորին տարբերակված են: Ահա ակկադերեն բառերի՝ Գ.Ջահուկյանի ճշգրտած ցանկը. ակուր «բրիչ», անաթ, բուռ «կիր», գազաթն, ծիր, կապար, կիր, կղզի, կմախք, կնիք, կշիռ, կոզեռն «երեխա», կոթող, հալաւ «զգեստ», մզել «քամել», շար «3600 տարի», ոլոռն, պաղաղ «խառն, ձուլլ», պատ «չորս կողմ», սանդ, սիք, ցից, փածան(ել) «հագնվել»,

փոխ, քաքար «խնորեղեն», քթթ «զգեստ», քշտ(ել) «կտրել»:

Ակուր, հալաւ, քթթ V դարում վկայված չեն: Պաղաղ և սանդ անկախաբար չեն կիրառվում (միապաղաղ, սանդի տոռն), կմախ «մեռելի ոսկորները» իմաստով բառը V դարում վկայված չէ, իսկ կմախ-ի «մեռելի վրա ողբ», կա եզակի վկայությամբ: Կոզեռ «երեխա» դարձյալ V դարում չկա, իսկ կոզոն «ուղտի ծագ» կա: (Աճառյանը կոզեռ, կոզոն և կմախ, կմախի նշում է որպես առանձին փոխառյալ միավորներ):

Անդրադառնանք բուն ասորական փոխառություններին: Հ.Աճառյանը ասորական փոխառությունները բաժանում է չորս շրջանի (ՀԼՊ, I, 334): Գ.Ջահուկյանը հայ-ասորական հարաբերությունները ներկայացնում է երկու հիմնական փուլերով՝ 1) հայ-ասորական էթնիկական փոխազդեցության փուլ. մ.թ.ա. II դ. – մ.թ. II դ. այս փուլում շփումը տեղի է ունեցել ինչպես աշխարհագրական հարևանության, այնպես էլ քաղաքական սերտ հարաբերությունների պայմաններում, 2) ասորական կրոնաքարոզչական և դպրոցական ազդեցության շրջան՝ մ.թ. III-IV դ. (Ջահուկյան, 1987, 476):

Հայ մատենագրության կազմավորման շրջանում ասորական գրականության թարգմանության միջոցով մի շարք փոխառություններ մատենագրական ճանապարհով աստիճանաբար արմատավորվում են հայերենում: Ասորական ազդեցությունները, ինչ խոսք, շարունակվել են նաև հետագա դարերում՝ գործառնելով առանձին բարբառներում կամ թափանցելով ուշ շրջանի մատենագրություն: Քիչ հետո կներկայացնենք ասորական փոխառությունների ցանկը, որի հիմքում ընկած է Գ.Ջահուկյանի կազմած՝ վաղ արամեական և բուն ասորական բառերի ցանկը, հաշվի է առնված նաև Հ.Աճառյանի ցանկը՝ ժամանակագրային և ստուգաբանական ճշգրտումներով: Ցանկը կազմելիս առաջնորդվել ենք փոխառությունների տարբերակման մեր ընդունած սկզբունքներով:

Աճառյանի ցանկում 40 բառ VII-XIII դարերի վկայություններ են. ագուգայ «փողրակ», ամիրայ, ապուղայ «տիկ», բուտ «տեսուչ», գլոս «կապիկ», գուռն «ավազան», գուրպայ, դերի «վանք», ծոթոր (բույս), կաղա «դուլլ», կթխայ «բաժակ»,

կուղբ, հազոր «պտուղ», մախաթ, մանգանայ, մանիշակ, մաշար «սղոց», մաշարայ «թոքախտ», մասուս «խթան», մար «տեր», մարս(ել), մնինայ «մլակ», շիդար «խենթ», շուշմայ «սուսամ», շուշիայ «շոր», շուփայ «դեղ», ունկի (չափ), սահիր «լուսին», սարակ «բանվոր», սափրայ (քար), սիդայ «բուրվառ», սնիկ «կարիք», սուսր «կարմիր ներկ», սոփեր «գիրք», քարտեզ «դրամ», քօշ(ել) «վրա քշել»: 5 բառ բառարանային վկայություններ են, որոնք ամենայն հավանականությամբ V դարում չեն գործածվել. թեկուղայ «համբերություն», շարապայ «որթապատկեր», շեղբ, շեք «քայլ», քեղեղին «պսակ»: Վերոհիշյալները հիմնականում առօրյա, ժողովրդախոսակցական շերտին պատկանող բառեր են, որոնք բանավոր հաղորդակցման միջոցով թափանցել են հայերենի մեջ: Ըստ էության, դրանք Աճառյանի նշած չորրորդ շրջանի ազդեցություններն են, որոնց մի մասը կենդանի է բարբառներում:

Մենք տարբեր պատճառներով Աճառյանի ցանկից մի շարք բառեր հանել ենք: Օրինակ, բոհ և թոհ և բոհ այդտեղ համարվում են առանձին փոխառյալ միավորներ, այնինչ բոհ-ը հայերենում միշտ հանդիպում է հենց թոհ և բոհ կապակցության մեջ: Առանձին փոխառություններ են համարվում քաղղեայ և քաղեայ բառերը, այնինչ դրանք պետք է համարել մեկ բառ: Դարգիժ-ը ակնհայտ իրանական փոխառություն է, իրանական միջնորդություն են համարում և հրեայ ձևը՝ իրան. hudea-ից: Գ.Ջահուկյանը ավելի հավանական է համարում գուրկ-ի իրանական ծագումը (*Ջահուկյան, 1987, 465*), թերևս իրանական են արգբեդ տիտղոսը և քրսամն (բույս) բառը. պրս. karsana: Կոմս-ը հունարենից կամ լատիներենից է անցել: Յետևյալ բառերի ասորական աղբյուրը ստույգ չէ. Առնակ, բուրգն, շերաս, չկապ(ել), սուին, քանուն: Ինչպես նկատում է Գ.Ջահուկյանը «առանձին դեպքերում դժվար է որոշել հայերեն բառերի ասորական թե՛ հունական աղբյուր ունենալը, մասնավորապես ասորական այն բառերի դեպքում որոնք իրենց հերթին փոխառված են հունարենից» (*1987, 465*): Այդ կարգի բառերից նա առանձնացնում է կապելայ, կոմս, մամոնայ, մափորտն, սիւնհոդոս, սպեղանի, մարանթայ, սուին:

Ստույգ չէ և առնակ բառի վկայության ժամանակն ու բնույթը: Արմատական բառարանում այն հղված է Ալիշանից (1895, 227). «Կայր և հոգեհան ոգի մի առնակ կոչուած. այս անուն լսուի Պրոխորոն գրոց մեջ, որ է առասպելախառն պատմութիւն Յովի. Աւետարանչի»:

Մեզ չհաջողվեց պարզել, այսպես կոչված, Պրոխորոն գրքի բնույթը և բառը չգտանք համապատասխան համատեքստում: Ալիշանը նկատի ունի հեթանոսական շրջանի հավատալիքները և առնակ-ը կապում է առնել-ի հետ, որը համանիշ է կրող կամ գրող և հրեշտակ չար արտահայտություններին (Ճ.տ.): Ալիշանի ենթադրությունը ավելի համոզիչ է թվում, քան Աճառյանինը: Վերջինս աղերսում է ասորական *harnāga* «շնագայլ»-ի հետ «որը պիտի տար հառնագ, հայ բերանների մեջ հայածն կերպարանք է ստացել» (տե՛ս Արմ., Առնակ բառի տակ): Ըստ երևույթին, աղան «իշխան» բառն էլ պետք է հանել փոխառությունների ցանկից: Այս արմատը Աճառյանի հավաստմամբ հանդիպում է միայն աղանազգի բարդ բառի կազմում, որը մեկ անգամ գործածել է Բուզանդը: Աճառյանը թարգմանում է «ազնուազգի, ազատազգի»՝ առաջին բաղադրիչը աղերսելով ասոր. *‘alāna* «իշխան, գլխավոր» բառի հետ: Ոմանք բառը ուղղում են՝ աղեղնածիգ, որը համոզիչ է: Քորեշ-ը վկայված է Աբրահամ Խոստովանողի «Վկայք Արեւելից»-ում (74): Այն Կիւրոս անվան ասորական ձևն է և փոխառություն համարելու հարկ չկա: (ԵՅԲ-ն որպես անձնանուն բառը չի զետեղել): Մի շարք միավորներ բնագրում դիտվում են որպես օտար բառեր. այդպես են աբ և իլուլ անսանունները (ուշ շրջանից նաև թշրին) մարանթանայ նզովքի ընդունված բանաձև է, որ մեկ անգամ է միայն հանդիպում. «Եթե ոք ոչ սիրէ զտեր Յիսուս, եղիցի նզովեալ. մարանթանայ» (Ս.Կորնթ. Ժ2, 22), Իբրամենը Սնացորդաց գիրքն է, Պրակսաւաթայքը՝ «Չորս անվավերական գիրք գործք առաքելոց»-ը: Այս կարգի բառերը գործածելիս հայ թարգմանիչը հաճախ տալիս է դրանց բացատրությունը. «Եւ հրամայեաց դատաւորն Եւետոս դահճապետի տանել զերկոսեան և արգելուլ ի բանտի, ուր արգելեալ էին ընկերքն իւրեանց ի փուտկայի միոց, որ կոչի *բեթթիկայ*» Արմ. (ընդգծումները մերն

են – Լ.Յ.): «Եւ դարձեալ ի թասելն ոգւոցն, որ ասի յոյն անդր որթօփնիա և դասպինիա (Եւս. Պատմ. 446): (Թարգմանիչը կարծում է որպէս հունարեն բառ): «Նա և այսօր իսկ՝ եթե նաքաղենք քեզ, այսինքն, եթե անարգենք ես զքեզ» (Արմ.): «Եւ յասորի լեզու քանզի չմարթի երկին ասել, ասէ ի սկզբանէ արար Աստուած զյաթն երկինս և զյաթն երկիր... յաթն ասելով, որ է տարր» (Եզն.260-261): «Եւ իբրեւ առաքինանայ այսուիկ եղեւ նա ափիղատոս, այսինքն հոգաբարձու Պաղեստինացւոց» (Եւս. Պատմ. 40): «Աւծից աչք յորժամ ցաւիցեն, երթայ ուտէ շունրայ, այսինքն սամիթ վայրի և ողջանան» (Վեց. 297): Այս կարգի բառերը որպէս կանոն վկայված են մեկ անգամ: Թերևս հարկ չկա փոխառութիւնների ցանկում մտցնել նաժրացի «քրիստոնյա» բառը: Այն վկայված է եզակի կիրառությամբ և ցի-ն էլ հայերեն մասնիկ է, ինչպէս նազովրեցի բառի մեջ:

Այս նկատառումները հաշվի առնելով՝ ներկայացնենք V դարից վկայված ասորական բառերի ցանկը.

խորգ «քուրծ»	հռիտորայ
ծարիր	ծանձախարիթ (գույն)
ծնծղայ	ծէթ
ծոմ	ծիւթ
ծրար	ղեկ
կաթսայ	մագաղաթ
կասկարայ (գործիք)	մակաղ(իմ)
կարկուրայ «նավակ»	մանանայ
կացին	մանգաղ
կաքաւ	մաշկ
կեղև	մաշկն «վրան»
կողով	մաքս
կուպր	մդրիշայ «երգ»
հաղբ «որոգայթ»	մղավաշէ «կենդանակերպ»
հաշիւ	մուղ «էշ»
հեզ «վանկ»	մտրակ
հեզենայ «այբուբեն»	յամոյր «վայրի այծ»
հեթանոս	յապանաս «արիամարիանք»

նաշիի «ալյուր»
 շաբաթ
 շալակ
 շամփուր
 շաւիղ
 շափիղայ
 շերաս
 շեփոր
 շղթայ
 շուկայ
 շուշան
 շպար
 ուրբաթ
 պապկայ «թութակ»
 պողոտայ
 ռաբունայ «գրավական»
 սաբա «ծեր»
 սակամունիա (բույս)
 սակուր «կացին»
 սատանայ
 սափր(եմ)
 սեռն «առանցք»
 սիք
 սխուր «վարձ»
 սկահ «բաժակ»
 սուսեր

սրովբէ
 տառապ(իմ)
 տարմալ «տոպրակ»
 տաքսատ «վաշտ»
 տերև
 տղայ
 տոփայ «լաստ»
 ցամաք
 ցեց
 փիգանայ (բույս)
 փիլիսոփայ
 փութկայ «պանդոկ»
 փրկ(ել)
 քահանայ
 քաղդեայ «հմայող»
 քանքար
 քարոզ
 քաքար «խմորեղեն»
 քերովբէ
 քնար
 քորայ «երկիր»
 քուեայ «հմայական քար»
 քուսիթայ «գլխարկ»
 քուրայ
 քուրմ
 քօշ «արու այծ»

Այս բառացանկի մեջ ընդգրկվող միավորները (130 բառ) գործառական նույն արժեքը չունեն։ Մի շարք բառեր անկախաբար չեն կիրառվում. այդպես են օրինակ ցանկում անորոշ դերբայի ձևով բերվածները, սխուր «վարձ» հանդիպում է միայն անսխուրան և շանսխուր «շնության վարձ» ձևերով։ Մի շարք բառեր եզակի վկայություն ունեն։ Այդպես են վերևում համապատասխան նախադասություններով առանձնացված օրինակները նաև. անկան, բուծին, դամար(իմ), ծանծա-

խարիթ, մղիշայ, մղավաշէ, սաբա, տաքսատ, տոփայ, փութկայ, քորայ բառերը:

Ասորերենի միջոցով հայերեն են մտել նաև բառեր պարսկերենից ու հունարենից: Վերջինից են թերևս ագուգայք, աստրատիգայ, աքսոր, բեթթիկա դասպինիա, դիատեսարիոն, թատր, թարշիշ, լումայ, կաթսայ, հռիտորայ, հեթանոս, մամոնայ, մափորտոն, նուկի, պողոտայ, սակամունիա, սինհոդոս, սկահ, սուսեր, սպեղանի, տաքսատ, փեզանայ, փիլիսոփայ, քանուն, քորայ:

V դարում գործառու են նաև այս բառերից մի մասի անմիջապես հունարենից անցած ձևերը. եքսոր, թեստր, կապելիոն, փիլիսոփոս, հռետոր: Այս զուգահեռներից նկատելիորեն ավելի հաճախական են ասորերենի միջոցով անցած ձևերը: Թեև ասորերենից ու հունարենից հայերենին անցած ու ակտիվ կիրառություն ձեռք բերած բառաքանակը իրանական փոխառությունների համեմատությամբ չնչին տոկոս է կազմում, սակայն հունարենի համեմատ էլ ասորական բառաշերտը ավելի յուրացված է, որի պատճառը երկու ժողովուրդների (հայերի և ասորիների) անմիջական շփումն է, նաև այդ առնչությունների խոր հնությունը, ինչպես նաև հայ մատենագրության կազմավորման շրջանում ասորական գրականության ազդեցությունը: Նկատելի է, որ հայերենի բառապաշարում ավելի կենսունակ են ասորական այն փոխառությունները, որ Գ.Ջահուկյանը տարբերակում է որպես վաղ արամեական փոխառություններ:

Ասորական (սեմական) ազդեցությունները երևան են գալիս ոչ միայն փոխառյալ բառերով, այլև քերականական ձևերով ու կառույցներով: Դա բնական է: V դարում ասորերենից թարգմանվել է հսկայական գրականություն: Ինչքան էլ թարգմանիչները ձգտեին հայաշունչ դարձնել թարգմանությունը, այդուհանդերձ, զերծ չէին կարող մնալ ասորաբանություններից: Ինչպես նշում է Աճառյանը. «Հայերենը անշուշտ ստացել է ասորերենից նաև ոճական ձևեր, բայց այս մասին մի առանձին ուսումնասիրություն չունինք տակավին» (ՀԼՊ, I, 345): Իհարկե, հատուկենտ ասորաբանությունների վերաբերյալ դիտարկում-

ներ կարելի է գտնել հայ բանասիրության մեջ, բայց հարցի համակարգային ուսումնասիրություն, իրոք, գոյություն չունի: Այդ բացը մասամբ լրացնում է ասորագետ Լ.Տեր-Պետրոսյանի աշխատությունը (Тер-Петросян Л., 1986), որի մի գլուխ (*էջ* 288-380) վերաբերում է ասորական ազդեցությունների ու ասորաբանությունների, հատկապես շարահյուսական առանձնահատկությունների ու որոշ կառույցների քննությանը: Գիտնականը ասորերենից հայերեն թարգմանված գրականությունից հանել, դասդասել և մանրակրկիտ վերլուծության է ենթարկել բազմաթիվ ու բազմաբնույթ օրինակներ, բնագրային համեմատությամբ ցույց տվել, որ դրանք ասորական ազդեցություններ են: Աշխատանքի հավելվածում (391-429) ասորաբանությունների համաբարբառն է, որտեղ գետեղված են դասական շրջանի՝ ասորերենից թարգմանված գրականության մեջ հեղինակի կողմից նկատված բոլոր ասորաբանությունները՝ համապատասխան սկզբնաղբյուրի ու ասորաբանության բնույթի մատնանշումով:

Քանի որ քերականական ձևերի ու շարահյուսական կառույցների հարցը մեր նպատակադրումից դուրս է, նշենք միայն բառապաշարի հետ առնչվող որոշ օրինակներ, որոնք կարելի է դիտել ասորական ազդեցություններ: Ներքոհիշյալ բառերը, որ հանդիպում են Աբրահամ Խոստովանողի «Վկայք արեւելից»-ում, ըստ երևույթին պատճենումներ են ասորերենից. դառնաշունչ, ընդակեր, լուսնաթիւ, հեռաստանադէտ, հոգեհեղձոյց, մարմնահեղձոյց, մշտակոխ, յառաջադետ: «Այս բառաբարդությունների պատկանելությունը Ա.Խոստովանողին հաստատվում է երկու փաստով՝ առաջին, որ նրանք վկայված չեն «Վկայք արեւելից» ժողովածուի թարգմանությունից առաջ (462-463), երկրորդ, որ հայտնի է նրանց սկզբնաղբյուրը՝ ժողովածուի ասորերեն բնագիրը» (Տեր-Պետրոսյան, 1976, 87):

Ասորաբանություններ են դիտվում նաև մի շարք նոր բառիմաստներ, որոնք առկա են ասորերենից թարգմանված գրականության մեջ: Օրինակները, որ բոլորն էլ V դարից են, բերում ենք Լ.Տեր-Պետրոսյանի դոկտորական դիսերտացիայից՝ նշելով էջերը:

Բաժանել «երկմտել» – ասոր. >թլց բայը, որպես կանոն թարգմանվում է «երկմտել», բայց կան դեպքեր, երբ հայ թարգմանիչը դնում է բաժանել, որը ասորական համապատասխան բայի արմատական իմաստն է:

«Շրթունք քո զգուշացին ի բաժանելոյ», «բարժանեցաւ բերան յաղաթից անտի իւրոց» (357): Լ.Տեր-Պետրոսյանը նկատում է, որ V դարի մատենագրական այլ գործերում բաժանել «երկմտել» իմաստը վկայված չէ: Միայն երկու անգամ Եղիշեի մոտ հանդիպում ենք երկմտեալ բաժանեսցին կապակցությունը, որը կարելի է համարել ասորերենից թարգմանված հուշարձանների ազդեցություն:

Մեկնեմ «թարգմանեմ» – «Մեկնեալ են յասորւոց լեզուէ ի յոյն անդր», «զպատասխանի զոր արար նա... հռոմարէն և մեկնեցաւ յունարէն»: Ասորական քճգ բայն է, որ «մեկնել»-ուց զատ ունի և «թարգմանել» իմաստը (358):

Հանել «թարգմանել» նշանակությունը դարձյալ ասորաբանություն է. «էր պատճեն հռոմէարէն, այլ մեք ըստ կարի մերում ի լեզու յունարէն հանաք զնա»:

Լուծանեմ «կանգ առնել», «օթևանել»: Ասորական թարգմանություններից Լ.Տեր-Պետրոսյանը նշում է 14 օրինակ՝ այդ իմաստով. *հմմտ.* «Ստաք ի տուն Փիլիպպոսի աւետեարանչի... և լուծաք առ նմա...» (359): Ասորերեն չի բայը ունի «ազատել, արձակել» և «կանգ առնել, օթևանել» իմաստը, որ արտահայտվում է հայերեն թարգմանություններում:

Սպիտակացուցանեմ «լվանամ» – «Սպիտակացուսցէ զպատմութեան իւր ի զինի և յարիւն խաղողոյ զհանդերձ իւր»: Ասոր. xwr բայը՝ xwr՝ «սպիտակ» ածականից ունի «սպիտակացնել» և «լվանալ» իմաստները:

Ասորական ազդեցություն է համարվում՝ տուչութիւն՝ փխն. աւանդութիւն, զուարթութիւն «հրեշտակ», աշակերտութիւն «ուսմունք», ճաշակեմ «իմանալ, ճաշակել», կարդամ «կարդալ»: Ահա որոշ օրինակներ. «Եւ խնդրէր ի նոցանէն, զինի հեռացին նոքա ի տուչութենէն անտի առաքելոցն» (362): Միայն Եւսեբիոսի «Եկեղեցական պատմութեան» մեջ այդ իմաստով հանդիպում է 38 անգամ (*Ն.տ.*): «Եւ զի առ նա յանձն

իւր զնմանութիւն զուարթնոց երկնից, սոքա իսկ զուարթունքս հաց և ջուր բերին նմա» (363): Նկատելով, որ զուարթուն «հրեշտակ» բառը երեք անգամ էլ հանդիպում է Աստվածաշնչում (Ղան. 4, 10, 14), Լ.Տեր-Պետրոսյանը գտնում է, որ դա չի հակասում այն պնդմանը, թե զուարթուն «հրեշտակ» իմաստը գալիս է ասորերենից, քանի որ Ղանիելի գիրքը (նշված երեք գլուխները) գրված է արամեերեն (363-364):

Ինքնուրույն կամ թարգմանական՝ ոչ ասորական գրականության մեջ հանդիպող այս և նման կարգի ասորաբանությունները պետք է բացատրել կամ հեղինակի ասորերենի իմացությանը, կամ էլ թարգմանված ու իրեն ծանոթ ասորական գրականության ազդեցությամբ:

III. ՀՈՒՆԱԿԱՆ ՓՈԽԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հայերենի հունական բառաշերտը համեմատաբար դյուրին է տարբերակվում: Նախ՝ դրանք ավանդված են հունական գրական աղբյուրներում ու բառարաններում, մի զգալի մասը նաև այլ օտար լեզուներում, որպես փոխառություններ, երկրորդ՝ հայերենում հունարեն բառերի մի մասը դրսևորվում է այդ լեզվին բնորոշ վերջավորություններով, երրորդ՝ զգալի թվով բառեր վկայված են թարգմանական գրականության մեջ, որի սկզբնաղբյուրը հունարենն է:

Հունարեն փոխառությունների ուսումնասիրությունը ձեռնարկել են եվրոպացի հայագետները՝ անցյալ դարից, իսկ արդյունքները ամփոփել ու ամբողջացրել է Հ.Աճառյանը, որի ներկայացրած հունական փոխառությունների ցանկում ընդգրկվում է 916 բառ (ՀԼՊ, II, 5-54): Նախագրային շրջանի հունական փոխառությունների հարցը քննել է Գ.Զահուկյանը (Զահուկյան, 1987, 615-630): Նա այդ շրջանի համար առանձնացնում է 107 բառ: Երկու ցանկերի քանակական էական տարբերությունը, նախ և առաջ, ընդգրկվող նյութի ժամանակագրային սահմանների մեջ է: (Աճառյանի ցանկում զետեղված է ոչ միայն գրաբար մատենագրության, այլև միջինհայերենյան շրջանի, մասամբ նաև արդի հայերենի ու բարբառների նյութը:

Երկու ցանկերի համադրումով, նաև մատենագրության մեջ հանդիպող նոր տվյալների հաշվառումով կներկայացնենք V դարում վկայված հունական փոխառությունների ցանկը: Կատարել ենք Աճառյանի ցանկի ժամանակագրային ճշգրտում և այնտեղից դուրս ենք թողել հետիմնագրորդարյան վկայությունները, բացի դրանից, ցանկում չենք զետեղել նաև՝

ա) բառեր, որոնք տարբեր կարգի անվանումներ են. ակունիտ (սրբի անուն), Ամաթ-եղջիւր «Դեմետր դիցուհի» (երկրորդ բաղադրիչը հայերեն է), կիւնիկոս «շնական» (մականուն է), Կորէս «դիցուհի», Կռոնոս, Յերմէս (մոլորակի անվանումներ են), ղևտիկոն «ղևտական», պիգասոս «ծի» պերիպատիկեան, փիւսիկեան, եկղեսիաստէս «Սողոմոն իմաստունի գիրքը, «Ժողովող», պերիարմենիաս (գրքի անուն), պենտակոստե (տոն), պռոսպոնմէ (կրոնական բանաձև): Յետևյալ միավորները տառերի անվանումներ են ալփ, այբ, ալփաբետ, յովտ: Բերենք որոշ օրինակներ: «Մարկիոն գրէ ի մատեանս, որ անուանեալ կարդան պերոն և ենգելիոն, այսինքն թարգմանեալ կոչի ի մեր լեզու այսր առաջ քան զաւետարան» (*Եփր. մատ. Բ. 261*): «Վասն որոյ մինչեւ ցայսօր ժամանակի անուանեն յոյնք զկղիմայն զայն Պռոտին Արմենիան, որ թարգմանի Առաջին Դայք» (*Խոր. 46*): «Հիւկն դարծեալ եգիպտացերեն և հակն թանձրացեալ աղփիւն հանդերձ՝ գերիս իսկ յայտնի նշանակէ» (*Եւս քր: Ա*):

բ) բառեր, որոնք համատեքստում դիտվում են որպես օտար և տրվում է դրանց մեկնություն-թարգմանությունը. ակոնիտոն (բույս), աթլեստայք (ըմբիշներ), անալիւ «պարեգոտ», բաղանտ «պարկ», բոմբիլոս «շերամ», զոնգ «ուտելիք», դրակոնտես (կենդանի), ենքեղէս (ծուկ), էնկոմիա (ներբողական), էքետոգնոմոնաս, իդովտիոն, իմարմինէ «բախտ», կեմետրիայ «գերեզման, կիկնոս «կարապ», կորադիոն (քար), դորտոս «մուրացիկ», մակեդոն «մսավաճառանոց», միռոնէս (ծուկ), միւրաբաղանոս (ծառ), միւրիկէ (ծառ), նոոմոն (ամիսը), ովդակոն, որթոփմիա «շնչարգելություն», պանդեմի «տոն», պանեմոս (ամիսը), պերոեւանգելիոն (նախաւետարան), պիտոս (ծառ), պռոտոն/պռոտին «առաջին»,

պրիոնէ (ծուկ), սկիւա «շուն», սկինոս (ծառ), տրիգոն (ծուկ), տուրի (ամիսը), փսենաս «բեղմնափոշի», քսիփէ (ծուկ):

Էքետոգնոմոնաս, ովդակոն, իդովտիոն բառերը չկան ՆՅԲ-ում և Արմ-ում: «Էքետոգնոմոնաս, որպէս թե կամս ինչ և յօժարութիւն յանձն ունիցի» (Եւս. Զր. 55-56): «Եւ առ նովաս երեւեալ դարձեալ ի կարմիր ծովէ այլում ունենն՝ նման ձկան և մարդկան, որում անուն կոչի ովդակոն (Մ.տ.): «Ի նորա աւուրս երևեալ գազան ինչ՝ զոր կոչեն իդովտիոն ի կարմիր ծովէ, որոյ մարդկան և ձկան կերպարանք էին» (Մ.տ.): Վերը բերված բոլոր բառերը նման համատեքստում են հանդես գալիս: Ահա մի քանի այլ օրինակներ. «Զծնունդսն ասեն և զիմարմինէնն, զոր հայերէն ճակատագիր կամ բախտ ասեն» (Ոսկ. ԱՏիմ. 10): (Ընդգծումները մերն են – Լ.Յ.): «Որ ինչ վաճառիցէ ի մակեդոնի, որ է մսավաճառանոցի կերիջիք» (Եզն. 284): «Չտեսանիցե՞ս զմուրողսն, զոր բազումք դորտոսս կոչեն» (Ոսկ. Պող. Ա. 19): «Քան զեղջերու ինչ պիղծ և վասն այնորիկ կոչեն եղովին, զի օձ ուտէ» (Ոսկ. Պող. Ա. 306):

գ) բառեր, որոնք ուղղագրական տարբերակներ են.

Աճառյանի ցանկում ներքոհիշյալ ձևերը բերված են տարբեր թվահամարների տակ, որպէս առանձին փոխառյալ միավորներ. մենք փոխառություն ենք դիտում միայն ձևերից մեկը: Կանկեղոն/կինկղիս, պրաս/պրասիս, սեբաստե/սեբաստոս, սկետա/սկիւտաղ, ստրատ/ստրատելատ, ստրովենի/ստրոբոլոն, վասիլիսկոյ/բասիլիսկոս:

դ) բառեր, որոնց հունական ծագումը ստույգ չէ.

Անկիւն «աթռի թև» երկու անգամ գործածված է Բ Մնացորդացում. «Եւ վեց աստիճան էին աթռոյն կապեալք ոսկւով և անկիւնք աստի և անտի յաթռն նստելոյ և երկու առեւծք կային առ ոտս անկեանցն» (Բ. 18): Աճառյանը բառը համարում է հուն. «թև, արմունկ», բայց թերևս ճիշտ են ՆՅԲ-ի հեղինակները, որոնք այն դիտում են որպէս անկիւն «անկյուն, ծայր» բառի մեկ առումը: Արգ արմատը, որ հանդիպում է արգոյ օր և արգոյ «գործունյա» ձևերում, Արմ-ում աղերսվում է հուն. εργον «գործ»-ի հետ, բայց թերևս այն իրանականից արգ «հարգ, արժեք» արմատն է, որը հայերենում իմաստային լայն զարգացում

է ապրել: Առարկելի է կեն «խոտե պարան» և մորէ «մի տեսակ համեմունք» բառերի հունական ծագումը (*Ջահուկյան, 198, 617*): Քրիստոնեայ և բրաքման բառերը նույնպես հունական փոխառություն չենք համարում, քանի որ առաջինի մեջ առկա է -եայ հայկական ածանցը, իսկ բառի արմատն էլ ստուգաբանորեն հունական չէ: Բրաքմանը զուտ հնդկական իրողություն է, որը գրաբար մատենագրության մեջ եզակի վկայություն ունի. «Բրաքմանք մերկ իմաստասերք Աղեքսանդրի առն քաջի և հզօրի գրեցաք խնդալ...» (*Արմ.*):

Ներկայացնենք V դարում վկայված հունական փոխառությունների ցանկը.

աբբա	արքեպիսկոպոս
ագոն «մրցանք»	արքիդիակոն
ադամանդ	ափսե
աթերայ (ուտելիք)	բաթրոն «բազմոց»
ակադեմ (ակամ)	բաղանի(ք)
ակառն «բերդ»	բաղիստր «աշտարակ»
ակատ (քար)	բաղասամոն «բալասան»
ադաբողոն	բասիլիսկոս (օծը)
ադկիոն (թռչունը)	բարբարիկ «վայրենի»
ամարանտինե	բարբարոս
ամեթովս «սուտակ»	բեմ
այեր «օդ»	բիբլոս «թուղթ»
անդրի	բիւրեղ
անթեմ (ծաղիկը)	բորբորիանոս (աղանդ)
անթիհիւպատոս	բորբորիտոն
անկիւրոս «խարիսխ»	բրաբիոն
անոն «թոշակ»	գալլոս «ներքինի»
անտիքրիստոս	գաղափար
ապաբալսամոն (խեժը)	գալիսոն
ասպիս «վահան»	գառագիւղ
արգասի(ք)	գենեսիս «հարազատ»
արգաստէր «արհեստանոց»	գրամատիկոս
աթր «քերակ. հող»	գրայիդայ «պառաժ»

դափնի
 դելփին
 դիալոգն «մրցախաղ»
 դիդրաքմայ (փող)
 դիմոն «ինչք»
 դիմոս (ական)
 դստիկոն
 դրակոնդիկոն «նախշ»
 դրիփաքտայ «ճաղեր»
 եբենոս «սև փայտ»
 եթեր
 եթիւա (թռչունը)
 ելեկտրիոն «սաթ»
 ելեփանդ (ական)
 եկեղեցի
 եկղեսիաստիկոս (տիտղոս)
 եղատ (եղևնի)
 եղեբորոս (բույս)
 եղոփին «եղջերու»
 եմատիտես (քար)
 եպարքոս
 եպիսկոպոս
 եւրակիկլոն (քամի)
 եփենէ (թռչուն)
 եքթերան «ծկնական»
 եքինէիս (ծուկը)
 եքինոս «ջրային ոգնի»
 զիւգոստատ (տիտղոս)
 զիփ(ական) «խավարային»
 զմելին «գրչահատ»
 զմուռս (ծառ)
 թերիակէ «դեղթափ»
 թէատրոն
 թիւմ (բույս)
 թիւնի (ծառ)

իբիդ (թռչուն)
 իդոս «երևույթ»
 իսթմիա «մրցանք»
 լաբիրինթոս
 լամբար
 լապտեր
 լիբանոն «կնդրուկ»
 լիբանոս «խնկի ծառ»
 լիբանովտոն «խնկաման»
 լիբեռնեայ «նավ»
 լիկդինոս «մարմարյա»
 լիտր
 կաթարոս «մաքուր»
 կաթեդր «նստարան»
 կաթողիկէ
 կաթողիկոս
 կաղամար «թանաքաման»
 կաղապար
 կամար
 կամփսակ «աման»
 կանկեղ (ճաղեր)
 կանոն
 կապելիոն «գինետուն»
 կասիա «դարչին»
 կարակին «քանոն»
 կարիդոս «խեցեմորթ»
 կարկինոս «խեցգետին»
 կեդար «խույր»
 կեղթ «կողով»
 կեփաղ (ծուկը)
 կետ (կենդանի)
 կինամոնոն «դարչին»
 կիպարիս
 կիպրոս (բույս)
 կիւոս «խորանարդ»

կիրակէ
 կլիմայ
 կղեր
 կոկորդիլոս
 կողոբ «զգեստ»
 կողոսոս «արծան»
 կոնիոն «մոլախինդ»
 կոնք
 կորիւքանտ «քուրմ»
 կուրետ «քուրմ»
 կոքղի «խեցեմորթ»
 կրաք «խեցգետին»
 կտին «խեցեմորթ»
 հագնի (ծառը)
 հալուէ (բույս)
 հաղիկա (սերմ)
 հեզեմոն «կուսակալ»
 հերեսիովտ «աղանդավոր»
 հերետիկոս
 հիդրոս «վիշապ»
 հիմէն «չափ»
 հիւպատիկեան «հալվե»
 հիւղ/հիւլէ
 հիւղէ «արեգակ»
 հիւպատի
 հիւպատոս
 հիւպարքոս «կուսակալ»
 հիւպերետ «փոքրավոր»
 հորմայ «մանյակ»
 հռետոր
 մաթեմատիկոս
 մակդաղիայ «կերակուր»
 մանգլիոն «բաբան»
 մանեակ
 մանրագոր (բույս)

մատուռն
 մարկեդ «բրիչ»
 մարմար (իոն)
 մարտիրոս
 մեգաղէ «մեծ»
 մեթ(եմ) «ցնդաբանել»
 մելան «թանաք»
 մեկոն «խաշխաշ»
 մեղիղովտայ (բույս)
 մեղրապոպ «շամամ»
 մենիդոս «ծուկ»
 մետաղ
 մետաքս
 մետրապօլիտ
 մեքենայ
 միրթ «թագ»
 միմ, միմոս
 միւսիոն «խճանկար»
 մղոն
 մնաս «կշիռ»
 մորոս «հիմար»
 յակինթ
 յասպիս
 յոբելիկ «կոթող»
 յուղիդաս (ծուկ)
 մարդէս (բույս)
 մարդոս (ծաղիկ)
 մարկա (ծուկ)
 մեմէ «մրցանք»
 մոմիկոս «մոտար»
 շլոռոս «կանաչ»
 որոդոս (դրամ)
 ողոմպիադ (մրցանք)
 ոպդիտ (մրցանք)
 ոստրէ (ոս)

ովան «հրեշ»
 որգոստա
 որթողոքս
 որիզ «բրինձ»
 որիւքս «վիթ»
 որմիսկ «վզնոց»
 ուղետերոն «չեզոք»
 ունիովն (քար)
 ոփիտես (քար)
 ոքսիրենքոս
 պաղատիտ «չոր թուզ»
 պանդոկի
 պանկրատիոն «մրցանք»
 պատագրոս «հիվանդ.»
 պենտաթլոս «մրցանք»
 պելկէ «սոճի»
 պին «խեցեմորթ»
 պիւթիա «մրցանք»
 պիւրամիդ
 պղակունդ «կարկանդակ»
 պնակ
 պնակիտ
 պողիպոդ (խեցեմորթ)
 պոմպիլոս (ծուկ)
 պոռնիկ
 պուետես
 պրակ
 պրաս (բույս)
 պրիւտան «ատենակալ»
 ռակայ «տխմար»
 ռետին
 սաղմոս
 սաղմոսողոզ «սաղմոսասաց»
 սատրապ
 սարդիոն (քար)

սեբաստէ
 սեմա(գիր)
 սեպեան (ծուկ)
 սիբիդղա «մարգարեուհի»
 սիբնիկոն «պատյան»
 սիկլ (կշիռ)
 սիդդոբայ
 սինկղիտիկոս «սենատոր»
 սինկղիտոս «սենատ»
 սկարոս (ծուկ)
 սկետա «խարազան»
 սնդմնայ «կապանք»
 սոփեստես
 ս ա ա տ ա դ (ա ն ք)
 «բարեկեցություն»
 սպուդ(եայ) «ճգնավոր»
 սպունգ
 ստադիոն
 ստամոքս
 ստատկէ (խեժ)
 ստիքերոն «ոտանավոր»
 ստիքս «տարերք»
 ստոմ «թրի բերան»
 ստոման «աման»
 ստրովենի (ծառ)
 ստրար «գորապետ»
 ստրատեգին «գորանոց»
 ստրոմ «խեցեմորթ»
 ստրովբիւլ «խաղալիք»
 սփիւրիդ «կողով»
 սքինոս (ծառ)
 սքոդաստիկոս
 տալիթայ «աղջիկ»
 տաղանդ
 տարտարոս

տեառ «խույր»
 տետրասկեղ «հենարան»
 տիպ
 տիտան
 տոկոս
 տոմար
 տոմս
 տոքս(ական) «թունավոր»
 տպագիտ (քար)
 տրապիզիտ «սեղանավոր»
 տրիէր (նավ)
 տրոքիլոս (թռչուն)
 րոպէ
 փաղանգ
 փաղանգ «մորմ»
 փասեակ «զատիկ»
 փասեան
 փիլիսոփոս
 փիլոն

փիւղակէ «բանտ»
 փիւնիկ
 փոկ (կենդանի)
 փսաղտ «սաղմոսերգու»
 քաղբան (խեժ)
 քաղկոլիբանոն (մետաղ)
 քարադր (թռչուն)
 քարակ (ցանկապատի մաս)
 քարտ
 քարտուղար
 քեռինոս «թերակղզի»
 քիմեռ «հրեշ»
 քղամիդ
 քոռ (չափ)
 քորեպիսկոպոս
 քորեստ (չափ)
 քրիսոպրասոս (քար)
 քրոնիկոն
 քրոնոգրափես

Ցանկը ընդգրկում է 293 բառ: Ավելի քան մեկ տասնյակ բառեր հայակազմություններ են, որոնք պայմանականորեն ներառել ենք ցանկում համապատասխան հունական արմատը ցույց տալու համար: Սենագիր, մեղրապոպ բառերի բաղադրիչներից մեկը հայերեն է: -ական ածանցն են ներառում՝ ակադիմական, դիմոսական, ելեփանդական, զիփական, տոքսական բառերը: Ակադեմիա-ն Արմ- դիտում է նոր բառ՝ որից ակադեմական: Այնինչ, վերջինս վկայված է V դարից. «Քանզի արդարև ակադիմականն և անճառական դէմ ընդդէմ հաստատեալ են աղանդացն, զի յիւրաքանչիւրսն ունեք յանդիմանելով, յորս օրինադրեն զկամսն» (*Փիլ. Մնաց. 203*):

Հունական մի քանի արմատներով և հայերեն -ի ածանցով առկա են հետևյալ ծառանունները. **թիւնի, հագնի, ստրովենի:** Հայերենի բայական ծնով է մեթել «ցնդաբանել»-ը: Մեթարմատը առանձին կամ այլ կազմություններում չի հանդիպում:

Ընդհանրապես հուն. արմատ +ել(ալ-) կազմությունները սակավ են, որ վկայում է դարձյալ այն մասին, թե հունարեն շատ բառեր հայերենի համար չլուրացված փոխառություններ են: Անեզական են արգասիք, բաղանիք, սպատաղանք բառերը, որոնց հոգնակերտը հայերեն է, -եայ ածանցով ունենք՝ սպուղեայ: Ն-ի հավելում է ակառն բառում:

Ներկայացնենք հունական փոխառությունները ըստ իմաստային-կիրառական որոշ խմբերի: 3. Աճառյանը առանձնացնում է 22 խումբ: Քանի որ V դարից ավանդված բառերը զգալիորեն քիչ են, ուստի նպատակահարմար գտանք ընտրել այնպիսի խմբավորումներ, որոնց մեջ ներառվեն համեմատաբար մեծ թվով միավորներ՝ հնարավորություն տալով որոշ մեկնաբանությունների: Դասակարգումը ամբողջական ներկայացնելու միտումով ընդգրկում ենք նաև ցանկում չգետեղված (փոխառություն չհամարվող) բառերը, անհրաժեշտության դեպքում անդրադառնալով դրանց կիրառության և իմաստային առանձնահատկություններին:

ա) Քրիստոնեական-եկեղեցական իրականություն

Աբբայ, ակումիտ, անագանոս, անտիքրիստոս, արքիդրակոն, բորբորիանոս, եկեղեցի, եկղեսիաստիկոս, եպիսկոպոս, էնկոմիա, կաթարոս, կաթեդր, կաթողիկե, կանոն, կղեր, հերեսիովտ, հերետիկոս, դևտիկոն, մարտիրոս, մետրապօլիտ, որթորոքս, պեմտեկոստե, պերոեվանգելիոն, պոսիսումե, սաղմոս, սիբիդղա, սպուղեայ, փսաղտ, քորեպիսկոպոս:

Վերոհիշյալներից ակումիտ, արքիդրակոն, անտիքրիստոս, էնկոմիա, պերոեվանգելիոն օտար բառեր են. *հմմտ.* «Յրաման ելաներ ... զսուրբն ակումիտ անուն կոչելոյ»: Պոսիսումե-ն վկայված է բարսեղյան պատարագամատույցում որպես պատարագի մի բանաձև. «Ժողովուրդն. ամեն, սարկավագն պոսիսումե»: Կրոնաեկեղեցական իրականությունը ներկայացնող խմբավորման տակ Աճառյանը բերում է 89 բառ, իսկ մեր դասակարգման մեջ ներառված է 30-ը: Այսինքն՝ 59 բառ

հետհինգերորդդարյան վկայություններ են: Իսկ այդ 30 բառերի մի մասն է միայն, որ կայուն գործածություն ունի և հետագա դարերում:

Այս տիպի բառերի նվազ քանակությունը պետք է բացատրել հունական համապատասխան իրականության ոչ ընդգրկուն ազդեցությամբ, ինչպես նաև հունական որոշ հասկացություններ ու տերմիններ հայացնելու ձգտումով:

Նկատենք, որ հայերենում լայն գործածություն ստացած կոնդակ, սքեմ, պատրիարք, պապ, միւռոն... և այլ բառեր հետհինգերորդդարյան վկայություններ են:

բ) Պետական, վարչական, ռազմական իրականություն

1. *Պաշտոն, տիտղոս*. անտիհիւպատոս, արքիհիւպատ, եպարքոս, զիւգոստատ, կորիւբանտ, հեգեմոն, հիւպատի, հիւպատոս, մեգաղէ, պրիւտան, սատրապ, սեբաստէ, սինկլիտոս, քարտուղար: Այս հասկացությունները արտահայտող հունարեն բառերը ըստ էության անթարգմանելի են, և հայ հեղինակները օտար հասկացությունները ներկայացրել են օտար ձևով: Միայն քարտուղար բառն է, որ հայերենում լայն գործածություն է ձեռք բերել: Նկատելի է, որ որոշ տերմիններ փոխարինվում են ոչ հունարեն համարժեքով: Օրինակ, հիւպատի, հիւպատոսութիւն (հիւպատութիւն) դասական շրջանից ոչ հաճախական բառերը փոխարինվում են բղեաշխ, բղեաշխութիւն համապատասխանակներով (*Վարդանեան, ՀԱ, 1920, 456*): Ուրեմն, հունարեն բառը ընկալվում է օտար, իսկ իրանական բառը ավելի հարազատ:

2. *Ռազմական կյանք*. ասպիս, բաղիստր, գայիսոն, մեքենայ, ստոմ, ակառն, փաղանգ, ստրատեգին: Առաջին հինգը զորքի տեսակների անուններ են, իսկ վերջինները՝ այլ կարգի հասկացություններ: Ասպիս, ստոմ, ստրատեգին ունեն մեկական վկայություն, ընդ որում ստոմ հուն. «բերան» բառի մասնավոր մի առումն է՝ «թրի բերան նշանակությամբ», «Որպէս

գերկաթի ստոմ, կամ որ ի պողովատիկ գտիցի և մխեսցի, ևս կարծրագոյն և հատու լինիցի» (ՍԵՐԵՐ. Դ.):

3. *Դրամ, վարձ, չափ.* անոն, դիդրաքմայ, դիմոն, լիտր, մղոն, մնաս, որողոս, սիկղ, տաղանդ, տոկոս, քոռ:

գ) Գիտություն, արվեստ.

1. *Փիլիսոփայություն.* իդոս, հիւղ, հիւլէ, հռետոր, պերիպատիկեան, սոփեստէս, ստոյիկեան, սքողաստիկոս, փիւսիկեան:

2. *Քերականութիւն.* ալփ, ալփաբետ, այբ, արթր, գրամատիկոս, յովտ, սիղղորայ:

3. *Այլ բնագավառներ.* անդրի, արգաստէր, բիբղոս, գաղափար, դրակոնդիկոն, զմելին, էնկոմիա, թատրոն, կաղամար, կարակին, կիւոս, կողասոս, մաթեմատիկոս, մելան, միմոս, միւսիոն, յոբելիկ, նոմիկոս, ոքսիրինքոս, պանդեմի, պիւրամիդ, պնակիտ, պուէտէս, պրակ, սեմիար, ստրիքերոն, տիպ տոմար, քարտ, քրոնիկոն, քրոնոգրափես:

Աճառյանի դասակարգման մեջ այս բնագավառին հատկացված է 138 բառ, ուրեմն, կեսից ավելին V դարից հետո են վկայված: Այլ հանգամանքների հետ միասին այստեղ պետք է հաշվի առնել դարձյալ V դարում օտար տերմինները հայացնելու մեր մատենագիրների ու թարգմանիչների միտումը: Հիշենք Եզնիկի գործը, որտեղ փիլիսոփայական շատ հասկացություններ արտահայտված են հայերեն բառերով: V դարի վկայություններում որոշ բառեր էլ անվանումներ են, որոնք անթարգմանելի են. **պերիպատիկեան, ստոյիկեան, փիւսկեան, ալփ, ալփաբետ, յովտ:** Մի շարք բառեր եզակի կիրառություն ունեն. արգաստէր, էնկոմիա, կիվոս... «Թողոյր զդիւացն արգաստեարսն և գայր առ փրկիչն ոգւոց մերոց» (*Արմ*): «Բազումք ասէին նմա էնկոմիա, որ ասի թէ հոգի սուրբ հանգեալ ի սա» (*Բուգ. 64*): «Երկայնութիւն նորա և լայնութիւն նորա և բարձրութիւն միաչափ կիվոս» (*Յայտ. ԻԱ 16*): Հայերենում լայն տարածում գտած և այժմ էլ գործածական այնպիսի բառեր, ինչպիսիք են **երգեհոն, մեղեդի, պիտակ, վրձին, կենտրոն, կոն...** V դարից վկայված չեն:

4. Մարմնամարզություն. ագոն, աթլետայք, դիալոն, իսթմիա, նեմէ, ողոմպիադ, պանկրատիոն, պենթատլոս, պիւթիա, ստադիոն: Հայտնի է, որ հին Հունաստանում հարգի էին մարմնամարզական զանազան խաղերն ու մրցումները: Բնականաբար հունական մատենագրությունն էլ առատ տեղեկություններ էր հաղորդում այդ կարգի իրադարձությունների մասին: Հայ թարգմանիչը չէր կարող տարատեսակ խաղերի անվանումները թարգմանել միայն մրցանք, խաղ ընդհանուր հասկացություններով: Վերջին հաշվով դրանք օտար հասկացություններ էին և պետք է այդպես էլ գործառնեին հայերենում: Միայն ագոն, ողոմպիադ և ստադիոն բառերն են, որ հաճախական են V դարի մատենագրության մեջ: Վերջին երկուսը գործառնում են և այժմ: Մյուսները պատահական կիրառություններ են՝ եզակի վկայությամբ, այն էլ թարգմանական գրականության մեջ: «Ագոնիստայքն աթլետայք կոչեցան» (Եւս Քր. 278): «Ի՞դիալոնին և ի հիպոլոնի, որ է ոսոխ ելանել, գինակրին մրցութեան» (Մ.տ., 292): Նեմէ, պանկրատիոն, պիւթիա դարձյալ հանդիպում են Քրոնիկոնում:

դ) Թանկարժեք քար, զարդ. ադամանդ, ակատ, ամաւրանտինէ, ամնթովս, բիւրեղ, ելեկտրիոն, կորոդիովն, հորմայ, մանեակ, յակինթ, յասպիս, որմիսկ, ունիովն, ոփիտես, սարդիոն, տպագիոն, քրիսոպրասոս: 7 բառ կայուն գործածություն ունեն V դարից, մյուսները եզակի վկայություններ են: Ամաւրանտինէ, եմատիտես, հորմայ, ունիովն, ոփիտես վկայված են Ալեքսանդրի պատմության մեջ, ընդ որում ամաւրանտինեն ուղղելի է ադամանտինէ ըստ հունական աղբյուրի: Կորադիոնը մեկ անգամ վկայված է «Վեցօրեայում», որտեղ և դիտվում է որպես օտար բառ «զպատուական և զծանրագին ականն, որ անուանեալ կոչի կորադիոն» (243):

ե) Կենդանական և բուսական աշխարհ

1. կենդանի և թռչուն. աղկիոն, բասիլիսկոս, բոմբիլոս, դելփին, դրակոնտես, եթիւս, եղոփին, ենքեղես, եփինէ, եքթերան, եքինես, եքինոս, իբիդ, կարտիոս, կարկինոս, կեփադ, կետ, կիկնոս, կոկորդիլոս, կոնք, կոքդի, կրաբ, հիդրոս, մենիդոս, միւռենես, յուլիդաս, նարկա, ոստրէոս, ովան, ովդակոն, որքիս,

պիգասոս, պողիպոդ, պոմպիլոս, պրիոնէ, սեղակ, սեպեան, սկարոս, սկիլայ, ստրոմ, տրիգոն, տրոքիլոս, փասեան, փիւնիկէ, փոկ, քարադր, փսիկէ:

2. *բույսեր*. ակոնիտոն, անթեմ, բաղասամոն, գոնգ, դափնի, եբենոս, եղատ, եղոբորոս, զմուռս, թիւնի, թիւմ, լիբանոս, լիբանոն, կասիա, կինամոնոն, կիպարիս, կիպրոս, կոնիոն, հագնի, հալուէ, հաղիկա, հիպատիկեան, մամրագոր, մեկոն, մեղիղովտայ, մեղրապոպ, միրաբաղանոս, միւրիկէ, նարդէս, նարդոս, որիգ, պաղատիտ, պելէէ, պրաս, սպունգ, ստրովենի, սքինոս, փղոմոս, փսենաս:

3. Անառայանի դասակարգման մեջ ընդգրկվում են 92 կենդանու անուն և թռչնանուն, 117 բուսանուն, մեր ցանկում համապատասխանաբար՝ 48 և 40: Նկատելի է, որ այս խումբը ծավալուն է, բայց հենց այս դասակարգման մեջ մտնող բառերի բնույթի, գործառական առանձնահատկությունների միջոցով որոշակիորեն բացահայտվում է հունական բառերի որակական բնույթը: Նշված 88 բառերից հազիվ մեկ տասնյակն են կազմում այնպիսիները, որոնք կայուն գործածություն ունեն գրաբարում, երկու տասնյակից ավելի բառեր վկայված են մեկական անգամ. ակոնիտոն, բոմբիլոս, գոնգ, դրակոնտէս, եղոփին, թիւնի, կարիտոս, որիքս, որիգ..., բազմաթիվ բառեր էլ դիտվում են որպես օտար և բացատրվում. *հմմտ.* «փոկք և դլփինք և ներկէսք, որ անուանեալ կոչին սեղակք» (*Վեց.*): «Երթայ խլէ զարմատ մի, որ անուանեալ կոչի փղոմոս» (*Ճ.տ.*): Պետք է նկատի ունենալ մեկ այլ հանգամանք ևս: Վերոբերյալ դասակարգումների զգալի թվով բառեր զանազան առասպելական կենդանիների, հրեշների անվանումներ են, որոնք հանդիպում են հունական դիցաբանության մեջ. պարզ է, որ դրանք անթարգմանելի են (պիգասոս, ովդակոն, փիւնիկ...), մի մասն են, որոնք Հայաստանում չկային, և թարգմանիչը, բնականաբար, ներկայացրել է հունական ձևը՝ ըստ հարկի տալով համապատասխան բացատրություններ: Նշենք նաև, որ այդ կարգի բառերը հայերեն են ներթափանցել մեկ-երկու բնագրերի թարգմանության միջոցով: Նշելի է հատկապես Կեսարացու «Վեցօրեան»: Բերենք մի քանի օրինակներ այդ գրքից. ա) կենդանու

անուններից: «Արդ՝ այլ այգ այն իցէ, որ խեցեմորթքն կոչին, այսինքն՝ կոնքն, և կտինքն և կոքղիք և ստրոմք... և անուանեալ կոչին ոստրիք»: «Եվ միւս ազգ աստարակերպ ի սոցանէ և անուանեալ կոչի ողորկապատեանք, այսինքն կրաբ, և խեցգետին... դարծեալ միւս եւս ազգ... անուանել կոչին թուլատարր, այսինքն պողիպողք, սպինք... և դարծեալ այլակերպք, այլանշանք, որ անուանեալ կոչին դրակոնտես և միւռինես...» (223-224): «Որ անուանեալ կոչի եքինէիս» (245): «Քանզի ոչ եթէ միայն, որ անուանեալ կոչին քսիւփիէ, պրիոնէ... և խայթոցք տրիգոնին, որ է ծուկն ծովուն» (Մ.տ.)

բ) բուսանուններից: «Քանզի այլազգի կերպարանս ունի հոյզն ծառոյն, որ անուանեալ կոչի սքինոս» (157): «Իսկ մշակքն, որ տնկոցն տեղեակք են և գիտեն զչափս իրացն, առնուն յոստոց արուին իմն, որ անուանեալ կոչի փսենաս» (153): «Նայեաց դարծեալ և ընդ միւս եւս ծառ, որ կոչի միւրիկէ» (162): «Երթայ խլէ զարմատ մի որ անուանեալ կոչի փղոմոս» (297): «... որ լինի ի ծառոյ միոջէ, որ անուանեալ կոչի պիտուս» (297): Այս գրքում են վկայված նաև անկիրոս, բոմբիլոս, դրակոնտես, կարիտոս, կիկնոս, մեկոնիոն, մեմիդոս, սկարոս և այլ բառեր:

գ) Շինություն

Արգաստէր, բաղանիք, գառագիւղ, դստիկոն, լաբիրինթոս, կանկեղոն, կապելլիոն, մակեղոն, մատուռն, պանդոկ, փիւղակէ, քարակ:

է) Տնային իրեր, կահկարասի

Ափսէ, բաթրոն, բաղանտ, լամբար, լապտեր, լիբանովտոն, կաթեղր, կամփսակ, կեղթ, կոնք, պնակ, սփիրդ: Այս խմբում էլ կան միայն մեկ անգամ վկայված բառեր. արգաստէր, բաղանտ, լիբանովտոն, կաթեղր. մնացածները հիմնականում կայուն կիրառություն ունեն V դարից սկսած:

ը) Հագուստ

Աղաբողոն, անակիւղ, կեդար, մետաքս, միթր, որմիսկ, տեառ, փիլոն, քղամիդ:

Կարելի է այլ փոքրաթիվ բառեր ներառող խմբերից նշել՝ **ժամանակ** – կիւրակէ, պանեմոս, նոոմոն, տուբի, րուպէ, **բնություն, տիեզերք** – եթեր, այեր, զիփական, ովկիանոս,

հիւղէ, *մոլորակների անվանումներ* – կռոնոս, հերմես, *քամիների անվանումներ* – եւրակէկլոն, եւրոնտոս: ՀԱճառյանը «Բնություն և նրա զորությանց մասին» դասակարգման տակ ներկայացնում է 70 բառ, այնինչ V դարում դրանց թիվը 10-ից չի անցնում: Ըստ էության միայն ովկիանոս-ն է, որ կարելի է փոխառություն համարել:

Աճառյանի տվյալներով 915 հունական փոխառություններից 164-ը գործածական է և այժմ: Որպես արդի գրականում գործածվող բառեր Աճառյանի առանձնացրած 164-ի դիմաց V դարից վկայված են 107-ը: Այս տարբերակումն էլ որոշ վերապահությամբ պետք է ընդունել, քանի որ այնպիսի բառեր, ինչպիսիք՝ այեր, եբենոս, թատրոն, կլիմայ, պենտեկոստէ, պողիպոդ, պուետիկոս..., որ Աճառյանը դիտում է որպես այժմ գործածական, ինչ-որ չափով առարկելի է: Միանգամայն իրավացի է Աճառյանի այն նկատառումը, թե «հիշյալ բառերի մի մասը գործածական է արդի գրականում, ոչ որպես շարունակություն հին հայերենի գործածության, այլ իբրև ուսումնականների ձեռքով վերակենդանացրած ձև, միմիայն այն պատճառով, որ նույն բառերը գործածական են արդի եվրոպական լեզուների, ռուսերենի և կամ տաճկերենի մեջ» (ՀԼՊ, II, 47-48): Նա նշում է այդպիսի 49 բառ: Մեր ներկայացրած ցանկից մոտ 100 բառ եզակի վկայություններ են, որոնց մի մասին տարբեր առիթներով անդրադարձել ենք: Հունական ծագման բառերի գործառական, բառակազմական առանձնահատկությունների քննությունից նորից հաստատվում է այն իրողությունը, որ V դարի բառապաշարում հունական տարրը չնչին տոկոս է կազմում: Դրանց մեծ մասը մատենագրական ճանապարհով, ավելի ճիշտ հունական գրականության թարգմանության ժամանակ են հայերեն մուտք գործել՝ չլուրացվելով և չարմատավորվելով վերջինում: Հյուբշմանի կարծիքով, V դարի վերջում հայերենի հունական փոխառությունների թիվը 50-ից ավելի չէր: Անշուշտ, նա նկատի ուներ յուրացված փոխառությունները: Եթե ընդունենք յուրացված փոխառություններ հասկացության որոշ պայմանականությունը, ապա հունարենից հայերեն անցած իսկական փոխառությունների թիվը 100-120-ից չի անցնում: Անպայման

պետք է հաշվի առնել նաև այն փաստը, որ հունական բառաշերտը հիմնականում բնորոշ է գրական ոճին: Հայաստանում հունական իրականության ազդեցությունը չուղեկցվեց հունական լեզվական մեծ ազդեցությամբ: Ինչպես նկատում է Այտընյանը. «Հեթանոսութեան վերջին դարերում մէջ, Հայաստան կրօնքով հելլենացած ժամանակը, ոչ օտարոտի տարածութիւնք, ոչ փոխադրեալ բազմաթիվ կուռքերն ու քուրմերն իրենց իշխանական մտիւքը կրցան երկրին լեզուին վրայ ազդել... և հայ ազգն արևմտեան նորամուտ պաշտամանց ու պաշտօնէից՝ արևելեան (դիցաբանական) լեզու տուաւ» (*Այտընեան, 1866, 226*): Այտընեանի կարծիքով, հունարենի նկատմամբ հայերենի անտարբերության պատճառը մեր լեզվի «արևելեան բնոյթն» է: Այտընեանը առաջին հերթին նկատի ունի իրանական բազմաթիվ փոխառությունները ի տարբերություն հունական նվազ բառաքանակի: Նա որպես նմուշ նշում է Բուզանդի լեզուն, որ «ոչ մ' ուրիշ մը, որ այսչափ արևելեան կերպարանք ունենայ՝ ինչպես ինքը և չկայ գրութիւն մը այսչափ պարսկաձև պարթևախառն ինչպես նոյնը. որուն մէջ քանի մը յունական բառեր իբրեւ բռնի մը կեցած են և ինքնին կաղաղակէն, թե օտարոտի են» (228): Անշուշտ միակողմանի է հունական բառերի սակավությունը հայերենի «արևելյան» բնույթով բացատրելը: Իրանական բառերի առատությունը և հունականի սակավությունը նախ և առաջ հայերի և մյուս ժողովուրդների միջև դարերի ընթացքում իրականացված շփումների ու աղերսների, նաև պատմական որոշակի իրադարձությունների արդյունք են: Նույնիսկ հելլենիզմի շրջանում հունական իրականության ազդեցությունը արմատական չէր, որովհետև հայ հեթանոսության իրանականի հետ ունեցած հին ու սերտ աղերսները խոչընդոտում էին հունական իրականության և համապատասխան լեզվական ազդեցությանը:

Քանի որ հայերենի հունարենից կրած ազդեցությունը մատենագրական ճանապարհով է, ապա բնականաբար ավելի զգալի պետք է լինեն լեզվական ազդեցության այն ձևերը, որոնք ի հայտ են գալիս բառերի պատճենման կամ մեխանիկական թարգմանության միջոցով: Բնական է, որ հունական մեծածա-

վալ գրականության թարգմանության մեջ կամա թե ակամա պետք է ի հայտ գար այս ազդեցությունը, մանավանդ որ նոր էր կազմավորվում թարգմանելու սեփական սկզբունքներն ու ավանդույթները (հունաբան դպրոցի գործունեությունը և սկզբունքները այլ էին, որին չենք անդրադառնում): Բառակերտման հունական ազդեցությունը բնականաբար սկսվում է Սուրբ Գրքի թարգմանությունից:

Ինչպես հայտնի է, V դարում լեզվական որոշ տարբերություններ են նկատվում այսպես կոչված առաջին և երկրորդ թարգմանիչների գործերում: Այդ տարբերությունները դրսևորվում են նաև հունարեն բառերի թարգմանությունների ժամանակ: Հուն. *εχφαινο*-ն առաջին թարգմանիչները ներկայացնում են յայտնել, երևեցուցանել, երկրորդները՝ բացահայտել, *φιλολοιμεσθαι*-ը՝ հակառակիլ, վիճել, երկրորդները՝ յաղթասիրել: Նմանապես՝ անհնազանդութիւն, ստունգութիւն-տարալսութիւն, գիտութիւն-մականութիւն, համեմատել-բաղդատել, առաւելուլ, անցանել, զանցանել-գերազանցել, ընթեռնուլ-վերծանել (*Գարագաշեան, 1845, 33*): Կրտսեր թարգմանիչները ավելի հարազատ են մնացել հունարեն ձևերին: Այս և նման կարգի այլ արտահայտություններ փաստորեն հունաբանության առաջին դրսևորումներն են:

Հունարենի ազդեցություն են թվականների արտահայտման ներքոհիշյալ ձևերը, որ հանդիպում են Եվսեբիոսի Քրոնիկոնում. «Որ միով պակաս քան զ Լամ թագաւորեաց. եւ յետ նորա ծ և զմի ամ կալաւ Ղատինոս: Եւ յետ նորա Աղբաս միով սխալ ամս խ... Եւ յետ Աղբանայ Եպիստոս զ ընդ ի ամաւ: Ապա Կաղպիս՝ երկու սխալ ի յերեսնէ» (372): «Եւ յետ նորա վախճանելոյ Ագրիպաս թագաւորեաց ղատինացոց՝ միով ավելի քան զքառասուն ամ» (390):

Հունարենում և լատիներենում հաճախ 8 և 9-ով վերջացող թվականները հանունով են կերտվում. «ամս քսան պակաս երկու» (74, 1920, 374):

Հինգերորդ դարում վկայված հունարեն բառերը մի քանի անգամ քիչ են հետագա վկայություններից: Վերջիններիս քննությանը չենք անդրադառնում, սակայն հայ մատենա-

գրության մեջ հունարեն բառերը փոքր ի շատե ամբողջական ներկայացնելու միտումով, ամենաընդհանուր ձևով կանգ առնենք նաև հետիինգերորդդարյան վկայություններին: Առաջին հերթին նշենք, որ սրանք նույնպես հիմնականում մատենագրական ճանապարհով անցած միավորներ են, որոնց գերակշիռ մասը հայերենում գործառնապես չարմատավորված բառեր են՝ եզակի վկայություններ, զանազան երևույթների անվանումներ, տերմիններ: Նկատելի է նաև վկայությունների ոչ համաչափ բաշխվածությունը ըստ դարերի: Ավելին, այս կամ այն դարից առանձնացված բառերի քննությունը ցույց է տալիս, որ դրանք ավելի զանգվածային են որևէ գրքում կամ որևէ հեղինակի մոտ: Առանձնապես շատ բառեր կան VI, VII դարերի մի քանի գործերում: Ինչպես հայտնի է, VI դարի ինքնուրույն գրականությունը իր ծավալով զիջում էր V դարի գրականությանը: Այդ դարից են մի քանի թարգմանական գործեր, որոնցում էլ առկայանում են հունարեն բազմաթիվ բառեր: Միայն Նոննոսի մեկնության մեջ հանդիպում ենք ավելի քան քսան բառի. ամբոյտ «տեղատվություն», կեստ «Աստղկան արկղը», կոնքեդ «խեցեմորթ», կովդոս «արծան», մելալ «ոչխար», մելովտե «ոչխարի մորթ», միլոբուտ «արոտ», միստեռիոն «խորհուրդ», յարդ «թակարդ», ռաքիա «ալիքի պատռում», սաղամանդր (սողուն), սատիրոս «կապիկ», սփենդոն «մատանու ակ», տելետի «սրբազնագործություն», փաղդոս «առնի», քարիւբդ «հորձանք», քիդոս «կերակուր»: Առանց համապատասխան օրինակները նշելու, պարզ է, որ այս բառերը բնագրում էլ դիտվում են որպես օտար: VI դարից շուրջ 40 բառ վկայված է Արիստոտելի «Վասն աշխարհի» գործի թարգմանության մեջ: Այդ բառերի մի մասը քամիների անվանումներ են. ապարտքիաս, ապելիոտ, արգեստես, արքտական, եւրոնտոս, եւրոս, զեփիւռ, թելելիա, թրասկիաս, լելափս, մօտոս, ողիմբիաս, ստռոբիլոս, վոռէաս, տիւփոն:

Միայն զեփիւռ-ն է, որ հայերենում լայն կիրառություն է ստացել: Ըստ երևույթին բառը ավելի վաղ փոխառություն է, բայց գրավոր ավանդված ուշ: Այս գրքում հանդիպող մյուս հունարեն բառերը դարձյալ բնության երևույթների անվանումներ

են. արգիտեն «կայծակ», բոթինոս «հրե երևույթ», դիատոն «ասուլ», իրիս «ծիածան», լամբար «օդի մեջ երևացող լույս», պաղմական «երկրաշարժ», փայիթոն «լուսնթագ», փսոլոս «փոշի բերող կայծակ» և այլն: Սրանք հիմնականում եզակի վկայությամբ բառեր են: ,

VII դարի վկայությունների մեջ գերակշիռը Շիրակացու զանազան գործերում հանդիպող բառերն են (շուրջ 70): Սրանք զանազան չափ ու կշռի, դրամական միավորների անվանումներ են՝ օտար բառեր, որ և ներկայացնում է հեղինակը: Բերենք մի քանիսը. *ա) չափ, կշիռ*. անդլիտերիոն, ապորիւմայ, բեսին, գրամար, կարոս, կերատ, կոտիւղ, կորոս, մեղիարիս, մոթ, մոնադ, պարոսպսիդ, սաբիթայ, սիմէս, տրմէս, քուզակ, *բ) դրամ*. արգիւրիոն, դրաքմայ, դեպտոն, նոմիսմայ, փաղկոս, *գ) երկնային մարմիններ*. երմոս «փայլացու», զոդիակոս «կենդանակերպ», իպպոս (աստղը), կանաբոս (աստղ), կասսիոպէ (աստղ), պղայիդա (աստղը), սիպտոս «շանթ», տաւռոն (աստղ):

Սոկրատի «Եկեղեցիական պատմության» մեջ վկայված է մոտ 20 բառ. անտռոն «քարայր», ապահիպատիկոս, արգիայ «ռոռգում», արտերի «շնչերակ», գուռայ «սափրիչ», դիմոտ «ռամիկ», եպարքի «նահանգ», պրաստին «արվարձան»...: Սեբեոսի, Կաղանկատվացու մոտ առաջին անգամ վկայված հունարեն բառերի թիվը մեկ տասնյակից քիչ ավելի է:

VIII դարից վկայությունները համեմատաբար քիչ են. ագապ «ծաշ», եռիէս «քահանա», իկոսաէդոն (20-անիստ), կիբիկոն «խորանարդ», կոն, մեսեդի «կցուրդ», ուրանիսկոս «քիմք», ոքդաէդոն «ութանիստ», պապաս «քահանա», պառակաւտոս «մխիթարիչ», պիւռամիդէս «բրգածն», սկալինեան «եռանկյուն», տելրիդէս (ծուկ):

IX-X դարերի նոր վկայություններ չկարողացանք գտնել:

XI դարի հեղինակ Գ. Մագիստրոսի մոտ երեք տասնյակից ավելի բառեր կան. աստռոնոմի, դռակոն, էլիոս, թալատայ «ծով», իմալակեալ «կակաչ», լիգիոն «պսակ», կիտոնտ (տիտղոս), կիւաթոս «աման», կոնդակ «նիզակ», մանիա

«գառաճանցանք», մառուլ (բույս), նոմիզմատայ «դրամ», ոսմիդայ (խեցեմորթ), ոքսիմելի «մեղրով քացախ», պաղակ «ծերուկ», պոռփիւռիկոն «ծիրանի», պրաքսիս «գործ», սիմեռիկոն «մասնակից», տելետիս «գլխավոր հռետոր», տիմին «պատվական», տռիտոն «ջերմ», փագրոս «ծուկ», քանոնիկոն «քանոնով գծված»: Քաջածանոթ լինելով հունարենին՝ նա այդ լեզվի արմատներով կերտում է մի շարք ածանցավոր ձևեր և բայեր. անոգանալ «կարդալ», ապա զոնեալ «պարտվել», եպիդեմել «կառուցել», իմեռական «ամենօրյա», մեղանպոնդական «ջերմ», պռոմեական, սինքոսական (ջերմ) և այլն:

Մի քանի տասնյակ բառեր առկա են այնպիսի գործերում (Վարք հարանց, Վարք և Վկայաբանութիւնք, Մաշտոցներ), որ դժվարություն են հարուցում վկայության ստույգ ժամանակաշրջանը ճշտելու հարցում: Բազմաթիվ բառեր բառարանային վկայություններ են, որոնք դարձյալ ժամանակագրային դասակարգման մեջ չենք ընդգրկել: Միայն Երեմիա Մեղրեցու բառարանում կա հունական ծագման 50 բառ. ագրիտիս «սեզ», ադիալիպտոս «անձանձրույթ», աղբեստրոյ «կիր» (ուղղելի է ագբեստրոյ), աղկեպ «եղիճ», աղմուր «համեմունք», ամոնի «համեմ», այիզոն «լվախոտ», անգեղոս «հրեշտակ» (որպես բարդության բաղադրիչ V դարի առկա է Ագաթանգեղոս անձնանվան մեջ), անեմոն «պուտ», ապոստոլոս «առաքյալ», ասփաղոթ «նավթ», արվես «հալվե», բաղաս «վայրի նռան ծաղիկ», դիասպր «շորեղեն», դիափսաղմայ «դադար», եգուլենոս «առաջնորդ», եփրասիմայ «ուրախություն», գելօտե «նախանձավոր», իմիողեա «թվի մաս», կապիլոս (բույս), կերոնոս «բարկություն», կիմինոն «չաման», կոռիանդրոն «գինձ», կրինոն «շուշան», կրոմին «սոխ», հռոդոմ «վարդ», մեսմելիոն «սինձ», մեսմեղոն «խնձոր», մորեաս «թութ», մարդիստաքոս «սմբուլ», նիփայ (ծաղիկը), որդուկ «ուղղափառ», ոփսարի «ծուկ», պանթիօտայ «նվիրապետ», պերիտոմել «թլպատել», ռաբդոն «ցուպ», ռեփանին «բողկ», ռիզայ «արմատ», սկամինոս «թուղթ», սմարաքթոս «զմրուխտ», սոփի «իմաստություն», վասիլիոս

«թագավոր», քարակտիր «նկարագիր», քոնտրոն «կորկոտ», քրիպյ «հրեշտակ տեառն»: Վերոհիշյալ բառերից ոչ մեկը այժմ գործածական չէ: Ըստ երևույթին դրանց հունական աղբյուրներում է հանդիպել բառարանագիրը, բացառված չէ, որ վկայված լինեին հեղինակին ծանոթ հայկական աղբյուրներում, որոնք մեզ չեն հասել:

*
* *
*

Ուսումնասիրողները հունական փոխառությունների հետ քննում են նաև լատինական փոխառությունները, քանի որ վերջիններիս զգալի մասը հայերենին է անցել հունարենի միջոցով: Դ. Աճառյանը նշում է միայն 10 բառ, որոնք կարող է անցած լինեին անմիջապես լատիներենից (ՉԼՊ, II, 324-330), Գ. Զահուկյանը դրանք դիտում է որպես նախագրային շրջանի փոխառություններ (1987, 631): Արկղ, բաստեռն, լկտիք «գահավորակ», կայսր, կառ(ք), ղենջակ, մարգարիտ, պան «բլիթ», սիտղ «դուլ», սկուտեղ: Գ. Զահուկյանը նկատում է, որ սիտղ-ը գործածված է ուշ շրջանում, և, ինչպես նշում է նաև Դ. Աճառյանը, ավելի հավանական է նրա հունական ծագումը: Մնացած ինը բառի՝ լատիներենից փոխառված լինելու ապացույցներն էլ համեմատաբար թույլ են:

Աճառյանի ներկայացրած լատիներեն բառերի ցանկը ընդգրկում է 151 բառ (ՉԼՊ, II 40-48): Դրանց մեծագույն մասը հետագա վկայություններ են, իսկ V դարից գործածված է 38 բառ. ապրիլ (ամիսը), ասարիոն (դրամ), զոնգիարիոն «թռչակ», դեկտեմբեր, դեմար (դրամ), դիկատոր (տիտղոս), էքսփլորատորն «լրտես», լաբարոն «դրոշ», լեգեովն, լոդիկ «վերարկու», կաղանդ «ամսամուտ», կանթեղ, կիտրոն, կղեսուր «կիրճ», կրկես, հոկտեմբեր, մայիս, մարտ, յուլիս, յունիս, յունուար, նոյեմբեր, նուներ «զորագունդ», նոտար, ուրար «հագուստ», պալատն, սակր «հրովարտակ», սեպտեմբեր, սիգնոն «դրոշակ», սիկարեան «ավազակ», սուդար «թաշկինակ», վիռոն «փիլոն», տապեղ «նարտի», տրիբուն «ցեղապետ», փեբրուարիոս (ամիսը), փոս, փորոն «հրապարակ», օգոստոս, օգոստոս «կայսրուհի»:

Եվսեբիոս Կեսարացու Քրոնիկոնում (*Ա, 1888*) ալբա և լոնգա բառերը համապատասխան թարգմանություններով դիտվում են որպես լատիներեն, որոնք Աճառյանը չի նշում. «Եւ անուն քաղաքին կոչեալ աղբան՝ ըստ խոզին գունւոյ, քանզի դատինացիք ըստ իրեանց բարբառոյ զսպիտակ աղբան անուանեն, դնել նմա միւս այլ անուն ղոնգա, որ թարգմանեալ կոչի երկայն» (*388*): V դարում վկայվածները ներկայացնում են նույն օրինաչափությունները, ինչ որ հունական փոխառությունները. կան եզակի վկայությամբ բառեր. գոնգարիոն, դիկատոր, սիկարեան, հատուկ անուններ կարելի է համարել օգոստոս (*կայսր*) և փորոն-ը: Վերջինս խորենացու հրատարակիչները դիտում են որպես հատուկ անուն, մի շարք բառեր բացատրվում-թարգմանվում են. *էքսփլորատորես, լաբարոն, նումէր, վիռոն. հմմտ.* «Որք առ հռովմայեցիսն կոչին էքսփլորատորես և առ հայս լրտեսք» (*Պտմ. Աղեքս*): «Ձնշանս արքունի կրեն ի պատերազմի, մանաւանդ զոր լաբարոնն կոչեն հռոռմք» (*Ոսկ. Ա. Տիմ. 25*): «Է գունդս այս զոր այժմիկ նումերովն կոչեն, այսինքն է թիւ դասութեան» (*Ոսկ. Գժ. 192*): «Վիռոն է փիլոնն արկանելի հանդերձ» (*Ոսկ. Բ. Տիմ. 267*):

Չորս տասնյակի հասնող լատինական փոխառությունները հնարավորություն չեն ընձեռում իմաստային-կիրառական խմբերի առանձնացման: Կարելի է, թերևս, խոսել լատինական ամսանունների մասին: Բառարաններում բոլորը հինգերորդ դարի վկայություններ են, բայց քանի որ այդ համակարգը ծանոթ էր հայերին, ուստի բոլոր 12 ամսանունները համարում ենք վկայություններ V դարից: Բերենք մի քանի օրինակներ. «Նումաս Պոմպիլոս երկուս ամիսս յաւել ի տարին՝ գյունուարիոս և զփեբրիուարիոս» (*Աբր. Խոստ. 2*): «Վկայեցին և այլ սուրբ արք ճ և կանայք ժ ի ժ մայիս ամսոյ» (*3*): Նույն տեղում՝ յունիս, յուլիս: «Ի քսան և հինգ ի մարտի ամսեան, յաւուր վեցերորդի, որ է ուրբաթ» (*ԱԹանաս. 381*): Լատինական ամսանունները հանդիպում են միայն թարգմանական գրականության մեջ: Թերևս թարգմանիչները չգիտեին հայկական և լատինական ամիսների համապատասխանությունները և այդ պատճառով էլ ներկայացնում են օտար ձևերը:

Լատինական փոխառությունները հիմնականում մատենագրական փոխառություններ են: Արդի հայերենում գործածական որոշ բառեր հետհինգերորդարյան վկայություններ են, որոնք ամրագրվել են եվրոպական նոր լեզուների ազդեցությամբ. դուքս, կարդինալ, տիտղոս, սենատոր: Լատինական ամսանունների համակարգային կիրառությունն էլ դարձյալ նոր ազդեցությամբ պետք է բացատրել:

Գ Լ ՈՒ Խ II

Ն Վ Ա Ձ Հ Ա Ճ Ա Խ Ա Կ Ա Ն Բ Ա Ռ Ե Ր

Բառապաշարի ուսումնասիրությունը ենթադրում է մաս բառերի գործառական յուրահատկությունների բացահայտում: Այս տեսակետից կարևոր նշանակություն են ստանում նվազ հաճախական բառերի առանձնացումը և քննությունը: Քանի որ մեր աշխատանքը վերաբերում է ոչ թե մեկ հեղինակի կամ գործի, այլ մի ամբողջ հարյուրամյակի ընթացքում ստեղծված մատենագրական հարուստ ժառանգության բառապաշարին, ապա ըստ էության ոչ հաճախական բառերի առանձնացումը հենց միայն նյութի տեսակետից լուրջ դժվարությունների առաջ է կանգնեցնում: Նախապես որոշել էինք նյութը առանձնացնել ըստ V դարի բոլոր գործերի, բայց աշխատանքի ընթացքը ցույց տվեց, որ դա մենագրության ծավալի սահմաններում անհնարին է: Ուստի նպատակահարմար գտանք առաջին հերթին մանրամասն անդրադառնալ V դարի ինքնուրույն գրականությանը և Աստվածաշնչին: Ձգտել ենք վեր հանել հեղինակների բառապաշարի բնութագրիչ յուրահատկությունները, առաջին կամ միակ վկայությունները, տվյալ հեղինակին բնորոշ բառակազմական ձևերի առկայությունը: Նվազ հաճախական բառերի հենքի վրա ըստ հնարավորին փորձել ենք առանձնացնել բառապաշարի իմաստային որոշ խմբեր, այս կամ այն գործերի միջև նկատվող բառօգտագործման ընդհանրություններ: Առավել ուշադրություն ենք դարձրել V դարի այն վկայություններին, որոնք ավանդված չեն ՆՅԲ-ում* : Քննությունը կատարել ենք որոշ դասակարգումներով, որոնք ըստ հարկի ուղեկցված են բառաքննական դիտողություններով:

* Հաճախ ՆՅԲ-ում չվկայված բառերը արտացոլված են ԱԲ-ում: Քանի որ վերջինս օրինակներ չի վկայում, ուստի ԱԲ-ի տվյալները բառի վկայության ժամանակի կամ հեղինակի հարցում ոչ մի տեղեկություն չեն տալիս:

Թարգմանական գրականության տվյալները (բացառությամբ Աստվածաշնչի) ներկայացրել ենք ամենաընդհանուր ձևով՝ շեշտը դնելով հատկապես ՆՅԲ-ում կամ ընդհանրապես գրաբարի բառարաններում չավանդված բառերի վրա*:

Նպատակահարմար ենք համարել մեզ հետաքրքրող հարցը քննել ըստ առանձին հեղինակների՝ բացահայտելով նախ և առաջ նրանց բառապաշարի առանձնահատկությունները, որոնց միջոցով (բայց ոչ մեխանիկական հանրագումարներով) և V դարի հայ գրականության բառապաշարի մի էական կողմը: Նման քննությունը հնարավորություն է ընձեռել նաև նկատելու *ինքնուրույն հեղինակ- թարգմանական գրականություն* որոշ փոխհարաբերություններ, որոնք կարևոր նախադրյալներ են բանասիրական, տեքստաբանական ուսումնասիրությունների համար:

1 ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Կ Ո Ր Յ ՈՒ Ն

Կորյունի «Վարք Մաշտոցի» գիրքը իր ծավալով V դարի ինքնուրույն գրականության մեջ ամենափոքրն է: Գործածված բառերի ընդհանուր քանակը 5882 է, իսկ բառարանային բառերի քանակը՝ 1675¹: Երկի ժանրային առանձնահատկություններով պայմանավորված՝ Կորյունի մոտ առտմին, սովորական կամ ժողովրդախոսակցական նկատելի շերտ չկա: Խոսքը վերաբերում է այն բառերին, որոնք առաջին վկայությունն են: Կորյունի լեզուն և ոճը զգալապես տարբերվում են Աստվածաշնչից ու Եզնիկի «Եղծ աղանդոցից»: Կորյունը «Աստվածաշնչյան հասարակախոսությանը հակադրեց վերամբարձությունն ու ճոռոմաբանությունը՝ դառնալով խրթնաբան ու ճոռոմաբան հայերենի հիմնադիր մեր գրական լեզվի պատմության մեջ»

* Գրաբարի բառարաններում չվկայված բառերը մանրամասն կներկայացվեն առանձին գլխով՝ համապատասխան դիտարկումներով:

¹ Տվյալները քաղված են Կորյունի գրքի համաբարբառից (*Երևան, 1982*):

(Առաքելյան, 1981, 147): Գուցե մի քիչ չափազանցված է այս գնահատումը: Պարզությունից հրաժարվելը թերևս ինքնանպատակ չէր: Կորյուլնի գրքի լեզվաոճական ատաղծը բխում է երկի բնույթից և հեղինակի աշխարհայացքից: Նկարագրելով Մաշտոցի կյանքն ու գործունեությունը, կամխատեսելով Մաշտոցի գործի անգնահատելի դերը հայության ներկայի և ապագայի համար, միևնույն ժամանակ տոգորված լինելով աստվածաշնչյան աստվածաբանական ըմբռնումներով՝ Կորյուլնը պատշաճ չէր համարում սովորական պարզ շարադրանքը: Շարադրանքի ձևը բխում է բովանդակությունից, որը բերեց նոր ոճ, մտածողության նոր եղանակ: Ուստի Կորյուլնին պետք է համարել ոչ թե ճոռոմաբան ու խրթնաբան հայերենի, այլ գրական ոճի հիմնադիր:

Նշենք մի քանի բառեր, որոնք առաջինը գրավոր վկայություն են ստացել հիշյալ գրքում: Ամենակուլ, ամենաշնորհ, ամենապարզևող, անծաւամուտ, աշխարհահող, արտօսրագութ, բանջարաճաշակութիւն, բարեխորհել, դիւրապատում, ընդունայնախօս, թագաւորակաց, իշխանակիր, խաչակրօն, կայսերագիր, ճշմարտահաւատ, նպաստական, սքանչելական, վշտակեցութիւն, քաղցրատուր...

Վ.Առաքելյանը իր աշխատության մեջ բերում է մոտ 200 բառ, որոնք համարում է Կորյուլնի նորակազմությունները: Ճիշտ է, այդ բառերը կան Կորյուլնի գրքում, բայց դրանք կան և այլոց, հատկապես Ագաթանգեղոսի մոտ, ուստի այդ ցանկը մենք չենք ներկայացնում, մանավանդ որ վիճելի հարցեր կան Կորյուլն-Ագաթանգեղոս առնչության շուրջ: Իսկ թե ինչքան մեծ են այդ երկու հեղինակների բառապաշարային ընդհանրությունները, ցույց տանք մեկ փաստով: Վ.Առաքելյանը Կորյուլնի գրքից առանձնացնում է կրոնական բովանդակությամբ մի բառաշարք (79 բառ): Համեմատությունը ցույց է տալիս, որ այդ բառերից Ագաթանգեղոսի մոտ բացակայողները 10-ից էլ քիչ են, մյուսները գործառնում են նույնիսկ համամասն համատեքստում. ընդ որում ընդհանուր բառերի մեջ չմտնողների մի մասը ունի ձևային չնչին տարբերություն. ասենք, Կորյուլնը ունի ամենաշնորհող, ամենապարզևող, աւետաբեր, իսկ Ագաթանգե-

ղոսը՝ ամենաշնորհ, ամենապարզևող, աւետեացաբեր:

ՎԱռաքելյանը Կորյունի օգտագործած նորակազմ բառերի մասին գրում է. «Այս փոքրիկ գրվածքը ունի նորակազմ բառերի մի մեծ քանակ, որոնք պարուրված են կրոնական բովանդակությամբ, և շատերը հասկանալի չեն այսօր, հասկանալի չեն եղել նաև ժամանակակիցներին ու միջին դարերին» (*Մ.տ.*, 142): Մեր կարծիքով վերջին եզրահանգումը առարկելի է. մի՞թե հասկանալի չեն եղել կամ չեն, ասենք. ամենակեցոյց, ամենապահ, ամենապարզևող, բազկատարած, խաչանման, եկեղեցական, ծակախիթ, հոգևորական, հրեշտակաբար, ճշմարտահաւատ, ճշմարտապաշտ, միայնակեցական, սատանայակիր, վերնապարգել, տիրամայր, քրիստոսական, քրիստոսամեծար... և այլ բազմաթիվ բառեր: Կորյունի մոտ նկատվող խրթնաբանությունը ոչ թե բարդ բառերի բնույթից է գալիս, այլ հիմնականում ոճական-քերականական յուրահատկություններից, շարադասությունից, նախադասության կառուցվածքից:

Մի երկու խոսք Կորյուն-Ագաթանգեղոս առնչության մասին: Հայ բանասիրության մեջ արտահայտվել է այն կարծիքը, որ Կորյունն է թարգմանել Բուզանդի և Ագաթանգեղոսի գործերը: Այս թեզը փաստարկվում է, առաջին հերթին, այդ հեղինակների գործերի լեզվաոճական աղերսներով: Ուշադրության արժանի է հատկապես Ն.Բյուզանդացու ուսումնասիրությունը, որտեղ անխոնջ գիտնականը մանրամասնորեն վեր է հանում բառային, բառակապակցական, ոճական այն ընդհանուր շերտերը, որ առկա են նշված գործերում: Բյուզանդացին նույնպես փորձում է հաստատել, որ Ագաթանգեղոսի «Պատմությունը» Կորյունի թարգմանությունն է (*Բյուզանդացի, 1900*): Եղել են նաև կարծիքներ, որ Կորյունն է Ագաթանգեղոսից օգտվել: Այժմ բանասիրությունը ընդունում է, որ դրանք տարբեր գործեր են, տարբեր հեղինակներ: «Այս առթիվ վեճ չկա, և Նորայր Բյուզանդացու գիրքն ու նրա մեջ արտահայտված տեսակետները հնացել են: Հեղինակը տարված նմանություններով՝ անտես է արել այն ընդհանուր ու մասնակի յուրահատկությունները, որոնք երեք հեղինակներին զանազանում են» (*Առաքելյան,*

1981, 137): Բուզանդի հարցը իրոք լուծված կարելի է համարել: Ոճական ատաղծով, ժողովրդախոսակցական բառերի ու ձևերի առատությամբ Բուզանդը հակադրվում է Կորյունին, մասամբ նաև Ագաթանգեղոսին: Ինչ վերաբերում է Կորյունի և Ագաթանգեղոսի ընդհանրությունների գնահատմանը, ապա իրոք Բյուզանդացին կատարել է մի աննախադեպ քննություն, վեր հանել այնպիսի երևույթներ, որոնք մինչ այդ նկատված չէին: Բայց դրանք հիմք չեն տալիս Ագաթանգեղոսին զրկելու հեղինակային իրավունքից: Ճշմարիտն այն է, որ բառապաշարի հարցում ազդեցություն կա:

ՆՅԲ-ՈՒՆ ԶԿԿԱՅՎԱԾ ԲԱՌԵՐ

ԱՇԽԱՐՀԱՅԱԼԱԾ – «Աշխարհահալած արտաքոյ իւրեանց սահմանացն մերժեցին» (86): ՆՅԲ-ում՝ աշխարհալած՝ այս օրինակի հղումով:

ԱՇԽԱՐՀԱՅԵԾ – «...առաջի եղեալ... զհոգս զաշխարհահեծս» (48): Բառը ունի Ագաթանգեղոսը. «Ձսովորականն առաջի դներ...զհոգս աշխարհահեծս» (432): Մ.Աբեղյանը բառը չի թարգմանում: Վ.Առաքելյանը թարգմանում է «համասուզ»:
(Առաքելյան, 1981, 155):

ՍԱՏԵՆԱՆՇԱՆ – «Ձմտաւ ածելով յիշատակարանս առանձին մատենանշան ծաղկեցուցանել» (22): ՆՅԲ-ն այս օրինակի հղումով ունի մատենանշան: Ձեռագրերը ունեն երկու ձևն էլ: Մ.Աբեղյանը ճիշտ է համարում մատենանշանը. «Մտածում էր մի առանձին մատյանի մեջ գրված հիշատակարանները ծաղկեցնել»:

ՊՍԱԿԱՅԼԱՍ – «Անդ քաջալերութիւն... առ ի յառաջադէմ ընտրութեանն՝ պսակահաս քրիստոսադիր՝ կիտին» (82): Պսակահաս կետ ըստ ԱԲ-ի «է պսակ հաղթողին տալու»: Ըստ Աբեղյանի «այն տեղը, ուր դրված է լինում պսակ՝ մրցության մեջ հաղթողին տալու համար»:

ՎԱՐԴԱՊԵՏԱՍԵՐ – «... Այր վարդապետասէր և ճշմարտապատում» (96):

Եզնիկ Կողբացու լեզուն իր կանոնավորությամբ, պարզությամբ, շարադասության օրինաչափությամբ իրավացիորեն համարվում է հայ հին գրական լեզվի կատարյալ օրինակը: Այն ժամանակ, երբ գրվեց «Եղծ աղանդոցը», քրիստոնեական ուսմունքը Հայաստանում դեռ նոր էր տարածվել, և բնականաբար, դեռ կենդանի ու գործուն էր գրադաշտական ու հեթանոսական կրոնների ազդեցությունը: Թեմատիկ առումով գիրքը նորություն էր: Իսկ նման գրքի առկայությունը ենթադրում էր հարևան ժողովուրդների պատմության, կրոնի, կրոնական աղանդների իմացություն, վիճելու, ժխտելու, նորի առավելությունները հաստատելու կարողություն: Գրքի բովանդակությամբ և խնդիրներով են մեծապես պայմանավորված նաև լեզվաոճական առանձնահատկությունները: Լինելով գիտական աշխատություն՝ այն շրջանառության մեջ է դնում զանազան հասկացություններ ու ըմբռնումներ, տերմինային արժեք ունեցող բառեր:

ա) պարզ (ածանցավոր) բառեր

Ազդեցական, աղակատանք «զեխություն», աղուանամ «նենգել», ամպանալ, անաղտ, անբանաւոր, անգար «հարմար», անկազմութիւն «անպատրաստ», անհարթ «անկազմ», ապիմակ, առաքելացու, ասուեղ, արգաւոր, արթր «տարր», բայոց, բարսմունք, բժշկիչ, բիժ, գնդեմ, գոռեխ, գտիչ, երանական, զանդիկ, զովացուցիչ, ըմբան, թերանալ, թոժիւն «ծագ», իգութիւն, խաղաղիկ, խոստուկ, խորխոլել, խօշիւն, ծովանալ, ծրանալ, կաղանջանան (բույս է), կամական, կանեփուկ, կարճիչ, կեսուր, կտիկ, հազար (բույս), համազգի, համակերտ, հիւծանել, մակեղոն, մայռ «երակ», մեծարիչ, մեղկութիւն, նիազ, չախորժական, չանձնաւոր, չաջողութիւն, չգիտանք, չերն, չնչիկ, չուառ, չվնասակարութիւն, պոզող «հափշտակող», վարգեմ, տնակալ «տնատեր», քուրական:

Անցնենք որոշ բառերի բնությանը՝

ԱՊԻՄԱԿ – «Եւ կամ իցէ՞ որ, որ մատուցեալ՝ զայլոց զորդիս կամ զծառայս յապիմակս և ստահակս յօժարեցուցանիցէ (269): Բառարանները մեկնում են «ծույլ, անխելք»: Ա.Վարդանյանը բառը ուղղում է՝ ապիկամ, անկամ «ծույլ» (Ուղղված ձևն էլ առաջին անգամ վկայել է Եզնիկը): Վ.Առաքելյանը ընդունում է ապիմակ ձևը և թարգմանում՝ «ապստամբ» (1981, 122):

ԱՌԱՔԵԼԱՑՈՒ – «Այլ և առաքեալն ասէ. ո՞չ ամենեքեան հոգիք հարկաւորք են առաքելացուք ի սպասաւորութիւն վասն այնոցիկ, որք ժառանգելոց են զփրկութիւն» (108): Բառը ունի «ուղարկելի, առաքելի» իմաստը: Եզնիկի այս հատվածը վերաբերում է Պողոս առաքյալի՝ երայեցիներին ուղղված թղթին. *հմմտ.* «Ոչ ապաքեն ամենեքեան հոգիք են հարկաւորք, որ առաքեն ի սպասաւորութիւն վասն այնոցիկ, որ ժառանգելոց են զփրկութիւն» (Ա. եբր. 14):

ԲԱՅՈՑ «որջ»- «Յորս են և ազդմունք ինչ բնականք՝ որովք հանդերձելոց իրիք իրաց ազդ լինիցի մոցա... և արջոյ՝ յառաջագոյն քան զծնեռն ի բայոց մտանելոյ» (175): Ըստ Է.Աղայանի բնիկ հնդեվրոպական բառ է. *bheu- արմատի *bhua>*bha – ձևից. ընդհանուր «բնակարան, տուն» իմաստով (Աղայան, 1974, 36): Բայոց-ի համար, ի տարբերություն գրաբարի բառարանների, Վ.Առաքելյանը ենթադրում է «քուն» իմաստը, որն այնքան էլ համոզիչ չէ (Առաքելյան, 1981, 122):

ԲԱՐՍՄՈՒՆՔ – զրադաշտական կրոնին վերաբերող տերմին է. հին փոխառություն: Եզնիկը այն կիրառել է 10 անգամ:

ԽՈՍՏՈՒԿ – «Ձմնանէ յուրաստ էր՝ թէ չես դու իմ որդի և զմիւսմէն խոստուկ՝ թէ որդի իմ է» (136): ՆՅԲ-ն Եզնիկից վկայություն չի ունում: Ըստ երևույթին վերոհիշյալ բառը գրավոր առաջին վկայությունն է: ՆՅԲ-ն խոստուկ լինել կապակցությունը հղում է Կաղանկատվացուն, իսկ խոստուկ «որովայնից ավ» համանունը՝ Վաստակոց գրքին: ԱԲ-ի խոստուկ «յանձն

* Եզնիկի երկի վերաբերյալ կան շատ բառաքննական դիտողություններ: Նորագույն ուսումնասիրողներից հարկ է նշել Ս.Մինասյանին: Տես հատկապես նրա «Եզնիկի բնագրի վերականգնման հարցը» աշխատությունը (ՀԱ, 1986):

առնող» բառը թերևս եզնիկի վերոհիշյալ օրինակն է նկատի առնում: Խոստովնիկ Ժողովրդախոսակցական կամ բարբառային ձև է խոստովան-ի համեմատությամբ:

Խոսելով եզնիկի հնացած բառապաշարի մասին՝ Վ.Առաքելյանը գրում է. «Եզնիկի հնացած բառապաշարը և՛ ձևական, և՛ իմաստային այնպիսի հատկանիշներով է օժտված, որ թվում է թե ներուճակ են վերակենդանանալու... ամպանալ, անաղարտ, անընտանի, անստին, բոցալեզու, գեղեցկագործութիւն, խոնաւական, սերմնընկալ...» (1981, 121): Այո, դա իրոք այդպես է: Եվ պատճառը դարձյալ Ժողովրդական մտածողությունն է, շինծու, արհեստական ձևերից խուսափելու եզնիկի ընտրած սկզբունքը:

Բ) բարդ բառեր

Ականամոն, աղանդամիտ, անխարխար, անսկզբնակից, աստեղանշմար, աստուածախոյզ, աստուածաքարոզ, արարչախնդիր, արեգակնատենչիկ, արինագոյն, բարեախորժ, բնականից, բոցալեզու, գազանաբարոյ, գոյաբար, դեղմեղի, դիւապաշտ, դրօշագործութիւն, երկարմատեան, զովողակից, ընչապտուկ, թանձրամարմին, թելադրութիւն, իգասեր, լեռնաբերձ, լուսնապաշտ, խորխուլել, ծովածին, ծովացուլ, կաթնակեր, կենդանապահ, կորեկահատ, հեշմակապաշտ, հիւթաբեր, հրատեսիլ, մասնամուտ, մարտուսոյց, մեծաջան, մենակերպ, մշտնջենակից, մորթազերծ, մսահատ, մսավաճառանոց, յաշտածին, յետնամեղ, որդնապարար, չորակերութիւն, չունկնդիր, պատճառախնդիր, սատանայածին, սափասուտ, սեւագործ, սպիտակարար, վնասարար, քաղցրաքուն, քնահատ, քեշակարկատ, օծապաշտ, օծապաշտութիւն...

Բարդ բառերի օգտագործման մեջ էլ նկատվում է կենդանի լեզվի տարրերի շրջանառության մեջ դնելու միտումը: Թերևս յաշտածինը կարող է լինել եզնիկի կերտածը, որովհետև վերաբերում է օտար իրականությանը, և այդ հասկացությունը, որն արդեն տերմինային արժեք ունի, դժվար թե գործառնի Ժողովրդի մեջ: Օտար է և հեշմակապատ-ը, որն ամբողջական

փոխառությունն է և գիտակցվում է որպես բարդ բառ: Այն հանգամանքը, որ բարդ բառերի թիվը Եզնիկի գործում մեծ չէ, բխում է ոչ միայն երկի ծավալից, այլև օտար բարդ բառերը չպատճենելու, չթարգմանելու, նաև ինքնահմար բարդություններ չկերտելու սկզբունքից: Հենց այս է, այսպես կոչված, ոսկեդարյան գրականության եզնիկյան դասը «բոլորից կանոնավորը, ճիշտը, հստակը, արվեստավորն ու գեղեցիկը» (*Աճառյան, ՀԼՊ, III, 78*) դիտելու պատճառներից մեկը:

*

* * *

Վ.Առաքելյանը, առանձնացնելով մի շարք բառեր (պարզ և բաղադրյալ), որոնք առաջինը Եզնիկն է գործածել, նշում է, որ դրանցից «շատերը հենց իր կազմածներն են» (*1981, 120*): Թեև ուսումնասիրողը կոնկրետ չի տարբերակում Եզնիկի նորակազմությունները, բայց և այնպես առարկելի ենք համարում «շատերը հենց իր կազմածներն են» միտքը: Այո, Եզնիկը անշուշտ կերտել է նոր բառեր: Բայց կարո՞ղ ենք աղանդաւոր, աղաւաղել, ամպարշտանալ, ամասուն, աստուածաքարոզ, յետնամեղ, սևագործ... համարել Եզնիկի ստեղծածը: Ամենայն հավանականությամբ դրանք եղել են լեզվում, և Եզնիկն էլ գրավոր շրջանառության է դրել:

Եզնիկի գործում բազմաթիվ բառեր սովորական գործածությունից զատ ձեռք են բերել տերմինային արժեք: Տակավին 1922 թ. Ե.Փեչիկյանը անդրադարձել է այդ հարցին (*ՀԱ, 1922, 10-12*): Նա տերմիններ է դիտում ընդդիմակաջ, մտաւոր, բանաւոր, ազատութեամբ ի հարկէ, պատճառ, պատճառաւոր, ամարար և այլ բառեր: Հեղինակը գտնում է, որ Եզնիկի գործածած որոշ տերմիններ այսօր էլ կիրառելի են: Սասնավորապես յօդուած, «բարդ» տերմինի առթիվ նա գրում է. «... Փոխանակ մեր գործածած բաղադրեալ բարդ ձևին, որ անծանոթ ու անախորժ է ոսկեդարու հեղինակին և արդեն յինքեան յօդուածոյն շատ ավելի լաւ կը բացատրէ մասերէ կազմուած էակ մը քան բաղադրեալը» (*17*), ՀԱ-ի 1932 թ. համարում

քննության է առնված հողմ-շունչ-հոգի հասկացությունը, իսկ «Բազմավեպում» (1923)՝ Եզնիկի բնագիտական տերմինաբանությունը: Ա.Աբրահամյանը նկատում է, որ առաջ սովորական բառը «առջևի կողմ, դեմքը դարձրած կողմ» նշանակությամբ վկայված է V դարից, իսկ Եզնիկի գրքում ունի և ներառում է «նախասկիզբ» նշանակությունը. «Եւ եղեալ երիս առաջս, ուսուցանէ զբարւոյ և զարդարոյ և զչարէ» (297): Ա.Աբրահամյանը որպէս տերմիններ է դիտում ինքնակաց, անսկզբնակից, մշտնջենակից, մշտագոյակից, անընթերակից, հիւղ, արարիչ, արարած, գոյ, է, բնութիւն, անձնաւոր և մի շարք այլ բառեր (Աբրահամյան, 1971): Հոդվածի արժանիքներից է և այն, որ տերմինների լեզվական քննությունը ըստ հնարավորին կատարվում է փիլիսոփայական հասկացությունների համադրմամբ ու վերլուծությամբ, հաճախ էլ նշվում տվյալ տերմինի հունարեն համապատասխանակը: Ուշագրավ է, օրինակ, երկարմատեան բառի բացատրությունը: «Այլ ի քէշիմ մի են երկոքեան. նոքա երկարմտեանք և սոքա նոյնպիսիք» (117): Ըստ Ա.Աբրահամյանի՝ ընդգծված բառը կազմված է երկու և արմատ բաղադրիչներից, որտեղ արմատ «նախասկիզբ» իմաստով է: Երկարմատեան՝ «երկու նախասկիզբ ունեցող», դուալիստ:

ՆՅԲ-ում ՉԿԿԱՅՎԱԾ ԲԱՆԵՐ

ԱԿՆԲԱՑ – «Քանզի ոչ կարէ ակնբաց ի ցամաք գործել» (190): Այս նախադասությունը ՆՅԲ-ն բերում է բաց բառի տակ: Բառարանի հեղինակները ուրեմն ճիշտ են համարում ակն բաց անջատ գրությունը: Վերոհիշյալ նախադասությունը Ա.Աբրահամյանը թարգմանում է. «Քանի որ չեն կարող տեսադաշտը ցամաքին հասցնել»: Այն կարելի է և թարգմանել «հայացք»:

ՄԱՐՄՆԱՊԻՇ – «Իսկ ստոյիկեանքն մարմնապիշք հայեցեալ յերեւելի յաշխարհս զամենայն ինչ մարմին կարծեցին» (227): Բառը կա ԱԲ-ում, իսկ ԱՐՄ-ը հղում է ՋԲ-ին: Ա.Աբրահամյանը թարգմանում է «նյութապաշտ» (144): ԱԲ-ն՝ «քննող»:

Եթե ԱԲ-ն նկատի ունի Եզնիկի վկայությունը, ապա թերևս ակնապիշ-ի համաբանությամբ է մեկնված:

ՄԵՆԱԿԵՐՊ – «Ձի եթե պարզ բնութիւն է հիւզն և մենակերպ... անհմարին է ասել եթե հիւզայն լեալ իցէ» (32): Ունի ԱԲ-ն:

ՆՈՒԱԳԱԾՈՒԹԻՒՆ - «Ոք ճարտարութիւն իրաց ինչ գիտիցէ, եթե զնուագածութեան և եթե բժշկութեան» (236):

ՈԳԵՂԵՆ – «Վասն տարածութեանն միայն և արագութեան կոչին հրեշտակք և դելք և հոգիք մարդկան ոգեղէնք» (92): Բառարանները ունեն հոգեղէն ձևը:

ՉԱՐԱԲԱՐԵԼ – «Այնպիսի՞ արդելք արար զնա Աստուած, եթե ինքնին այնպիսի չէր և յօժարեաց ի չարաբարել» (52): Ոմանք հակված են բառը կարդալու չարարել (Տե՛ս Աբրահամյանի թարգմ. ծան. 85): Բայց թերևս ուղղման հարկ չկա: «Չարաբարել բայը կասկածի տակ է առնվել և դարձել է չարարել միանգամայն անտեղի ու սխալ կերպով: Գրաբարում բռնաբարել բայը նշանակում է բռնի կերպով վարել, բռնի մի բանի մղել, և Եզնիկը այստեղ մարդուն խաբելու, չար բանի մղելու, չարաբարելու հանգամանքն է ճշտագույն իմաստավորմամբ նշում» (*Առաքելյան, 1981, 126*):

Փ Ա Վ Ս Տ Ո Ս Բ ՈՒ Զ Ա Ն Դ

Բուզանդի երկի բառապաշարի քննությունը կարևորվում է հատկապես V դարի ժողովրդախոսակցական, բարբառային տարրերի բացահայտման տեսանկյունից: Բառապաշարի այդ շերտը Բուզանդի մոտ զգալի է: Այդ է պատճառը, որ որոշ ուսումնասիրողներ նրա լեզուն համարել են ռամկական, դասական օրինաչափություններից շեղվող: Ժողովրդական մտածողությունը, կենդանի խոսքը իր արտահայտությունն է գտնում ոչ միայն բառապաշարում, այլև դարձվածներում, ոճերում, շարադասության մեջ: Սա պայմանավորված է մի կողմից նյութով, մյուս կողմից՝ նյութի մատուցման հեղինակի նախասիրությամբ: «Փափստոսի գիրքը պատմություն է, որ հիմնված է ժողովրդական առասպելների, իրական ու առասպելական պատմություն-

ների վրա: Ժողովրդական բանավոր մշակույթի օգտագործումը կամա թե ակամա իր հետ բերել է նաև ժողովրդի բառն ու բանը» (*Առաքելյան, 1981, 160*): Անշուշտ, Բուզանդի բառապաշարում առկա է նաև տարբեր բնույթի՝ գրական, փոխառյալ բառաշերտ:

Ստորև ներկայացնում ենք այն բառերը, որոնք առաջինը կիրառել է Բուզանդը: Նկատենք, որ դրանց զգալի մասը եզակի վկայություն է:

Ազբախումբ «բազմամբոխ», ազգատ առնել, աթինեալ «զարդարված», ախերակ «հիմար», ակնկառոյց, աղքատկերութիւն, աղքատկեցութիւն, աղուեսենի, այգենալ «լուսանալ», այրացաւեր առնել «ավերել», այրենոց «այրիների բնակարան», անապատակեաց, անկիւղ (հագուստի տեսակ), սակստան անդերծապետ (տիտղոս), մոգաց անդերծապետ, անմարդիմ «անմարդանալ», անմի առնել, անունդ առնել «բնաջնջել», աշխարան «կոծ, լացողների խումբ», աշխարհակեր, աշխարհապաղատ, ապիզակ, ապրդում «սանձ», ասպատակ կապեն, արտասուակաթ, արքայագունդ, արքեպիսկոպոսապետ, աւագախումբ, բագորգ «մասնակից», բազմականակից «սեղանակից», բանականէջ, բաշխիշ, բարծերէց «գահերեց», բերդակալ, բերդնորդի, գամապետ, գանգրագեղ, գայլենի, գարգմանակ (զարդ), գաւառակ, գլխանի «գլուխներ», գուգազ «անկանոն զորք», դանդաչուն, դաշտանիկ, դեսպանագնաց, դոյզնագիւտ, երախտապարզև, երկնչոտ, էնկոմիա, ընդաբուտ, ընկապճեալ, ընջովին, թագագանգուր, թադեական, թակ(ն), թոպամահ «ծեծամահ», Ժանուար, իւրակից, իւրեանցական, լոյսիջոյց, խաւթապատճառ, խորանապահ, խնկածու, խորգահանդերծ, կապարահատ, կատաղախօս, կծութիւն, կնգմենի, կողաքակ լինել, համահանդերծ, համբարակապետ, հաստաշինած, հացուտ, հոգելորազգեաց, ձիահալած առնել, ձկնատեանք, դամդայեն, ճարտուկ ճանճկեն, ճենիշ, ճերմակ, ճերմակածի, ճոպան, մաճկացուցանենմ, մակարդ, մաշկահանդերծ, մաշկապարճեն, մարգարէանոց, մեծասքանչելաշուք, մեհենասէր, մեհենատեղի, միանձնանոց, միմեանսզրկութիւն, մի

հանեսք, մկթամ «ծաղրել», մշտակատար, նախաբոյս, նախավաստակ, նախճամէջ «փորոտիք», նետալից առնել, ներտ «ջիղ», շաղաշատութիւն, շաւակի, շինականաշէն, ործակոտոր, որմած (որմ+ածեալ), որմաշէն, ոսկեապատեան, ոսկիկմբէ, ոսկիվարաւանդ, չեպիսկոպոս, չէրեց, պառակին, պատերազմիկ, պատկառուկս արկանել, պատուիրանակատար, պատուիրանաւանդութիւն, պէշասպիկ, պուրակ, ռամիկ սպաս, սամուրենի, սարակ, սարկաւագապետ, սուտերդմնութիւն, ստադատ, ստրատ, սրտկեղ, սիւս, վաչկատուն, վարագօրէն, վարաւանդ, վարաւանդասպաս, վարժեար, վարժնականիշ, վարժկանագրիչ, տապ(ա)րիկ, տարակաց, տարապայման, տերունատուր, տիրամատմիչ, փղակոյտ, քոյրաթիւ:

Բառային ընդհանրություններ կան մի կողմից Բուզանդի, մյուս կողմից Ագաթանգեղոսի ու Խորենացու միջև, իսկ թարգմանական գրականությունից՝ Ոսկերեքեանի տարբեր հատվածներում: Ներկայացնենք Բուզանդ-Ագաթանգեղոս, Բուզանդ-Խորենացի ընդհանրությունները:

Բուզանդ-Ագաթանգեղոս. ամբոխսն «վրդովվել, շփություն առաջացնել», այսամուտ, անխաղաց «անշարժ», աշխարհակեաց, աստուածագիր, արմատակեր, երկնակեաց, զրադատ, աշխարհատարած, մեծապարծ, միաժողով, նախածանօթ, նախարարակոյտ, չկանութիւն, պատուակալ, պողովատիկ, ջամբել, սունաւոր «սվինաւոր», տիրասպանու:

Բուզանդ-Խորենացի. աշխարհատարած, աւանանալ, աւտարանոց, բարեխորհուրդ, բոկագնաց, թագակապ, ճէտ «սերունդ, զավակ», լզդերգութիւն, սենեկապան, վաշտիկ/վաշտկան, վարձակ, վարսակալ, քաջածի:

Անցնենք որոշ բառերի քննության:

ԱխԵՐԱԿ – «Միտք ի կերպարանացն թափուր և ունայն իբրեւ ախերակք» (72): Միակ վկայությունն է: ՆՅԲ-ն մեկնում է «ամօգուտ, զուր, անխնա»: Ավելի ճիշտ է Արմ-ը՝ «հիմար»: Բառը մի քիչ այլ ձևով օգտագործել է և Ագաթանգեղոսը. «Յախերկան կոտորել զանասունս իւրեանց ի զոհս ճենճերոյն» (260): Ստու-

գաբանական համոզիչ փաստարկներ չկան, մի շարք ձեռագրեր ունեն՝ աներակ: Այդպես էլ թարգմանել է Մալխասյանը (1968, 139):

ԱՂՔԱՏԱԿԵՐՈՒԹԻՒՆ – «Եւ դուք դարձայք ի մոլորութիւն կռապաշտութեան մախնեացն ձերոց և յագահութիւնս և զրկութիւնս և աղքատակերութիւնս» (34): Բառը թարգմանվում է «հարստահարություն»: Մտորումների տեղիք է տալիս կերբադարիչը, որը հավանորեն ոչ թե ուտել-ի անցյալի հիմքն է, այլ կար/կեր «գործ» արմատը: (Համաբարբառում՝ աղքատակեցութիւն):

ԱՆՄԻ ԱՌՆԵԼ – Վկայված է երկու անգամ (34, 126): Նշանակում է «ոչ մեկին չթողնել, բնաջնջել». «Ջամենայն զօրս պարսից կոտորեալ, անմի արարեալ սպառեցին»: Բառիմաստի տեսակետից ուշագրավ ու գրաբարում ոչ հաճախական կազմություն է:

ԽՏՈՐԱՏՈՒՐ – «Որոց հարեալք զաւանդն հոգեւորն պատուի, անձամբ զանձինս իրեանց խտորատուր՝ յարուեստն զինուորութեանն զինեցան» (37): Այլ ձեռագրերում՝ խտորատուր, որ և ներկայացնում է ՆՅԲ-ն՝ «տուեալ զանձն ի խտորումն, անձնատուր ի խտորնակս» բացատրությամբ: ԱԲ-ն՝ «խտորած, մոլորած»: Ոմանք առաջարկում են նոր իմաստ՝ «արյունակցական ամուսնություն», բառը համարելով իրանական լեզուների համապատասխան հասկացության պատճենում («Սիրոն», 1932, 85-88):

ՄԻՅԱՆԵՍՔ – «Խաղակատակ լինէր նոցա, որպէս խաղալով զանձն իւր կրթէր յագահութեան, որում ծարաւեալ պասքեալ փափաքէր, սակայն միհանեսք այն էին նորա» (228): Այլ ձեռագրերում՝ միահանէք: Բառի ձևը և իմաստը ստույգ չէ: Թարգմանվում է «խաղ, կատակ, փորձանք, վտանգ» (տե՛ս Մալխասյանի ծանոթագրումները, 1968, 216):

ՇԱԽԱԿԻ – «Ինքն Շապուհ արքայ հեծեալ ի ձի շաւակի անցանէր առ կանանովն» (150): Բառը ունի միայն Բուզանդը: ՆՅԲ-ն համարում է անստույգ «իբրեւ արշաւակի, և կամ որպէս այլազգ», Արմ-ը հղում է. տե՛ս արշաւ, որի տակ բերվող ձևերում

Բուզանդի շաւակի-ն համարվում է գրչագրական սխալ և ուղղվում՝ արշաւակի:

Արշաւակի իմաստը համատեքստում բռնագրոս է. այն տեսարանում, երբ Շապուիը գնում է մերկ կանանց խմբի մոտ, դժվար թե արշաւակի՝ արագ, սրընթաց անցներ: Թվում է՝ Բուզանդի շաւակի-ն ուղղելու հարկ չկա. իրան. šava/šīav նշանակում է «գնալ, մեկնել»: Այս համատեքստում ձիով դանդաղ գնալ: Ի դեպ այդ նույն արմատն է և ապաշաւ բառում՝ apa- մասնիկով՝ բառացի «հետ դառնալ»:

ՆՅԲ-ում ԶՎԿԱՅՎԱԾ ԲԱՌԵՐ

ԱՇԽԱՐԱՒԱՆԴ – «թագի կապ» – «Ջսոյն և սպարապետին Մանուէլի ետ տանել... հանգոյցք թագի կապեալ աշխարաւանդ» (218):

ԱՐՋՆ – «սև» – «Յանկարծօրէն ծիւնն ցամաք արջն լինէր առաջի նորա» (32): Անկախորեն բառը վկայված է միայն բուզանդի մոտ: Որպես բաղադրիչ առկա է արջնագոյն, արջնաբոլոր (բոլորովին մուր), արջնաթոյր, արջնագգեստ բառերում:

ԲՈՆԱԲԱՐՈՒԹԻՒՆ – «նեղութիւն, պառակտում» – «Այլ բռնաբարութիւն և միաբանութիւն և հրաման աստուծոյ, մանաւանդ առ նախնեօքն» (60): Գրաբարի բառարանները չունեն: Արմատականն էլ նշում է որպէս նոր բառ: Կարելի է ուղղել բռնաբանութիւն՝ միաբանութեան համաբանությամբ: Բռնաբանութիւնն էլ բառարաններում ավանդված չէ:

ԳԵՏԱԽԱՌՆՈՒՆԲ – «Մարդպետ Հայր... էջ յափն գետոյն հոսանացն Եփրատու... ի գետախառնունսն երկուց գետուցն» (98): Ունի ԱԲ: Բառը կրում է ժողովրդական մտածողության կնիք:

ԵԿԵՂԵՑԱԽՈՐԱՆ – «Իսկ իբրեւ տեսանէր թէ կալան գայր իւր և կապեցին, վաղվաղակի ընթացաւ յեկեղեցախորանն ժողովուրդն» (100):

ԵՂԵԳՆԱԲԵՐԱՆ – «եղեգնուտների մոտ» – «Ի մայրեացն Յեղեգնաբերանին... լցին զդաշտն կաղնատուն տնկով» (16):

ԵՐԱՍՄԱԿԱԿԱՅ «Երամակատեղ» – «... զիր դէտսն առաջի արկեալ՝ յերամակակայն արշաւեր» (213):

ԶՆԴԿԱՊԵՏ (ԶԻՆԴԻԿԱՊԵՏ) (տիտղոս է) – «Յաղագս զինդկապետին...» (131): ՆՅԲ-ն չի վկայել, դիտելով որպէս հատուկ անուն:

ԻՐԱՔԱԶ «իրապես քաջ» – «Հանապազ յամենայն ժամ յաղթող ազգին պարգեւեալ յերկնից բարիանուն իրաքաջ ի մեծի նահապետութեան պատերազմի» (57):

ԿԱՆԱՆՑԱՅԱՆԴԵՐԶ – «Զիարդ ասէ, զայսպիսի տեղիս կանանցահանդերձ մարդկան տուեալ է» (197):

ԿԱՐՃԱԶԱՏ – «Էր նորա հարճ մի ի գաւառէն Տարօնոյ, ի Հացեաց գեղջէ կարճագատացն» (42): ԱԲ-ի՝ «օժ ու կարիճ» բացատրությունը, եթէ այս օրինակն է նկատի առնված, գոհացուցիչ չէ: Հավանորեն ճիշտ է Ստ. Մալխասյանը, գտնելով, որ կարճագատները ստորին աստիճանի ազատներ (ազնվականներ) էին, ազատների հեռավոր ազգականներ (1968, 318):

ՇԵՐՏԱՓԱԿ – «Առնէին համար գերւոյն և ի մէջ շերտափակ զօրացն պահէին» (146): Բառը ունի «ցցերով փակված» իմաստը (ԱԲ): Արմ-ը վկայություն բերում է այլ հեղինակից:

ԶԱՐԱՍԻՐՏ – «Այր ներքինի չարասիրտ, չարախորհուրդ, չարագործ, որում Հայր կոչէին» (40):

ՍԻԻՍ – «Առի գնացի զԳնել, տարայ մինչեւ յորմ Սիւսին սպանի և անդէն թաղեցի» (101): «Իսկ զպատանեակն Գնել առնուին գնային մօտ ի սիւսն արքունի և անդէն կառափէին ի սարակ լերինն» (102): Հայ մատենագրության մեջ այս բառով թերևս այլ վկայություն չկա: Հայկազյան բառարանագիրները բառը համարել են հատուկ անուն և չեն զետեղել բառարաններում: Արմատական բառարանում տրվում է «չորս կողմը պատքաշած արհեստական մեծ որսատեղ» բացատրությունը՝ առանց բառի ստուգաբանության: Ուրարտագետ Հ.Կարազոզյանը սիւս կապում է ուրարտական susi «ուղղանկյունաձև տաճար»-ի հետ: Հայերենում այն հանդես է գալիս որոշակիորեն իմաստափոխված և նշանակում է արդեն ոչ թե տաճար, այլ ապարանք (ԳՄ «Տեղեկագիր», 1958, N 9):

ՍՈՐԱԿԱԼ – «ախոռապետ» – «Կամ զիարդ Վասակ Սամի-

կոնեան սպանաներ զսորակալ ասպաստանին արքային պարսից» (105):

ՄՐՆԳԱՅԱՐ – «Եւ առ հասարակ թմբկահարք և սրնգահարք, քնարահարք և փողահարք» (196):

ՏԱՊԱՐԻԿ/ՏԱՊՐԻԿ – «Յաղագս Դմայունդ Վսեմականայ, որ իննսուն բիւրուն տապրիկ զօրօքն՝ զոր առաքեաց ի վերայ Արշակայ հայոց» (53, 125): Վ.Առաքելյանը դիտում է որպէս դրափոխության հետևանքով այլակերպված բառ պատրիկ (*Առաքելյան, 1948*): Առավել ընդունելի պետք է համարել «տապարակիր» բացատրությունը (*տե՛ս եր. պետ. համալսարանի գիտ. տեղեկագիր, հատ. 85, պրակ 3, 1963, էջ 26*):

ՏԱՌԱՊԵԼԱՍԷՐ – «Ամենայն մարդ պատուէին զսուրբն Բարսիլոս: Մանաւանդ վասն սրբութեան վարուցն նորա... և կամ վասն աղքատսիրութեանն և վասն տառապելասէր վարուցն» (280):

ՏԵՆՈՆԱՇԱԿԵՐՏ – «Սոյնպէս և առաքելարանս տեառնաշակերտացն, սոյնպէս և ի վկայարանս մարտիրոսացն ամի ամի ժողովեալք...» (7): Բառարանները չունեն այս կազմությունը, բայց կադապարը հարազատ է գրաբարին. *հմմտ.* տեառնամայր, տեառնեղբայր, տեառնորդի... և այլն:

ՔՐԻՍՏՈՆԵԱՄԻՏ – «Եկաց գլուխ եպիսկոպոսաց Ասպուրակ ոմն... այր քրիստոնէամիտ» (224): Ըստ ԱԲ-ի «աստվածապաշտ»:

Ա Գ Ա Թ Ա Ն Գ Ե Ղ Ո Ս

Մեր հաշվարկներով Ագաթանգեղոսի գործում մոտ 550 բառ կիրառված է առաջին անգամ: Այդ բառացանկը ամբողջությամբ այստեղ չենք ներկայացնում: Դա բժախնդրորեն արված է Վ.Առաքելյանի աշխատության մեջ (1987): Գնահատելի է նաև Վ.Առաքելյանի դասակարգումը. հեթանոսական, քրիստոնեական կյանքին վերաբերող բառեր, արհեստ, արվեստ մատնանշող բառեր, իրենց գործառնությունը ցայսօր պահած և հնացած բառեր: Վերոհիշյալ դասակարգումներով ըստ հնարավորին ներկայացվում են «Պատմության» նորաբանություն-

ները: Վերջիններս ներկայացնենք ըստ բառակազմական յուրահատկությունների. նախադաս կամ հետադաս բաղադրիչների հաճախականության հաշվառումով:

ա) նախադաս բաղադրիչներ.

Աստուած- աստուածաբուն, աստուածադրոշմ, աստուածազգեաց, աստուածազգեստ, աստուածակեաց, աստուածակերտ, աստուածակիր, աստուածակից, աստուածահրաման, աստուածամոռաց, աստուածապայծառ, աստուածընկալ, ... Այս բաղադրիչով Ագաթանգեղոսը կիրառել է 55 բառ, որից մոտ 20-ը միակ կամ առաջին վկայությունն է V դարի մատենագրության մեջ:

ամենա- ամենարարութիւն, ամենաբժիշկ, ամենագործութիւն, ամենիմաստ, ամենալցոյց, ամենահաստիչ, ամենապահ, ամենաշնորհ, ամենապարզև, ամենաստեղծ, ամենարարութիւն, ամենուսոյց

Քրիստոս- քրիստոսագործ, քրիստոսագունդ, քրիստոսածանոթ, քրիստոսակեցոյց, քրիստոսամուտ, քրիստոսանշան, քրիստոսապատում, քրիստոսաւանդ...

բարծր- բարծրախառն, բարծրանշան, բարծրապատիւ, բարծրապատում

ամպ- ամպախաղաց, ամպածին, ամպայարկ, ամպաշող, ամպաշուփ, ամպաչու

առաքել- առաքելանշան, առաքելախօս, առաքելածանօթ, առաքելակից

նոր- նորաբեր, նորածնունդ, նորապարգեև, նորատուր, նորաքաղաք

տերև- տերևաբեր, տերևազգեստ, տերևակից, տերևապատ, տերևընկեց

փայտ- փայտագործ, փայտակերտիկ, փայտապաշտ, փայտապաշտութիւն

հոգի- հոգեկից, հոգեխառն, հոգեղէն, հոգեմատեան, հոգեմուխ, հոգեւորական, հոգիընկալ

բ) հետադաս բաղադրիչներ.

-բեր անիծաբեր, արտօսրաբեր, աւրաբեր, աւժտաբեր, աւրհնութիւնաբեր, բուսաբեր, հասկաբեր, հրամանաբեր,

մեղմաբեր, մխիթարութիւնաբեր, Մովսիսաբեր, նորաբեր, ողջունաբեր, պարգևաբեր, վնասաբեր, տերևաբեր, տնկաբեր, քաւութիւնաբեր, քրտնաբեր

-գործ անդրիագործ, աշխարհագործ, առաքելագործ, երկաթագործ, թեթևագործ, համագործ, համաշխարհագործ, ճշգրտագործ, յարութիւնագործ, շնորհագործ, սխրագործ, սնոտիագործ, տախտակագործ, փայտագործ, քրիստոսագործ

-խօս առակախօս, բարեխօս, հանապազախօս, պատգամախօս, տիեզերախօս

-ծին ամենածին, ամպածին, կուսածին, մահածին, մարմնածին, մեղացածին, մրրկածին, ոսկեծին

-մած խաւարամած, հեղեղամած, ջրամած, ստուերամած

-յարկ ամպայարկ, հաստայարկ, հնծանայարկ, ջրայարկ

-նշան առաքելանշան, արիւննանշան, բարձրանշան, բոցանշան, կառանշան, քրիստոսանշան

-պաշտ դիցապաշտ, պատկերապաշտ, ուրուապաշտ, սատանայապաշտ, փայտապաշտ

-պատու առաջապատում, բարձրապատում, ինքնապատում, կարճապատում, մանրապատում, յստակապատում, շնորհապատում, ողջապատում

-սէր ամուսնասէր, բազմասէր, բոլորասէր, խաղաղասէր, կամասէր, հակառակասէր, միասէր, պատկերասէր, պարկեշտասէր, սարսռասէր

-սուն ամարասուն, առաջեաւասուն, «առջևում սնված», դատարկասուն, ձեռասուն, ձմերասուն, վայրագասուն

Ազգաթանգեղոսը -ու կամ -իչ ածանցով դերբայական իմաստով արտահայտող մի շարք նոր բառեր է օգտագործում. խաչահանու, անդորրիչ, առողջացուցիչ, արբուցիչ, խարակիչ, հաճեցուցիչ, հաշտեցուցիչ, հեղծուցիչ, հրդեհիչ, ճաշակիչ, մթացուցիչ, յայտնիչ, նորոգիչ, սնուցիչ, ցոփացուցիչ, քերիչ: Հանդիպում ենք -ակի վերջածանցով մակբայների. աներեւակի, ընդելակի, սովորակի...

Ազգաթանգեղոսի «Պատմութեան» զգալի հատվածներ վերաբերում են քրիստոնեական և հեթանոսական կրոնին, հավատալիքներին, որոնք արտացոլւում են գտել բառապաշա-

րում, այդ թվում և նորաբանություններում:

Այս ոլորտն ընդգրկող բառերը, անկախ հաճախականությունից, պետք է ներառել գրական ոճի շրջանակներում, որն անտարակույս¹ իշխում է «Պատմության» մեջ: Բայց առանձնանում է բառերի մի խումբ, որը ժողովրդախոսակցական կամ բարբառային շերտն է: Հանդերձիկ, մեռոտ «մահկանացու», խերշատանք «խշրտանք», պաղել, քիլ, չքոտել «չքանալ», շքթիմ, ոսնիմ «չորանալ»: Ազաթանգեղոսը մեզ է ավանդել բազմաթիվ բուսանուններ ու ծաղկանուններ, որոնց մեծ մասը այժմ էլ գործառնում է. ասպազան, գաղձն, դկուղ, ժանտափուշ, խայթահար, կայծուկ*, հաճարուկ, համասպրամ, մեղրուկ, մանիշակ, յակրի, յասմիկ, նարգես, շամդիտակ, պատաղիճ, սերկելիլ, սիզաբոյս, սմնակ, սրափուշ, տափափուշ, քնարուկ: Այս շարքում կարելի է նշել. կարմրատանձ, կարմրադեղձ, կարմրախնձոր, որոնք ըստ երևույթին տվյալ մրգի որոշակի տեսակի անվանումներ են: Բերենք ծաղկանուններին վերաբերող մի փոքրիկ հատված. «Սոյնպես և գունակ գունակ և երփն երփն ծաղկանցն, որպես մանրագորն և վարդն և շուշանն և ասպազանն և յասմիկն և անհարն և սմնակն և ներգիսն և շամպդիտակն և մեղրուկն, հորօտն և մօրօտն և մանիշակն. և այլ ամենայն համասպրամ ծաղկանցն և ծառոցն բոյսք բողբոջոցն գարնանւոյն երեւեսցին յետ ձմերանւոյն» (330-331):

Հունարեն մի շարք բառեր, Բ.Սարգիսյանի հավաստմամբ, մուտք են գործել Ազաթանգեղոսի «Պատմության» միջոցով. կոմս, կաթեղրա, լեգեոն; բարբարոս, ողիմպիադոս, կաթողիկէ, պատագրոս, եպիսկոպոս, մեգալէ, մետրապօլիտ, երեց, ամեթ, անագանոս, արքեպիսկոպոս, աւգոստական, բաղսամոն, յասմիկ, մարտիրոս, պաղատ, քարտես (1890, 307): Բ.Սարգիսյանը առանձնացնում է նաև մի քանի հունական ոճեր. ի հալածել կայր, երեւեցուցանէ տալ և այլն: Այս փաստերի, ինչպես նաև մի շարք հունարեն հատուկ անուններում հունական վերջավորությունների առկայությունը (Տրդատես, Գրիգորիս, Եւտաղիոս) բանասերը ցանկանում է

* Կայծուկ բառը կա Ղարաբաղի բարբառում:

օգտագործել որպես «Պատմությունը» հունարենից թարգմանելու փաստարկներ: Փաստերը, ինչ խոսք, հետաքրքրական են, բայց փաստարկունը չի արդարանում:

ՆՅԲ-ՈՒՄ ԶԿԱՅՎԱԾ ԲԱՌԵՐ

ԱՄԱՆՈՐ – «Ժամադրեաց ի տօն մեծ հռչակել, սնոտեացն պաշտաման ի ժամանակի՝ դիցն Ամանորոյ ամենաբեր նոր պտղոց տօնին» (435): ՆՅԲ-ն այս օրինակը վկայում է ամանորաբեր գլխաբառի տակ, որ առկա է որոշ ձեռագրերում:

ԱՆԿԱՐԾԱԿԱՍ «անկասկած» – «Որոց կարի իսկ ուրախութիւն եղեւ և լինի ընդ անկարծական դարձ կենացն» (243):

ԱՆԿՈՒ «հարմար, պատշաճ» – «Եւ ոչ եկամուտ ոք, այլ կամարածուն վայելչութեան, շառաւելն Սովսիսի... օծութեանն անկու, առեալ զպատիւ նախնեացն քահանայութեան» (213): Անկ «պատշաճ» բառի ածանցված ձևն է:

ԱՆՈՒՆՁ «խոր, անհատակ» – «Վասն այնորիկ զծովն անունջ անհամութեան քամեալ» (279): ԱԲ-ի «հատակ չունեցող ծով» բացատրությունը, անշուշտ, վերաբերում է այս օրինակին:

ԱՆՍԹԱՓ «անմոռաց» – «Անսթափ ի մտացն ուշի յիշեսցէ գլիշատակս ծառոյն» (150):

ԱՌԱՔԵԼԱԲԱՆ – «այդ՝ այսու օրինակաւ զամենայն աւուրս կենաց իւրոց առաքելաբան վարեալ» (468): Որոշ ձեռագրերում՝ առաքելական, առաքելարան: Քննական բնագրի առաքելաբան ձևը առարկելի չէ: Ագաթանգեղոսը նույն իմաստով կիրառում է և առաքելախօս (303):

ԱՌԱՋԱԳԻՐ «նախկինում գրված» – «Ձառաջագիր աւետարանն յիշատակելով՝ սկիզբն դնէ» (247):

ԱԲԱՋԱԴԻՐ – «Յափնածիր յաւազադիր սահմանս բարձրացելոցն ընդդէմ՝ հասեալ ի ցամաքակէտն ծիծաղեսցին» (2): ԱԲ-ի «Ավագով դրված սահման» բացատրությունը նկատի ունի այս օրինակը:

ԱՐՏՕՍՐԱԲԵՐ – «... գաղօթս արտօսութեալ» (432): Այլ ձեռագրերում արտասուաբեր:

ԲԱՐԵԽՆԴԻՐ – «Որոց բարեխնդրացն բարութեան ուրախութիւն պատրաստեցին» (252):

ԴԱՐԱԼԻՐ «խոր, ընդարձակ» – «Եւ ածին իբրեւ զծով դա-
րալիր՝ զխաղաղութին» (352):

ԶԱՐՄԱՆԱՏԵՍ – «... ի վերայ խաչիցն կամարք զարմամա-
տէսք ի միմեանս կապեցան» (384):

ԾԱՌԱԽԻԹ ԼԻՆԵԼ «ծառերի արանքում թաքնվել» –
«Նոցա փախուցեալ ծառախիթ տերևապատ լինէին» (147):

ՀՐԵՇՏԱԿԱԿԻՑ «հրեշտակներին ընկերակից կամ հրեշ-
տականման» – «Բայց Աստուած զմարդն միայն բազմապատիկ
փառաւորեաց և մտօք մեծացոյց, հոգեխառն հրեշտակակիցս
խոնարհագոյնս արար» (138):

ՀՐԵՇՏԱԿԱՏԵՍ – «Նոյն օրինակ և ամենայն հրեշտակա-
տեսացն» (166):

ՄԵՆԱԻՈՐԱՍՏԱՆ «վանք» – «... զսուրբն Արիստակէս
բնակեալ յանապատի յիւրում մենաւորաստանին» (452):

ՄԵԶԳԵՏԻՆ «երկրի մեջ, կենտրոնում» – «նա ինքնին
բազուկս ի վեր հարեալ՝ ի մէջգետին անցեալ պարգեւատու լինի
յիւրոցն արժանեացն» (290):

ՅԱՆԱԽՍԱՐԱԾ «լայնատարած» – Բռնաւարեալք ի վե-
րայ յորձանացն յաճախատարած լայնացելոցն դանդաչիցեն»
(5):

ՅՈՐԶԱՆԱԽՈՐ «Իսկ իմ անցեալ սահեալ շրջեալ ի վերայ
յորձանախոր, լայնանիստ... ալեացն» (14):

ՇԱԲԱԹՈՒԹԻՒՆ «շաբաթ, յոթնօրյակ» – «... որ և բովք ի
շաբաթութեան ամացն աշխատութեանց» (346):

ՊԱԿԱՍԱՄՏԱԳՈՅՆ – «Քան զեզն և զէշ պակասամտագոյն
գտաք» (37):

ՊՂԾԱԳՈՒՆԴ – «Ի պղծագունդ այսոց... ոգիքն զազգս
մարդկան աներկիւղ պատեսցին» (164): Բառը կարելի է թարգ-
մանել «պիղծերի բազմություն»: Համանման կազմություն է և
Ագաթանգեղոսի հրեշտակագունդ-ը (377):

ՍԱՀՄԱՆԱԹԱՔՈՅՑ «սահմանափակ» – «Եւ ոչ եթէ անչա-
փակալ բնութիւն Աստուծոյ՝ սահմանաթաքոյց և կողմնափակ
իցէ» (169):

ՍԱՏԱՆԱՅԱՊԱՇՏ – «Գերէր զամենեսեան ի հայրենեացն

աւանդելոց ի սատանայապաշտ դիւական ի սպասաւորութենէն» (408):

ՍԿԶԲՆԱԳՈՐԾ «նախաստեղծ» – «Որոյ սկիզբն արարեալ ուսուցանելոյ յամենաստեղծ յսկզբնագործ ժամանակէն... ամենեցուն աւանդեաց զճշմարիտ գիտութիւն» (133): Վ.Առաքելյանը թարգմանում է «սկզբուն արված»:

ՍՆՈՏԻՍԱՑ «ղատարկ» – «խորհուրդ առեալ, սնոտիմաց խորհուրդ, շինել ի պաշտօն մեհենից աշտարակ մի բարձր» (293): ԱԲ-ի «փուչ խորհուրդ» բացատրությունը նկատի ունի այս օրինակը:

ՍՈՒՐԲԸՆԿԱԼ – «Երթեալ անկանէր զսուրբընկալ արկեղօքն երանելի մարմնոցն քրիստոսական վկայիցն՝ մատուցանել պաղատանս» (396): Սուրբընկալ արկղ պետք է թարգմանել «սրբի տապան»: Ակնհայտորեն Ագաթանգեղոսի կերտած բառն է:

ՍՊԻՏԱԿԵՐԱՍ – «Թռուցեալք ի թռիչս արագութեան սպիտակերամն աղաւնեաց» (309):

ՍՏԵՂԾՈՒԱԾԱԳՈՐԾ – «Ի ստեղծութեամբ գործ ժամանակէ անտի մինչեւ ի վախճանելոյ ժամանակն... ի վեր բերեն գիւրաքանչիւր օրինակ բունոց տերևոցն» (337):

ՎԵՐՆԱՆԿԻՒՆ – «Քանզի խաչն, որ կանգնականն՝ զյաղթականն ցուցանէ, վերնանկիւնն զյաղթութիւնն ցուցանէ» (243):

ՎԵՐՆԱԶՈՒՐՔ – «Զի վերնաջուրցն դրունք բացցին երկնից» (207):

ՓՈՒՍՐԻՆԱԿ «դիմաց, փոխարեն» – «Եւ եղեալ զմեղութիւնս չարչարանացն առաջի, զի ընդ վաստակոցն ճգնութեանցն, ոչ ծրի այլ վարձուցն փոխարինակ՝ բռնութեամբ համբերութեան ըմբռնեցեն» (355):

Ինչպէս տեսանք, մոտ երեք տասնյակ բառեր ՆՅԲ-ում վկայված չեն:

Ներթոհիշյալ բառերը թեւ կան ՆՅԲ-ում, բայց վկայությունները ուշ շրջանից են. աղքատիմաստ, ամենաստեղծ, ամենասփիւռ, անդորրիչ, դիւցանդ, երկարակաց, երկնաչու, երկրաւորութիւն, խաչանիշ, կարծամտեմ, հայրապետական, մեծապանծ, յաճախատ, նորածնունդ, շնորհապարգեւ, պարգեւաբեր, պարգեւառու, պարտառու, սնուցիչ:

Եղիշեի «Վասն Վարդանայ և Հայոց պատերազմին» գիրքը հնուց ի վեր ընթերցվող և ժողովրդին հայրենասիրության ոգեկոչող երկ է: Նրա շատ ոճեր ու դարձվածներ այսօր էլ հնչում են գրավոր և բանավոր խոսքում: Ստեղծագործելով ժամանակագրորեն ավելի ուշ, քան Եզնիկը, Բուզանդը, Կորյունը, անշուշտ ծանոթ լինելով սրանց և դասական շրջանի այլ գործերին՝ Եղիշեն մնաց ինքնատիպ հեղինակ. նրա գործի բառապաշարում առանձնանում են զգալի թվով բառեր, որոնք առաջին անգամ շրջանառության են դրվել ոսկեդենիկ մատյանում: Այդ կարգի բառերից են. աճեցական, ամենավաստակ, ամլորդի, ամիճ, ամպարտքաշ, այլակոյն, անանկողին, անախտաւորութիւն, անդաճել, անդրագոյն, անկողնարկ լինել, անձընտիր, անձրևաբեր, անյազ, անորովայն, անտրտմական, անվերարկու, ապարթանել, առաւելաբանութիւն, աստուածաստեղծ, բազմաբոց, բազմաճճի, բաժակակալ (Բուզանդը ունի բաժակալ), բանտարգելիք, բարձրադեզ, բարձրաճիչ, բացահայեաց, բնականունդ, բոզպայիտ, գերարտօսը, գեշաքարշ, գունիզ, գրակարդաց, գրուահ, դայեկասնունդ, դատակնիք, դար ի թիւր, դեհապետ, դենիմազդեզն, դենպետ, դիւրատար, երահիկ, երեքպատիկ, զանդիկ, ընդաճեմ, ընդաւազիմ, ընկերաբար, թագաւորաբնակ, թանձրադանդաղ, թրուշայ, ինքնասաց, լեռնորդեայք, լեռնադաշտ, լուսազգեստ, խախամոք, խառնամուխ, խոնաստան, ծակոտուած, ծիւ, կանգնորդ, կապճաթիւ, կենցաղասեր, կեշտ, կռանակուռ, համակոյն, հանդիսապետ, հասարակաբաշխ, հաւատաւոր, հաւալոց, հաւատոյ աչք, հինաբար, հրային, ձեռնպահ լինել, ձիւնեղէն, ճաշատեղ, ճարտարաբանութիւն, մատեան գունդ, մարզիկ, մարզպետ, մենանոց, մովպետան մովպետ, մսեղէն, մրճոտիմ, շահախոռապետ, շկօթակ, որոտածայն, պահլաւիկ, պարմայեմ, պարսկադեն, պետմոգ, պնդադեսպան, պսակակից, պսակասեր, պրկոց,

ջերմախառն, սալայատակ, սրտաթափումն, տաշտախիլ, տարաբաժին, փայքարիմ, փուրսիշ, քսակագին, քրպիկար/քրտիկար, օշնան:

Անցնենք որոշ բառերի պարզաբանմանը. գրուահ, դար ի թիւր անստույգ բառեր են:

Փայքարիմ եղիշեն կիրառել է մեկ անգամ. «Եթէ փայքարիմք ընդ նմա, նա տեղեկագոյն է քան զամենայն վարդապետս աշխարհիս» (158): Մեկ այլ տեղ ունի պայքարեմ, երեք անգամ էլ կիրառել է պայքար: Մենք փայքարիմ-ը չենք ուղղում: Բանն այն է, որ եղիշեի ապրած ժամանակաշրջանում պայքար պարսկերենում ունեցել է փայքար հնչումը: Հեղինակը կիրառել է որպես օտար բառ (որպես ուղղակի խոսք այն հնչում է պարսկի շուրթերից):

Ընդաճեմ – «Եւ հանդէս առնէր ամենայն ուսմանց և ընդաճէր զմոգութիւնն և զքաւղեութիւնն և զամենայն ուսմունսս աշխարհին իւրոյ» (15): Բառը ունի «քննել» իմաստը: ՆՅԲ-ի միակ վկայությունը այս օրինակն է՝ տե՛ս անդաճեմ հղումով: Ընդաճեմ-ը համարում ենք հետին սրբագրում: Գիշտը անդաճել-ն է, որը իրանական փոխառություն է և նշանակում է «քննել»: Նկատենք, որ աճեմ-ը երբեք «քննել» իմաստը չունի: Ի դեպ, անդաճեմ մույնպես միակ անգամ կիրառել է եղիշեն. «Յորժամ սկսաւ անդաճել և քննել զամենայն ուսմունսս և հաստատութեամբ ի վերայ եհաս, առաւել վեհ գտանէր զօրէնս քրիստոնէից» (83):

Եղիշեի գործում զգալի թիվ են կազմում իրանական ծագում ունեցող բառերը: Դա պատահական չէ: Չէ՞ որ նրա երկում զգալի է նաև իրանական իրականության նկարագրությունը, որին, նաև պարսկերենին քաջատեղյակ էր նա: Առաջին անգամ նա է գործածում պարսկական կրոնին, նրա տարբեր աղանդների մերաբերող մի շարք տերմիններ, որոնք բառային վկայություններ լինելուց զատ, կարևոր տեղեկություններ են այդ բնագավառի մի շարք հասկացությունների պարզելու համար: Արևելագետ Ֆրայը, օրինակ, եղիշեի ներքոբերյալ նախադասությունից «Գիտէր և զամպարտքաշն, ուսեալ էր և զբոզպայիտն, ունէր և զպահլաւիկն և զպարսկադենն: Քանզի այս հինգ կեշտք

են, որ զրաւեալ ունին զամենայն օրէնս մոգութեանն, բայց արտաքոյ սոցա է միւս ևս այլ վեցերորդ զոր պետմոգն կոչեն» (144) ենթադրում է, որ պահլաւիկ և պարսկադէն հյուսիսային և հարավային մոգերի դպրոցներ են կամ աղանդներ: Այսինքն, եղիշեն նկատի ունի պարթևների ու պարսիկների կրոնական-աղանդային առանձնահատկությունները (*Փբայ՝ 1972, 274*):

ՆՅԲ-ում ՉԿԿԱՅՎԱԾ ԲԱՌԵՐ

ԱՍՏՈՒԱԾԱԶԱԻԱԿ – «Միհրն աստուած մայրածին էր ի մարդկանէ և թագաւոր աստուածազաւակ» (35):

ԳԵՏՆԱԲԵԿ – «Ցերեկ արեւակեզք էին և զամենայն գիշերսն գետնաբեկք» (202):

ԳԵՏՆԱՆԿՈՂԻՆ – «Համարեալ էին մոցա դարափորքն իբրեւ զյարկս բարձրաբերձ և գետնանկողինք իբրեւ զնկարեալ պատշգամս» (124):

ԽՈՆԱՍՏԱՆ – «Եւ իբրեւ եհաս մամակն յարքունիս և ընթերցան ի մեծի տան խոնաստանի... բազումք... գովէին զպատասխանիսն» (41): Բառը անշուշտ իրանական փոխառություն է, որի ստույգ իմաստը հստակ չէ: ԱԲ-ն համարում է պարսից թագավորական պալատի պատվո անուն, Արմ-ը՝ «պարսից թագավորական պալատը կամ ատյանը»: Խոնաստանը կարելի է թարգմանել և «սեղանատուն». պրս. *xuao* «սեղան» բառից: Այս արմատը հայերենում ներկայանում է խան, խուն, խոն ձևերով:

ՄԱՅՊԵՏ – «Արդ զվեց զայս սուրբս յանապատին՝ ուր կատարեցին, Դենշապուհ և մոգպետն և ջնիկան մայպետն...» (179): Իրանական վարչական-կրոնական տերմին է:

ՊԱՏՈՒԱՎՈՐՔ – «Կապեր և զպատուաւորսն և զխոյրն ոսկեղէն դներ ի վերայ» (136): ԱԲ-ն և Արմ-ը մեկնում են «զխի մագի զարդ»: Ըստ Աճառյանի «Անձնացեաց օրինակը դնում է «զպատիւ վարսն (այն է վարսակալ), որով պատուաւորք դառնում է ձեռագրական վրիպակ»: Բառը հակված ենք համարելու իրանական փոխառություն *pati* մասնիկով, *vars* արմատով (գուցե ձեռագրակա՞ն վրիպակ). *հմմտ.* մուճակ-պատմուճակ:

ՓՍԻՐԱՅ – «Քանզի և չճանաչէին իսկ գխտտեղէնսն ընտրել ի միմեանց. մի գոյն թխութեան փսիրայիցն և մի գոյն սեւութեան սնարից բարձիցն» (200): Ե.Տեր-Մինասյանը թարգմանում է. «Միևնույն թուխ գույնն ունեին փսիաթները և միևնույն սև գույնի էին գլխատակերի բարձերը» (178):

Փսիաթ– Արմ-ը բացատրում է «պրտուից (ճիլից) կամ արմավի տերևից հյուսված ծածկույթ»: Փսիրայ ուղղագրական վրիպակ չպետք է համարել: Արդի հայերենի խսիր, ինչպես նաև Փարպեցու փրիսայ ձևը խոսում են այդ բառի իսկության օգտին:

Եղիշեի բառապաշարը սերտ ընդհանրություններ ունի Ոսկեբերանի որոշ գործերի հետ. ամրական, անթողի, անշքութիւն, անծախական, ապաժոյժ, բամբասասէր, գետամոյն, դաստառակ, խշտեակ, կոփիւն, հաւատարմագոյն, մարդախոշոշ, մարդկաբար, միապէս, մղձկեն, մոլեգնոտաբար, մրճոտիմ, յարածուփ, ոտնփոխ լինել: Եթե Եղիշեն չի մասնակցել Ոսկեբերանի գործերի թարգմանություններին, ապա անշուշտ, ծանոթ է եղել դրանց:

Մ Ո Վ Ս Ե Ս Խ Ո Ր Ե Ն Ա Ց Ի

V դարի հայ մատենագրության գործերից ոչ մեկը այնքան մանրագնին քննության չի ենթարկվել, ինչքան Խորենացու «Հայոց պատմությունը»: Լինելով հայ ժողովրդի հազարամյակների հնություն ունեցող հավաստի, ճշմարտապատում ու քննական պատմություն՝ Խորենացու երկը վաղուց ի վեր գրավել է պատմաբանների, բանասերների ու լեզվաբանների ուշադրությունը: Այդ գործը դարեր շարունակ դասագրքի համարում է ունեցել, և շատ սերունդներ հայոց պատմությանը ծանոթացել են այդ գրքով, որը միաժամանակ եղել է հետագա «պատմությունների» ու հետազոտությունների հենքը:

Տարբեր դարերում Խորենացու պատմությունը ունեցել է բազմաթիվ ընդօրինակումներ. բուն տեքստը ենթարկվել է սրբագրումների, աղավաղումների: Դա բնական է: Դրա հետ կապված բնական է և բանասիրական տարակարծությունը: Գ.Տեր-Մկրտչյանը Խորենացու տպագիր պատմությունը (1881,

Տիխոն) համեմատելով, այսպես կոչված, Ներսես գրչի օրինակի հետ, եզրակացնում է. «Խորենացու բնագիրը ենթարկվել է ծայրե ծայր, երբեմն բառական, երբեմն ամբողջ նախադասությամբ, թարգմանության» (*Գ.Տեր-Սկրտչյան, 1979, 25*): Նա գտնում է, որ «թարգմանությունը» կատարված է դժվարից դեպի հեշտը, գրական մտածողությունից դեպի ժողովրդականը: Տրամաբանական է Գ.Տեր-Սկրտչյանի ենթադրությունը, որ այդ պարզեցումը աշակերտների կամ ընթերցողների համար է:

Քննական հրատարակության մեջ հաշվի են առնված ինչպես ձեռագրական բազմաթիվ տարբերակներ, այնպես էլ բառաքննական բազմաթիվ ճշգրտումներ ու լրացումներ:

Շոխ ու հարուստ է Խորենացու բառապաշարը: Այդ է հաստատում հենց միայն եզակի կամ առաջին անգամ վկայված բառերի քանակը: Ստորև ներկայացնենք դրանք. ագանելի, ագատաբար, աթերայ, ախտակցել, ախտահաւաք, աղամարութիւն, աղխազուր, ամարաստան, անուսնաւորեն, ամպրոպային, ամսական, այգանալ, այրասիրտ, այրութիւն, անաճելիութիւն, անարժանաբար, անբաղձալի, անընչասիրական, անժուժաբար, անլիութիւն, անխալամ, անխաղաղութիւն, անկարգապէս, անհարազատ, անհարթարար, անհոգող, անձնագեղ, անձնացոյց, անձրեւայոյգ, անմատչելի, անմաքրասէր, անմիաբանեն, անյաջ, անյապաղաբար, անյայտաբար, աննախանձոտ, անունող, անպայազատ, անպարար, անսայթաք, անյայտաբար, անրջական, անքթթելի, աշխարհագրութիւն, աչագեղ, աչեղ, աչիկ, ապշոպ, աջակցել, առանձնականութիւն, առաջել, առասպելեն, առատագիւտ, առատաձեռնութիւն, առոգաբարձ, աստեղաբանութիւն, արագաբանութիւն, արդարաբան, արդարաբար, արդարադատապէս, արեգակնակ, արեգակնաճեն, արեգակնատես, արժանափառ, արտախուր, արքայօրէն, աւթանոց, աւթարան, աւտարածին, աւտարանոց, բազմաբնակ, բազմաբիր, բազմաբիրանոց, բազմամարդացուցանեն, բազմամետաքս, բազմաշրջութիւն, բազմարուեստ, բաջա-

դիմ, բարեգեղ, բարեգնաց, բարեհարմար, բարձրագագաթն, բարձրահասակ, բարձրայօնութիւն, բացափայլեմ, բացեա, բերանբացութիւն, բլրածն, բնագաւառ, բոլորատեգ, բոցակնագոյն, բքարար, գագաղանամ, գեղապատշաճ, գեղեցկաղեղն, գեղեցկոտն, գերազանցորեն, գերապայծառ, գերապանծ, գթածութիւն, գիմեւէտ, գլխանոց, դաշտաբերան, դառնահոտ, դատասաց, դեղակուր, դեռահաւատ, դժնահայեաց, դժոխեւանելի, դժուարամուտ, դժուարահաւաք, դիպածգութիւն, դիպաղեղն, դիւազգի, դիվանագիր, դիւրածել, դիւրամուտ, դիւընկեց, դիւցագնութիւն, դիւցընկեց, դոյնպէս, դրանիկ, եգերումն, եկաւորութիւն, եղբայրանոց, եղեգնապուրակ, եղեմնարկու, ետեղագրեմ, երեքթեւեան, երեքտակեան, երիտասարդապէս, երիտասարդուհի, երկայնածն, երկթերթի, երկլուսնեայ, եօթնապարսպեան, զակատեալ, զինատեաց, զկծանք, զոյգոստատ, զուգաբան, զուգագեղեցիկ, զուգահայր, զուգահաւասար, զրաբան, զրահազգեստ, զրուցել, զրուցաբան, զրուցաբանութիւն, ընդդիմակայեմ, ընդդիմափառ, ընթերցասէր, ընծայատուր, ընչեղագոյն, թագաւորապէս, թեթևակի, թերուղիղ, թուլասրտութիւն, ժահադիմութիւն, ժայռաւոր, լայնատարած, լաւակամ, լեռնոտեայ, լծադիր, լօռաւետ, խազմ, խայտակն, խարդաւանակ, խելագարանք, խժական, խոյրարար, խոժոռագեղ, խոստովանողական, խորական, խորայտակ, ծաղկակալ, ծաղկաւետ, ծիրանազգեստ, ծննդաբանութիւն, ծովահայեաց, կաթոտ, կակագեմ, կաճեայ, կայկայիմ, կայծակնաճաճանչ, կաշեայ, կարակնածն, կարկտածու, կարկաջահոսութիւն, կենախուզ, կենսասէր, կիսակտուր, կծի, կոկորդախօս, կողմնակալ, կողմնակալութիւն, կողմնապետ, կոպտարանծն, կուսակցել, կռանահանութիւն, կտցաւոր, կրկնագրել, հագներգութիւն, հակառակաթոռ, հակառակութիւն, համախորհուրդ, համապատիւ, համառօտասիրութիւն, համբավաբեր, համբաւատեմչ, համեղ, հայկական, հայկազն, հանգիտակ, հանճարաբանութիւն, հասակեայ, հասողութիւն,

հաստաբազուկ, հաստաղեղն, հարստի, հարցասիրութիւն, հաւասարասէր, հաւորսութիւն, հեղձամահ, հեշտաբար, հետահաս, հիւպերետ, հնագրութիւն, հնախօս, հնախօսութիւն, հովտածէ, հօտարան, հրաշակերտեմ, հրաշակերտութիւն, հրաշատեսիկ, հրապուրական, ծեռէք, ծեռնտութիւն, ճգնագգեցիկ, ճենագնեայ, ճշմարտապատմութիւն, մակագրութիւն, մանրախոյզ, մառախլուտ, մարդադաւ, մարդադաւութիւն, մեծախօս, մեծահասակ, մեծիմաստ, մեղուական, մետաքսագործ, մերագնացեալ, մթերանոց, միջակտուր, մկնդահար, յակնթակապ, յայտարարութիւն, յոլովածեռն, յունասէր, նախակարգեմ, նախագլուխ, նախարարագն, նաւալիւղ, նաւացռուկ, ներդեայ, ներկածոյ, նշանագրութիւն, նոյնագաւակ, նորակտուր, նորատի(ք), շամփուր, շամփրել, շատակեր, շատահանճար, շեշտ, շիկափոկ, շկապեմ, շղթայատող, շողապես, ոսկեօղ, ոսոխասէր, ուժգնասիրտ, ուղղախօսել, ուղղամտութիւն, ուսումնատեաց, ուրանօր, ուրկութիւն, չարաբանեմ, չարափառ, չարափառութիւն, չափաբերապէս, չուաւորութիւն, պաղանձաւ, պայծառատէս, պայմանեմ, պատանեկիկ, պատառաքաղ, պատառուած, պարածածկեալ, պարականոն, պարկացիր, պետանամ, պերճաբար, պնակածէ, պռստել, քախումն, քնարահար, քոկատ, սաղապաճեմ, սաղապեցուցանել, սայլորդ, սաստկասառույց, սարաս, սաւուղաբար, սեղեխաբար, սեպ, սիրաբան, սիրաբար, սիրամարգաշատ, սկայաբար, սկզբնատիպ, սմբականոխ, սովորաբար, սրագլուխ, վաղր, վառուած, վատակերպի, վարդապետուհի, վերարկու, վերջակացութիւն, վերտ, վեսական, վիմատաշ, վիուկութիւն, վսեմանամ, տաժանելի, տայգր, տապալ, տափակաքիթ, տեղեկիկ, տիրագլուխ, տնկալուչ, փափկածայն, փծուկ, փոխանակաբանել, քաջագգի, քաջագանգուր, քաջագաւտի, քաջախոր, քաջաղեղն, քաջագուն, քաջատոհմիկ, քաջարշաւ, քաջափառութիւն, քաջերէ, քաջընթացիկ, քարագագաթն, քարակ-

տուր, քեմխտապատ, քեռայր, քուաւոր, քուշանաբար, քրքմաւետ^{*}:

Սրանք են հիմնականում այն բառերը, որոնք գրավոր քաղաքացիություն են ստացել խորենացու միջոցով: Վ.Առաքելյանի տվյալներով այդ կարգի բառերի թիվը հասնում է մոտ 800-ի (1981, 177): Մեր հաշվումներով այդ թիվը 380-400-ից չի անցնում: (Վ.Առաքելյանի ցանկի շատ բառեր վկայված են V դարի երկրորդ կեսի, այլև դասական շրջանի որոշ հեղինակների գործերում): Առաջին վկայությունների թվով խորենացին գերազանցում է V դարի բոլոր հեղինակներին, երկրորդ տեղն է Ագաթանգեղոսը. մոտ 300 բառ:

Նկատելի է, որ խորենացին սիրում է ան- ժխտականով բառեր գործածել (տե՛ս ցանկը): Այդ ածանցը գործում էր և խորենացուց առաջ: Նրա վկայությունները հիմնականում գրական ոճի ոլորտն են ներառում: խորենացին շրջանառության է դրել գեղ արմատով մի քանի կազմություններ. անծնագեղ, աչագեղ, գեղապատշաճ, խոժոռագեղ, խոշորագեղ: Սի շարք նորաբանություններ կան -ւետ-, -անոց-, -իկ ածանցներով: Ինչպես նկատելի է, գերիշխում են բարդ բառեր: «Բաղադրյալ բառերի մի մասը անշուշտ հայ ժողովրդի կազմածն են, բայց դրանք այնպես են մերվել խորենացու բարձրաոճ գրական բառերի ոլորտում, որ դրա առանձնացումը այնքան էլ դյուրին չէ» (Առաքելյան, 1981, 180): Վ.Առաքելյանը հիմնականում բերում է պարզ ածանցավոր ձևեր, ինչպես՝ աչեղ, աչիկ, ամսական և այլն: Բարդ բառերի մի մասն էլ անշուշտ խորենացին չի ստեղծել, այլ վկայել է. ամարաստան, բարձրահասակ, լայնատարած, ծիրանագգեստ, ծովահայեաց, կռանահանութիւն, հաստաբազուկ, հետահաս, շատակեր, պաղանձաւ, սրագլուխ, տափակաքիթ... Իսկ ներքոգրյալները, որոնք գրական ոճի ոլորտին են պատկանում, թերևս խորենացու ստեղծածն են. արեգակնաճենմ, արժանափառ, դիւանա-

* Այս ցանկի մի շարք բառեր թեև կան ՆՅԲ-ում, բայց վկայությունները խորենացուց չեն, այլ հետին հեղինակներից այրուքին, անբաղձալի, բացեայ, կենասէր, հրաշակերտութիւն, նախակարգենմ, ուրանօր, տաժանելի...

գիր, ընդդիմափառ, կրկնագրել, հագներգութիւն, ճշմարտապատմութիւն, պերճաբան, սաստկասառռոյց, սկզբնատիպ...

Անշուշտ, հարկավոր չէ մանրամասնորեն տարբերակել հեղինակի ստեղծածը օգտագործածից: Դա հնարավոր չէ, հատկապես 1600 տարվա հնության պատճառով: Պարզ է մի բան. հորենացու վկայած բարդ բառերի շարքում առանձնանում է երկու շերտ՝ ժողովրդախոսակցական և գրական:

Խորենացու բառապաշարը ընդհանրություններ ունի V դարի այլ հեղինակների հետ: Բուզանդիի հետ ունեցած որոշ ընդհանուր բառեր արդեն նշել ենք Բուզանդին վերաբերող բաժնում:

Ագաթանգեղոս - Խորենացի. Բարեացապարտ, գեղութիւն, երկրակոխ, երկրագործութիւն, խտրոց, կախաղան, մենաստան, ցուց...

Եղիշե - Խորենացի. անդունդ, բնակ, բռնադատել, գարնային գիներեր, լեռնադաշտ, անդութիւն,

Փարպեցի - Խորենացի. այծեամն, անժուժկալ, անժուժկալութիւն, առիւծաբար, արգաւանդ, ավանդութիւն, բազմաբեր, բազմազան, բազմափայլ, բարեխառնութիւն, գեղեցկապէս, դիւազգի, դիւահալ, դիտանոց, երիտասարդութիւն, երկնաքար, երկրային, զենընկէց, ընդդիմութիւն, թագաւորազն, կորովածիգ, կրակապաշտ, մարդահաճութիւն, մահաթոյն, մուրացած, նետածգութիւն, պայիկ, պուղեն, սաղմոսերգու, քաջածի...

Բուզանդի, Ագաթանգեղոսի, Եղիշեի և Խորենացու վերը նշված ընդհանրությունները դրսևորվում են սովորական, ժողովրդախոսակցական բառերի մեջ, և դրանք ըստ երևույթին ազդեցությամբ բացատրելը ճիշտ չէ: Ինչ վերաբերում է **Փարպեցի - Խորենացի** ընդհանրություններին, ապա այստեղ գերիշխում են գրական բառերը, որոնք, եթե մեկը մյուսից ազդեցություններ չեն, ապա, ուրեմն, V դարի երկրորդ կեսի լեզվի ընդհանուր միտումի արտահայտություն են: Ընդհանրապես բառապաշարային ընդհանրությունները զանազան բանասիրական խնդիրների լուծման փաստարկումներ են եղել: Փորձեր են արվել, օրինակ, Աստվածաշնչի որոշ հատվածների

թարգմանությունը վերագրել հորենացուն: Բառապաշարային ընդհանրությունները միշտ չէ, որ կարող են վկայել երկու հեղինակների աղերսների կամ մեկը մյուսից ազդվելու մասին: Վերջին հաշվով, բառապաշարի հարստությունից կարող են օգտվել տարբեր հեղինակներ՝ առանց մեկը մյուսին ծանոթ լինելու: Բայց երբ այդ ընդհանրությունը բացահայտ է և ի հայտ է գալիս տվյալ ժամանակահատվածի համար ոչ հաճախական բառերի ու բառածևերի առկայությամբ, ապա առաջ է գալիս փոխազդեցության կամ ազդեցության հարցադրումը:

Թարգմանական գրականությունից Ալեքսանդրի պատմությունը/Սուտ Կալիսթենես և Փիլոնի որոշ գործեր բառապաշարային մեծ ընդհանրություններ ունեն հորենացու պատմության հետ: Բանասիրության մեջ իշխում է այն կարծիքը, որ Ալեքսանդրի պատմությունը թարգմանել է հորենացին: Այդ գրքի և հորենացու բառապաշարից նշենք մի քանի ընդհանրություններ. աթերայ, անուաւոր, աստուաժուհի, ինքնահաճոյ, խնդամիտ, կիսափողփող, հինգակատար, հոմիշխան, ձիարձակարան, ձիավարեն, ճարակաւոր, յարմարութիւն, նգախարխար, վիմուտ, քաջաբեր, օդագնաց...

Յ.Տաշյանը, բարձր գնահատելով Ալեքսանդրի պատմությունը, նշում է.

ա) Լեզուի կողմանէ առանձին ուշադրութեան արժանի գործ մըն է: Հինգերորդ դարի վերջին կիսուն այն գրութեանց կարգէն է, որոնք թէև չեն պահած մեսրոպեան նախնական դպրոցի անխառն նկարագիրը, բայց որոնց քով Լեզուն իւր կորովը պահած է:

բ) Մեծ ճարտարութեամբ յօրինուած են անթիւ ուսումնական բառեր:

գ) Լեզուի կանոնաւորութեան կողմանէ ունի ոչ սակաւաթիւ խոտորումներ հնագոյն մեսրոպեան Լեզուէն, բայց ընդհանրապես կանոնավոր է: Ոչ մեսրոպեան ոճեր ու բառեր զօր օր. ըստ յունի յօրինուածներ (արտ, գեր, վեր և նման շատ մասնկամբք բաղադրութիւնք և այլն) պակաս չեն, բայց և ոչ բազմաթիւ: Քիչ մը աւելի են մեսրոպեանց ոչ այնքան հաճոյ դարձուածքներ և երբեմն նաև անքերական կտորներ: Բայց այդ-

պիսիք քիչ շատ ամեն գրոց մեջ կան» (*Տաշեան, 1892, 200-205*): Այս գնահատումները ըստ էության վերաբերում են մաս խորենացուն:

Խորենացու և Փիլոնի բառապաշարային ընդհանրությունները ավելի քան զգալի են. ամենազան, ամենապատիկ, աշխարհաւարեմ, աւելագործ, բազմօրինակ, բնաբար, գեղեցկաբար, գեղեցկապէս, գրաւորական, դիւցազնաւալ, եռայարկ, զենարան, ընծուիմ, թշնամական, ինքնահաճ, ինքնասիրութիւն, խոհականութիւն, ծննդաբանել, ծովագնաց, կաղաղ, կենցաղօգուտ, կնամարդի, կրկնայարկ, համբարոյ, համանմանակի, հեզիկ, հեշտասէր, հետախոյզ, հետեւակեմ, հրեշտակագնացութիւն, մերձագաւակ, միայնաբար, մօտասէր, յարմարութիւն, յարմար, յամոյր, յաւետախաղաց, նաւագնացութիւն, նեղուց, նոյնասերմն, շատաջուր, ուժեղութիւն, սկզբնատիպ, սղոխ, վարժարան, տառ, ցականել, փորագրել, քաղցրախառնութիւն, քաջամատն, քաջօրէն, օղագնաց:

Սա, անշուշտ, ընդհանուր բառապաշարի ամբողջական ցանկը չէ, կան մաս բազմաթիվ բառապատճենման, բարդ բառերի կազմության, ոճական ընդհանրություններ, որոնցից հետևում է. կամ ա) Խորենացին մեծապես ծանոթ է եղել Փիլոնի թարգմանություններին, բ) Փիլոնի մի շարք գործեր թարգմանել է Խորենացին:

Ավելի հավանականը վերջինն է: Խորենացու նման բժախնդիր քննախույզ անձը հազիվ թէ իրեն «ազատություն» տար ուրիշի բառերն ու ոճերը կիրառելու: Խորենացին մեծ բառաշինարար էր: Իսկ նրա Պատմության մեջ վկայված նորաբանությունները իրենց բնույթով հարազատ են Փիլոնի գործերի բառապաշարին:

Ուսումնասիրողները մեծ ընդհանրություններ են նշում մաս Փիլոնի և Ալեքսանդրի պատմության միջև (*Տաշեան, 1892, 210-211*): Հայտնի է, որ այս երկու գործերը թարգմանվել են V դարի երկրորդ կեսին: Ուրեմն, սա լրացուցիչ փաստարկ է Խորենացու պատմությունը նույնպես այդ ժամանակաշրջանում գրված լինելու օգտին:

Համառոտակի անդրադառնանք խորենացու «հունաբանությանը»: Այժմ ապացուցված կարելի է համարել, որ հունաբանությունը կազմավորվել է V դարի երկրորդ կեսին, թեև հունաբանության հետքեր նկատվում են նույնիսկ դասական մատենագրության մեջ (*Ա.Մուրադյան, 1971, 85*): Լեզվական այս դպրոցը ձևավորվեց հունական գրականության թարգմանության գործընթացում:

Թարգմանիչները ցանկանալով հարազատ մնալ հունարենին, նաև դժվարանալով գիտական տերմինների թարգմանության գործում, շրջանառության էին դնում արհեստական ձևեր, հայերենին ոչ հարազատ բարդություններ: Ինչո՞ւ և ինչպե՞ս է արտահայտվում խորենացու հունաբանությունը: «Խորենացին այն սահմանագիծն է,— գրում է Վ.Առաքելյանը,— ուր լեզվական հարթությունը վերջանում է, ու մեր առջև կանգնում է գրական մի բարձունք իր լեզվաոճական նորություններով և ուղղությամբ: Ամենից առաջ մշենք, որ գրական լեզվի մշակումը տարերային ենթագիտակցական ուղուց հանվում և դրվում է գիտակցական ու ռաբանական որոշակի ըմբռնումների սահմանագծում» (*1981, 174*):

Քաջատեղյակ լինելով հունական մշակույթին ու գրականությանը, լինելով այդ գրականության քարոզիչն ու թարգմանիչը՝ խորենացին ձգտում էր, նախ և առաջ, հունարենի հարուստ ոճերը, գիտական տերմինաբանությունը հաղորդակից դարձնել ժողովրդին: Այս առաջադիմական սկզբունքը որդեգրելով՝ նա գիտակցաբար շրջանառության է դնում բառեր, որոնք կամ հունարենից թարգմանություն են, կամ պատճենում, դրան զուգընթաց շրջանառության է դնում բար, պես, գեր... և այլ մասնիկներ, որոնք հայերենում կային, բայց բառակազմական նոր գործառություն են ստանում: Որոշ օրինակներ կբերենք քիչ հետո, բայց նորից մշենք, որ խորենացու նորանվանությունները այնքան սերտաճած են բուն հայերենի հետ, և այդ ձևերն ու բառերը այնքան զգուշավոր ու նպատակին են կիրառված, որ ոչ թե խաթարում են ոսկեղենիկ գրաբարը, այլ նրան նոր բարձրության են հասցնում՝ ունակ դարձնելով գիտական, փիլիսոփայական մտքերի արտահայտմանը: Եթե

հունաբանությունը հասկանանք այն բոլոր արհեստական ու խրթին ձևերի ամբողջության մեջ, որ ներկայանում է V և հետագա դարերի որոշ գործերում, ապա իրավունք ունենք հորենացուն հունաբան չհամարելու: Հունարենի ազդեցությունը նրա մոտ ի հայտ է գալիս.

ա) որոշ մասնիկների գործածությամբ

առ- (առանձնական, առանձնականութիւն)

արտ- (արտափայլել, արտասահման, արտասահմանութիւն)

բաղ- (բաղդատել)

բաց- (բացագոյն, բացափայլել, բացեայ)

գեր- (գերազանցել, գերազանցօրէն, գերապայծառ, գերապանծ)

հակ- (հակամիտել, հակառակ, հակառակաթող, հակառակող, հակառակորդ, հակառակութիւն)

հոմ- (հոմանուն)

յար- (յարահետնող)

շար- (շարագիր, շարագրել, շարագրութիւն, շարադասել, շարայարել)

պար- (պարածածկել, պարածածկեցուցանեմ, պարականոն, պարայածել)

ստոր- (ստորագիր, ստորագրութիւն)

վեր- (վերաբանութիւն, վերագոյն, վերագրել, վերադէտ, վերածնութիւն, վերակացու, վերակացութիւն, վերահայեցողք, վերահասու)

տար- (տարակուսանք, տարակուսել, տարապարտուց)

փոխ- (փոխատրել, փոխարկել, փոխանակ)

Ինչպէս տեսնում ենք, նշված մասնիկներով կազմված ու կիրառվող բառերը մեծ թիվ չեն կազմում:

բ) մակբայակերտ բար, պէս *ածանցների առատ գործածությամբ* (երբ առանց այդ ածանցի էլ ակնհայտ է տվյալ արմատի մակբայական իմաստը). անկարգապէս, անընչասիրաբար, անժուժաբար, անյայտաբար, արդարադատապէս, արդարաբար, հեշտաբար, չափաբերապէս, սեղեխաբար:

գ) -ուրիւն *ածանցով գոյականների կիրառությունը*. աշխարհագրություն, բարձրայօնություն, եկաւորություն, զրուցաբանություն, կարկաջահոսություն, հանճարաբանություն, հնախօսություն, չուաւորություն, վիկություն, քաջափառություն և այլն:

դ) *նորահնար բարդ բառեր, որոնց զգալի մասը հունարենից պատճենում կամ թարգմանություն է*. արժանափառ, դատասաց, դիպածություն, զուգաբան, զուգագեղեցիկ, ծննդաբանություն, հանճարաբանություն, ճշմարտապատմություն, փոխանակաբանել...

Որոշ բառերի հունարենից կրած ազդեցությունը զգացվում է նաև շարադասությունից. սիրաբան (փխն. բանասեր), մերձագաւակ (փխն. գաւակամերձ): Հունարենի այսօրինակ ազդեցությունն, իր հերթին, այլևայլ փաստերի հետ վկայում է, որ Խորենացու «Պատմությունը» գրվել է V դարի երկրորդ կեսին: Նման կարգի հունաբանությունները բնորոշ էին այսպես կոչված կրտսեր թարգմանիչներին, որոնց ներկայացուցիչն էր Սովսես Խորենացին, որի անունն ու հռչակը այսօր հայտնի է ոչ թե որպես թարգմանիչ, այլ V դարում գրված «Հայոց Պատմության» հեղինակի:

Խորենացու բառապաշարը V դարի ինքնուրույն գրականության մեջ ամենահարուստն է: Ծիշտ է, օգտագործված բառերի ընդհանուր թվով Ագաթանգեղոսը, Բուզանդը և Փարպեցին առաջ են անցնում Խորենացուց, բայց բառարանային բառերի քանակով առաջնությունը Խորենացունն է՝ 7630 (Ագաթանգեղոսը՝ 7337, Բուզանդը՝ 4592): Խորենացու կիրառած բառերի մեծագույն մասը այսօր էլ գործառնում է:

ՆՅԲ-ՈՒՄ ԶԿԿԱՅՎԱԾ ԲԱՌԵՐ

ԱԶՈՂԱԶԵՈՆԱԳՈՅՆ – «Բազում ամբոխս արի արանց և

* Հաշվարկները քաղել ենք նշված հեղինակների համաբարբառներից, Խորենացու դեպքում նաև՝ *Օ.Խաչատրյանի «Սովսես Խորենացու «Հայոց Պատմության» հաճախականության բառարան»-ից (Եր. 1986):*

որք ի տե՛գ նիգակի և յաղեղն և ի սուսեր աջողածեռնագոյն՝ գումարե՛» (65): Անշուշտ խորենացու կերտած բառն է:

ԱՐՔԱՅԱՍԱՆՈՒԿ – «Կալաւ զաշխարհս մեր ... ամս քսան և վեց և յետ նորա որդի նորին, որ անուանեցաւն Շապուհ, որ լսի Արքայամանուկ» (216): Իրանական Շապուհ անձնանվան ճիշտ ստուգաբանություն-թարգմանությունն է: Ըստ երևույթին դիտելով որպէս հատուկ անուն՝ գրաբարի բառարանները չեն գետեղել:

ԳԱՅԱՐԱՐ – «Եւ զԳաբաղ ոմն անուն ի վերայ կուտից և զԱբել սպասարար և գահարար» (110): Պաշտոնի անվանումն է: Գրաբարի բառարաններում վկայված չէ:

ԳԵՂԵՑԿԱԴԻՍԱԿ – «գեղեցիկ, գեղեցիկ կերպարանքով» – «Ձկոյս մի գեղեցկադիմակ, ի քերցն Արտաւազդայ, զողացեալ ... ի կեսարացոց քաղաքն ապրեցուցանէր» (217): Դիմակ «կերպարանք, ձև» (միջ. պրս. dēmak) բառից կազմված բարդությունն է, որը երևի խորենացու կերտածն է:

ԴԱՏԱՐԿԱԿԱՑ – «Վիճակաւորք հպարտք, դատարկակացք, զրաբանք, ծոյլք» (364): Այլ օրինակներում՝ դատարկասացք, դատասացք: ԱԲ-ն ունի դատարկակեաց «պարապ»:

ԵՐԿՆԱԴԵԶ – «Դիմեալ գայ ի վերայ քո Բէլ յաւերժիւք քաջօք և երկնադիգօք հասակօք սկայիւք մրցողօք» (34): Բառարանները ունեն երկայնադէ՛՜լ այս օրինակի հղումով:

ԶԻԻԳՈՍԱՍ – «Եւ մերոյն Արտաշիսի հրամայեաց երթալ ի պարսս հանդերձ իւրովք զիւզոստատօք...» (190): Ըստ Արմ-ի «Ձինվորների ռոճիկը կշռող պաշտոնյա»: Հունական փոխառությունն է:

ԽՈՐՇԱԿԱԲԵՐ – «Հողմ բքաբերք, խորշակաբերք, ախտահաւաքք...» (365):

ԿԱՐՍՐԻԿ – «Երկն ի ծովուն ունէր և զկարմրիկն եղեգնիկ» (86):

ՀԵՂՈՒՍՈՒԱԾ – «Եւ ի հեղուսուածս արուեստին որ զքաւանքքն հայեցեալ ուրուք, որպէս ճարպոյ ինչ հեղման հայեցողացն երևեցուցանէ կարծիս» (52): Ստ.Մալխասյանը գտնում է, որ արուեստին հատկացուցիչը անտեղի է: Եվ ճիշտ է համարում երկու ձեռագրերի վկայած ազուեստ «չհանգած

կիր»։ Մալխասյանը նախընտրում է նաև որոշ ձեռագրերի վկայած հեղուած-ը՝ հեղուսուած-ի փոխարեն և վերոհիշյալ նախադասությունը թարգմանում է. «Եվ երբ մարդ մայի քարերի շուրջն եղած կրի ծեփին, նրան այնպես է թվում, թե ճարպ է ածած այնտեղ» (1961, 114)։ Նշենք, որ ազուեստ գրաբարի բառարանները չունեն։

ՄԱՐՍԻԿԵԱՆ – «...զոր ոչ կարացին բուժել արիողական կախարդքն և մարսիկեան բժիշկքն» (226)։ Ըստ Մալխասյանի ծանոթագրության (էջ 396) արիողական (որ ի դեպ բառարանները դարձյալ չունեն) լատ. *ariolus* կամ *hariolus* բառն է, որ նշանակում է «գուշակիչ, հմայիչ»։ Մարսիկեան – *Marsi* ժողովրդի անունից, որ բնակվում էին Լատիոնում և հայտնի էին իբրև կախարդներ և օծերի թովիչներ։

ՄԻԱԳԼՈՒԽ – «...յետ մեռանելոյ դայեկին իւրոյ Արտաւազդայ Մանդակունւոյ որ միազլուխ սպարապետ էր և ամենայն հայոց գօրավար» (262)։ ՆՅԲ-ն այս նախադասության վկայությամբ ունի միազլխապետ, որ դարձյալ եզակի վկայություն է։ Քննական բնագիրը տարբեր ձեռագրերի համեմատությամբ դնում է միազլուխ։

ՈՐԶԱՔԱՐԵԱՅ – «...վասն որոյ ... սովորութիւն ունել սպասաւորացն արքունի՝ վէմս ործաքարեայս ընդդէմ Երուանդայ» (168)։ Խորենացին կիրառել է նաև ործաքար «կարծր քար», որ ունի ՆՅԲ։

Քարտուղարութիւն - «...զոր զհետ քարտուղարութեամբ լեալ էր...» (190)։

ՂԱԶԱՐ ՓԱՐՊԵՑԻ

Ղազար Փարպեցուց մեզ է հասել «Պատմությունը» և Վահան Մամիկոնյանին ուղղված «Թուղթը»՝ գրված V դարի վերջին քառորդում։ Ուսումնասիրողները շեշտում են Փարպեցու գործերում նկատվող ժողովրդախոսակցական տարրերի առատությունը, շեղումը ոսկեդարյան կանոնիկությունից (*Առաքելյան*, 1981, 198-199)։ Սա ճշմարիտ է։ Բայց առարկելի է նրան գուտ ժողովրդական ոճի հեղինակ դիտելը։ Քննությունը ցույց

է տալիս, որ նա հենց միայն բառապաշարում հակված է նաև դեպի գրականը, աշխարհիկ տարրերին հակադրվող ոճերն ու բառամթերքը: Այսինքն, նրա երկը կրում է իր ժամանակի կնիքը, ինչպես Խորենացու գործը և թարգմանական բազմաթիվ աշխատանքներ: Նկատված է նաև, որ «Թուղթը» ավելի գրքային ու գրական է՝ ժողովրդախոսակցական տարրերի համարյա բացառումով, որը բխում է նրա ժանրային առանձնահատկությունից (գուցե և Խորենացու «Ողբի» ազդեցությամբ):

Վ.Առաքելյանի հաշվումներով Փարպեցին կիրառել է ավելի քան 600 նորակազմություն: Այս թիվը չափազանցված է: Վ.Առաքելյանի ներկայացրած բառերի մի պատկառելի մաս վկայված է Փարպեցուց առաջ կամ V դարի երկրորդ կեսի այլ գործերում: Ներքոհիշյալ բառերը, օրինակ, վկայված են Աստվածաշնչում. ժամավաճառ, ունկնդրութիւն, հպարտական... Ոսկեբերանի զանազան գործերում՝ անընդոստ, առակաւոր, բազմախորտիկ, բազմապտուղ, երեւելութիւն, զգուշական թղթաբեր, իշխանաբար, լիապէս, ժանրամտութիւն, կամավորութիւն, մեծածայն, տկարամիտ:

Մեր հաշվումներով Փարպեցու առաջին վկայությունները 350-ի սահմանը չեն անցնում:

Ներկայացնենք Փարպեցու բառապաշարը նախ ըստ բառակազմական յուրահատկությունների: Սկսենք ածանցավորներից:

ան- — անապաշխար, անգիտական, անդլութիւն, աներկեւան, աներկմիտ, անգրաւ, անընդոստ, անթողութիւն, անլաւ, անծախութիւն, անծառայ, անծոյլ, անկազմագոյն, անհաճոյ, անհպատակութիւն, անճաշակող, անմտադիր, անյարական, անյարուչ, անողորմութիւն, անողջոյն, անչքութիւն, անպակասութիւն, անպատասխանի, անպիտանաբար, անտոհմակ:

-ութիւն — ազատաբերութիւն, աղտեղաբանութիւն, ահագնափոխութիւն, անձնահաճութիւն, երկայնաչափութիւն, թշնամարկութիւն, կանոնադրութիւն, կարգադրութիւն, ուղղածայնութիւն, ժամակալութիւն, կատակաբանութիւն, մարթնութիւն, մուրողաբանութիւն, նորածնութիւն, պատգամագնացու-

թիւն, պղծագործութիւն, պիտոյութիւն, սննդականութիւն, ստուգագրութիւն, տոհմակութիւն, ցօղադարծութիւն...

-բար – զավակաբար, իրաւաբար, լաւաբար, լրբաբար, հզորաբար, հսկայաբար, մտացեբար, տեղեկաբար, քաջասրտաբար...

-պես – ահաւորապէս, բովանդակապէս, գիտնապէս, զագրապէս, կարգաւորապէս, հաստատապէս, հոգողապէս, միանձնապէս, ուժեղապէս, սիրելապէս...

Բարդ բառերի շարքում կարելի է առանձնացնել հետևյալ բաղադրիչներով կազմութիւնները.

ամենա- – ամենաբոյս, ամենաբաղձ, ամենաբաղխ, ամենազթած, ամենաթափուր, ամենալրութիւն...

աշխարհ- – աշխարհագրօս, աշխարհակորուստ, աշխարհակցութիւն, աշխարհահոգութիւն, աշխարհայորդոր, աշխարհաշինութիւն, աշխարհատանջ...

արդար- – արդարախնդիր, արդարախոհութիւն, արդարահայեաց, արդարամիտ, արդարամտութիւն, արդարաքնին...

իմաստ- – իմաստագիտ, իմաստալից, իմաստնաբան, իմաստախնդիր, իմաստախորհ, իմաստահայեաց...

բազում- – բազմաբանեմ, բազմազեղ, բազմաժամանակ, բազմաժառայ, բազմածուփ, բազմամիտ, բազմայեղանակ, բազմափոփոխ...

թանձր- – թանձրաթախանձ, թանձրախոտ, թանձրամածութիւն...

կէս- – կիսաբաժին, կիսագիր, կիսաչափ...

ուխտ- – ուխտադրեմ, ուխտակատար, ուխտակից, ուխտասէր...

պարարտ- – պարարտաբոյս, պարարտահամ, պարարտամարմին, պարարտարօտ...

սառն- – սառնակերպ, սառնաշէն, սառնանման...

վատ- – վատախրատ, վատահամ, վատատոհմակ, վատատոհմիկ...

քաջ- – քաջայաղթօղք, քաջասրտաբար, քաջորեար...

Ըստ վերջադաս բաղադրիչների առանձնանում են.

-լից – երերալից, գուարթալից, թախանձալից, թաղծալից, իմաստալից, նախանձալից, որսալից, պատուհասալից...

-արծակ – երամակարծակ, ծիարծակ, ճառագայթարծակ...

-սեր – առապարասեր, առաքինասեր, եղեգնասեր, ճգնասեր, մոխրասեր, ուխտասեր, պոռնկասեր, օգտասեր...

-գիր – կիսագիր, հարճորդեգիր, յարմարագիր, ջնջագիր, ոսկեգիր...

-սոյզ – գետասոյզ, ծովասոյզ, ջրասուզակ, վիմասոյզ...

-տեսիլ – կարմրատեսիլ, նորոգատեսիլ, ոսկետեսիլ...

Ներքոգրյալ բառերն էլ, որ ներկայացվում են այբբենական կարգով, դարձյալ վկայված են միայն Փարպեցու մոտ. ազգախառն «ազգակից», աղետագործ, առակախօսել, առոգագաւակ, առօտնահարու, առողջախորհուրդ, արթնամիտ, արիւնապարտ, արտօսրաբուղիս, աւետալից, աւետաւորեմ, բարենախանձ, գազախաղէմ, գեղեցկաձիգ, գործամխիլ, դժմիտ, դրախտաբաց, եկեղեցագարդ, երագաւուր, երամակարծակ, երգողական, երկիւղագին, զինչպետ, ընթրատու, ընդունչսարկու, թրքած, թփամուտ, իշխանափոխ, լաւածանոթ, լաւահայեաց, խաղաղասիգ, խիզախական, խոհարան, խորանաձև, խորհրդապահ, ծովածիր, ծրափակեմ, կարգակէս, կարմրադեղ, կենսատուր, կճղաբաժին, կրակասպան, հանապազազգոյշ, հապստեպ, հասարակապտուղ, հասարակատէս, հատուածաձև, հրամայնատրութիւն, հրասախաչափ, հրեշտակացոյց, ձաղադեմ, ձայնարկութիւն, ճարտարագէտ, ճշգրտաբանեմ, մացառաղօղ, միաթիւ, միջամխել, յայտաբերել, յայտնաւոր, յորդասաց, յորդորախոյզ, նախագիւտ, նախադնել, նախասպան, նիզակափակ, նուազամիտ, նուազապտուղ, շահաժողով, ողջախորհուրդ, որսատենչ, ումպետ, չարահամ, պանդխտանոց, պատշիր, ջրայոյզ, սակաւաթիւ, սակաւամեղ, սաստկաբուրումն, սաստկանդամ, սատանայազէն, սկայանման, սորամուտ, սպիտակակիզն, ստուգապատում, վարդափթիթ, տղմաթաթաւ, փայլակնացայտ, փայտամած, քամակաբեկ,

քամակակոտոր, քերթաքաղ, օգտախնդիր, օծակոչ...

Վերոհիշյալ բառերը ընդգրկում են և՛ գրական, և ժողովրդախոսակցական շերտերը: Դժվար է խստագույնս որոշել այս երկու շերտերի սահմանները, բայց համեմայնդեպս կարելի է առանձնացում կատարել: Ըստ երևույթին ժողովրդախոսակցական շերտն են ներառում.

ա) հետևյալ և այս կարգի արմատական և ածանցավոր մի շարք բառեր. աքցոտեմ, բրդեայ գղզիկ, խարտոց, խոճոճել, կոպճուտ, կտտանք, համեղ, հարանք, չքահանայ, չորեքնակի, շափառուկ...

բ) բարդ բառերի մի մասը. գետառու, զուարթերես, թեթևաշարժ, կարճակտուր, կոյաջուր, կռուատեղ, մեղրահամ, մսակեր, ոսկեհատ, որսասեր, սրտմեռեալ, խելաշուրջ, կաւարծաթ, որովայնախօս, չարահամ...

գ) կանոնիկ հոգնակիությունից շեղվող բառեր. ազատորեար, աւագորեար, հայորեար, վնասանի, քաջորեար, գրեան, մոգեան, հացկատակեան, կրականի, երիցանի, բաներ, հարկեր, հայեր, ձեռներ...

Փարպեցու աշխարհիկ ոճը, մեր կարծիքով, ավելի շատ վերաբերում է քերականությանը, խոսքի կառուցվածքին, քան բառապաշարին:

Գրքային-գրական ոճի ոլորտն են ընդգրկում, անշուշտ, դերբայակերտ -ողութիւն ածանցով կազմությունները, -բար, -պէս ածանցով այն ձևերը, որոնցում մակբայական իմաստը առանց այդ ածանցի էլ գիտակցվում է (այդպես է և հորեմացու մոտ): Բազում բառի գործածությունը շատ-ի փոխարեն նույնպես բնորոշ է գրական ոճին: Վ.Առաքելյանի հաշվումներով Փարպեցին Բազումը կիրառել է 29 անգամ (Ագաթանգեղոսը՝ 5, Եզնիկը՝ 3): Փարպեցին ունի նաև շատութիւն (փխն. բազմութիւն):

Փարպեցու բառապաշարի քննությունը թույլ է տալիս եզրակացնելու, որ այդ հեղինակը զգալի ավանդ ունի հայոց գրական լեզվի մշակման ու զարգացման գործում, ժողովրդախոսակցական ու գրական-գրքային սերտ ներդաշնակությամբ:

ՆՅԲ-ՈՒՄ ԶԿԿԱՅՎԱԾ ԲԱՌԵՐ

ա) ՊԱՏՄՈՒԹՅԱՆ մեջ

ԱՂԵՂՆԱԶԱՅՆ – «Ուր ոմանք զհետ ցռուցն և այծենանցն արշաւելով՝ զխիզախական զաղեղնածայնն ևեթ բարբառիցին և այլք զհետ բուլից եղջերուացն և եղանց ձիարծակ եղեալ զգործ կորովածիզ արանցն ցուցանեն» (10):

ԱՅՐԱՑԻ «քաջ» – «Եւ արքայո՛ւ վրաց Վախթանգ այրացի է. ո՛ր գիտէ, և բազումողորմն Աստուած...» (119): Փարպեցին ունի և մտացի «խելոք»:

ԱՆՁՆԱՔԱՐՇՈՒԹԻՒՆ – «... ի սաստկութենէ և ի կարևոր վիրացն, զոր ունէաք ի մարմնի մերում՝ մերթ ի սող, և մերթ անձնաքարշութեամբ հասաք առ միմեանս» (141): Այս նախադասության մեջ կարևոր-ը ուղղելի է՝ կարելի:

ԱՇԽԱՐՀԱԿՈՐՈՒՍՏ – «Այլ թէ ընդդէմ ոմանց բանքս իմ ոչ թուին՝ ես աշխարհակորուստ արանցն ողջ ոչ տայի գնալ յաշխարհէս Հայոց» (143): ՆՅԲ-ն այս օրինակը բերում է աշխարհակորոյս գլխաբառի տակ:

ԱՐՈՒՆԵՍՏՈՂ – «Ձոր ընկալեալ արուեստող ձեռաց՝ զարդարեն զթագաւորս մեծատեսիլ զարդեօքն յօրինուածովք» (10): Արուեստող ձեռն նշանակում է «արհեստավոր, ճարտարագործ»:

ԳԵՏԱՌՈՒ «առու, վտակ» – «Կարծեր ի տեղիսն ուրէք անյայտս գետառուին թաքչել» (150):

ԽԱՆՏԱԾՈՒԹԻՒՆ «նախանձ» – «Թէպէտ և զխանտածութիւն հայ մարդկան ճանաչելով ծանրանայր ընդ իրս՝ այլ սակայն և ոչ ընդդիմանալ հրամանի թագաւորի իշխեր և անհնազանդ լինէր» (178): Ունի ԱԲ:

ԿՇՈՂՈՒԹԻՒՆ – «Ոչ է յաղթութիւն ի բազումս և ի սակաւս, այլ ի վերին կշռողութեան ձեռինն» (121): Վերին կշռողութիւն ակնարկում է Աստծուն:

ՀԱՊԱՏԵՊ «հաճախ» – «...մանաւանդ իբրեւ հապստեպ լսէր զնախանձորդացն զբանսարկութիւն...» (112):

ՍԱՐԹՉՈՒԹԻՒՆ «հմտություին», ըստ ԱԲ «խելացիութիւն» – «Եւ իշխանն ... սիրէր զկապեալսն Հայոց յոյժ և զբա-

ջութիւն նոցա և զլաւ բարս և զմարթնութիւնն բազում անգամ գրով ծանուցանէր մեծամեծացն» (108):

ՄԻԱՍՈՅԿ – «Ինքն Կամսարականն միամոյկ ... յերիվարն հեծանէր» (66):

ՅԵՏՍԱՅԱՐՈՒԹԻՒՆ – «Վասն զի թէ զապստամբութենէդ քումնէ հարցանեմք, թէ զիա՞րդ իշխեցեր խորհել, թող թէ և առնել՝ պատասխանի տուեալ ասես, թէ չճանաչողութիւնն և ի յետսահարութիւն բռնադատեաց զիս մեռանել» (166): Բառը կարելի է թարգմանել «արհամարհանք, իրենից վանել»:

ՇԱՏԱԳՈՅՆ – «Մի շատագոյն ուրախասցի աղմկելով զքաղաքն չար դէն» (125):

ՍԱՅՄԱՆԱԿՑՈՒԹԻՒՆ – «Եւ ոչ ժամանեալ ի գործ ժամու պատերազմին՝ առ վայր մի առ լերամբն որ կոչի Պարխար, մերծ առ սահմանակցութիւնն Խաղտեաց» (74): Բառը 6 անգամ վկայված է Փարպեցու պատմության մեջ (74, 121, 132, 3, 136, 148), բայց զարմանալիորեն գրաբարի բառարանները չեն ավանդել: Ունի «մերծ, մոտ, սահմանակից» իմաստը:

ՍՆՆԴԱԿԱՆՈՒԹԻՒՆ «սնունդ» – «Դիել կաթն յօժարեցուցէք զտգէտսն ի սննդականութիւն» (8): Ունի ԱԲ:

ՍՏՈՒԳԱՆՕՍՈՒԹԻՒՆ – «Ետուն պատասխանի միաբանութեամբ, էր ինչ որ ստուգախօսութեամբ և էր որ եպերանօք» (78): Ունի ԱԲ, ՆՅԲ-ն ունի ստուգախօս:

ՍՐՏՄԵՌԵԱԼ – «Եւ Շապուհ պարսիկ գնդին զօրագլուխն իբրեւ զքակտումն Սիւնի գնդին և զահաւոր զօրութիւն հակառակորդին Վահանայ Մամիկոնէի զմտաւ ածեալ յիշէր զանընդդիմակայ զօրութիւնն, սրտմեռեալ զարհուրէր» (153): Այլ օրինակում՝ սրտմտեալ զարհուրէր: Սրտմտիմ ունի «բարկանալ, զայրանալ, գրգռվել» նշանակությունը: Ուրեմն, ճիշտ է սրտմեռեալ «վախենալով» ձևը, որ համանիշ է սրտաթափին. հմմտ. «զբազումս առնէր սրտաթափ և ահակոտոր», «բոթաբերն սրտաթափ զքեզ առնէ»:

ՎԱՏՆԵՂԵԱԼ – «Վասն զի այնպէս զարհուրեցուցեալ ապշեցոյց և վատնեղեալ աշխատեաց զմեզ ապստամբն Վահան» (156):

ՓԱՐԱԻՈՆԱԿԵՐՊ – «Սատանայ փարաւոնակերպ ... սուգեալ կիզու» (179) :

բ) ԹՂԹՈՒՄ

ԱՆՈՅԵԱՆԱԲԵԿ «քաջ, թշնամուն ջախջախող» – «Ձախոյեանաբեկ ... գայրն ՋԴաւիթ՝ անհանգիստ որսայր Սաւուղ ի կորուսանել» (189):

ԱՆԴԻՄԱԿԱՅ «հակառակ, անդիմակայելի» – «Անդիմակայ արդարեւ ըստ գրելումն յօրհնութեանց, երկոքին, սոքա, սէր և նախանձ» (200):

ԱՆԺԱՍԱԿԵՐՈՒԹԻՒՆ «որկրամոլութիւն» – «Անժամակերութեամբ եպերէին» (189):

ԱՆՅՕԴԱԿԱՊ (ծայն) – «Ձայնս անյօդակապս արծակեալ յայթն» (200):

ԳԻՏԱԲԱՐ – «Ի նախանձումն գիտնաբար խօսէր» (200):

ԺՂՂՈՎՐԴԱԿԵՑՈՅՑ – «Ի ձեռն նախանձու ... ժողովրդակեցոյց գԴաւիթ՝ անհանգիստ որսայր Սաւուղ ի կորուսանել» (189):

ԿՇՈԱՔՆԻՆ – «Այր... կշռաքնին» (187):

ԿՈՅԱՁՈՒՐ – «Ըստ խոզի հարսնացելոյ՝ կոյաջուր բաղանիք» (193):

ՅՈԳԱՍԻՐՈՒԹԻՒՆ – «Սնուցանէ ... ըստ իւրեանց հոգասիրութեանն» (188):

ՅՐԱՐՁԱԿ – «Դիւրագերծ կարէ լինել հրարծակ չար ձգողացն» (192): ԱԲ-ն թերևս այս օրինակը նկատի առնելով մեկնում է՝ «կրակի պէս նետված (նետ)»:

ՃԳՆԱՓՈՐՁԱԼԻՑ «ճգնությամբ փորձված» – «Ձմնացորդս չարչարանց... յիւրում ի ճգնափորձալից ի մարմնի կրէր» (191):

ՍԱՅԱՁԱՅՆ – «Լուեալ գղոնչիւն մահաձայն աղեղացն՝ աղօթեաց» (202):

ՅԵՐԿԱՐԱՅՈՒՇ – «Այր յերկարայուշ ես և անմոռաց» (197):

Ղասակից, թեւաւորեն, ճշգրտաբանութիւն, նորադարձ վկայված են ՆՅԲ-ում, բայց օրինակները ուշ շրջանից են:

ԶՊԱՅՅՈՂՈՒԹԻՒՆ – «Զպահեցողութեամբ եպերէին» (189): Նշանակում է «պաս չպահելը»:

ՊԱՐԵԳՕՏԱԻՈՐ – «Պարեգօտաւորք ազատեալ են ի Քրիստոս» (180): Փարպեցին բառը կիրառել է չորս անգամ:

ՊՏՂԱՏՐՈՒԹԻՒՆ «հասույթ» – «Երեւեցան յիս հրամանա-կատարք բանի քում ... զպտղատրութիւն տեղոյն հատուցա-նելով» (190): Այլ ձեռագրերում՝ պտղաբերութիւն: Բառարան-ները՝ ունեն պտղատրութիւն: Տրութիւն բաղադրիչով կազմութիւնները խորթ չեն V դարի երկրորդ կեսի գործերին: Փարպեցին ունի նաև գրուցատրութիւն:

ՏԳԻՏԱՅԱԼԱԾ – «Ոչ զլուսաւորիչն և զտգիտահալած գրեանն նորա առ անգիտութեան փաթաղիկէս կոչեցին» (202):

ՔԻՆԱԿԱԼՈՒԹԻՒՆ – «Ամոն ... բազմաժամանակեայ քինա-կալութեամբ սպանաւ յեղբորէն» (190):

ՔՐԻՍՏՈՍԱՆՄԱՆՈՒԹԻՒՆ – «Ու՞ր աներկիւղութիւն քաջ հովուի է. ու՞ր քրիստոսանմանութիւն առողջ հայրապետի» (199):

Ըստ երևույթին Փարպեցու «Թուղթը» ՆՅԲ-ի հեղինակները չեն օգտագործել: Այլապես փոքրածավալ երկից երկու տասնյակի հասնող բառեր բառարանից դուրս չէին մնա:

ՀՈՎՅԱՆ ՍԱՆԴԱԿՈՒՆԻ

Հովհան Մանդակունու ճառերի բառապաշարը, ոճական յուրահատկությունները լուրջ և համակողմանի քննության կարիք ունեն: Բանասիրության մեջ բանավիճային է Հ.Ման-դակունու անձի և ապրած ժամանակաշրջանի հարցը: Ոմանք նրա ճառերը վերագրում են VII դարի հեղինակ Հ.Մայրապո-մեցուն: «Մենք ստիպված եղանք մեր հնարավորության սահմաններում նոր կռվաններ բերելու՝ փարատելու համար գոյատևող կասկածները և ամրապնդելու այն թեզը, ըստ որի՝ այդ ճառերի ժողովածուն Մայրապոմեցու «խրատ վարուց» գիրքն է» (*Քենդերյան, 1973, 46*): Մեր խնդիրը չէ այդ հարցի քննությունը: Նշենք միայն, որ ուսումնասիրողները անխտիր ճառերի լեզուն բավական մոտ են համարում դասական գրա-

բարին և էական տարբերություններ չեն տեսնում: Յ.Քենդերյանը մասնավորապես գրում է. «Լեզվի հանգամանքը թույլ է տալիս որոշ վերապահությամբ ընդունելու, որ ճառերը V դ. ստեղծագործություններ են» (59): Այս կարգի կարծիքները հաշվի առնելով՝ մենք Մանդակունու բառապաշարը քննում ենք V դարի հեղինակների շարքում:

Մանդակունու բառապաշարը ըստ ամենայնի արտացոլված է գրաբարի բառարաններում: ՆՅԲ-ում զգալի թվով բառեր, որպես եզակի վկայություններ հղված են Մանդակունուց, բազմաթիվ բառերի առաջին վկայությունն էլ դարձյալ այդ գործից է: Բառերի այդպիսի մի խումբ առանձնացնում է և Բ.Սարգիսյանը (*Սարգիսյան, 1893*): Ներկայացնենք դրանք.¹

ա) Պարզ (ածանցավոր) բառեր

Աղափարիմ, այրատանալ, ասղենի «թել», ժաժմուկ, խաբարան, խաղարան, խամբայութիւն, կասկել, կատաղանք, յարանջիմ, նիհար, նինուեաբար, շմալ, ուռթել, սիբնկոն, սողոմապէս, վայունն, փոխորեն, քարաքուի, բրքրանք...

ԱՂԱՓԱՐԻՄ – «Երկնջի յամօթոյն, երեսքն խոնարհի տեսանելի պահանջողն. աչքն պատրուակին իբրեւ շուն ըմբռնեալ ի տեղիս, ամօթովն աղափարի» (66): Ըստ ՆՅԲ-ի «մթագնել աչօք, շառագունիլ», ըստ ԱԲ-ի «ամաչել»: Արմ-ը համարում է անստույգ բառ: Նորահայտ ձեռագրում՝ ըմբռնեալ ի տիղմ աղափարի:

ԱՅՐԱՏԱՆԱԼ – «... այրատանալդ և շոգմոգելդ և պիղծ ցանկութեամբ ակնարկելդ» (42): ՆՅԲ-ն ունի յայրատանալ՝ այս օրինակի հղումով՝ «անամօթիլ, անառակիլ»: Մեր կարծիքով գործ ունենք այր «տղամարդ» և հատ/ատ բաղադրիչների հետ: Բառը նշանակում է «ոչ տղամարդկային, կանացի»: Մեր ենթադրության օգտին է վերոհիշյալ նախադասությանը նախորդող միտքը. «Արք բոգահոմանեաց և ցոփոգի մեղկութեամբն իգանան պիղծ ցանկութեամբն և յափրացեալ վաժաշտին»:

¹ Որպես սկզբնաղբյուր օգտագործել ենք 1860 թ. հրատարակությունը՝ համեմատելով նաև նորահայտ ձեռագրի հետ, որի տպագիր օրինակի միջև առկա տարբերություններին անդրադարձել է Ե.Դուրյանը (1935, 229-292):

ԺԱԺՄՈՒԿ – «Եւ ոչ մի արտաքին դիւթիւքն վարին, այլ և անձանց ևս ուռութս ուսանին... և փողս ցաւածիցն արկանեն և ժաժմուկս մտացածին բանից» (193): Հմայութեանը վերաբերող բառ է: Էջ 194-ում դարձյալ հմայութեանը վերաբերող հատվածներից մեկում առկա է բառի մեկ այլ տարբերակ՝ շարժմակ: Նորահայտ ձեռագիրը ժաժմուկ-ի փոխարեն ունի ժաժմակ, իսկ շարժմակ-ի փոխարեն դարձյալ ժաժմակ:

Այն որ շարժմակ/ժաժմակ/ժաժմուկ հմայական տերմին է, կասկած չի հարուցում: Բառի կազմության մեջ հակված ենք տեսնելու շարժ արմատը և եթե ժաժմուկ–ժաժմակ հետին գրչություններ չեն, ապա կարելի է արձանագրել և բարբառային ժաժ տարբերակը V դարում *հմմտ*. շարժ «երկրաշարժ» և բարբառային՝ ժաժք «երկրաշարժ»:

ԽԱՄԲԱՅՈՒԹԻՒՆ – «Եւ եղծումն և յարմարութիւն ի խամբայութենէ անձրեւաց լինի և տօթոյ արեգական և ոչ կռուելոյ օդոյ» (199): Անստույգ բառ է: ՆՅԲ-ն մեկնում է «զուգընթացություն»: Նորահայտ ձեռագրում խոնաւութիւն, որը ավելի հավանական է, բայց չի կարելի անվերապահորեն ժխտել խամբայութիւն բառի գոյությունը, քանի որ խամբայութիւն/խոնավութիւն հազիվ թե գրչագրական աղավաղում լինի:

ՊԱՐՏԱՆՔ – «Ձի ամենայն ուռութք և պարտանք դիւթի և թովչի և հարցկի սուտ են և եղկելի» (197): Նորահայտում՝ պատրանք:

ՍԻԲՆԿՈՆ – «Եւ եթէ պահարանք և սիբնկոնք ի կռապաշտութիւն տանին» (83): Ըստ Արմ-ի «կախարդական պահպանակ»: Սնիկոն ձևով կա Ոսկեբերանի մոտ (Ս. ՏԻՄ. էջ 85): Մանդակունին (էջ 194) նույնպես ունի սննիկոն:

ՔՐՔՐԱՆՔ – «Եւ կամ զի՞նչ ի պիղծ խաղոյն ընկալար. քրքրանս և տռփանս և թեթևանս և օգուտ ոչ ինչ» (134): Ըստ ՆՅԲ-ի «փափկություն, թուլացում». նորահայտում այդ բառի փոխարեն քթանս է:

բ) բարդ բառեր

Բ.Սարգիսյանը առանձնացնում է չորս տասնյակից ավելի բառեր, որոնք չունեն V դարի այլ հեղինակներ: Նախքան այդ

կարգի բառերը ներկայացնելը, նշենք, որ Մանդակունու գործերում շատ են հմայությանը, կախարդանքին ու թովչանքին վերաբերող բառերը: Նրա ճառերում այդ երևույթների վերաբերյալ ընդարձակ տեղեկություններ ստանալուց զատ, իրազեկ ենք դառնում երևույթի անվանումներին: Նման անվանումները բացարձակապես հայակազմություններ են: Ահա այդ կարգի բառերի մի շարք. դեղահմայ, գրարարութիւն, ողոտնահմայ, լուսնախտիր, հեղահարութիւն, հատահարցութիւն, մաղաբախութիւն, քուահարցութիւն, դիւահարցութիւն և այլն: Նպատակահարմար ենք համարում «Վասն հմայից դիւթականաց» ճառից բերել մի հատված. «Յորժամ ի խտիրս և ի հմայս երեւի կեւոս և ի դիւթութիւնս և ի հատահարցութիւնս և ի քուահարցութիւնս և ի հեղահարութիւնս և ի հմայութիւնս և ի միջագիտութիւնս, և ի գրարարութիւնս, յաստեղագիտութիւնս, ի դիւահարցութիւնս, յօրահմայս, ի լուսնախտիրս, և ի շեղջախտիրս... ի գեղահմայս, ի սննիկոնս, յուռութս, ի բախտս, ի ճակատագիրս, և ի գիր պահարանի և յամենայն շարժմակս բժժանաց, հմայից, դիւթաց, յորս կոչեն ըզդեւսն յաղ, յերկաթ, ի ջուր, ի նարօտս, յիւղս, ի գարի, ի յուլունս, ի մոմ, ի հեր գլխոյ, և յամենայն պղծութիւնս՝ որով կորուսանեն զոգիս հնազանդելոցն» (193-194):

Այս փոքր հատվածը, իրոք, բավարար տեղեկություն է տալիս մեր նախնիների հեթանոսական հավատալիքների, նրանց գործունեության այդ ոլորտի մասին:

Ըստ նորահայտ ձեռագրի՝ ներկայացնենք որոշ տարբերակներ.

տպագիր
 ի մաղաբախութիւնս
 ի հեղահարութիւնս
 ի հմայութիւնս
 յոգոտնահմայս
 ի շարժմակս բժժանաց
 երեւի կիւոս

ձեռագիր
 ի մաղարախասութիւնս
 ի հեղահանութիւնս
 ի հրահմայութիւնս
 յուզումնահմայս
 ի ժաժմակս բժժանաց
 և ի դեւս

Թեև նորահայտ ձեռագրում (ոչ միայն այս օրինակների դեպքում) ի հայտ են գալիս ուշագրավ տարբերակներ, սակայն միշտ չէ, որ դրանք հիմք են տալիս ուղղման. օրինակ, ի դեռ գուգահեռը թվում է ավելի հավաստի, բայց բանն այն է, որ կիւսս կա և այլ հեղինակների մոտ:

Ներկայացնենք այն բարդ բառերը, որոնք առկա են հիմնականում Մանդակունու ճառերում. աղբաբոյն որովայն, աղաւալեզու, անասնամուլ, անձնամահութիւն, արջառամահ, աւգտաժողով, գայլավատնեալ, գեռաթաթախ, գողահան, գործածեռն, գուսնամուլ, գրակէս, գրարարութիւն, դարատարափ, ժահահոգի, լուսնախտիր, լեզուակապ, խաշնամահ, խտրողադիւթ, ծարաւահատ, կնծածայն, հաստախոց, հաւահալած, հեղահարութիւն, հրամանահատութիւն, հրատիկ, մաղաբախութիւն, մատակախազ, մթապատիմ, միշտամեղ, միջագիտութիւն, նախախոնարհ, շուաղաբարոյ, ողոտնահմայ, ուծակեր, պատուիրանահատութիւն, վաշխաժողով, ցոփոգի, քուահարցութիւն, քրիստոսազգեաց...

Ինչպես նկատելի է, չնչին բացառությամբ բարդ բառերը հասկանալի են, ու ըստ երևույթին, գործածական են եղել խոսակցական լեզվում: Մի քանի նկատառումներ որոշ բառերի կազմության կամ բառիմաստի վերաբերյալ:

Աղբաբոյն. որպես մակդիր վերաբերում է որովայն բառին: Այդպիսի օրինակներ ունենք և այլ հեղինակներից. *հմմտ.* Եվսեբիոս Եմեսացու մոտ՝ աղբաման «փոր», Խորենացու մոտ՝ աղբիւսք «աղիք, որովայն»: Նման մակդիրավորումն ու իմաստը ժողովրդական մտածողության ուրույն արտահայտություն է:

Գայլավատնեալ – «խաշինք գայլավատնեալ ցրուեցան ընդ խորխորատս» (180): Նորահայտ ձեռագրում՝ տարավատնեալ: Վերջինս գրաբարի բառարաններում չկա: Իմաստային առումով երկու տարբերակներն էլ ընդունելի են:

Գեռաթաթախ «ցեխոտ, կեղտոտ»: Վկայված է մի քանի անգամ: Եթե իրոք, հետին գրչություն չէ, ապա V դարի տվյալներով կարելի է արձանագրել այ – ե հնչյունափոխության փաստ:

Մանդակունու կիրառած բարդ բառերից մի քանիսի երկրորդ բաղադրիչը ժողով կամ վատնել-ն է. վաշխաժողով, օգտաժողով, արծաթաժողով, վարվատնեալ, գայլավատնեալ, դարավատնեալ... Ըստ երևույթին սրանք հեղինակի նորաբանություններն են:

ՆՅԲ-ՈՒՄ ՉՎԿԱՅՎԱԾ ԲԱՌԵՐ

ԱՂՏԵԱԼ – «... և գառ ի վայր խողխոջանք արծակին և շոգին աղտեալ ընդ երեսն մտանէ և ընդ օդսն տարածանին» (127): Նորահայտ ձեռագրում՝ աղտեղեալ: ԱԲ-ն նշում է աղտիմ, հավանորեն նկատի առնելով այս վկայությունը:

ԵՂԱՆԱԿԱՄԱՅՐ – «Արհամարիեցէք զեղանակամարս լալականաց, անարգեցէք զփետիւն վարսից և զխզել հերաց, հալածեցէք զարիւնահանս և զմխրացանսն» (187): Նորահայտում՝ զեղամայրս: Արմ-ը ունի եղամայր «կատակերգություն կամ առասպելական երգ», որ վկայված է Ոսկեբերանի մոտ: Թվում է՝ ձեռագրի վկայությունը ավելի ճիշտ է, բայց քանի որ եղանակ բառն էլ ունի «երգ, նվագ», իմաստը, ապա եղանակամայր ձևի գոյությունը բացառելի չենք համարում:

ԵՐԴՄՆԱԿԵՐՈՒԹԻՒՆ – «Յոմանս ստութեան, յոմանս հայհոյութեան, յոմանս քինահանութեան, յոմանս երդմնակերութեան» (187): Ունի ԱԲ: ՆՅԲ-ն երդմնակեր վկայում է դարծյալ Մանդակունուց՝ «երդմնագանց» նշանակությամբ, ուրեմն, երդմնակերթիւնն էլ պետք է թարգմանել «երդմնագանցություն»:

ԸՂԶԱՓԱՓԿՈՒԹԻՒՆ – «Եւ արդ կամ փափագանօք ըղծափափկութեանցն և կամ սպառնալեաց ահեղ տանջանացն փութասցուք յապաշխարութիւն» (27): Բառը ունի ԱԲ՝ «ցանկալի փափկություն» բացատրությամբ, որ փաստորեն բաղադրիչների իմաստներից է բխում: Մեր կարծիքով բառի երկրորդ բաղադրիչը ոչ թե փափուկ-ն է, այլ փափագ-ը, որ գրաբարում գրվում է նաև փափաք: Ի դեպ, նորահայտ ձեռագիրն ունի (ը)ղծափափագ փափկութեանց:

ՀԱՄԱՐԶԱԿԵՐԵՍ – «Ոչ համարծակերես իբրեւ զբարեգործ

որ հայցեն, այլ աղերսիւ իբրեւ զպարտապան և զբազմամեղ» (186):

ՎԱՐԱՎԱՏՆԵՄ – «...զվարավատնեալսն ի սատանայէ միաւորեա. զհեռացեալսն յեկեղեցւոյ մերծեցո. զվեհերոտն յաղօթից ի փոյթ յորդորեա» (88): Նորահայտ ձեռագրում՝ զվարատեալսն: Մեր օրինակը կարելի է ուղղել՝ վայրավատնեալ «ցրված» կամ էլ եթե V դարում գործել է այն-ա հնչյունափոխությունը (*հմմտ.* հայր-հարք), ապա թողնել առանց ուղղման:

Մանդակունու լեզուն պարզ է, առանց ոճական ու բառակազմական խրթնաբանության: Իր անպաճույճ ու մատչելի լեզվով այս երկը գերազանցում է նույնիսկ Եզնիկի «Եղծ աղանդոցին»: Նրա ճառերը հասկացվում են առանց որևէ ճիգի. հարկ չկա նույնիսկ դիմելու բառարաններին: Եվ եթե որոշ հմայական տերմիններ ու հասկացություններ հստակ չեն, ապա դա հեղինակի մեղքը չէ: Դրանք մեզ են հասել կամ աղավաղ ձևով, կամ էլ այլ տեղ վկայված չլինելով՝ բնականաբար իմաստային դժվարություններ են առաջացնում, այնինչ V դարում եղել են սովորական, ժողովրդի մեջ տարածված բառեր:

II. ԹԱՐԳՄԱՆԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ.

ԱՍՏՎԱԾԱՇՈՒՆԶ

Աստվածաշունչը V դարի հայ գրականության ամենածավալուն գործն է, որի թարգմանությունը խոշոր երևույթ էր ժողովրդի հասարակական-քաղաքական կյանքում. միաժամանակ այն մեր գրավոր խոսքի երախայրիքն է. խոսք, որի զարգացման շատ միտումներ ձևավորվեցին այս գործի թարգմանությամբ: Աստվածաշունչը բազմիցս քննության է առնվել տարբեր դիտակետերից, այդ թվում և լեզվի, իսկ Վ.Առաքելյանի «Յինգերորդ դարի հայ թարգմանական գրականության լեզուն և ոճը» (*Եր.*, 1984) ծավալուն մենագրությունը ամբողջապես նվիրված է Աստվածաշունչի լեզվի և ոճի քննությանը: Դա, բնականաբար, մեզ ազատում է շատ հարցերի շոշափումից և ավելորդ կրկնություններից: Կանդրադառնա՞նք այն խնդիրներին, որոնք բավարար չափով չեն արծարծվել: Նպատակահարմար

ենք համարում սկզբից նշել ընդհանուր դրույթներ Վ.Առաքել-
յանի աշխատությունից. ա) մեր թարգմանիչները Աստվածա-
շունչը վերածեցին ինքնուրույն գրքի, ազգայնացրին, հայաց-
րին: Եվ այդ գրքի հեղինակությունը ժողովրդի մեջ բարձր է, ոչ
միայն նրա համար, որ այն քրիստոնեական կրոնի ուսմունքի
ամփոփագիրն է, այլև նրա համար, որ իր լեզվով ու ոճով հայա-
ցել է, ազգայնացվել, բ) Աստվածաշունչը ժողովրդի համար է.
պետք է այնպես թարգմանվեր, որ հասկանալի լիներ, բայց գիր-
քը պետք է ունենար իր լեզվաոճական, գրական պատշաճ մա-
կարդակը, գ) հայացված են բազմաթիվ բույսերի ու կենդանի-
ների անուններ, որոնք լինելով հայերին անծանոթ՝ կարող էին
մնալ նույնությամբ, դ) թարգմանվել են նաև երկնային մարմին-
ների բազմաթիվ անուններ, հայացված են եբրայական բնագրի
բազմաթիվ տեղանուններ, ե) Աստվածաշունչը վկայեց առտոհին
շատ բառեր, և վերջապես Աստվածաշունչը հրեական ու հունա-
կան բնագրերից վերածվեց հայկական բնագրի, կոչվելով
«դշխոյ համօրեն թարգմանութեանց Սուրբ գրոց» (10-15):

Նշենք առաջինը Աստվածաշնչում վկայված բառերը:
Բնականաբար այս ցանկում կլինեն վրիպումներ, բացթողում-
ներ, քանի որ այդ կարգի ամբողջական ցանկ ներկայացնելը
ըստ էության հնարավոր չէ: Ձգտել ենք ներկայացնել կարևոր-
ները, որոնց մի մասը ուշագրավ է բառաքննության տե-
սանկյունից:

*ա) Պարզ (ածանցավոր) բառեր**

Ազահագոյն, ագուռ «բուռ», ականի «լավ տեսնող»,
ականող «տեսանալիք», ամասարակովթ, ամիկ, այգաւետ,
այի «այո», անթանի, անկիւն, անվկանդ, աչացու «կույր»,
ապախուրել «խույրը հանել», ապահարկ «ազատ, անհարկ»,
ասպաստանիկ, արաբովտ, արգոբ, արդու, արիովթ (բույս
է), արծնել «փորագրել», արսին, բակեղեթ, բաշխոյք, բեհե-
գեղէն, բռնմ, բռնցի, գագաշոտ «ցնդած», գահակ, գեղծ

* Բերվում են նաև այնպիսի օտար բառեր, որոնք ստուգաբանորեն բարդ
են, բայց հայերենում որպես այդպիսին չեն գիտակցվում: Մի շարք եբրա-
յական, մասամբ և հունարեն բառերի իմաստները չենք նշում:

«պատատուկ», դաշխուրան, դարապան, դոմենի, դողանի «դողացող», եղջերիկ, երիթամածեալ, երիվարիկ, զոհանոց, ընկերշակեմ, թեղօշ (բույս է), իջաւոր, լամբ, խարբուզ, խնկենի, խոզենի, ծուծ «ծծելը», կապէնք «վարձ», կարկանդակ, կիւոս, կնճանալ, կոճկէն, կոպիճ, կողմանոց, կորճ (թռչուն), հաղաղակ, հաստեայ «խմորեղեն», հարած «վերք», հիրիկ, հոյ, ձօնի, ճաճանչաւուխտ, ճանբակ (բույս), մաճառակ, մաքման, միսթաղ, մախատորդ, մեկաթ, մեսար, մէսա, շլոռոս, շկահիւն, ոչխարակ, չժողովուրդ, չուտելի, պախ, պասկուճ, պարամիլ, քրական, քրուոր, ռասիմ, սաղենովթ, սաղերովթ, սեւակ, սուարիմ, ստաշխն, ստուերած, վայթել, վարապանակ, վտաւակ, տաբատ, տիտեռն (կենդանի), փարագունք, փոխիմդ, քածաւարոտ «ներքինացած», քաղցրենի, քարաղր (թռչուն), քոռին...

Այս ցանկի գերակշիռ մասը ածանցավոր ձևեր են: Մի շարք բուսանուններ ու կենդանիների անուններ առաջին անգամ վկայված են այս գրքում: Նկատվում է, որ ծանոթ հասկացությունները ներկայացվում են թարգմանաբար, իսկ անծանոթները տրվում են օտար ձևով: Երբեմն էլ հայերեն թարգմանությունը շատ ազատ է բնագրի տվյալ հասկացությանը ոչ համապատասխան: Նկատված է նաև, որ միևնույն բուսանունը Գիքի տարբեր հատվածներում հայերեն ներկայացնում է տարբեր բառերով: Այսպես, եբր. *թիտհար* – հայ. սոճի կամ սօսի (*Ես. Խա 19, 4. 13*) (Մանրամասն տե՛ս *Արթինեան, Աստվածաշունչի տունկերը, Պոլիս, 1913*): Դա պետք է բացատրել նրանով, որ տարբեր հատվածներ թարգմանել են տարբեր մարդիկ: Անցմենք քիչ վերը ներկայացված ցանկի որոշ բառերի քննության:

ԱՆԵՐԿԱԹ – «Ապա այն զիարդ եւ էր անդ յանգէր և պահէր յաներկաթ բանտն արգելեալ» (*Ժմաստ. ԺԷ, 15*): Բառը ունի «անշղթա, անկապանք» իմաստը: (Երկաթ «կապ, շղթա» իմաստը տե՛ս նաև *Սաղմ. ԾԴ. 18*):

ԴԱՇԽՈՐԱՆ «տաշտ, կոնք»: Արմ-ում ստուգաբանված չէ: Հաստատապես իրանական փոխառություն է (տե՛ս *AnAI, 1986*):

ԵՐԻԹԱՍԱԾԵԱԼ – «Ի շտապ տագնապի երիթամածեալ կային» (*Գ. Մակ. Ե. 28*): Անստույգ բառ է, վկայված է մեկ անգամ: Հունարեն բնագիրը համապատասխան հատվածը չունի:

ԹԵՂՕՇ (բույս) երբեմն թարգմանվում է սարոյ, նոճի:

ԿԱՐԿԱՆԴԱԿ (*Երեմ. Է. 18*): Արմ-ում ստուգաբանված չէ: Նույն արմատն է, ինչ նկան, նկանակ, բառերում (*Հովհան-նիսյան, ԲԵՀ, 1988, N 3*):

ՀԱՍՏԵԱՅ «խմորեղէն»- «արարաք մնա հաստեայս և կարկանդակս» (*Երեմ. ԽԴ., 19*): Վկայված է մեկ անգամ: Արմ-ը եղած մեկնությունները ստույգ չի համարում: Բառի մեջ կարելի է տեսնել թերևս հայս-հաս «գաթայի միջուկ» արմատը:

ՀՈՅ – «Սկսաւ ւահն և հոյն երթալ առաջի Յուդայ և եղ-բարցն» (*Ա. Մակ. Գ. 25*): Միակ վկայությունն է: Թերևս հոմանիշ է ահ բառին:

ՊԱԽ – «Եւ ոչ ուտիցէք ի նոցանէ հում և ոչ պախ եփեալ ջրով, այլ խորովեալ հրով» (*Ել. ԺԲ, 9*): Արմ-ում ստուգաբան-ված չէ: Իրանական ծագումը այժմ կարելի է հավաստի համարել. *հմմտ.* *puxtan* «եփել». *a* և *u*-ի համար *հմմտ.* *իրան. murg* – հայ. մարգ «թռչուն»:

ՊԱՐԱՆԻԼ – «Ելեալ ոգին անդէն և ոչ դառնայ և ոչ պարա-նի շունչն գրաւեալ» (*ԻՍ. ԺԶ, 14*): Բառարանները մեկնում են «դառնալ, ետ դառնալ»: Արմ-ը ծագած է համարում պար «շուրջ» արմատից: Ղարաբաղի բարբառում հաճախական պարանիլ «շրջել, պառկել», մաս այլ բազմաթիվ փոխաբերական կիրա-ռություն ունեցող բառը Սգր-ի նշված բառի զուգահեռն է:

բ) Բարդ բառեր

Աղեկեր, աղիւսադուռն, աղիւսաթիւ, աղջկորդի, աճիւնախառն, ամպագոյն, ամրախիտ, այգաւետ, այլայ-լախառն, այրասէր, անդամաթիւ, անդրանկածին, առաս-տաղակալ, արարչապետ, արդնընկեց, արիւնակալ, ար-ծակաքաղաք «անպարիսպ քաղաք», արօրադիր առնել «հերկել», բնադիր, գազանագէշ, գաղտակեր, գաւառա-կոյտ, գետարծուի, գետնառիւծ, գիշերախառն, գործա-տեաց, գորշապահանգ, գորշախայտ, գօտիածու, դայե-

կատոհմ, դաշտագետին, դաշտամուխ լինել, դատարկանձն «պարապ», դժուարածին, դժուարապատում, դիագերծ առնել, դիտապաստ, դրամաժողով, եզնալուծ, եզրածիրանի, եղենափայտ, երախակալ «կոթ», երդմնստութիւն, երեքքաղաքեան, երկծով, երկծի, եօթնածոր, զրախորհուրդ, ընդմիջաշաւիղ, ընդունայնամիտ, ընկուզագարդ, ընտրելակից, ժիրաժիր, իշանդամ, լալետող, լաշկամաշկ, իւղաթուրմ, լարաբաժին, լաւախօս, լիամագիլ, խակակութ, խառնամաժիգ, խառնածայն, խորախօս, խորանափեղկ, խորշահարութիւն, խրամապահ, ծայրակարմիր, ծանծաղամիտ, ծխանահան, ծնկասէր, ծովակոյս «ծովակողմ», ծովամաց, կանանցածին, կառապետ, կաւակերտ, հաստապինդ, հաստարմատ, հատավաճառ, հարկապետ, հացարարոց, հաւակեր, հաւահարց, հիւանդաքայլ, հօրամոյն, ձեռներէկ, մարդածախ, մարդելոյզ, ձմերատում, ձործաբեր, ճրագաբերան, մագագործ, մեծաթել, մեծաթիւ, մեծահաց, մեծամեծարար, մեկնակազէն, միաձեռանի, միաձոյլ, միործի, յետնածեր, նաւաղօղակ, նաւափայտ, նեարդապատ, նժդեհակից, նմանավիշտ, նշանախեց, նորակրօնութիւն, նորածայն, նորաճաշակ, նուագածու, շատերդումն, ողջընծայ, ոսկեման, ոսկիագէն, ոտներէկ, որսակից, ուղխաջուր «հորդառատ», պաճուճապատանք, պարգևապետ, պղծաշուրթն, պուտնարդ, պսակակալ, պտղաքաղ առնել, քրաբուղխ, սակաւահաւատ, սակաւավախճան, սայրադիր, սերմնակաթ (հիվանդութիւն), սկահաձև, սուսերածիգ, վագվագել, վարագոյրածիգ, վարագախառն, վարդայատակ, վերամարտիկ, վերնախարիսխ, վերնափեղկ, վիմարգել, վիրաբերան, վշտահան, վրանաբնակիչ, տախտապարել «փռել», տասնփեղկեան, տարագագործ, տեառնակողմ, տէգընկեց, ցեցակեր, փայտակոյտ, փղապան, քաղաքաժողով, քաղցկեղ, քանդակագործի, քաջայր, քաջահաւ, քարալից առնել, քարընդոտնեմ, քարընկեցութիւն, քարկուռ, քրքմացան, օծամարտ, օղալամբ, օտարատեսուհ, օրաթիւ, օրամուտ...

Այս ցանկի մեջ աշխատել ենք չմտցնել այն բառերը, որոնք վկայված են և V դարի այլ գործերում: Հետիինգերորդդարյան նորամուծությունները մասամբ կարող են լինել Աստվածաշնչից անկախ, բայց մեծ է և Աստվածաշնչի ազդեցությունը: Ցայտուն է հատկապես այս գրքի և Նարեկացու բառապաշարային ընդհանրությունը, որը թերևս հատուկ ուսումնասիրման նյութ է:

Վերը բերված ցանկի բառերի մի զգալի մասը Մակաբայեցվոց գրքերից է: Ինչպես հայտնի է, այս գրքերը մեզ են հասել նախնական վիճակով՝ առանց կրկին թարգմանության, սրբագրման կամ խմբագրման, որոնք խիստ արժեքավոր վկայություններ են (ամպագոյն, ամրախիթ, առաստաղակալ, գաւառակոյտ, դայեկատոհմ, խառնածիգ, հաստապինդ, հիւանդաքայլ, վարազախառն, տեզընկեց, քաղաքաժողով, քաջահայր, քարկուռ և այլն): Բարդ բառերի ցանկում այդ գրքերից բերել ենք 35 վկայություն:

Աստվածաշնչի բարդ բառերը հիմնականում երկարմատ են: Եռարմատ կազմությունների եզակի օրինակներ կան. անձնապահապետ, այլայլախառն, մեծամեծարար: Երբեմն հունարեն բնագրի կապակցության կամ նկարագրական եղանակով առկա արտահայտությունը թարգմանիչը ներկայացնում է բարդ բառով. պատարագաբարձ (*Դատ. Գ. 18*), պատարագաբեր (*Բ. Թագ. Ը. 2. Ը. 6*), պարգեւապետ (*Երեմ. ԾԱ, 59*), վիմարգել (*Եսայ. ԼԱ, 9*), վրանաբնակիչ (*Դատ. Ը, 1*), տասնփեղկեան (*Ելք, ԻԶ, 1*), փայտակոյտ (*Եսայ. Լ., 3*) – հուն՝ շատ փայտ: Հունարեն որոշ պարզ բառերի փոխարեն թարգմանիչը շրջանառության է դնում կազմությամբ բարդ բառեր. ցռկակապ, վիրաբերան (*Դատ. Գ. 22*), եղեւնափայտ:

Հունարենի և հայերենի միջև երբեմն առկա են իմաստային որոշ չհամընկնումներ՝ ըստ բաղադրիչների արտահայտած իմաստի. մազագործ (*Թիվ. ԼԱ, 20*) – հուն. «գործ յայծենեաց», մարդածախ (*Թիվ. ԺԳ, 33*) – հուն. «չարաչար ուտող», մեծահաց (*Բ. Մակ. Բ. 28*) – հուն. «գինարբուք, հյուրասիրություն», նորաճաշակ (*Իմաստ. ԺԶ. 2*) – հուն. օտար, վերնափեղկ (*Թիւ.*

7. 25) – հուն. փեղկ, գետարծուի (*Օր. ԺԴ. 13*) – հուն. «ծովարծուի»: (Այս օրինակները քաղված են ՆՅԲ-ից):

Որոշ դեպքերում համապատասխան համարժեքները հունարենը չունի. *հմմտ.* «Վարազախառն առիւծաբար յարծակէին ի վերայ գնդին թշնամեաց» (*Բ. Մակ. ԺԱ. 17*): «Զսիւնս պղնձիս տան տեառն և զխարիսխն և զոտսն և զվերնախարիսխն» (*Երեմ. ԾԲ, 18*): Ընդգծվածները հունարենում բացակայում են: Հայ թարգմանիչը դրանք ավելացրել է թերևս ոճական ինչ-ինչ նկատառումներով:

Անցնենք որոշ բառերի քննության:

ԱՂԻԻՍԱԴՈՒՌՆ – վկայված է մեկ անգամ. «Ա՛ն դու քեզ քարինս մեծամեծս և թաղեա զնոսա յաղիւսադրանն թաքստեան ի մուտս ապարանիցն փարաւոնի» (*Երեմ. ԽԳ, 9*): Բարդության բաղադրիչների իմաստից կարելի է ենթադրել «աղյուսից պատրաստված դուռ» նշանակությունը: Այդպես էլ մեկնում է ՆՅԲ-ն՝ «դուռն շինեալ յաղիւսոյ», ԱԲ-ն՝ «դրսի մեծ դուռ»: Աշխարհաբար թարգմանության մեջ դուռ հասկացությունը չկա. «Զեռքդ մեծ մեծ քարեր առ և նորանց թաղիր աղիւսատան կավի մեջ» (*Կ. Պողոս, 1906*): Ուսերեն թարգմանության մեջ մի քիչ այլ է. Возьми в руки свой большие камни и скрой их в смятой глине при входе в дом Фараона: Աղիւսադուռն, ըստ երևույթին պետք է թարգմանել նախադուռ: Մի խոսքով անհաջող նորակերտություն է թարգմանչի կողմից, եթե հետին աղավաղում չէ:

ԴՐԱՍԱԺՈՂՈՎ – «Եւ գտաճար սրբութեան դրամաժողով ի վարծու կացուցանել» (*Բ. Մակ. ԺԱ, 3*): Հունարենից անհաջող թարգմանությունն է, որի իմաստը ավելի լավ է արտահայտում ի վարծու կացուցանել կապակցությունը (*Կողյան, 1923, 13*):

ԵՐԴՄՆԱՍՏՈՒԹԻՒՆ – «Եւ ամենայն ինչ խառն ի խումն... անհաւատութիւն, խռովութիւն, երդմնատուութիւն, աղմկութիւն» (*Իմաստ. ԺԳ, 25*): Գրաբարին ավելի հարազատ է ստերդումն: Թերևս պատճենում է:

ԵՐԵՔՔԱՂԱՔԵԱՆ – «Դիմել... ի վերայ հեբրայեցւոց ընդ երեքքաղաքեան նաւահանգիստ» (*Բ. Մակ. ԺԴ, 7*): Հուն. τριπολις-ի թարգմանությունն է:

ԺԻՐԱԺԻՐ – «Ժիրաժիր մանկունս ընտրանաւ զայն յուսումն արուեստականացն տային» (*Բ. Մակ. Դ. 12*): Արմատի կրկնությամբ ածականի գերադրական աստիճանի իմաստ է արտահայտում:

ԽՈՐԱԽՕՍ – բազմիմաստ բառ է. «բազմագետ, խելամիտ» իմաստով վկայված է հետագա դարերից, իսկ «ծանրախոս, դժվարիմաց» իմաստով Աստվածաշունչը վկայում է մեկ օրինակ. «Ոչ եթէ առ ժողովուրդ խորախօս ծանրալեզու առաքեսցիս» (*Եզեկ. Գ. 5*): Հուն. բառացի՝ խորաշուրթն:

ՎԱՐԱԳՈՅՐԱԶԻԳ – «խուց, սենյակ»: Աստվածաշունչում կիրառված է երկու անգամ՝ (*Ա. Մակ. Դ. 38, 57*). «Տեսին... զդրունսն այրեցեալ, թուփ առ թուփ բուսեալ ի սրահսն իբրեւ յանտառի... զկոնքս աներեալս և զվարագոյրածիզսն խաթարեալս», «Ջարդարեցին զկոնքս և զվարագոյրածիզսն յանդիման տաճարին»: Ռ. Ֆիննացին նկատում է, որ եբրայական *liška* «խուց, փակ տեղ» տերմինը (հուն. *παστοφάριον*) հայերեն Աստվածաշունչը կիրառում է 10 տարբեր բառերով (կապակցություններով). տուն, դահլիճ, դիւան, շտեմարան, սենեակ, սրսկապան, պահապան, կոնք, վարագոյրածիգ, տուն շտեմարանաց և գանձուց: Հայերենի այս բազմազան համապատասխանակների պատճառը հունարեն տերմինի բազմիմաստությունից ու անհստակությունից է բխում: Այսպես, սրսկապանը համապատասխանում է «լվանալ, ջրել» իմաստին, վարագոյրածիգը՝ «զարդահյուսելին» և այլն: (*«Բազմավեպ», 1983, 339*):

ՓՂԱՊԱՆ – «Եւ վանդակակապ մարտկոցս մեքենայիւք ի վերայ փղացն կազմեցին և զփղապանն ի վերայ գլխոյն նստուցին...» (*Ա. Մակ. Զ. 37*): Հունարեն բնագրում հնդդիկ է: Հայերենի թարգմանիչը նկատի է առել նախադասության ընդհանուր բովանդակությունը:

ՔԱԶԱՀԱՅՐ – «Վասն ընդ երեւեալ Անտիոքայ կամ ընդ քաջահայր որդի նորա ճակատամարտս...» (*Բ. Մակ. Բ. 21*): Հունարեն *Ευ-παίος* «փառավոր հորից ծնված» բառի թարգմանությունն է: *Բ. Մակ. Ժ. 10*-ում թարգմանված է

հորամոյն. «Այլ վասն Անտիոքայ Երեւեալն անուանելոյ մահուանն այսչափ բանք. բայց վասն հորամոյն անօրէն զաւակի ցուցցուք համառօտ...»:

ՆՅԲ-ՈՒՄ ՉԿԿԱՅՎԱԾ ԲԱՌԵՐ

ԲԱՐՁՐԱՆՁՆ – «Իբրեւ առ թագ Անտիոքոս, կ'ացոյց ի վերայ իրացն արքունի կողմանցն ստորին Ասորոց և Տաճկաստանի զԼիւսիաս և զՊտղոմէոս՝ որում բարձրանձնն ասէին. զիրաւունս հաստատուն պահէր առ եբրայեցիս» (Բ. ՄԱԿ. Ժ. 10-12): Բառը Պտղեմէոսի մականունն է, հուն. μακρον-ի թարգմանությունը:

ՍՈՒՐԱՅԵՂՁՈՅՑ – «Քանզի բազում չարիս էր ցուցեալ նորա..., ուր հոլորն սրբութեան կայր և աճիւնն. վասն այնորիկ մոխրահեղձոյց մահու զկատարած իւր վախճանէր» (Բ. ՄԱԿ. ԺԳ. 8): Ունի ԱԲ-ը՝ «մոխրի մեջ խեղդելը» բացատրությամբ:

ՇԱԲԱԹԱԿՐՕՆ – «Սոքա զանցին զնոքօք փութացեալ ի քաղաքն Երուսաղեմացոց, զի տօնք եօթներորդ շաբաթակրօնիցն մերձ ի վերայ հասեալ կային» (Բ. ՄԱԿ. ԺԲ. 31): Ըստ ԱԲ-ի «հրեից շաբաթ պահելը»:

ՈՒՄԸՆԴԱՆՈՒԹ – «Եւ իբրեւ հասանէին ի ճակատուն տեղի, գտանէին զհրեանց եղբարց դիակունսն և ի ներքոյ հանդերձից նոցա յուռութ ուլունս և բժժանս յամենայն կողոց ուսընդանութ ունէին» (Բ. ՄԱԿ. ԺԲ. 40): Կարելի է թարգմանել «թևատակ»։ Ս. Կոզյանը նկատում է, որ համապատասխան հունարեն հատվածը հետևյալն է. «Գտանէին առ միոյ յանկելոցն ի ներքոյ հանդերձից բըժժանս յամենայն կողոց»:

ՆՍՏԱԳՈՅՆ – «Եւ տեսիլ արածին զնստագոյն իցէ քան զնորթ մարմնոյն» (ԴԵՆՈ. ԺԳ. 3): «Եւ եթէ տեսանիցէ քահանայն և ահա չիցէ ի նմա փայլիւն ինչ կամ մազ սպիտակ և ոչ նստագոյն քան զնորթն» (ԺԳ, 26, նաև՝ 4, 34): Բառի հունարեն համապատասխանակը «ցած»-ն է:

ՍԱԴԵՍՈՎԹ – «Եւ այրեաց զնոսա արտաքոյ Երուսաղեմի ի սաղեմովք կեդրոնի և արկ զմոխիր նոցա ի Բեթել» (Դ. ԹԱԳ.

*Ս. Կոզյանը նշում է, որ ուսընդանութ հավելված է «որը կը ցուցանէ թէ իւր ժամանակ հայ զինուորները հեթանոսական սովորութեամբ թիկունքը պաշտպանելու համար բժժանքը ուր կ'պահէին» (Կոզեան, 1923, 166):

ԻԳ. 4): Հավանորեն բառը գիտակցվել է որպես հատուկ անուն և չի արտացոլվել գրաբարի բառարաններում: (Ս. գրքի որոշ հրատարակություններում մեծատառով է գրված): Արմ-ում բառը բացատրված է «ծոր, հովիտ, դաշտավայր»: Աճառյանը նկատում է, որ եբրայերենում բառը նշանակում է «այգեստան, արտօրայք», բայց այստեղ «ծոր» կամ «հովիտ»:

ՔՈՌԻՆ «թիկնապահների խումբ» – «Առ զհարիւրապետսն և զքոռին և զռասիմ» (*Դ. Թագ. ԺԱ, 4, 19*): Ըստ Արմ-ի բնագրի *kari* բառն է, որ հուն. *χωρρι* ձևից անցել է հայերենին:

Այստեղ այբբենական կարգով ներկայացնենք նաև, այսպես կոչված, նորագիտ մնացորդաց գրոց մեջ այն բառերը, որոնք չկան հայկազյան բառարաններում: Ինչպես հայտնի է, այդ գրքի մանրակրկիտ լեզվական քննությունը կատարել է Հ.Աճառյանը (*Աճառյան, 1908*):

Ամխում «անխմոր», անոտնեայ «ոտի ներքին կողմը», արդեալ «տաշած», բերանպարիշտ «մատռվակ», զմծեալ «ապականված», լրի «եղեգնաքար», խաշնտես «հոտի վերակացու», խոստաւոր «ուխտական նվեր», ծխնի, կամախի «հուղարկավորություն», կճեատարած «մարմարով սալահատակած», հեծանացու «գերան շինելու փայտ, գերանացու», հրաւանդ «կասկարայ», մայրակոփ (մայր «փայտ» և կոփել բառից), մանգառ «խմորեղենի տեսակ», ոտնջեռեայք «մեծ ժողով», ուղերկութիւն «հուղարկավորություն», պատգարհել «ուժ գտնել», ստանձնակիր «բեռնակիր», ստանձնաւոր «բեռնակիր», վերստորի (գործիք է), վսեստակ՝ «ռոճիկ», քակքով «սրահ», քարապսակ «քարի ծայր, ծերպ», քեփուր «բաժակ»:

*Ստանձնել գրաբարում ունի նաև «շալակել» իմաստը (Բյուզանդացի, 1900, 197): Բյուզանդացու կարծիքով բառը Կորյունի հնարածն է, որովհետև «առաջին և երկրորդ դասուց մատենագիրք կրսեն յաճախ առնում ըստ անձին, բառնա՛ն ըստ անձին, ունին ըստ անձին» (ն.տ.):

**Վսեստակ Ամատունու բառարանում՝ «ծեծած ցորեն, ծավար»: Այս նշանակությունը հաստատվում է և բառի ստուգաբանությամբ. պիլ. *visistak* «ջարդել, զատել» (*AnAI, 6, 1985, 76-79*):

Գրաբարի բառարաններում չափանդված բառեր

Բնականաբար, այս կարգի բառերը շատ չեն, որովհետև գրաբարի բառարանները ըստ ամենայնի արտացոլել են Աստվածաշնչի բառային կազմը. ըստ էության բառարանների հենքը եղել է այդ գիրքը: Այլևայլ պատճառներով որոշ բառեր չեն բառարանագրվել: Բնականաբար, Ս. գրքի նորահայտ մի քանի հատվածներ, որոնք հայտնաբերվել են բառարանների հրատարակումից հետո, չեն արտացոլվել բառարաններում: Վերը խոսեցինք նորահայտ Մնացորդաց գրքի մասին, որի տվյալները արտացոլված են միայն Արմատական բառարանում: Ավելի ուշ հայտնաբերվել են Սիրաքի գրքի որոշ հատվածներ, որոնց նյութը գետնեղված չէ գրաբարի բառարաններում: Սիրաքի գրքի նորահայտ գլուխները հայտնաբերվել են Երուսաղեմի մի ձեռագրում՝ 1927 թ., որը մանրակրկիտ ուսումնասիրել է Ե.Դուրյանը («Սիրոն», 1927, նաև՝ *Դուրյան*, 1935): Սիրաքի գրքի նորահայտ հատվածներ կան նաև Մատենադարանի N 5608 ձեռագրում, որը հրատարակել է Գ.Աբգարյանը «Էջմիածին» ամսագրում (1966, N 11): Նա կատարել է նաև այդ տեքստերի մեծարժեք պատմաբանասիրական քննություն: Ինչպես հավաստում է Գ.Աբգարյանը, ուշագրավն այն է, որ Ե.Դուրյանի վերականգնած բառերից շատերը հաստատվում են Մատենադարանի N 5608 ձեռագրի միջոցով, իսկ ընդհանուր առմամբ «Մաշտոցի անվան Մատենադարանի N 5608 ձեռագրի շնորհիվ վերականգնվում է Սիրաքի գրքի հինգերորդ դարի թարգմանության սկզբնական բնագիրը, և գիտությանը հայտնի են դառնում հայ թարգմանական մտքի անգլուգական կոթողներից ևս մի քանի նմուշներ» («Էջմիածին», 1966, N 11, էջ 62): Նշենք, որ թե՛ Դուրյանը և թե՛ Աբգարյանը առանձնացրել են նաև բառարաններում չափանդված բառերը: Դրանք են.

ԳԵՏՆԱՆԱՅԵԱՑ – «Գետնանայեաց և ունկնարկեալ և ուր ոչ ճանաչիցի ժամանեսցէ քեզ» (ԺԹ, 24):

ՈՒՆԿՆԱՐԿԵԱԼ (տե՛ս վերևի օրինակը): Աբգարյանը նշում է նաև հունարեն համապատասխանությունները:

ԾՆԾՂԻՔ (ՁԸՆԾՂԻՔ) – «Եւ ծողեսցին ծնծղիք ի ջրոյ.

յամենայն ժողովս ջուրց իցէ և իբրեւ գրահ զգեցցի զջուրս» (*ԽԳ, 20*): «Ինչպես ծնծղիք, այնպես էլ ծընծղիքք բառերն անծանոթ են և առաջին անգամ, — գրում է Գ.Աբգարյանը, — հանդիպում են այս հատվածում: Հայտնի չէ, թե որն է սրանցից ճիշտը: Դուրյանը, որ ծանոթ էր միայն ծընծղիքք ձևին, գրում է: «այս բառը գործածուած է Gristal-ի նշանակութեամբ, ինչպես յոյնն ունի»: Պետք է լրացնենք, որ հունարեն բնագիրը Gristal բառը գործածել՝ է «սառույց» իմաստով, ուստի հայերեն **ծնծղիք և ծընծղիքք** բառերի տակ թաքնված է այս իմաստը: **Չընծղիքք**-ը հավանորեն աղավաղված բառ է (փոխանակ **ծնծղիկք**), որին և համապատասխանում է մյուս ձեռագրի **ծնծղիք** ձևը: Թերևս կարելի է մտածել, որ **ծնծղիկք** բարդ բառ է, կառուցվածքով նման **ծնծաղիկ** բառին և հավանաբար պետք է նշանակի «ծյան ծղիկք», այսինքն՝ «ծյան թևեր»: Ըստ այսմ պետք է մտածել, որ խոսքը ջրի սառչելու մասին է...» (*66*):

Ինչ խոսք, մեկնությունը ուշագրավ է, բայց բոլոր դեպքերում բառաձևը և իմաստը հստակ չէ:

ՈՂՋԱՊՏՂԵԼ — «Ձոռք նորա ողջապտղեսցին և հանապազ ըստ աւրէ երկիցս» (*ԽԵ, 14*): Ունի «ողջակեզ նվիրել» իմաստը:

ՀՐԱԳԻՆ — «Որ փչէ ի հնոց գործով գոլոյ, երեքպատիկ կիգու արեգակն զլերինս. շոգոլիս հրագինս հանէ» (*ԽԳ, 4*):

ՔԱՋԱՋԱՐԴՈՒԹԻՒՆ — «Երանելի արար զնա քաջազարդութեամբ և զգեցոյց նմա պատմութեան փառաց» (*ԽԵ, 7*): (*Դուրյան, 1935, 324*):

ՋԱՐՍԵԱՅՔ — «Եւ ոչ զգեցաւ այնպէս այլազգի, բայց յորդւոց նորա միայն և զարմեայք նորա հանապազ» (*ԽԵ, 13*): Այլ հատվածում՝ **զարմք** (*ԽԴ, 17*):

ՅԱԿՆՀԵՍՏՆ — «Որ յաճախէ ի բանս՝ զարշելի լիցի և որ յակնհեստն իցէ ատեսցի» (*Ի, 8*): Գ.Աբգարյանը ուղղում է յակնհեստն (ձեռագրում յակնհոստն է), համարելով հեստ «խիստ, անաստ, անհնազանդ» բառը, թեև ինքն էլ վերջնական ու հավաստի չի համարում:

*Նշվում է նաև թեթևասիրտ բառը, բայց սա նորահայտ չենք համարում, քանի որ վկայված է ՀՀԲ-ում հղված Սիրաքի գրքից (19. 4):

ԳՐԱԿԱՆ ՆՈՐՄԱՅԻՆ ՀԱՐՈՂ ԲԱՌԱՊԱՇԱՐ

Այս գլխում փորձ է արվում վեր հանելու և քննելու բառապաշարի այն շերտը, որ XIX դարի երախտավոր ուսումնասիրողները անվանել են ռամկական: Այսինքն՝ խոսակցական, բարբառային տարրերը, որոնք ի հայտ են գալիս V դարի մատենագրության մեջ: Մատենագրություն, որ մեզ է հասել կանոնարկված, գրավոր-գրական լեզվի մակարդակով, գրական լեզվի այն ընդհանուր չափանիշներով (քերականական, ոճական, բառապաշարային), որոնք թույլ են տալիս դատելու այդ շրջանի լեզվի օրինաչափությունների մասին:

Չխորանալով գրավոր (գրական) լեզու, գրական նորմա, կանոնական լեզու հասկացությունների տարբեր մեկնաբանությունների ու սահմանումների մեջ, որ գտնում ենք ընդհանուր լեզվաբանական բնույթի աշխատություններում, V դարի գրաբարի՝ որպես գրական լեզվի համար կանոնական ենք համարում այն ընդհանրականը, որ գոյություն ունի բազմաթիվ թարգմանական ու ինքնուրույն գրականության մեջ: Իսկ այդ ընդհանրականը (լեզվի տարբեր մակարդակներում) այնքան գերիշխող է, որ հաստատում է, թե V դարի գրաբարը եղել է համաժողովրդական-համընդհանուր՝ լեզու: Այս բոլորով հանդերձ, հայագիտության մեջ հստակ է նաև այն տեսակետը, որ չնայած գրաբարի կանոնարկվածությանն ու միասնականությանը, արդեն V դարի մատենագրության բառապաշարում ի հայտ են գալիս տարրեր, որոնք ավելի շատ բնորոշ են բանավոր-խոսակցական լեզվին, կամ տարածքային տարբերակներ են: Այս կարգի նյութի քննության գործում անգնահատելի է հատկապես Ա. Այտընյանի վաստակը (*Այտընյան, 1866*):

Ռամկական բառեր հասկացությունը այսօր կարիք է զգում փոխարինելու ավելի արդիական ու գիտական հասկացությամբ, մանավանդ որ այն բավական ներուճակ է և

ընդգրկում է բառապաշարային տարբեր բնույթի միավորներ: Բայց դժվարությունը հենց նաև հարմար եզր (տերմին) գտնելն է: Առարկելի է *ժողովրդախոսակցական* բառեր անվանումը, քանի որ V դարի գրաբարը նաև խոսակցական լեզու էր, և այս դեպքում հստակ չեն գրավոր (գրական) և բանավոր (խոսակցական) լեզվի սահմանները: Ել չենք խոսում այն մասին, որ նյութի աղբյուրը մեր մատենագրությունն է, այսինքն՝ V դարի գրավոր լեզուն:

Բարբառային բառեր անվանումն էլ ավելի քան առարկելի է, որովհետև այն ենթադրում է տարածքային տարբերակ, իսկ V դարի կտրվածքով հնարավոր չէ բացահայտել հայերենի տարածքային յուրահատկությունները: Եթե ուսումնասիրողը առանձնացնում է որոշ բառախմբեր՝ բարբառային բառեր որակումով, ցույց չտալով, թե դրանք որ տարածքին են բնորոշ, ապա *բարբառային* և *ժողովրդախոսակցական* բառերը ըստ էության մնում են չտարրորոշված: Անառարկելի է, որ V դարում և դրանից էլ վաղ եղել են բարբառային-տարածքային տարրեր: Սա ապացուցվում է լեզվական փաստերով և զանազան կարգի վկայություններով: (Հիշենք Կորյունի վկայությունը Սյունյաց բարբառի մասին, Եզնիկի՝ «Յորժամ մեք ասեմք թէ սիք շնչէ, ստորնեայք ասեն՝ այս շնչէ» (92), որտեղ ընդգծվածները քամի բառի համանիշներն են հյուսիսային և հարավային տարածքներում, Թրակացու մեկնիչների մոտ բազուկ բառի այլ արտասանությունների գրանցումը և այլն: Այս բոլորը և բազմաթիվ այլ օրինակներ դեռևս թույլ չեն տալիս սահմանազատելու բարբառային համակարգեր՝ գոնե բառապաշարի տեսակետից, թեպետ կրկնում ենք, այդ բնույթի բառերի վերհանման գործում հայ լեզվաբանությունը որոշակի ձեռքբերումներ ունի: Իհարկե, V դարի հեղինակների ու թարգմանիչների լեզվի բժախնդիր ուսումնասիրությունը (իսկ այդ բանին մեծապես կօժանդակի համաբարբառների կազմումը) կբացահայտի բարբառային այլազան իրողություններ, մանավանդ, երբ հայտնի է տվյալ հեղինակի ծննդավայրը: Սակայն արդի վիճակով V դարի բարբառային տարրերի մասին կարելի է խոսել միայն որոշակի վերապահությամբ:

Հաշվի առնելով բառային տարբերակների առկայությունը, նաև հոմանիշային շարքերի գոյությունը, բարբառային տարբերի զգալի նյութ է առանձնացնում Գ. Ջահուկյանը (*Ջահուկյան, 1972, 1982, 1987*): Ի տարբերություն նախորդների, նա առաջադրում է մի քանի սկզբունքներ ու եղանակներ, որոնցով տարբերակում է լեզվական միավորի բնույթը՝ բարբառային, թե հասարակական-գործառական կամ ոճական արժեք ունենալը: (*Джаукян, 1982, 8-10*): Տեսական այս նորույթը անշուշտ գնահատելի է և կգտնի իր հետագա զարգացումը, սակայն առաջ քաշված սկզբունքները այսօր դեռևս չեն կարող բարբառային տարրերի համապարփակ տարբերակման ու արժեքավորման հիմք հանդիսանալ: Դժվարությունը բխում է հենց նյութից: Պատահական չէ, որ ուսումնասիրողները մամնատիպ բառերի համար տալիս են տարբեր անվանումներ: Օրինակ, գրաբարի բառապաշարի լավագույն ուսումնասիրողներից մեկը՝ Վ.Առաքելյանը հաճախ նույն բնույթի բառերի համար օգտագործում է *բարբառային* բառեր (76-88), *գավառական* բառեր (167), *ժողովրդախոսակցական* բառեր (167), *գրաբարից շեղվող ձևեր* (199), *ժողովրդախոսակցական լեզվի տարրեր* (204) որակումները (*Առաքելյան, 1981*): *Գրաբարից շեղվող ձևեր* անվանումը նույնպես հարմար չէ, քանի որ այդ ձևերն էլ քաղված են գրաբարից, կազմում են նրա բաղկացուցիչ մասը և անկախ հաճախականությունից ու գործառական յուրահատկություններից ու այլ հանգամանքներից դրանք պետք է դիտել որպես բառապաշարի անկապտելի մաս: Այդ անվանումը նպատակահարմար չէ նաև այն պատճառով, որ հստակ չեն շեղումը պայմանավորող չափանիշները՝ մանավանդ տարաբնույթ նյութի դեպքում: Այս հանգամանքները հաշվի առնելով՝ առաջարկում ենք *գրական նորմային հարող բառապաշար* հասկացությունը, որի մեջ ներառվում են և այն միավորները, որոնք կարող էին լինել բարբառային-տարածքային և այնպիսիները, որոնք բնորոշ լինեին բանավոր-խոսակցական լեզվին՝ առանց տարածքային տարբերակման:

Բոլոր դեպքերում, եթե դրանք գրաբար մատենագրության մեջ ունեն նվազ հաճախականություն, բառածևային յուրա-

հատկություններ, իմաստափոխության դրսևորումներ, կիրառության տարածքային սահմանափակումներ, որով և տարբերվում են գրաբարի հիմնական բառապաշարի միավորներից, այնուհանդերձ, գրավոր-գրական լեզվում հանդես եկող տարրեր են, և կարելի է որակել որպես գրական նորմային հարող ձևեր, մանավանդ որ լեզվի զարգացման հետագա ընթացքում դրանց մի մասը միտում ունի դիտվելու որպես հիմնական բառապաշարային տարր:

Մեր առաջարկած վերնագիրն էլ պայմանական է, կարող է իրավացի առարկությունների տեղիք տալ, բայց առայժմ այլընտրանք չունենալով, նպատակահարմար գտանք այդ անվանումը: Մի շարք դեպքերում, հատկապես կոնկրետ օրինակների ժամանակ, կօգտագործենք նաև ժողովրդախոսակցական, բարբառային բառեր որակումը:

Որոնք են այն ելակետերը, որոնց հիման վրա կարելի է փաստարկել գրական նորմային հարող բառապաշարի առկայությունը: Հաշվի են առնվում մի շարք հանգամանքներ. **ա) բառային տարբերակների գոյությունը**: Մեր ուսումնասիրության մեջ հատուկ բաժին ենք հատկացրել գրաբարի տարբերակային ձևերի քննությանը: Դրանց մի զգալի քանակություն, անշուշտ, մեզ հետաքրքրող բառապաշարի մեջ են ներառվում: **բ) Հոմանիշների առկայությունը**: Գրաբարը աչքի է ընկնում հոմանիշների առատությամբ: Գ.Ջահուկյանը առանձնացնում է մոտ 800 հոմանիշային շարք (*Ջահուկյան, 1987, 390-408*): Սա դեռևս գրաբարի հոմանիշության սպառնիչ պատկերը չէ: Կարելի է մեծացնել և՛ շարքերը, և՛ շարքերում ընդգրկվող անդամների թիվը: Անշուշտ, հոմանշային տարրերը գործառական, ոճական ու իմաստային սովորական տարբերություններից զատ, երբեմն ունեն նաև տարածքային տարբերություններ: **գ) Բառերի նվազ հաճախականությունը**: Գրաբարում կան բազմաթիվ

*Բազմաձևությունը ավելի ցայտուն ու ակնհայտ է լեզվի տարբերակարդակներում. նույն հոլովի տարբեր վերջավորություններ, խոնարհման տարբեր լծորդումներ, եղանակաժամանակային փոխկիրառություններ, շարադասական առանձնահատկություններ, ոճական տարբեր միջոցներ, համաձայնության զանազան դրսևորումներ և այլն:

բառեր, որոնք նվազ հաճախական են կամ եզակի վկայություններ են: Բոլոր դեպքերում չէ, որ դրանք կարելի է համարել որպես գրական նորմային հարող ձևեր: Բացառված չէ, որ զուտ գրական լեզվին բնորոշ բառը եզակի վկայություն ունենա կամ մեզ հասած լինի որպես եզակի վկայություն: Այս կարգի բառերի մի մասն էլ կարող է լինել հեղինակային նորամուծություն, բայց չպետք է անտեսել նաև դրանց բարբառային կամ խոսակցական լեզվին բնորոշ լինելու պայմանը: *դ) Բարդ բառածևի արդի որևէ բարբառում կամ բարբառների մի խմբում պահպանվելը*, մանավանդ, երբ գրական լեզվում կամ բարբառների մի այլ խմբում դրանք բացակայում են, կամ համապատասխան հասկացություններն արտահայտվում են այլ բառերով:

Նկատենք, որ ոչ միայն բարբառների, այլև մի կողմից գրաբարի, մյուս կողմից՝ արդի արևելահայ և արևմտահայ գրական տարբերակների զուգադրումը կարող է ուշագրավ իրողություններ բացահայտել*:

Վերոգրյալ այս չորս հիմնական հատկանիշների հաշվառումով փորձենք առանձնացնել գրական նորմային հարող բառաշերտը:

I ՏԱՐԲԵՐԱԿՈՒՄ ԸՍՏ ԽՈՍՔԻ ՄԱՍԵՐԻ

Գոյականների համակարգում նշելի են հետևյալ հանգամանքները. *ա) հոմանիշների առկայություն*: Ահա հոմանիշային մի քանի շարքեր, որոնց առաջին անդամը մեր կարծիքով կարելի է համարել որպես գրական տարբերակ, մյուսները (կամ դրանց մի մասը)՝ բարբառային-խոսակցական: Ախոռ-ասպաստան, ամ-տարի, աղաւրի-երկան-մուլ, անդեայ-տուար, արջառ-պախրէ-պաճառ, ասր (բուրդ)-գեղմն-գզաթ-կիզն, բիր-ջին-գաւազան-մահակ, գուր-

* Հայագետ Ֆ. Ֆեյդին, օրինակ, գրաբարի համբառնալ «բարձրանալ» (վկայված է Խորենացու Աբգարի թղթերում) և վերանալ «բարձրանալ» (կիրառել է Եվսեբիոսի թարգմանիչը) բայերի զուգահեռները տեսնում է համապատասխանաբար արևելահայերենի բարձրանալ և արևմտահայերենի վեր(ելել) ձևերի մեջ (Բազմավեպ, 1967, 78):

ծակ-փապ, թագուհի-բամբիշն-դշխոյ, թակարդ-գառա-
գիւղ-ծուղակ-հաղբ-վարմ, հովիւ-հօտարած-խաշնարած-
տուարածական, մոխիր-աճիւն-շլան, ողն-շալակ, ստուեր-
շուք, վիզ-պարանոց-ուլն:

Բնականաբար չենք բերում հոմանիշային բոլոր շարքերը:
Բավարարվում ենք բնորոշ մի քանի օրինակներով:

բ) Որոշ ածանցների ու մասնիկների առկայություն:

-*ութիւն-ով կազմություններ*. աղանդութիւն, աղմկու-
թիւն, արգելաւորութիւն, գումարութիւն, գլխացաւու-
թիւն, ծարաւութիւն, կշռութիւն, լալութիւն, կորովու-
թիւն, նախանծութիւն, շաբաթութիւն, շատութիւն,
ոտնափոխութիւն, վզանութիւն, օգտութիւն...

Ինչպես նկատում է Այտընյանը. «... այնպիսի անսովոր -
ութիւններ ունինք, որոնց թէ իրօք ռամկական էին, թէ
գաւառական էին, թէ անձնական, թէ սխալական գործածու-
թիւններ, դժուար է որոշ մեկնութիւն մը տալ» (*Այտընյան, 1866,*
74-75): Անշուշտ, *ութիւն-ով* բոլոր կազմությունները այս խմբի
մեջ չպետք է մտնեն: Վերոհիշյալ դասակարգման մեջ մտնում
են այն բառերը, որոնք առանց այդ ածանցի էլ կիրառվում են
նույն իմաստով, կամ *ություն-ը* ըստ էության հոգնակերտ
մասնիկ է (*գերութիւն «գերիներ», մարդկութիւն «մարդիկ»,*
զինուորութիւն, աշակերտութիւն, քահանայութիւն և
այլն): «Ձէն զինուորութեան մերոյ ոչ է մարմնաւոր» (*Բ. Կորնթ.*
Ժ. 4): «Առաւելագոյն զաշակերտութիւն նորագիւտ վարդա-
պետութեան խմբէին ուսուցանել» (*Կորյ. 58*):

-*անք-ով կազմություններ*, մանավանդ, երբ -*անք-ը*
համանիշ է -*ութիւն* ածանցին, կամ բառարմատը կարող է
հանդես գալ նույն իմաստով առանց -*անք* ածանցի. աշխա-
տանք, բարեխօսանք, բարուրանք, գողանք, գովանք,
դժուարանք, թշուառանք, գկծանք, զիտերթանք, խու-
սափանք, ծուլանք, կատականք, հարցովործանք, յեր-
կուանք, շամբշանք, ստկանք, ջախջախանք... Թերևս այս
շարքի մեջ կարելի է գետեղել նաև *անձնանուն+անք* կազ-
մությունները. Վարդանանք, Մարեմանք, Աղամանք... մանա-

վանդ եթե նկատի ունենանք -եանք ածանցով զուգահեռների առկայությունը:

Գոյական+ աւոր կազմությունը «մասնագիտություն, նախատիպ բառի արտահայտած իմաստով զբաղվող մարդ» նշանակությամբ. թիաւոր «բահով աշխատող», գեղաւոր «պարող, կաքավող», մայրեւոր «փայտ կտրող», զինուոր, քրուոր, որթաւոր «կողով տանող»: «Ժամանակ պատերազմի է և դու զգեղաւորացն արուեստ առնուս ի ձեռն»: «Եւ հասանէ տեսանել այնուհետև աղբակիրս, որթաւորս, թիաւորս»: (Օրինակները քաղված են *Թոռնյան, 1910, 167, 174*):

-իկ *փաղաքշական ածանցով կազմություններ*. աղիկ, ամիկ, աչիկ, եղեգնիկ, երիվարիկ, երկրիկ, ըմպիկ, ընչիկ, իւղիկ, խաղալիկ, ճանճիկ, մանկիկ, մրգիկ, պախրէիկ, պատանեկիկ...: Բառերը նվազական-փաղաքշական ձևով գործածելը առավել բնորոշ է հայ հին բանահյուսության լեզվին: Այսինքն՝ դրանց ակունքները գալիս են բանավոր-խոսակցական լեզվից:

-ի *ածանցով մի քանի բառեր*. շանի «շան կերակուր», ձօնի «նվեր», շնջրի «ջրաշուն»:

-ան, -անի, -եան, -ներ, -եար, -տի *մասնիկներով հոգնակի կազմություններ*. աւագանի, բերդակալեան, բերդեան, գահոյանի, գլխանի, գրեար, եպիսկոպոսեան, զօրագլխեան, կալուտի, հայորեար, ծիան, մոգեան, վարժեար, փորոտի... Փարպեցին ունի -եր հոգնակերտով երկու բառ՝ բաներ, ձեռներ, որոնք, եթե հետհինգերորդ դարյան մոլժումներ չեն, ապա հիմք են տալիս կարծելու, որ արդի հայերենի -եր հոգնակերտը գործառու էր V դարում կամ ավելի վաղ և բարբառային կամ ժողովրդախոսակցական երանգ ուներ:

Առավել դժվար է բարդ բառերի տարբերակման հարցը: Կարելի է նշել մի քանի բառեր, որոնք ունեն իրենց՝ կազմությամբ պարզ համանիշը. իշակէս «ջորի», ոտնալուացք «կոնք», ոտնափոխութիւն «քալք»: Արեւագալ, ողջեգալ և նման կազմությունների երկրորդ բաղադրիչը հուշում է, որ բառը ժողովրդական մտածողության արգասիք է:

Գոյականների համակարգում տարբերակումը ավելի

դյուրին է դառնում կոնկրետ իմաստային խմբերի դեպքում: Օրինակ, արհեստագործական իրեր, բույսեր, կենդանիներ նշող բառերի մի մասը կարելի է տարածքային տարբերակ համարել: Այսօր էլ հայերենի տարբեր բարբառներում մամռօրինակ իմաստային խմբի շատ հասկացություններ տարբեր անվանումներ ունեն: Վ.Առաքելյանը իրավացիորեն նկատում է, որ դուրզն «բրուտի անիվ», ծանոթ կլիներ այն վայրերում, որտեղ կավե անոթներ էին պատրաստում (*Առաքելյան, 1984, 72*):

Արհեստի հետ կապված բառերից նշենք. ապրդում «սանձ», բլշակ «տաշտ», դուրզն, լական, ուռն «մուրճ», սապատ «կողով», հողաբիր, շմբոց «պարկ», օղալամբ: Արդի բարբառներում էլ շատ սովորական են նույն իրերի տարբեր անվանումները, իսկ այդ անվանումները կամայական չեն, այլ պայմանավորված են արտալեզվական և ներլեզվական մի շարք գործոններով (բնիկ կամ փոխառյալ լինելը, այս կամ այն նյութից պատրաստված լինելը, տվյալ առարկայի կիրառության բուն և երկրորդական ոլորտը և այլն): Պատահական չէ, որ գրաբարում «սանձ» իմաստով առկա են հետևյալ համանիշները. սանձ- դանդաճաճանդ- երախակալ- շրուշակ- երասանակ- պախուրց- վարապան- վարաւանդ: Անշուշտ, այս համանիշներից մի քանիսը տարածքային տարբերակներ են: Կենդանական աշխարհին վերաբերող բառերից. ընջուղ «երինջ», խառնիճ, կոզեռն, խոճկոր, կառաժուղ, օդի «ոչխար», արտաւազդահաւ, խորդ «կռունկ», հոլամուկ, տարմահաւ, մաքալուկ...: Բուսանուններից. կայծուկ (առկա է և Ղարաբաղի բարբառում), եղիճ, խայթահար, կաղանջան, մեղրուկ, մոլաթուզ, սրափուշ, ցրդնի (կա Ղարաբաղի բարբառում):

Իմաստային որոշ խմբերում բառապաշարի տարբերակվածությունը հավաստող փաստեր ավելի քիչ են, օրինակ, ազգակցական հարաբերություն արտահայտող բառախմբում մենք գտանք միայն երկու բառ. կեսուր (*փխն. սկեսուր*), որ մեկ անգամ կիրառել է Եզնիկը. «Յորժամ դուստր զմայր անարգիցէ և նու զկեսուր իւր... մի ինչ տարցին ընդ միտ» (60) և քոյր բառի քուեր ձևը՝ Եփրեմ Ասորու կցուրդներում. «Եղբայր, ահա

հրաւիրեցաք ի հարսանիսն, որ խօսեցաւ քուերն» (*ԻԶ. 95*): Թեև Ակիմյանը ծանոթագրում է, որ «քուերս գրչէն ռամկացված է» և պետք է կարդալ «զի քոյր իմ»: Սակայն սա կարելի է և գրչագրական սխալ չհամարել: Եզնիկն էլ ունի քուրական (*122*), որը բարբառային կամ խոսակցական է՝ քեռական (*147*) կանոնական ձևի դիմաց:

Ի դեպ, Է.Աղայանը քուեր ձևը հին բարբառային է համարում՝ քոյր բառի հ.-ե. նախաձևի և բարբառային ձևերի՝ համադրումով (*Լրաբեր, 1958, N 5, 73*): Գրաբարում ավանդված քուեր ձևը, որի գոյությունը հավանաբար հայտնի չէր Է.Աղայանին, հաստատում է գիտնականի կարծիքը:

Ածականների համակարգում նույնպես կարելի է առանձնացնել *ա) հոմանիշային շարքեր*. անմիտ-ախամախ-անոպայ-ապուշ-բախած-մորոս-յիմար-պանդոյր, արու-ործ, բազում-շատ, բազմաջուր-շատաջուր, ծաղրածու-զաւեշ-տարար-հտպիտ-միմոս-խեղկատակ-հացկատակ-երկապաշտէշաղակրատ, մեծամիտ-անձնագով-ամբարիաւաճ-ամբարտաւան-գոռ, պինդ և անոսր-հաստ և բարակ, սեւաւ-թուխ: *բ) գրաբարում նվազ հաճախական պարզ (ածանցավոր) ձևեր*. նիհար, հերիք, տաք, կոճատ, սիրուն, թասուն, գագաշոտ: Բերենք մի քանի օրինակ: «Մատուցանէք ի սեղան իմ հաց պղծութեան գխտտանն և գյափշտակիչն և զանօգուտն այսինքն նիհար» (*Մանր. 57*): ՆՅԲ-ն V դարից նիհար բառով օրինակ չի բերում: «Որ անչափ ջերմութեամբ տապախառն օդոցն հոծեալ տաքին և անկշիռ անզուգութեանցն տանին պարսաւանս» (*Պիտ. 465*): ՆՅԲ-ն վաղ շրջանից տաք բառով միայն մեկ վկայություն է նշում՝ Խորենացուց. «Մինչդեռ տաքն էր իբրեւ գիւր՝ եդ ի գլուխ Մեհրուժանայ» (*305*): Այս վկայությունները որպէս լրացուցիչ փաստարկ կարելի է դիտել հօգուտ այն կարծիքի, որ Պիտոյից գրքի թարգմանիչը Խորենացին է, մյուս կողմից կարելի է ենթադրել, որ այդ ածականը գործածական էր հեղինակի մայրենի խոսվածքում: Սիրուն բառով ՆՅԲ-ն բազմաթիվ օրինակներ է վկայում՝ նշելով հետևյալ իմաստները՝ «սիրելի, սիրեցյալ, սիրային, սիրող, բարեսեր, հաճոյական, ուսումնասեր»: Ինչպես տեսնում ենք, «գեղեցիկ» իմաստը չկա:

Մեզ հանդիպել է մեկ օրինակ, որտեղ հենց այդ իմաստն է, որը և պահպանվել է արդի որոշ բարբառներում ու ժողովրդախոսակցական լեզվում. «Սիրուն, գեղեցիկ և վայելուչ է» (*Ձգոն, 52*): *գ) Ածանցավոր մի շարք կազմություններից նշենք -իկ-ով փաղաքշական ձևեր*. հանդարտիկ, հեզիկ, -իկ-ով այլ բնույթի կազմություններ. արագախաբիկ, արշաւանիկ, աղացիկ, գողացիկ, գինեվաճառիկ, զարդասիրիկ: *Այլ ածանցներով*. արքայենի «արքայական», բռնցի, լրբենի, խռովուտ, հեշտին, մատնտու «մատնիչ», մեռոտ «մեռյալ»: -երէն ածանցով հայերէն, յունարէն, ասորերէն և նման կազմությունները թերևս խոսակցական լեզվին են բնորոշ, իսկ ավելի գրականը հայոց (լեզու, բարբառ) տիպի կառույցներն են:

Զ-ով ժխտական ձևերից՝ չգիտու, չուտելի, չվշտասեր, չմարթու: -ու ածանցով ածականներից՝ խաբու «խաբող», խուսափու, ծաղկու «ծաղրածու», խաչահանու, չմարթու «անպիտան»: *դ) Երկարմատ կազմություններից* նշելի են արմատի կրկնությամբ ստեղծված ձևերը, որը փաստորեն ածականի գերադրական աստիճանի արտահայտման յուրատեսակ միջոց է. մեծամեծ, ժիրաժիր, քերմաքերմ...: Ակնհայտ ժողովրդախոսակցական է և սուտ-մուտ ածականը, որ ՆՅԲ-ն էլ նշում է որպես ռամկական: «Ամենայն ագահութիւնք և պոռնկութիւնք և սուտ մուտ երդմունք» (*Կիրոյ. 325*): Կա և լուռ մուռ (*Թռռնյան, 445*): Այլ կարգի բառերից. արևկայ, լաւախօս, կիսաբերան, մաղմաղ, տնպահ, գեռաթաթախ, կնձածայն, ետեւախաղաց, յաւետախաղաց, բերանպարիշտ, ոտնառ «լարծուն», մեծահաց: Պետք է նշել *ածական+խառն* կազմությունները. քաղցրախառն, ամոքախառն, մեղմախառն, տապախառն, խառնագնաց, խառնախուժ, խառնակոխ, խառնածայն: Սրանց ժողովրդախոսակցական բնույթը կարելի է փաստարկել զանազան նկատառումներով (փոխաբերացված իմաստ, նվազ հաճախականություն, բաղադրիչներից մեկի ոչ սովորական իմաստ և այլն): Անդրադառնանք մի քանի օրինակների: Մաղ մաղ «դանդաղ, կամաց-կամաց» իմաստը գրաբարի բառարանները չեն նշում: Ահա գրաբարյան օրինակը,

որ ծանոթ չէ հայկազյան բառարանագիրներին. «Հաց կսկուծ, որ նկան կոչի և լինի այսպես. սալ ջեռուցանեին, յորոյ վերայ զճարպն թացեալ անաստառ անդ դնէին և ապա մաղ մաղ ի վերայ արկանէին» (*Եւս. Մեկն. 182*): Բառը այդ իմաստով առկա է Ղարաբաղի բարբառում: Կերելուրաց բառը ունի «ամշնորհակալ, երախտամոռ» իմաստը և վկայված է Պրոկղի թերթերում. «... Ձի վասն հեբրայեցւոց ասաց զկերելուրաց և զաստուածամարտաց ազգն» (*ՀԱ, 1914, 323-324*): Այսօր էլ ժողովուրդը օգտագործում է ուտող-ուրացող համատիպ արտահայտութիւնը: Բերանպարիշտ «մատռվակ»՝ բառացի բերանին ծառայող նույնպես ժողովրդական մտածողության արգասիք է: Լաւախօս (*Միր. Զ. 5*) եզակի վկայություն է, հաճախական է բարեխօս-ը: Ուշագրավ են խաղամ բայի անցյալի հիմքով կազմությունները: Ինքնախաղաց նշանակում է «ինքնաբուխ», յաւետախաղաց՝ «մշտաբուխ», ամպախաղաց՝ «ամպերի վրայով շարժվող», ետեւախաղաց (բառարաններում չկա) ըստ երևույթին նշանակում է «ծորում»։ «Եւ իւրովն ետեւախաղաց խոնաւ բնութեամբ արտաքոյ ամրածածուկ շտեմարանացն ծորեալ եղեալ հեղուցու» (*Քրտղ. Ը*): Գեռաթաթախ «ցեխոտ» հանդիպում է միայն Մանդակունու մոտ. «Ձի կարող է ապաշխարութիւն զսեւացեալս մեղօք սպիտակացուցանել և զգեռաթաթախսն մաքրել» (*27, նաև 147, 167, 186*):

Բայական համակարգում առաջին հերթին նշելի են եզակի վկայությամբ, արտաքին-հնչյունական տեսակետից բարբառային-խոսակցական ձևերին հարող կազմությունները. աքսոտեն «վեր ցատկել», լափատեն «կծոտել, խժռել», խնծղամ «զվարճանալ», խշտրեն «արհամարհել», խոճոճեն «խոկալ», ըմփորոտեն «ուռեցնել», ծոխիմ «խոտորվել», կծտամ «կծել», կոճկոճեն «չարչարվել», շաքլեն «ընծուղել», ուռթել «ուռութս առնել», պողեն «վանել»: Զ-ով ժխտական կազմությունները նույնպես պետք է խոսակցական շերտի մեջ ներառել: «Ձի եթ զընկեր չառէր հրաման դատել» (*Մանդ. 93*): «Չերկմտել յասացելոյն» (*Ոսկ. Ես. 83*): «Եթե ըմբռնեն, ասէ չտամ ապրել» (*Ն. տ., 279*): «Չգիտէ ունել շնորհ, չհամարի թէ ունի ինչ» (*Ոսկ. Պող. 1 235*): «Այլ սոքա չողորմին ... այլ չունին ներումն

սոքա» (302): «Քանզի բազումք ասեն. չար երազ տեսի և չգիտեմ զինչ...» (ՀԱ, 1995, 352): «Զեհաս ի քաղաք ընկալչին իւրոյ, չենուտ ի յառագաստն, չետես զվայելչութիւն աշխարհիս» (Մամբրէ, 17): Զ-ով և ոչ-ով ժխտականները գրաբարում հաճախական են: Համամիտ ենք այն կարծիքին, որ վերջինները կարելի է համարել գրավոր-գրական լեզվի յուրահատկություն. Այտընյանի բնորոշմամբ «ճիշդ և ծանր գրաբար» (Այտընյան, 67):

Գրաբարը հարուստ է բայական հարադրություններով: Ուսումնասիրողների հավաստմամբ դրանք ժողովրդական մտածողության արտահայտություն են: Բերենք մեր համոզմամբ խոսակցական-բարբառային երանգ ունեցող որոշ օրինակներ հարադրական բայերով. Երեկօթս առնել «իջևանել», այրացաւեր առնել «ավերել», գնայր գար և ուտէր (Զգօն, 242), «Եթե պոռնկեցի, ասէ զինչ տայցես առնել: Առն տուր. հատ զպատճառս պոռնկութեան» (Ոսկ. Պող. I 834): «Տես ուր տարաւ եհան զնա» (Ոսկ. Պող. II 395): «Հազարապետն էառ տարաւ զիս» (Զգօն, 199): «Զի եկին առին տարան զնա» (Ն.տ., 54): Խաբ գործել «խաբել» կապակցությամբ ՆՂԲ-ի վկայած օրինակները ուշ շրջանից են (Ասողիկ, Ուռհայեցի), բայց այն կա և Եվսեբիոսի Քրոնիկոնում. «Խաբ գործեալ նմա ... մեռանէր» (345): «Սպանանէր ի Նիկոնովրայ ուրումն Գաղատացւոյ խաբ գործեալ» (347, նաև 350): Անպայման այս շերտին են պատկանում դուռն դնել «դուռը փակել», գնոյ տալ «ծախել», գնոյ առնուլ «գնել», նուազս ածել «նվազել», ձի ածել «ծիավարել» հարադրությունները:

Գրաբարի բայակազմությունը այնքան ճկուն է, որ ըստ էության բոլոր գոյականներից կազմվում են բայեր: Այդուհանդերձ, որոշ կազմություններ, մասնավանդ եթե դրանք եզակի վկայություններ են, թերևս գրական նորմայի մեջ չեն մտել: Այդպիսինն է մեր կարծիքով ամանել «ամանի մեջ լցնել» բայը, որ հանդիպում է մեկ անգամ. «Եւ եթէ մտանիցես յայգի ընկերի կերիցես խաղող մինչև ցյազել անծին քո, բայց աման մի ամանայցէ» (Բ. Օր.): Բառը նշված իմաստով կա և Համշենի բարբառում: Մոմնել «մոմով պատել», դարծյալ եզակի վկայություն

է. «Զմորթն հանեալ մոմնեալ իբրեւ զպարկ» (ԵԶԲ):

Գրաբարի պատճառական բայերը կազմվում են -ոյց ածանցով, բայց այդ իմաստը հաճախ արտահայտվում է նաև անորոշ դերբայի և տալ բայի հարադրությամբ՝ տալ ածել, տալ գործել ... Վերջիններս ըստ երևույթին ունեն խոսակցական-բարբառային հիմք: *ժխտական մասնիկ + տամ* կազմությամբ գրաբարը հաճախ արտահայտում է «թույլ չտալ» իմաստը. «Ոչ տայր ական հատանել», «ոչ տայր խօսել դիւացն», «մի տայք մեռանել» և այլն: Եթե սա օտար որևէ ազդեցություն էլ է, ապա ըստ երևույթին զուտ գրքային ոճ է: Արդի որոշ լեզուներում այդ կառույցը նույնպես կա. *հմմտ. ռուս. не дам писать*.

Սի քանի բայերի երկրորդական իմաստներ ըստ երևույթին բնորոշ են եղել խոսակցական լեզվին. հասանեմ «ըմբռնել», համարեմ «հաշվել», գումարեմ «ուղարկել» և այլն: «Ոչ հասանին բազում իրք» նախադասությունը թարգմանվում է «չատրաներ չեն ըմբռնվում»:

Թվականների շարքում պետք է նշել տասնավորի առաջադասությամբ կազմությունները: Գրաբարում որպես կանոն 11-19 թվականները կազմվում են միավորների առաջադասությամբ: Առանձին դեպքերում հանդիպում ենք նաև տասն և մի, տասն և երկու, տասն և ութ (*Բագրատունի, 63*): Սրանք անշուշտ բնորոշ են եղել խոսակցական-բանավոր լեզվին, որից և ժառանգել է արդի հայերենը: Աստվածաշնչի հին ձեռագրերում և հրատարակություններում հանդիպող այդօրինակ ձևերը Պոլսի 1895թ. հրատարակության մեջ, որը լավագույնն է համարվում, ուղղված են: Եթե իրոք, միավորների առաջադաս ձևերի ակունքները V դարից են, ապա հրատարակիչների այս միջամտությունը չի արդարանում:

Ութանասուն (փխն. ութսուն) նույնպես կանոնական ձևից չեղում է, թերևս յոթանասուն-ի համաբանությամբ. «Աուրք կենաց մերոց ութանասուն ամ եթ զօրութեամբ ութսուն ամ» (*Ոսկ. ԵՍ. 233*): Անպայման ժողովրդական մտածողության արտահայտություններ են (գուցե և օտար ազդեցություն) երկու յիսուն (*փխն. հարիւր*), *հինգ հանդերձ տասամբ (փխն. հնգետասան)* վկայությունները: «Պատմի սորա ի նոյն աւուրս

սերեալ ազգ և զորդիսն Տուրայ, պատանիս հինգ հանդերձ տասամբ...» (*Խոր. 174*): «...զուր ի հարիւրսն ինքեան ձեռօք սատակեաց և զերկուս յիսունս անշէջ հրոյն մատուցանէր լուցկիս» (*Եղիշ. 108*): Ուղղական հոլովով գոյականի հետ չորս թվականի գործածությունը *չորք*-ի փոխարեն գրական նորմային հարող կիրառություն է: Եվսերիոս Կեսարացու ժամանակագրության մեջ հանդիպում են պակաս քան, աւելի քան + թվական կազմությունները. «Եւ յետ մորա վախճանելոյ Ագրիպաս թագաւորեաց ղատինացւոց միով աւելի քան զքառասուն ամ» (*390*): Այս կարգի օրինակները լատիներենից պատճենումներ են, զուտ գրքային կիրառություններ, և ժողովուրդը այս ձևերը բնավ չի գործածել:

Եթե գրաբարը ունենար բաշխական թվականների հատուկ ձև, ապա թվականների կրկնությամբ արտահայտվող բաշխականությունը կարելի էր դիտել որպես խոսակցական լեզվի յուրահատկություն: Համեմայնդեալ, անկախ մեկ այլ ձևի գոյությունից եւթն եւթն, երկու երկու և նման կազմությունները կենդանի, առօրյա խոսքից ակունքված ձևեր են, որոնք գործառույն են և մատենագրության մեջ. «Եւ յամենայն անասնոց սրբոց մոյծ ընդ քեզ եւթն եւթն արու և էգ» (*Ծմնդ. է. 2*): Թվական + պատիկ և կին մասնիկներով (երեքպատիկ, երեքկին) կազմություններից մեկը թերևս ժողովրդախոսակցական-տարածքային տարբերակ կարելի է դիտել: Դրանցից հնագույնը թերևս կին մասնիկով ձևն է, այդ է հաստատում կրկին-ը՝ երկ արմատի նախնական րկ-ի դրափոխությամբ: *Հնգապատիկ, չորեքպատիկ* ձևերը ավելի նոր են և եթե V դարում ընդհանուր համաժողովրդական կիրառություն են ունեցել, ապա բնորոշ են եղել կենդանի խոսակցական լեզվին: Բացառված չէ, որ դրանք լինեին տարածքային տարբերակներ, մանավանդ, որ պահպանվել են միայն արևելահայ որոշ բարբառներում (Ղարաբաղ, Մեղրի):

Դերանվանական համակարգում մեզ հետաքրքրող ձևեր՝ առավել ևս օրինաչափություններ դժվար է գտնել: Այդուհանդերձ, թվում է, որոշ զուգաձևություններ կամ ոչ սովորական ու նվազ հաճախական կազմություններ կարելի է դիտել որպես

նորմային հարող կիրառություններ: Ոսկեբերանի Սաղմոսաց մեկնության նորագյուտ հայերեն թարգմանության մեջ համդիպում ենք այնգունի «այսպես, այսպիսի» դերանվան. «...գիւրեաց զանծինս համարին առ ի յայնգունի որերոյն հպատակելոյն և խոնարհելոյն» (ՉԱ, 1917-18, էջ 19): «Այլ յայնգունի ալեացն ազատեալք» (22): Ակինյանը ենթադրում է այնգոյն արմատական ձևը՝ գոյն «պես, նման»-ից: Մեր կարծիքով ոչ գրական է և այտի/այդի դերանվանական կիրառությունը: *Չմմտ.* ի պատուհասէ այտի (ՆՅԲ): Կարելի է ենթադրել, որ արդի որոշ խոսվածքների էսի, էտի-ի ակունքները գալիս են գրաբարից: Միմեանց և իրերաց համանիշներ են: Արդի որևէ բարբառում միմեանց-ը չկա, իսկ իրերաց-ը պահպանվել է: Երևի գրաբարում այն ավելի խոսակցական երանգ է ունեցել:

Մակբայական նշանակություն ունեցող բառերից կարելի է առանձնացնել -ի-ով և -ուն-ով վերջացող մի շարք բառեր. գրդի, գարնանի, երեկի, անգամուն, երեկուն, յառաջուն... «Թէպետ և ոչ միոյ անգամուն գործիցէ, այլ տասնանգամուն» (Ոսկ. Պող. 222): «Որ յառաջուն էր ելեալ յերկիրն Յայոց և ընդ երկիրն Վրաց» (Բուզ. 178): «գոր օրինակ գրդի ոք երթիցի քարի. քարին ինչ ոչ ստնանէ, այլ գիւրն գլուխն ողջ ոչ ապրեցուցանէ» (Եւս. ճառ. ՉԱ, 1956, 403): Բառարաններում չվկայված այս բառը ունի «կտրուկ, միանգամից» իմաստը: «Եւ աստ էր տեսանել նորագոյն նշանս որս որ երեկի որսացեալ, այսօր զայլս որսաց» (ՉԱ, 1958, 169): Յըրկէ մակբայը գործուն է Ղարաբաղի բարբառում երեկ ձևին զուգահեռ: Երկարմատ մի շարք կազմություններ նույնպես գրական նորմային հարող ձևեր են. գիշերադէմ «երեկոյան», գիշերախառն «գիշերով», ծաղրախառն: Գիշերախառն բառով ՆՅԲ-ն բերում է երկու օրինակ՝ Մակբայեցվոց գրքից. «... գիշերախառն հասանէր ի վերայ յամնեացւոցն»: «Ձիրաման արքունի գիշերախառն կատարեալ»: Գիշերադէմ բառով ՆՅԲ-ն առհասարակ V դարից վկայություն չի նշում. բառարանի միակ օրինակը Մխիթար Գոշի առակներից է՝ ածականական նշանակությամբ: V դարից համդիպել է մեկ օրինակ. «Գիշերադէմ երեւեցուցեալ չղջիկանսն խաւարեցուցանէ զոգիս» (Եւագր. 64): Կրկնավոր մի շարք կազ-

մություններ նույնպես ավելի շատ հարել են բանավոր-խոսակցական շերտին: Տարեկանն է տարեկան (*փխն.* ամ յամն, ամի ամի, ամ ըստ ամն), տեղաց ի տեղիս (*փխն.* ի տեղուջն ի տեղի): «Զի եթե մարդ առաքեցաւ եւ տեղաց ի տեղիս չփոխեցաւ, որչափ ևս առաւել Աստուածն ... ի տեղաց ի տեղիս ոչ փոխեցաւ» (*ՀԱ, 1959, 350*): Նույն տեղում (*352*) կա և ի տեղուջն ի տեղի, որը ավելի կանոնական-գրական ձևն է: Կյուրեղ Երուսաղեմացու թարգմանիչը օգտագործել է որմն զորմայն, որ նշանակում է «պատեպատ, այս ու այն կողմ»: Ահա այդ օրինակը, որ քաղել ենք Թոռնյանի գրքից (*441*): «Ի սկզբան աչացաւին դարման տար աչաց. զի մի կուրացեալ առ խարխափ որմն զորմայն ի բժշկաց խնդիր շրջեսցիս»: Այն զուտ թարգմանչի հավելումն է. այսօր էլ օգտագործվում է պատեպատ ընկնել արտահայտությունը:

Կապերի (նախդիր, նախադրություն) շարքում նույնպես կարելի է որոշ տարբերակում մտցնել: Ըստ Այտընյանի «Ե դարում սկզբն քիչ անգամ բարձրագույն գրաւոր ոճով գրողներու քով և պարզագույն կամ ստորին ոճով գրողներուն քով յաճախ կը տեսնուի՝ նախադրութիւն փոխանակ նախդիր. եւ մեք ի մէջ մեղաց (ի մեղս ենք): Ի մէջ մեր և ի մէջ ձեր (ընդ մեզ և ընդ ձեզ): Ի մէջ սենեկին, ի հորոյ մէջ (ի սենեկի, ի հուր)» (*Այտընեան, 1866, 87*): Փակագծերում առնված զուգահեռները գրական-կանոնական ձևերն են: Հետ (*փխն.* ընդ), յետոյ (*փխն.* յետ), համար (*փխն.* վասն) կապերը նույնպես խոսակցական երանգ ունեն: «Կեսարիաւ հետ և տասն քաղաք»: «Երկոտասն աւուրք յետոյ կատարի» (*Բագրատունի, 124, 125*): «Զորմէ հուսկ յետոյ ասեն լեալ դիցն հարստութեան» (*Եւս. քր. Բ. 26*): Ըստ Աճառյանի գրաբարում յետ նշանակում է «հետո» (ժամանակի գաղափարով), իսկ յետոյ նշանակում է հետևը (տեղի գաղափարով): Վերոգրյալ երկու օրինակում յետոյ-ն ժամանակի իմաստով է: Խորենացին ունի համար կապի օրինակ. «Շինեալ և տուն ի համար քեռ իւրոյ Խոսրովիդիստոյ» (*343*): Մի շարք կապեր կապվող բառերի նկատմամբ նախադաս են կամ հետադաս: Բերենք բնագրային օրինակներ: «Վասն անօրեն խակութեան վնասին» (*Բ. Մկր. ԺԲ. 2*) «Սորին վասն և զբռնաւորագոյն զախտն դնէ» (*Ոսկ. Պող. II*

261): «Սակայն քոյին նման ոչ իցէ» (2գօՆ, 147): «Զարդարսն նման ցորենոյ ընդ ինքեան արքայութիւն իւր ընդունիցի» (Քուզ. 96): «Քանզի ամուսնութեան վասն տուաւ, որդեծնութեան սակս շնորհեցաւ, ոչ վասն շնութեան և ոչ ապականութեան աղագաւ» (Ոսկ. Պող. I 688): Կապերի հետադասութիւնը ավելի բնորոշ պետք է համարել խուսակցական լեզվին:

Շաղկապների հարցում օրինակները ավելի քան սուղ են: Ուսումնասիրողները ռամկական են համարում ու շաղկապի կիրառութիւնը և-ի փոխարեն: Այտընյանը նշում է երկու օրինակ. «գրոյց ու շաղփաղփութիւն», «Գարդմանի ոսկի ու գլխոյ հանգոյց թագի» (1866, 64): Շաղկապային կիրառության հետ կապված՝ նաև պետք է հաշվի առնել -ու-ով կցական բարդութիւնները: Վ.Առաքելյանի կարծիքով դրանք «հատուկ են եղել գավառական խոսվածքներին, որտեղից և մուտք են գործել գրական լեզու: Այդպիսի կցական բարդութիւններ են այրուծի, տանուտէր, տարուբեր, հարցուփորձ, իննուտասներորդ» (Առաքելյան, 1984, 21): Գիտնականի բերած բոլոր բառերը (բացառությամբ պատուհանի, որ ճիշտ օրինակ չէ, քանի որ այստեղ կցական բարդութիւն չկա, և բառը ամբողջական փոխառութիւն է) ունեն նաև և-ով ձևերը: Ու-ով կցական բարդութիւններից կարող ենք նշել նաև. աղուհաց, ելումուտ, պարտուպատշեծ, ութուտասան: Ոսկերեքանը ունի կալուկապ լինել «արգելել, գրավել» (Թոռնյան, 1891, 174): Այստեղ ոչ միայն կապակցման եղանակը, այլև հարադրութիւնն ամբողջապես ժողովրդախոսակցական երանգ ունի: Այդ հիմունքով կարելի է տարբերակել իբրեւ/իբրու ձևերը: Տարուբերեմ բայը ունի մի հետաքրքիր զուգահեռ տարեւածեմ՝ Եփրեմ Ասորու Կցուրդներում (էջ 5): Գրականի և ոչ գրականի հակադրութիւնը այստեղ առկայանում է ոչ միայն ու/և, այլև՝ բերեմ/ածեմ զուգահեռներով:

II. ՏԱՐԲԵՐԱԿՈՒՄ ԸՍՏ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ

Վերոգրյալ էջերում փորձեցինք որոշ հատկանիշների հիման վրա առանձնացնել գրական նորմային հարող բառա-

պաշարը: Այժմ նյութը ներկայացնենք ըստ հեղինակների և թարգմանական որոշ գործերի:

Եզնիկ – անխարխար «հաստատուն», ասուեղ, ասորերէն, բայոց, ընչապտուկ, թոժիւն, ծմակ, ծրանամ, կակուղ, կաղանջանան, կանուխ, հայերեն, մայռ «երակ», մասնմուտ առնել, նեղասրտիլ, նշանս տալ, նուագածութիւն, շուրջ գալ, ոտնառել, չգիտանք, չէրն, պատժածու, պզողդ «մուրող», սափասուտ, սիրո տեղ, քուրական:

Եզնիկը շուրջ գալ հարադրությունը օգտագործում է «որոնել» իմաստով, իսկ նշանս տալ՝ «մատնացույց անել»: «Գաղտ կամիցի վնասել և չգիտիցէ զհանգամանս վնասակարութեանն և շուրջ եկեալ յածիցի հնարս խնդրել» (46): «Եւ նշանս տան, զի է երբեք յորժամ յաճմունսն իցէ և լնլոյն, շուրջ զանօթովն ծանրանայ» (216): Նշված իմաստները պահպանվել են և արդի մի քանի բարբառներում: Կողբացու լեզուն համարվել է հայ հին գրական լեզվի կատարյալ մնուշ, այդուհանդերձ Եզնիկի լեզվի և ոճի քննությունը ցույց է տալիս, որ նա հակված է ժողովրդական բառ ու բանի օգտագործմանը: Նրա երկի բնույթը կամա թե ակամա պարտադրում է ավելի գիտական ոճ, գրական-կանոնական ձևերի ու բառապաշարի ընտրություն: Մյուս կողմից հասկանալիությունը ապահովելու նպատակով նա խուսափում է արհեստական կազմություններից, ճռռոն ու խճճված խոսքից և հենվում է ժողովրդական մտածողության, ժողովրդի լեզվում գործառող բառամթերքի վրա:

Բուզանդ – ազգի և տակի, այրենոց «բնակարան», անստացուած «աղքատ», արենհեղութիւն, արմտիք, բանականէջ, բաշխիշ, բռշոփ «խառնակ», գետախառնունք, գլխանի, դանդաչուն, եղեգնաբերան, թոպամահ լինել «ծեծելով սպանել», խորշխորշան «ծալքերով», խնկածու, կապակոտոր, կատաղախօս, հաստաշինած, հացուտ, ճեմիշ, ճերմակ, մկթամ «ծաղրել», շաղաշուտ «ցոփ», շինամէջ, նախճամէջ «փորոտիք», ործակոտոր առնել «տղամարդկանց կոտորել», չերէց, չեպիսկոպոս, սուտերդմութիւն, ցնցկանամ «ցայտել»: Ն.Ակինյանը Բուզանդի բառապաշարից որպէս «անկանոնություն» նշում է հետևյալը.

ի մէջ աշխարանին, բազմոյք, ի գաղտագողոնս անկանիմ, ի գահոյսն (ի մահիճս), գոռութիւն մահու, ի դրանցն ի ներքս, եկն նորա, եկեղեցախորան ժողովուրդ, ժանուար, խլխլեալ, ձայնարկունք, մերկատիտ, միջամուխ լինել, մուրտաստան, նավասարդուց ժամանակք, շաղախել զոք իմիք, ջայլէին, սալացեալ, սամոյրք «ծածկոց», սատար, սարակ լինել, սեպուհ, վտաւատք, տղեմ, տռփիմ, քսիս մատուցանել: Ակինյանի կարծիքով շեղումները տեղ են գտել միայն անգիր շրջանից եկող հատվածներում («Երգ տռփանցն Տիրիթայ» և այլն): «Եթէ Փաւստոս ինքնաբերաբար իսկ ընտրած ըլլար գրութեան այս ոճը, ես պիտի ուզէի տեսնել դարձեալ ժողովրդական երգերու ազդեցութիւնը, իր տողերուն վրա: Բայց այս ոճը բնական չէ Փաւստոսի, անմամն իր նախորդ էջերուն, ուստի և կըմտանէ իւր աղբիւրը, որ բացարձակապէս հայ ժողովրդեան բերնէ կը հոսէ. որ իւր սկիզբն ունի հայ անգիր գրականութեան մէջ. անիկա Տիրիթի տռփանաց երգն է» (ՀԱ, 1924, 11-12):

Անշուշտ, ժողովրդական բանահյուսութիւնը իր որոշակի կնիքն է դրել Բուզանդի լեզվի վրա: Սակայն Ակինյանը ծայրահեղորեն բոլոր կարգի շեղումները վերագրում է դրան: Այս հարցում, ըստ երևույթին, դեր է խաղացել դասական գրաբարի խիստ կանոնարկվածության, շեղումներից զերծ լինելու տեսութիւնը, որ առաջադրել և զարգացրել էին Վիեննայի Մխիթարյանները: Ավելի հանդիչ ենք գտնում Վ.Առաքելյանի նկատառումը, թե. «Բուզանդի լեզվի ու ոճի ամբողջ հմայքը կենցաղագրական, առօրյա կյանքի փոխհարաբերութիւնների արտահայտման մեջ է, որի ձևն ու բովանդակութիւնը ներդաշնակուն են, որի լեզուն IV և V դարի հայերենն է՝ իր բառապաշարով, սեղմ բանաձևումներով, աշխույժ ու շարժուն ընթացքով» (*Առաքելյան, 1981, 166*):

Ազաթանգեղոս – ահափետ, անունք, առատուկ, առուամէջ, բեռապինդ, բերդամէջ, գումարութիւն, երեկօթս առնել «իջևանել», ժամտափուշ, լրբենի, ծակախիթ լինել, կականաբարձ, կամարածու, կանանի, կարմրադեղձ, կարմրատանձ, կարճահաս, հայակոյտ, հանդերձիկ, հողաբեր, մարդամօտ, մեղրուկ, մեռոտ, մրախնձոր,

մեռելոտի «դիակ», ճախճախուտ, մեջգետին, մօռացունք, շինամեջ, շաբաթութիւն, ոսկերոտի, ոտնաւոր, ողնդժնեայ, չիք, չիլութիւն, չքաւոր, ջերոտ, ցուց «երգ», փոս, քիւ:

Ագաթանգեղոսից առաջին գրավոր վկայությամբ մեզ են հասել բազմաթիվ բուսանուններ, մրգերի տեսակների անվանումներ, որոնք ժողովրդախոսակցական լեզվի տարրեր լինելուց զատ, կարող են նաև տարածքային տարբերակներ լինել: Այդ նույն շերտից են գալիս հեթանոսական իրականությանը վերաբերող երկու տասնյակից ավելի բառեր (*Առաքելյան, 1981, 150*):

Խորենացի – ախտարմող, աղճատանք, այրութիւն, անդուռ բերան, աշտարակաշինութիւն, աչագեղ, աչիկ, ապշոպ, արփի, բան և գործ, բարգաւաճանք, բաջաղեն, գիշերայն, գլխանոց, գրգռութիւն, գրեան, դաշտաբերան, դժնութիւն, եղեգնիկ, լաւական, խաւարծի, խելագարանք, կակազել, կարմրիկ, կոկորդախօս, կռանահատութիւն, ձեռէք «ձեռնոց», հեգիկ, մախանք, մեծախօս, միագ, շատակեր, շատահանճար, շատաջուր, շիկափոկ, ոտնկռիւ, պռստել, վարծակ, տաք, տեղեկիկ, տուրևառ, քմեխտապատ:

Խորենացու մոտ կարելի է հանդիպել տարբեր բաղադրիչներով համանիշների. դաստակերտ – ձեռակերտ, աշտարակագործութիւն – աշտարակաշինութիւն... Առաջին զույգում Խորենացին պարզապես թարգմանել է իրանական դաստ «ձեռք» բաղադրիչը: Դաստակերտը թերևս գործածական է եղել Իրանին հարող տարածքում: Երկրորդ զույգում՝ գործ/շինել ակնհայտորեն տարբերակվում են ըստ գրական-գրքային և խոսակցական ոճերի: Խորենացին երկու անգամ կիրառել է աշտարակաշինութիւն (23, 32), մեկ անգամ՝ աշտարակագործութիւն (28): Այդ նույն հիմունքով կարելի է տարբերակել բազում/շատ, բան/խօս բաղադրիչներով կազմված բարդությունները: Անգնահատելի է Խորենացու դերը ժողովրդական պատառիկների ներկայացման գործում:

Եղիշեն – անդուլութիւն, անշքութիւն, արթնութիւն, թանծրամսութիւն, ծակոտուած, կակուղ, կանուխ, կարօտութիւն, կերակրանք, կոփիւն, մայրաւոր «անտառ», մենանոց, մղձկիմ «խեղդվել», մռնչիւն, մոռացօնք, ներքնատուն, շկօթակ առնեն, ոտնփոխ, պարսկերէն, պրծեալ, պրկոց, սրտապնդիմ, սրահակ, ստութիւն, տաշտախիլ լինիլ, փուրսիշ:

Եղիշեն կիրառել է բազմաթիվ իրանական բառեր, որոնց մի մասը եզակի վկայություն է: Նա ըստ հարկի օգտագործում է իրանական իրականության տարբեր բնագավառներին վերաբերող հասկացություններ, տերմիններ: Այս բառաշերտի մի մասը անպայման օգտագործել է և ժողովուրդը, գոնե որոշակի մի հատված, այլապես Եղիշեն կիրառարվեր օտարաբանություններից: Հավանաբար, Եղիշենի մոտ հանդիպող իրանական բառերի մի մասը տարածքային սահմանափակություն ունի:

Փարպեցի – ազգախառն, ամսագլուխ, աչս ածեն, աջողակութիւն, արհամարհոտ, աքցոտեն, բերդեան, գահող «թակարդ», գետառու, թրքած, խանտածութիւն, խաչահանու, խելաշուրջ, խոզենի, խոճոճել «մտմտալ», կատականք, կռուատեղ, կրականի, հարանք, հօտարած, ծիան, ճիտակ, մանկտի, մարթչութիւն, մեղրահամ, մոգեան, մոխրոց, յետսահարութիւն, շափառուկ, շինուած, շինամէջ, ումպետ, ուտիճ, ոսկրոտի, ջնջնագիր, սորամուտ, վատանուն, քաղցրախառն, քամակակոտոր, քերանք, օդիք, օձակոչ:

Ժողովրդախոսակցական երանգներն ակնառու են հատկապես քերականական ձևերի, բառիմաստների շարահյուսության, շարադասության, ոճական արտահայտությունների մեջ: Որոշ հայագետներ (Ակինյան, Ջամինյան) Փարպեցու լեզվում տեսնում են ավելի շատ աշխարհիկ տարրեր: Եթե դասական գրաբարի ջատագովների համար դրանք շեղումներ են կանոնական լեզվից, ապա հայերենի պատմական բառապաշարի զանազան շերտերի վերհանման տեսակետից Փարպեցու, ինչպես և Բուզանդի երկերը անգնահատելի սկզբնաղբյուրներ

են: Իսկ Փարպեցու լեզվի ատաղձը գրաբարն է: «Փարպեցին իր գիրքը գրել է շատ մաքուր գրաբար հայերենով, միայն երբեմն կիրառել է ժողովրդախոսակցական բառեր, դարձվածքներ, քերականական ձևեր, շարադասություն և համաձայնություն, որոնք կիրառել են նաև մյուս հեղինակները, բայց ավելի պակաս չափով, քան Փարպեցին ու Բուզանդը» (*Առաքելյան, 1981, 199*):

Մանդակունի – ասղենի, աքսոտեն, գողահան, գողանք «գողություն», գուսանամուլ «անառակ», գեռաթաթախ, երդմնակերութիւն, ժաժմուկ «կախարդանք», խաբան, խաղարան, կատաղանք, հերկահար, մրգապահ, յափրանք, յարանչտեն, նիհար, շմալ «հևալ», ուժակեր, ուռթել «դյութել», քրքրանք «մեղկություն»: «Ի փողս ցաւածիցն արկանեն և ժաժմուկս մտածացին բանից» (193): «Կամ ասղենի առնուլ կարմիր և երկաթ և ջուր և ուլունս ուռթել և կամ գիր պահարան ընդ անձն արկանել» (197): «Եւ ամենայն անառակ և գուսանամուլ գինարբուքն» (135): Ինչպես մի առիթով նշել ենք, Մանդակունու մոտ բավական մեծ թիվ են կազմում հմայանքին, կախարդանքին, դյութությանը վերաբերող բառերը, որոնցից շատերը եզակի կամ առաջին վկայություններ են: Այդ բառաշարքը ժողովրդախոսակցական շերտի անկապտելի մասն է: Ընդհանրապես Մանդակունու երկում իշխում է ժողովրդական մտածողությունը, կենդանի խոսքի շունչը, որն արտահայտվում է նաև բազմաթիվ ոճերի, դարձվածքների միջոցով. *հմմտ. քնոյ տալ զանձն «քնել», յաչս առ բերան համբուրել «համբուրել», կաղին ցուլ մտանել «օգնել», եթուք զաւազանն «ուրացալ»*: «Մանդակունու ասույթները, – նկատում է Բ.Սարգիսյանը, – բոլորովին մոր են և վսեն... այնպես որ՝ ոճերու փոքրիկ հատոր մը կարելի է ձևացնել այդ մի քանի ճառերէն, որոնք մեր դասական ուրիշ հեղինակներու քով չեն գտնուի ամենեւին» (*Սարգիսյան, 1895, 257*): Եթե ոմանք այդ ոճերից շատերը համարում են օտարաբանություն, ապա ըստ Սարգիսյանի դրանք «օտար ազդեցութենէ բոլորովին ազատ են և կամ վայելչապէս հայացուած» (*ն.տ.*):

Կորյունի երկի փոքր ծավալի և գրելաձևի յուրահատկության (խրթնաբանություն) պատճառով դժվար է որևէ

առանձնացում կատարել: Նա էլ կիրառում է հայերեն, վրացերեն... աւագանի, մանկտի, կանանի, թախծութիւն, շարաւահոտ. գրական նորմային հարող այլ բնույթի բառեր թերևս չկան:

Թարգմանական գրականությունից նշենք միայն երկու ամենածավալուն գործերուն՝ Աստվածաշնչուն և Ոսկեբերանի թարգմանություններուն հանդիպող նմանօրինակ բառերը:

Աստվածաշունչ – ականի, ամիկ, աչացու «կույր», ասպաստանիկ, արեւագալ, բաշխոյք, բռեն, բռնցի, գիշերախառն, դողանի, երիւարիկ, զոհանոց, թանգուզեմ «ճողոպրել», ժիրաժիր, իջաւոր, իւղեփեաց «մեռոն եփող», լաւախօս, ծխահան, ծմակ, կակազել, կնճանալ, հոյ «երկյուղ», ձմերատուն, ճեղ «ճաղատ», մանկտի, մատնտու «մատնիչ», մարդածախ, նուագածու, շատերդումն, ոչխարակ, ոտնառութիւն, ոսկեման, ոտնակապ, ուսընդանութ, չաման, պախ «ուտելիք», ջրուոր, վարագախառն, վեգ «վեճ», տոռն, ցքի «օղի», փղապան «հնդիկ», փուխր, քածաւարօտ «կրտած», քակոր:

Աստվածաշնչից Վ.Առաքելյանը առանձնացնում է 163 բարբառային բառ (*Առաքելյան, 1984, 75*):

Ոսկեբերան – ազբոց, ակնատ, ալկոյթ «ծերություն», աղացիկ, ախամախ, աղուեսաքուն, անտենչիկ, աքացի, բայբաներ, բանջարիկ, բարեխօսանք, բացերեսութիւն, բռնխեթ, գասրել «խժռել», դիահանութիւն «հուղարկավորություն», զարդասիրիկ, թաղաթափ, թոյրաթուխ, իւղիկ, խելաթափ, խոշոր «չոր», կայթիկ և պայթիկ «խաղ և պար», կարկաչուն «ճչացող», կոթատ, կտղիմ, կցիր «ժլատ», հեշտին, հոծիչ, ճոխաճանութիւն, միաճետի, մխմխանք, մրգիկ, յերկուանք, նսիհ «կախարդ», շամբշանք, շլան «մոխիր», շմբոց, շնծեր, շողիք «լործ», շրթնատ, ողողոթի, որոթ, որրոց, ոտնկռիւ, որմածակ, պախրեիկ, պառաւութիւն, պժգամ «գարշել», ստկանք, փթրիմ, տանտիկնութիւն, քեծ «թուլ», քնասեր, քոշոտիմ*:

* Որոշ բառերի V դարից վկայված լինելը ստույգ չէ:

Այս շարքից մի քանի բառեր վկայված չեն ՆՅԲ-ում: Արմատական բառարանում Ոսկեբերանի տարբեր գործերից բերված եզակի վկայությունների թիվը հասնում է 100-ի: Դրանց մի չնչին մասն է ստուգաբանված: Մյուսների ծագումը կամ նույնիսկ բառիմաստը հավաստի չէ: Նշենք Արմ-ի վկայություններից մի քանիսը. աղամասուկ «խառնակամ», անռկել «զռռալ», անգտի «բոզ», ըմփորոտել «ուռեցնել», ընգոյայ «հրեշ», ժմերտ «լիրբ», ծանծ «ցորենի կճեպ», կճպել «սեղմել», կողոփոց «վեզ», ձլել «ակոսել», յոպնակ «սալլակ», շուշել «ծուլանալ», ստողկիլ «թաթախվել» և այլն:

Իհարկե այս կարգի բառերի շարքում կարող են լինել սխալագրություններ, գրչագրական աղավաղումներ, հետին մուծումներ: Դրանք չպետք է բացառել: Բայց չպետք է բացառել նաև այն հանգամանքը, որ Ոսկեբերանի թարգմանիչը (թարգմանիչները) ազատորեն կիրառել են ժողովրդախոսակցական, բարբառային բառեր, որոնք և դժվարություններ են ստեղծում ստուգաբանության համար: Ավելորդ չէ նշել, որ մի քանի բառերի իմաստների ճշգրտման գործում մեծապես օգնում են արդի բարբառների տվյալները: Օրինակ, **նիտալ**, վկայված է մեկ անգամ. «Յորժամ կարի զխորտկօքն գայցենք, իբրեւ տիկ ուռուցեալ նիտայցե որովայնն»: ԱՐՄ-ը բառը մեկնում է «տկռելուց հեալ», բայց թերևս ավելի ճիշտ է «անհագ ուտել», որի հետ ակնհայտ զուգահեռ է Ղարաբաղի բարբառի **նիտալ** բայը, որը կազմված է նի «ներս» և տալ բաղադրիչներից՝ փոխաբերացված՝ «ուտել» (*Ա. Պողոսյան, 1974, Հովհաննիսյան, 1979, 55*): Ի դեպ, ծլիլ «վախենալ», կճպել «սեղմել» և որոշ այլ բառեր զուգահեռներ ունեն դարձյալ Ղարաբաղի բարբառում: **Կճպել**-ի համար (Ոսկեբերանը նույն արմատից ունի նաև **կճպետ** «սեղմած») ենթադրելի է կուծ/կիծ արմատը, որից՝ կծիկ, կծկիլ «ամփոփվել»: Ծ(ճ)-ի համար *հմմտ.* կծել և կճան, ծիլ, ճիւղ և այլն: Բարբառային կուչ գալ «կծկվել»-ի մեջ թերևս նույն կուճ արմատն է, ճ-ի հետագա շնչեղացմամբ:

Իր ծավալով չզիջելով Աստվածաշնչին՝ Ոսկեբերանի երկերը հետաքրքրական շատ իրողություններ են վեր հանում:

Որոշ հատկանիշների հաշվառումով փորձեցինք ի մի բերել խոսքի մասերի համակարգում և տարբեր հեղինակների մոտ հանդիպող այն միավորները, որոնք V դարի կտրվածքով կարող են լինել բարբառային կամ խոսակցական լեզվին բնորոշ տարրեր: Հարցի ամբողջական ու համակարգված քննություն հնարավոր կլինի միայն V դարի մատենագրության քննական բնագրերի ու դրանց հիման վրա կազմված համաբարբառների գոյության դեպքում:

ԲԱՌԱՅԻՆ ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐ V ԴԱՐԻ ԳՐԱԲԱՐՈՒՄ

Յուրաքանչյուր ժամանակային կտրվածքում լեզվի բառապաշարը առկայամուն է բառային տարբերակներով: Բառային տարբերակներ հասկացությունը կարելի է ըմբռնել տարբեր կերպ՝ ընդլայնելով կամ նեղացնելով սահմանները: Ինչպես ընդունված է լեզվաբանական մի շարք աշխատություններում, մենք նույնպես բառային տարբերակների ենք դիտում այն բառախմբերը, որոնք դրսևորում են իմաստային նույնություն ու հնչյունական որոշ զանազանություն: Գրաբարի համար *հմմտ*. պահ-պարի, ամօթխած-ամօթղած, բեմ-բեմբ, աջողութիւն-յաջողութիւն և այլն:

Բառային տարբերակների գոյությունը կենդանի խոսքի արգասիք է, լեզվի զարգացման յուրահատկության դրսևորում: Տարբերակների քանակական և որակական առանձնահատկությունների բացահայտումն արդեն իսկ որոշակիորեն նպաստում է բառապաշարային իրողությունների վերհանմանը: Բայց ուսումնասիրությունը ավելի է կարևորվում այն դեպքում, երբ տրվում են դրանց գործառական-ոճական, նրբերանգային հատկությունները, առաջացման պատճառները և այլ հարակից հարցեր, որոնք միշտ չէ, որ կարող են ճիշտ և անառարկելիորեն լուսաբանվել:

Յուրատեսակ ղծվարությունների հետ է կապված նաև տարբերակների դասակարգումը: Այս հարցում լեզվաբանության մեջ ընդհանուր սկզբունք չկա: Ընդհանրական սկզբունքի կամ ելակետերի բացակայության հիմնական առարկայական պատճառն այն է, որ լեզուներում տարբերակների բնույթը և տարբերակների առաջացման ուղիները նույնական չեն՝ կախված լեզուների պատմական զարգացման և քերականական կառուցվածքի յուրահատկություններից: Ոչ առարկայական պատճառը ուսումնասիրողի հայեցակետն է, տարբերակներ հասկացության անհատական ըմբռնումը: Ինչպես նկատում է

Կ.Գորբաչևիչը «Տարբերակների հարցը վերջին տարիներին դառնալով շատ լեզվաբանների ուշադրության առարկա, շարունակում է մնալ տեսականորեն քիչ տարրորոշված, պրակտիկորեն քիչ ուսումնասիրված: Լուծված չէ դեռևս ուսումնասիրվող օբյեկտի սահմանների վեճը, որոշված չէ նրա տեղը լեզվի գիտական նկարագրման համակարգում... Վիճելի է մնում տարբերակայնության փաստերի ընդհանուր գնահատականը» (Горбачевши, 1978, 3): Գորբաչևիչի գրքում ըստ ամենայնի ներկայացվում է արդի ռուսերենի տարբերակների դասակարգումը: Նշենք, որ հայերենի նյութը ամբողջապես չի համապատասխանում համակարգին: Այսպես, աշխատության երրորդ գլուխը (53-118) վերաբերում է բառի շեշտային տարբերակներին (акцентные варианты слова): Նման դասակարգումը, ինչ խոսք, ռուսերենի նյութից է բխում, և այդ դասակարգմամբ բացահայտվում են հետաքրքրական ու կարևոր իրողություններ, սակայն այն հայերենի համար բոլորովին աննպատակահարմար է, քանի որ հայերենը շեշտադրական բառաձևեր չունի, էլ չենք խոսում այն մասին, որ դրանք ավելի շատ արտասանական տարբերակներ են, որոնք հատկապես V դարի նյութի համար կիրառելի չեն: Ռուսերենում հաճախական են մաև կերպային և սեռային հակադրությամբ առկայացվող տարբերակները, որոնք դարձյալ հայերենում չկան:

Տարբեր լեզուների ընձեռած նյութի և ուսումնասիրողի մոտեցման ընդհանուր ելակետը այն է, որ բոլոր դեպքերում հաշվի է առնվում տարբերակների *բառիմաստային ընդհանրությունը կամ նույնությունը*:

Մեր նպատակը չհամարելով բառային տարբերակների վերաբերյալ գոյություն ունեցող սահմանումների քննարկումը՝ ներկայացնենք Է.Աղայանի ձևակերպումը, որը բավականին ընդգրկում է ու ամփոփ: «Բառային տարբերակներ կամ բառատարբերակներ ասելով հասկանում ենք միևնույն բառի հնչյունական (ձևական), բառակազմական կամ ձևաբանական այն բոլոր տարբեր ձևերը կամ զուգահեռները, որոնք լեզվի մեջ գործող գործընթացների հետևանքով և որոշակի ներլեզվական օրինաչափությունների թելադրանքով հանդես են գալիս տվյալ

փուլում, անկախ նրանց գործածությունից, կանոնականությունից, գործառական ու սոցիալական բնութագրերից (*Աղայան, 1984, 148*): Այնուհետև է.Աղայանը իրավացիորեն նկատելով, որ բառատարբերակների մեծագույն մասն են կազմում բաղադրյալ բառերը, ներկայացնում է տարբերակների զանազան տեսակները (*149-166*): Քանի որ մեր նյութը ընդգրկում է որոշակի ժամանակահատված, կաշխատենք պայմանական որոշ դասակարգումներով ավելի մանրամասն ներկայացնել նյութը՝ ըստ հնարավորին որոշ բացատրություններով ու մեկնաբանություններով: Աշխատանքի բնույթով ու նպատակներով պայմանավորված՝ է.Աղայանը տարբերակներ հասկացության ավելի լայն սահմաններ է ընդունում, դրանց մեջ ներառելով նաև հատապտղանոց-հատապտղարան, հեքիաթային-հեքիաթական, արևախաշ-արևախանձ տիպի կազմությունները (*149-151*), որոնք մենք տարբերակներ չենք դիտում: Սրանք տարբեր ածանցներով ու արմատներով կազմություններ են, տարբեր բառեր և նպատակահարմար է դրանց անդրադառնալ հոմանիշ ածանցների ու արմատների քննության ժամանակ, որն այլ հարց է: Չենք անդրադառնա նաև, այսպես կոչված, հավելադրական բարդություններին՝ **հեղեղ-ջրհեղեղ, երամ-թռչներամ, կիրճ-լեռնակիրճ** և այլն:

Քննության չենք առնում նաև խոնարհման և հոլովման համակարգի որոշ զուգաձևություններ:

Բառային տարբերակները, ըստ էության, շեղումներ են լեզվական նորմայից: Ընդհանուր լեզվաբանական բնույթի հետազոտություններում բազմիցս արծարծվում է լեզվական նորմայի հարցը: Փորձեր են արվում տարբերակելու գրավոր լեզվի և գրական լեզվի նորմա հասկացությունները: V դարի համար այդ տարբերակումը խիստ պայմանական է: Մենք չենք կարող, ըստ էության, բազմաթիվ ու որակապես նոր հատկանիշներ առաջադրել V դարի գրաբարի գրական և գրավոր լեզվի սահմանների ճշտման և այդ հասկացությունների բնութագրման համար: Լեզվաբանության մեջ շրջանառության են դրվում նաև ժողովրդախոսակցական լեզվի, բարբառների, գրավոր և բանավոր խոսքի նորմա հասկացությունները: Սրանց տարբերակումը

հեշտ է արդի լեզուների համար, պատմական կտրվածքով այդ տարբերակումը դժվարանում է՝ համապատասխան նյութի և այդ նյութի հավաստիության բացակայության պատճառով:

Նորման գրական լեզվի հիմնական հատկանիշն է. լեզու, որ պատմականորեն ձևավորված ազգային լեզվի բարձրագույն (մշակված) ձևն է, հարուստ բառաֆոնդով, կայուն քերականական կառուցվածքով, զարգացած ոճային համակարգով: Նորման գրական լեզվի բարդ կառույցի այն կապող օղակն է, որ կարգավորում է լեզուն, ապահովում նրա համընդհանրությունը (*Горбачевич, 1978, 36*):

Քանի որ մեր աշխատանքը վերաբերում է գրաբարի բառապաշարին, ապա բնականաբար բառապաշարային նորմայի հարցն է մեզ հետաքրքրում: Մի առիթով Յ.Աճառյանը գրել է. «Երբ մի բառը կրկնակ ձև ունի, անշուշտ մեկը սխալ է. իսկ այդ սխալը գտնելու միակ միջոցն է ստուգաբանությունը» (*ԳԱ տեղեկագիր, 1940, 4, 71*): Այս պնդումը ճիշտ է միայն բառի ծագման հարցը և ստուգաբանորեն ճիշտ ուղղագրությունը բացահայտելու տեսակետից: Սակայն հենց V դարի կտրվածքով մի շարք տարբերակների դեպքում (բանտ-բանդ, ջերմ-ջերմն...) դժվար է նախապատվությունը տալ մեկին, կամ մյուսը համարել գրական նորմայից շեղում:

Այո՛, ստուգաբանորեն այդ ձևերից մեկը ճիշտ է ու նախընտրելի, բայց V դարի կտրվածքով, ո՞րը համարել կանոնական, ճիշտ, ո՞րը շեղում գրական նորմայից: Այս հարցում էական դեր չի խաղում նաև բառաձևերի հաճախականությունը, էլ չենք խոսում այն մասին, որ նույն հեղինակը կարող է օգտագործել և՛ մեկ, և՛ մյուս ձևը: Խոչընդոտ է մի այլ համգամանք ևս: Ե.Իստրինայի այն ձևակերպումը, «թե նորման որոշվում է գործածության աստիճանով, երբ սկզբնաղբյուրը հավաստի է» (*Ист-рина, 1948, 19*), լուրջ նկատառում է:

Այո՛, սկզբնաղբյուրը խիստ կարևոր է: Ինչքանո՞վ է այն ճիշտ ներկայացնում տվյալ ժամանակաշրջանի լեզվական իրական պատկերը, ի՞նչ շեղումներ ու նորամուծություններ կան: Սկզբնաղբյուրի հավաստիությունը լուրջ նախապայման է հատկապես V դարի լեզվական իրողությունների ուսումնա-

սիրման համար, որովհետև մեր ամենավաղ ձեռագրերը IX դարից են, որոնցում այս կամ այն չափով աղավաղված է V դարի նյութը, շրջանառության են դրված ձեռագրի ժամանակաշրջանի լեզվական որոշ փաստեր: Հանգամանք, որ դժվարացնում է ուսումնասիրողի գործը՝ սթափ պահում որոշ անվերապահ եզրահանգումներից: Այս դժվարությունը պետք է հաշվի առնել, բայց նաև կարողանալ ըստ հնարավորին հաղթահարել: Նախ լեզվական մի շարք հետսամուտ իրողություններ տարբերակելի են, և այդ գործում հայագիտությունը բավականին ձեռքբերումներ ունի: Երկրորդ՝ հայ բազմադարյան գրչագրության փորձն ու ավանդույթները հաստատում են, որ երևի մի չգրված օրենք է եղել նախատիպ ձեռագրին հարազատ մնալը: Գրիչների նպատակն է եղել ոչ թե ստեղծագործելը, այլ՝ տվյալ ձեռագիրը բժախնդիր. ներկայացնելը: Սա կարևոր հանգամանք է: Երրորդ՝ լեզվական փոփոխությունները կարճ ժամանակահատվածում չեն կատարվում: Եթե ասենք, VI-VII դարերի վիմական արձանագրություններում, IX-X դդ. ձեռագրերում հանդիպում ենք այս կամ այն ձևերին, ապա բացառելի չէ դրանց գոնե մի մասի գոյությունը V դարում: Օրինակ՝ ի՞նչ երաշխիք ունենք պնդելու, որ հետագա դարերի ձեռագրերում ավանդված դիրքային ու փոխազդեցական հնչյունափոխական երևույթները (մանգմանկ, աստիճան-աշտիճան...) V դարում չեն գործել:

Եթե, իրոք, V դարում կար գրության և արտասանության լրիվ համապատասխանություն, ապա բնականաբար տարբերակների գոնե մի մասի գոյությունը այդ դարում պետք է բացառել, բայց չէ՞ որ լեզուն օրենքներից զատ ճանաչում է և բացառություններ, էլ չենք խոսում բարբառային արտասանության (և համապատասխան գրության) և այլ կարգի գործոնների մասին, որոնք կարող էին դառնալ տարբերակային ձևերի առաջացման պատճառ:

Եվ, վերջապես, քանի որ տարբերակները մեր մատենագրության մեջ (ձեռագրերում ու հրատարակություններում) ամրագրված են որպես V դարի իրողություն, ապա անկախ ժամանակագրային հավաստիությունից, մենք դրանց պետք է անդրադառնանք:

Բառային տարբերակների քննության համար, որոշ ուղեցույց են գրաբարի բառարանները, որտեղ կանոնական դիտվող ձևերը տրվում են որպես գլխաբառ, ապա նշվում տարբերակները, եթե այդպիսիք կան:

Բառարանային տարբերակներ տերմինին զուգահեռ լեզվաբանական գրականության մեջ օգտագործվում են *զուգածներ*, *զուգածություններ*, *տարբերակային* ձևեր տերմինները (*Ա.Սարգսյան*, 1987): Սենք նույնպես կիրառում ենք դրանք:

Ի ՀՆՉՅՈՒՆԱԿԱՆ ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐ

1. Ձայնավորային փոփոխություններով զուգածներ.

Ա/Ո: Խոհարար-խահարար, խոհակեր-խահակեր, յովանակ-յաւանակ, բովանդակ-բաւանդակ: Նշված բառերը իրանական փոխառություններ են: Հնչյունափոխությունը հայերենում չի կատարվել, ամենայն հավանականությամբ այդ բառածները հայերենին են անցել իրանական տարբեր սկզբնաղբյուրներից: Այլ կարգի օրինակներ են. յոխորտիմ – յախորտիմ (ծագումը հավաստի չէ): Մուլար (*Եղիշ. 37, 55*) – մուլոր (*Եղիշ. 17*), պատառատուն – պատառոտուն (*Ագաթ.*): Փաղփաղեմ – փողփողեմ: Ա/Ո տարբերակներն են ներկայացնում նաև -համ– -հոմ ածանցները և դրանցով կազմված մի շարք բառեր, որոնք կքննվեն այլ տեղերում: Որպես գործիական հոլովի ցուցիչ մի խումբ բառերում հանդես է գալիս և՛ աւ-ը, և՛ ուվ-ը, որոնք թեև ձևաբանական ցուցիչներ են, բայց, վերջին հաշվով, առկա է ա/ո հնչյունական փոփոխությունը: Ճեպաւ (*Փրպ. 154*) – ճեպով (*Փրպ. 4, 23*), ցորենաւ – ցորենով, ստիպաւ – ստիպով* :

Ա/ե: Այս հնչյունական զուգածները ներկայացնող բառախմբերի թիվը մեծ չէ, և այդ խմբերն էլ տարաբնույթ են: Ասղանի – ասղենի, ապարասան – ապերասան, երախայ

* Որոշ բառերի վկայություններ թեև չեն նշվում, բայց դրանք ստուգված են ՆՀԲ-ով կամ Արմ-ով և V դարից վկայված ձևեր են:

– երեխայ, գրադաշտ – գրադեշտ, իջաւան – իջեւան, հապճեպ – հեպճեպ (*Քուզ. 115*), լաշկամաշկ – լեշկամաշկ, վսեմ – վսամ, գրահ – գրեհ: Ասդանի – ասդենի զույգում հաճախականը առաջինն է, ասդենի ունի Սանդակունին (*ԻՋ, 191*): Իրանական *kar* «գործել, անել» ներկայի *kar* և անց. կատարյալի *kerl*, նաև *var* «ծակել»-ի ներկայի *var* և կատարյալի *vert* ծները որպես բարդության բաղադրիչներ առկայանում են հայերեն մի քանի բառերում. վնասակար, օգտակար – աղօթներ, խոհակեր, սսղաւարտ, վարտիք, վերտ և այլն: Ա-ն և ե-ն մի շարք բառերում նախահավելվածներ են: Արագ-երագ, Արաքս-Երասխ, արաստոյ-երաստոյ, աղտիւր-եղտիւր, աղիճ-եղիճ: Նախահավելվածներ ունեն և՛ բնիկ, և՛ իրանական ծագում ունեցող բառերը: Նախահավելվածները բնորոշ են հ.-ե. մի քանի լեզուների (հունարեն, իրանական լեզուներ), այն նաև զուտ հայկական երևույթ է և գործել է վաղնջական շրջանում: Երգ, արջ, առիւծ... նախահավելվածավոր հին կազմութիւններ են, որոնց նախածնը առանց հավելվածի է: Ենթադրվում է, որ իրանական փոխառութիւններում հանդես եկող տարբեր նախահավելվածները ներկայացնում են իրանական տարբեր աղբյուրներ (*REA, 1966, 1968*): Է.Աղայանի կարծիքով ա, ե նախահավելվածները հին բարբառային երևույթներ են՝ բարբառների մի տարածքում ա, մյուսում՝ ե (*Աղայան, 1958, 70*): Դ.Կոստանդյանի կարծիքով հ.-ե. ծագման բառերում վերականգնվող նախածնի բառասկզբի ա-ի դիմաց բարբառներում հանդես եկող ե ձայնավորը արդյունք է նախածայն յ-ի հավելման և դրա հետևանքով առաջացած համապատասխան հնչյունափոխության, իսկ ե-ի դիմաց բարբառներում հանդես եկող ա, ո ձայնավորները արդյունք են առնմանական հնչյունափոխության (*Կոստանդյան, 1987, 90-91*):

Նկատելի է, որ արդեն V դարից փոխառութիւնների մեջ կան իմաստային նրբին զանազանութիւններ: Առասանակ «պարան, լար, թել» – երասանակ «սանձ», *ram* արմատից ունենք ռամիկ և երամ:

Մեր կարծիքով ե/ա նախահավելվածների բնույթը միանշանակ չէ. այն զուտ հայկական լինելով, իրանական փոխա-

ռություններում կարող է վկայված լինել հենց փոխատու աղբյուրից:

Ա/Ը: Մեզ հայտնի է մի զուգաբանություն՝ անդաճել – ընդաճել՝ «քննել, մտածել»: «Յորժամ սկսաւ անդաճել և քննել զամենայն ուսմունս և հաստատութեամբ ի վերայ եհաս, առաւել վեհ զտանէր զօրէնս քրիստոնէից» (Եղիշ. 83): Ընդաճեմ–ը նույնպէս Եղիշեի մոտ է. «Եւ հանդէս առնէր ուսմանց և ընդաճէր զմոգութիւնն և զքաղցութիւնն և զամենայն ուսմունս աշխարհին իւրոյ» (151): Երկու բառածների իմաստային նույնությունը ակնհայտ է: Ստուգաբանորեն ճիշտը անդաճել–ն է, որ իրանական փոխառություն է ըստ Արմ–ի պիլ. andačišn ձևից (išn –ն ածանց է): Ամենայն հավանականությամբ ընդաճել–ը հետագա գրչութիւն է, երբ գրիչը շփոթել է աճել–ի հետ և ավելացրել ընդ նախդիրը: Եղիշեն այդ չէր կարող անել, որովհետև նա քաջատեղյակ էր պարսկերենին, գիտեր և անդաճ–ի իմաստը ու կողքը դրել է հայերեն քննել հոմանիշը: (Եղիշեի քննական բնագրում նշվում է, որ շատ ձեռագրեր ունեն անդիճել ձևը):

Ե/Է: Աղուէս – աղուես, ապենիազ – ապենիազ, ամեն – ամէն, բեհեզ – բեհէզ, դեն – դէն (հոր. 299.301), Գնէլ – Գնել (Բուզ. 98, 102), Ներսէհ (Փրպ. 67.72) – Ներսեհ (Փարպ. 127, 128), մեց – մէց, յետ – յէտ, խենեշ – խենէշ: Վերը նշված զուգածությունների ուղղագրությունը արժանացել է հետազոտողների ուշադրությանը: Ամէն բառի մասին Աճառյանը գրում է «հնագույն արմատական ձևն է, որ ընտիր մատենագրության մեջ հազվադեպ գործածություն ունի... Վարդանյանը (ՉԱ, 1913, 118) ցույց է տալիս, որ բոլոր ոսկեդարյան ամենները «ամ» համառոտագրության հետին սխալ ընթերցվածներ են և ոսկեդարում չկար ամէն բառը, այլ միայն ամենայն. Այս բոլորը չեն խանգարիլ սակայն ընդունելու, թե բառիս արմատն է Ամէն, որ հետմաբար սովորական գործածություն է ստացել» (Տե՛ս Արմ. ամէն բառի տակ):

Ժէտ/ժեստ–ը իրանական փոխառյալ արմատ է, որը սակայն անկախ կիրառություն չունի և հանդես է գալիս բառակազմության ժամանակ: Է.Աղայանը կարծում է, որ ժէտ/ժեստ նաև ժուտ սխալագրություններ չեն, այլ գալիս են հին իրանական անորոշ

դերբայների համապատասխան ձևերից (*Աղայան, 1974, 74-75*): Այս կարծիքը քիչ հավանական է: Եվ ընդհանրապես է/ե տարբերակների դեպքում ստուգաբանական դիտողություններից զատ պետք է հաշվի առնել ե- և է-ի արտասանական ընդհանրության գործոնը, որը շատ դեպքերում արտահայտվել է և ուղղագրության մեջ: Իսկ արդեն V դարում է-ի պարզ ծայնավորի վերածվելու, հետևաբար է-ե-ի արտասանական ընդհանրությունը կարելի է ապացուցված համարել: Է.Աղայանը է-ի պարզ ծայնավորի վերածվելու շրջանը համարում է V դարի երկրորդ կեսը (*Աղայան, 1964*): Բայց քանի որ լեզվական երևույթները միանգամից չեն կատարվում, ուրեմն բացառելի չէ ավելի վաղ շրջանից իսկ է-ի պարզ ծայնավորային բնույթը: Վերջապես այնքան էլ երկրորդական չպետք է համարել այն փաստը, որ ե-ով որոշ բառեր հնչյունափոխվում են ի-ի, *հմմտ. դեւ-դիւաց* (ինչպես գիտենք, օրինաչափ հնչյունափոխությունը է>ի-ն է): Աղայանը կարծում է, որ նախապես եղել է դէ: Ուղղական հոլովում էւ-ը դարձել է եւ, որովհետև հայերենը չուներ էւ կապակցությունը (*Աղայան, 1964, 137*):

Ե/Ի: Բաբելացի – բաբիլացի, Գաղիշոյ (*Եղիշ. 927*) – Գաղեշոյ (*Եղիշ. 43*), մանանիս – մանանիխ, շառաւել (*վկ. 157*) – շառավիղ, շեղ – շիղ, շեղջ – շիղջ, շեփոր – շիփոր, պեղծ – պիղծ...: Շիղջ տարբերակով ՆՅԲ-ն V դարից վկայություն չունի: Բայց վկայված են ջրաշեղջ – ջրաշիղջ ձևերը: «Գետոց և աղբերականաց և մօրաց և ջրաշեղջաց» (ՆՅԲ): «Ձաղբիւր կարեացն թողեալ և ջրաշիղջսն սրբել կամիմք» (*Ոսկ. Մ.ա. 14*):

Ո/Ու: Լողակ – լուղակ, կաթողիկոս – կաթուղիկոս (*Բուգ.*) (եթե վերջինս վրիպակ չէ):

Ո/Ի: Անորոշ – անորիշ: Անորիշ-ը բնորոշ է թերևս գիտական ոճին: «Ձայն անորիշ անգանազան ըստ ինքեան նշանակելուն» (*Փիլ. լիմ. 210*): «Անհատքն անբաւք և անորիշք են առ ի թռել» (*Դ.Անհաղթ. ՆՅԲ*):

Ո/Օ (աւ): Քող –քօղ և սրանցով կազմված բարդություններում՝ քողաձիգ – քօղաձիգ: Պողոս – Պաւղոս, լոռ –

լօռ: Ենթակայական դերբայի ող և աւղ-ը նույնպես ազատ լծորդություններ են: Դրանք ունեն տարբեր ծագում, բայց իմաստային նույնության պատճառով հանդես են գալիս որպես փոփոխականեր: Ոճիր – աւճիր (*վկ. 111*) զույգում, եթե վերջինը հետին գրչագրություն չէ, ապա բարբառային արտասանություն է:

Ու/Օ: Արտունութիւն – արտօնութիւն, գործուն (*վեց.*) – գործօն (*եզմ.*), գործունեայ – գործօնեայ, հուժկու – հոժկու, ուրկանոց – օրկանոց: Ուրկանոց-ի V դարի վկայության փաստ չի արձանագրված, բայց կա ուրկութիւն, ուրկոտութիւն:

V դարից վկայված է Օրկանոց, իսկ Օրկութիւն չկա: «Նոցուն կարգեցին օրկանոցս և դարձանոց ռոճիկս» (*Քուզ. 64*): «Այլ անդէն ի հանգստեան մոցին, այս ինքն յօրկանոցսն, ամենայն մարդիկ տանէին զամենայն պիտոյս մոցա» (*Մ.տ., 193*): Օրկանոց ունի և Ոսկեբերանը (*Մեկն. Ես. 139*): Արմ-ը ուրկ (աւրկ) արմատներից որպես գլխաբառ դնում է ուրուկ-ը: Եթե սա կանոնական ձևն է, ապա օրկանոց-ը բարբառային պետք է դիտել: Հանդիպում է և ձօնի – ձունի (*Ոսկ. Ես. 352*) տարբերակը:

Ու/Ի: Այս կարգի զուգաձևությունների թիվը մեծ չէ: Ջինջ – ջունջ, կաթ – կութ, մանուշակ – մանիշակ: «Ջի՞ կամօք անջունջ տգիտանաս վրիպեալդ առանց թողութեան» (*ՆՅԲ*), «Անջինջ արծակեալ է» (*Փիլ. ՆՅԲ*): «Իբրև զխակակութն տարածամ կթեսցի» (*Յոր. ժԵ. 33*), «Որ խակակիթ առնէ զայգի իւր, խաբի մա ի խաղող ուտելոյ» (*Զգօն, 148*):

Ջունջ – ջինջ, կութ – կիթ և նման բառերում ձայնդարձի հնատիպ երևույթի առկայությունն է: Մանուշակ – մանիշակ-ի համար ենթադրվում են փոխառության տարբեր աղբյուրներ, բայց կարելի է կարծել, որ մանիշակ-ը մաև ժողովրդախոսակցական-բարբառային ձև է եղել: Մանավանդ որ արդի բարբառների մեծ մասում այդ ձևն է:

Կան մի շարք գուգահեռներ, որոնցում առկա է որոշ ծայրավորների հավելում կամ անկում: Հրեշտակ – հրշտակ: Կանոնականը և հաճախականը հրեշտակ-ն է, որը և որպես գլխաբառ նշվում է Արմ-ում և ՆՀԲ-ում: V դարի մի շարք գործերում հանդիպում է հրշտակ: «Ելաք ի կարգս հրշտակաց» (*Եւս. Եմես, ՀԱ, 1958, 16, 470*), Աթանաս (*96, 353, 354*): Կա նաև Ոսկեբերանի մոտ (տե՛ս *Բանք. Մատենադ. 1986, 15, 266-273*):

Աճառյանը, կրկնելով Հյուբեյմանին, գրում է. «Հայերենի մեջ հրեշտակ համապատասխանում է իրան. firešta - freštakh-ին, իսկ նորագույն frištak ձևը տալիս է հիբիշտակ > հրշտակ. երկուսն էլ գործածական միայն գաւառականների մեջ» (*Արմ.*): Հստակ չէ, թե Աճառյանը նորագույն frištak ասելով նկատի ունի նոր պարսկերե՞նը, թե՞ միջին իրանական փուլի ուշ շրջանը: Քանի որ V դարից ունենք հրշտակ-ի բազմաթիվ վկայություններ՝ տարբեր հեղինակներից, ապա իրավունք չունենք այն համարելու նոր բարբառային երևույթ, կամ հետագա զրջագրության արդյունք: Դա կամ հին բարբառային, կամ էլ իրանական այլ աղբյուրից եկող ձև է:

Վհուկ – վոհուկ: Հաճախականը վհուկ-ն է: Կան օրինակներ վոհուկ-ով, որոնք չկան ՆՀԲ-ում: «Եթե ասիցեն զձեզ. խնդրեցէք դուք զվոհուկս և զգետնակոչս և զընդվայրախօսս, զորովայնակոչս (*Ոսկ. եւ., 105*): Եւ եթ զինչ ինչ վոհուկն իցէ պարտ է ասել (*100*). (տե՛ս նաև, *107, 173, 312...*): Վոհուկ կա և Եփրեմ Ասորու ճառերից մեկում. «Զի շէն լի է վոհկաք» (*Միոն, 1929, 79*): Վհուկ-ը իրանական փոխառություն է, որի ստույգ նախածնը հայտնի չէ: Վոհուկ-ի համար կարելի է տեսնել լիաձայնության դրսևորում, բայց հակված ենք կարծելու, որ իրանական ավելի հին ձև է, մանավանդ որ Ոսկեբերանի մոտ այլ կարգի հին ձևեր էլի կան. բարժանել, վիրի...:

Մի շարք բառեր ներկայանում են բառավերջի ի-ով: Դրանդ – դրանդի, երկբոյս – երկբուսի, լորամարգ – լորամարգի, ծարաւ – ծարաւի, ճակատատեղ – ճակատատեղի, տեղ – տեղի, հիւսիս – հիւսիսի:

Արծուի, տեղի, հիւսիսի, պատասխանի բնորոշ է համարվում դասական գրաբարին: Վ.Առաքելյանը գտնում է, որ հետդասական շրջանում էլ հաճախականը ի-ով ձևերն են (*Առաքելյան, 1981, 94-95*):

Անցյալ կատարյալի եզակի թվի երրորդ դեմքում որոշ բայեր ստանում են ե և երբեմն հանդես են գալիս առանց ե-ի. սպան, ստեղծ – եսպան, եստեղծ (որոշ ձեռագրերում նաև է. էստեղծ (*խիւր. գ. 170*): Սրանց շարքում չպետք է դնել գնաց – էգնաց (*Փիլ. 170*) տիպերը, որովհետև վերջիններս այլ երևույթ են՝ հունաբան դպրոցի նորամուծություն: Հ.Սուրադյանի կարծիքով եսպան, եստեղծ ձևերը հետին դարերից են ավանդված (*Հ.Սուրադյան, 1982, 138*):

Գրաբարում մի շարք ծայնավորների փոփոխություններ պայմանավորված են շեշտով: Շեշտափոխության նկատմամբ ավելի զգայուն են է, ու ծայնավորները (է>ի, ու>ը(զրո)), թեև կան այլ տիպի փոփոխություններ: Առկա են և հնչյունափոխ զուգաձևերը:

Է/ի: Դեզադէզ – դիզադէզ, գէշաքարշ – գիշաքարշ, երէցութիւն – երիցութիւն, սակաւապէտութիւն – սակաւապիտութիւն, տէրութիւն – տիրութիւն: Է>ի-ն բացարձակ կանոն չէ. *հմմտ.* նաև էշայծեամ, բայց՝ իշամեղու, իշակես, իշամտրուկ, գէնընկէց, բայց՝ զինակիր, զինակից:

Ի/Ը: Անինչըստացիչ (*Կիւրդ, 35*) – անընչստացիչ, ինքնամարտ – ընքնամարտ, հինգակատար – հնգակատար:

Զայնավոր/երկբարբառ տարբերակներ

Ա/եա: Ախոյեան – ախոյան, արտորայ – արտորեայ:

«Կործանին վատանուն յախոյանէ անտի» (*Եզն. 57*): «Իբրեւ զախոյեան նահատակ ի տղայութենէ տիոց նշկաէր» (*Բուգ. 27*): Այս զույգի վիճակագրությունը որոշակի բան չի ասում անդամներից մեկի հաճախականության կամ կանոնականության մասին: Եզնիկը գործածում է միայն ախոյան (4 անգամ), Ագաթանգեղոսը միայն ախոյեան (2), Բուզանդը՝ ախոյան (3), ախոյեան (3):

Ե/ԵԱ: Աղօթկեր – աղօթկեար, անխայեմ – անխա-

յեամ, գեհեն – գեհեան (*Փրպ. 138, 150*): խարտեշ – խարտեաշ, լեռնական – լեռնական, լեռնակողմն – լեռնակողմն, լեռնադաշտ – լեռնադաշտ, սարեկ – սարեակ, բղեշխ – բղեաշխ... «Ձդուստր իւր զԱրտաշամայ տայ կին Միհրդատայ ումեմն վրաց բղեշխի մեծի» (*խոր. 121*), «Նահապետութեանն անուն կարդայ բղեաշխ Գուգարացոց, որ էր լեալ ի գաւակէ Միհրդատայ» (*խոր. 114*): Խորենացին բղեաշխ կիրառել է 6 անգամ, իսկ բղեշխ՝ 4: Նկատելի է, որ բղեշխ-ը առավել հաճախական է հոլովված ձևերով՝ ոչ ուղղական: Նախնական բղեաշխ ձևը, ենթարկվելով եա>ե հնչյունափոխական օրինաչափությանը, դարձել է բղեշխ, որն արդեն V դարում (եթե բղեշխը հետին ձեռագրական նորակազմություն չէ) կայուն կիրառություն ուներ: Պատահական չէ, որ Արմ-ը որպես գլխաբառ նշում է և՛ բղեշխ, և՛ բղեաշխ ձևը:

Ե/ԱՅ: Մենաւոր – միայնաւոր, մենակեաց – միայնակեաց:

Ու/ԻԷ: Ակումիտ – ակիւմիտ, թունաբեր – թիւնաւոր (*Եղիշ. 7. 16*), թունաթափ – թիւնաթափ, փայլատուն – փայլատիւն, փայլուն – փայլիւն, խուղ – հիւղ:

Ի/ԻԷ: Դիցապաշտ – դիւցապաշտ, դիցագնական – դիւցագնական, եթիա – եթիւա, կիրակէ – կիւրակէ, շափիղայ – շափիւղայ, շիղ – շիւղ, ուղիղ – ուղիւղ, պիրամիդ – պիւրամիդ...

Ենթադրվում է, որ ի պարզ ծայնավորի փոխարեն իւ երկբարբառը՝ ուղիւղ հունական ազդեցության հետևանք է (*Գյուլբուղադյան, 1971, 102*): Գ.Ջահուկյանը շիղ – շիւղ, ուղիղ – ուղիւղ տարբերակների դեպքում ենթադրում է ծայնավորների քմայնացման փաստի առկայությունը, եթե ուշ գրչագրական ներմուծումներ չեն (*Ջահուկյան, 1987, 374*):

Ի/ԵԱ: Գետնախշտի – գետնախշտեայ... Այս կարգի զուգահեռներ են նաև անձներական թվականները՝ երկոքին – երկոքեան, հնգեքին – հնգեքեան..., որոշյալ դերանունները՝ ամենեքին – ամենեքեան, բոլորեքին – բոլորեքեան...:

Ու/ՈՅ զուգածները հնչյունափոխական են. առոյգութիւն – առուգութիւն, գերագունութիւն, գերագունութիւն – գե-

րագոյնութիւն, անփութութիւն – անփոյթութիւն: (Օրինակները քաղել ենք *Հովսեփյան, 1987, 84*):

Երկբարբառային տարբերակներ

Սրանք ներկայանում են հիմնականում եւ-իւ փոփոխությամբ: Աղբեր – աղբիր, աղբես – աղբիւս, ալեր – ալիր, առեւ – առիւ, բեր – բիր, գել – գիւղ, եղջեր – եղջիր, եղտեր – եղտիր, երկել – երկիւղ, եւղ – իւղ, մես – միւս, հարեր – հարիր. «Ոչ իւղով, այլ հոգով և զօրութեամբ. զի եթէ եւղով ի մարդկանէ էր օծեալ...» (*Ոսկ. ես. 452*): Վ.Առաքելյանի վիճակագրության տվյալների համաձայն եզնիկը գործածել է գել (1 անգամ), Կորյունը այս բառի ուղղականը երեք անգամ է կիրառել, երկու անգամ էլ հոլովված ի գելջէ ձևով: Ազաթանգեղոսը մեկ անգամ ունի գել, հինգ անգամ գեաւ: Բուզանդը 28 անգամ գել, մեկ անգամ գեաւ, և մեկ անգամ գիւղ (*Վ.Առաքելյան, 1981, 82*): Վ.Առաքելյանի կարծիքով կանոնականը գիւղ ձևն էր, բայց գել, գեաւ ձևերը ավելի հաճախական են (*Մ.տ.*): Երկբարբառների փոխարեն պարզ ձայնավորով ձևերը՝ գել, եղ, եթե իրոք հետին գրչություններ չեն, անկասկած բարբառային ձևեր են: Ոսկեբերանը ունի «Եղ ու մեղր, կերիցէ» (*Ոսկ. ես. 88*), «Եւղ և մեղր, կերիցէ» (*Մ.տ., էջ 15*):

Հայագիտության մեջ իշխող կարծիքը այն է, որ եւղ-ը իւղ-ի համեմատությամբ ավելի հին է: Իւ-ով ձևերը ըստ Է.Աղայանի վաղ գրաբարում ավելի գործածական էին: «Կարելի է ենթադրել, որ հնագույն շրջանում նախահայերեն բարբառների մի խմբում սովորական է եղել եւ վանկային բունը, որից անցել է դասական գրաբարին, բայց որպես ոչ կենսունակ վանկաբուն և այդ պատճառով էլ աստիճանաբար դուրս է մղվել՝ տեղի տալով իւ կամ եաւ վանկաբնին, համեմայնդեպս, թեև արդեն մահացող, բայց դասական գրաբարում դեռևս երևան եկող վանկաբուն է եւ-ը, որ մերթ լծորդում է եաւ-ին, մերթ իւ-ին (*Աղայան, 1964, 105-106*):

Ինչ վերաբերում է իւ, եւ-ից որևէ մեկի բարբառային լինելուն, ապա դա դեռևս կարոտ է պարզաբանման:

2. Բաղաձայնական փոփոխություններով զուգաձևեր

Բաղաձայնական տարբերակները բավականին տարաբնույթ ու բազմազան են:

Ամենաընդհանուր ձևով դրանք կարելի է բաժանել երկու խմբի. ա) օրինաչափ հնչյունական փոփոխություններով, հնչյունների հավելումով կամ անկումով ներկայացվող բառաձևեր, բ) այսպես կոչված, ստուգաբանական կրկնակներ: Վերջիններս զգալապես տարբերվում են նախորդներից, և դրանք մանրամասն քննված են մի շարք հետազոտողների կողմից (*Բագրատունի, 1852, 650-652, Ջահուկյան, 1984, Джаукян, 1967, 300-312*): Ստուգաբանական կրկնակները նույնպես բաղաձայնական տարբերությունների հանգող ձևեր են, բայց դրանցում նկատվում է իմաստային զուգաբանության, ժամանակագրային տարբեր կտրվածքների դրսևորում, այլև տարբեր լեզվավիճակային պատկանելություն. *հմմտ. դալար-բոլոր, ստերջ-ստերդ, կաղ-քայլ, պախեն «եփել»-պախաճճամ «թխվածք», քան-հիմ «ինչու», ծուղակ-խուղ, ծիրտ-շեռ, սալոր-շլոր, սարտնում-խրտնում, ներբան-լերբան և այլն:*

Այս կարգի ձևերի համար Գ.Ջահուկյանը նշում է չորս աղբյուր. 1) համահնդեվրոպական և հնդեվրոպական բարբառային հերթագայության արտացոլում, 2) հնչյունական գործընթացների տարբեր ընթացք՝ տարբեր շրջապատում, 3) այլ լեզուների ազդեցություն, 4) հին բարբառային տարբերակների առկայություն (*Джаукян, 1967, 300*):

Մեր նպատակից դուրս է այս տիպի զուգահեռների քննությունը, միայն առանձին դեպքերում կնշենք որոշ օրինակներ՝ այլևայլ նկատառումներով:

Կանդրադառնանք միայն V դարի կտրվածքով ներկայացվող այնպիսի տարբերակներին, որոնք դիրքային, փոխադեցական, պատմական հնչյունափոխության, դրափոխության բնորոշ դրսևորումներ են: Նյութը ամբողջական ներկայացնելու միտումով կանդրադառնանք նաև իմաստով նույն, բայց ոչ օրինաչափ հնչյունական տարբերակներին, որոնք հարում են ստուգաբանական կրկնակներին:

Ա. ԽՆԼՈՒԹՅՈՒՆ-ԾԱՅՆԵԴՈՒԹՅՈՒՆ ՆԵՐԿԱՅԱԳՆՈՂ ՏԱՐՔԵՐԱԿՆԵՐ

ԽՈՒԼ/ԾԱՅՆԵԴ ԲԱՂԱԾԱՅՆՆԵՐՈՎ ՏԱՐՔԵՐԱԿՆԵՐ,

Այս կարգի գուգաձևությունները հաճախական են V դարի մատենագրության մեջ: Դեռևս Ա.Բագրատունին է նշում, որ «միջակքն բ, գ, դ, ձ, ջ փոխանակին երբեմն ընդ նուրբ լծորդսն կամ ծայնակիցսն պ, տ, կ, ծ, ճ, մանավանդ զկնի մ և ն տառից գրեթե նույնական ծայնիս ի մերս և ի հելլէն բարբառ» (*Բագրատունի, 1852, 651-652*): Այո՛, խուլ, ծայնեղ անցումը նկատվում է հատկապես պ, տ, կ, բ, դ, գ-ի դեպքում, մ և ն ծայնորդների հարևանությամբ ու ազդեցությամբ, բայց նաև այլ դեպքերում: Բերենք օրինակներ ըստ համապատասխան անցումների:

Գ/Կ: Գայթազդութիւն-գայթակղութիւն, ընկճեմ-ընգճեմ, ընկեր-ընգեր, ընկոյզ-ընգոյզ, ընկենում-ընգենում, ծունկն-ծունգն, մանկ-մանգ, մանկաղ-մանգաղ, պակշոտ-պագշոտ, վտանգ-վտանկ, ցանկ-ցանգ... «Իշխան Պարսից զթշնամութիւնն..., խորամանգեալ ծածկեալ... բերեր» (*Բուզ. 45*): «...Թէ որպէս յետոյ խորամանկութեամբ Սերուժանայ Արծրունւոյ եղեւ ապստամբութիւն» (*206*): «Արմունկն ի ծունգ և ձեռն ի ծնօտի՝ նստաւ այնպէս» (*Բուզ. 74*): «Երան բարծի նորա ոչ յանձին և ի ծունկն ոչ հասաներ» (*Բուզ. 214*): «Արծակեաց շառաւիղ և ծաղկեաց ծաղիկ եւ երեւեցոյց ընկոյզ» (*Թիւք, ԺԷ, 8*): «Ի պարտէզս ընգուզեացն իջի հայել յարդինս վտակացն» (*Երզ. 2, 10*): «Եւ եկաց իրեշտակն Աստուծոյ յառուամէջս այգեացն, և էր ցանգ աստի և ցանգ անտի» (*Թիւք, ԻԲ, 24*): «Զի նա է խաղաղութիւն մեր, որ արար զերկոսեան մի եւ զմիջնորմ ցանկոյն քակեաց» (*Եփես. Բ, 14*):

Դ/Տ: Բանդ-բանտ, գինդ-գինտ, գունդ-գունտ, ժանտ-ժանդ, ընտանի-ընդանի, ընտրեմ-ընդրեմ, ընդոծին-ընտոծին, խանդալ-խանտալ, կնդութիւն-կնտութիւն, դժգունել-տժգունել (*Ոսկ. պող. 41*), դժգոհ-տժգոհ (*Ոսկ.պող. 515*), շերտակոտոր-շերդակոտոր (*Պիտ. 406*), պնդել-պնտել...:

«Որպէս եպիսկոպոսապետն Կեսարու Եւսեբիոս վճարեալ լինէր ի բանդին» (*Բուզ. 51, նաև 49, 81, 84*): «Ետ հրաման թագաւորն Վաղէս կապել կրկին զեպիսկոպոսապետն Բարսեղ, արկանել ի բանտ ի նեղութիւն» (*Բուզ. 85*): «... ընդրեաց իւր արս ընտիրս միամիտս» (*Բուզ. 158*): «Թէ ուստի կամ որպէս ընտրեցաւ լինել կաթողիկոս հայոց մեծաց» (*Բուզ. 51*):

Աստվածաշնչի համաբարբառը նշում է միայն ընտոծին (9 անգամ): Սակայն և՛ 1860, և՛ 1895 թթ. հրատարակւթյուններում կա և ընդոծին:

Բ/Պ: Ամբարիշտ–ամպարիշտ, ամբոխ–ամպոխ, ամբարտաւան–ամպարտաւան (*խիւր. 306, 318, 278, 280*), ըմբել–ըմպել, ըմբշամարտ–ըմպշամարտ... «Բազմեցաւ յուտել և յըմբել» (*Բուզ. 196*): «Զոր ըմբելով՝ զանուն տեառն կարդացից» (*149*): «Իսկ թագաւորն Պարսից Շապուհ... առնոյր գինի ի մատունսն ըմպել» (*159*): «Որ արժանի արար զիս ըմպել զբաժակս զայս» (*Բուզ. 182*): «Փառս Ողոմպիայ խաղուն հանդիսի յըմբշամարտկացն երևի» (*խոր. 308*): «Որ ըմպշամարտ սկայազօր քաջութիւնս գործեաց ի մարտս պատերազմաց» (*Ազաթ. 10*):

Ծ/Զ: Գծուծ–գծուծ, ընծայ–ընծայ, ինծ–ինծ, խանծ–խանծ, հնծան–հնծան (*Մանդ. 191*), ծնկիմ–ծնկիմ, մղծկիմ–մղծկիմ...: «Սլանայր յարեւմուտս և երկրորդն ի վերայ ընծու՝ ի հիւսիսի հայելով» (*խոր. 76*): «Աստանօր պատահի. ընծու անկարելի է զխայտուցսն փոխել» (*խոր. 237*): «Անցաւք, հաստոսկերք, որ ոչ ծնկեցան յանհնարին ցաւս աղեաց» (*Վկայք. 16*): «Եւ ոչ ի նախանծուէ ծնգին եւ ոչ այլ իւրք ախտիւ ջերանին» (*Ոսկ. մտ. 178*):

Ծ/Զ: Այս կարգի օրինակները քիչ են: Խառնաղանջ–խառնաղանճ, խառնիճիղանջ–խառնիճաղանճ, կինճ–կինջ...: Հավանորեն V դարում այս զուգածները գոյութիւն չեն ունեցել և հետագա զրչագրութիւններ են: Նույնը չենք կարող ասել դ/տ, բ/պ, գ/կ զուգածութիւնների մասին: Ամենավաղ ձեռագրում սրանք արդեն ամրագրված են որպէս դիրքային հնչյունափոխութիւն և պետք է կարծել, որ գործընթացը եղել է և V դարում, իսկ վկայութիւնների մեծաթիվ ու հաճախական

լինելը թույլ է տալիս երկու ձևերն էլ դիտելու որպես կանոնական:

Խ/Ղ: Մի շարք բառերում խ-ն և ղ-ն լծորդ հնչյուններ են, որոշ դեպքերում ներկայանալով նաև -խ/ղ-(ղ/խ) հնչյունակապակցությամբ, ածուխ-ածուղ, աղխ-ախղ, աղխեն-ախղեն, ախաւեղագէս-աղաւեղագէս, ամօթխած-ամօթղած, բուխ-բուղխ, բխեն-բխղեն, թախիծ-թաղիծ, ժխոր-ժղոր, մժեխ-մժեղ, աղմար-ախմար, ժախջախ-ջաղջախ, սանդուղք-սանդուխք, սեղեխ-սեխեղ, տխեղծ-տղիղծ... «Բխեաց աղբեր՝ ջուր քաղցր անոյշ» (Բուզ. 79): «Եւ ի նոցանէ բղխեսցեն շնորհք պատուիրանացն Աստուծոյ» (Բուզ. 11): «Բախեցեք զաման լալոյ արտասուացն» (Ազաթ. 69): «Բաղխեաց զթանծութիւն լայնատարած գետոյն» (Ազաթ. 384): «Յայնժամ իբրեւ զթախծեալ սգաւոր յոգի և ի մարմին էաք տրտմեալք» (Եղիշ. 104): «Բազունք ի նոցանէ թաղծեալ ի սուգ ծանրութեան... եկին և յանդիմանեցին զնախարարեանն» (Եղիշ. 54):

Այս բառերը ստուգաբանական դժվարություններ են ներկայացնում կապված հենց խ կամ ղ-ի նախնականության հետ: Պատահական չէ, որ վերոհիշյալ բառերից Արմ-ում ստուգաբանված է միայն տխեղծ-ը: Անպայմանորեն զուգաձևերից մեկը հետագա երևույթ է՝ խ և ղ-ի արտասանական ընդհանրության հետևանք, որն արտացոլվել է և գրության մեջ: (Արդի հայերենում խ և ղ-ն տարբերակվում են միայն ձայնեղության հատկանիշով: Ղ-ն որոշ թույլ դիրքերում կարող է կորցնել իր ձայնեղության հատկանիշը և նմանվել խ-ին (ԺՅ 1979, 56):

Կարելի՞ է արդյոք պարզել, թե հիշյալ և նման այլ ձևերում նախնականը խ-ն է, թե ղ-ն: Թեև Արմատական բառարանում դրանք ստուգաբանված չեն, բայց ըստ երևույթին Աճառյանը ճիշտը համարում է խ-ով ձևերը՝ դրանք ներկայացնելով որպես գլխաբառեր:

Քննությունը բերել է մեզ այն համոզման, որ գոնե նման բառերի մի մասում նախապես եղել է ղ: Այս եզրահանգման ենք եկել բառերի զուգահեռ այլ գրության, ինչպես նաև ստուգաբանական որոշ օրինաչափության բացահայտման շնորհիվ:

Անդրադառնանք ամօթխած-ին: Առաջին բաղադրիչը ակնհայտորեն ամօթ բառն է: Ի՞նչ է իրենից ներկայացնում խած(ղած)-ը: Այս հարցում մեզ օգնում է այդ բառի մեկ այլ գրություն՝ ամօթլեած: «Եւ հանդերձ այնու ամենայնիւ յորժամ գրաւ հարսանեացն լինիցի, առեալ միայն ընդ միայն խրատիցես, զամօթլեած բարսն եւեթ յանձին ունել և չընկենուլ երբեք զայն ի բաց» (*Ոսկ. Պող. 895*): «Մինչդեռ ամօթլեած իցե՛ ստեպ խրատիցե՛» (*Ն.տ.*): «Եւ դու ոչ սակաւ քան զնա ամօթլեած» (*Ն.տ.*): Ամօթլեած-ը կարող ենք դիտել որպես բարդ բառ՝ *ամօթ+լի+ած = ամօթլեած*, որը ներկայանում է ամօթխած-ամօթղած ձևով: (Լ/Ղ անցումը ինքնին հասկանալի է: Նշենք միայն, որ հենց լի բառը դ տարբերակով դարձյալ հանդիպում է գրաբարում՝ յղի): Լի-ն էլ ծագում է հ.-ե. *ple արմատի pleyo ձևից (*Արմ.*):

Խ/Ղ տարբերակային ձևերի ստուգաբանական ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ որոշ դեպքերում առկա է կոշտ լ-ն (հ.ե. *l): Այսպես, աղխ-աղխ-ը աղերսվում է հ.ե. *aleq-ի հետ (*Джаукян, 1967, 121*): Ձոխիլ հ.ե. *gʰusol-ի հետ (*Ջահուկյան, 1987, 129*):

Այս զուգահեռները թույլ են տալիս թախիծ-թաղիծ արմատի մեջ էլ տեսնելու թալ «նվաղում, կսկիծ» արմատը, որն անկախաբար հանդես չի գալիս, այլ թալանալ «թմրել, թուլանալ». թալուկ, թալկանալ... և այլն: -իծ-ի հարցը հստակ չէ: Այն իր բնույթով կարելի է դիտել որպես մասնիկ ինչպես -իր-ը թմբիր-թմիր բառերում: Ի դեպ, թալ- արմատի մեկ այլ տարբերակն է թերես և տաղտ-ը (տ- աճականով), որից տաղտաղտ «ծանձրալի», տաղտկութիւն «ծանձրութիւն», տաղտկանալ «ծանրության չդիմանալ, ընկճվել»: Տաղտ-ը Գ.Ջահուկյանը բխեցնում է հ.-ե. *tel «բարձրացնել, կրել» արմատից (*Джаукян, 1967, 132-133*): Այդ նույն արմատին պետք է հանգեցնել նաև թալ-ը: Թ/տ ստուգաբանական տարբերակները հայերենին խորթ չեն. *հմմտ. տապալեն-թալալեն, տալաւոր-թաղար* (*Джаукян, 1967, 301-302*): Ի դեպ, տաղտ արմատն էլ թալ-ի նման անկախաբար չի կիրառվում: Եթե մերժելի չէ թալ- արմատի այս մեկնությունը,

ապա թաղանձ/թախանձ բառաձևերում նույն թալ/թաղ արմատի գոյությունը կասկածից դուրս պետք է համարել:

Մի խոսքով, բոլոր հիմքերը կան խ/ղ տարբերակային ձևերի դեպքում, գոնե որոշ բառերի համար, նախնականը և ստուգաբանորեն ճիշտը համարել ղ-ն (հին կոշտ լ-ն):

Ձայնեղ/շնչեղ խուլ բաղաձայններով տարբերակներ: Անհեղեղ-անհեթեթ, թագուցեալ-թաքուցեալ, խառնաբնդոր-խառնափնդոր, փափագեմ-փափաքեմ, քեղ-դող-քերթող...:

Անհեղեղ-անհեթեթ ձևերն Արմատական բառարանում դրված են որպես գլխաբառեր: Ըստ Աճառյանի ուղիղ գրչությունը անստույգ է, թեև հետագայում գրական լեզուն ընդունում է միայն անհեթեթ-ը: V դարում թերևս կիրառվում էր միայն անհեղեղ-ը: «Գտան ազգ սկայիցն, անհեղեղք, յաղթանդամ մարմնով և վիթխարիք» (*խոր. 37*): «Անհեղեղքն և անգարդքն ի մմա էին» (*Եզն. 25*): «Նոյնպիսի կացեալ էր անհեղեղ և անարգասաւոր» (*Եզն. 29*): Գանգատեմ-քանքատեմ: V դարից վկայված է միայն ք-ով՝ «Սկսաւ տալ զրոյց քանքատելով» (*Բ. մկր. Գ.37*), այնինչ արդի հայերենում միայն գ-ով է»:

խուլ/շնչեղ խուլ բաղաձայններով տարբերակների օրինակները սակավ են: «Ապշութիւն ունի զսիրտս ձեր» (*ժող. ժԲ. 5*): «Ցնորեալ պաշտէ յափշութիւն մտաց ձերոց» (*Ագաթ. 34*): Ըստ երևութիւն պ>փ անցմանը նպաստել է ապշ- հնչյունափոխումը (ունենք նաև ապշել-ափշել, այնինչ միայն ապուշ): Շնչեղացված մյուս օրինակը փայքար բառն է, գրաբարում հաճախական ու օրինաչափ պայքարի դիմաց «Ապա եթ չխոստանայցէ տեսչութիւն ինչ, ասասջիր եթ զի տեսչութիւն, որով զփայքարն եղիր» (*Ոսկ. Եփես. 876*):

բ) Բաղաձայնների անկմամբ կամ հավելմամբ տարբերակներ

Ձ-ի հավելում: Նախքան տարբերակները նշելը, հիշենք, որ նախագրային շրջանից գ-ն նախդրային-հոլովակազմիչ

գործառնություն ունեն, որը հարատևել է գրաբարի զարգացման ողջ ընթացքում: Այս գործառնությամբ պայմանավորված՝ ի հայտ է գալիս գ-ի բառակազմական նշանակությունը: V դարի մատենագրության մեջ առկայանում են գ-ով մի շարք բառեր, որոնց նախատիպ հիմքը անկախ կիրառություն չունի (կան ունեցել է նախագրային շրջանում և մեզ չի հասել): **գառամ, գառանցել, գարմ, գգաստ, գգենուլ, զեկուցանեմ, զերծ, զկնի, զգոյշ:** Զ-ով մի շարք կազմություններ նախատիպ հիմքի համեմատությամբ դրսևորում են իմաստային որոշ նրբերանգներ. **անգիտութիւն** «չիմանալը» – **գանգիտութիւն** «երկյուղ, վախ», **գնամ** «գնալը»-**զգնամ** «երթևեկել, շրջել, գնալ-գալ», **եռամ** «եռալը» – **զեռամ** «շարժվել», **անկուած/անգուած** «հյուսված, գործված» – **զանկուած/զանգուած** «խմոր, հայս, գուղծն»:

Իմաստային ընդհանրություն ունեցող զուգաձևերից նշենք. **անկանեմ-զանկանեմ, արդ-զարդ, արթուն-զարթուն, արմանամ-զարմանամ, արմանալի-զարմանալի, արտուղի-զարտուղի, անխուլ-զանխուլ, իջանեմ-զիջանեմ, ընկենուլ-զընկենուլ:** «Ոչ միայն արդուց և զարդուց և կերպարանց արարիչ է» (*Եզմ. 27*): «Ապա, եթե ծիծեռունք ընդ մեզ բնակեն արմանալի ինչ ոչ է» (*ՆՅԲ*): «Ջարմանալի եղև սեր քո ինծ» (*Բ. Թագ. Ա. 16*): «Ոչ ըստ արտուղի անկանին» (*Ագաթ. 139*): «Յուղիղ հաւատոցն զարտուղի անկան» (*ՆՅԲ*):

Նկատելի է, որ գ-ով և առանց գ-ի դրսևորում են բառակազմական ոչ նույնատիպ կազմություններ. արթնաբար, արթնական, արթնամիտ, արթնութիւն, բայց՝ զարթուցիչ, զարթուն, զարթիմ: Այս կարգի բառերում գ-ով տարբերակները հաճախ սաստկականության երանգ են արտահայտում:

Յ-ի հավելում: Յ-ի հավելումը դարձյալ առնչվում է նախդրային կիրառության հետ:

ա) ստեղծվում են նոր բառեր. **ագ-արմատից՝ յագենամ, յագելի, յագեցութիւն, յագուրդ, օդ-արմատից՝ յօդիմ (իմմտ. զօդիմ):** Յայսկոյս, յանձնակալութիւն, յանց «հանցանք», յաջորդ, յորինեմ... առանց յ-ի վկայված չեն, թեև ենթադրելի է նախագրային շրջանում դրանց գոյությունը:

բ) յ-ի հավելման ժամանակ նկատվում են իմաստափոխության կամ սաստկականության որոշ երանգներ: Ածեն «բերել, փոխադրել» – յածեն «տանել-բերել, ման ածել», անցանեն «անցնել» - յանցանեն «հանցանք գործել»:

գ) յ-ով և առանց յ-ի գույգերը ներկայանում են որպես ազատ տարբերակներ: Ակամայ-յակամայ, անկ-յանկ, անկարծ-յանկարծ, աջող-յաջող, աջողակ-յաջողակ, առաջ-յառաջ, առաջապահ-յառաջապահ, արգոյ-յարգոյ, եղանակ-յեղանակ, ելուզակ-յելուզակ, արալեզ-յարալեզ, երկար-յերկար, երկուանք-յերկուանք... «Արիաւիրք անկարծք ի վերայ հասանէին» (*Իմաստ. ԺԸ, 17*): «Եւ եթէ անզէն մարդիկ այդպէս բռնացան, եթէ յանկարծ զինուորս ևս ընդ ինքեանս միաբանեսցեն» (*Եղիշ. 62*): «Հրաման տայ՝ և քաղաքացեաց մարդկան արգոյ և պատիւ լինել առաւել քան զգեղեկաց» (*Խոր. 117*): «Ձշաբաթս ձեր և զօրս յարգոյս մեծամեծ պատուականաց ձերոց ոչ առնում յանձն» (*Չգօմ. ԺԳ*): «Էր ինձ, ասէ, ով սիրելիք... մերձ ի լեառն մի երկար յերկրէ բարձրութեամբ» (*Խոր. 75*): «Ի դորա յերկար խաղաղութեանն և մեք առողջութեամբ և աստուածպաշտութեամբ կատարեսցուք զկեանս մեր» (*Եղիշ. 29*):

Այս գուգածներում յ-ի հավելման դեպքերը միայն նախդրային կիրառության հետ կապելը ճիշտ չէ: Ըստ երևույթին պետք է հաշվի առնել մեկ այլ հանգամանք ևս: Հավանորեն մի շարք բառերում (յառաջ, յարալեզ, յերկար, գործ ունենք հին բարբառային հ-ով արտասանության հետ՝ յ տառադարձումով: (հ-ի հավելում առկա է և արդի որոշ բարբառներում): Բայց եթե կարելի է առարկել յառաջ, յերկար բառերի հառաջ, հերկար արտասանությանը գրաբարում և ընդունել, որ յառաջ, յերկար արտասանվել են այնպես, ինչպես գրվել են, ապա հ-ով մի շարք բառերի առկայությունը հուշում է, որ, իրոք, գրաբարում որոշ ձևեր ունեին բառասկզբի հ-ի հավելում: Յետագա-հետագայ, յամր-համր, յատանեն-հատանեն, յետ-հետ, յետեւախաղաց-հետեւակագնաց և այլն:

Ուշադրության արժանի են հատկապես յաւատ-հաւատ

և յերայական-հերայական ձևերը: Գրաբարում կա և աւատ (դ. թգ. ժբ. 15, Իբ, 7, ՀԱ, 1958, 10):

Հաւատ-ի հավաստի ստուգաբանությունը չկա: Աւատ-յաւատ-հաւատ զուգաձևերի առկայությունից կարելի է ենթադրել նախնական աւ-ատ, ապա սրանից ածանցված՝ յաւատ (նախդրային կամ հագագային) և հաւատ (հագագային հին բարբառային): Երբայեցի երբայական բառերն էլ դարձյալ գրվում են նաև յ-ով և հ-ով:

Ոսկեբերանի՝ Եսայու մեկնության մեջ երեք ձևերն էլ կան: «Ձի ի հերայեցի լեզու՝ հրեղէն բերանք թարգմանին սրորէք» (64): «Յասուբա, յերայեցի լեզու՝ թէ զհարդ կայցեն թարգմանի» (173): «Եւ երբայեցին Ուքուղիզիդով ասէ, որ թարգմանի ողորմութիւն» (252):

Ա.Հանեյանը բարբառային նյութի ուսումնասիրությամբ հանգում է այն եզրակացության, որ տարածամասնակյա հայեցակետով բարբառային ձայնեղ հագագները ընդհանուր առմամբ հանդես են գալիս գրաբարի բառասկզբի յ- գրով արտահայտված հնչյունի դիմաց: Նա հ- և յ- հնչյունների համար ենթադրում է երեք կարգի ընդհանրություն. ա) ծագումնաբանական, բ) լծորդական-հարաբերակցական, գ) գործառական (Հանեյան, 1984, 363, 366-367):

Յ-ի հաւելում կա (ոչ նախդրային կամ հագագային) հետևյալ զույգերի երկրորդ անդամներում. գարնանի-գարնայնի, աշնանի-աշնայնի, ամարանի-ամարայնի, ծմերանի-ծմերայնի, որոնցում ըստ երևույթին -ային ածանցն է ի- սղումով:

Վ-ի հավելում: Վ-ն ավելանում է բառամիջում՝ ո-ից հետո: Ահարոն-Ահարովն, աղաբողոն-աղաբողովն, Բաբելոն-Բաբելովն, Գեհոն-Գեհովն, կանոն-կանովն, Մակեդոնացի-Մակեդովնացի, սիղոբայ-սիլովբայ, սորէկ-սովրէկ, սրորէ-սրովրէ, փարաւոն-փարաւովն, քոթանակ-քովթանակ...: «Եւ յայտ անտի է՝ թէ զծկանց ասէ, այնու եթ ետուր կերակուր ազգաց եթոպացոց» (Եզն. 104): «Դու... ետուր կերակուր ժողովրդոց եթովպացոց» (Եզն. 103): «Ապա դարձեալ Արիստակէս արժանահավատ բանիւ և քսան կանո-

մեալ գլխովք ժողովոյն գայ հանդիպի իօրն»... (*Խոր.* 240): «Այլ մեք զկարգն կանովնելով, առընթեր և զմարաց թագաւորսն» (*Խոր.* 67): «Տնկեցի որթ սորէկ» (*Եսայ.* Ե.2): «Ազգն ինչ որթոյ որ կոչի սովրէկ» (Եվս. Եմ. մեկ. 226):

Ընդհանրապես վ-ի հավելումը բնորոշ է հունական ժագում ունեցող բառերին, և ով- հնչյունախումբը համապատասխանում է w-ին (*ՉԲՅԼ, VI, 600*): Սակայն այդ երևույթը ընդհանրացվել է, և վ-ի հավելում ենք տեսնում նաև այն բառերում, որոնք հունարենում w չունեն, կամ հայերեն կազմութիւններ են. աղաբողովն, սիղովբայ, սրովբէ, քրիստովնեայ....: Այստեղ գործել է համաբանության երևույթը: Լազարյան Ավետարանում ավանդված ներքոհիշյալ ձևերը այդ են հաստատում. ովմն, ովմանք, ովմանց, որովգայթ, Պետրովս, քարովզչութիւն, քարովզել, ովզւոց...

Այլ կարգի հավելումներ: Որոշ բառերում առկայացող հնչյունական հավելումները սաստկական երանգ են հաղորդում: «Խեթեաց յանձն իւր թշնամութիւն» (*ՆՅԲ*): «Ի խեթկել որդւոյն Արիմենի գորդին Որմզդի...» (*Եզն.* 140): «Ընդ խաւարուտ գնայ» (*Ա. Եզր. 7. 24*): «Ձի գոնեայ իբրեւ զլուսնակայ երեւէր տիւն և ոչ ամենեւին խաւարչուտ» (*Եզն. 217*): «Յարկ է իմաստնոյն, օդ հիւսիսոյ թէ շնչիցէ ցրտագոյն, սարսռալ, կարկտչել, ցրտել» (*ՆՅԲ*): ՆՅԲ-ն կարկտել չի ավանդում, բայց V դարում այդ բառի գոյությունը կասկած չի հարուցում: Բայերի կազմում այս հավելումները կերպածանցներ են:

Ներքոհիշյալ բառերում հավելումները այլ բացատրություն ունեն: Պաճեն-պատճեն զուգաձևությունները գալիս են ըստ երևույթին փոխատու սկզբնաղբյուրից: Կրսեր- ձևում Աճառյանը դիտում է պարզապես տ-ի անկում: Նախնական ձևը հավանորեն կրտսերն է: V դարից եթե սխալագրություն կամ հետագա գրչություն չէ, ունենք նաև կրցեր, «Եւ կոտորեաց զամենայն որդիս նորա, յորոց էր կրցերն Յովնաթան» (*Եւս, Եմես. մեկն. 156*): «Երկու որդիք էին յորոց կրցեր որդին... սպան զմեսն» (*Մ.տ. 91*): Կրցերը – տս- հնչյունակապակցության միաձոյլ արտասանության արտահայտություն է:

Ամանակ-ժամանակ: Գրաբարում հաճախական է ժա-

մանակը: V դարից կա և ամանակ: «Բայց ժամանակ ոչ ամանակի բաղադրութիւնք»: «Զի ամանակ է վճարելոյ ուղղութեան ժամանակ» (ՆՅԲ): Թեև Արմատական բառարանում իրանական ծագում է վերագրվում, բայց կարող է ամանակը լինել հայա-կազմութիւն ամ բառից, -անակ ածանցով՝ ժամանակ-ի համաբանությամբ:

Կեսուր-սկեսուր: «Յորժամ դուստր զմայր անարգիցէ և նու զկեսուր իւր... մի ինչ տարցին ընդ միտ» (Եզն. 60): «Պատուեա զսկեսուրն քո և զսկեսրայրն, քանզի արդ նոքա են քո հայր և մայր» (Տոբ. Ժ. 12): Հավանորեն կեսուր-ը հին բարբառային ձև է (եթե պարզապէս ս-ի անկում չէ գ մախդրից հետո):

Ներկայացնենք բաղաձայնների հավելման և անկման որոշ օրինաչափութիւններ, որոնք կարելի է արտահայտել *բաղաձայնի գրո* հերթագայությամբ:

Դ/գրո. Տարբերակները իրականանում են՝

ա) -համ(հան) ածանցի ամ(ան) գրությամբ: Ամբառնամ-համբառնամ, ամբար-համբար, ամբարտակ-համբարտակ, վերամբարծ-վերհամբարծ, անդերծապետ-հանդերծապետ, անգրիճեն-հանգրիճեն....

բ) հատ- արմատի հ-ի անկմամբ: Ազգատ-ազգահատ: «Բայց գտոհմս Կամսարականացն... ազգատ առնէր» (Բուզ. 109): «Յաղագս... ազգահատութեան տան մախարարացն Բզնունեաց» (ՆՅԲ): Հատ/ատ արմատը ներկայացնող մեծ թվով զուգածներ V դարում չկան, բայց հ-ի սղումը գործել է դեռևս մախագրային շրջանից, որովհետև արդեն V դարից վկայված են ակնատ, ականջատ, միջատ, գունատ, բացատ, կառափնատ, խրամատ, կնատ, որոնց հ-ով ձևերը վկայված չեն: Փայտատ «կացին» բառի փայտահատ ձևը ուշ վկայութիւն է:

Հար/ար արմատով զուգածութեան մնուշ է փողար և փողահար-ը: «Երգիչք փողարք շուրջ զարքայիւ և ամենայն ժողովուրդք երկրին խնդային և փողս հարկանէին» (Դ.Թագ. ԺԶ, 16): «Եւ ձայն քնարերգաց եւ երաժշտականաց, արուեստականաց և փողահարաց և թմբկի՝ այլ ոչ եւս լուիցի» (Յայտ. ԺԸ, 22):

գ) բառասկզբում հ/գրո տարբերակներ: Ավատ-հաւատ,

հոգի-ոգի, սկայ-հսկայ, Յաբել-Աբել, Յեփեստոս-Եփեստոս: ՆՅԲ-ն ոգելից բառը չի նշում, այլ՝ հոգելից: Բայց V դարից այն կա: «Այս բանք ոչ եթե իմ ինչ են, այլ Եգեկիէլի ոգելից մարգարէին» (*Կիւրդ. 12*):

դ) Բառամիջում հ-ի անկման կամ հաժվեման օրինակներ նույնպես քիչ են: Ունենք արտիոունծ-արտուունծ: Վերջինս կարող է սխալ գրչություն լինել: Մեզ հանդիպել է միայն մեկ օրինակ՝ սուրամ-սուրհամ: Եթե իրանական փոխառություն է, ապա հնագույն ձևը սուրհամ-ն է:

Ն/զրո: ա) Ն-ի հաժվելում բառավերջում: Գուղծ-գուղծն, մութ-մութն, ջերմ-ջերմն, կրուկ-կրուկն, կրճիմ-կրճիմն: ՆՅԲ-ն գուղծ-գուղծն երկու ձևերն էլ բերում է որպես գլխաբառ, բայց V դարից ՆՅԲ-ի վկայությունները միայն գուղծն ձևով են: Յաճախական են մութ հիմքով կազմությունները, բայց մութն հիմքով ձևեր նույնպես կան: Արջ-արջն բառերը տարբերակային ձևեր չեն, այլ տարբեր բառեր՝ արջ «կենդանի» արջն «սև»:

բ) Ն-ի հաժվելում վերջին բաղաձայնից առաջ: Բարբաջ-բարբանջ, մարմաջ-մարմանջ և այս հիմքերով այլ կազմություններ:

գ) Յարասության երևույթ՝ արմուկն-արմունկն, կրուկն-կրունկն, հեզնել-հենզնել, պատանդ-պանտանդ, ադամանդ-ամդամանդ, մեքենա-մենքենայ: *Յմմտ.* «Որպէս քար անդամանդ ծածկեալ զօրութեամբ քարշէ զերկաթն, նոյնպէս և սուրբ գիտութիւն զմաքուր միտսն առ ինքն ձգէ» (*Եւագր. 161*): «Մարմինն էր քան զադամանդ անվթար և անգիծ» (*ՆՅԲ*): «Եւ արծակեաց ևս զպատանդսն զկրշակունիսն թագաւորին Յայոց» (*Բուգ. 76*): «Եւ ետուն զնա պանտանդ ի դուռն կայսերն յերկրին Յունաց» (*Բուգ. 104*): Բուզանդը մեկ տասնյակից ավելի անգամ օգտագործել է պանդանդ:

Ն-ի հաժվելում ածանցման ժամանակ: Գործական-գործնական, գիտական-գիտնական, թափառական-թափառնական, խօսակից-խօսնակից, յայտաբար-յայտնաբար, ստորային-ստորնային և այլն: Այս ձևերը դրսևորում են իմաստային նրբերանգներ (տես ՆՅԲ): Թեև այս տարբերակները

ի հայտ են գալիս ածանցման դեպքում, բայց ական-նական, արար-նաբար տարբեր ածանցներ չեն: Ձուգածների դեպքում գործ ունենք տարբեր հիմքերի հետ. գործ, գէտ, ստոր... հիմքերից կազմվում են գործական, գիտական, ստորային... ձևերը, իսկ գործուն, գիտուն, ստորին... հիմքերից՝ գործնական, գիտական, ստորնային: Փաստորեն առկա են հիմքային տարբերակներ, որոնք իրականանում են զրո/ն հակադրությամբ: Հիմքային առանձնահատկություններով պետք է բացատրել նաև իմաստային տարբերությունները:

Ր/զրո: Մի շարք իրանական փոխառություններում (բառամիջում և բառավերջում) ավելանում է ր: Ունենք հետևյալ զույգերը. բաժանել-բարժանել, դաժան-դարժան, թոշակ-թորշակ, դաշոյն-դարշոյն, թագուհի-թագուրհի, խոհ-խորհ, մահ-մարհ, յաւերժ-յաւէժ, ոջիլ-որջիլ, պահել-պարհել, պաշարել-պարշարել, վիհ-վիրհ...:

Արմ-ը բարժանել ձևով վկայություն բերում է հետհիմքերորդդարյան մատենագրությունից: Սակայն վկայություն կա և V դարից: «Բարժանեա զծով նոցա և արգել ի ջուրսն, զի քննեսցեն» (*Եփր. Ասոր.*, 3Ա, 1956, 14): «Ոչ զոր օրինակ հեթանոսք, որ ի բիւրուց ի բիւրս աստուածս բարժանեն զտեսչութիւն աշխարհիս» (*Ոսկ. Ես.* 273): ... պաշարել/պարշարել: «Ծով տկար աւագովն պաշարեալ չիշխէ անցանել ըստ հրաման» (*Եզնիկ*, 18): «Բաւական են նմա պարշարմունք յորս եղել մեզ...» (*Եփրեմ*, «Սիրոն», 1930, 15, 57): Վերոհիշյալ, ինչպես նաև թորշակ, յաւերժ, դարշոյն, իրանական բառերի դեպքում ր-ի հավելումը դժվար է բացատրվում, ըստ երևույթին դրանք կամ իրանական, կամ էլ հայերեն հին բարբառային ձևեր են: Ոջիլ(որջիլ) բառի ծագումը հստակ չէ: Եթե գոլորշի բառի կապը գոլ (հ.-ե.*w-l) արմատի հետ ճիշտ է, ապա գոլորշի կազմությունը զուտ հայկական (բարբառային) երևույթ է:

Այլ դեպքերում հ/րի զուգածությունները, որպես իրանական փոխառություններ, ստուգաբանորեն արդարանում են: «Ածէ Աբրահամ ի մէջ և ասէ, եթէ վիրի մեծ է ընդ մեզ և ընդ ձեզ» (*Ոսկ. Ես.* 144): «Այլ վիհ մեծ է, ասէ, ընդ մեզ և ընդ ձեզ» (*Ն.տ.*): «Սովորութիւն իսկ էր... փեսայութեամբ ի դուռն տաճարին

հասանել՝ դահեկանս ճապաղել իբրեւ զհիւպատեանն հռոմայեցւոց. սապէս և թագուհեացն յառազաստին՝ մարգարիտ» (*Խոր.* 179): «Յայնժամ թագուրհին Պատրոնիկէ թէպետ և դառնացեալ էր յանձն իւր» (*Պրոկղ.* 3Ա, 1921, 15):

Նույնիսկ հայ. պատուհաս բառի համար ենթադրելի է նախնական *պատուիրաս, *պատուրիաս ձևը (իր. *pâtufrás*): Պատուհան բառի *պատուրիան ձևը գրաբարում վկայված է: Իր. *patifran և pati-frana-ին ավելի հարազատ է Ղարաբաղի բարբառի պըտըռռիան ձևը: Ր/հ զուգահեռները թույլ են տալիս հավաստելու մի շարք բառերի իրանական ծագումը: Բահ-ը Արմ-ը համարում է բնիկ հայերեն բառ, որի հին ձևը պետք է լինի բարի, ինչպես ցույց են տալիս կովկասյան փոխառությունները: Մահ-ի մարի զուգահեռն էլ խոսում է դարձյալ այդ բառի իրանական ծագման օգտին: Րհ-ով ձևերը ավելի հին են:

Բ/զրո: Հնչյունական այս առանձնահատկությունը ի հայտ է գալիս մի շարք բառերում՝ մ-ից հետո: Բեն-բենբ, զմրիլ-զմբրիլ, թմրիմ-թմբրիմ (թմբրութիւն), շամշիմ-շամբշիմ, շամշանք-շամբշանք, շամշական-շամբշական, շամշութիւն-շամբշութիւն..., պատշգամ-պատշգամբ, սալամ-սալամբ, թմուկ-թմբուկ... Բառարանները բոլոր ձևերն էլ վկայում են, բացի թմուկ-ից, բայց մեզ հանդիպել է և այդ ձևը (եթե վրիպակ է): «Եւ երկիւղի ընդ առաջ ելեալ իբրեւ զալիս ծովու ամբոխին թնկօք և փողովք, ազգի ազգի պարուք» (*Աթանաս,* 519): Այս զուգաձևությունները միանշանակ չեն: Եթե որոշ դեպքերում բ-ի հավելում է, ապա այլ դեպքերում՝ անկում է: Այսպես՝ բեն – բենբ տարբերակում բ-ն հավելում է, իսկ, թմիր-թմբիր ձևերում՝ անկում. Արմ-ում ենթադրվում է *tumb արմատը: Աճառյանի կարծիքով «հայերենի ամենահին ձևն է * թումբիր (կազմված -իր մասնիկով), հետո բ-ի անկումով թմուր (ավելի ճիշտը պետք է լիներ թմիր): Թմուկ ձևերում նույնպես բ-ի անկում է (պիլ. *tumbuk): (Կաղամբ-ը, եթե իրոք, իրանական փոխառություն է. *հմմտ.* պրս *kalām*, ապա դարձյալ բ-ն հավելում է, թեև այս դեպքում կա և հուն. *χράμβη*-ի ազդեցությունը): Ուրեմն, մ/մբ ներկայացնող զուգաձևությունները ոչ միայն պետք է բացատրել բառերի ծագումնաբանական, այլև

ուրիշ պատճառներով (թերևս հնչյունական-արտասանական, որի հետ կապված որոշ դիրքերում մ/մբ-ն ներկայանում են որպես լծորդներ. *հմմտ.* գործիական հոլովի նովիմբ-նովիմբք ձևերը: Գ.Ղափանցյանը հայ. խումբ կապում է խեթ. *hum-andaz* «ամբողջովին» բառի հետ (*Ղափանցյան, 1961, 182*): Նա բ-ի հավելում է տեսնում և դամբան, դամբարան բառերում, ասոր. *tamma* «ոսկոր»: Եթե այս ճիշտ է, ապա դարձյալ առկայանում են մ-մբ դրսևորման ուշագրավ օրինակներ:

Գրաբարում կա և մ/բ լծորդության երկու հետաքրքիր օրինակ. սկիզբն-սկիսմն, հաստաբեստ-հաստամեստ: առավել հաճախական ու արդյունավետ է սկիզբն հիմքը, որով ունենք մեծ թվով կազմություններ. սկզբունք, սկզբնական, սկզբնավոր... Բայց ունենք և սկիսմն-ով օրինակներ. «Իսկ սկիսմն հարկ է լաւացն և ըղծագունացն բաշխել տալ» (*Փիլ. մնաց., 444*): «Վասն որոյ առադրեաց, թէ ձեզ ամիսս այս սկիսմն՝ յայտնելով որոշեալ և մեկնեալ իմն ժամանակաց թիւ» (*445*): «Ձի ժամանակի ամենայնի սկիսմն և դարձեալ գարունն իցէ» (*446*): Փիլոնը 7 անգամ կիրառել է այս ձևը: Ուրեմն, սխալագրություն չի կարող լինել:

Հաստամեստ-հաստաբեստ հանդիպում ենք մի շարք գործերում: Բուզանդը երկու ձևն էլ օգտագործել է: «Այսպես յարձակեին որպէս զլեառն մի բարձր և կամ որպէս զաշտարակ մի հաստաբեստ հզօր և անշարժ» (*169*): «Իբրեւ զաչս ի վեր ամբառնայր արքայն Վարագդատ... տեսանէր սպարապետն Մանուէլն, ի մեծութենէ հասակին... ի հաստամեստ յանձնէն» (*204*): Այս ձևերի համար ենթադրվում է հաստ արմատի կրկնություն՝ որոշ հնչյունափոխությամբ: Արմատի կրկնությամբ կազմված ձևեր գրաբարում իրոք կան՝ բարձրաբերձ, ժանտաժուտ, խաժամուժ.... Ա.Մարգարյանը այս շարքում դնում է և հաստամեստ-ը (*Մարգարյան, 1987, 164-168*): Իհարկե, ձևականորեն կարելի է տեսնել հաստ արմատի հնչյունափոխված կրկնություն: Բայց այս բառերի համար թերևս ավելի հարմար է ստուգաբանական-ժագումնաբանական և ոչ թե հնչյունափոխական բացատրությունը:

Հաստամեստ բառի մեջ մեստ բաղադրիչը համարում

ենք ոչ թե հաստ- արմատի հնչյունափոխված տարբերակը, այլ իրանական mast-mest «հաստ» բառը (*հմմտ.* Մալաթիայի բարբառի մաստ «հաստ» (*Ղափանցյան, 1961, 16*): Ինչ վերաբերում է բեստ բաղադրիչին, ապա թեև բերել ենք հայերենին բնորոշ բ/մ լծորդության այլ օրինակներ, այս դեպքում սակայն այն կարող է լինել դարձյալ իրանական սկզբնաղբյուրից անցած ձև, քանի որ իրանական լեզուներում նույնպես գործել է b>m հնչյունափոխությունը *հմմտ.* հայ. մանուշակ, պրս. bānafša, իր. bušt-mušt «բռունցք», որից հայերեն բարբառային՝ բշտել, մուշտի տալ։ Մեր կարծիքով հայ. ըմբշամարտ/ըմբշտամարտ բառն էլ կազմված է ընդ+բուշտ «բռունցք» + մարտ բաղադրիչներից՝ *հմմտ.* բռնամարտ։ (Ընդհանրապես m>b անցումը նկատվում է տարբեր լեզուներում։ Օրինակ, իրանական-արաբական m-ն թուրքական որոշ լեզուներում ներկայանում է b-ով՝ musulman, կիրգիզ. basurman և այլն։)

գ) Այլ կարգի բաղաձայնական հերթագայություններով տարբերակներ

ժ/շ։ Տարբերակները ներկայացնում են հիմնականում որոշ իրանական փոխառություններ. աշխոյժ-աժխոյժ, դշխեն-դժխեն, գոյշ-գոյժ*, աշղահակ-աժղահակ, մժդեհ-մշդեհ...։ Ժ և շ-ն, լինելով նախաքմային առաջնալեզվային շփակներ (*ԺՅԼ, 1979, 101*), ունեն շատ ընդհանրություններ և դրանցով պայմանավորված՝ որոշ դիրքերում կատարվում է համապատասխան հերթագայություն։ Նույն երևույթը կա և իրանական լեզուներում։

Ս/շ։ Աստիճան-աշտիճան։ Երկու ձևերն էլ հաճախական են։ Ս>շ անցումը ճ-ի ազդեցությամբ է կատարվել։ Նույնը և աստուճ-աշտուճ տարբերակներում։ Աստուճ-ը թեև հետին վկայություն է, բայց համարվում է նախնական ձևը։ Ուրեմն, ճ-ի մոտ ս>շ հնչյունափոխությունը գործում էր վաղուց՝

* Գոյշ (գգոյշ-ի արմատը) և գոյժ «բոք, վատ լուր» տարբեր բառեր են։ Սակայն սրանք ծագում են gauša «լսել, ականջ» բառից՝ դրսևորելով իմաստային հետագա զարգացումներ։

նախագրային շրջանից: Թարսիս-թարշիշ զույգում առաջինը հունական ձևն է, երկրորդը՝ ասորական (*հմմտ. Եղիսէ-Եղիշայ*):

Ձ/ս: Տարբերակները առկայանում են առաջին հերթին գ նախդրի ս հնչմամբ և գրությամբ: Զգաստ-սզգաստ, գփա-ծանիմ-սփածանիմ, զգաստութիւն-սզգաստութիւն: «Անփառացի յաղագս գփածմանն» (*ՆՅԲ*): «Սփածոցին քուրծս» (*Եզեկ. Է.18*): «Այլ գլուխք՝ ամենայն արանց և կանանց շքեղք և սզաստք, սուրբք և պարկեշտք» (*Պրոկղ., ԴԱ, 1926*): «Աղջիկն... զգաստ է և իմաստուն» (*Տոր. Զ.12*): Ձ-ս անցումը գործել է դեռևս նախագրային շրջանում, քանի որ արդեն V դարից հաճախական են՝ սթափել, սքողել, սփածանելի, սփռել, ստածել... և այլն: Որոշ դեպքերում ըստ երևույթին գործել է այսպես կոչված Գրինբերգի օրենքը, ըստ որի, միևնույն վանկում խուլ և ձայնեղ հնչյունակապակցություն չի կարող լինել: Պետք է ենթադրել, որ զ>ս անցման ժամանակաշրջանում զ-նախդրի ըզ արտասանություն չկար, այլապես այն կխոչընդոտեր այդ անցմանը: Ս/զ-ն միայն նախդրային (բառասկզբային) կիրառությամբ չի ներկայանում: Առկա են այլ բնույթի զուգահեռներ: Մազդ-մաստ, ազդ-աստ, ասպարէս-ասպարէզ, Արտաշէս-Արտաշէզ: Արտաշէզ ձևը հիմք չունենք վրիպակ համարելու, քանի որ միայն Խորենացին այն կիրառել է հինգ անգամ: Ազդ/աստ-ի հիմնական իմաստն է «լուր», ազդ նշանակում է նաև «զորություն, ուժ», որից՝ ազդոյ, ազդու: Այս նշանակությամբ բառը գրվում է նաև աստ, որից՝ աստիագոյն, աստագոյն «սաստկագոյն», աստևոր «հաստատուն», աստի, աստին, աստոյ «պինդ, տոկուն» և այլն:

Ձ/ս հերթագայությունն է նաև սկիս<սկսել<սկիզբ ձևերում:

Ս/խ: Այս հերթագայությամբ օրինակները մեծաքանակ չեն, ընդգրկում են հայերենի տարբեր լեզվավիճակներ. խարիսխ-սարիսխ, լեսուլ-լեխել. (*Джаукян, 1967, 309*): Ձուտ V դարի կտրվածքով այս կարգի (նաև իմաստով նույնական) զուգաձևեր են բախտ-բաստ, դրախտ-դրաստ, տախտակ-տաստակ: Սրանք կարելի է դիտել նաև որպես ստ/խտ հերթա-

գայությանը տարբերակներ. բախտ, դրախտ, տախտակ
իրանական փոխառություններ են՝ գրաբարում հաճախական:
Բերենք օրինակներ ստ- հնչյունակապակցությամբ. «Աւաղ
իմում նախկին բաստի» (ՆՅԲ): «Նկարուք տաստակացն»
(ՆՅԲ): «Ապա ուրեմն ոչ է ի դրաստին փայտս այս, քանզի եթէ
յամենայնէ ուտել պատուիրէ ի դրաստոջացն և ի սմանէ ոչ
ուտել, յայտ է թէ ոչ ի դրաստի բնականաբար, այլ զաւրու-
թեամբ» (Փիլ. Ճառք, 140): Բաստ տարբերակով վկայված են
նաև բաստայեղց, բարեբաստ, չարաբաստ, քաջաբաստիկ,
փառաբաստութիւն:

Հ.Աճառյանը սրանք համարում է հին բարբառային ձևեր:
«Անշուշտ եղել են նաև ուրիշ գավառական բառեր,— գրում է
նա,— խտ-ստ ծայնափոխությամբ, բայց գրականության մեջ չեն
մտել: Արդի բարբառների մեջ այդպիսի ծայնափոխություն չի
նկատված» (տե՛ս Արմ. բախտ բառի տակ):

Եթե սրանք հայերենին բնորոշ ձևեր են, ապա տարած-
քային մեծ ընդգրկում չեն ունեցել (վկայված են Փիլոնի մոտ և
Պիտոյից գրքում, որոնց բառապաշարային ընդհանրությունը
ակնհայտ է):

Մյուս կողմից՝ բացառված չէ դրանց իրանական ակունքը,
մանավանդ որ իրանական լեզուներում արձանագրվում է x>s
հնչյունափոխություն. *հմմտ.* նպրս. pors «խնդրել» ներկայի
հիմքը, աֆղ. puxt (Основы, 1979, 85):

Որպես ս/խ-ի մեկ այլ տարբերակ կարելի է նշել հ.-ե.
ծագումով բնիկ հայ. դուստր-ը և իրանական դուխտ-ը
(վերջինս անկախաբար չի կիրառվում): Հայ-իրանական ս/խ
հերթագայության ավելի ակնհայտ օրինակ է նույն արմատով
դուստր և իր. duxtar «աղջիկ» ը:

Ո/ր: Լծորդությունը առկայանում է որոշ արմատներում.
այր-առն, տեր-տեառն, ջեր-ջեռնում, բարձ-բառնամ,
ամառն-ամարան, մատուռն-մատրան և այլն: Վերոհիշյալ-
ները ըստ էության հիմքակազմական տարբերակներ են:
Իրանական փոխառություններում նույն արմատի ո- և ր- ձևերը
համապատասխանաբար ենթադրում են փոխառության ավելի

նոր և հին ժամանակագրություն. ռամ(իկ)- (ե)րամ, ռահ(վիրայ)- (ե)րահ(իկ)...:

Այս լծորդությամբ որոշ ձևեր ներկայանում են որպես զուտ հնչյունական տարբերակներ: «Իբրեւ զփոշի կալոյ ամարայնոյ» (*Դան. Բ. 35*): «Ամառնայնոյ յեղանակին, ծմեռնայնոյն և զուգօրէին» (*ՆՅԲ*): «Վասն սորա և ոչ ուղիք զգետն ստուարացուցին արբմամբն ի ծմեռնային նուագութիւն իջուցանելով» (*Խոր. 125*): «Յաւուրս ծմերայնոյ ճանապարհորդեալ ի Յայս... պատահեւ բքոյ ի լերինս Կորդուաց» (*160*): «Եւ այն որ սքանչելի են՝ յաղագս ելէքտռոնացն ձգմանցն»: «Ձեւէկտրիոնէ ասեն կոչին ղեկտորոն» (*ՆՅԲ*): Ձգօնի մոտ վկայված՝ է ցիռ, վառապան (*90, 208*)՝ փոխանակ՝ ցիր, վարապան: Եթե ուով ձևերը վրիպակներ չեն, ապա կարելի է արձանագրել ևս երկու զուգածկություն:

Խ/հ: Հնչյունական փոփոխությունները հանդիպում են բոլոր դիրքերում: Ախաւեղագէս-Ահաւեղագէս, խախ(խոխ)-խահ(խոհ), խախամոք-խահամոք, խաղբ-հաղբ, խանութ-հանութ, խուղ «բնակարան»-հիւղ, խեռ «անսանձ»-հեռ, խաշել «հյուծվել»-հաշել, խարամանի-հարամանի, հրասախ-խրասախ, ճահիճ-ճախճախուտ, յախուռն-յահուր... «Տասն տասն խրասախ բերեր ըստ անձին զայնչափ այրն զանհեղեղ զանարի» (*Բուզ. 202*): «Եւ հեռացուցանէր ի քաղաքէ անտի երկոտասան պարսիկ հրասախաւ» (*Եղիշ. 57*): «Որպէս յոսկերչացն խանութս կարգեալ յօրինեսցէ» (*ՆՅԲ*): «Ձի չիք կալ ի վաճառի և ոչ զգինս ինչ տժգնել, ոչ ի կապելանոցս և ոչ ի հանութս» (*Ոսկ. Ես. 419*): «Ապրեսցի որպէս զայծեամն ի հաղբից» (*Առակ. 2. 5*): «Յայսմ խաղբից գերծանիցիս» (*ՆՅԲ*):

Տարբերակների մի մասում ստուգաբանորեն ճիշտը խով ձևերն են (խալբ, խանութ, խոհ...), մյուսում՝ հ-ով ձևերը (հարամանի, հրասախ, հեռ...), որոնք բնիկ բառերի ղեպքում հաստատվում են հ.-ե. նախածնով, իսկ փոխառությունների ղեպքում՝ փոխատու զուգահեռներով: Հ և խ-ն ունեն հնչույթային ընդհանրություններ և տարբերվում են միայն ըստ արտաբերության տեղի (*ԺՀԼ, 1979, 56*): Այս ընդհանրությունը

և որոշ դիրքային առանձնահատկություններ պայմանավորում են հ/խ հերթագայությունը:

Նախատակ, նախապետ ձևերը (նախատակ, նախապետ-ին զուգահեռ) եթե իրոք եղել են V դարում (բառարանները վկայում են), ապա այլ գործոնների հետ որոշ դեր է խաղացել նաև ժողովրդական ստուգաբանությունը:

Լ/դ: Հայագիտությունը ընդունում է, որ V դարում հայերենը ուներ երկու բնույթի է: Մեկը՝ առաջնալեզվային, ինչպես արդի հայերենի է-ն, մյուսը՝ կոշտ, ետնալեզվային, որը հաճախ տառադարձվում է դ-ով: Փորձեր են արվել առանձնացնելու այն դեպքերը, երբ գրվում է է կամ դ: Ըստ Աճառյանի՝ բառասկզբում մեծ մասամբ լինում է է, բառամիջում, երկու ձայնավորների միջև կարող էր գտնվել թե՛ է, թե՛ դ, բայց բաղաձայնից առաջ միշտ դ է («*Հայկականք*»): Է.Աղայանը գտնում է, որ դասական հայերենին հարազատ են եղել դ-ով ձևերը: Յ և Լ ձայնորդներից հետո եղել է միայն դ (1964, 178): Դ-ով է տառադարձվել օտարազգի Լ(Լ), եթե ձայնավորների միջև է եղել, կամ ի, ե ձայնավորների մոտ (*Գյուլբուղայան, 1971, 93*):

Աճառյանը համոզիչ փաստերով ցույց է տվել նաև է-ի դ ինչման ժամանակաշրջանը: Նա գտնում է, «որ դ ձայնը նախ երևան եկավ հյուսիսում, Աղվանքի սահմանակից հայոց մեջ՝ Թ դարի սկզբից, ապա իջավ հարավ. Ժ դարի կեսին դեռ տատանյալ դրության մեջ է, իսկ ԺԱ դարում արդեն ամբողջ երկրում տարածված» («*Հայկականք*», տե՛ս նաև *Արմ., IV, էջ 654*):

Անշուշտ որոշակի սկզբունքներ եղել են է-ի և դ-ի գրության հարցում: Բայց ուշ ձեռագրերի և հրատարակված գրականության տվյալներով որոշակի օրինաչափություններ դժվար է գտնել: Եթե հնագույն ձեռագիրը Փիլիպպոս, Իսրայել դ-ով է ներկայացնում, ապա տարբեր գործերում առկա է է- և դ-գրություն: Նշենք գրաբար մատենագրության մեջ հաճախական մի քանի զուգաձևեր: Այլ-այդ, բաբելացի-բաբելացի, լոյդ-դոյդ, լուղակ-դուղակ, նշոյլ-նշոյլ, պալատ-պաղատ, ջիլ-ջիդ, սալամանդր-սաղամանդր, Գալիլեա-Գաղիղեա, Իսրայել-Իսրայել, ալփաբետ-աղփաբետ, լակիշ-դակիշ...

Ուշագրավ է այլ բառի գրությունը: Թեկուզ Ս.Գյուլբու-

դադյանը դեմ է Բագրատունու այն կարծիքին, թե՛ այլ-ի շաղկապային կիրառության դեպքում գրվում է դ, իսկ դերանվանական կիրառության դեպքում լ (*Գյուլբուղայան, 1971, 94*), բայց փաստերը հաստատում են Բագրատունու կարծիքը: *Հմմտ...* «Այդ նա աստուածապէս տիրաբար թուի ինձ՝ թէ ոչ միայն վասն կատարածի, այդ վասն ամենայն ժամանակաց» (*Եւս. 4եւ. 7*): «Այդ տակաւին չեւ եւս է եկեալ Քրիստոս» (*Աթանաս, 226*): «Եւ ոչ է այլ աստուած բաց ի քնն» (*Աթ. 221*): «Ոչ այլ ումեք, բայց Քրիստոս» (*273*): Այլ-այդ շատ օրինակներ կան Ոսկեբերանի՝ Մատթէի մեկնության մեջ, որտեղ դարծյալ շաղկապի դեպքում այդ է, դերանվան դեպքում՝ այլ: «Առեալ այլքն ի կարգաց եւ ի հաճոյական վարուց» (*5*): «Եւ իշխանութիւնք եւ պատիւք և այլ ինչ այսպիսի» (*11*): «Զի ոչ եթէ ներքուստ ի վեր նոյնսն, այլոցն սկսանի, այդ անդուստ ի վերուստ» (*17*): «Իսկ Ղուկաս ոչ այսպէս, այդ նախ զայլ բազում իրս յիշէ և ապա յետո գայ հասանէ ազգահամարն. եւ ոչ այսչափ այդ և այլ եւս ազգ» (*17*):

Լ-ի դ գրության և հետագայում արտասանության, ապա և դ-խ հնչյունափոխության պատճառով որոշակի դժվարություններ են առաջանում մի շարք բառերի ստուգաբանության կամ սկզբնաձևի վերականգնման գործում (տե՛ս դ/խ տարբերակները):

դ) Դրափոխված / ոչ դրափոխված բաղաձայններով տարբերակներ

Հնչյունների դրափոխության երևույթը հայերենում գործել է շատ վաղուց: Հին հայերենում կայուն գրություն ստացած բազմաթիվ բառեր հ.-ե. կամ փոխատու ձևի համեմատությամբ դրափոխված են: Եղբայր, դարբին, երկու, լիրբ, նուրբ, աշխարհ...: Դրափոխությունը կապվում է հիմնականում ր-հնչյունի հետ (*հմմտ. նաև կապերտ-կարպետ*): V դարի տվյալներով կան մի քանի զուգաձևեր, դսրով-դրսով-դրժել-դժրել, կամուրջ-կարմուրջ: «Երկու ազգ դրժողաց են. մին գազանաց և միւսն մարդկան» (*ՆՅԲ*): «Զանգործութիւն զչար

դժբողն» (ՆՅԲ): Փոխառյալ ձևին հարազատ է դրժել-ը. *հմմտ.* դրուժ: «Աստ առ հայել ընդ կին մարդ վասն ցանկութեան դրսովեալ է» (*Կիրոդ. 119, նաև 224, 244, 187, 291...*), «... զգուցեայց ապա և ես ի ժողովրդենէ իմնէ դսրովեալ» (*Յոր. Լա. 30*): Զդրափոխվածը դսրով-ն է (իւր. *srav/srov*): Դրսով- ձևի ՆՅԲ-ի վկայությունները ուշ շրջանից են: Թեև բառարանները կարմուռն ձև չեն արձանագրում, բայց մեզ հանդիպել է և այդ ձևը՝ եթե վրիպակ չէ (*Մամբրե. 45*):

*
* *

Որպես հնչյունական փոփոխություններով բառային տարբերակների լրացում-հավելված ներկայացնում ենք գրաբարում տարածված հատուկ անունների (անձնանունների և տեղանունների) զուգաձևերը: Դրանք շատ են հատկապես Աստվածաշնչում, բայց հանդիպում են նաև այլ գործերում:

Աստվածաշնչում. Զաքարիա-Զաքարիոս, Կայեն-Կային, Կարմել-Կարմելոս, Կիպրոս-Կիւպրոս, Զաբել-Աբել, Մակաբե-Մակաբեոս, Մանասէ-Մանաս, Մասեկա-Մասեկկա, Մեսուղոմ-Մեսուղովմ, Միքքա-Միքքաս, Մովրադ-Մովրեդ, Մուրդբե-Մուրթբե-Մուրթբեոս, Յաբոկ-Յաբովկ, Յեսու-Յեսուս- Յերոբոադ-Յերոբովադ, Յոզաբդոս-Յոզապտոս, Յոհան-Յոհաննես, Յուդա-Յուդաս, Նաասոն-Նաասովմ, Նեեման-Նէեման, Ոգի-Ոգիա-Ոգիաս, Ովբեդ-Ովբեդ-Ովբէթ, Ուրիա-Ուրիազ, Սողոմոն-Սողոմովմ-Սաղամոն, Սամաա-Սամաաս-Սամայիաս, Սառա-Սարա-Սարրա, Սարայիա-Սարայիաս, Սեհոն-Սեհովմ, Սիմոն-Սիմեոն-Սիմեովմ-Սիմովմ, Սիոն-Սիովմ, Սոկկովթ-Սոքքովթ, Սողոս-Սաւղոս, Սոմորոն-Սոմորովմ, Տուբի-Տուբիա, Փաադոմ-վաբ-Փաաթովաբ, Փակէէ-Փակէիա, Փասոր-Փասուր, Փենեհէս-Փենէես, Քաղեբ-Քաղէբ, Քեղկիա-Քեղկիաս, Քետիմ-Քետտիմ, Օնան-Ովման:

Այլ գործերում. Ահարոն-Ահարովմ, Գարեգին-Գարեգին, Գնել-Գնէլ, Մեհենդակ-Մեհընդակ-Մեհունդակ, Ներսէհ-Ներսէի, Տերէնտ-Տերենտ-Տերէնդ, Արտաշէս-Արտաշէզ, Յոհան-Յովհան,

Միհրդատ-Միհրդաթ, Շամբատ-Շամբաթ, Եղիսե-Եղիշե-Եղիշայ, Ատրպատական-Ատրպայական-Ատրպատճացն, Սծբին-Նծբին՝, Տոսպ-Տոգբ, Թաւրեժ-Թաւրեշ-Թաւրեջ, Կասբից-Կագբից, Տիգրոն-Տիսպոն-Տիսփոն...

Այս կարգի զուգաձևերում առկա են վերը նշված մի շարք հնչյունափոխական օրինաչափություններ, որոշ դեպքերում էլ՝ փոխատու լեզվի ձևը: Օրինակ՝ Եղիշայ՝ ասորական ձևն է, Եղիսե-ն՝ հունական, իսկ հայերենում ավելի հաճախական Եղիշե կարելի է համարել հունա-հայկական ձև:

II Բառակազմական տարբերակներ

Այս դասակարգմամբ ներկայացվող զուգաձևերի տարբերությունները ըստ էության դարձյալ հնչյունական են, բայց քանի որ դրանք ի հայտ են գալիս բառակազմության գործընթացում, նպատակահարմար գտանք ներկայացնելու առանձին՝ որոշ ենթախմբերով:

1. Ածանցային տարբերակներ: Բառաշարքերը առկայանում են մանատիպ (նույնիմաստ՝ հնչյունական որևէ տարբերությամբ) ածանցներով: Չենք անդրադառնում հոմանիշ ածանցներով (բար-պէս-օրէն, դժ-ան-տ) կազմված ձևերին, սրանք համաբեւոյժ այլ կարգի երևոյթ: Սկսենք նախածանցներից.

Համ-/հոմ-: Առավել հաճախականը և արդյունավետը համ-ն է, որով ՆՅԲ-ն V դարից վկայում է 110 բառ: Հոմ-ով ձևերը հասնում են մեկ տասնյակի: Հանդիպում են հետևյալ զուգաձևերը. համահայր-հոմահայր, համանուն-հոմանուն, համանունութիւն-հոմանունութիւն, համասեռ-հոմասեռ, համասեր-հոմասեր, համացեղ-հոմացեղ, համերամ-հոմերամ: Բերենք երկու օրինակ. «Համածին անուշութիւնս մատուցանեն կերողացն զխորտկացն որոշութիւնս» (*Փրպ. 10*): «Եթէ հոմածին իւր խոցիցէ...» (*ՆՅԲ*): «Ձիարդ համահարք և

* Նծբին ձևը կիրառել է Բուզանդը (116): Այն կարող է լինել բ-ի մոտ մ>ն հնչյունափոխության արդյունք, կամ ասորական հարազատ ձև:

միոյ մօր որդիք երկպառակք լինիցին և ոչ միաբանք» (Եղիշ. 170): «Երաշխիս գոլ տիրագոյն, մախ իսկ զհօրն և երկրորդ զհաւուն և երրորդ զհոմահարց եղբարցն» (ԵՅԲ): Հոմ-ածանցով որոշ բառեր՝ հոմիշխան, հոմանախանձորդ, համ-ով զուգահեռը չունեն: Համ-ի համար ենթադրում է հ.-ե. ծագում՝ *sm-ից, կամ իրանական փոխառություն: Հոմ-ը հունաբան դպրոցի կերտած ածանցներից է՝ հուն. ὁμο-ի պատճենումը:

Ենթ-/ընթ-: ենթադրեն-ընթադրեն, ենթադրութիւն-ընթադրութիւն, ենթակայ-ընթակայ, ենթակայութիւն-ընթակայութիւն: Ենթ «տակը» համապատասխանում է հուն. υπο-ին, որ ըստ Աճառյանի «գտնվում է մի խումբ հետոսկեդարյան բառերի սկիզբ, որոնք թարգմանաբար կազմվում են հունարենից: Ենթ-ը հայերեն ընդ-ի նմանությամբ ստեղծված ածանց է՝ հունարենի ազդեցությամբ, ընթ-ը ենթ-ի լծորդն է՝ դարձյալ հունաբանության նորանվածումներից՝ նվազ հաճախական: Աճառյանը միայն ենթադրել-ն է համարում դասական շրջանից վկայված (տե՛ս նաև Ա.Մուրադյան, 1964, 75-86): Ենթ-ով ձևերի մոտ նկատվում են բազմիմաստություն, օրինակ, ենթադրություն «իրեն ենթարկել», նաև՝ «առաջարկություն», ենթակայ «ստորակա, առարկա», նաև՝ «լեզվաբանական տերմին», ենթադրել «ներքև գցել, նվաճել», նաև՝ «հաստատել, կարգել»: Ընթ-ով ձևերի բազմիմաստություն չի արձանագրվում: Թեպետ ընթ-ը դիտվում է որպես ենթ- նախածանցի և ընդ- նախդրի միջին ձև և ընդ-ի բարբառային տարբերակը (Մուրադյան, 1964, 70), սակայն առարկելի է ընթ-ը բարբառային ձև համարելը. այն թերևս արհեստական, բայց գրական ձև է:

Մի շարք զուգաձևեր ներկայանում են -ան- միջնածանցի առկայությամբ կամ բացակայությամբ. ամամ-ամանամ, ամբարշտեն-ամբարշտանամ, անիծեն-անիծանեն, ան-հաւատամ-անհաւատանամ, արտասեն-արտասանեն, զատեն-զատանեն, շատին-շատանամ, ցանկամ-ցանկանամ, ծուլամ-ծուլանամ, ցրտամ-ցրտանամ:

«Եւ օդ հիւսիսոյ թէ շնչիցէ ցրտագոյն, սարսռուլ, կարկտչել... և ցրտալ» (Փիլ. Բանք. 62): «Ձցրտանալն ի հեշտ ցանկութեանց աստի» (ԵՅԲ): «Որպէս հայր ոք յորժամ զորդի

իւր խրատիցէ... չծուլալ յուսմանէն» (Եզն. 42), «Ծուլանան առ բարի գործսն» (ԼՅԲ):

Ան-ով որոշ ձևեր V դարի վկայություններ են, իսկ առանց ան-ի հետիինգերորդդարյան. անծկանամ-անծկամ, բեկանեմ-բեկեմ, զղջանամ-զղջամ և այլն: -ան- միջնածանցի բնույթի վերաբերյալ հայ քերականագիտության մեջ տարբեր կարծիքներ են արտահայտվել: Գ.Ավետիքյանն օրինակ, ատ, ոտ, տ ածանցները համարում է սաստկական, իսկ «անուլզցնող մասնիկ է ան-ը, որ նշանակութիւնը չի փոխւել, զոր բեկիմ-բեկանեմ, անիծեմ-անիծանեմ, օծեմ-օծանեմ և այլն» (Ավետիքյան, 1815, 283): Սույն տեղում Ավետիքյանը բերում է և Գ.Մագիստրոսի կարծիքը, որը այդ ձևերը դիտում էր որպես ռամկական և ազնվական ոճերի արտահայտություն:

Ավետիքյանի «անուլզցնող մասնիկ» արտահայտությունը ըստ էության գիտական բացատրություն չէ, իսկ Մագիստրոսը թերևս նկատի ուներ այն հանգամանքը, որ ան-ով մի շարք ձևեր ժամանակագրորեն ավելի հին են, և դրանք համարել է «ազնվական ոճ»: Կա ավելի գիտական բացատրություն, ըստ որի ան-ով բայական ձևերը ավելի տևական գործողություն են արտահայտել: Այս հարցին անդրադարձել են նաև բայի հարցերով զբաղվող սովետահայ մի շարք լեզվաբաններ (Ղափանցյան, 1939, Բարսեղյան, 1953, Աշ.Աբրահամյան, 1962): Ենթադրվում է, որ ան/են-ը տևական կերպի ձևաբանական արտահայտիչ էր: Սրա օգտին է խոսում -ան-ի միայն մերկայի հիմքից կազմված ժամանակաձևերում (տեսնեմ, տեսանեի, տեսանիցեմ) հանդես գալու հանգամանքը: Կերպային այս հակադրությունը գուցե հստակ է եղել նախագրային շրջանում, իսկ V դարի վիճակով այն հստակ չէ, և հաճախ հենց նույն հեղինակը կիրառում է երկու ձևերն էլ՝ առանց կերպային որևէ զանազանության. «Առեալ զանձնիշխանութիւնն ուն կամի ծառայանայ, որ մեծ շնորհն պարգեւեալ նմա յԱստուծոյ. քանզի այլ ամենայն ի հարկէ ծառայէ աստուածական հրամանին» (Եզն. 40): «Անձն ամպարշտի ցանկանայ չարեաց և ոչ գտցէ» (Առակ. ԻԱ. 10), «Ամպարիշտ ցանկայ զամենայն աւուրս զցանկութիւն» (Ն.տ.):

Ընդհանրապես տևականություն-ոչ տևականություն, կա-

տարյալութիւն-անկատարութիւն կերպային դրսևորումները V դարի գրաբարում օրինաչափ չէին: Ուսումնասիրողները անկատարութիւն-կատարելիութիւն հակադրութիւնը փորձում են տեսնել առաջին ապառնի/երկրորդ ապառնի ձևերի մեջ: Անդրադառնալով ներքոհիշյալ օրինակին՝ «Յորժամ քաղաղք և գիւղք աւերեսցին և անդ դեւք բնակիցեն և կեղծս ի կեղծս յայտնիցին» (*Եզն. 98*), Աճառյանը գրում է. «Ավերումը միայն մի անգամ եղավ և վերջացավ, իսկ դևերի բնակութիւնը անորոշ ժամանակով է» (*ԼԶՅԼ, 4, 61*): Բայց սա գրաբարի համար բացարձակ օրինաչափութիւն չէ: Հանդիպում են և հակառակ բնույթի օրինակներ. «Եւ որ լսեցին կեցցեն»: «Եթե ոք ուտիցէ ի հացէ յայսմանէ կեցցէ ի յաւիտեան»: Այս օրինակում էլ առաջին ապառնիով դրված են այն բայերը, որոնց նշած գործողութիւնը մեկ անգամ կկատարվի և կվերջանա, երկարատև, չավարտված գործողութիւնն, ընդհակառակը, արտահայտված է երկրորդ ապառնիով:

Որոշ դեպքերում զուտ լծորդներ են ան-ը և են-ը: «Նա չյղացելոյն և չծնելոյն անուն դներ» (*Եզն. 123*): «Նոյնպէս և ոչ բարւոյ ընդ չարին մարթեր ի միում արգանդի յղենալ» (*Եզն. 133*):

Կան տարբերակներ, որոնք առկայանում են վերջածանցման բնութով:

Երէն/արէն: Դրվելով նախատիպ բառի վրա՝ մատնանշում են որևէ լեզու. յունարէն-յուներէն, հրէերէն-հրեարէն, հռովմերէն-հռովմայերէն...: «Նոքա... մերձաւորեալք ի յունարէն հեգենայինսն» (*Փրպ. 15*): «Ոչ ինչ էին այնպէս տեղեակ գիտնապէս հրահանգի յունարէն ուսմանն» (*Փրպ. 16*): «Որ է անդամ մարմին. անբեղուն ըստ բուսոյ և անհամ ըստ ճաշակոյ, յուներէն» (*Փրպ. 181*):

Պահ/պան: Պռնապահ-դռնապան, դիւանապահ-դիւանապան, կապանապահ-կապանապան: Միշտ չէ, որ առկա է համապատասխան զուգահեռը: Կա թիկնապահ, բայց թիկնապան չկա, ունենք բարապան, սակայն բարապահ ձև վկայված չէ: Պանդոկապան-ի պանդոկապահ զուգահեռը նույնպէս վկայված չէ, դրախտապահ չկա, բայց կա դրախտապան: Պահ/պան-ով զուգածները V դարի տվյալներով մեծ

թիվ չեն կազմում: Թեև արդի հայերենում դրանք քիչ գործուն ածանցներ են համարվում (*Գալստյան, 1978, 95*), բայց դրանցով կազմված բառերը ավելի շատ են, քան գրաբարում:

Ենի/ի: Չանդրադառնալով այս ածանցների բազմիմաստությանը, խոսենք միայն իմաստային մի խմբում՝ բուսանունների կազմման ժամանակ այդ ածանցների դրսևորման մասին:

V դարի տվյալներով ունենք ոչ մեծաթիվ զուգածներ. ուռի-ուռենի, խնձորի-խնձորենի: Որոշ անվանումներ կազմվում են ի-ով, իսկ մյուսները՝ ենի-ով: Տանձի, ծիրանի, ընկույզի, կաղնի, բայց՝ նռենի, թզենի, թթենի, մորենի, խնկենի, ձիթենի... և այլն: V դարից ունենք դեղձի, իսկ դեղձենի-ն ուշ շրջանից է, մյուս կողմից հիմնգերորդ դարից է սարդենի-ն, իսկ սարդի-ն՝ ուշ: Մայրի-ն մայրենի զուգահեռը չունի՝ այլ մայր: *Հմմտ.* «Ապա երթեալ հասանէին ի գաւառն Բասենոյ ի մէջ մայրեացն» (*Ազար. 104*): «Ձմայրս եւ զեղեւնափայտս հարցուք» (*Եսայ. Թ.10*): Կա մուրտ-մրտենի, բայց մրտի չկա:

Ի/ենի զուգահեռներից հնագույնը ի-ն է. «Ի-ն վաղնջահայերենի գործուն ածանցներից է բարդի, կաղնի, հացի... համեմատաբար ուշ է տարածում ստանում -ենի ածանցը, որ ոմանք ուրարտական ազդեցությամբ են բացատրում» (*Ջահուկյան, 1987, 231*): Ի-ի հնությունը հաստատվում է նաև այլ փաստերով. սոճ, նոճ, մայր անածանց ձևերը ունեն միայն սոճի, նոճի, մայրի զուգահեռները: Արդի բարբառներում փաստորեն միայն -ի է: Այդպես է օրինակ Ղարաբաղի բարբառում, որտեղ նկատվում է մեկ առանձնահատկություն ևս: Պտղատու ծառերի անվանումները ի-ով են, այդ մրգի տարբեր տեսակներ անվանող ծառերը՝ ենի-ով: Օրինակ՝ տանձի, բայց այս նույն մրգի տարբեր ծառատեսակներ՝ ծըմըռնենի, կուլէնի, կըրմըրենի..., իսկ երբ շեշտվում է մրգի անվանումը, դարձյալ ի-ով է կազմվում. մխուրտանձի, քըլըխնձօրի...: V դարից ի-ով և ենի-ով ձևերն էլ վկայված են, բայց ավելի տարածվածը առաջինն է: Թթենի, թզենի, նռենի, ուռենի ձևերից կարելի է եզրակացնել, որ նախապես ենի-ով կազմվել են միավանկ բառերը:

Արդի հայերենի ի-ի համար բնորոշ է համարվում ավելի ժողովրդախոսակցական երանգը (*Գալստյան, 1978, 131*): Ենի/ի գուգաձևությունները դրսևորվում են նաև վայրի-վայրենի բառերի մեջ: «Փոխեալ զնա ընդ ցիռս վայրի» (*Ազաթ. 99*): «Հաւքն վայրի ծանեան զժամանակ գալստեանն իւրեանց» (*Ազաթ. 339*): «Ելեալ ըստ մարդկային բնութիւնս արտաքս՝ ի նմանութիւն վայրենի խոգաց» (*Ազաթ. 118*): «Ընդ անդամս ոսկերացն բուսեալ էր խոգանաստել իբրել զմեծամեծ վարազաց վայրենեաց» (*Ազաթ. 379*):

Ոց/(ա)նոց: Այս ածանցները համանիշ են ստան, արան-ին և նախատիպ բառի հետ դրվելով ցույց են տալիս տեղ, մի բանից շատ լինելը: Դրանցով կազմված գուգաձևություններից նշենք. դպրոց-դպրանոց, հանգստոց-հանգստանոց, համբարոց-համբարանոց, մոխրոց-մոխրանոց, պոռնկոց-պոռնկանոց, վարժոց-վարժանոց: «Կարգեն դպրոցս, մին զբունն իւրեանց ասորին և միւս եւս գլոյն» (*խոր. 16*): «Իբրել ի դպրանոցս տան» (*ՆՅԲ*): «Դէպ եղել նոցա գալ մտանել ի փողոցամէջս համբարոցացն» (*Ազաթ. 27*): «Որոց ոչ գոն շտեմարանք և ոչ համբարանոցք» (*Ղուկ. ԺԲ, 24*): «Ի կրել արտաքս զաւելորդ թրքածս մոխրոցացն՝ ծանծրացուցանէ զգազախդէմ զկրողսն» (*Փրպ. 56*): «Մտեալ ի տուն մոխրանոցին զկրակն ասաց գոլ աստուած» (*Փրպ. 39*):

Սկզբնապես այս ածանցները ունեցել են տարբերակված կիրառություն: Ըստ երևույթին -անոց-ը դրվել է նախատիպ բառը անձ լինելու դեպքում: Այդ են հաստատում հետևյալ բառերը, որոնց -ոց-ով գուգահեռները վկայված չեն՝ դատաւորանոց, բժշկանոց, բոգանոց, եղբայրանոց, եպիսկոպոսանոց, երիտասարդանոց, ժողովրդանոց, կանանոց, մարգարէանոց, որբանոց, պանդխտանոց, սարկաւազանոց, վարդապետանոց: Անոց-ը հաճախական է նաև այն դեպքում, երբ այդ ածանցով կազմությունը ցույց է տալիս տեղ, որ մարդկանց համար է. աղօթանոց, դիտանոց. խորհրդանոց, կապելանոց, կռուանոց, մենանոց/միայնանոց, միանձնանոց, մսավաճառանոց, վկայանոց: Երևի այս սկզբունքին են ենթարկվել նաև այն կազմությունները, որոնց

նախատիպը որևէ կենդանու (թռչունի) անուն է. լորանոց, եզնանոց...: Մյուս դեպքում գործում է -ոց ածանցը. ծաղկոց (ծաղկանոց-ը ուշ շրջանից է), դարմանոց... և այլն: Կան նաև շեղումներ, որ թերևս հետագա գրչագրություն պետք է համարել: Վկայված է մրջիւնոց (մրջնանոց չկա), կոյանոց, խնկանոց...:

-Ոց ածանցը նախատիպ բառի հետ դրվելով ցույց է տալիս նաև իր, առարկա: Թիկնոց, պրկոց, ջնջոց: Վկայված է և թիկնանոց ձևը, սպասելի *նուիրոց ձևի փոխարեն առկա է նուիրանոց:

Ս.Գալստյանը արդի հայերենի -ոց-ով բաղադրություններից, որ ունեն նախատիպ բառի ցույց տված տեղի համար նախատեսված հագուստ, զարդ և այլն, նշում է. անթոց, բազկոց, ակնոց, ճակտոց, բերնոց, ձեռնոց, թիկնոց... (Գալստյան, 1978, 169): Գրաբարում ակնոց, ճակտոց, ձեռնոց չկա (կամ չի վկայված): Բացառված չէ, որ այդ առարկաները ընդհանրապես չկային: V դարից չկա և բազկոց, կա բազկանոց՝ ուշ շրջանից, նաև բազկան: Թիկնոց վկայված չէ, այլ՝ թիկնանոց: Բերնոց «սանձ»-ի փոխարեն կա բերանակապ: Մի խոսքով, իմաստային այս խմբի համար գրաբարում -ոց/-անոց ածանցով կազմությունները հաճախական չեն:

Անք/ինք: Ածանցների հանդիպում ենք նախատանք-նախատինք զուգաձևերում: «Ոչ ի նախատանս առաւել՝ քան ի գութ նախատանաց» (ՆՅԲ): «Բարձին յանձանց զնախատինս այրութեանն» (Եղիշ. 202):

2. Հիմքակազմական տարբերակներ. Սրանք ըստ էության հնչյունական տարբերություններ ներկայացնող զուգահեռներ են, որ առկայանում են բառակազմության ժամանակ, ըստ հիմքային առանձնահատկությունների:

Ներկայի հիմք/ենթակայական դերբայով հիմք (գրո/ող): Անկարողին-անկարողութիւն, անհիշողութիւն-անհիշողութիւն, բամբասութիւն-բամբասողութիւն, գիտութիւն-գիտողութիւն, դժուրութիւն-դժուրողութիւն, լսութիւն-լսողութիւն, ճգնութիւն-ճգնողութիւն, մարդահաճութիւն-մարդահաճողութիւն:

«Ոչ բնութեան անկարողութիւն ղնեմք իբրեւ յանբան կենդանիսն» (ՆՅԲ): «Եթե անկարութեան էր աղօթքն, ոչ անգոր միայն էր, այլև անգետ» (Ոսկ. յի. ա. 18):

Ներկայի հիմք/անորոշ դերբայով հիմք (գրո/ել): Անսիրութիւն-անսիրելութիւն, ընկղմութիւն-ընկղմելութիւն, օծութիւն-օծանելութիւն, օտարսիրութիւն-օտարսիրելութիւն:

Անորոշ դերբայով հիմք/ենթակայական դերբայով հիմք (ել/ող): Լսելութիւն-լսողութիւն, գիտելութիւն-գիտողութիւն, անծնելութիւն-անծնողութիւն, ծնելութիւն-ծնողութիւն: Անորոշ և ենթակայական դերբայների հիմքով կազմութիւնները հաճախական չեն, սրանք թերևս հունաբանության դրսևորումներ են. Դ.Ամհալթը ունի որսողական, լսողական, որոնք բառարաններում վկայված չեն:

Ներկայի հիմք/անցյալ կատարյալի հիմք (եց/աց): Ազդական-ազդեցական, ազդութիւն-ազդեցութիւն, աճական-աճեցական, աճում-աճեցում, յագութիւն-յագեցութիւն:

Բայարմատ-կատարյալի հիմք (գրո/աց): Բարկութիւն-բարկացութիւն, զայրութիւն-զայրացութիւն, զայրումն-զայրացումն, սքանչումն-սքանչացումն (Յովսէփյան, 1987, 88): Լ.Յովսէփյանը (1987, 88-89) բերում է այլ դասակարգումներ՝ համապատասխան օրինակներով. բայարմատ-պատճառական հիմք (բարձիչ-բարձրացուցիչ), ներկայի երրորդ դեմք-կատարյալի հիմք (գոյութիւն-գոյացութիւն):

Հետաքրքիր զուգաձևություններ են դրսևորում տամ, լի, կամ բառերով. աղերսալի-աղերսալից, ամօթալի-ամօթալից, խնկալի-խնկալից, վշտալի-վշտալից, արտօսրալի-արտօսրալից, օրինատու-օրինատուր, կայ-կաց, առաջակայ-առաջակաց, անընդդիմակայ-անընդդիմակաց, ընթերակայ-ընթերակաց:

Բերենք մի քանի օրինակ. «Անդ աղօթք աղերսալիք...» (Կոր. 32): «Աղերսալից ... ասէր ցյանցուցեալն» (Եզն. 73): «Ընդ փառաց զգեցեալ են ամօթալի ձաղութիւնս» (ՆՅԲ): «Ամօթալից առնեն զերեսս իւրեանց» (Ագաթ. 149): «Հաճոյ թուէր բանն

առաջի թագաւորին և ամենայն մեծամեծացն, մանաւանդ որ էին առաջակայք օրինացն» (Եղիշ. 19): «...ի վայրենի ջուիրս մի իմն ի թագաւորականացն առաջակաց եղեալ» (ՆՅԲ):

ՆՅԲ-ն օրինատուր բառ չի նշում, բայց այդպիսի բառ կա V դարից. «Սրբութիւն նոցա պղծութիւն է և պահք նոցա բամբասանք և ընթերցուածքն անէծք, զի կերակրիչն և զօրինատուրն բամբասեն (Եւս. Եմես. Բ. ծառ):

Կան նաև հատված և լրիվ հիմքերով զուգաձևություններ, որոնք մոտենում են հնչյունական տարբերակների տիպին (Յովսեփյան, 1987, 89): Մեքենաւորութիւն-մեքեանայաւորութիւն, նշանական-նշանակական, շարունական-շարունակական, դելփական-դելփիական:

Հիմքակազմական տարբերակների մեջ նշենք երկու, երեք, չորք թվականների տարբեր հիմքերով կազմված ձևերը: Երկու թվականի հիմքը վկայված է երկ, երկու, երկի ձևերով. երկգլուխ, երկուկանգնեան, երկեամ (երկի-ամ), երեք-ը՝ եռ, երեք, եր, երի. եռամասն, երեքսայրի, երամսեայ, երրեակ (երիր-եակ), չորս-ը՝ չոր, չորք, չորեք և տարահիմք՝ քառ-, չորրորդ, չորեքկերպ, քառորդ (Յովսեփյան, 1987, 88): Այս հիմքով կազմված բառային տարբերակները շատ չեն. երկօրեայ-երկուօրեայ, երկուորակեան-երկուորակեան, եռօրեայ-երեքօրեայ, եռանկիւնի-երեքանկիւն, չորեքկարգեան-քառակարգեան, չորեքկուսի-քառակուսի և այլն:

Եռ, քառ հիմքերով տարբերակները երեք, եր, չոր(ք)-ի համեմատությամբ թերևս ավելի նոր կազմություններ են, բնորոշ գիտական ոճին: Սրանք եթե հունաբանության անմիջական դրսևորում չեն, ապա ակնհայտորեն հաճախական են հունարենից թարգմանված գրականության մեջ, ուրեմն գրքային ճանապարհով անցած կազմություններ են, տերմինային արժեք ունեցող բառեր:

Գրաբարում բառակազմական հիմքեր են երկար-ը և երկայն-ը՝ հ.-ե. նույն արմատից՝ ար և այն ածանցով: Գրաբարի բառարանների ավանդած օրինակները վկայում են, որ երկայն-ը ավելի հաճախական է, և այն բառակազմական ավելի արդյունավետ հիմք է, քան երկար-ը: Պատկերը այլ է արդի

գրական լեզվում, իսկ բարբառներին թերևս հարազատ է գրաբարյան վիճակը. երկայն-ը բարբառներում ընդգրկում է տարբեր տարածքներ:

Աստվածաշնչում երկայն կիրառված է 4 անգամ, որից մեկը ժամանակային իմաստով: Այդ հիմքով՝ երկայնագոյն, երկայնակեաց, երկայնամիտ, երկայնամտել, երկայնատարած, երկայնել, երկայնամտութիւն, երկայնութիւն, երկայնօրեայ: Երկար հանդիպում է 2 անգամ՝ ժամանակային իմաստով:

Կորյունը ունի երկայն (2 անգամ) և՛ տարածական, և՛ ժամանակային իմաստով: «Ձամենայն ընտրութիւնս նշանագրացն... զկարճն և զերկայնն... յաւրինեալ և յանկուցեալ» (48): «Երանելոյն Սահակայ լցեալ աւուրք երկայն ժամանակաւք» (86): Կորյունի մոտ երկայն հիմքով այլ կազմութիւններ չկան:

Եզնիկը՝ երկայն չունի, իսկ այդ հիմքով կան երկայնամիտ, երկայնել, երկայնմտութիւն: Երկար կիրառել է մեկ անգամ՝ ժամանակային իմաստով. «Այլքն ասեմ, վասն զի ոչ տեւէր մարմինն ընդ շնչոյն յերկար ժամանակս կեալ» (72):

Բուզանդը՝ 5 անգամ երկայն՝ տարածական իմաստով: Այդ հիմքով երկայնամիտ, երկայնամտութիւն, 3 անգամ՝ երկար՝ տարածական և ժամանակային իմաստով. «Ընդէր այնչափ երկար թողացուցին նմա խօսել» (149): «...ընդ երկար ճանապարհ» (74) կա նաև՝ երկարեմ:

Ագաթանգեղոսը՝ երկայն (5 անգամ)՝ ժամանակային և տարածական իմաստով: Այդ հիմքով երկայնակեաց, երկայնամիտ, երկայնամտութիւն, երկայնութիւն, երկայնուղի: Երկար չկա, բայց կա երկարակեաց:

Եղիշեն ունի երկայն (2 անգամ)՝ տարածական և ժամանակային իմաստով. «Աղօթս առնել ի վերայ կենաց թագաւորի և անձանձորոյ խնդրել յԱստուծոյ վասն երկայն ժամանակաց դորա» (29): «Եւ արկին պարանս երկայնս յոտս նոցա» (160): Երկայն հիմքով՝ երկայնաբան, երկայնակեցութիւն, երկայնամիտ, երկայնեմ, երկայնութիւն: Երկար – Եղիշեն չունի:

Փարպեցին ունի երկայն (2 անգամ)՝ ժամանակային

իմաստով, այդ հիմքով՝ երկայնագոյն, երկայնամիտ, երկայնամտեալ, երկայնաչափութիւն, երկայնեմ: Սեկ անգամ կիրառել է երկար՝ ժամանակային իմաստով, այդ հիմքով՝ երկարագոյն, երկարեալ, երկարումն:

Խորենացին մեկ անգամ երկայն. «Ուր երկայն ճանապարհաց յոյսն հեշտացուցիչ» (367): Այդ հիմքով՝ երկայնակեաց, երկայնաձեւ, երկայնաձիգ, երկայնամիտ, երկայնանիստ, երկայնեմ, երկայնամտութիւն, երկայնութիւն:

Երկար – Խորենացին կիրառել է 6 անգամ՝ ժամանակային և տարածական իմաստով: Ունի երկարել, երկարողի, երկարութիւն (բոլորն էլ ժամանակային իմաստով):

Այս վիճակագրությունը առաջին հերթին հաստատում է, որ V դարի մատենագրության մեջ առավել հաճախական է և արդյունավետ երկայն հիմքը: Սա բնորոշ է և հետագա գրաբարին, որը դարձյալ հաստատվում է վիճակագրությամբ: Այսպես Յ.Դրասխանակերտցին երեք անգամ ունի երկայն՝ ժամանակային և տարածական իմաստով: Այդ հիմքով՝ երկայնագոգ, երկայնամտութիւն, երկայնութիւն: Երկար բառը և այս հիմքով կազմություններ չկան: Ասողիկը երկայն և երկար առանձին բառ չունի, բայց՝ երկայնաբազուկ, երկայնագոյն, երկայնակեաց, երկայնակեցութիւն, երկայնաձեռն, երկայնութիւն: Կա և երկարանալ՝ ժամանակային իմաստով:

Ի՞նչ կարելի է ասել երկայն և երկար բառերի գործառական առանձնահատկությունների մասին: Եթե ենթադրենք, որ դրանք բարբառային (տարածքային) տարբերակներ են, ապա նույն հեղինակի մոտ վկայված երկու ձևերի առկայությունը հոգուտ այդ ենթադրության չէ:

Առկա նյութը թույլ չի տալիս անվերապահորեն պնդելու, թե երկայն-ը տարածական, իսկ երկար-ը ժամանակային իմաստով է կիրառվել: Համեմայնդեալս V դարի կտրվածքով այդ տարբերակումը արդեն չկա, եթե վկայված օրինակները հարազատ են նախահիմք ձեռագրին: Բայց քանի որ երկար-ի ժամանակային իմաստով կիրառությունը ավելի զգալի է, կարելի է ենթադրել, որ նախագրային շրջանում երկար-ը և երկայն-ը տարբերակված են եղել ըստ ժամանակային և

տարածական հատկանիշների: Այժմ բերենք մի քանի բառային գույգեր՝ համապատասխան օրինակներով.

Երկայնակեաց/երկարակեաց: «Երկայնակեաց իսկ արարեալ զհարսն և յերկարակեաց ծնունդ շնորհաց» (*Ազաթ. 152*): Երկայնութիւն/երկարութիւն: «Մի երկայնութիւն բանից տաղտկութիւն ընթերցողացն լինիցի» (*Խոր. 188*): «Բայց զի՞նչ օգուտ ինձ և խօսիցս երկարութիւն» (*Խոր. 328*): Երկայնել/երկարել: «Զի՞ երկայնեմ զբանս» (*Խոր. 82*): «Յնգետասան օր յետ բանիցն եղելոյ երկարեաց Քրիստոս» (*Քուգ. 74*): Երկայնագոյն/երկարագոյն: «Քան զյոյժ երկայնագոյնս և բարձրագոյնս» (*Փիլ. լիմ. ՆՅԲ*): «Երթայր ընդ նոսա երկարագոյն» (*Փրպ. 77*):

Հիմքային տարբերակները առաջանում են նաև տարբեր հոլովածներից կազմված բաղադրություններում: Առավել տարածված են եզակի ուղղական/եզակի սեռ.-տրական հիմքերից կազմված գուգածնությունները. այրաբար-առնաբար, այրական-առնական, այրապատկեր-առնապատկեր, այրուծի-առնուծի, անունդրութիւն-անուանադրութիւն, աշնային-աշնանային, արիւնհեղութիւն-արիւնահեղութիւն, գարնային-գարնանային, եղբայրապէս-եղբօրապէս, հայրաբարոյ-հօրաբարոյ, սերմնական-սերմանական, քաղցրենի-քաղցունենի:

Կան եզ.ուղ./հոգ.սեռ.-տր. (լեռնամեջ-լեռանցամէջ, դիւամուլ-դիւացամուլ), եզ.ուղղ./հոգ.ուղղ. (մարդօրէն-մարդկօրէն, մարդապէս-մարդկապէս), հոգ.սեռ.-տր/հոգն.հայց. (միմեանցասէր-զմիմեանսասէր):

Տարահոլով հիմքերով բառային գուգածնությունները պարտադիր կազմություններ չեն: Ըստ ՆՅԲ-ի տվյալների՝ այր հիմքով հետևյալ կազմությունները առն. հիմքով համապատասխան գուգահեռը չունեն: Այրաթող, այրական, այրանամ, այրասիրութիւն, այրասէր, այրասիրտ, այրասպան, այրասպանել, այրասպանութիւն, այրաստեղծութիւն, այրացուցանեմ: Առն հիմքով հետևյալ բառերը չունեն այր հիմքով համապատասխանութիւնը. առնականութիւն, առնակոյս, առնանոց:

Առկա են նաև այնպիսի զուգաձևեր, որոնցից մեկը հինգերորդ դարյան է, իսկ մյուսը՝ հետին (համեմայնդեպս ըստ բառաբանային տվյալների): V դարից են, օրինակ այրած, այրանման, գարունաբեր, հետհինգերորդ դարյան՝ առնած, առնանման, գարնանաբեր:

Որոշ զուգահեռներ ունեն և իմաստային տարբերություններ: Այսպես, այրի նշանակում է «ամուսինը մահացած կին», իսկ առնի՝ «առնացի, արական»: «Կին մի այրի են ես» (ՆՅԲ). «Ի հայրենական ազգին և յառնի զաւակին» (ՓԻԼ. ՆՅԲ):

Այրակին «արուէգ», առնակին «ամուսնացած կին»: «Յաղագս Դիոնիսեայ այրակին գոլոյն, ասեն՝ թէ զարանց իրս գործեր և զկանանց կրեր» (ՆՅԲ): «Կին առնակին ի կենդանի այր իւր կապեալ է օրինօք» (ՆՅԲ):

Հիմքակազմությամբ արտահայտվող տարբերակների բազմազան տիպերը և այդ տիպերն ընդգրկող բառերի զգալի թիվը վկայում է գրաբարի բառակազմական ճկունության ու լայն հնարավորությունների մասին:

3. Հոդակապով և առանց հոդակապի բարդություններ

Հայերենը ժառանգելով հ.-ե. բառաբարդման յուրահատկությունը՝ նախագրային վաղ շրջանում բարդությունները կազմում էր առանց հոդակապի: Սա վաղուց համոզիչ փաստերով ապացուցված է: Այնինչ, հայերենի գրավոր ավանդման շրջանից իսկ հոդակապը առկա է և մեծ դեր է խաղում բառաբարդման ժամանակ: Այդ են հաստատում և վիճակագրական տվյալները: Օրինակ, Աստվածաշնչում բառակազմության հիմնական միջոցը ածանցումից հետո (ըստ բառաբանակի) մնում է ա հոդակապով բարդությունը, մի բարդություն, որով կազմված են համաժողովրդական, բարբառային և նորակազմ գրքային շատ ձևեր (Առաքելյան, 1984, 133), իսկ մաքուր հիմքերով երկհիմք հոդակապավոր բարդությունները կազմում են գրաբարի բարդությունների 67,2%-ը (Հովսեփյան, 1987, 95): Տարբեր հեղինակների գրական նորակազմությունները հիմնականում ա-ով են: Ուրեմն, ակնհայտ է, որ գրաբարում

հիմնական ու հաճախական հոդակապը ա-ն է. տարաբերել, ան-տառախիտ, ազատագոր և այլն: Այդ գործառնությունը կատա-րում են երբեմն այլ ծայնավորներ. ե՛ խաբեբայ, հնգետասան, ո՛ կաթոգին, ընդոծին: Իհարկե, սրանք իրենց բնույթով որոշակիորեն տարբերվում են ա-ից: Խաբեբայ, հնգետասան-ի դեպքում հավանորեն խաբի, հնգի հիմքն է, ընդոծին, կաթոգին բառերում երևի դարձյալ հիմքային ծայնավորի հետ գործ ունենք:

Հոդակապի դեր են կատարում և, ու շաղկապները. այրև-ծի-այրուծի, նաև որոշ նախդիրներ. ափիբերան, բանիբուն, բարծրիգլուխ, բարծրիծայն, գառիվեր, գլխիվայր, գերիվերոյ, խառնիխուն:

Ինչպես նշեցինք, հիմնականը ա հոդակապն է: V դարի բառապաշարում կարելի է առանձնացնել մի շարք բառային զույգեր՝ ա հոդակապով կամ առանց հոդակապի: Նշենք մի քանիսը. աղօթակեր-աղօթկեր (*Բուզ.*), անձնահաճ-անձնհաճ, աստուածապաշտութիւն (*Կոր.*) -աստուածապաշ-տութիւն, արտահունձ (*Մանդ. 169*)-արտհունձ, ծնրադրու-թիւն-ծունրդրութիւն (*213*), նախագոյն-նախգոյն (*Փրպ.*), ոտնակապ-ոտնկապ (*Սգր*), ոտնհարութիւն-ոտնահարու-թիւն (*Սգր*), ջրաբուղխ-ջրբուղխ (*Սգր*), ջրակիր-ջրկիր (*Սգր*), վատատոհմակ-վատտոհմակ, վերաբերիլ-վերբե-րիլ (*Սգր*), քարակուռ-քարկուռ:

Արդյոք պատճառաբանվո՞ւմ է այս կարգի զուգահեռների գոյությունը: Ինչպես ասվեց, վաղ նախագրային շրջանում հոդակապ և մասնավորապես ա հոդակապ հայերենը չի ունե-ցել: Մեյեի կարծիքով պարթևական փոխառությունների շրջա-նում դեռևս -ա- հոդակապ չի եղել, որ փաստարկվում է հին իրանական փոխառություններում ա-ի բացակայությամբ (*Մեյե, 1978, 90*), Գ.Ջահուկյանի կարծիքով ա- հոդակապը տարածվել է միայն «հնագույն շրջանում, այն էլ համեմատաբար ուշ՝ վեր-ջավորությունների թուլացումից և անկումից հետո» (*Ջահուկ-յան, 1978, 246-247*):

Ժամանակագրության առումով երկու գիտնականների կարծիքները մոտավորապես համընկնում են: Ըստ երևույթին

հայերենի գրավոր ավանդմանը նախորդող առաջին, երկրորդ
 հարյուրամյակներում հողակապը սկսում է գործել, և արդեն V
 դարում արձանագրվում է հողակապի լայն կիրառությունը.
 բառակազմական մի հատկանիշ, որ հարատևում է մեր լեզվի
 հետագա բոլոր փուլերում: Վերը նշվեց, որ վիճակագրական
 տվյալները վկայում են ա հողակապով բարդությունների
 քանակական առավելության մասին: Այդ հաստատվում է նաև
 ոչ բառարանային տվյալներով: V դարում վկայված, բայց ՆՅԲ-
 ում չարձանագրված բարդ բառերի գերակշիռ մասը դարձյալ
 ա հողակապով է: Նշենք օրինակներ տարբեր հեղինակներից:
Քուզանդ. գետախառնուրդ (98), եկեղեցախորան (100),
 եղեգնաբերան (16), երամակակայ (213), զնդիկապետ (136),
 իրաքաջ (57), կանանցահանդերձ (97), հայակողմ (142), շեր-
 տափակ (146), չարասիրտ (40), տառապելասեր (80), սրնգա-
 հար (196): ***Ագաթանգեղոս.*** առաջահեծ (432), առաջագիր (247),
 ծառախիթ (147), իրեշտակատես (166), պակասամտագոյն (47),
 պղծագունդ (164), սահմանաթաքոյց (169): ***Ագաթանգեղոսից***
 ՆՅԲ-ում չավանդված բառերում առանց հողակապի են միայն
 երկրորդ բաղադրիչը ձայնավորով սկսվող հետևյալ բառերը՝
 սուրբընկալ (396), սպիտակերամ (309), վերնանկին (243):
Աբրահամ խոստովանող. բանագարդ (174), բերդատապալ
 (71), դասակագեղ (68), երկանաբեկ (70), թիկնակալ (171),
 մարմնահեղձոյց (53), մոգակոյտ (199), նեղամուտ (38),
 սենեկամուտ (72), տաճարասուն (69): Անհողակապ են. կողմ-
 նառել (3), հաստոսկեր (16), հաստորոշ (48), ծառայորդի (57):

Նկատվում է, որ երկրորդ բաղադրիչը ձայնավորով սկսե-
 լու դեպքում ա հողակապ չի դրվում. վերնանկին, սպիտա-
 կերամ և այլն, որպես կանոն առաջին բաղադրիչը երբ թվական
 է, դարձյալ ա հողակապը բացակայում է, երկմիտ, երկո-
 տասան, հնգետասան և այլն: Ա-ն չի դրվում այս, այդ, այն
 առաջադաս ցուցական դերանուններով բարդություններում.
 այսչափ, այդչափ, այնժամ և այլն: Կարծիք կա, որ առանց ա
 հողակապի են առօրյա, ժողովրդախոսակցական բառերը: Ան-
 շուշտ, այս ուլորտի մի շարք բառեր իրոք այդպես են: Բայց ժո-
 ղովրդական մտածողության, կենդանի բառ ու բանի մոտ չեն

կան, որոնցում առկա է հողակապը: Մանդակունու գործում մի շարք հմայական բառեր կազմված են ա-ով. գողահան (86), դեղահմայ (193), միջագիտութիւն, խտրողադիւթ (197-198):

Ենթադրվում է, որ հողակապերը հանդես են գալիս հիմնականում կարճ բաղադրիչների կապակցման ժամանակ, նկատվում է և այն երևույթը, որ երբ բառը երկարում է, հողակապը սղվում է. ողջամիտ-ողջմտութիւն, շատախօս-շատխօսութիւն, աստուածասեր-աստուածսիրութիւն, կարճամիտ-կարճմտութիւն, ընկերահաշտ-ընկերհաշտութիւն, ճարտարամտեմ-ճարտարմտութիւն...: Այս երևույթը նկատել է դեռևս Ա.Մեյեն (*Մեյե, 1978, 91-92*), տե՛ս նաև (*Յովսեփյան, 1987, 92*):

Ասենք, որ կարճ բաղադրիչներով բառերն էլ կարող են հողակապ չստանալ, ուտնկապ, ձեռնկապ և այլն: Իսկ ինչ վերաբերում է հողակապի սղման վերոհիշյալ դեպքերին, ապա ճիշտ չէ այն միայն բառի երկարության հետ կապելը:

Մեզ թվում է (թեկուզ դա դժվար է ապացուցել), որ որոշ բառերում ածանցվելիս ա հողակապի սղումը պայմանավորված է արտասանական ռիթմով, որը գործել է գրաբարում: Այն կարծիքը, թե բառերի կցման կետում ձայնավորի առկայության ժամանակ հողակապ չի դրվում՝ ձայնավորների կուտակումից խուսափելու համար, ընդհանուր առմամբ ճիշտ է, բայց ինչպես իրավացիորեն նշում է Լ.Յովսեփյանը. «Ձայնավորների առկայությունը սակայն անհողակապ բաղադրություն կազմելու պայման չէ: Այն դեպքերը, երբ արմատների կցման կետում հանդիպում են բաղաձայն հնչյուններ, քանակապես միայն որոշ չափով են զիջում ձայնավոր բաղադրիչներով դեպքերին... աղկեր, այդպես, այլապես, այծքաղ, անձնդիր, արբշիռ, արևմուտք, արջնդեղ, երկմիտ, ձեռնթափ, ձեռնպահ, ուտնկապ, ստնտու, վատնշան, քարկուռ, քարկոփ, օրհաս...» (*Յովսեփյան, 1987, 119*): Կարելի է ավելացնել. բերանբաց, ջրհեղեղ, երկրպագու և այլն: Ուրեմն, գրաբարում ա հողակապով և առանց հողակապի կազմությունները խստիվ սահմանազատված օրինաչափությունների չեն ենթարկվում: Այս հարցում անշուշտ առկա է հեղինակի բառաստեղծման նախասիրությունը:

4. Տարբեր հոդակապով բարդություններ.

V դարի մատենագրության մեջ մի շարք բառերում որպես լծորդ հոդակապեր հանդես են գալիս և, ու-ն: Ակնհայտ օրինակ է այրելծի-այրուծի-ն: Աստվածաշնչում այրուծի կիրառված է 5 անգամ, այրելծի չկա: Մեկ անգամ էլ՝ առնուծի: Փարպեցին 24 անգամ կիրառել է այրուծի, 6 անգամ՝ այրելծի: Բուզանդը ունի միայն այրելծի 3 անգամ, Եղիշեն այրուծի (14 անգամ), Խորենացին մեկ անգամ՝ այրելծի: «Թեև հաճախականը ու հոդակապն է, բայց ընդունված է այն կարծիքը, որ և-ը ավելի հին է. Եւ-ով գոդումը ընտիր է և համաձայն դասական հայերենի պահանջքին, ու-ով շաղկապումը մեծաւ մասամբ խորթ է ու յետամուտ. գոնէ ձեռագրական տրամադրելի տարբերութիւնները այս եզրակացութեան կմղեն զիս» (*Վարդանյան, Գ. 16-17*):

Առարկելի չէ այն, որ ավելի «ընտիր» է և-ով հոդակապումը: Սեգ առարկելը է թվուս բասաստոր այս դրսողությունը, թե ու-ով շաղկապումը (հոդակապումը) հետին դարերից է: Այնպիսի կազմություն, ինչպիսին հասուհաս-ն է, ըստ էության բավական հնություն ունի, որտեղ հանդես է գալիս հիմքային ու ծայնավորը, և այն արդեն դիտվում է որպես հոդակապ (ենթադրվում է, որ ա հոդակապն էլ նախապես որոշ բառերում ծայնավոր է եղել, այնուհետև ստացել է հոդակապի գործառություն):

Եվ-ու հոդակապային տարբերակները ի հայտ են գալիս նաև թվականների կազմության ժամանակ. իննետասն-իննուտասն, ութնտասն-ութնուտասն:

Առկա են ա/ու, ա/և, ա/ի հոդակապով զուգահեռներ. տարաբերել-տարուբերել: Կա և տարեածեմ նույնիմաստ բառը՝ և հոդակապով (ի դեպ տարեածեմ-ը չկա գրաբարի բառարաններում): «Մարմնոյ բարի է միայնում տան, քանզի ոչ տարեածեն զնա ցանկութիւնք» (*Եփր. Ասորի. Բ.5*): Հարցափորձ-հարցափորձ, խառնաճաղանջ-խառնիճաղանջ:

Մի շարք բառային զուգածներ ի հայտ են գալիս ի-ով վերջացող բառերի ա հոդակապով բարդությունների ժամանակ.

կապված ի+ա գուգորդման հետ: Հայերենում որպես կանոն ի-ա փոխվում է ե (շեշտի ազդեցությամբ): Գինի+ա+ետ-գինեւետ, կարի+ա+ծմեռն-կարեծմեռն: Սակայն այս կարգի որոշ բառեր առկայանում են նաև այլ տեսքով՝ կարածմեռն, գինաւետ: *Հմմտ.* «Եւ նշանք ահագինք յերկնից և կարեծմերունք յերկրի» (*Կիւրդ. 309*): «Բազում մորիկք երկիրդիւ պատեն զմիտս նոցա և կարածմեռն յամենայն կողմանց կայ ի վերայ նոցա» (*Մանդ. Է*): «Ի պարտէզ ընկուզաստանի շրջէիք» (*Կիւրդ. 277*): Նույն գրքի 1727թ. հրատարակության մեջ ընկուզեստանի է: Գինարբու (*հոր, Փիլ*)-գիներբու (*Պիտ*): Ե-ի փոխարեն երբեմն է. գոտեմարտ-գոտեմարտ, այգեգործ-այգեգործ (*Բուզ. 82*), ոսկեգիր-ոսկեգիր (*Փրպ. 30, 35*), ոսկեհատ (*Փրպ. 117*), գերեղարծ (*Բուզ.*) - գերեղարծ (*Եղիշ*), բարենշան (*Բուզ. 57*)-բարենշան (*Բուզ. 218*): Երբեմն ածանցման ժամանակ ի-ն սղվում է: Անարութիւն-անարիութիւն, արութիւն-արիութիւն, արփի-արփային և այլն: Նկատելի է, որ ոգի առաջադաս բաղադրիչով բարդությունները տարբերակներ չունեն, այլ հանդես են գալիս օրինաչափ ի+ա=ե հնչյունափոխությամբ. ոգելից, ոգեկիր, ոգեւոր, ոգեխառնիչ և այլն: Որ օրինաչափը և ճիշտը այս է, հաստատում են գինի բաղադրիչով կազմված ձևերը. գինելից, գինեխառնութիւն, գինեհար, գինեհարութիւն, գինեմուլ, գինեպաշտ: Ա-ով առկա է գինարբու, գինաւետ: Սրանք կարելի է բացատրել երկրորդ բաղադրիչի ծայնավորով սկսվելու դեպքում ի-ի անկման փաստով. *հմմտ.* նաև գինըմպութիւն, գինաւետ-ի դեպքում երկրորդ բաղադրիչ է գիտակցվել աւետ-ը և ոչ թեւետ-ը* :

5. Բարդ բառերի բաղադրիչների շարադասական տարբերակներ.

Այս դասակարգման տակ բերվող օրինակները, ի տարբերություն նախորդների, հնչյունական փոփոխություններով չեն պայմանավորված: Տարբերակների բնույթը այլ է: Ամեն մի

* ընկուզաստան կազմության դեպքում երկրորդ բաղադրիչ է գիտակցվել ոչ թե ստան-ը, այլ աստան-ը (*հմմտ.* Հայաստան, Ժառաստան):

լեզու, այդ թվում և հայերենը, ունի բառաբարդման իր յուրահատուկ օրենքները: «Յ.-ե. լեզուների ընդհանուր սկզբունքն այն է, որ լրացուցիչը դրվել է լրացյալից առաջ, որը հայերենում դրսևորվում է այսպես. նախ՝ սեռականով հատկացուցիչը, հետո գոյականը՝ գանձատուն, նախ ածականը, հետո գոյականը՝ մայրաքաղաք, թերակղզի, նախ՝ գոյականը, հետո բայը՝ բանասեր և այլն» (*Ածառյան, ԼՔՅԼ, III, 128*):

Բառաբարդման օրենքները սակայն քարացած չեն և երբեմն շեղվում են օրինաչափություններից: Շեղումների պատճառները կարող են պայմանավորված լինել օտար ազդեցությամբ, անհատական բառակերտմամբ և այլ բնույթի հանգամանքներով: Այդ շեղումները և՛ քանակապես, և՛ որակապես զգալի են հատկապես երկար ժամանակահատվածի, առավել ևս նույն լեզվի տարբեր փուլերի դեպքում, սակայն հենց V դարի մատենագրության մեջ նշմարվում են բառաբարդման այդպիսի տարբերակներ: Է. Աղայանը (*1984, 149*) սրանք անվանում է փոխատեղական բաղադրյալ տարբերակներ: Քանի որ դրանք այնքան էլ մեծաթիվ չեն, այբբենական կարգով ներկայացնենք հիմնականները՝ համապատասխան վկայություններով:

Ակնադրիւր-ադրիւրակն: «Մերձեցաւ կին տեռատես ի դրաւշակս հանդերձի նորա և ցամաքեցոյց զակնադրիւր արեան նորա» (*Ոսկ. ՅԱ, 1922, 340*): «Եղիցի երկիրն ծարաւուտ յաղբերականս» (*Ոսկ. ես, ՆՅԲ*):

Աստուածասեր-սիրաստուած: Գրաբարում հաճախական է առաջինը, բարդումն էլ կատարված է հայերենի կանոններով: Եթե այն գրական փոխառություն է հունարենից, ապա աստուածասեր-ը հայերենի բառակազմության օրենքին խորթ չէ:

Սիրաստուած-ը, որ եզակի վկայություն է, ակնհայտորեն խորթ ձև է, հուն. φιλοθεοσ-ի բառացի պատճենումը: Այն վկայել է Փիլոնը: «Արդ սոցա դէպ եղեւ միոյ տան և միոյ ազգի գոլ. քանզի վերջինն որդի է միջնոյն և որդւոյ որդի առաջնոյն և զամենեսին սիրաստուածս՝ միանգամայն և աստուածասէր» (*Փիլ. ծառք, 46*): Որ սիրաստուած-ը օտար ու հայերենին

չմերված ձև է, հաստատվում է այդ բառակազմական հիմքով նոր բառերի չգոյությանը, այնինչ աստուածասեր-ով ունենք. աստուածասիրագոյն, աստուածասիրակ, աստուածասիրիլ, աստուածասիրութիւն: Բագրատունու հավաստմամբ Աստուած բաղադրիչը գրաբարում միշտ նախադաս է. «Աստուած անուն անհաղորդական՝ նախադաս է միշտ, ևս ընդդէմ բառին՝ որ այլում ամենայնի նախադասն է. Աստուածընդդէմ: Անսովոր է Փիլոն սիրաստուած, փոխանակ աստուածասեր: Իսկ սուտանուն աստուած յետադասի. բազմաստուած» (*Բագրատունի 666-667*):

Աստուած բաղադրիչի առաջադասությունը հին հայկական մատենագրության մեջ ինչ-որ չափով նաև քրիստոնեության սիմվոլիկայի՝ Աստված էության առաջնայնության ու կարևորության յուրատեսակ արտահայտություն է:

Արծակահեր-հերարծակ: «Մարցն արծակահերացն ահագին կսկծմամբ սգացեալ ողբային» (*Ոսկ. Մտք. ՆՅԲ*), «Վարսս մերկացեալ հոլանեալ, հերարծակ ...» (*Գ Մկր. Բ.Յ*): Գրաբարում հաճախական է հերարծակ-ը: VII դարից վկայված է և գիսարծակ, իսկ արծակագէս չկա:

Բանասեր-սիրաբան: «Զգտակն բանից իմաստակաց՝ Մովսէս բանասեր գնա գիտէ գոլ, բայց իմաստուն և ոչ միով իրօք» (*Փիլ. այլք, ՆՅԲ*): «Արանց իմաստնոց և հնախօս սիրաբանից ստուգապէս տեղեկացեալ՝ արդարաբար քեզ զրուցեցաք» (*Խոր. 214*):

Հայերենի բառակերտման օրենքներին ավելի հարազատ է բանասեր-ը, որը գրական լեզվի մեջ է մտել անշուշտ հունարենի ազդեցությամբ, հունարենից պատճենում է սիրաբանը (հուն. λογοφιλος-ից), որն արդեն բաղադրիչների շարադասությամբ իսկ, հայերենի համար օտար է:

Բանընդդէմ-ընդդիմաբան: «Եթէ ոք յոյժ անմիտ իցէ, չկարո՞ւ բանընդդէմ լինել» (*Ոսկ. Ես. ՆՅԲ*): «Յորժամ գիականակն ասաց իբրեւ զընդդիմաբան» (*ՆՅԲ*): Թեև երկուսն էլ ըստ ՆՅԲ-ի եզակի վկայություններ են, սակայն V դարում ընդդիմաբան հիմքով առկա ընդդիմաբանեն, ընդդիմաբանութիւն, նաև

հետագա դարերից վկայված ընդդիմաբան-ը հաստատում են, որ վերջինս ավելի տարածված և ընդունելի ձև է եղել:

Բացաբերանեալ-բերանաբացեալ: «Ի կարօտութենէ անտի իւրեանց բացաբերանեալ էին իբրեւ շունք» (Եւս. պատմ. 9.6): «Որսասցես զբերանաբացեալ և զարծակ զվայրենի ախտիցն տրամադրութիւն» (Փիլ. լիւն. ՆՅԲ): Հայերենի համար ճիշտը բերանաբացեմ-ն է: V դարից բառարանները վկայում են և բերանաբաց. «Ամենքեան բերանաբաց հառաչին զկնի նորա» (Բուզ. 218): V դարից է վկայված նաև բերանաբացութիւն, այլ դարերից՝ բերանաբացեմ, բերանաբացել:

Բերանալիր-լիաբերան. «Ուտէին զհարայէլ բերանալիր բերանով» (Ես. Թ. 12): «Եկեր լիաբերան պատառ մի խորսխոյ» (ՆՅԲ): Բառարանները այդ հիմքերով այլ կազմութիւններ չեն նշում:

Բերդամեջ-միջնաբերդ: «Կեսքն ի բերդամիջին և կեսք զքաղաքամեջն լցին խնճոյիւք» (Ազ. 99): «Գնաց Յուդա ի միջնաբերդ ամրոցէ անտի» (ՆՅԲ):

Գիւղաքաղաք/գեղաքաղաք-քաղաքագիւղ/քաղաքագեղ: «Մատնեաց տէր զգեղաքաղաքն զԱրշակաւանն ի ձեռս հարուածոցն» (Բուզ. 95): «Գայր հասաներ ի քաղաքագեղն Բագաւան» (Ազ. 426):

Ընդհանրապես գոյ.+ գոյ. բաղադրիչների դեպքերում, երբ որոշակիորեն չի արտահայտվում հատկացուցիչ-հատկացյալ հարաբերությունը, դժվար է որոշել, թե որ ձևն է ճիշտ: Ըստ երևույթին գիւղաքաղաք-քաղաքագեղ զույգի դեպքում, թերևս առկա է տրամաբանական, տեղեկատվական գործոնը՝ ըստ առաջին բաղադրիչի. գիւղաքաղաք՝ գիւղատիպ քաղաք, քաղաքագեղ՝ քաղաքատիպ գյուղ, քաղաքի նման գյուղ և այլն:

Գործածեռն-ծեռագործ: «Խոկումն գրոց յամենայն Ժամ և տքնութիւն և գործածեռն» (Մնդ. ՆՅԲ): «Ի ծեռագործս քո խորհեցայ» (Սաղմ. ՆՅԲ): Գործածեռն հիմքով այլ կազմութիւններ բառարանները չեն նշում, իսկ ծեռագործ հիմքով ՆՅԲ-ն ունի ծեռագործական, ծեռագործեմ, ծեռագործութիւն:

Երդմն(ա)ստութիւն-ստերդմնութիւն: «Խռովութիւն, երդմնաստութիւն, աղմկութիւն, բարեաց երախտեաց անյիշատակութիւն» (*Իմաստ. ԺԴ. 26*): «Բուսանի յերդմնասիրութենէ ստերդմնութիւն և ամբարշտութիւն» (*ՆՅԲ*): Ճիշտ ձևը ստերդմնութիւն-ն է: Կա և ստերդումն երդմնասուտ: Ստերդմնութիւն ունի և Բուզանդը (*64*):

Լիաբուռն-բռնալիր: «Հնձեն լիաբուռն զամբարշտութեան տոյժս» (*Պիտ. ՆՅԲ*): «Բռնալիր լուանան զձեռս» (*ՆՅԲ*):

Լիապտուղ-պտղալիր/պտղալից: «Դրախտ քաջագուարթ՝ սաղարթացեալ ծառովք լիապտղովք» (*ՆՅԲ*): «Այգի պտղալից» (*ՆՅԲ*):

Մայրաքաղաք-քաղաքամայր: «Բնակիչքն՝ որ բնակեալ էին ի մայրաքաղաքսն» (*Յեսու, Ժ. 2*): «Եւ մեք և նոքա հասարակ ժառանգեսցուք զքաղաքամայրն բարեաց» (*Եղիշ. 203*): Մայրքաղաք-ը հուն.*μητροπόλις*-ի համապատասխանությունն է: Ըստ էության երկու ձևերն էլ խորթ չեն հայերենին: Մայրաքաղաք-ի դեպքում առկա է որոշիչ-որոշյալ հարաբերությունը՝ որոշչի առաջադասությամբ, քաղաքամայր-ում՝ հատկացուցիչ-հատկացյալի հարաբերություն՝ հատկացուցչի առաջադասությամբ: Մայրաքաղաք-ը ավելի հաճախական է: Ունի նաև «մենաստան» իմաստը:

Շահավաճառ-վաճառաշահ: «Ձմեծութիւն ծովու դիեցուսցէ քեզ և զշահավաճառաց առ ծովեզեր բնակելոց» (*ՆՅԲ*): «Որ բնակեալդ ես ի մուտս ծովուդ վաճառաշահ ազգաց ի կղզեաց բազմաց» (*Եզեկ. ԻԷ, 3*):

Տարբերակներ են նաև շահավաճառութիւն-վաճառաշահութիւն, որոնցով ՆՅԲ-ում վկայված օրինակները նաև V դարից են:

Բառային տարբերակների շարքում չենք քննում այն ձևերը, որոնց շարադասական փոփոխությունները ուղեկցվում են նաև իմաստային փոփոխություններով: Այսպես, V դարից վկայված է մոգապետ և պետմոգ: Փաստորեն սրանք տարբեր բառեր են՝ տարբեր իմաստներով: Մոգապետ նշանակում է «մոգ, մոգերի գլխավորը», իսկ պետմոգ-ը, ըստ մեզ հասած վկայության զրադաշտական ուսմունքի, անվանում է: Եղիշեն,

թվարկելով գրադաշտական ուսմունքները՝ ամպարտքաշ, բոգայախտ, պահլաւիկ, պարսկադէն, ավելացնում է: «Քանզի այս հինգ կեշտք են, որ գրաւեալ ունեն գամենայն օրէնս մոգութեանն, բայց արտաքոյ սոցա է ևս այլ վեցերորդ գոր Պետմոգն կոչեն» (144):

Նկատելի է, որ որոշ շարադասական տարբերակներ ժամանակագրային նույն հատվածին չեն վերագրվում: Այսպես, գեղագոյն-ը վկայված է V դարից, իսկ գունագեղ-ը՝ ուշ շրջանից: Գեղապատշաճ ունի Խորենացին (32), իսկ պատշաճագեղ-ը հետհինգերորդարյան վկայություն է: V դարից է լիապարգեւ-ը, ուշ՝ պարգեւալից-ը:

Կան նաև այլ կարգի գուգահեռներ: Բանաստեղծ-ի ստեղծաբան տարբերակը չկա բառարաններում, բայց V դարից կա ստեղծաբանեն, իսկ բանաստեղծեն վկայված է XII դարից:

Շարադասական տարբերակները ի հայտ են գալիս միայն երկարմատ բարդություններում: *Արմատ₁+Արմատ₂ (+ածանց)* կազմության տարբերակային կադապարը առկայանում է *Արմատ₂+Արմատ₁(+ածանց)* տեսքով:

Այն տարբերակները, որոնք հարազատ են հայերենի բառակազմական օրենքներին, ավելի կենսունակ են ու հաճախական, նաև բառակազմական գործուն հիմքեր են:

ՆՈՐԱՀԱՅՏ ԲԱՌԵՐ

(Գրաբարի բառարաններում չարձանագրված միավորներ)

Գրաբարի բառարաններում ըստ կարելիւյն արտացոլված է V դարի բառապաշարը: Վերջինս ըստ էության մաս այդ բառարանագրութեան հենքն է: Սակայն ծավալուն գրականութեան, բազմաթիւ ձեռագրերի ու գրքերի առկայութեան պայմաններում հնարավոր չէր V դարի բառապաշարի լիակատար ամփոփումը նույնիսկ ամենածավալուն բառարաններում: Սկստի ունենք առաջին հերթին հայկազյան բառարանները: Ակնհայտ է, որ ժամանակագրորեն իրար հաջորդող բառարանները թե՛ բառարանային սկզբունքների կատարելագործման և թե՛ նյութի ընդգրկման տեսակետից ավելի լիարժեք են: Այսպէս, ՆՅԲ-ն զգալիորեն գերազանցում է ՅՅԲ-ին, ԱԲ-ն՝ ՆՅԲ-ին և այլն:

ԱԲ-ն հետաքրքրող հարցի առումով այնքան էլ կարևորութիւն չի ստանում, քանի որ այնտեղ վկայութիւններ չկան, բնականաբար չկա և բառապաշարի ժամանակագրային առանձնացում:

Հայկազյան բառարանների լույսընծայումից հետո բանասերների ջանքերով ի հայտ են բերվել բազմաթիւ նոր վկայութիւններ, որոնք այս կամ այն պատճառով չէին արտացոլվել բառարաններում: Այս տեսակետից անգնահատելի գործ են արել հատկապէս Ն.Բյուզանդացին, Ն.Ակինյանը, Ա.Վարդանյանը և Հ.Աճառյանը: Վերջին երկուսը իրենց նկատած նորահայտ բառերը պարբերականներում հրատարակելուց զատ, ամբողջացրել ու հրատարակել են առանձին գրքերով: Իսկ Արմատական բառարանում էլ ընդգրկված են հայկազյան բառարաններում չարտացոլված բազմաթիւ նոր բառեր: Մի խոսքով զգալի ու քրտնաջան գործ է կատարվել հայերենի բառապաշարի վերհանման ու ուսումնասիրման գործում: Սակայն անելիքներ այս բնագավառում շատ կան:

V դարի հայ մատենագրության ուսումնասիրման ընթացքում պարզվեց, որ բազմաթիվ բառեր գրաբարի բառարաններում չեն արձանագրվել: Սա կարելի է բացատրել առարկայական և ոչ առարկայական հանգամանքներով: Ինչպես նշել ենք, որևէ լեզվի ամենակատարյալ բառարանն (բառարանները) իսկ ի վիճակի չէ լրիվ ընդգրկելու տվյալ լեզվի ամբողջ բառապաշարը: Ինչ վերաբերում է խնդրո առարկա նյութին և բառարաններին, ապա անշուշտ մի շարք բառեր պարզապես վրիպել են բառարանագիրների ուշադրությունից, բառերի մի մասն էլ չի արտացոլվել, դիտելով որպես սխալագրություններ կամ հատուկ անուններ, այսինքն, գործել են բառարանագիրների որդեգրած սկզբունքները, որոնք, ինչպես կտեսնենք, միշտ չէ, որ արդարանում են: Հայկազյան բառարանագիրները ձեռքի տակ չեն ունեցել բազմաթիվ ձեռագրեր (դա հնարավոր էլ չէր), ուստի ձեռագրային շատ տարրընթերցումներ, կամ նոր բառային միավորներ չեն արտացոլվել: Նոր բառերի հայտնաբերման գործում անգնահատելի աղբյուրներ են քննական բնագրերը, որոնք համարյա թե չկային հայկազյան բառարանագիրների ձեռքի տակ, իսկ եղածներն էլ ընդգրկում էին մեկ-երկու ձեռագիր հրատարակություն: Այժմ հրապարակի վրա են զգալի թվով քննական բնագրեր՝ թե՛ ինքնուրույն, թե՛ թարգմանական գրականությունից, որոնք այլևայլ հարցերին զուգընթաց նաև բառարանագրային նոր նյութ են տալիս: Գործին մեծապես օգնում են և նորահայտ ձեռագրերն ու պատառիկները, որոնք նույնպես բառարանագիրներին ծանոթ չեն եղել:

Այբբենական կարգով ներկայացնենք V դարի երկերում մեզ հանդիպած և գրաբարի բառարաններում չարձանագրված բառերի մի մասը¹:

ԱԶԴԱԿԱՆՈՒԹԻՒՆ – «Ցուցանես աչաւք զազդականութիւնն և զաւրութիւնն, որ իջանէ ընդ քեզ ի թիկունս ի մարտի առաքինեացն» (*Վկայք* . 56):

¹ Կնշվի աղբյուրը, անհրաժեշտության դեպքում բառիմաստը, ըստ հարկի կարվեն բառաքննական դիտողություններ և ստուգաբանության փորձեր: Բառերը ստուգված են հետևյալ բառարաններով. ՀՀԲ, ՆՀԲ, ՋԲ, ԱԲ, ՀԱԲ: Ցանկը վերջնական չէ:

ԱԼԱՍՓՈՍ – «Միթե իւիք վիրավորեցա՞ք զարեգական ալամփոս» (*Եւագր. 337*): Ծանոթագրության մեջ համարվում է անծանոթ բառ. ենթադրվում է հուն. ἀλαμφοσ |«խավար»:

ԱԽՏԱԿՈՂՄ – «Այնոքիք որ ջանան վարծել զմեզ, կամ զգորութիւն հոգւոյն խնդրեն և կամ զախտակողմ, որ ի մեզ կայ» (*Եւագր. 149*): «Յոգի պակասեալ է, որ զախտակողմ հոգւոյն առ ունայնութիւն իջուցանէ» (*Մ.տ., 169*):

ԱԿԱԴԻՄԱԿԱՆ – «Քանզի արդարեւ ակադիմականն և անճառականն դէմ ընդդէմ հաստատեալ են աղանդացն» (*Փիլ. Մն. ի հայս, 203*): Արմատական բառարանում ակադիմական-ը համարվում է նոր բառ:

ԱԿՆԲԱՑ «տեսադաշտ, հայացք» – «Քանզի ոչ կարէ ակնբաց ի ցամաք գործել» (*Եզն. 190*):

ԱՅԵՂԱԶԵՒ – «Յետ կարծեցուցանելոյն ինքն կերպարանի ստուերաձև երևամբ ահեղաձև տեսիլ» (*Բանբ. Մատենադ. 1964, 327*): Ահեղաձև, ստուերաձև, խանդիռն, շլեզ, հմաւորական վկայված են Գրիգոր Պարթևին վերագրված «Հարցումի» մեջ, որը վերահրատարակել է Լ.Խաչիկյանը: Գիտնականի կարծիքով «Հարցումի» հեղինակը Մ.Մաշտոցն է: Անկախ հեղինակի խնդրից, այդ հայ գրականության երախայրիքներից է, որ և ծառայել է որպես Եզնիկի «Եղծ աղանդոցի» աղբյուր:

ԱՂԱԽՏ – «Եղեւ պապանծումն փոխանակ բարբառոյ և թափուր փոխանակ շշնջմանց: Փոխանակ աղախտի և խաւսնոց, թափեցան հրապարակք ի խաւսնոց» (*Եփրեմ. Նիկ., «Սիոն», 1928, 187*): Ծանոթագրվում է որպես անծանոթ նշանակությամբ բառ:

ԱՂԱՉՈՒՄՆ – «Յայսմ եղիցի աղաչումն մեր եւ նովաւ եղիցի մեր արհաւիրք» (*Եփր. Նիկ. «Սիոն», 1928, 221*):

ԱՂԲԱՍԱՆ – «...այլ զնովին տեղեաւք ստեղծ հաստատեաց եւ զայլ եւս փորոտին, որ աղբով եւ այլ եւս ազգի ժահիւք լի են, պեսպես խորտկաց, զոր ուտէ մարդ, զի յորժամ սիրտն հանճարական հպարտամայցէ, սաստեսցէ ի նա փորն աղբաման» (*Եմես. ճառ. ԺԲ*): Օգտագործվում է որպես փոր բառի մակդիր: Ուշագրավն այն է, որ V դարի մեկ այլ հեղինակ՝ Յովհ. Մանդակունին նույնպես նմանատիպ մի կիրառություն

ունի. «... և զաղբաբոյն որովայնն փտեալ ապականիցէ» (ԺԶ, 127): Աղբաբոյն-ը, որ դարձյալ եզակի վկայություն է, բառաբաններում կա, իսկ աղբաման-ը՝ ոչ:

ԱՂԵՂՆԱԶԱՅՆ – «Ոմանք զհետ ցռուցն և այծենմանցն արշաւելով՝ զխիզախական զաղեղնածայնն և եթ բարբառիցին. և այլք զհետ բուլից եղջերուացն և եղացն ձիարծակ եղեալ զգործ կորովածիգ արանցն ցուցանեն» (Փարս. 10): Այս հատվածը 1895 թ. հրատարակության մեջ թարգմանված է. «յորդորական և միայն աղեղի վերաբերյալ խոսքեր խոսելով...» (18), իսկ 1982 թ.՝ «ոմանք ցիռերի և այծյամների ետևից արշավելով՝ իրենց աղեղների մասին էին հորդորալից բարբառում»:

ԱՂԻՈՒԹԻՒՆ – «Եւ զծովուն Մեծի զպատճառս ջուրցն աղիութեան և զպատուական և զծանրագին ականն, որ անուանեալ կոչի կորաղիոն» (Բարսղ. է, 242): ՆՅԲ-ն ունի աղութիւն, մաս այս օրինակի հղումով, որն այլ ձեռագրից է:

ԱՂՏԱՍԵՐ – «...զի ցուցցէ թէ աղտասեր է» (Եփր. Նիկ. «Սիրոն», 1933, 154):

ԱՄԵՆԱՂԱՍԻԶ – «Դատեալ լինէր ամենադատիչն ի դատուածս վասն երկոցունց» (Եփր. Նիկ. «Սիրոն», 1928, 346):

ԱՄԵՆԱՐԱԾ – «Քանզի համբերեսցէ ամենարածն, զի տեսանէ զվնաս ...» (Եփր. Նիկ. «Սիրոն», 1931, 123): Արածեն-ի արմատն է, արաւտ տարբերակը նույնպես առկա է նմանատիպ կազմության մեջ (տե՛ս հաջորդ օրինակը):

ԱՄԵՆԱՐԱՒՏ – «Պահանջէ զխաչն իւր ամենարաւտն, թքանէ մահ ամենակոլ» (Ն.տ., 1928, 222):

ԱՅՐԱՑԻ «քաջ» – «Եւ արքայդ վրաց Վախթանգ այրացի է. ո զփտէ և բազումողորմն աստուած հայեսցի ի վտանգս մեր և օգնեսցէ զմեզ» (Փարս. 119): Մանդակունին ունի արանցի:

ԱՆԱՐԱՆՑԱԿԱՆ – «ամուրի, չամուսնացած» – «...զգեցաւ մարմինն յանարանցական արգանդի կուսին եւ եղեւ մարդ կատարեալ» (Եմես. ճառ. է):

ԱՆԳՐԱԿԱՆ «չգրված» – «Բնութիւն մարդոյ վարդապետ է օրինաց, քանզի յանձանց գիտեմք զբարին եւ զչար: Եղ աստուած ի բնութեանն անգրական արեւնս առ ի լուսաւորել զմեր միտս» (Եմես. ճառ. ԺԲ):

ԱՆՁՆԱՔԱՐՇՈՒԹԻՒՆ – «Եւ ըստ Աստուծոյ ազդեցութեանն, ի սաստկութենէ և ի կարևոր (ուղղելի է կարելէր-Լ. Դ.) գոր ունեաք ի մարմնի մերում՝ մերթ ի սող և մերթ անձնաքարշութեամբ հասաք առ միմեանս» (*Փարպ. 141*):

ԱՆՁՐԵՒԱԿԻՐ – «Այլ մենք զծիածանն գիտեմք զի յանձրեաց ցածնուլ լինի, յորժամ արեգակն զճառագայթս ընդդէմ անձրեակիր ամպոցն արկանիցէ» (*Եւս. Մեկն. 49*):

ԱՆՊԱՏՈՒՐ – «Ահա նկարք ի վերայ քարանց և յոգիս աղտեղութիւնք: Անպատուէրք ահա գործին և պատիւիրեալք խափանեալ են» (*Եփր. Նիկ. «Սիոն», 1929*):

ԱՆՍԹԱՓ – «Անսթափք ի մտացն ուշ յիշեսցէ գլխատակս ծառոյն» (*Ազաթ. 150*): ՆՅԲ-ն օրինակը բերում է անթափ-ի տակ:

ԱՇԽԱՐՀԱԿՈՐՈՒՍՏ – «Եւ աշխարհակորուստ արանցն ողջ ոչ տայի զնալ յաշխարհէս Դայոց» (*Փարպ. 143*):

ԱՊԱՐԱՆԱՐԴ – «ապարանքի ձև ունեցող» – «Եւ արդ զի՞նչ մարթասցուք զմտաւ ածել եւ կամ խորհել զշինածածն եւ ապարանարդ կերպարանաց փղի, մեծ և ահագին գազանին» (*Բրսղ. 309*): Այլ բնագրերում ապարանագարդ է, որ և վկայում է ՆՅԲ-ն: Ապարանարդ-ը մերժելի ձև չէ. *հմմտ. ծուարդ* (*Եւս. Եմես. Մեկն. 131*):

(յ)ԱՌԱՋԱՆԱԻԹ – վկայված է երկու անգամ՝ Եվսեբիոսի 11-րդ ճառում. «Ընդէ՞ր Յուդաս յառաջանաւթն նկատեալն և կոչեցեալն, չարդարացաւ» (22), «Ընդէ՞ր եւ առ հի՞մ ... մարգարիտն յառաջանաւթ ի ցեխ եւ ի տիղմ թաւալէր» (*Ն.տ.*):

ԱՌԱՔԵԼԱԲԱՆ – «Արդ այսու օրինակաւ զամենայն աւուրս կենաց իւրոց առաքելաբան առաքելագործ վարեալ» (*Ազաթ. 468*):

ԱՌՓԱՅԼԱԿԵԱԼ – «Եւ ի հիւսիսոյ ի ներքս ածեալ՝ ի լաւագոյնս ճանապարհ հորդորելով ճառագայթիւքն լուսաւորէ, հող յաղագս իմաստութեանն առփայլակեալ, զի մնացորդացն է տանջանք մաքրութիւն հոգւոյ» (*Եւագր. 9-10*):

ԱՐԴԱՐԱԿՇՈՒՉ – «Ոչ ասեմ թէ առնել կարէ Աստուած զինչ եւ կամի. այլ որ ոչ վայել է արդարակշռիչ ստուգութեան նորա՝ զայս ոչ առնէ» (*ԴԱ, 1984, 12*):

ԱՐՄԱՏԱԿԱԼԵՄ – «Քանզի որ հեթանոսաց հաւատա-

ցեալքն արմատակալեալ, կոճոպեալ համարէին զհրեական հաւատացեալսն» (*Եւս. ճառ. ԺԱ*): Ձուգահեռ օրինակ է Ղարաբաղի բարբառի տրկըռկալիլ-ը՝ տակոյի «արմատ» բառից: Ուրեմն կազմութիւնը հարազատ է հայերեմին:

ԱՐՇԱԲԱՆԻԿ – «Եւ արդ զԱստուծոյ միշտ արշաւանիկ դէսպանն, ոչ միայն ի ցամաքի արշաւել, այլև ի ծովու» (*Եւս. ճառ. ԺԳ*):

ԱՐՈՒՆՍՏՈՂ (ՁԵՈՔ) – «Ձոր ընկալեալ արուեստող ձեռաց՝ զարդարեն զթագաւորս» (*Փարս. 10*):

ԱՐՏԱՍՈՒԱԹՈՐԵՄ – «Տուն չարչարանաց՝ յաղագս ննջելոյն Ղազարու բարեկամի վասն որոյ և արտասուաթորէր յաչաց արարչին» (*Մամբրէ, 74*): ԱԲ-ն ունի արտասուաթոր:

ԱՐՏԱՔԱՐԱՆԿԵՑԻԿ – «Ձուրս երեւելի արտաքուստ ի ներքս ի մեզ մտանէ յորժամ առաջինն մտեալ հալիցի, դարձեալ ծարաւենք. ոչ լինի մեզ ջուրն աղբիւր, այլ պէտք արտաքսընկեցիկք» (*Եւս. ճառ. Բ*): Բառարանները ունեն արտաքսընկեցութիւն: ՆՂԲ-ն հղում է տեսն ընկեցութիւն, ԱԲ-ն. «դուրս վընդուիլ»:

ԱՐՔԱՅԱՍԱՆՈՒԿ – «Կալաւ աշխարհս մեր ... ամս քսան և վեց. եւ յենդ նորա որդի՝ նորին, որ անուանեցաւ Շապուհ, որ լսի արքայամանուկ» (*Խոր. 216*): Իրանական šahpuhr (šah «թագավոր» և pühr «որդի»)՝ անձնանվան բարգմանությունն է: Բառարանները չեն գտնուել, ըստ երևութիւն գիտակցելով որպէս հատուկ անուն: Այն բառը հետաքրքրական է մեկ այլ առումով. ի հայտ է գալիս մանուկ «որդի» իմաստը, որը ԱԲ-ն ընդհանրապէս չի նշում. իսկ ՆՂԲ-ն թեկուզ նշում է «որդի» իմաստը, սակայն վկայած օրինակներում մանուկ ունի «երեխա, փոքր երեխա» նշանակությունը:

ԱՐԻՆԱՏՈՒՐ – «Սրբութիւն նոցա պղծութիւն է. եւ պահք նոցա բամբասանք և ընթերցուածքն անէծք զի կերակրիչն եւ զաւրինատուրն բամբասեն» (*Եւս. ճառ. Բ*): ԱԲ-ն ունի օրինատու՝ «օրենք տվող աստված»:

ԲԱՆԱՍՏՈՒԹԻՒՆ «տրամաբանություն» – «Յարմարի բանամտութեամբ եւ իրաւք» (*Բանք. Մատենադ. 1986, 269*): Բանամտութիւն, դիմառնաբար, վերատրապէս, քարոզաբար քաղված են Ոսկեբերանի Սաղմոսաց մեկնությամբ

նորահայտ նշխարներում, որը հրատարակել է Յ.Քյոսեյանը:

ԲԱՐԵՊԷՍ – «Սակայն բարերարն չարութեամբ նորա բարեպէս կատարէ» (ՅԱ, 1984, 12):

ԳԵՏՆԱՆԱՅԵԱՑ – «Գետնանայեացի եւ ուկնարկեալ եւ ուր ոչ ճանաչի ժամանեցէ քեզ» (*«Էջմիածին» 1966, ԺԱ, 64*):

ԳԵՒՂԱԿԱԼ – «Ապա թէ ի վանս նստիս՝ թշնամանես զվանսն գեղակալ եղեալ և վանական, զի չես հրաժարեալ, այլ խաբես» (*Եւագր, 141*):

ԳԵՏՆԱԹՈՂՈՒԹԻՒՆ – «Դոյնպէս և ճնճղուկ. ոչ իբրեւ զկատարեալ, այլ ի գետնաթռչութենէն բարուք անուանեցաւ ճնճղուկ. քանզի ճնճղուկ ոչ ունի բարձր գթոյչս, այլ և ոչ յերկար, այլ սակաւ ինչ թռչի և դարձեալ երկիր իջանէ» (*Իւսիք. 88*):

ԳԼԲԱԽԵՍ – «Եւ ելեալ ի ծի՝ հարին զպատերազմական փողն և եղեւ աղաղակ մեծ զաւրացն և կռուեցան զբազում ժամանակս մեծ հանդիսիւ սաստիկ և զլուխք թելոցն և զլբախեալ ընդ միմեանս և մեծաւ ուժով ոնոռնէն նսածին միմեանս» (*Պատմ. Աղեքս. 390*): Այս հատվածում Ալեքսանդրի ճակատամարտերից մեկի նկարագրությունն է, որտեղ խոսվում է բանակի աջ և ձախ կողմերի դասավորության մասին: Գլբախեալ ընդ միմեանս նկատի ունի երկու զորքերի ճակատային մասի բախումը: Բառը պետք է ուղղել՝ **զլխբախեալ**, մանավանդ որ ՆՅԲ-ում զլուխ բաղադրիչով կազմված բազմաթիվ ձևերում **զլ-բաղադրիչ** չկա: **Գլխբախեմ-ն** էլ չկա գրաբարի բառարաններում:

ԳՐՐՏԱԿԱՆ – «Հարկանէ զՓարաւովն գորտիւք, վառեալս կազմեալս գունդս ատարաւտիս գորտական գնդից. գունդս նոր և մարախական գնդից» (*Եւս. ծառ. ԺԱ*):

ԳՐԴԻ – «Զոր օրինակ գրդի ոք երթիցէ քարի, քարին ինչ ոչ ստնանէ, այլ զիւր գլուխն ողջ ոչ ապրեցուցանէ» (*Եւս. ծառ. Բ*): Գրաբարի գրդանք «գետի հորձանուտ» բառարմատի իմաստային կապը գրդի-ի հետ այնքան էլ ակնհայտ չէ: Բառարանները ունեն նաև **գրթի** «սահելով», որը թերևս իմաստային զուգահեռ է գրդի բառի հետ: Կարելի է նշել բարբառային գիրդ «կտրուկ, միանգամից» բառը, որը եթե նոր փոխառություն չէ, ապա ակունքները գալիս են գրաբարից:

ԴԱՇՏԱՆԱՏՈՒՆ – «Որպէ՞ս յաղիւսոյ (եւ ի) քարանց ի կիս-

ւոցն ապարանս եւ սենեակս թագաւորաց և իշխանաց շինէք եւ ի կիսոցն որմ սնատանց և դաշտանատանց կարգեալք յաւրինին» (*Բանք. Մատենադ. 1973, 14*): Փարպեցու նորահայտ մի պատառիկից է: Գիտական հրատարակության մեջ տոււն դաշտանաց է: Պատառիկի հրատարակիչները տոււն դաշտանաց-ի «արտաքնոց» բացատրությունը անհամոզիչ են համարում: **Դաշտանատուն**-ը համարում են կոնկրետ նշանակություն ունեցող հաստատություն, «քանի որ Պարսկաստանում «դաշտանիկներ» իրոք կային»: Ըստ հրատարակիչների սնատուն-ը փոխարինում է Փարպեցու գիտական հրատարակության մեջ տեղ գտած «տուն աղտեղութեան» հասկացությանը: Համամիտ ենք պատառիկի հրատարակիչներ և ուսումնասիրողներ Կ.Յուզբաշյանի և Պ.Սուրադյանի հետ, որ սնատուն բառը կարոտ է իմաստային ճշտման, քանի որ սին բառը բառարաններում «աղտեղություն» իմաստը չունի:

ԴԱՏՈՒԱԾ (տե՛ս ամենադատիչ-ի օրինակը):

ԴԻՄԱՌՆԱԲԱՐ «փոխաբերաբար» – «Այսոքիկ վարդապետօրէն և քարոզաբար ասացեալ, որ վերագրեալդ է և ունի դիմառնաբար ասացեալ մարգարեութիւնս կատարել ի վերայ նախապիտացն և մարգարէիցն» (*Բանք. Մատենադ., 1986, 267*):

ԴՐՈՅ – «Ետուն դրոհ տունն Աբրահամու, զի տեսցեն զիջեալ զուարթնոցն» (*Եփր. կցուրդ.*): Բառարանները ունեն դռոհ տալ «վազել»: Այդպես էլ ուղղում է Լ.Տեր-Պետրոսյանը (*ՀԱ, 1978, 37*):

ԵՐԲԵՄՆԱԿԱՆ – «Ձի էրն երբեմնական կարծի. եւ իցեն իբրեւ թէ հանդերձեալ ինչ. իսկ են ոչ այսպիսի ինչ անջրպետս ի մէջ ունին կատարել» (*Եւս. ճառ. Բ*): Բառն ունի «փոփոխվող, ժամանակավոր» իմաստը:

ԵՐԳԱՋ – «Բայց երգագն անաւթ ինչ է հիւսկէն, որ այսպէս կոչէր յայլազգեաց անտի, կամ մեկնակ շալակամատն է, կամ կէս շալակաց» (*Եւս. Մեկն. 164-165*): Ծանոթագրվում է, որ ՆՅԲ-ն չունի երգագ, այլ երգաբ կամ արգաբ: «Սակայն երգագ բառը Եմեսացին երկու անգամ կը գործածէ». երգաբ և արգոբ բառերը գործածուած են Ս.Գրքին մեջ (*Ա. թագ. Ի. 19, 41, և Ա. Թագ. 2. 8, 11, 15*): Եմեսացին այս վերջին տեղը կը մեկնէ հե-

տեւեալ ձևով. «Եւ Դաւիթ, ասէ յարեալ յարգոքայն կամ ի թփոյ ինչ, որոյ անունն այնպէս էր և ոչ թարգմանեցին, կամ ի դարափոր է, ու թագուցեալն»: ՆՅԲ-ի շալակամատ բառահողվածի տակ բերված օրինակում կա երգագ բառը, բայց այն որպէս բառահողված չի ներկայացվում: »

ԵՐԴՄՆՈՂ – «Մի չարախօս իցէ, մի զբաղեալ... մի թշնամանող, մի երդմնող» (*Եւագր. 139*):

ԵՐԵԿԻ – «Եւ աստ է տեսանել նորագործ նորանշան որս, որ երեկի որսացեալ, այսաւր զայլս որսաց» (*Եմես. ծառ. Թ*): Ըստ երևույթին հին բարբառային կամ ժողովրդախոսակցական ձև է. *հմմտ.* Ղարաբաղի բարբառում յըրկէ «երեկ», ըրգօնէ «երեկոյան» և այլն:

ԶՈՎԵՍՏ – «Գիշերն անցուցանէ զովեստն իւր, առաւօտ հրաժարէ զխրախութիւնն նորա» (*Եփր. Կցուրդ. Գ. 7*): Լ.Տեր-Պետրոսյանը ուղղում է՝ **զգովեստ նորա**: Կարելի է հնարավոր համարել և **զովեստ** բառի առկայությունը՝ իրանական *zav* «կանչել, ասել» արմատից, որից ունենք *նզով*, *զաւեշտ* և այլն, ինչպէս *gov* «ասել» արմատից՝ **գովեստ**, **գովել**:

ԸՆՏՐՈՂՈՒՄՆ – «Լուար գի չոգան բարիք և չարիք, ծանիր գի ի վախճանի որոշին: Լուար գի եղել շփոթումն, ծանիր գի ի վախճանի լինի ընտրողումն» (*Եփր. Նիկ. «Սիոն», 1929, 378*):

ԸՍՏԳԵԼՈՒ – «Իսկ զարդն այն լկտի, տգեղ է ամենայն ուրեք. որ ի ներքս տեսանէ, այնպէս որ արտաքոյ հայի ըստգելու» (*Եփր. Նիկ. «Սիոն», 1931, 186*): Անծանոթ է բառը և բառիմաստը: Այդ կարծիքին են և հրատարակիչները:

ԹԱՐՈՒԲ – «Եւ քանզի անպտղաբեր երկիր մեծն մշակապետ ճշմարտութեանն առաքէր հարկիս և թարուքս ի գործ, զի զսեզն կտուեսցեն եւ զքարինսն հորդեսցեն և զանպտուղ անդսն կակղեսցեն և դարձուցեն ի պտղաբերութիւն» (*Եմես. ծառ. ԺԳ*): Բառը ունի «հերկող, մշակ» իմաստը: Այդ է հաստատում և հաջորդ նախադասությունը. «Եւ զայս ոչ վայրապար կամ յախուռն, այլ իբրեւ զուգականս եզինս ինչ հարկեաց երկուս-երկուս լծէր»: Այս ճառի առանձին հատվածներ ներառված են Սեբերիանոսի ճառերում (տե՛ս *Սեբերիանոսի Եմեսացւոյ Գաբաղացւոյ ճառք.*

Վենետիկ, 1830): Վերոհիշյալ հատվածը Սեբերիանոսի գործում բացակայում է:

ԹԵԹԵԼԲԲԱՐՁ – «Եւ թէ այս լիցի՝ քաղցրանայ լուծ նորա և բեռն թեթևաբարձ ի թիկունս մեր իցէ» (*Եւագր. 331*):

ԹԻԿՆԱԿԱԼ – «Ու՞ր էին արդեօք գունդ հեծելոց վառելոց և սպառազենք նահատակաց, որ միշտ վերջապահք թիկնակալք էին նոցա ի թշնամեաց» (*Վկայք. 71*):

ԹՈՂԱՑՈՒՑԻԿ – «Ոչ եթէ զԱստուծոյ բանն խափանել կարէր, այլ յիւրմէ իւրով չարութեամբքն գուն գործեալ դիմէր, առեալ աւճան յԱստուծոյ ի թողացուցիկ զաւրութենէն» (*Եմես. ճառ. ԺԳ*):

ԹՈՎՍԱՅԱԳԼՈՒՄ – «Այլ գրեցին և մանիքեցիքն թովմայազլուխ աւետարան, որում անուշահոտ աւետարանացն անուն եղեալ կարդան» (*Կիւրդ. Կոչ. 71*): Վերաբերում է Թովմա առաքյալին, որը չէր հավատում հարությանը, քարոզում է Իրանում, Մարաստանում, Բակտրիայում, հետո գնում է Չնդկաստան և այնտեղ էլ կնքում իր մահկանացուն: (Այդ մասին մանրամասն տե՛ս *Ավգերյան, Լիակատար վարք սրբոց, Վենետիկ, 1813, հատ. Ե., էջ 252-280*):

ԺԱՄԱՆԱԿԵՏԵՂՔ – «Գեղեցիկ ժամանակետեղք քաղաքին, ահա եղեն կարկառք կարկառք: Փողոցք կայանք իմաստնոց կործանեցան ի վերայ իմաստնոց» (*Եփր. Նիկ. «Սիրոն», 1928, 222*):

ԺԱՄԿԵՆԻ – «Թէ հարսն սիգայ զարդու իւրով, այնու որ ոչն բոշխնի եւ ժամկենի պսակաւ, զոր դնէ նմա փեսայն սակաւ աւուրց» (*Եփր. կցուրդ, ԽԶ*): Մի քանի ձեռագրեր ունեն ժամանակեան: Վերջինս առկա է նաև վերոհիշյալ կցուրդի մեկ այլ հատվածում: Եթե ժամկենին վրիպակ չէ, ապա ենթադրելի է որպէս բարբառային ձև:

ԺՅԵԼ «մերժել, արհամարհել» – «Յորժամ տեսին զլոյսն ծագեալ ժխտեցին, ժհեցին զյայտնութիւնն» (*Եմես. ճառ, ԺԳ*):

ԺՈՂՈՎԱՏԵՂ – «...զի չոգան ի հանդիպութեան տեղացն, եւ մեկնեցան ի ժողովատեղաց» (*Եփր. Նիկ., «Սիրոն», 1928, 221*): ԶՅԲ-ն ունի ժողովետղ, Արմ-ը՝ ժողովտեղ:

ԻԴՈՎՏԻՈՆ – «Ի նորա աւուրս երեւեալ գազան ինչ՝ զոր

կոչեն իդովտիոն, ի կարմիր ծովէ, որոյ մարդկան և ձկան կերպարանք էին» (Եւս. քր. Ա. 12):

ԻՆՔՆԱՉՈՒ – «Ինքնաչու, ինքնախաղաց... զարեւն ի մուք շրջէին» (Եմես. ճառ, ԺԱ): Այս օրինակի ինքնախաղաց-ն էլ ըստ երևույթին բառարանագիրները չեն ներառել: ՆՔԲ-ն վկայում է միայն մեկ օրինակ՝ Փիլոնից ինքնաբուխ (ջուր) բացատրությամբ: Մեր օրինակում խոսքը ջրին չի վերաբերում, այլ գորտերի և մորեխների խմբերին:

ԼԵԱՌՆԱՊՈՒՐ – «Բայց մի ոք զմտաւ ածիցէ, եթէ ի հալածանաց լեռնապուր եղեն. ի լեռնէ էջ եղիա եւ քարոզեաց մահ որդւոյն Ախաբու» (Եփր. կցուրդ. Բ, 5): Բառի երկրորդ բաղադրիչը ապրել-ի արմատն է: Վերջինս V դարում ուներ «ազատվել» նշանակությունը՝ իմաստի լայնացմամբ մասն.՝ «ապրել, բնակվել»: Աճառյանը նկատում է, որ «արդեն հին լեզվի մեջ էլ կան պարագաներ, ուր ազատելու հետ մաս կեալ նշանակությունը անբաժան է»: Վերոհիշյալ նախադասության մեջ ապուր-ը «ապրել, բնակվել»-ի ևս մեկ օրինակ է V դարից:

ԼՐԲԱԿԱՆ – «Մատուցեալ նախ ի լրբական կողմն հրէից, ըստ այնմ թէ ամենեքեան շունք են, լիրբք և համերք, որ ոչ կարեն հաջել» (Եւս. ճառ ԺԱ): Այս բառը վկայված է և VII դարից (տե՛ս ՅԱ, 1985, Ն.Բյուզանդացու անտիպ գործերի Մ.Մինասյանի հրատարակումը):

ԽԱՆԴԻՌՆ/ԽԱՆԴԻՐՆ – «Եւ նոյն ազդեցութեամբ դիւացն բարբաճջեն մարդիկ, զծովացուլն ի կովէ ասեն ելալ և զպայն ի գետոյ և զառաւելզն ի շանէ և զխանդիռն ի յիշոյ» (Բանբ. Սատենադ. 1964, 323): Առասպելական կենդանու անուն է: Եզնիկի համապատասխան հատվածում այդ բառը չկա:

ԽԱԻՂԱՍԱՆ – «Հանդերձ մեծապայծառս յաւրիմէք, ընդ մմին՝ խաւդամանս և խըլնանոցս արարեալ կազմէք» (Բանբ. մատենադ. 1973, 15): Հրատարակիչները համարում են ամանի մի տեսակ: Առաջին բաղադրիչը խաւդ (խօղ)՝ բարբառային խորիւ:

Խ(Ը)ԼՆԱՆՈՑ – (տե՛ս վերևի օրինակը): Խըլնանոց-ի առաջին բաղադրիչը թերևս խլնիք կամ խլինք-ն է: Բառը կարելի է թարգմանել «թաշկինակ»:

ԽՈՐԱԿԵՐՈՒՄՆ – «Միով կատարեալ պատարագաւն խնայեաց զոչխարս ի սպանմանէ և զորթս ի խոհակերմանէ և զթռչունս ի յաւշուածոյ» (*Եփր. կցուրդ. ԾԱ*): Բառարանները ունեն խոհակեր, խոհակերական, խոհակերութիւն:

ԽՈՐԱՔՈՒՆ – «... յայնժամ խորաքուն լինէին գլխաւորքն» (*Եմես. ծառ Բ*):

ԽՈՒԱՆՔ «նեղութիւն, չարչարանք»: ՆՅԲ-ն վկայում է այս բառի բայական ձևը միայն՝ խուեմ: Յ.Մանդակունու Ը ճառում կա այսպիսի մի նախադասություն. «Եւ արդ ընդէ՞ր եղկելի և թշուառական զքեզ համարիս... զի սուրբ են յամենայն նենգութենէ եւ յագահաց խռովանաց վայելք նոցա»: Մանդակունու մի նոր ձեռագրում **յագահաց խուանաց** է, որը, ինչպես նկատում է Ե.Դուրյանը «Բայի գոյականը, զոր բառարանք չունին» (*Դուրյան, 1935, էջ 241*):

ԽՍՏՈՏՆ – «Քանզի սակաւք ի թռչնոց են, որ խստոտունք, հաստամագիլք իցեն» (*Բրսղ. Ը, 257*): Ոմանք ուղղում են **խստութիւնք**, որ մերժելի է: Կ.Սուրադյանը նկատում է. «Վերականգնվող խստոտունք բառը անծանոթ է հայ բառարանագրությանը, հայտնի է միայն սույն կիրառությամբ, ուստի և բացատրելի է կարծր, պինդ, պիրկ ոտքեր իմաստով»: Առարկություն չունենալով այս բացատրության շուրջ, նշենք, որ գրաբարում խիստ-հաստ հանդես են գալիս որպես համանիշներ կամ բառային տարբերակներ. հաստապինդ- խստապինդ: Մի խոսքով խստոտունք ուղղումը արդարանում է: **խիստ+մարմնի մաս** արտահայտող բառ կադապարով են նաև խստապարանոց, խստերախ, խստասիրտ և այլն:

ԾԻՐԱՔԱՂ – «... զի ոչ եթէ մոռանամք՝ զոր առաջի արկաքդ, այլ այժմիկ ծիրաքաղ արարաք վասն ձերոյ հրավիրանաւ հաւատոցդ» (*Կիւրդ. կոչ. 52*): Եթե հետագա գրչություն չէ, ապա գործ ունենք բարբառային ձևի հետ. նույն գրքում կա և ծայրաքաղ, որը կանոնական ձև է (*էջ 58*):

ԾՓԻԶ – «Թափեցաւ ի նոցանէ քունն ... և սկսան այպանել զծփիչ երազն» (*Վկայք. 56*):

ԿԱՆԱՆՑԱՔԱՐ – «Կապեցին զոտս և զձեռս և կանանցաբար նստուցին ի ձի մատակ» (*Եղիշ. 137*):

ԿԱՆԽԱՆԿԱՐ – «Նոյնպէս և աստ տային երեսուն արծաթի, զի վաճառեսցի Տեառնորդին ի սպանդ: Երեսուն առ երեսուն, զի կատարեսցի կանխանկար արինակ» (*Եմես. ճառ. Բ*): Այս բառին համանիշ է նախանկար-ը, որը բառարաններում ավանդված է: Ինչպէս ծանոթագրության մեջ նշում է Ակիմյանը, Ոսկեբերանը մի քանի տեղ օգտագործում է նախանկար օրինակ կապակցությունը: Նախանկար օգտագործում է նաև մեր հեղինակը. «Ձի զոր արինակ ի բազում անկեալ չուառութիւնս զնախանկար զգեղ աստուածապաշտութեանն մերկանալով նախագործ, նախակերտ նախաստեղծ մարդն աղքատանայր» (*ԺԲ*):

ԿԱՐՃԱԶԱԻԱԿ «մեկ երեխայի տեր» – «Ոչ ետես մայր զսիրելի իւր և ոչ կարճագաւակ զմիամաւր իւր» (*Եփր. Նիկ., «Սիրոն», 1928, 220*):

ԿՆԱԿԵՐՊ – «Ձայն իմացեալ խուժադուժ կնակերպ մարդիկն և սաստիկ ընդ դէմ կացին» (*Պատմ. Աղեքս. 421*): Այս բառի համանիշն է իգակերպ, որը վկայում է ՆՅԲ-ն, այդ թվում և վերոհիշյալ գրքից:

ԿՐԱՐ – «Եւ միւս եւս ազգ աւտարակերպ ի սոցանէ և անուանեալ կոչի ողորկապատեանք, այսինքն կրաք և խեց-գետինք» (*Բրսղ. է, 223*): Արմ-ը այս օրինակի հղումով նշում է կարք: Ուղղումը կատարում ենք ըստ քննական բնագրի:

ԿՐԿՆԱԾԻՆ – «Նոյնպէս ի նորոգել, ի նորանալ ընդունելով զԱստուծոյ բանն՝ մեծանայր կրկնածինն, վերըստնածին, որ ըստ Աստուծոյ կամացն միաբանել շրջեցին» (*Եմես. ճառ ժԲ*):

ԿՐՕՆԱՏՐՈՒԹԻՒՆ – «Ընդ քաջաբանութիւն նորափառութեան խառնելով և ի ծանօթութենէ ընտելութեան՝ եղբարք ի կրօնատրութիւն արկանելով, փառս որսալով և քան զեղբարս փառաւոր զիս համարելով» (*Եւագր. 382*):

ՀԱՄԱՆՈՒԱՆԱԿՈՉՈՒԹԻՒՆ – «Իսկ եթէ ամենայն ազգ հաւատացեալ և սրբեալ է՝ երիցս երանելի համանուանակոչութեամբն, յայտ է ապա, եթէ հոգին հօր և որդւոյ աստուածութեանն հանդիպի» (*Աթանաս, 184*):

ՀԱՄԱՊԱՐԱԻՈՐԵԼ – «Եւ զի ոչ խառնել պատերազմ ընդ

խաղաղութիւն, քանզի համապարաւորեալ այսօր՝ որ յաղագս մեր պատերազմեալ եկաք» (*Աթանաս. 265*):

ՀԱՍՈՉԱԿԵՐՈՒԹԻՒՆ – «Նոյնպէս եւ աստուածական Առաքեալն զանձն ի մէջ արկեալ համոզակերութեամբ ցածուցանէր զկռիւ հրեական հաւատելոցն և հեթանոսականացն» (*Եմես. ծառ. ԺԱ*): Բառարանները ունեն միայն համոզակեր «համոզող, համոզիչ»: Ընդգծվածը կա և հեղինակի նշված ճառում. «Ձանձն ի մէջ արկեալ ոչ իբրեւ զդատաւոր, այլ իբրեւ համոզակեր»: Բառի կեր բաղադրիչը իրանական *kar/ker* «անել, գործել» արմատն է, որ առկայանում է մի շարք բառերում՝ աղաւթկեր «աղոթարար», խոհակեր «խոհարար» և այլն:

ՀԱՆԳՍԵՏԵՂ – եւ ի հանգստեան խափանին լալիք և զբաւսանք, ի մտանել իւր ի շէն հանգստետող» (*Եփր. Կցուրդ. Գ. 7*): Ըստ Լ.Տեր-Պետրոսյանի՝ այլ ձեռագրերում՝ հանգստատեղ:

ՀԱՆԴԱՐՏԱԿՈՒՆ – «Որ մեղմագնաց և հանդարտակոխն ոտիւք խափանեաց զկառամարտիկս» (*Եմես. ծառ. ԺԳ*): Ճառիս սույն հատվածը ներառված է Սեբերիանոսի ԺԱ ճառում: Այստեղ մեզ հետաքրքրող բառի փոխարեն հանդարտագնաց է:

ՀԱՍՏԱՎԵՐ – «Վերք ի վիրաց ի վերայ դնէին. հաստավեր լինէր բանասարկուն» (*Եմես. ծառ. Դ*): Գրաբարում «սաստիկ վերք» իմաստով գործածվում է խստավեր. *հմմտ.* «Զգուշանամք ի չար նետից նորա խստավեր հարուածոցն» (*Մանդ. Բ.*): Դա իրավունք չի տալիս ուղղել, որովհետև, ինչպես նշել ենք մի առիթով, հաստ և խիստ համանիշներ են: Հենց Մանդակունին օգտագործում է հաստ բաղադրիչով մի այլ կազմություն. «Հաստախոց ի գաղտնի նետից սատանայի» (*ԺԷ*):

ՀԱՐԹԸՆԹԱՑ – «Եւ լուծ միաբան բաժանելոց, մի հարթընթացս ուսուցանէ» (*Եփր. Նիկ., «Սիրոն», 1928, 219*):

ՀԱՓԱՓՈՒՄՆ – «Եւ աղջկանն հափափումն և Դեմետրի խորհուրդք» (*Եւս. Քր. Բ., 53*): Բառը ունի «հափշտակում, առևանգում» իմաստը: Արմ-ը նշում է հափափել բայական ձևը, որպես դարձյալ Քրոնիկոնից եզակի վկայություն:

ՀՄԱԻՈՐԱԿԱՆ «հում, տհաս» – «Եւ ուրումն յանմիտ իշխանաց Հայոց հարցեալ զըղծապատումն հմաւորականս, թէ երբ

լինիցի Արտաւազդայ գալ ելանել ի կապանաց» (*Քանք. Մատենադ., 1964, 327*):

ՀՈՂԶԳԱԾ – «Ի ստեղծանելն ոչ գիտաց Ադամ, եթե յերկրէ ստեղծաւ եւ յորժամ յառնէ ի յարութեան, իմանայ, եթէ հողզգած յարուցեալ հաստատեալ կազմի» (*Եմես. ճառ. ԺԳ*): Հավանաբար երկրորդ բաղադրիչը զգածիլ, հագնել բառի արմատն է: Այլ ձեռագրեր ունեն հողսզած, որը դարձյալ բառարաններում չկա:

ՀՊԱՐՏՈՒՄՆ – «Ամպարիշտն քանզի յանդգնեալ է, զեղու չափ իւր հպարտմամբ նորա» (*Եփր. Նիկ., «Սիոն», 1930, 58*)

ՀՐԱԳԻՆ (տե՛ս Աստվածաշնչին վերաբերող բաժինը):

ՀՐԱՊՈՒՐԱՊԷՍ – «Ըստ որում և չարադես այս այր, որ այժմ ըմբռնեալ առաջի ձեր անցեալ կայ ի մէջ յոխորտութեամբ լի զանձն առնէր հրապուրապէս» (*Պիտ. 391*): Ծանոթագրվում է, որ մի քանի օրինակ ունեն հրապարակապէս, մեկ օրինակ՝ հրապարակէս:

ՀՐԵՇՏԱԿԱԿԻՑ «հրեշտականման» – «Բայց զԱստուած զմարդն միայն բազմապատիկ փառաւորեաց և մտօք մեծացոյց, հոգեխառն հրեշտակակիցս խոնարհագոյնս արար» (*Ազաթ. 138*): (Կից բառի «հար, նման» իմաստները տե՛ս Արմ): Վերոգրյալ հատվածը աշխարհաբար թարգմանվել է. «Բայց Աստված մարդուն հատկապէս բազմապատիկ փառավորեց, մտքով հարստացրեց, դարձնելով հոգեպէս հրեշտակներին խոնարհագույն ընկերակից» (*1983, 149*):

ԶԻԱՄՈՒԼ – Բառը վկայված է Եվսեբիոս Եմեսացու Գ և ԺԱ ճառերում. «Ոչ եթէ հրահանգ ասպարիսաց ձիամոլ արշաւանք իցեն աստ, եթէ ակն ունիցիմք պարգեսս եւ պատիւս առնուլ աստ» (*Գ*): «Ընդ հանկանակողս ուտել և ըմպել, ի գազանամարտիկս և ի ձիամոլս, ի տեսիլս արշավանաց պարապեալ...» (*ԺԱ*): Գրաբարում հաճախական է ձիասէր բառը: Եմեսացու թարգմանիչը նախընտրում է ձիամոլը:

ԶԻԱՊԱՐԾԻԿ – «Նոյնպէս և յովանական զձիապարծիկ գոռոզութիւն խրոխտելոցն քակեաց» (*Եմես. ճառ. ԺԳ*): Ճառի այս հատվածը տե՛ս նաև Սեբերիանոսի ԺԱ ճառում, որտեղ մեզ հետաքրքրող բառի փոխարեն ձիամարտիկ է:

ԶԻԱՍԱՅԼ – «Եւ զայս ասացեալ ի բաց թռեան հաւքն և մեք

անդրեն և առաջնորդ առաք զաստղն, որ կոչի բեւեռ երկնից, որ մեր ձիասայլն» (*Պատմ. Աղեքս., 414*): Հայ մատենագրության մեջ Մեծ և Փոքր արջ համաստեղությունները, Բևեռային աստղը անվանվում են սայլ, սայլակերպ, աստեղք: Ձիասայլը թերևս թարգմանչի նորամուծությունն է:

ԶԻԹԵՆԱԿԱՆ – «Ոչ ի պսակաց ձիթենական տերելոյ ջամամբ պսակել, այլ առ ի ճանաչել և լինել Աստուծոյ» (*Եմես. ճառ. 9*):

ԶՄԵՐՈՅԹ – «Կէսքն անդէն յիւրաքանչիւր տեղիս կան մնան զետեղեալք եւ կէսքըն մաւտ ի ծմեռն խաղան չունն ի ծմերոյթ յաշխարհի հեռաստան» (*Բրսղ. Ը. 260*):

ՃԱԿԱՏԵՏՂ – «Ելէք դուք երէկ ի դաշտն և արեք ընդ նոսա պատերազմ: Ի ճակատետեղն ընդարձակ ելէք և առէք անդ պահ» (*Եփր. Նիկ. «Սիոն», 1930, 56*): ԱԲ-ն ունի ճակատատեղ:

ՃԱՐՏԱՐԱԿՈՐՈՎ – «Ղիւր դէտ չարութեան, զի մի հասցէ մօտ առ քեզ և միւս դէտ ճարտարակորով բարութեանց, զի մի անցցեն զքեւ» (*Եւագր. 326*):

ՃԱԲՃԱՃԵՄԱԿԱՆ – «Տեսանե՞ս զի զճաւճաճեմական անպարտ սիգութիւնն մեղմասոյր հեզութեամբն ցածուցանէր» (*Եւս. Եմես. ճառ. ԺԳ*): Սեբերիանոսի ԺԱ ճառում ներառված այս հատվածն ունի ճաւճեմական, որ և վկայում են բառարանները: Մեր կարծիքով ճիշտը ճաւճաճեմական-ն է, որը ներառում է և ճեմելու գաղափարը: «Վեցօրեայում» հանդիպում ենք ճաւճեալ ճեմացուցանիցէ (*Դ*), ճոճ և պերճ ճեմաւք (*Է*) և այլն:

ՄԱՂ ՄԱՂ – «Հաց կսկւծ, որ նկանն կոչի եւ լինէր այսպէս. սալ ջեռուցանէին, յորոյ վերայ զճարպն թացեալ՝ անաստառ անդ դնէին և ապա մաղ մաղ ի վերայ արկանէին» (*Եմես. Սեկն., 182*): Համեմատելի է Ղարաբաղի բարբառի մըղըմըղ «կամաց, դանդաղ»՝ հ.-ե.*mel-ից, որից մեղմ, մալել:

ՄԱՐՍԻԿԵԱՆ – «Ձոր ոչ կարացին բուժել արիողական կախարդքն և մարսիկեան բժիշկքն» (*Խոր. 226*): Բառարանները, գիտակցելով որպէս հատուկ անուն, չեն զետեղել:

ՄԵՂՄԱԾԱՄ – «դանդաղ ծամելով» – «Ձի գոր ինչ մեծ ի մեծոյ եւ ողջն ողջն կլանիցեն դարձցի միւսանգամ անդրեն ի բերանսն եւ ապա մեղմածամ որոճելով մանրեսցի» (*Բրսղ. Ը.*

308): Այլ բնագրում մեղմաժամ, որը վկայում է ՆՅԲ-ն: ճիշտը, անտարակույս, մեղմաժամ-ն է:

ՄԵՂՄԱՍՈՅՐ (տե՛ս ճառճանապարհ-ի օրինակը): Դամանիչ է մեղմագնաց բառին, որ թերևս առաջինը կիրառել է դարձյալ Եմեսացու թարգմանիչը. «Մեղմագնաց և հանդարտակոխն ոտիւք խափանեաց զկառամարտիկս...» (Մ.տ.):

ՄՇԱԿԱՊԵՏ – «Մեծն մշակապետ ճշմարտութեանն առաքել հարկիս եւ թարուքս ի գործ» (Եմես. ճառ. ԺԳ):

ՅԱԻՂՈՒԹՅԱԿԱՆՈՒԹԻՒՆ – «Եթե ոչ ինչ հաղորդութիւն ազգականութեան է մարմնոց առ անմարմնականս. զի մարմին յաղուածականութեան և անմարմին պարզական» (Եմես. ճառ. Բ):

ՅԵՏՍԱՅԱՐՈՒԹԻՒՆ – «...չճանաչողութիւնն Պերոզի և ի յետսահարութիւն բռնադատեաց զիս մեռանել» (Փարպ. 166): 1895 թ. թարգմանության մեջ՝ «Պերոզի չճանաչողութիւն և դէպի յետ մղելն», 1982թ.՝ «Պերոզի արհամարհանքն ու ճնշումը քեզ ստիպեցին դիմել մահու»:

ՆԵՏՈՋՆԻ – «Բերին և նետոզնոյ փուշ, որ էր վեց կանգուն և այլ բազում ժանիս ձկանց» (Պատմ. Աղեքս. 426): Արմատական բառարանում կա ուզոմուրենայց ձևով, որը այլ ձեռագրերում սազոմորեաց է: Աճառյանը դիտում է աղավաղ ձև և ստույգ համարում միայն երկրորդ բաղադրիչը «մուրենա», որը ձկան մի տեսակ է: Քննական բնագրի ծանոթագրություններում Դ.Սիմոնյանը նշում է. «Եթե ելնելու լինենք այս ձեռագրի՝ հունարեն անունները հայերեն համարժեքներով ներկայացնելու (հաճախ լրացուցիչ բացատրելու) հետևողական միտումից, կարող ենք ենթադրել, որ «նետոզոմին» էլ հենց «մուրենայի» նորաստեղծ հայերեն համարժեքն է, որն իբրև անծանոթ բառ հետագա ընդօրինակումների 'ժամանակ կարող էր աղավաղվել» (էջ 590):

ՆԵՐՄԱՔՐԵԼ – «Անտարրաբար և միապես ներմաքրելով զստորինսս և կենածնելով մեզ զլոյսն ճշմարիտ» (Աթանաս. 295):

ՆՄԱՆԵՂ – «Եւ եթէ վասն միջոյ անաւրենութեան հարան Գաղիղեացւոցն նմանեղ են» (Եփր. Նիկ. «Սիոն», 1930, 59):

ՆՊԱՍՏԱԿԱՆ – «Եւ եթէ զժանտական, զժանտագործ

գաւրն նպաստական երեւելի կոչէ և իբրեւ զբարեաց իմն պատահարս գատեցիկն յԱստուծոյ համարի» (*Եմես. ճառ. ԺԳ*):

ՇԱԲԱԹՈՒԹԻՒՆ – «Որ և բովք ի շաբաթութեան ամացն աշխատութեանց» (*Ագաթ. 346*):

ՇԻՇԱՂԲ «այսք» – «Զդէս հալածեաց, զշիշաղս խռովեաց. զմահ մեռոյց, զթշնամին սպան, զանէծս եբարծ» (*Եմես. ճառ. Է*): Արմ-ը Երեմիայի բառարանից հղում է շիղշայք: Ճառից բերած մեր օրինակը հավաստում է բառի գոյությունը. հակասություն կա բառարանի և ճառի օրինակի ուղղագրության հարցում: Մեր կարծիքով ճիշտը ճառի վկայած օրինակն է, քանի որ այն հանդիպում է նաև մեկ այլ տեղ՝ դարծյալ V դարից. «Եւ առնուն զմարմին սուրբ: Ուտեն զհաստեայս ընդ շիշաղս եւ ընդ սուրբս զսրբութիւնն» (*Եփր. Նիկ. «Սիրոն», 1929, 188*):

ՇԼԵԶ(Ն) – «...եւ զոր շլեզն կոչեն, թէ զվիրաւորս պատերազմի լիզեն և ողջանան» (*Քանք. Մատ. 1964, 324*): Հաջորդ նախադասության մեջ կա առաւելզն. «Զպայն իմ իսկ աչաւք տեսեալ է և ոմն զի զառաւելզն իմ իսկ տեսեալ է լիզելով...»: Շլեզ/առւելզ հազիվ թէ գրչագրական շփոթ լինի: Ըստ երևույթին դրանք համանիշներ են՝ տարածքային տարբերակներ: Եզնիկի համապատասխան հատվածում առւելզ կա, իսկ շլեզ՝ ոչ:

ՈԳԵՂԵՆ – «Վասն տարածութեանն միայն և արագութեան կոչին հրեշտակ և դէւք և հոգիք մարդկան՝ ոգեղէնք» (*Եզն. 92*):

ՈՂԶԱԹԱՂ – «Լի են տունք քան զգերեզմանս, ողջաթաղ և ողորմ մեռելովք» (*Եփր. Նիկ. «Սիրոն», 1928, 158*):

ՈՂԶԱՊՏՂԵԼ – «Զոիք նորա ողջապտղեսցին հանապազ ըստ արեւ երկիցս» (*«Էջմիածին», 1966, ԺԱ, 68*):

ՈՎԴԱԿՈՆ – «Եւ առ նովաւ երեւեալ դարծեալ ի Կարմիր ծովէ այլուն ումեմն՝ նման ձկան և մարդկան, որուն անուն կոչէր ովդակոն» (*Եւս. Քր. Ա. 13*):

ՈՒՂԱՍԱՍ – «Զէ պարտ նենգել զբանս ուղղասացս, այլ զհետ երթալ աստուածապաշտ մտաց» (*Եմես. ճառ. Բ*): Բառարանները ունեն ուղղասացութիւն:

ՈՒՆԿՆԱՐԿԵԼ (տե՛ս Աստվածաշնչին վերաբերող բաժինը):

ՉԱՍՈՒՄՆԵԼ – «... զի չամուսնել եւ չամուսնանալ ոչ մերոյ

բնութեան է, այլ հրեշտակաց» (*Եմես. ծառ. Ե*): Այս օրինակում ուշագրավը բայի ժխտումը չէ, այլ **չամուսնել** ձևի առկայությունը: Բառը վրիպակ համարելու հիմք թերևս չունենք: Եթե այն ուղղենք **չամուսնանալ**, ապա նույն բառի կողք կողքի կիրառությունը տվյալ դեպքում անիմաստ կլինի: Ինչպես գիտենք, գրաբարի վաղ շրջանում **ան/են** միջնաձանցները պահել էին իրենց կերպային արժեքը՝ հանդես գալով երբեմն որպես տևական կերպի ցուցիչներ: Սակայն նշված օրինակում երկու բայաձևերի միջև այդ հակադրությունը նշմարելու հիմք չկա: Գուցե ինչ-ինչ չափով առկա է կերպասեռային այլ հակադրություն՝ **ամուսնացնել/ամուսնանալ**: Դա հնարավոր է, բայց ամենայն հավանականությամբ թարգմանիչը տարբեր բայաձևերի կիրառումով փորձել է արական-իգական սեռ տարբերակումը տալ, որը հաստատում է նախադասության շարունակությունը. «... ոչ ուսուցին հայր և մայր՝ կուսին կամ տիկնոջն չամուսնանալ» (ընդգծումը մերն է – Լ.Յ.): Հիշենք, որ սեռային տարբերակման որոշ արհեստական ձևեր գրաբարում առկա են: Օրինակ, Եվսեբիոսի «Եկեղեցական պատմության» հայերեն թարգմանության մեջ՝ «Եւ ասաց զնոցանէն, եթէ կոչին հանգստարարայք և կանայք **հանգստարարիթայք**» (ընդգծումը մերն է – Լ. Յ.): Սեռի զանազանության համար թարգմանիչը կցել է ասորական ita իգականակերտ մասնիկը:

ՉԱՐԱԲԱՐԵԼ – «Այնպիսի՞ արդեւք արար զնա Աստուած, եթէ ինքնին այնպիսի չէր և յօժարեաց ի չարաբարել» (*Եզն. 52*): Ա.Աբրահամյանը աշխարհաբար թարգմանության մեջ ընդունելի է համարում **չարարարել** ուղղումը և այդ սկզբունքով էլ թարգմանում է. «Բայց կամովին համաձայնվեց չարիքներ գործել»: Կարելի է և չուղղել, երկրորդ բաղադրիչը դիտելով բար(ք) «բնություն, բնավորություն» բառը, մանավանդ որ V դարից ունեն **չարաբարոյ, չարաբարութիւն**:

ՉԵԻԱՅԱՍ – «Որ պահեն անարատ զմանկունս յորովայնս և չարժեաց, ուղղաց զլեզուսն չեւահասս յաւիրնութիսն» (*Եմես. ծառ. ԺԳ*):

ՊԱԻՇՏԱԻՆԻԿ – «Եւ արդ հարկ է, եղբարք, խնդրել, եթէ ո՞ր գործիցեն մեծամեծս գործս առաքեալն քան զՏէրն, զի մի

բանք պաշտաւնիկք գործիցեն և ոչ գործք ճշմարտութեան վկայեսցեն» (*Եմես. ճառ. Ժ*):

ՊԱՏԵՐԱԶՄԱԻՈՐ – «Եւ ոչ զրահք պիտոյ են անդ, զի սպառեցան նետք թշնամւոյն անդադար պատերազմաւորաց» (*Եփր. Կցուրդ. Գ. Ծ*): Ըստ Ակինյանի՝ այլ տարբերակում պատերազմաց է, Լ.Տեր-Պետրոսյանը ճիշտ է համարում անդադար պատերազմաւորաց-ը:

ՊԱՏՄԱՆ – «Նուագագոյն քան զնոսա արար զսա չափով. մարմնով փոքր-ինչ հասակաւ պատման»: Այս հատվածին հանդիպել ենք Ոսկերեանի՝ Եփեսացու մեկնության մեջ (Մատենագրութիւն նախնեաց. *Ոսկերեան, Վեներտիկ, 1862, 867*): Պատման այստեղ ունի «չափ» իմաստը: Այդ է հուշում նաև նույն նախադասության մեջ մի քանի տող վերև՝ «վասն այնորիկ կազմեաց աստուած մարմնոցս չափս...» միտքը: Նշենք, որ առհասարակ գրաբարում հաճախական է չափ հասակի կապակցւթյունը: Բանասեր Ե. Դուրյանը իր ուսումնասիրութիւններից մեկում (*Դուրյան, 1935*) պատմանը կասկածելով ուղղում է պայման: Իմաստի տեսակետից այս ուղղումը մերժելի չէ: Ըստ Արմ-ի Ագաթանգեղոսի անպայման սքանչելի կապակցւթյունը նշանակում է «չափից դուրս, չափազանց»: Նշենք, որ պայմանը իրանական փոխառւթյուն է: Իրանական լեզուներում բառի տարբերակներից մեկը ամենայն հավանականութեամբ եղել է *patman. *հմմտ.* patmanak «ղաշինք», որտեղ pat- նախամասնիկ է, որ հանդիպում է հայերենի իրանական մի շարք փոխառւթյուններում. պատմութեան, պատմութեան, պատկեր, պատրաստ... և այլն: Այժմ իրանագիտութեանը հայտնի է մի երևույթ ևս: Պարթևերենի pat մասնիկին միջին պարսկերենում համապատասխանում է pay: Ըստ այդմ էլ տարբերակվում են հայերենի իրանական փոխառւթյունները համապատասխանաբար հյուսիսարևմտյան (պարթևական) և հարավարևմտյան (միջին պարսկական) շերտի: Ուրեմն, պատման-ը պետք է համարել փոխառւթյուն պարթևերենից, որն իմաստով և ձևով հին է, քան հայերենում հաճախական պայման-ը:

Եթե՝ մեր նկատառումները արդարաւան, ապա գործ ունենք հնագույն մի գեղեցիկ վկայութեան հետ, որն անպայման

պետք է բառարանագրել:

ՊԱՏՈՒԱԿ – «Մնաց յորթս պատուակ և անդ ոչ մնաց մնացորդ: Ողկոյգք միայն կթեալք լինին, մնայ որթն զգուշութեամբ» (*Եփր. Նիկ. «Սիոն», 1928, 159*): Ծանոթագրության մեջ էլ նշվում է որպես այլուստ անծանոթ բառ: ՀՀԲ-ն (*հատ. 1*) ունի պատուակ «պատվող, հարգող, մեծարող»: Նշված իմաստները այս օրինակին անհարիր են: Հետևաբար ՀՀԲ-ի վկայությունը այս օրինակը նկատի չունի, այսինքն՝ բառը պետք է դիտել որպես բառարաններում չարձանագրված:

ՊԱՏՈՒԱՍԻԿ – «Ձի եթէ Աստուած ի բուն ոստն ոչ խնայեաց, ի քեզ, ի պատուաստիկդ, զիա՞րդ խնայեսցէ» (*Եմես. ծառ, ԺԱ*): Նկատի ունի Պողոս առաքյալի: «Առ Հռովմեացիս» թղթի ԺԱ 20-21 հատվածը. «Իսկ արդ ասիցես. ոստքն փշրեցան, զի ես պատուաստեցայց... Աստուած ի բուն ոստն ոչ խնայեաց, զուցէ երբեք և ի քեզ ոչ խնայեսցէ»: Ինչպես տեսնում ենք, Եմեսացու թարգմանիչը ի քեզ բառին ավելացրել է պատուաստիկդ գեղեցիկ մակդիրը, որը զարմանալիորեն տեղ չի գտել գրաբարի բառարաններում:

ՊԱՏՈՒԱԾ – «Մեռաւ արուեստագէտ ի վերայ հանդերձից, մինչդեռ կցեր զպատռուածս» (*Եփր. Նիկ. «Սիոն», 1928, 278*): Խորենացին ունի պատառուած:

ՊՏՂԱՏՐՈՒԹԻՒՆ – «Երեւեցաւ յիս հրամանակատարք բանի քում... զպտղատրութիւն տեղւոյն հատուցանելով» (*Փարպ. Թղթ. 195*): Այլ ձեռագրերում պտղաբերութիւն: Բառարանները ունեն պտղատուութիւն:

ԶՐԱՄԲԱՐԶ – «Ջրամբարծ ի ծանրութիւն ծովու, որ մատնէ ապաւինի ի փայտ...» (*«Սիոն», 1929, 31*):

ՍԱՅՄԱՆԱԿՑՈՒԹԻՒՆ (*Փարպ. 3, 74, 121, 132, 136, 148*):

ՍԳԱԾ(Զ) – «Իբրեւ ի վերայ մեռեալ եղբարց ձերոց, թուխ սգոյ զգեցայք, բայց ոչ հանդերձ թղխս զոր զգենուն սգածք վասն մեռելոց, խորգք զգեցայք վասն սգոյ մաւրն» (*Եփր. Նիկ. «Սիոն», 1930, 53*): Ծանոթագրության մեջ ենթադրվում է սգազգածք: Բայց կարելի է և չուղղել, դիտելով սուգ և ածել բաղադրիչներով կազմություն՝ «սուգ անողներ» իմաստով:

ՍԳԱԾԵՄ – «Ձի եթէ այսպիսի է տկարութեամբ սգածեալ

հպարտանայ և չճանաչէ զարարիչն եւ անարգէ զստեղծիչն» (*Եմես. ճառ. ԺԲ*): Սուգ արմատից սգածեմ բառարաններում ավանդված կազմությունը չէ (իմաստը անհարիր է): Սէգ արմատի իմաստը ավելի հարիր է, բայց դժվարություններ է ստեղծում *սէգածեալ-սիգածեալ-սգածեալ հնչյունափոխությունը:

ՍԿԶԲՆԱԳՈՐԾ – «Որոյ սկիզբն արարեալ ուսուցանելոյ յամենաստեղծ յսկզբնագործ ժամանակէն... ամենեցուն աւանդեաց զճշմարիտ գիտութիւն» (*Ազաթ. 133*): Վ.Առաքելյանը թարգմանում է «սկզբում արված» (*1981, 155*): Կարելի է թարգմանել և «նախաստեղծ»:

ՍՆԱՏՈՒՆ (տե՛ս դաշտանատուն-ի օրինակը):

ՍՏԱՅԼԵԼ – «Եւ այլ եւս կամէի զայսպիսի աստուածականաց ճառել. քանզի չիք յագուրդ զԱստուծոյ պատմել. և ոչ ստայլել և ձանձրանալ ի քրիստոսական խօսից» (*Եմես. ճառ. Գ*): Ակինյանի կարծիքով սխալ գրություն է և պետք է կարդալ սմայլել «կշտանալ, հագնեալ» (*ծան. 92*): Բառը կարող է վրիպակ չլինել: Գրաբարում այլ-ը ունի բազմաթիվ իմաստներ ու առումներ: Ստայլել թերևս կազմված է ըստ նախդրից և այլել (*հմմտ. այլայլել*) «օտարանալ, խորթանալ»: Ըստ այդմ, ըստայլել>ստայլել պետք է նշանակի «խորթանալ, օտարանալ, ձանձրանալ»: Ըստ>ստ-ի համար *հմմտ. ըստանձնել-ստանձնել*:

ՍՏԵՆԱՅԱՏՈՅՑ – «ոչ ծծկեր (երեխա), կրծքից կտրված (երեխա): Այս բառը վկայված է երկու անգամ. «Կոխեաց զծերս իբրեւ զհասեալս եւ զերիտասարդս իբրեւ զխայծեալս: Չստեմահատոյցս իբրեւ զվաղահասս և զտղայս իբրեւ զաւշարակս» (*Եփր. Նիկ., «Սիրոն», 1928, 187*): «Ձի որ՝արար զնոսա յղիս, արասցէ զնոսա մանկունս, որ արասցէ զնոսա ստեմահատոյցս արասցէ զնոսա պատանիս» (*Մ.տ., 1929, 189*): Աստվածաշնչում կա հատուցանել ի ստեմէ: «Սինչեւ ելցէ անդր մանուկս, յորժամ հատուցից զսա ի ստեմէ» (*Ա. Թագ. Ա. 22*):

ՍՏՈՒԵՐԱԶԵԻ (տե՛ս ահեղաձև-ի օրինակը):

ՍՐՈՒԻԼ – «սրուիլս հարկանեն երիտասարդք և ջնարաւորք երգեն ջնարիւք, երգեցիկք փողովք իւրեանց և արուեստական

նուագաւք իւրեանց» (*Եփր. Կցուրդ Գ. Ծ*): Երաժշտական գործիքի անվանում է: Իմաստային տեսակետից հարմար է ռուս. свирель, բուլղ. свирол «շվի»՝ սլավ. *svьr-ից: Սրանց զուգահեռներն են լիտ. surma «շվի», հնդ. svarati «հնչում է», sváras «ծայն», սակայն սրանցից ոչ մեկը հայերենի անմիջական փոխառության աղբյուրը չի կարող լինել:

ՎԱՂԱԽԱՍՈՒՐ – «Փախիցո՛ւք ի փառաց, զի վաղախա-
մուրք են. ընկալցո՛ւք զբանն Աստուծոյ, որ մնայ յաւիտեան»
(*Եւազր. 366*):

ՎԱՅՐԱՍՏԻՍ – «... ճշմարիտ է բժշկական արուեստն, որ ի
հնոցն նախնեաց, որ զբնութիւն մարմնոց մարդկան կամէր
հաւաստեալ ճշգրտել, թէ որ՞ ինչ դեղ յո՞ր վայրաստիս ան-
դամոցն ազդիցէ: Զայլոց աղիսն հերձելով, այլոց պաճարանս
փրկութեան հնարէին» (*Եմես. ճառ. ԺԱ*): Հստակ չէ երկրորդ
բաղադրիչ աստիս նշանակությունը: Աստի «այստեղ», աստիք
«մարդ, արարած», աստի «հաստատ»: Այս բոլոր բառերը նշված
իմաստներով ինչ-որ չափով հարմարվում են վերոգրյալ համա-
տեքստին: Հստակ չէ նաև բառի անջատ կամ միասին գրության
հարցը: Վայրաստիս կարող է նշանակել նաև «ներքին օրգան-
ներ»: Հաջորդ նախադասությունն էլ կոնկրետ որևէ իմաստի
հիմնավորում չի տալիս. «... արբուցեալ դեղս կենդանւոյն հեր-
ծուին. զի մինչ դեռ աղիքն խլրտիցեն, իմանայցեն զազդուածս
դեղոյն»:

ՎԵՐԱՀԱՆԴԻՍԱՆԱԼ – «... և տնկոցն վերահանդիսանալ
հասակ ստեղն վերածնութեամբ քաջապտուղ և բարեսաղարթ»
(*Մամբրէ, 78*):

ՎԵՐԱՏՐԱՊԷՍ – «Հիմունք վերատրապէս սկզբունք են
աստուածային խորհրդոցն» (*Բանբ. Մատ., 1986, 271*):

ՎԵՐԱՆԿԻԻՆ – «Քանզի խաչն, որ կանգնականն՝ գյաղ-
թականն ցուցանէ, վերնանկիւնն գյաղթութիւնն ցուցանէ»
(*Ազաթ. 243*):

ՎԵՐՍՏՆԱԾԻՆ (տե՛ս կրկնածին-ի օրինակը):

ՏԱՐԱՎԱՏՆԵԼ – «Խաշինք տարավատնեալ ցրուեցան ընդ
խորխորատս և յառապարս»: Հանդիպում է Մանդակունու մի
նոր ձեռագրում, որը հրատարակված ճառերի հետ համեմատել

և տարբերությունները մանրակրկիտ վեր է հանել Ե.Դուրյանը (*Դուրյան, 1935*): Տպագիր օրինակում մեզ հետաքրքրող բառի փոխարեն գալլավատնեալ է, որն ի դեպ գրաբարում հաճախական չէ, և ՆՅԲ-ն բերում է որպես միակ վկայություն: Անվերապահորեն չժխտելով գալլավատնեալ-ի հնարավորությունը՝ վերոհիշյալ համատեքստում ավելի հարմար ենք համարում տարավատնեալ-ը՝ տար «հեռու» և վատնել «ցրվել» բաղադրիչներից:

ՏԱՐԵԻԱԾԵՄ – «Մարմնոյ բարի է ի միայնում տան, քանզի ոչ տարեւածեն զնա ցանկութիւնք» (*Եփր. Կցուրդ Բ. 5*): Համանիշ է տարուբերեմ-ին: Առկա է ածեն «բերել» բառով կազմված մի գեղեցիկ վկայություն, որն ըստ երևույթին հաճախական չի եղել V դարում:

ՏԳԵՂԱԲԱՐԲԱՌ «տգեղածայն» – «Եւ կէսքն բարբառովք են և կէսքն՝ անբարբառք, կէսքն՝ գեղեցկածայնք և քաղցրաբարբառք, եւ կէսքն՝ խստածայնք և տգեղաբարբառք» (*Քրտղ. Ը. 260-261*):

ՏԵԱՌՆԱՇԱԿԵՐՏ – «Սոյնպէս և յառաքելարանս տեառնաշակերտացն, սոյնպէս և ի վկայարանս մարտիրոսացն ամի մի ժողովեալք... ցնծային» (*Քուզ. 7*):

ՏՈՒԱԶԻ – «Նորոգեցաւ տուածիոցն ասպարես և յաղթեր Տիբերի կայսեր չորք ձիքն» (*Եւս. Քր. Ա. 306*): Բառը նշանակում է երկծի: Այդ կարելի է հաստատել հետևյալ փաստարկներով. ա) Լատիներեն թարգմանության մեջ բառին համապատասխանում է հուն. *դուխպպոն*-ը, բ) երկծի վկայված է միայն դարձյալ Եվսեբիոսի Քրոնիկոնում, որից երկու վկայություն բերում է ՆՅԲ-ն: Քրոնիկոնի թարգմանիչը հունարեն համապատասխան բառից թարգմանել է միայն երկրորդ՝ «ծի» բաղադրիչը:

ՏՐՈՒԿ – «Եթէ զնա յառաջագէտ գիտութեամբն գիտեր աստուած, զիա՞րդ յառաջագոյն ծանուցեալ ի պոռնկութիւն մատներ, ընդէ՞ր եւ առ հի՞մ մարգարիտն յառաջանալթ ի ցեխ և ի տիղմ թաւալէր: Չայս ամենայն տեսանես և չհամարի՞ս զբնութիւնն... խտրոց կամ տրուկ» (*Եմես. ճառ. ԺԱ*): Ծանոթագրվում է, որ մեկ այլ գրիչ տ-ի վրա գրել է մ, և առաջարկվում է կարդալ մրուկ: Ասենք, որ բառարանները այդպիսի բառ էլ չունեն: Մեր

կարծիքով տուր բաղադրիչը չպետք է ուղղել. *հմմտ.* խոտորատուր բառը:

ՓԱՅՏԱՍՈՒՐԲ – «Ձոր օրինակ չարչարանաւքն զչարչարանսն եբարծ և մահուն զմահն կապեաց և փայտասուրբ խաչին զհակառակորդին զգաւրսն խայտառակեաց» (*Եմես. ճառ. ԺԳ*): Սեբերիանոսի ԺԱ ճառի համապատասխան հատվածում «... և մահուամբ զմահ կապեաց և փայտիւ սուրբ խաչին...» (*198*) չկա փայտասուրբ բառը, որն ընդհանրապես չկա և բառարաններում: Կարելի է կարծել, որ առկա է փայտեա սուրբ խաչին անջատ գրության աղավաղման փաստ, բայց ե-ի սղումը թույլ է տալիս ենթադրելու, որ ճառերի թարգմանիչը ստեղծել է հոդակապավոր նոր բարդություն: Այլ բան է, որ այն հաջողված նորակազմություն չէ:

ՓՈՒՆԱՐԻՆԱԿ «դիմաց, փոխարեն» – «Ոչ ծրի, այլ վարձուցն փոխարինակ... ըմբռնեսցեն յանծինս իւրեանց զարքայութիւնն Աստուծոյ» (*Ագաթ. 355*):

ՓՔԱՅԵՇՏ «հեշտասեր» – «Ոչ շնայցես. զի կարծեմ ամենայն ուրեք յաշխարհի մեծ փքահեշտ ցանկութիւն և ոչ ինչ մասն ի զաւրութենէ սորա ճողոպրել կարէ» (*Փիլ. ճառք. 1892, 268*):

ՔԱՂՅՐԱԼՈՅՍ – «Ելին տեսուչք ի տեսչութիւնս ընդ հանդիպել երից ժամուց: Ի ժամու զի քաղցրալոյս եմուտ արեգակն քաղաքին և զրկեցաւ ի լուսոյ» (*Եփր. Նիկ. «Սիրոն», 1928, 94*):

ՔԱԶԱԶԱՐԴՈՒԹԻՒՆ – (տե՛ս Աստվածաշնչին վերաբերող բաժինը):

ՔԱԶԱՐԴԱՐՈՒԹԻՒՆ – «Բայց երկասիրութիւն՝ քան ողջախոհութեան եւս քաջարդարութեան լինի առիթ. վասն զի ոչ յանիրաւ յափշտակութենէ հրամայէ մեծանալ այլ արդար վաստակոյ գնել յԱստուած զամենայն բարիս» (*Պիտ. 431*):

ՔԱՐՈՋԱԲԱՐ (տե՛ս դիմառնաբառ-ի օրինակը):

*

* *

Նշենք մի շարք բառեր, որոնք արժեքավորվում են V դարի բառապաշարը ըստ հնարավորին ամբողջական ներկայացնելու, ինչպես նաև պատմական բառարանի կազմման տե-

սանկյունից: Ներքոհիշյալ բառերը արտացոլված են գրաբարի որևէ (հիմնականում մեկ) բառարանում, բայց կամ չկան ՆՅԲ-ում՝ համապատասխան ժամանակագրային ու հեղինակային վկայությամբ, կամ եթե ՆՅԲ-ում կան, ապա վկայություններն ուշ շրջանից են:

Անկուշող «աքացող» – «Այսպիսի ինչ երիւար տրմուղ աներասանակ էր Պաւղոս, չանսական աստուածապաշտութեանն սանծանց, անկուշող, կցացող քրիստոսական օրինացն» (*Եմես. ճառ. ԺԳ*): Բառը այստեղ փոխաբերական իմաստով է. «չլսող, չենթարկվող»: Վկայել է միայն ՅՅԲ-ն: Հղումը ուշ շրջանից է:

Անքաղցական – «Քաղցեալ անքաղցականն յորժամ կամեցաւ քաղցնուլ» (*Ես. ճառ. Դ*): ՆՅԲ-ում այս բառով եղած վկայությունը Գրիգոր Նարեկացուց է:

Աջողածեռնագոյն – «Բազում ամբոխս արի արանց և որք ի տէգ նիզակի և յաղեղն և ի սուսեր աջողածեռնագոյն՝ գունարէ» (*Խոր. 65*): ՆՅԲ-ն այս օրինակը տալիս է աջողածեռն ձևով՝ աջողածեռն բառահոդվածի տակ: ՅՅԲ-ն ունի աջողածեռնագոյն՝ հղումը Խորենացուց:

Բռնաբարութիւն – «Այլ բռնաբարութիւն և միաբանութիւն և հրաման Աստուծոյ, մանաւանդ առ նախնեօքն» (*Քուգ. 60*): Արմ-ը հղում է որպէս նոր բառ: Կա ՅՅԲ-ում՝ տե՛ս բռնագրօսութիւն հղումով:

Գեղեցկադիմակ – «Ձկոյս մի գեղեցկադիմակ, ի քերցն Արտաւազդայ, գողացեալ... ի կեսարացւոց քաղաքն ապրեցուցանէր» (*Խոր. 217*): Դիմակ «կերպարանք», ծել (միջ. պրս. dēmak) բառից կազմված բարդություն է: Ըստ երևույթին հեղինակի կերտած բառերից: ՅՅԲ-ն ունի «գեղեցկադէմ, գեղեցկատեսիլ» նշանակությամբ, բայց օրինակի հղում չկա:

Գետնածին – «Հաւատք զմարդ գետնածին խորհրդակից երկնաւորին Աստուծոյ առնեն» (*Եմես. ճառ. ԺԲ*): ԱԲ-ն ունի այս բառը՝ «գետնի երեսը բուսած» բացատրությամբ: Գետնածին այստեղ նշանակում է «արարած, մարդ»: Գրաբարում ավելի հաճախական է երկրածին, հողածին:

Գետնաթռիչք – «Վասն այսորիկ գրեցաւ հոգւով առ ի

ցոյցս, զի և ի հրեշտական թևոցն հատաւ. քանզի են նորա թելք, այլ գետնաթռիչք են նորա թելք» (*Իսիւք. Բ. 88*): Ունի ՋԲ՝ «որ թռչի մոտ առ գետին» բացատրությամբ:

Գիշերադէմ «երեկոյան» – «Գիշերադէմ երեւեցուցեալ չղջիկանսն խաւարացուցանէ զոգիս» (*Եւագր. 64*): ՆՅԲ-ն ունի այսպիսի մի բառ՝ Գոշից, բայց այն ունի այլ նշանակություն՝ «սևադէմ»:

Ետեւախաղաց «ծորուն» – «Եւ ծանրաբեռն ծանրութեամբ մեղերն... լաստակոտոր զգուբս մաղոցն առնիցէ եւ իւրովն ետեւախաղաց խոնաւ բնութեամբ արտաքոյ ամրածածուկ շտեմարանացն ծորեալ ելեալ հեղուցու» (*Քրսդ. Ը. 265-266*): Ունի ՅԴԲ:

Թեթևասիրտ – «Որ վաղվաղակի հաւատայ թեթևասիրտ է, եւ որ մեղանչէ յանձն իւր յանցիցէ» (*Սիրաք, «Էջմիածին», 1966, ԺԱ, 63*): Հրատարակիչը ծանոթագրում է, որ բնագրում թեւասիրտ է: Ուղղումը կատարված է ըստ հունական բնագրի: ՅԴԲ-ին ծանոթ է այս բառը՝ նույն վկայությունից:

Լեզուավար – «Մի զանձն քո ի սաստիկ բիծ չարչարանաց սովորեցուցանէր և ընդ մոսա ի լեզուավար ախտէ անտի չկարծիցես» (*Եւագր. 86*):

Կերելուրաց – վկայված է Գիրք թղթոցում. «... զի վասն հեբրայեցւոցն ասաց զկերելուրաց և զաստուածամարտաց ազգն» (*ՀԱ, 1914, 323-324*): Այս գեղեցիկ բառը ունի միայն Արմը: Համապատասխանում է հուն. «անշնորհակալ, երախտամոռ» իմաստին: Ժողովրդական մտածողության կնիքն ակնհայտ է *հմմտ. ուտող-ուրացող*:

Կիսաբերան – «Ապա կաղս ի կաղս ընդ քիմս կիսաբերան ծանաթական խղճին ասէր» (*Եմես. ծառ. Ե*): ՆՅԲ-ում վկայված է միայն այս օրինակը՝ այլ վերագրումով:

Կշռողութիւն – «Ոչ է յաղթութիւն ի բազումս և ի սակաւս, այլ ի վերին կշռողութեան ձեռին» (*Փարսլ. 121*): Բառարանները ունեն կշռութիւն: Կշռողութիւն վկայում է միայն ՋԲ:

Կտուց – «Քանզի ոչ եթէ ամենայն լեզուն խաւսի, այլ փոքր մի մասն կտոցոյն» (*Եմես. ծառ. ԺԲ*): ՆՅԲ-ն նշում է երկու վկայություն ուշ շրջանից, մեկը՝ Նարեկացուց:

Հետարածի – «խնդայր և մատնիչն իբրեւ ուղղութիւնս ինչ կատարեալ: Երթայր հետարածի և Պետրոս կասկածագին ի կանխասաց ուրացութենէն» (*Եմես. ճառ. Ե*): Նախ՝ բառածնի մասին: Միայն Արմ-ն է նշում այս ձևը՝ այլ հեղինակից: «Հետարածի տեսանել թէ յո երթայցեն»: Աճառյանը կասկածում է, որ կարող է լինել հետարած ի տեսանել: Մեր օրինակի ծանոթագրության մեջ Ակինյանը նշում է, որ մեկ այլ ձեռագիր ունի զհետ կատարածի: Սակայն նա ճիշտ է համարում հետարածի ձևը, որպէս զուգահեռ բերելով Ոսկեբերանից մի հատված, բայց այս հատվածում էլ գրությունը անջատ է. «Քանզի այնպէս իսկ միշտ սատանայ ջանայ յամենայնք հմարս գտանել, ոչ ընդ ուղիղ ճանապարհն գայ եթէ զգուշանայցենք, այլ զարտուղի հետ արածի» (*Ոսկ. Պող. Ա. 547*): Նկատենք, որ Մանդակունին էլ ունի մի նախադասություն. «Վասն զի գող է և ոչ ընդյայտնի ճանապարհն գնայ՝ եթէ զգուշանայցենք, այլ գաղտնի և զհետ արածէ և անակնածելի տայ արհամարհել զմեծամեծս պատուիրանացն» (*Ե 35*): Աճառյանը Արմ-ում հետարածի մեկնում է «լրտեսելու համար գաղտուկ կերպով»: Բերված բոլոր օրինակներում այդ իմաստը առկա է: Սակայն Եմեսացու ճառից քաղված օրինակում թերևս ունի նաև «հեռվից հետևել, հետևից գնալ» իմաստը, որի հաստատումն է Մատթեոսի Ավետարանի այն հատվածը, որտեղ խոսվում է Քրիստոսին բռնելու և Պետրոսի արարքի մասին. «Իսկ նոցա կալեալ զՅիսուս ածին առ Կայիափա քահանայապետ՝ ուր դպիրքն և ծերք ժողովեալ էին: Եւ Պետրոս զհետ նորա երթայր բացագոյն մինչեւ ի սրահ քահանայապետին» (*Իգ. 57-58*): Այս է ակնարկված Եմեսացու ճառի հատվածում: Ուրեմն, ըստ համատեքստի երթայր հետարածի-ն համանիշ է երթայր բացագոյն-ին:

Մաւտարկել – «Ի սկզբանէ էր, ասէ, բանն. գէրն մաւտարկեաց, զի մի խնդրեսցես զժամանակ» (*Եմես. ճառ. Ա*): Բառը ունի ԱԲ-ն՝ «մոտենալ» նշանակությամբ:

Միագլուխ – «Որ միագլուխ սպարապետ էր և ամենայն Հայոց զօրաւար» (*Խոր. 262*): ՆԶԲ-ն այս նախադասության վկայությամբ ունի միագլխապետ: Քննական բնագիրը տարբեր ձեռագրերի համեմատությամբ դնում է միագլուխ:

Վերջինս ունի ՀՀԲ-ն:

Ուռեցկողմ – «Իսկ սեր գուռեցկողմ սրտմտութեանն բժշկէ» (*Եւագր. 21*): ՆՀԲ-ն այս օրինակը բերում է ուռեց «ուռուցք» բառահոդվածի տակ: Դժվար է հաստատապես պնդել, բառի անջատ գրութթունն է ճիշտ, թե՞ միասին: ՋԲ-ում անջատ է:

Վերնաճանապարհորդութիւն – «Ոչ կամիմք զբանն մարմին լինել, զի մի՛ նովաւ և միջնորդ մեզ եղիցի վերնաճանապարհորդութեանն և զառ ի յերկինս բնակութեան օթեւանացն» (*Աթանաս, 129*): Բառարաններն ունեն վերնաճանապարհորդեմ:

Տառապելասեր – «Ամենայն մարդ պատուէին զսուրբն Բարսիլոս: Մանաւանդ վասն սրբութեան վարուցն նորա... կամ վասն աղքատսիրութեան և վասն տառապելասեր վարուցն» (*Բուզ. 80*): Ունի ՋԲ՝ «սիրող տառապելոց»:

Տոգոր – «Ձոր օրինակ, որ ներկանիցէ ինչ, ստեպ ստեպ մխեն անդրէն ի տոգորսն, զի ի խոր առնուցուն նարաւոքն զներկուածն» (*Եմես. ճառ. ԺԲ*): Ըստ ՆՀԲ-ի բառը վկայված է միայն չորս անգամ՝ Գրիգոր Մագիստրոսի մոտ: Արմ-ը համարում է անստույգ բառ: Գ.Մենկիշյանը (*ՀԱ, 1921, 666-671*), քննելով Մագիստրոսի «Գամագտականը», անդրադառնում է և այս բառին՝ տեսնելով «մրցություն» իմաստը, որն իրոք ենթադրվում է Մագիստրոսի վկայած օրինակներից: Գալով տոգոր բառի «ներկ» նշանակությամբ, որ տալիս են բառարանները, Գ.Մենկիշյանը գրում է. «Մագիստրոս 2-3 անգամ կըգործածէ տոգորը, որուն ԱԳՐ և Երմ. ներկոց նշանակութիւնը կու տան: Իհարկէ տեղ մը գործածուած պիտի ըլլայ այս նշանակութեամբ ալ, ապա թէ ոչ այն բառագրողները չէին յիշատակէր. բայց ո՞ր, անծանօթ է այդ այժմ» (*ՀԱ, 1911, 665*): Եմեսացուց վկայված օրինակում այդ իմաստն է:

Հանդիպել են նաև մի քանի բառեր, որոնք պարզապես գրչագրական աղավաղումներ են, վրիպակներ և առաջարկվող համապատասխան ուղղումը կասկած չի հարուցում:

Ժամասակետոլ – «Համբարծաւ թեև ամենեցուն, ի մի սուրբ ժամասակետոլ եղեն բոյնք գերեզմանք նոցունց ի

վախճանի, թռչին յառագաստն» (*Եփր. Նիկ. «Սիրոն», 1928, 222*): Հրատարակիչը ծանոթագրում է որպես նոր բառ, այլուստ անծանոթ: Բայց ակնհայտորեն ժամանակետո՞ղ ձևն է, որը կա և հենց նույն էջում:

Խստաբեր – «Կայր յանապատս... խստաբեր վարիւք» (*Փարպ. 13*): Ուղղելի է **խստամբեր**, որը բավական հաճախական է գրաբարում. *հմմտ.* «Անարգել գիսափկութիւն, սիրեցեալ գխստամբերութիւն» (*Փարպ. 109*): «Յանձն առեալ գխստամբերութիւն վարուց ճգնէին առաւել» (*Խոր. 320*):

Կուղէնք – «Եկին կուղէնք արտաքինք և պարտեցան ի ներքին խորգոց» (*«Սիրոն», 1930, 156*): Պետք է ուղղել **կողէնք**, որը կա և նույն էջում:

Սարդալոյզ – «...զհայր և զմայր չճանաչիցեն և ոչ զազգատոհմ և ոչ տեարս բնակս. զգողսն կամ զմարդալոյզն հայր և մայր կամ տեարս բնակս հուշուիցին» (*Եմես. ճառ. Է*): Ուղղելի է **մարդելոյզ**. *հմմտ.* «Զամենայն ընդ ազատս խառնէին իբրեւ զմարդելոյզ ոք» (*Ոսկ. Պող. Ա. 547*): Սարդելոյզ-ը բառարանները մեկնում են՝ «մարդագող, շողոքորթ, խաբեբա»:

Մենթենթան – «Չիք գեղգեղումն ի հրապարակս, զի խափանեցան ի նոցանէ ուրախութիւնք: Փոխանակ մենթենթանաց հարսնաց, եղել շարժումն սրահից: Եւ փոխանակ կաքամանց երիտասարդաց, եղել սեանց երերումն» (*Եփր. Նիկ. «Սիրոն», 1928, 187*): Ծանոթագրվում է. «...բառ օտարոտի անյայտ իմաստիւ»: Մեզ հետաքրքրող բառը նշում է հագուստի տեսակ: Այդ է հաստատում և հաջորդ նախադասությունը. «Մին դատեր վասն հանդերձից և մին վասն ժառանգութեան: Հարսն, որ կագեցան վասն հանդերձից նորա, թաղեցաւ սպիտակօք իւրովք»: **Մենթենթան** ուղղում ենք **մենթան** «զգեստ, հագուստ, որը բառարանների վկայությամբ կիրառել է մեկ անգամ Ոսկերեքանը: **Մենթան**-ի ստուգաբանությունն էլ հավաստի է» (տե՛ս *Արմ*):

Յառթութիւն – «Լացցէ խաւսեալն զընկեր իւր, զի ընդ խաւսման իւրեանց մահք նոցա: Կորեան առիթք յառթութեան, ետուն հաստատութիւն յաւիտենից» (*Եփր. Նիկ. «Սիրոն», 1928,*

220): Ծանոթագրվում է «նորածն բառ, որ չիք ի բառագիրքս»: Ուղղելի է Յուռթութիւն «կախարդություն»:

Պաճաւանդ – «Փոխանակ պաճաւանդացն եւ ականակապ կամարաց երեզ գաւտի ածէին ընդ մէջ» (Եփր. Նիկ. «Սիոն», 1932, 155): Ուղղելի է պախճաւանդ «գոտի, կանացի գարդ»:

Մեր նկատած նորահայտ բառերի մեկ տասներորդը պարզ արմատական բառեր են. ավելի ճիշտ, հայերենի ածանցների գոյությունը հստակորեն չի գիտակցվում: *Յմմտ. աղախտի, դրոհ, թարուք, խանդիռն, շլեզ, պատուակ, սրուիլ և այլն:* Այս բնույթի բառերից չորսը հունական փոխառություններ են. ալամփոս, իդովտիոն, կրաբ, ովդակոն: Պարզ ածանցավորները՝ 47, որոնց գերակշիռ մասը վերջածանցավոր ձևեր են՝ *արմատ+ածանց* կաղապարով: Երկու դեպքում առկա է *արմատ+ածանց+ածանց* կաղապարը. *ազդականութիւն, ընտոդումն*: -Ումն ածանցով ձևերը ոչ հաճախական, գրաբարին անհարազատ կազմություններ են. ընտրողումն, խոհակերումն, հպարտումն:

Վերջածանցների հաճախականության պատկերը հետևյալն է. -ութիւն -(17), -ական -(11), -իկ -(7), -ումն -(5), -իչ -(3), -պէս -(3), նախածանցներից ան-ը հանդիպում է չորս անգամ, չ-ն՝ երկու:

Նորահայտ բառերի շարքում գերակշռողը կազմությամբ բարդ բառեր են, որոնք միայն երկարմատ են:

Գ Ր Ա Կ Ա Ն ՈՒԹ Յ Ա Ն Յ Ա Ն Կ

Ա) Սկզբնաղբյուրներ

Աբրահամու Խոստովանողի Վկայք արեւելից, Էջմիածին, 1921:
Ս.Աթանասի Աղեքսանդրիոյ հայրապետի ճառք, թուղթք և ընդդիմասցութիւնք, Վենետիկ, 1899:

Աթեղահա եպիսկոպոսի Ուռհայի Թուղթ առ քրիստոնեայս պարսից աշխարհին վասն հաւատոց (իրատ. Մ.Մինասյանի, 7Ա, 1984):

Ագաթանգեղոս, Պատմութիւն Հայոց, Տփղիս, 1909:

Աստուածաշունչ Մատեան հին և նոր կտակարանաց ըստ ճշգրիտ թարգմանութեան մերոց համեմատութեամբ եբրայական և յունական բնագրաց, Կ.Պոլիս, 1895:

Բարսեղ Կեսարացի, Յաղագս վեցաւրեայ արարչութեան, աշխատասիրութեամբ Կ.Սուրադյանի, Եր., 1984:

Գիրք, որ կոչի Ջօօն, արարեալ Ս.Յակոբայ երիցս երանեալ հայրապետին Մծբին քաղաքի, Պօլիս, 1824:

Եզնկայ Կողբացւոյ Բագրեւանդայ եպիսկոպոսի Եղծ աղանդոց, Վենետիկ, 1826:

Եղիշէի Վասն Վարդանայ և Հայոց պատերազմին, Եր., 1957:

Երանելւոյն Ձենոբայ սրբոյ եպիսկոպոսի ասացեալ ի մեծի չորեքշաբթի աւուրն ընդդէմ Յուդայի մատնչի անաւրէն աշակերտի (7Ա, 1921, 1922...):

Երանելւոյն Յովհաննու Ոսկեբերանի Մեկնութիւն Եսայեայ մարգարէի, Վենետիկ, 1888:

Եւսեբեայ Եմեսացու դասական մնացորդները (7Ա, 1921):

Եւսեբիոսի Եմեսացւոյ Մեկնութիւնք, Վենետիկ, 1980:

Եւսեբիայ եպիսկոպոսի Եմեսացւոյ ճառք (7Ա, 1956-1959):

Եւսեբիոսի Կեսարացւոյ Պատմութիւն եկեղեցւոյ, Վենետիկ, 1877:

Եւսեբի Պամփիլեայ Կեսարացւոյ ժամանակականք երկմասնեայ, Վենետիկ, 1818:

Եփրեմի Ասորւոյ Վկայք արեւելից, Էջմիածին, 1921:

Եփրեմ Ասորի, Վեշտասան ասացուածք վասն Նիկոմիդեայ քաղաքին («Սիոն», 1928-1932):

Ս.Եփրեմի Մատենագրութիւնք, Վենետիկ, 1836:

Թուղթ Պրոկղեայ եպիսկոպոսի առ Սուրբն Սահակ հայրապետ Հայոց և առ սուրբն Մաժդոց (7Ա, 1921):

- Իսիքիոսի Երիցու Երուսաղեմացւոյ Յովբայ Մեկնութիւն, 1983
(*Patrologica Orientalis*, T. 42, fas. 1, T. 42 fas.2)
- Լաբուրմայ Թուղթ Աբգարու, Վենետիկ, 1868:
- Կիւրղի Երուսաղեմայ հայրապետի Կոչումն ընծայութեան,
Վիեննա, 1832:
- Կորիւն, Վարք Մաշտոցի, Եր., 1941:
- Կցուրդք երանելոյն Եփրեմի Խորին Ասորւոյ, Վիեննա, 1957:
- Հատուած մը Ոսկեբերանի եփեսացւոյ թղթոյն մեկնութենէն (ՀԱ,
1962):
- Ղազար Փարպեցւոյ Պատմութիւն Հայոց, Տփղիս, 1904:
- Մամբրէի վերծանողի ճառք, Վենետիկ, 1894:
- Մովսիսի Խորենացւոյ Պատմութիւն Հայոց, Տփղիս, 1913:
- Յաղագս Պիտոյից (տե՛ս *Մովսիսի Խորենացւոյ Մատենագրութիւնք*,
Վենետիկ, 1843, էջ 339-580):
- Յովհաննու Ոսկեբերանի յաւետարանագիրն Մատթէոս,
Վենետիկ, 1826:
- Յովհաննու Ոսկեբերանի ճառք, Վենետիկ, 1861:
- Յովհաննու Ոսկեբերանի Կոստանդնուպօլսի եպիսկոպոսապետի
Մեկնութիւն թղթոցն Պաւլոսի, Վենետիկ, 1862:
- Նորագիւտ Գիրք Մնացորդաց, Մոսկուա, 1899:
- Նորահայտ Նշխարներ Հ.Ոսկեբերանի սաղմոսաց մեկնութիւնից
(*Բանք. Մատ. 1986, N15*):
- Յովհ. Ոսկեբերան, Մեկնութիւն Մատթէի (նոր հատված) ՀԱ,
1921:
- Յ. Ոսկեբերան, ճառ ի տատրակն (ՀԱ, 1922):
- Պատմութիւն Աղեքսանդրի Մակեդոնացւոյ. աշխատասիրությամբ
Հ.Սիմոնյանի, Եր., 1989:
- Սեբերիանոսի Եմեսացւոյ Գաբաղացւոյ եպիսկոպոսի ճառք,
Վենետիկ, 1830:
- Սրբոյն Խորն Եւագրի Պոնտացւոյ Վարք և մատենագրութիւնք,
Վենետիկ, 1907:
- Վարք ս.Իգնատիոսի Ամտիոքայ հայրապետին (*Սովիերք, հատ.
ԻԲ.*):
- Վկայաբանութիւն սրբոյն Կիպրիանոսի եպիսկոպոսի (ՀԱ, 1922):
- Տեառն Յովհաննու Մանդակունւոյ Հայոց հայրապետի ճառք,
Վենետիկ, 1860:
- Փաւստոսի Բուզանդացւոյ Պատմութիւն, Ս.Պետերբուրգ,
1883:
- Փիլոնի Եբրայեցւոյ Մնացորդք ի հայս, Վենետիկ, 1836:

Փիլոնի եբրայեցւոյ Բանք երեք..., Վենետիկ, 1822:

Փիլոնի հեբրայեցւոյ ճառք թարգմանեալք ի նախնեաց մերոց,
Վենետիկ, 1892:

Բ) ՏԵՍԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Աբգարյան Գ., Սիրաքի գրքի հնագույն թարգմանության
նորահայտ հատվածներ, «Էջմիածին», 1966, ԺԱ-ԺԲ:

Աբրահամյան Ա.Ա., Բայը ժամանակակից հայերենում, Եր.,
1962:

Աբրահամյան Ա.Ա., Գրաբարի ձեռնարկ, Եր., 1976:

Աբրահամյան Ա.Ա., Փոխառությունների հետ կապված
բայականական մի քանի երևույթներ ժամանակակից հայերենում
(*ՀԳԱՏ, 1960, N7-8*):

Աբրահամյան Ս.Գ., Չթեքվող խոսքի մասերը և նրանց բառական
ու քերականական հատկանիշների փոխհարաբերությունը
ժամանակակից հայերենում, Եր., 1965:

Աբրահամյան Ս.Գ., Ժամանակակից հայերենի բառա-
կազմական օրինաչափությունների միտումները, *ՊԲՀ, 1981, N3*:

Աբեղյան Մ., Հայոց լեզվի տեսություն, Եր., 1965:

Ակինեան Ն., Ղասական հայերենը և վիեճակական մխիթարեան
դպրոցը, Վիեննա, 1932:

Աղայան Է.Բ., Հայ լեզվաբանության պատմություն, հատ. 1-2,
Եր., 1958-1962:

Աղայան Է.Բ., Բարբառային հնագույն տարբերություններ
հայերենում (*ՀՄՄՀ ԳԱՏ, 1958, N5*):

Աղայան Է.Բ., Գրաբարի քերականություն, Եր., 1964:

Աղայան Է.Բ., Բառաքնական և ստուգաբանական հետա-
զոտություններ, Եր., 1974:

Աղայան Է.Բ., Տերմինագիտություն, Եր., 1978:

Աղայան Է.Բ., Ընդհանուր և հայկական բառագիտություն, Եր.,
1984:

Աղայան Է.Բ., Հին հայկական ամսանունները և օրանունները,
ԲԵՀ, 1984, N2:

Աճառյան Հ., Հայերեն նոր բառեր նորագյուտ մնացորդաց գրոց
մեջ, Վիեննա, 1908:

Աճառյան Հ., Հայերեն նոր բառեր հին մատենագրության մեջ,
Վենետիկ, 1913-1922:

Աճառյան Հ., Հայոց լեզվի պատմություն, հատ. 1-2, Եր., 1940-1951:

Աճառյան Հ., Լիակատար քերականություն հայոց լեզվի, հատ. 1-6, Եր., 1953-1971:

Աճառյան Հ., Հայկականք, ՀԳԱՏ, 1944-1952:

Ամալյան Հ., Միջնադարյան Հայաստանի բառարանագրական հուշարձաններ, Եր., 1966, 1976:

Այտընեան Ա., Քննական քերականութիւն արդի հայերէն լեզուի, Վենետիկ, 1866:

Առաքելյան Վ., Փափսոս Բուզանդի «Հայոց պատմության» բնագրի հարցի շուրջը (*ՀՍՍՀ ԳԱ լեզվի ինստիտուտի աշխատություններ, III, Եր., 1948*):

Առաքելյան Վ.Դ., Գրիգոր Նարեկացու լեզուն և ոճը, Եր., 1975:

Առաքելյան Վ.Դ., Ակնարկներ հայոց գրական լեզվի պատմության (V դար), Եր., 1981:

Առաքելյան Վ.Դ., Հինգերորդ դարի հայ թարգմանական գրականության լեզուն և ոճը, Եր., 1983:

Ասատրյան Մ.Ե., Ժամանակակից հայոց լեզու. ձևաբանություն, Եր., 1983:

Բագրատունի Ա., Հայերէն քերականութիւն ի պէտս զարգացելոց, Վենետիկ, 1852:

Բարսեղյան Հ.Խ., Արդի հայերենի բայի և խոնարհման տեսություն, Եր., 1953:

Բարսեղյան Հ.Խ., Հայերենի խոսքի մասերի ուսմունք, Եր., 1980:

Բատրուպանեան Ղ., Ստուգաբանական հետազոտությունք, ՀԱ, 1903-1907:

Բեդիրյան Պ.Ա., Հայերենի մի քանի բառերի ստուգաբանության շուրջը, ՀԳԱՏ, 1957:

Բեդիրյան Պ.Ա., Մի քանի ստուգաբանություններ, ՊԲՀ, 1962, N1:

Բյուզանդացի Ն., Հայկական բառաքնություն, Պոլիս, 1880:

Բյուզանդացի Ն., Կորիւն վարդապետ և նորին թարգմանությունք, Տիֆլիս, 1900:

Գաթըրճեան Հ., Մաշտոցեան լեզու, ՀԱ, 1913:

Գալստյան Ա.Ս., Փոխաբերացման հոգելեզվաբանական վերլուծություն (*թեկնածուական դիսերտացիա, Եր., 1985*):

Գալստյան Ս.Ա., Ածանցումը և ածանցները ժամանակակից հայերենում, Եր., 1978:

Գարագաշեան Ա., Նկարագիր ուսմանց, Վիեննա, 1845:

Գյուլբուղայան Ա.Վ., Հայերենի ուղղագրությունը Ե-Թ դարերում (ԲԵՀ, 1971, N3):

Վեորգյան Վ., Փավստոս Բուզանդի «Հայոց պատմության» բնագրի հարցի շուրջը (*Երևանի պետական համալսարանի գիտական տեղեկագիր, հատ. 85, պրակ 3, 1963*):

Դուրեան Ե., Ուսումնասիրությունք և քննադատությունք, Երուսաղէմ, 1932:

Ջարբիանալեան Գ., Պատմութիւն հայերէն դպրութեանց, Վենետիկ, 1865:

Ձեթունյան Ա.Ս., Բարբառային հետքեր «Գիրք ծննդոց»-ի ձեռագրերում, ՊԲՀ, 1989, N1:

Թոռնեան Թ., Հատընտիր ընթերցուածք ի մատենագրութեանց մախնեաց, Վենետիկ, 1866, 1891:

Իշխանյան Ռ.Ա., Ակնարկ հայերենի տերմինաշինության, Եր., 1981:

Իշխանյան Ռ.Ա., Բնիկ հայերեն բառեր և հնագույն փոխառություններ, Եր., 1988:

Խալաթյան Վ., Եզնիկ Կողբացու «Եղծ աղանդոցի» լեզվաոճական մի քանի առանձնահատկություններ (*Երևանի պետական համալսարանի գիտական տեղեկագիր, հատ. 79, պրակ 2, 1962*):

Խալաթեանց Գ., Գիրք Մնացորդաց. ըստ հնագույն հայ թարգմանութեան, Մոսկուա, 1899:

Կարազոյզյան Հ.Հ., «Սիւս»-ի մեկնության շուրջը, *ԳԱ «Տեղեկագիր», 1958, N 9*:

Կոզեան Ս., Մակբայեցւոց Բ գրքի հայերէն թարգմանութիւնը, Վիեննա, 1923:

Կոստանդյան Դ.Ս., Բառասկզբնային ձայնավորների զուգածնությունների հարցի շուրջը (*Հայագիտական միջազգային երկրորդ գիտաժողով, թեզիսներ, 1987*):

Հայոց լեզվի համեմատական քերականության հարցեր, Եր., 1979:

Հացունի Վ., Ե՞րբ շարադրուած են «յաճախապատում ճառք», «Բազմավեպ», 1930:

Հյուբշման Հ., Հայկական հատուկ անուանք, ՀԱ, 1893:

Հյուբշման Հ., Հին հայոց տեղւոյ անունները, Վիեննա, 1907:

Հյուբշման Հ., Ուսումնասիրությունք հայերենի փոխառեալ բառից, Վիեննա, 1894:

Հովհաննիսյան Լ.Շ., Հայերենի իրանական փոխառությունների տարբերակման սկզբունքների մասին (*ՄՀԳ, 1984, 369-378*):

Հովհաննիսյան Լ.Շ., Նորահայտ բառեր հայ մատենագրության մեջ, ՊԲՀ, 1987, N4:

Հովհաննիսյան Լ.Շ., Հայերենի իրանական փոխառությունները, Եր., 1990:

Հովսեփյան Լ.Ա., Գրաբարի բառակազմությունը, Եր., 1987:

Ղազարյան Ս.Ղ., Գրաբարի կազմավորումը (*ՀՍՄՀ ԳԱ «Տեղեկագիր»*, 1945, N5):

Ղազարյան Ս.Ղ., Հայոց գրական լեզվի պատմություն, Եր., 1961:

Ղափանցյան Գ.Ա., Հնէաբանական մի քանի մնացորդներ հայերենում (*ՀՍՄՀ գրականության և արվեստի ինստիտուտի տեղեկագիր*, 1926):

Ղափանցյան Գ.Ա., Ուրարտուի պատմությունը, Եր., 1939:

Ղափանցյան Գ.Ա., Հայոց լեզվի պատմություն (հին շրջան), Եր., 1961:

Մարգարյան Ա.Ա., Հայերենի հարադիր բայերը, Եր., 1966:

Մեյե Ա., Հայագիտական ուսումնասիրություններ, Եր., 1978:

Մինասյան Մ., Ուսումնասիրություններ և համաբարբառներ, Ժնև, 1989:

Միջազգային հայերենագիտական գիտաժողով, Երևան, 21-25 սեպտեմբերի. գեկուցումներ, Եր., 1984:

Մկրտչյան Ն.Ա., Խեթա-հայկական ընդհանրություններ, ԳԱ «Լրաբեր», 1970:

Մուրադյան Ա.Ն., Հունաբան դպրոցը և նրա դերը հայերենի քերականական տերմինաբանության ստեղծման գործում, Եր., 1971:

Մուրադյան Պ., Յուզբաշյան Կ., Ղազար Փարպեցու Պատմության նորահայտ պատառիկը, *ԲՄ*, 1973:

Մուրադյան Հ.Դ., Հայոց լեզվի պատմական քերականություն, Եր., 1982:

Մուրվալյան Ա., Բառային կազմի պատմության հարցի շուրջը, *ԳԱ «Տեղեկագիր»*, N11, 1952:

Նալբանդյան Գ.Մ., Ստուգաբանություններ հայոց անձնանունների (*«Արևելագիտության հարցեր»*, N 1-2, Եր., 1983):

Շալունց Ռ.Ն., Համանուն բառերի առաջացման աղբյուրները հայերենում (*ԼՈՂ*, N3, Եր., 1975):

Հ.Վրթանիսի Չալքիսեան, Քերականութիւն հայկազեան լեզուի, հանդերձ փոփոխմամբ և յաւելուածովք. աշխատասիրեալ ի Խ.Արսենէ վ. Այտընեան, Վիեննա, 1885:

Պեդերսըն Հ., Նպաստ մը հայ լեզուի պատմութեան, Վիեննա, 1904:

Պեդերսըն Հ., Հայերէն և դրացի լեզուներ, Վիեննա, 1907:

Պետրոսյան Հ.Զ., Գոյականի թվի կարգը հայերենում, Եր., 1972:

Պողոսյան Պ.Մ., Հայ ոճագիտական տերմինաբանության զարգացման առաջին փուլը, *ԲԵՂ, N2, 1981*:

Ջահուկյան Գ.Բ., Զերականական և ուղղագրական աշխատությունները հին և միջնադարյան Հայաստանում, Եր., 1954:

Ջահուկյան Գ.Բ., Հին հայերենի հոլովման սիստեմը և նրա ծագումը, Եր., 1959:

Ջահուկյան Գ.Բ., Հայ բարբառագիտությունը և հայերենի բարբառների ծագման հարցը, *ՊԲՀ, N2-3, 1959*:

Ջահուկյան Գ.Բ., Ստուգաբանություններ, *ՊԲՀ 1963 N4, 1965 N1, ԲԵՂ, 1971 N1, ԳԱ «Լրաբեր» 1973 N6, 1976 N12, 1979 N3*:

Ջահուկյան Գ.Բ., Հայոց լեզվի զարգացման փուլերը, Եր., 1964:

Ջահուկյան Գ.Բ., Հայերենը և հնդեվրոպական հին լեզուները, Եր., 1970:

Ջահուկյան Գ.Բ., Հայ բարբառագիտության ներածություն, Եր., 1972:

Ջահուկյան Գ.Բ., Հայ-իրանական զուգադիպումներ, *ԲԵՂ, N2, 1981*:

Ջահուկյան Գ.Բ., Հայոց լեզվի պատմություն. նախագրային շրջան, Եր., 1987:

Սարգիսեան Բ., Զննադատութիւն Յովհան Մանդակունոյ եւ իւր երկասիրութեանց վրա, Վենետիկ, 1895:

Սարգիսեան Բ., Ազաթանգեղոս եւ իւր բազմադարեան գաղտնիքն, Վենետիկ, 1890:

Սարգսյան Ա.Ս., Գոյական զուգաձևությունները ժամանակակից հայերենում (*ԼՈՂ, X, 1987*):

Սևակ Գ., Հայոց լեզվի բառային գանձը (*Երևանի համալսարանի գիտական աշխատություններ XXVII, 1984*):

Սուքիասյան Ա.Ս., Հոմանիշները ժամանակակից հայերենում, Եր., 1971:

Սուքիասյան Ա.Ս., Ժամանակակից հայոց լեզու (հնչյունաբանություն, բառագիտություն, բառակազմություն), Եր., 1982:

Վարդանեան Ա., Բառաքննական դիտողություններ, Վիեննա, 1921:

Վարդանեան Ա., Ասորերենի միջնորդութեամբ յունարենէ փոխ առնուած բառեր, ՀԱ, 1920:

Վարդանեան Ա., Դասական մանր բնագիրներ և ձեռագրական համեմատութիւններ, Վիեննա, 1913:

Տաշեան Հ., Ուսումնասիրութիւնք Ստոյն Կալիսթենեայ վարուց Աղեքսանդրի, Վիեննա, 1892:

Տաշեան Զ., Ուսումնասիրութիւնք հայերէնի փոխառեալ բառից, Վիեննա, 1894:

Տաշեան Զ., Ուսումն դասական հայերէն լեզուի, Վիեննա, 1920:

Տեր-Մկրտչյան Գ., Հայագիտական ուսումնասիրություններ, Եր., 1979:

Տեր-Պետրոսյան Լ.Զ., Սաղմոսների հայերէն թարգմանությունը և նրա նախորինակը («*Էջմիածին*», 1975):

Տեր-Պետրոսյան Լ.Զ., Դանիելի մարգարեության Թ գլխի ասորերէնից կատարված դասական հայերէն թարգմանությունը, ԲՄ, 1984:

Քենդերյան Զ.Ս., Հովհան Սայրազունցի, Եր., 1973:

Քյոսեյան Զ.Զ., Նորահայտ նշխարներ Հովհան Ոսկեբերանի Սաղմոսաց մեկնությունից, ԲՄ, 1986:

Քոսյան Վ.Ա., Հնդեվրոպական արմատների լեզվական արժեքը (*թելնածուական դիսերտացիա*), Եր., 1953:

Քոսյան Վ.Ա., Գրաբարի բառակապակցությունը, Եր., 1980:

Օհանյան Զ.Ա., Ժամանակակից հայոց լեզվի բառապաշարը և նրա հարստացման միջոցները, Եր., 1982:

Адонц Н., Армения в эпоху Юстиняна, Е., 1971.

Аревшатян С.С., Формирование философской науки в древней Армении (V-VI вв.), Ереван, 1973.

Андроникашвили М., Очерки по иранско-грузинским языковым взаимоотношениям, Тбилиси, 1966.

Асатрян Г.С., Отглагольные имена в среднеперсидском и парфянском, Е., 1989.

Ахманова О.С., Очерки по общей и русской лексикологии, М., 1957.

Беляева С.А., Английские слова в русском языке XVI-XXвв., Владивосток, 1984.

Библия, издание московской патриархии, М., 1976.

Бирнбаум Х., Праславянский язык, достижения и проблемы в его реконструкции, М., 1987.

Виноградов В.В., Русский язык (грамматическое учение о слове), М., 1972.

Гамкрелидзе Т.В., Иванов В.В., Индоевропейский язык и индоевропейцы, Тбилиси, 1984.

Горбачевич К.С., Вариантность слов и языковая норма, М., 1978.

Граудина Л.К., Вопросы нормализации русского языка. М., 1980.

Грицын М.А., Из истории восточно-славянской лексики, Киев, 1965.

Дементьев А.А., Фонетические и орфографические признаки нерусских по происхождению слов (*"Русский язык в школе"* N3, 1968).

Денисов П.Н., Лексика русского языка и принципы ее описания, М., 1980.

Джаукян Г.Б., Очерки по истории дописьменного периода армянского языка, Е., 1967.

Джаукян Г.Б., Об аккадских заимствованиях в армянском языке (*ԴԲԴ*, 1980, N3,4).

Джаукян Г.Б., Сравнительная грамматика армянского языка, Е., 1982.

Джаукян Г.Б., Сараджева Л.А., Арутюнян Ц.Р., Очерки по сравнительной лексикологии армянского языка, Е., 1983.

Джаукян Г.Б., О соотношении хайасского и армянского языков, *ИФЖ*, 1988, N1.

Иванов В.В., Хеттский язык, М., 1963.

Капанцян Гр.А., К происхождению армянского языка (*ՀԳՍ*, 1946, N7).

Карагезян О.О., Проблема этногенеза и самоназвания армянского народа по клинописным источникам (*"Вестник общественных наук"*, АН Арм ССР, 1988, N7).

Курилович Е., Деривация лексическая и деривация синтаксическая. В кн. Очерки по лингвистике, М., 1962.

Лексика русского литературного языка XIX-начала XX века, М., 1981.

Майрхофер М.О., О принципах составления древнеиндоарийского этимологического словаря (*ВЯ*, 1989, N2).

Манучарян Р.С., Словообразовательные значения и формы в русском и армянском языках, Е., 1981.

Основы иранского языкознания, М., 1979, 1981.

Патканов К.П., Материалы для армянского словаря, С.Петербург, 1882.

Патканян К., Несколько слов о названиях древних армянских месяцев, СПб, 1871.

Патканян К., Материалы для армянского словаря, СПб, 1884.

Патканян К., Опыт истории династии Сасанидов, С.Петербург, 1863.

Пауль Г., Принципы истории языка, М., 1960.

- Периханян А.Г., Сасанидский Судебник, Е., 1983.
- Степанова М.Д., Методы синхронного анализа лексики, М., 1968.
- Тер-Петросян Л.А., Сиро-армянские литературные связи в IV-V вв. (док. диссерт. Ленинград, 1981).
- Туманян Э.Г., Древнеармянский язык, М., 1971.
- Туманян Э.Г., Структура индоевропейских имен в армянском языке, М., 1978.
- Фрай Р., Наследие Ирана, М., 1972.
- Эдельман Д.И., Сравнительная грамматика восточноиранских языков. Фонология. М., 1986.
- Экскурсы в историю русской лексики, М., 1978.
- Bailey H.W., Prolexis to the book of Zambasta, Cambrige, 1967.
- Benveniste E., Le developpement des mots compos-e en armenien classique, REA, 19676.
- Benveniste E., Emprunts iraniens en armenien, TPS, 1945.
- Bolognesi G., Le fonti dialettali degli imprestiti iranien in armeno, Milano, 1960.
- Bolognesi G., Rapporti lessicali tra l'armeno e l'iranico, Milano 1962
- Feydit F., Letat de la langue armenienne au V siecle («Բազմալեզու»), 1967.
- Finazzi R.B., Problemi lessicali nella traduzione armena della bibbla («Բազմալեզու», 1985).
- Greppin J.A., Classical and Middle Armenian Bird Names, New York, 1978:
- Greppin J.A., A Note on the Alternation of E and A in classical Armenian, AnAL, I 1980.
- Gippert J., Old Armenian and Caucasian Calendar Sistems. The Albanian Month Names, AnAL, 9, 1988.
- W.B. Henning Memorial Volume, London, 1970.
- Hübschmann H., Armenische Studien, Leipzig, 1883.
- Hübschmann H., Armenische Grammatik, Leipzig, 1895-1897.
- Kent R., Old Persian. grammar, texts, lexicon, second edition New Haven, 1953.
- Lagarde P., Armenische Studien, Cöttingen, 1877.
- Leroy M., Emprunts iraniens dans la composition nominale en armenien classique, REA, 1983.
- Petermann H., Grammatica linguae armeniacae, Berolini, 1837.
- Pisani V., Lezioni di armeno, Milano, 1946.

Schmitt R., "Armenische" Namen in altpersischen Quellen, AnAL, I 1980.

Schmitt R., Iranisches lehngut in armenischen, REA, 1983.

Schmidt K., On Aspect in old Armenian and Proto-Kartvelian, AnAL, 6 1985.

Գ) ԲԱՌԱՐԱՆՆԵՐ

Աբրահամյան Ռ., Պահլավերեն-հայերեն-ռուսերեն-անգլերեն բառարան, Եր., 1965:

Աճառյան Հ., Հայոց անձնանունների բառարան, հատ. 1-5, Եր., 1942-1962:

Աճառյան Հ., Հայերեն գավառական բառարան, Թիֆլիս, 1913:

Աճառյան Հ., Հայերեն արմատական բառարան, հատ. 1-4, Եր., 1971-1979:

Արմատունի Ս., Հայոց բառ ու բան, Վաղարշապատ, 1912:

Առձեռն բառարան հայկազնեան լեզուի, Վենետիկ, 1865:

Բառարան պարսկերեն ըստ կարգի հայկական այբուբենից... ի Գեորգայ դպրո՛ Տէր-Յովհաննէսեան Պալատացոյ, Կոստանդնուպօլիս, 1826:

Բառգիրք հայոց, քննական բնագիրը, առաջաբանը և ծանոթագրությունները Հ. Ամալյանի:

Բառգիրք արուեստից և գիտութեանց և գեղեցիկ դպրութեանց՝ յօրինեալ ի Խ. Մանուէլ վարդապետ Քաջունի, Վենետիկ, 1892:

Խաչատրյան Օ., Մովսէս Խորենացու «Հայոց Պատմության» հաճախականության բառարան, Եր., 1986:

Մխիթար Սեբաստացի, Բառարան յատուկ անուանց Անտուա-Ժաշունչ գրոց հին և նոր կտակարանց, Վենետիկ, 1749:

Մխիթար Սեբաստացի, Բառգիրք հայկազնեան լեզուի բաժանեալ յերկուս հատորս, Վենետիկ, 1749-1769:

Նոր բառգիրք հայկազնեան լեզուի, հատ. 1-2, Վենետիկ, 1836-1837:

Ջախջախեան Մ., Բառգիրք ի բարբառ հայ և իտալական, Վենետիկ, 1847:

Սուքիասյան Ա., Հայոց լեզվի հոմանիշների բառարան, Եր., 1967:

Սուքիասյան Ա., Գալստյան Ս., Հայոց լեզվի դարձվածաբանական բառարան, Եր., 1975:

Փէշտընալճեան Գ., Բառգիրք հայկազնեան, Պօլիս, 1844:

ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- ԱԲ - Առձեռն բառարան հայկազնեան լեզուի
 Արմ կամ ՀԱԲ - Հ.Աճառյան, Հայերեն արմատական բառարան
 ԲՄ կամ Բանբ. Մատ. - Բանբեր Մատենադարանի
 ԲԵՀ - Բանբեր Երևանի համալսարանի
 ԵՊՀ - Երևանի պետական համալսարան
 ԺՀԼ - Ժամանակակից հայոց լեզու
 ԼԲՀԼ - Հ.Աճառյան, Լիակատար քերականություն հայոց լեզվի
 ԼՈՀ - Լեզվի և ոճի հարցեր
 ՀԱ - Հանդես ամսօրյա
 ՀԳԱՏ - Հայաստանի գիտությունների ակադեմիայի Տեղեկագիր
 ՀԼՊ - Հ.Աճառյան, Հայոց լեզվի պատմություն
 ՀՀԲ - Մխիթար Աբբա, Բառգիրք հայկազնեան լեզուի
 ՄՀԳ - Միջազգային հայերենագիտական գիտաժողով
 ՆՀԲ - Նոր բառգիրք հայկազնեան լեզուի
 ՊԲՀ - Պատմա-բանասիրական հանդես
 ՋԲ - Ջախջախյան, Բառգիրք հայ-իտալ.
 ВДИ - Вестник древней истории
 ИФЖ - Историко-филологический журнал (на арм. яз.)
 ОИЯ - Основы иранского языкознания
 AnAL - Annual of Armenian Linguistics
 BSO(A)S - Bulletin of the School of Oriental (and African) Studies
 H MV - Henning Memorial volume
 Prolexis - Bailey H., Prolexis to the book of Zambasta
 REA - Revue des Études Arméniennes
 TPS - Transactions of the Philological Society

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ն Ե Ր Ա Ծ ՈՒ Թ Յ ՈՒ Ն (հարցի պատմությունից)	5
--	---

Ա) Ուսումնասիրության առաջին շրջան	5
Բ) Ուսումնասիրության երկրորդ շրջան	11
Գ) Ուսումնասիրության երրորդ (խորհրդային) շրջան	28

Գ Լ ՈՒ Խ Ի

ԲԱՌԱՊԱՇԱՐԻ ԾԱԳՈՒՄՆԱԲԱՆԱԿԱՆ ՇԵՐՏԵՐԸ	40
--	----

Ա) Գրաբարի բնիկ (ինդեվրոպական) բառապաշարը	40
Բ) Գրաբարի փոխառյալ բառապաշարը	45

I. ՀԱՅԵՐԵՆԻ ԻՐԱՆԱԿԱՆ ՓՈԽԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	48
---	----

Իրանական փոխառությունների սկզբնաղբյուրների հարցը	49
Իրանական փոխառությունների բառակազմական առանձնահատկությունները	68
Իրանական փոխառությունների իմաստային խմբերը	71
Փոխառությունների գործառական առանձնահատկությունները	76
Իրանական որոշ արմատների (հիմքերի) դրսևորումները հայերենում	81

II. ԱՍՈՐԱԿԱՆ ՓՈԽԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐ	85
------------------------------------	----

III. ՀՈՒՆԱԿԱՆ ՓՈԽԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐ	94
-------------------------------------	----

Գ Լ ՈՒ Խ II

Ն Վ Ա Զ Հ Ա Ճ Ա Խ Ա Կ Ա Ն Բ Ա Ռ Ե Ր	117
I Ի Ն Ք Ն ՈՒ Ր ՈՒ Յ Ն ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ	
ԿՈՐՅՈՒՆ	118
Ե Ջ Ն Ի Կ ԿՈՂԲԱՑԻ	122
Փ Ա Վ Ս Տ Ո Ս Բ ՈՒ Ջ Ա Ն Դ	127
Ա Գ Ա Թ Ա Ն Գ Ե Ղ Ո Ս	133
Ե Ղ Ի Շ Ե	140
Մ Ո Վ Ս Ե Ս Խ ՈՐ Ե Ն Ա Ց Ի	143
ՂԱՋԱՐ ՓԱՐՊԵՑԻ	155
ՀՈՎՀԱՆ ՄԱՆՂԱԿՈՒՆԻ	163

II. ԹԱՐԳՄԱՆԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ.	
ԱՍՏՎԱԾԱՇՈՒՆԶ	169
ՆՅԲ-ում չվկայված բառեր	177
Գրաբարի բառարաններում չավանդված բառեր	179

Գ Լ ՈՒ Խ III

ԳՐԱԿԱՆ ՆՈՐՄԱՅԻՆ ՀԱՐՈՂ ԲԱՌԱՊԱՇԱՐ	181
I. Տարբերակում ըստ խոսքի մասերի	185
II. Տարբերակում ըստ հեղինակների	197

Գ Լ ՈՒ Խ IV

ԲԱՌԱՅԻՆ ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐ V ՂԱՐԻ ԳՐԱԲԱՐՈՒՄ	206
I ՀՆՉՅՈՒՆԱԿԱՆ ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐ	211
1. Ձայնավորային փոփոխություններով զուգաձևեր	211
Երկբարբառային տարբերակներ	219
2. Բաղաձայնական փոփոխություններով զուգաձևեր	220
Ա) Խլություն-ծայնեղություն ներկայացնող տարբերակներ	221
Բ) Բաղաձայնների անկմամբ կամ հավելմամբ տարբերակներ.	225
Գ) Այլ կարգի բաղաձայնական հերթագայություններով տարբերակներ..	235
Դ) Դրափոխված/ոչ դրափոխված բաղաձայններով տարբերակներ.....	240

II ԲԱՌԱԿԱԶՄԱԿԱՆ ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐ	242
-----------------------------------	-----

1. Ածանցային տարբերակներ	242
2. Հիմքակազմական տարբերակներ.....	248
3. Հոդակապով և առանց հոդակապի բարդություններ	254
4. Տարբեր հոդակապով բարդություններ	258
5. Բարդ բառերի բաղադրիչների շարադասական տարբերակներ.....	259

Գ Լ ՈՒ Խ V

ՆՈՐԱՀԱՅՏ ԲԱՌԵՐ	265
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ	296

ԼԱՎՐԵՆՏԻ ՇԱՀԵՆԻ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ԳՐԱԲԱՐԻ ԲԱՌԱՊԱՇԱՐԸ
(V դար)

Հրատ. խմբագիր՝ Ա.Սահակյան
Համակարգչային ձևավորումը՝ Վ.Պապյանի

Հրատ. պատվեր՝ N 180
Ստորագրված է տպագրության՝ 25.01.2006թ.:
Չափսը՝ 60 x 84 $\frac{1}{16}$: Թուղթ՝ օֆսեթ N 1:
19,4 տպագրական մամուլ:
Գինը՝ պայմանագրային:

ՀՀ ԳԱԱ տպարան, Երևան, Մարշալ Բաղրամյան 24:

120047

ԳԱՍ Հիմնարար Գիտ. Գրադ.



220090903

A π
30903